

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ  
ԳԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական  
խորհուրդ՝

Ն. Թովմասյան  
Ա. Գյուլումյան  
Ֆ. Թոխյան  
Ա. Թունյան  
Ա. Խաչատրյան  
Ն. Նազարյան  
Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

**ՏԵՂԵԿԱԳԻՐ**

© ԳԳ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԳԱՏԱՐԱՆ

1(101)  
2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

## I. ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

- \* «ԴԱՏԱԽԱՉԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ (ՕՐԵՆՍԴՐԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԹՈՂՏՎՈՒԹՅՈՒՆԸ) – Ա. ՂԱՄԲԱՐՅԱՆ, Ա. ՂԱԶԱՐՅԱՆ.....7
- \* ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՅՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՅԵՐ. ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՅ, ԹԵ՞ ՕՐԵՆՍԴՐԻ ԿԱՄԱՀԱՅՆՈՒԹՅՈՒՆ – Ա. ԹԱԴԵՎՈՍՅԱՆ.....41

### ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

- \* ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՐԱՑՆՈՂ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ – Դ. ՕՀԱՆՅԱՆ.....52
- \* ՄՈՌԱՅՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱԶՏՆՈՒԹՅԱՆ ՄՐՅԱԿՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ – Է. ԱՎԵՏԻՍՅԱՆ.....67

## II. ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1572-1586)

- \* «ԱՐԶՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 49-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Գ» ԿԵՏԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1572, 26 հունվարի 2021 թվականի) .....81
- \* «ՌԱՍԶԵՍ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 388-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 396-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, 415-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 423-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՍԴՈ – 1573, 27 հունվարի 2021 թվականի) .....97

- \* ՎԱՀԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 ՕՐԵՆՍԳՐՔԻ 95-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ՝  
 «(...) ԿԱՍ ՀԱՍՅԵԱՏԻՐՈՋ ԾԱՆՈՒՑՄԱՆ (ՀԱՇՎԱՌՄԱՆ)  
 ՀԱՍՅԵՈՒՄ ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԲՆԱԿՎՈՂ ԿԱՍ ԱՅԴ ՀԱՍՅԵՈՒՄ  
 ԱՇԽԱՏՈՂ ՉԱՓՈՂԱՍ ԱՆՁԻՆ» ԴՐՈՒՅԹԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1574, 2 փետրվարի 2021 թվականի) .....122
  
- \* ՍԱԹԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՌԱՖԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵՎ ԼԻԼԻԹ  
 ԹԱՐՎԵՐԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 ՕՐԵՆՍԳՐՔԻ 119-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԵՎ  
 391-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1575, 2 փետրվարի 2021 թվականի) .....140
  
- \* ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....160
  
- \* ԻՈՂԱՆՆԱ ՉԱԽՄԱԽՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
 21-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Դ» ԿԵՏԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1576, 12 փետրվարի 2021 թվականի) .....179
  
- \* ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ  
 ՎՐԱ՝ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 416-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ  
 3-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1577, 19 փետրվարի 2021 թվականի) .....192
  
- \* ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
 Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....204
  
- \* ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....212
  
- \* ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
 Հ. ԹՈՎՍՄԱՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....229

|   |     |
|---|-----|
| * ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 29-ՐԴ ԳԼԽԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 223-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1578, 23 փետրվարի 2021 թվականի) ..... | 236 |
| * ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ՎԱՂԱՐՇՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ.....   | 252 |
| * «ՌԱՏԻՆԱ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 145-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1579, 2 մարտի 2021 թվականի) .....   | 255 |
| * ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ԴԱՏԱՎՈՐԻ ՄԱՍՈՎ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1580, 2 մարտի 2021 թվականի) .....   | 273 |
| * ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....  | 291 |
| * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶՍ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1581, 2 մարտի 2021 թվականի) .....    | 301 |
| * ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....  | 313 |

- \* 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
 «ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՂ ԼՅՈՒԹԵՐԻ ԵՎ  
 ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՍ  
 ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2000 ԹՎԱԿԱՆԻ  
 ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
 ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1582, 2 մարտի 2021 թվականի) .....323
  
- \* ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....328
  
- \* «ԱՐՏԱԴՐԱ-ՏՊԱԳՐԱԿԱՆ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
 ՕՐԵՆՍԳՐՔԻ 251-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ (ՄԻՆՉԵՎ 2011  
 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 23-Ի ՀՕ-233-Ն ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ  
 ԳՈՐԾՈՂ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՑՈՒՄ  
 ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1583, 9 մարտի 2021 թվականի) .....339
  
- \* ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ  
 Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ .....352
  
- \* ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
 ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
 ՕՐԵՆՍԳՐՔԻ 185-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ  
 ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1584, 9 մարտի 2021 թվականի) .....373
  
- \* ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
 ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
 ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ» ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
 ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1585, 16 մարտի 2021 թվականի) .....388

|   |     |
|---|-----|
| * ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 300.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՄ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (ՄԴՈ – 1586, 26 մարտի 2021 թվականի)..... | 403 |
|---|-----|

|   |     |
|---|-----|
| * ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆԻ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ..... | 443 |
|---|-----|

**III. ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

|   |     |
|---|-----|
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ԴԵՄՊԱՆԻ ՀԵՏ.....   | 477 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԴԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԱՔՍԻՄ ԼՈԳԱՆԳԻՆ.....                            | 478 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՅԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՄԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ.....                                | 479 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄԷ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ.....  | 479 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ.....  | 480 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ.....   | 481 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԻՆ.....   | 482 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԵԽԱՅԻ ԴԵՄՊԱՆԻՆ.....   | 483 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻՅՅԻ ԴԵՄՊԱՆԻՆ.....   | 483 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ.....   | 484 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ.....  | 485 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՅԵԼ ԼԻՏՎԱՅԻ ՄԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ.....  | 486 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻՅՅԻ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻՅՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ..... | 487 |
| * ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԲՐԱԶԻԼԻՅՅԻ ԴԵՄՊԱՆԻՆ.....   | 487 |



**ԱՐԹՈՒՐ ՂԱՄԲԱՐՅԱՆ**

*ՀՌՀ Իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆեսոր*



**ԱՐՏԱԿ ՂԱԶԱՐՅԱՆ**

*ՀՀ սահմանադրական դատարանի աշխատակազմի Իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ*

**ԴԱՏԱԽԱԶԱԿԱՆ ԱՆՀՆԱԶԱՆԴՈՒԹՅՈՒՆ ՔՆՆՉԱԿԱՆ  
ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՆԿԱՏԱՄԲ  
(ՕՐԵՆՍԴՐԻ ԼՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԱՏԱՎՈՐԻ ԹՈՂՏՎՈՒԹՅՈՒՆԸ)**

**Ամփոփագիր.** Հոդվածում քննարկվում է քննչական ենթակայության ինստիտուտի էությունը, նշանակությունը, բացահայտվում քննչական ենթակայության որոշման հարցում օրենսդրի, դատախազի, քննիչի լիազորությունների շրջանակը: Հեղինակները քննչական ենթակայության փոփոխման դատախազական լիազորության և դրա սահմանների հարցը քննարկում են մինչդատական վարույթի մոդելների լույսի ներքո: Առանձին քննարկվում է քննչական ենթակայության կանոնի խախտման բնույթի հարցը, հոդվածում փորձ է արվում պատասխանել հարցին, թե արդյոք այդպիսի խախտումը տեխնիկական բնույթի է, թե հիմնարար:

**Հիմնաբառեր.** Քննչական ենթակայություն, օրենսդրի լուրջություն, դատավորի թողտվություն, մինչդատական վարույթի մոդելներ:

**1. Ընդհանուր դրույթներ**

**1.1. Քննչական ենթակայության ինստիտուտի բնութագիրը**

Քննչական ենթակայության կանոնները նախաքննության մարմինների և դրանց ստորաբաժանումների միջև քրեական գործով քննություն կատարելու իրավասության տարանջատման չափանիշներ են: Քննչական ենթակայության հստակ կանոնների սահմանումը կանխում է նախաքննության տարբեր մարմինների միջև իրավասության վերաբերյալ վեճերը, աշխատանքի բաժանման ոլորտում ստեղծում է որոշակիություն, քանի որ նախաքննության

մարմիններին նախապես հայտնի են իրենց ենթակա գործերի շրջանակը:

*1.2. Հանրային իրավական լիազորությունների տարանջատումը քննչական ենթակայության ինստիտուտի ոլորտում*

Քննչական ենթակայության ինստիտուտի ոլորտում պետք է տարանջատել օրենսդիր մարմնի, դատախազի և քննիչի իրավասությունները:

**(a) Օրենսդիր մարմնի լիազորությունը:** Քննչական ենթակայության կանոնները որոշելու բացառիկ իրավասությունը վերապահված է ՀՀ Ազգային Ժողովին: Այս լիազորություն օրենսդրին վերապահելը կոչված է սահմանափակելու քրեական վարույթի հանրային մասնակիցների քննչական ենթակայությունը որոշելու և փոփոխելու հայեցողությունը:

**(b) Քննիչի լիազորությունը:** Քննիչն իրավասու է, օրենսդրի կողմից նախապես սահմանված ենթակայության կանոններին համապատասխան, գործը քննության համար ուղարկել այլ քննիչի: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ Քր.ԴՕ) 55-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քննիչը լիազորված է հանցագործության դեպքով նախապատրաստել նյութեր և հարուցել քրեական գործ և սույն օրենսգրքով սահմանված ենթակայության կանոններին համապատասխան՝ գործն ընդունել իր վարույթ կամ քննության համար ուղարկել այլ քննիչի: Քննիչը նշված լիազորությունից օգտվում է այն դեպքում, երբ ենթակայության կանոնների համաձայն հստակ է, որ տվյալ գործով նախաքննությունը պետք է կատարի այլ մարմին կամ մինևույն նախաքննության մարմնի այլ քննիչ: Նշված դեպքում քննիչը չի որոշում ենթակայությունը, քանի որ դա արդեն իսկ նախապես որոշված է օրենքով:

**(c) Դատախազի լիազորությունը:** ՀՀ Քր.ԴՕ-ի 190-րդ հոդվածում, որպես կանոն, հստակ սահմանված է նախաքննության այն մարմինը, ով իրավասու է տվյալ քրեական գործով նախաքննություն կատարել (քննչական ենթակայության իմպերատիվ կանոններ): Դատախազը միայն օրենքով ուղղակի նախատեսված դեպքերում կարող է փոխել կամ որոշել ենթակայությունը (քննչական ենթակայության որոշման հայեցողություն):



Քննչական ենթակայության իմպերատիվ կանոնների առկայության պայմաններում դատախազը չունի հայեցողություն՝ քրեական գործը նախաքննության մեկ մարմնից վերցնել և հանձնել մեկ այլ նախաքննության մարմնի: ՀՀ Քր.ԴՕ-ի 190-րդ հոդվածի համակարգային վերլուծությունից պարզ է դառնում, որ օրենքը դատախազին քննչական ենթակայությունը որոշելու հայեցողություն է տալիս հետևյալ դեպքերում՝

1. տարբեր պետական մարմինների քննիչներին ենթակա հանցագործությունների վերաբերյալ գործերը մեկ վարույթում միացնելու դեպքում,

2. այլընտրանքային ենթակայության դեպքում: Օրինակ՝ նախաքննությունը Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 215-րդ հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով կատարում են ազգային անվտանգության կամ մաքսային մարմինների քննիչները: Այս դեպքում դատախազը իրավասու է որոշել, թե որ մարմինը պետք է նախաքննություն կատարի,

3. գործի քննության ընթացքում այլ քննիչին ենթակա և 190-րդ հոդվածի 8-րդ մասով չնախատեսված հանցագործության բացահայտման դեպքում<sup>1</sup>,

4. ՀՀ քր. դատ. օր-ի 190-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերով նախատեսված գործերով նախաքննություն կատարում է այն մարմինը, որը հարուցել է տվյալ քրեական գործը: Այս դեպքում դատախազը կարող է գործը հանձնել նախաքննության այլ մարմնի,

5. անհրաժեշտության դեպքում ՀՀ գլխավոր դատախազը կարող է քննչական այլ մարմինների քննիչների վարույթից վերցնել և Հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնել ցանկացած այլ քրեական գործ, եթե դրա փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն:

Գործնականում դատախազությունը, անտեսելով քննչական ենթակայության իմպերատիվ կանոնները, ինքն իրեն լիազորություն է վերապահել<sup>2</sup> ցանկացած քրեական գործ մի նախաքննության մարմնից վերցնել և հանձնել նախաքննության այլ մարմնին: Նման

<sup>1</sup> Այս մասին տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2, Հեղ. Խումբ: Գլխ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Եր.: «Լուսաբաց հրատարակչատուն», 2018, էջեր 89-95:

<sup>2</sup> ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի վերաբերելի նորմում դատախազին քննչական ենթակայությունը որոշելու կամ փոխելու ունիվերսալ լիազորություն սահմանված չէ:

պրակտիկան ոչ այլ ինչ է, քան անհնազանդություն քննչական ենթակայության ինստիտուտի նկատմամբ:

### 1.3. Իրավակիրառ պրակտիկան

(a) **Խորհրդային իրավակիրառ պրակտիկան:** Քննչական ենթակայության կանոնների նկատմամբ քրեական հետապնդման մարմինների անհնազանդության պրակտիկան նորություն չէ, այն առկա է եղել նաև խորհրդային ժամանակաշրջանում: Ընդ որում, խորհրդային դատախազները խախտում էին նույնիսկ այս կամ այն գործերը դատախազության քննիչների ենթակայությանը հանձնելու մասին Միութենական գլխավոր դատախազի սահմանած կանոնները:

Այսպես՝ 1923թ. խորհրդային Քր.ԴՕ-ում առարկայական (ֆունկցիոնալ) քննչական ենթակայության մասին իմպերատիվ նորմեր նախատեսված չէին, դրանք հիմնականում սահմանված էին գերատեսչական ակտերով<sup>1</sup>: Օրինակ՝ պետական և հասարակական սեփականության հափշտակությունների գործերով քննության որակը բարձրացնելու նպատակով Միութենական գլխավոր դատախազի 12.06.1947թ. Թիվ 139 հրամանով տվյալ գործերը հանձնվել էր դատախազության քննիչների ենթակայությանը: Քննչական ենթակայության օրենսդրական կանոնների և Գլխավոր դատախազի այդ հրամանի կատարման պրակտիկան ուսումնասիրած մասնագետներն արձանագրել են. «Քննչական ենթակայության մասին օրենքի կանոնները խախտվում են, քանի որ դատախազները հետաքննության մարմնից ժամանակին չեն վերցնում նրանց ոչ ենթակա գործերը և չեն հանձնում դատախազության քննիչներին: Մի շարք հանրապետություններում դատախազությունը և ոստիկանությունն այս հարցում թույլ են տալիս նույնիսկ աղավաղումներ: Նրանք, վկայակոչելով փորձաքննությունների կամ այլ քննչական գործողությունների կատարման անհրաժեշտությունը, ձգձգում են հետաքննությունը, իսկ հսկող դատախազները երբեմն իրենք են նպաստում այդ խախտումների կատարմանը»<sup>2</sup>: Հեղինակը, որպես աղաղակող խախտման օրինակ, նշում է Հայաստանի ԽՍՀ Էջմիածնի

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Строгович М. С., Карницкий Д. А.** Уголовно-процессуальный кодекс РСФСР: Текст и постатейный комментарий. 2-е издание.-М.: Юридическое издательство НКЮ РСФСР, 1926. Էջ 148-149:

<sup>2</sup> **Белкин Б., Альтшуллер М.** Строго соблюдать подследственность уголовных дел // Социалистическая законность. 1949. № 8.- С. 42 – 45.

դատախազության պրակտիկայի մի դեպք, երբ պետական խանութից կատարված հափշտակության գործով դատախազը, գործի քննությունը դատախազության քննիչին հանձնելու փոխարեն, չունենալով հետաքննության ժամկետը երկարացնելու հիմքեր, այն երկարացրել է, որի պատճառով գործը երկու ամիս մնացել է ոստիկանության վարույթում:

Ուշագրավ է այն, որ նույնիսկ խորհրդային ժամանակաշրջանում հեղինակները քննչական ենթակայության մասին օրենքի պահանջների կատարումն ապահովելու հարցում օգնություն էին ակնկալում նաև ժողովրդական դատավորներից՝ նրանց առաջարկելով վարույթ չընդունել այն գործերը, որոնցով քննչական ենթակայության կանոնները խախտվել են<sup>1</sup>:

**(b) Ժամանակակից իրավակիրառ պրակտիկան Ռուսաստանում:** ՌԴ դատական պրակտիկայում առկա են դեպքեր, երբ դատարանները քննչական ենթակայության խախտումները համարել են էական կամ հիմնարար խախտումներ: Այդ դեպքերում ՌԴ դատարանները գործը վերադարձրել են դատախազին, այն հիմնավորմամբ, որ քննչական ենթակայության խախտման հետևանքով մեղադրական եզրակացությունը իրավաբանական ուժ չունի, հետևաբար դրա հիման վրա անհնար է կայացնել դատավիճակ կամ այլ դատական ակտ: Օրինակ՝ Բուրյատիայի Հանրապետության գերագույն դատարանի նախագահությունը 24.01.2014թ. № 4У-62/2014 որոշմամբ բավարարել է ամբաստանյալի հսկողական բողոքը և որոշել է գործը վերադարձնել դատախազին, քանի որ քննչական ենթակայության խախտումների արդյունքում կազմվել է իրավաբանական ուժ չունեցող մեղադրական եզրակացություն, ինչը բացառում է այդ եզրակացության հիման վրա դատարանի կողմից դատավճիռ կամ այլ որոշում կայացնելու հնարավորությունը<sup>2</sup>:

Մեկ այլ գործով ՌԴ Ռոստովի շրջանային դատարանը, քննարկելով քրեական գործը դատախազին վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման օրինականության դեմ բերված դատախազի բողոքը, 21.06.2016թ. № 22-3218/2016 որոշմամբ արձանագրել է.

«... տարածքային քննչական ենթակայության խախտումը դատա-

<sup>1</sup> Белкин Б., Альтшуллер М. Указ. Соч.- С.45.

<sup>2</sup> <http://www.gcourts.ru>

վարական օրենքի նորմերի հիմնարար խախտում է, քանի որ տվյալ դեպքում մեղադրանքը վերջնական խմբագրությամբ անձին ներկայացրել է ՌԴ Քր.ԴՕ-ի 152-րդ հոդվածի 5-րդ մասի տեսանկյունից նման լիազորություն չունեցող քննիչը, քրեական գործով մեղադրական եզրակացությունը քրեադատավարական օրենքի խախտումով կազմել է ոչ պատշաճ քննիչը, այն համաձայնեցվել է ՌԴ Քր.ԴՕ-ի 220-րդ հոդվածի 6-րդ մասով ոչ պատշաճ քննչական բաժնի պետի հետ և արդյունքում հաստատվել է դատախազի կողմից, ով կոնկրետ դեպքում չուներ ՌԴ Քր.ԴՕ-ի 221-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դատավարական լիազորություններ, ինչը իր հերթին բացառում է մեղադրական եզրակացության հիման վրա դատարանի կողմից դատավճռի կամ այլ որոշման կայացումը»<sup>1</sup>:

**(c) Ժամանակակից իրավակիրառ պրակտիկան Հայաստանում:** Ինչպես նշվեց, Հայաստանում ներկայումս ձևավորված կայուն պրակտիկայի համաձայն՝ դատախազը, քննչական ենթակայության իմպերատիվ կանոնների անտեսմամբ, քրեական գործը նախաքննության մի մարմնից վերցնում և հանձնարարում է նախաքննության մեկ այլ մարմնին: Օրինակ՝ քրեական գործերից մեկով անձին մեղադրանք է առաջադրվել ՀՀ ՔՕ-ի 34-312-րդ հոդվածի 2-րդ մասով: Նշված հոդվածով քննվող քրեական գործը ՀՀ Քր. ԴՕ 190-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ենթակա է ՀՀ քննչական կոմիտեի (այսուհետ՝ ՔԿ) քննիչներին, մինչդեռ քրեական գործը հարուցել է և գործով նախաքննությունն իրականացնում են ՀՀ ազգային անվտանգության ծառայության (այսուհետ՝ ԱԱԾ) քննիչները: Պաշտպանը միջնորդություն էր ներկայացրել քննիչին քննչական ենթակայության կանոնների համապատասխան քրեական գործը ուղարկել պատշաճ նախաքննության մարմնին այն հիմնավորմամբ, որ այլ փաստակազմի բացակայության պայմաններում՝ քննիչը ՀՀ Քր.ԴՕ 55-րդ հոդվածի 2-րդ մասի ուժով՝ ի պաշտոնե պարտավոր է կիրառել օրենքով սահմանված ենթակայության կանոնները և կազմակերպել գործի փոխանցումը պատշաճ նախաքննության մարմնին: Միջնորդությունը քննիչի կողմից մերժվել էր այն հիմնավորմամբ, որ ԱԱԾ քննչական դեպարտամենտը ստացել է ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի գրությունը, համաձայն որի՝

<sup>1</sup> <https://sudact.ru/regular/doc/dN1WwFAyIB5h/>

քրեական գործի նախաքննության կատարումը ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված կարգով հանձնարարվել է ԱԱԾ քննչական դեպարտամենտին:

Թվում էր՝ դատարանները պետք է հակազդեն դատախազության նման անհնազանդությանը, սակայն իրականությունը վկայում է այլ բանի մասին: Քննչական ենթակայության օրենսդրական իմպերատիվ կանոնները դատախազի գրությամբ ad hoc վերացնելու (գործը նախաքննության մի մարմնից վերցնել և այլ մարմնի հանձնել) ոչ իրավաչափ պրակտիկան ամեն գնով «օրինականացնելու» նպատակով՝ դատարանները դիմում են երկու ոչ իրավաչափ հնարքի:

Նախ՝ դատավորների մեծ մասը շարունակում են հիմք ընդունել դատախազության աշխատասենյակներում տարիներ առաջ ձևավորված ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի այն մեկնաբանությունը՝ թե դատախազը ունի անսահմանափակ լիազորություն ցանկացած քրեական գործ նախաքննության մի մարմնից հանձնել մեկ այլ մարմնին:

Երկրորդ՝ օրենքի դրույթներին տալիս են ակնհայտ մանիպուլատիվ մեկնաբանություններ: Օրինակ՝ դատավորը մերժել է պաշտպանի՝ գործի վարույթը կարճելու (քննչական ենթակայության կանոնների խախտմամբ քննված լինելու հիմքով) միջնորդությունը, հետևյալ հիմնավորմամբ.

«ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է, որ նախաքննությունը ՀՀ ՔՕ 308-րդ հոդվածով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով կատարում է նախաքննության այն մարմինը, որի վարույթում գտնվող գործի քննության ընթացքում բացահայտվել է այդ հանցագործությունը»:

Ակնհայտ է, որ այս նորմը վերաբերում է այն դեպքերին, երբ, օրինակ՝ ԱԱԾ քննիչը իր օրինական վարույթում քննվող գործով բացահայտում է ՀՀ ՔՕ-ի 308-րդ հոդվածի հատկանիշներ պարունակող նոր արարք և նոր հարուցված գործով կատարում է քննություն: Այն չի վերաբերում ԱԱԾ օպերատիվ-հետախուզական գործունեության տվյալների հիման վրա նույն մարմնի՝ ՀՀ ՔՕ-ի 308-րդ հոդվածով հարուցված քրեական գործերին:

Ավելին՝ դատական գործերից մեկով դատավորը կատարել է անհավատալի դատողությունը.

«ՀՀ Քր.ԴՕ 190 հոդվածով նախատեսված քննչական ենթակայության կանոնները իրենց բնույթով անփոփոխելի չեն և համապատասխան հանրային մասնակիցների կողմից կարող են փոխվել

կոնկրետ գործով օրենքով սահմանված քննչական ենթակայության կանոնները: Դատարանը գտնում է, որ քննչական ենթակայության կանոնների փոփոխության ճկունությունը պայմանավորված է տարբեր հանգամանքներով, ինչպիսին կարող է լինել քննչական մարմինների ծանրաբեռնվածությունը, տեխնիկական և կադրային հագեցվածությունը և այլն: Հետևաբար, հսկող դատախազը, նրա վերադասը կարող են որոշել քրեական գործի ենթակայությունը, բացառությամբ ՀՀ գլխավոր դատախազի բացառիկ լիազորությունների մեջ մտնող դեպքերի»<sup>1</sup>:

**2. Քննչական ենթակայությունը փոխելու դատախազի լիազորության սահմանները և դրա վրա ազդող գործոնները**

*2.1. Ընդհանուր նկատառումներ*

Քննչական ենթակայության հարցերը կարգավորելիս, օրենսդիրը պետք է ելնի տվյալ պետության մինչդատական վարույթի մոդելի առանձնահատկություններից: Նախաքննություն իրականացնող մարմինն փոխելու (քննչական ենթակայության կանոնները փոխելու) դատախազի լիազորության սահմանների հարցը նույնպես կախված է քրեադատավարական համակարգում նախաքննության կազմակերպման մոդելից:

*2.2. Քննչական ենթակայության կանոնները փոխելու դատախազի լիազորության կապը մինչդատական վարույթի մոդելների հետ*

**(a) Դատական նախաքննությունը և դատախազի սահմանափակ լիազորությունը:** Այն դեպքում, երբ նախաքննությունը դատական է, այսինքն իրականացնում է դատական իշխանության կազմում գտնվող քննիչ-դատավորը (ով իրավասու է նաև արդարացման հիմքով քրեական հետապնդումը դադարեցնելու ձևով լուծել քրեաիրավական վեճը), ապա դատախազը չպետք է ունենա նախաքննություն իրականացնող մարմնին փոխելու լիազորություն:

Բանն այն է, որ քննիչ-դատավորը, ինստիտուցիոնալ առումով գտնվելով դատական իշխանության կազմում, օժտված է դատավորին բնորոշ անկախության երաշխիքներով, ինչը օբյեկտիվորեն գր-

<sup>1</sup> Դատավորը դատական ակտում որոշ մտքեր փոխառնել է հայտնի դատավարագետ Լ. Գոլովկոյի խմբագրությամբ գրված դասագրքից (տե՛ս Курс уголовного процесса. Под ред. Л. В. Головки.-М.: Статут, 2016. էջ 652), սակայն այս դեպքում թույլ տալով որոշակի խեղաթյուրումներ: Կարծում ենք՝ հարգարժան դատավորը, քննչական ենթակայության բնույթի մասին ընդհանուր բնույթի դատողություն անելիս, անտեսել է, որ Լ. Գոլովկոն և այդ բաժնի մյուս հեղինակն խոսել են միայն հայեցողական քննչական ենթակայության որոշելիս ճկուն մոտեցման և դրա վրա ազդող տեխնիկական գործոնների մասին: Ավելին՝ ռուս գիտնականները խոսում են ոչ թե քննչական ենթակայությունը փոխելու, այլ հայեցողական քննչական ենթակայությունը որոշելու ճկունության մասին, որի հայեցողական լիազորությունը օրենսդիրը վերապահել է դատախազին կամ քննչական մարմնի ղեկավարին:

կում է գործադիր իշխանության կազմում (կամ դրանից դուրս) գտնվող մարմնին դատախազին ազդելու անկախ դատական իշխանության մարմնի վրա, այդ թվում քննչական ենթակայությունը փոփոխելով:

Դատական նախաքննության մոդելում (օրինակ՝ Ֆրանսիայի քրեական դատավարությունում) դատախազը չունի քննիչ-դատավորին վարույթից հեռացնելու<sup>1</sup>, նրան փոփոխելու լիազորություն, դատախազը իրավասու է միայն այդ մասին ներկայացնել միջնորդություն (պահանջ), որը լուծում է կա մ քննիչ-դատավորը<sup>2</sup>, կա մ դատական իշխանության կազմում գտնվող մարմինը<sup>3</sup>:

**(b) Դատախազական հետաքննությունը և դատախազի լայն լիազորությունները:** Հարցը տրամագծորեն հակառակ լուծումն է ստանում, երբ քննությունը ոչ դատական ձևի է<sup>4</sup>, այսինքն՝ իրականացվում է հետաքննության ձևով: Նախ՝ այս մոդելում հետաքննության մարմինը չունի դատավորի կարգավիճակ, իսկ մայրցամաքային ավանդույթներ ունեցող երկրներում հետաքննությունը դիտարկվում է իբրև դատախազական ենթակայության ներքո իրականացվող գործունեություն, ըստ այդմ էլ գործում է «այն ինչ իրավասու է անել հետաքննության մարմինը, իրավասու է անել դատախազը» կանոնը<sup>5</sup>: Ստացվում է՝ քրեական դատավարությունում դատախազի լիազորությունների մի մասը «պատվիրակվում է»<sup>6</sup> հետաքննության մարմնին (ոստիկանությանը): Օրինակ՝ ֆրան-

<sup>1</sup> **Гамбарян А. С.** Отстранение следователя от производства: ответственность или прокурорская “расправа”? Расследование преступлений: проблемы и пути их решения. 2018. № 4 (22).-С. 79-93.

<sup>2</sup> Ֆրանսիայի Քր.ԴՕ-ի 657-րդ հոդվածի համաձայն՝ մինչև դեպքով երկու քննիչ-դատավորի կողմից միաժամանակ քննություն անցկացնելու պարագայում, դատախազի պահանջով քննիչ-դատավորինեց մեկը մյուսին կարող է «զիջել» իր լիազորությունը, իսկ Ֆրանսիայի Քր.ԴՕ 658-րդ հոդվածի համաձայն՝ երկու քննիչ-դատավորներից մեկը մյուսին իր լիազորությունը «զիջելու» անհամաձայնության դեպքում՝ հարցը լուծվում է քննչական պալատի կողմից:

<sup>3</sup> Ֆրանսիայի Քր.ԴՕ-ի 84-րդ հոդվածի համաձայն՝ միջնորդությունը լուծում է դատարանի նախագահը:

<sup>4</sup> Մայրցամաքային ավանդական մոտեցումների պարագայում հետաքննությունը դիտարկվում է ոչ թե նախնական քննության ինքնուրույն ձև, այլ «մինչդատական» վարույթի ինքնուրույն փուլ:

<sup>5</sup> Այդպիսի կանոնակարգում նախատեսված է, օրինակ, Ֆրանսիայի Քր.ԴՕ-ի 68-րդ հոդվածով, Գերմանիայի Քր.ԴՕ-ի 161-րդ հոդվածով:

<sup>6</sup> Այս առումով հետաքրքիր է այն, որ Ֆրանսիական դոկտրինում նշվում է, որ դատական ոստիկանության սպան իրավասու չէ իրականացնել իր դատավարական պարտականությունները, քանի դեռ վերադաս դատախազը համապատասխան որոշմամբ նրան չի օժտվել լիազորություններով, ընդ որում՝ դատախազի որոշման մեջ նշվում է լիազորությունների ժամկետն ու ծավալը: Տե՛ս **Головко Л. В.** Дознание и предварительное следствие в уголовном процессе Франции.-М.: Фирма «СПАРК», 1995. Էջ 24-25: Հարցը ըստ էության նույն կերպ է լուծվում նաև գերմանական քրեական դատավարությունում, որտեղ խոսվում է «դատախազի լիազորություններով օժտված հետաքննիչի» մասին: Ս. Գ. Կոնովալովը նշում է. «...«դատախազի լիազորություններով հետաքննիչը» ոստիկանության աշխատակից է, որը լիազորված է կատարելու առանձին քննչական գործողություններ՝ այդպիսի կարգադրություն տված դատախազության կամ այն գլխավորող դատախազի անունից», տե՛ս **Коновалов С. Г.** Элементы германской модели досудебного производства в уголовном процессе постсоветских государств. Дис. ... канд. юрид. наук.-М.: 2018, էջ 56:

սիական քրեական դատավարությունում, եթե քննությունը կատարվում է ոստիկանական հետաքննության ձևով, ապա դատախազը իրավասու է որոշել ինչպես հետաքննություն կատարող գերատեսչությունը և այն կատարող անձին, այնպես էլ գործը փոխանցել մի մարմնից մյուս մարմին<sup>1</sup>:

Գերմանիայի քրեական դատավարությունում, որտեղ «մինչդատական» վարույթը կազմակերպվում է միայն հետաքննության և քրեական հետապնդման հարուցման փուլերով, դատախազը օժտված է հետաքննչական ենթակայությունը փոփոխելու «անսահմանափակ» հնարավորությամբ<sup>2</sup>:

Մինչդատական վարույթի կազմակերպման այս մոդելում ենթակայության ինստիտուտը կրում է տեխնիկական բնույթ, քանի որ հետաքննիչը ինստիտուցիոնալ տեսանկյունից դատական իշխանության մաս չէ, իսկ ֆունկցիոնալ տեսանկյունից նրա գործունեության մեջ բացակայում են կիսադատական բնույթի մի շարք տարրեր (օրինակ՝ քրեական հետապնդումը դադարեցնելը):

**(c) «Խառը» մոդելի նախնական քննությունը և դատախազի լիազորության անորոշությունը**

(1) *Ընդհանուր նկատառումներ:* Քննչական ենթակայությունը որոշելու դատախազի լիազորության սահմանների խնդիրը ծագում է խորհրդային և հետխորհրդային մի շարք պետություններին հատուկ «մինչդատական» վարույթի կազմակերպման «խառը» մոդելին:

Բանն այն է, որ դատախազը մի կողմից պետք է ունենա ենթակայությունը որոշելու (փոփոխելու) լիազորություն, քանի որ քննությունը ինստիտուցիոնալ տեսանկյունից դատական չէ, մյուս կողմից՝ դատախազի այդ լիազորությունը չպետք է լինի անսահմանափակ, քանի որ քննությունը չի նույնանում մաքուր ոստիկանական հետաքննության հետ: Այլ կերպ ասած՝ ֆունկցիոնալ հարթությունում քննիչի գործառույթները թեև շատ դեպքերում նմանվում են ոստիկանական հետաքննություն կատարող մարմնի գործառույթներին, սակայն չեն նույնանում դրանց հետ: Խորհրդային, իսկ

<sup>1</sup> Այս մասին մանրամասն տե՛ս **Головко Л.В.** Дознание и предварительное следствие в уголовном процессе Франции.-М.: Фирма «СПАРК», 1995, էջ 25-26:

<sup>2</sup> Դատական որոշումներով նույնպես հաստատվել է, որ անհրաժեշտության դեպքում դատախազը կարող է հանձնարարել, օրինակ, մաքսային մարմնի աշխատակիցներին գործը քննել, եթե նույնիսկ այն գտնվում է «օրդինար» ոստիկանության ենթակայության ներքո: St u Urteil des Bundesgerichtshofs vom 24.10.1989 № 5 StR 238-239/89 // Die Entscheidungen des Bundesgerichtshofs in Strafsachen. 36, 283. մեջբերումն ըստ՝ Коновалов С.Г., նշվ. աշխ. էջ 57:



այնուհետ՝ հետխորդիրդային քննիչը, ով օժտված է դատավարական ինքնուրույնությամբ, պահպանում է կիսադատական (յուրիս-դիկցիոն) որոշակի գործառույթներ, որոնք բնորոշ են ոչ թե քննիչ-ուստիկանին, այլ քննիչ-դատավորին<sup>1</sup>:

(2) *Դոկտրինալ տեսանկյունը*: Ավանդաբար գերիշխել է այն մոտեցումը, որ հսկողություն իրականացնող դատախազը բացառիկ լիազորություն ունի որոշելու քրեական գործերի ենթակայությունը: Քննչական ենթակայության հարցերի լուծմանը դատախազության մասնակցությունը դիտվում էր որպես քննչական ենթակայության օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ դատախազական հսկողության ոլորտ<sup>2</sup>:

Որոշ հեղինակներ նշում են, որ դատախազն իրավասու է, քննչական ենթակայության կանոններին համապատասխան, քրեական գործը վերցնել և հանձնել այլ նախաքննության մարմնի, ցանկացած քրեական գործ հանձնել դատախազության քննիչներին<sup>3</sup>: Հեղինակները մի կողմից նշում են **ցանկացած քրեական գործ** հանձնել դատախազության քննիչին, մյուս կողմից այդ լիազորությունը թղթակցում են քննչական ենթակայության կանոնների հետ:

Ժամանակակից գրականության մեջ քննչական ենթակայությունը որոշելու դատախազի լիազորությունները սահմանափակվում են առավելապես քննչական ենթակայության վերաբերյալ վեճերի լուծմամբ<sup>4</sup>, իսկ առանձին հեղինակներ առաջարկում են օրենսդրության մեջ հստակ սահմանել, որ դատախազը քննչական ենթակայության վերաբերյալ վեճը լուծելիս կայացնում է պատճառաբանված որոշում<sup>5</sup>:

#### (d) Միջանկյալ եզրահանգումներ: Այսպիսով՝

1. Նախաքննություն իրականացնող մարմնին փոխելու դատախազի լիազորությունը և դրա սահմանները ուղիղ համեմատական է մինչդատական վարույթի մոդելին:

<sup>1</sup> Այս տեսանկյունից իրավացի է Լ. Գոլովկոն, ով պնդում է, որ ռուսական քննիչի՝ քննչական դատավորից ժամանակավոր գործառույթը, ըստ էության գործը լուծող դատավորի գործառույթի մաս է: Տե՛ս **Головко Л. В.** Теоретические основы модернизации учения о материальной истине в уголовном процессе // Библиотека криминалиста. Научный журнал. 2012. №4 (5), էջ 85:

<sup>2</sup> **Селютин А. В.** Проблемы разграничения подследственности в уголовном процессе. Автореф. дисс. ... канд. юрид. наук.-М.: 2000.-С. 15.

<sup>3</sup> **Александров А., Марчук А.** Подследственность уголовных дел. // Электронный ресурс, 2003. [http://www.juristlib.ru/book\\_2772.htm](http://www.juristlib.ru/book_2772.htm)(26.12.2014).

<sup>4</sup> **Захаров Н. В.** Теория и практика определения подследственности уголовных дел. Автореф. дисс. ... канд. юрид. наук.-Самара, 2009.-С 16.

<sup>5</sup> **Османова Н. В.** Институт подследственности в досудебном уголовном производстве. Автореф. дисс. ... канд. юрид. наук.-М., 2013.-С. 9.

2. Քննչական ենթակայությունը փոխելու հարցում օրենսդրի կարգավորումները, կամ դրանց մեկնաբանությունը և կիրառումը չպետք է հակասի մինչդատական վարույթի կազմակերպման համապատասխան մոդելի տրամաբանությանը:

3. Դատախազի քննչական ենթակայությունը որոշելու սահմանների խնդիրը ծագում է հիմնականում մինչդատական վարույթի կազմակերպման «խառը» մոդելի դեպքում: Պատմությունը ցույց է տալիս, որ խորհրդային և հետխորհրդային ժամանակաշրջանում օրենսդիրը չի կարողացել գտնել քննչական ենթակայությունը որոշելու դատախազի լիազորությունների սահմանների հարցը լուծելու հստակ չափանիշ, իսկ այդ ոլորտում իրավական քաղաքականությունը աչքի է ընկնում վայրիվերումներով:

2.3. Հարցի պատմական զարգացումը

(a) **ՀԽՍՀ 1923թ. Քր.ԴՕ կանոնակարգումները:** ՀԽՍՀ 1923թ. Քր.ԴՕ 124-րդ հոդվածով սահմանված էր, որ դատախազության որոշմամբ գործը կարող է փոխանցվել մի քննչական շրջանից մյուսին, երբ առկա է Քր. ԴՕ 43-րդ հոդվածում մատնանշված առիթները (դատավորի բացարկման հիմքերը), ինչպես նաև այն դեպքերում, երբ այդպիսի փոխանցումով գործի քննությունն ավելի արագ և ավելի լրիվ կարող է լինել<sup>1</sup>: Այս նորմի կապակցությամբ պետք է հայտնել երկու նկատառում:

Նախ՝ ՀԽՍՀ 1923թ. Քր.ԴՕ-ի 124-րդ հոդվածը չէր նախատեսում տարբեր նախաքննության մարմինների ենթակայությունը փոփոխելու դատախազի լիազորություն<sup>2</sup>: Դատախազը օժտված էր միայն միննույն քննչական մարմնի քննիչների տարածքային ենթակայություն փոփոխելու իրավասությամբ:

Երկրորդ՝ ՀԽՍՀ 1923թ. Քր.ԴՕ-րը 124-րդ հոդվածով սահմանված էր շրջանային քննչական մարմինների ենթակայության փոփոխման

<sup>1</sup> 1922 թ. ՌՖՏՍՀ Քր.ԴՕ-ում գործը մի վայրի քննիչից մեկ այլ վայրի քննիչին հանձնում էր նահանգային խորհրդային ժողովրդական դատարանը (1922 թ-ի ՌՖՏՍՀ Քր. ԴՕ 127-րդ հոդված), ապա 1923 թ. ՌՖՏՍՀ Քր.ԴՕ-ի այդ լիազորությունը վերապահվեց դատախազին (1923 թ-ի ՌՖՏՍՀ Քր. ԴՕ 124-րդ հոդված): Նույն կերպ՝ քննչական ենթակայության վերաբերյալ վեճերի լուծումը. եթե այն 1922 թ. Քր.ԴՕ-ով վերապահված էր դատարանին (1922 թ-ի ՌՖՏՍՀ Քր.ԴՕ-ի 130-րդ հոդված), ապա այդ լիազորությունը ևս վերապահվեց դատախազին (1923 թ. ՌՖՏՍՀ Քր.ԴՕ127-րդ հոդված): Եթե սկզբնապես դատական նախնական քննությունը ենթակայության հարցերը լուծում էր դատարանը, ապա հետագայում՝ աստիճանաբար դատական նախնական քննությունից հրաժարվելիս (նույնիսկ դեռևս փաստացիորեն այն չվերացնելու պարագայում) ենթակայության հարցի լուծումը վերապահեց դատախազին, ինչը նախաքննության «դատախազականացման» ցուցիչներից մեկն էր:

<sup>2</sup> Քննչական շրջանի քննիչից գործը վերցնելու և այն Արդարադատության ժողովրդական Կոմիսարիատի դատախազության բաժնում՝ կարևորագույն գործերի շուտափույթ քննության քննիչներին հանձնելու լիազորություն օրենքի տեքստում նախատեսված չէր:

հարցում դատախազի նպատակային հայեցողական լայն լիազորություն: Տարածքային քննչական ենթակայությունը փոփոխելու հայեցողական լիազորությունը սահմանափակված էր միայն գործի արագ և լրիվ քննության նպատակով:

Թեև Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո որոշ ժամանակ քննիչները (ընդ որում ոչ բոլորը) ինստիտուցիոնալ առումով շարունակում էին մնալ դատական իշխանության կազմում<sup>1</sup>, սակայն ֆունկցիոնալ առումով, իրենց կարգավիճակով հավասարեցվել էին դատախազի հսկողության ներքո գտնվող հետաքննության մարմնի աշխատակցի հետ: Բանն այն է, որ տվյալ ժամանակահատվածում քննիչը զրկվել էր յուրիսդիկցիոն լիազորությունների մի մասից<sup>2</sup> (օրինակ քննիչը փաստացի օժտված չէր գործը կարճելու (քրեական հետապնդումը դադարեցնելու) լիազորությամբ<sup>3</sup>): Օրենսդրությամբ սահմանված չէր քննիչի դատավարական ինքնուրույնության մասին պահանջ<sup>4</sup>, իսկ նախաքննության նկատմամբ հսկողությունը վերապահվել էր դատախազին, ով իրավասու էր քննիչին տալ պարտադիր ցուցումներ (ՀԽՍՀ 1923թ. Քր.ԴՕ-ի 118-րդ հոդված):

Այսպիսով՝ անցումային այդ փուլում (դատական նախաքննությունից անցումը դեպի ոչ դատական կամ կիսադատական նախաքննության<sup>5</sup>) դատախազը մի կողմից օժտված էր **տարածքային քննչական ենթակայությունը փոխելու լայն հայեցողությամբ**, մյուս կողմից զրկված էր **տարբեր նախաքննության մարմինների** ենթակայությունը փոխելու հնարավորությունից:

<sup>1</sup> 1928-1929թթ. խորհրդային օրենսդրությամբ կատարված փոփոխությամբ նախաքննությունը «զրկվեց» դատական բաղադրիչից՝ վերացվեց դատական քննիչի ինստիտուտը: Տե՛ս Памятники российского права. В. 35т. Т. 29. Уголовно-процессуальные кодексы РСФСР. под общ. Ред. В.А. Лазаревой, Р.Л. Хачатурова.-М.; «Юрлитинформ», 2016, էջ 72:

<sup>2</sup> Այնուամենայնիվ պետք է արձանագրել, որ կատարված փոփոխություններով քննիչը դեռևս պահպանում էր քննիչ-դատավորից «ժառանգած» այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են օրինակ՝ քննիչի՝ քաղաքացիական հայցվոր (օրենսգրքի տերմինաբանությամբ՝ քաղաքացիական պահանջատեր) ճանաչելու կամ այդպիսի միջնորդությունը մերժելու լիազորությունը (1923թ ՀԽՍՀ Քր.ԴՕ-ի 120-րդ հոդված), մեղադրյալին կալանավորելու (1923թ ՀԽՍՀ Քր.ԴՕ-ի 158 հոդված) լիազորությունները, որոնք գրականության մեջ բնութագրվում են իբրև «յուրիսդիկցիոն լիազորությունների քրիստոմատիկ օրինակներ»: Տե՛ս u **Головко Л. В.** Дознание и предварительное следствие в уголовном процессе Франции.-М.: Фирма «СПАРК», 1995, էջ 69:

<sup>3</sup> Թեև 1923թ ՀԽՍՀ քր.դատ.օր-ի 203-րդ հոդվածից առաջին հայացքից կարելի էր թյուր կարծիք ձևավորել, թե՛ դրանով նախատեսվում է քննիչի նախաքննությունը կարճելու լիազորություն, այնուամենայնիվ նույն օրենսգրքի 226-րդ, 233-239-րդ հոդվածների համադրված վերլուծությունը վկայում է այն մասին, որ քննիչը զրկված է եղել քրեական գործը կարճելու լիազորությունից, և ունեցել է «գործը կարճելու եզրակացությամբ» դատարան դիմելու լիազորություն: Իսկ գործը կարճելու լիազորությամբ օժտված է եղել ժողովրդական դատարանը:

<sup>4</sup> Памятники российского права. В. 35т. Т. 29. Уголовно-процессуальные кодексы РСФСР. под общ. Ред. В.А. Лазаревой, Р.Л. Хачатурова.-М.; Юрлитинформ, 2016. - С.120.

<sup>5</sup> Խորհրդային քրեական դատավարությունում դատական նախաքննության վերացման մասին մանրամասն տե՛ս u Ղազարյան Ա. Մինչդատական վարույթի կազմակերպման մոդելները (պատմական և համեմատախիթական վերլուծություն), Երևան, 2019, էջեր 61-77:

(b) **ՀԽՍՀ 1961թ. Քր.ԴՕ կանոնակարգումները:** ՀԽՍՀ 1961թ. Քր.ԴՕ-ով որոշ չափով հստակեցվեց քննչական ենթակայությունը որոշելու (փոխելու) դատախազի լիազորությունը:

Նախ օրենսգրքի տեքստային վերլուծությունից պարզ է դառնում, որ Քր.ԴՕ 117-րդ հոդվածը հստակ սահմանում էր քննչական ենթակայության իմպերատիվ կանոններ՝ բացառելով այդ հարցում դատախազի հայեցողությունը: Օրենսդիրը քննչական ենթակայության իմպերատիվ կանոններ էր նախատեսել նույնիսկ միննույն հանցագործության քննության երկակի ենթակայություն դեպքերի համար:

Միննույն ժամանակ՝ դատախազի հսկողական լիազորությունները սահմանող Քր.ԴՕ 209-րդ հոդվածը դատախազին վերապահում էր **իր իրավասության սահմաններում** գործը նախաքննության մի մարմնից մյուսին հանձնելու լիազորություն: Առաջին հայացքից թվում է, որ այս կարգավորումը չի համապատասխանում Քր.ԴՕ 117-րդ հոդվածի տրամաբանությանը, քանի որ այն հստակ սահմանում էր քննչական ենթակայության կանոնները (ինչը բացառում էր ենթակայությունը փոխելու դատախազի հայեցողական լիազորությունը): Հարց է ծագում Քր.ԴՕ 209-րդ հոդվածով ամրագրված գործը նախաքննության մի մարմնից մյուսին հանձնելու դատախազի լիազորությունը ո՞ր դեպքում է հնարավոր իրագործել: Գործնականում Քր.ԴՕ 209-րդ հոդվածում ամրագրված լիազորությունը կարելի էր այնպես մեկնաբանել, ըստ որի դատախազն օժտված է քննչական ենթակայությունը փոփոխելու «անսահման» իրավասությամբ (այս պարագայում անտեսվում է Քր.ԴՕ 209-րդ հոդվածում նախատեսված «իրավասության սահմաններով» պայմանը):

Հնարավոր է մեկ այլ մեկնաբանություն: Դատախազը գործը մի քննչական մարմնից մյուսին հանձնելու օրենքով նախատեսված լիազորությունը իրագործում է հետևյալ իրավասությունների սահմաններում.

1. Երբ մի քննչական մարմնի քննիչ հարուցել է այլ քննչական մարմնին ենթակա գործ և անհետաձգելի գործողություններ կատարելուց հետո տվյալ վայրի դատախազը Քր.ԴՕ 117-րդ հոդվածի կանոններով լուծում է քննչական ենթակայության հարցը (ավելի ճիշտ քրեական գործը այն մարմնին փոխանցելու հարցը, ում օրենքով ենթակա է գործի նախաքննություն)<sup>1</sup>.

<sup>1</sup> Քր.ԴՕ 121-րդ հոդվածը նախատեսում էր, որ քննիչը, տեղեկություն ստանալով այլ քննչական մարմնի քննությանը ենթակա հանցագործության մասին, պարտավոր է քրեական գործ հարուցել, անհետաձգելի քննչական գործողություններ կատարել և գործը հանձնել ըստ քննչական ենթակայության: Ընդ որում նույն հոդվածը կանոնակարգում էր, որ գործի քննչական ենթակայության հարցը լուծում է այն վայրի դատախազը, որտեղ սկսվել է քննությունը:

2. Երբ առկա էր քննչական ենթակայության վերաբերյալ վեճ, որը լուծում է գլխավոր դատախազը<sup>1</sup>:

Քննչական ենթակայության ոլորտում դատախազի լիազորության նման մեկնաբանությունը համահունչ է տվյալ ժամանակաշրջանում ձևավորված մինչդատական վարույթի կազմակերպման «խառը» մոդելին: Այս ժամանակ, թեև վերացվել էր դատական իշխանության հետ քննիչի ինստիտուցիոնալ կապը, սակայն դեռևս պահպանվում էին քննիչի յուրիսդիկցիոն բնույթի լիազորությունները<sup>2</sup>:

**(c) ՀՀ Քր.ԴՕ 1998թ. կանոնակարգումները**

(1) ՀՀ Քր. ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը մինչև 2007թ.: ՀՀ Քր. ԴՕ-ի գործող խմբագրության 190-րդ հոդվածում նախատեսված են ինչպես իմպերատիվ կանոններով որոշված քննչական ենթակայություն, որի դեպքում դատախազը ենթակայությունը փոխելու լիազորություն չունի, այնպես էլ դիսպոզիտիվ նորմերով որոշված քննչական ենթակայություն, որի դեպքում դատախազը ունի հայեցողություն որոշելու կամ փոխելու քննչական ենթակայությունը:

Թեև մինչև 2007թ. օրենսդրական փոփոխությունները ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում Քր.ԴՕ 190-րդ հոդվածի վրա ուղղակի հղում նախատեսված չէր, սակայն պարզ էր, որ դատախազը քրեական գործը նախաքննության մի մարմնից նախաքննության մեկ այլ մարմնին հանձնելու լիազորությունը պետք է իրացնե՝ ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի հետ փոխկապակցված: Մինչդեռ, իրականության մեջ ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետն անհրաժեշտության դեպքում մեկնաբանվում և կիրառվում էր ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի կարգավորումներից անկախ: Դատախազը կոնկրետ գործով փոխում էր նույնիսկ իմպերատիվ կանոններով սահմանված քննչական ենթակայությունը:

(2) ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը 2007թ-ից հետո: Իրավիճակը փոխելու նպատակով օրենսդիրը 2007թ-ին ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում փոփոխություն կա-

<sup>1</sup> Այն պարագայում, երբ տարբեր քրեական գործեր միացվեին մեկ վարույթում և դրա հետևանքով անորոշ դատար ենթակայությունը, ապա ստեղծված իրավիճակը պետք է գնահատվեր իբրև ենթակայության վերաբերյալ վեճ, որ լուծում է Հանրապետության դատախազը:

<sup>2</sup> Ի տարբերություն 1923թ. օրենսդրական կարգավորման, 1961թ. ՀՆՍՀ Քր.ԴՕ-ում տեղ էր գտել քննիչի՝ դատավարական ինքնուրույնության մասին կանոնակարգումը (1961թ. ՀՆՍՀ Քր.ԴՕ 38-րդ հոդված), քննիչը ստացել էր քրեական գործի վարույթը (քրեական հետապնդումը) կարճելու լիազորություն (1961թ. ՀՆՍՀ Քր.ԴՕ 203-րդ հոդված):

տարեց: 05.02.2007թ. ՀՀ Ազգային Ժողով ներկայացված օրենքի նախագծի քննարկումների արդյունքում ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում լրացվեց հղում ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի վրա (տե՛ս աղյուսակը):

Հարց է ծագում օրենսդիրը ի՞նչ նպատակ էր հետապնդում ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածը վկայակոչելով: Մեզ համար ակնհայտ է, որ հղման նորմ սահմանելու միջոցով օրենսդիրը ցանկացել է առավել հստակ ընդգծել, որ դատախազը քննչական ենթակայությունը փոխելու լիազորությունը պետք է իրացնի ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի կանոնների հետ կապակցված ձևով:

Հաջորդ հարցն այն է, թե 2007թ. օրենսդրական նոր կարգավորումը դատախազության պրակտիկայի վրա որևէ ազդեցություն ունեցավ, թե ոչ: Պետք է փաստել, որ օրենսդրական այս փոփոխությունը որևէ արդյունք չտվեց և հնարավոր չեղավ վերացնելու քննչական ենթակայություն սահմանող իմպերատիվ նորմերի նկատմամբ դատախազության անհնազանդությունը:

Այս անգամ դատախազները ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը մեկնաբանում են այնպես, թե՛ ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի վկայակոչմամբ ընդամենը հստակեցվել են նախաքննության այն մարմինները, որոնցից դատախազը կարող է գործը վերցնել և հանձնել մյուսին: Նման մեկնաբանությունը որևէ քննադատության չի դիմանում այն պարզ պատճառով, որ ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի կարգավորման առարկան ոչ թե նախաքննության մարմինների համակարգն է, այլև քննչական ենթակայության կանոնները: Նախաքննության մարմինների համակարգը սահմանված է ՀՀ Քր.ԴՕ 189-րդ հոդվածում,<sup>1</sup> և եթե օրենսդիրը նման նպատակ ունենար, ապա հղում կկատարեր ոչ թե ՀՀ Քր.ԴՕ 190-րդ, այլ 189-րդ հոդվածին<sup>2</sup>:

<sup>1</sup> ՀՀ Քր.ԴՕ-ի 189-րդ հոդված (նախաքննության մարմինները). Քրեական գործերով նախաքննություն կատարում են քննչական կոմիտեի, հատուկ քննչական ծառայության, ազգային անվտանգության, հարկային և մաքսային մարմինների քննիչները:

<sup>2</sup> ՀՀ Քր.ԴՕ-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ մասի համաձայն՝ նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելով՝ դատախազի բացառիկ լիազորություն է քրեական գործը սույն օրենսգրքի 190-րդ հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով: Դատախազի այս լիազորության ձևակերպումից հստակ բխում է, որ այն վերաբերում է բացառապես այն դեպքերին, երբ քրեական գործը գտնվում է նախաքննության մի մարմնի վարույթում, սակայն դատախազն այն հանձնում է նախաքննության մեկ այլ մարմնին, օրինակ՝ ԱԱԾ վարույթում գտնվող քրեական գործը հանձնում է ՔԳ-ին: Գործերից մեկով քրեական գործը չի գտնվել նախաքննության այլ մարմնի վարույթում, այն հարուցվել է ԱԱԾ քննչական ղեկավարումն ունենում և ընդունվել է վարույթ: Ուստի դատախազը չէր կարող ղեկավարվել մի լիազորությամբ, որի բովանդակությունը վերաբերում է էապես այլ իրավիճակներին: Ուստի ՀՀ Քր.ԴՕ-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի կիրառման փաստակազմը բացակայում է:

(d) **Քր.ԴՕ Նախագծում առկա մտտեցումը:** Քր.ԴՕ նախագծի հեղինակները հստակ սահմանել են, որ վերադաս դատախազը, քրեական վարույթը նախաքննության մեկ այլ մարմնին հանձնարարելիս, կաշկանդված է քննչական ենթակայության կանոններով: Այսպես՝ Նախագծի 37-րդ հոդվածի 8-րդ կետում նշված է, որ վերադաս դատախազը իր որոշմամբ, **քննչական ենթակայության կանոններին համապատասխան**, վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մեկ այլ մարմնի՝ համակողմանի և անաչառ նախաքննությունն ապահովելու նպատակով:

**3. Քննչական ենթակայության կանոնի խախտման բնույթը (տեխնիկական, թե՛ հիմնարար խախտում)**

**3.1. Քննչական ենթակայության իմպերատիվ կանոնի խախտումը արդյոք տեխնիկակա՞ն է**

Սույն հոդվածի 1.3-րդ բաժնում մեջբերված դատական ակտերից պարզ է դառնում, որ դատավորները, անտեսելով կամ չգիտակցելով հայկական մինչդատական վարույթի կազմակերպման մոդելի առանձնահատկությունները, քննչական ենթակայության ինստիտուտին տալիս են տեխնիկական նշանակություն: Դատական ակտերից մեկում նշված է.

«Անկախ այն հանգամանքից թե որ քննչական մարմնում է իրականացվում գործի նախնական քննությունը մինևույն է այդ գործի նկատմամբ դատավարական հսկողությունն իրականացնող իրավասու մարմինը դատախազությունն է, որը կենտրոնացված<sup>1</sup> ուղղահայաց ղեկավարվող պետական մարմին է, հետևապես էական չէ այն հանգամանքը, թե օրենքով նախատեսված, որ քննչական մարմնում կիրականացվի նախաքննությունը, քանի որ ցանկացած նախաքննական մարմնում քննվող քրեական գործի դատավարական վերահսկողությունն իրականացվում է ՀՀ գլխավոր դատախազության կամ նրա ստորաբաժանումների կողմից»:

Դատավորի այս դիրքորոշումն արդարացված կլիներ դատախազական հետաքննության մոդելով կազմակերպվող քննության պարագայում, որտեղ ոստիկանության աշխատակիցը գործում է դատախազի հանձնարարությամբ և չունի կիսադատական բնույթի լիազորություններ: Մինչդեռ հայկական մինչդատական վարույթը կազմակերպված է կիսադատական քննության (յուրիսդիկցիոն գոր-

<sup>1</sup> Նկատենք, որ ՀՀ Սահմանադրության տեքստից դեռևս 2005թ. հանվել է դատախազության՝ որպես կենտրոնացված մարմին լինելու մասին դրույթը:



ծունեության) տրամաբանությամբ: Քննիչը, ով օժտված է դատավարական ինքնուրույնությամբ, իրականացնում է կիսադատական բնույթի գործառույթ (անձին որպես մեղադրյալ ներգրավելով արարքին տալիս է քրեաիրավական գնահատական, դադարեցնում է քրեական հետապնդումը և այլն): Համակարգային մտածողության պայմաններում հնարավոր չէ անտեսել հայկական նախաքննության կիսադատական բնույթի սկզբունքային նշանակությունը (այս մասին հաջորդիվ):

Դատավորի այս մոտեցումն արդարացված չէ նաև ապացույցների թույլատրելիության տեսության տեսանկյունից: Բանն այն է, որ տեսությունը և օրենսդրությունը քննչական ենթակայության կանոնների խախտումը համարում են «պատշաճ սուբյեկտի» կանոնի խախտման տեսակ, որը ապացույցը (կյութերը) անթույլատրելի ճանաչելու հիմք է: Եթե քննչական ենթակայության կանոնները ունենային այդ աստիճանի տեխնիկական բնույթ, ապա օրենսդիրը դրա խախտումը չէր համարի ապացույցն անթույլատրելի ճանաչելու հիմք (այս մասին հաջորդիվ):

ՍԱՐՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ՂԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 1(101)2021

*3.2. Քննչական ենթակայության կանոնի խախտումը հիմնարար խախտման սպառնալիք է*

**(ա) Քննիչի յուրիստիկցիոն գործառույթը և քննչական ենթակայության սահմանադրական նշանակությունը**

(1) Հայաստանում քննիչի կիսադատական (յուրիստիկցիոն) գործառույթը: Գործող մինչդատական վարույթի պայմաններում, քննիչը իրականացնում է երկու բնույթի գործունեություն՝ բուն քննություն (ապացույցների հավաքմանն ուղղված գործողությունների կատարում և որոշումների կայացում) և յուրիստիկցիոն գործունեություն (գործի շարժի մասին որոշումների կայացում, անձին որպես մեղադրյալ ներգրավելը, հետապնդումը դադարեցնելը և այլն): Այսպես՝ դատավարագիտության մեջ ընդունված է այն մոտեցումը, որ մինչդատական վարույթի ընթացքում քննիչի կողմից քրեական գործի վարույթը կարճելը և քրեական հետապնդումը դադարեցնելը նրան օժտում է կիսադատական բնույթով<sup>1</sup>: Թերևս դրանով է բացատրվում նաև այն հանգամանքը, որ քննիչի այս որոշմանը տրվում է res judicata տարրերի նշանակություն, այլ կերպ ասած՝ այն ունի պրեկլյուզիվ (բացառող) նշանակություն:

Ի դեպ, ժամանակին Մ. Մտրոզովիչը քննչական ապարատը ներքին գործերի նախարարության համակարգ փոխանցելուն դեմ էր

<sup>1</sup> Курс уголовного процесса. Под ред. Л.В.Головки.-М.: "Статут", 2016.-С. 771.



հենց այն պատճառով, որ նախնական քննությունը ոչ թե ուստիկանական է, այլ յուստիցիոն է (юстициональная), ուստի այն չի կարող կենտրոնացված լինել օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնում<sup>1</sup>:

Քննիչի կիսադատական գործունեության բնույթով կարելի է պայմանավորել նաև քննչական ենթակայության և ընդդատության կանոնների կապը:

(2) *Քննչական ենթակայության և ընդդատության նմանությունները*: Առկա մինչդատական մոդելի պայմաններում քննչական ենթակայությունը ոչ թե պարզապես իրավատեխնիկական կամ աշխատանքի բաժանման հարցեր կարգավորող ինստիտուտ է, այլև արդար դատաքննության իրավունքի երաշխիք է:

Ժամանակակից քրեական դատավարության գիտության մեջ էապես փոխվել է քննչական ենթակայության ինստիտուտի նշանակության վերաբերյալ մոտեցումը: Ներկայումս քննչական ենթակայության կանոններին տրվում է սահմանադրական նշանակություն՝ այն հավասարեցնելով արդարադատության երաշխիքների հետ:

Քննչական ենթակայությունը նման է ընդդատությանը, իսկ որոշակի առումով՝ նրանք նույնաբնույթ ինստիտուտներ են: Նշվում է, որ ենթակայությունը և ընդդատությունը ունեն միևնույն նպատակը որոշել այն իրավասու մարմիններին, որոնք օժտված են լրիվ, բազմակողմանի, օբյեկտիվ և որակյալ քննություն կատարելու համար բավարար հատկանիշներով<sup>2</sup>: Ռուս դատավարագետներ Լ. Գոլովկոն և Ա. Սմիրնովը քննչական ենթակայությունը հավասարեցնում են ընդդատության հետ: Այսպես, Լ. Գոլովկոն նշում է՝ ընդհանուր առմամբ քննչական ենթակայությունը մինչդատական վարույթի շրջանակներում կարգավորում է նույն հարցերը, ինչ ընդդատությունը՝ դատական վարույթի շրջանակում<sup>3</sup>: Ա. Սմիրնովն ավելի հստակ նշում է, որ ենթակայության կանոնների պահպան-

<sup>1</sup> Строгович М. С. О дознании и предварительном следствии и о едином следственном аппарате // Социалистическая законность. 1957. № 5.-С. 22.

<sup>2</sup> Захаров Н. В. Теория и практика определения подследственности уголовных дел. Автореф. дисс. ... канд. юрид. наук.-Самара, 2009.-С. 8.

<sup>3</sup> Курс уголовного процесса. Под ред. Л. В. Головки.-М.: "Статут", 2016.-С. 652. Ի դեպ, նույն հեղինակը հայեցողական քննչական ենթակայությունը պարզաբանելիս նշել է. «Այստեղ պետք է նկատի ունենալ, որ ի տարբերություն ընդդատության, քննչական ենթակայությունը չի համարվում մեղադրյալի հիմնարար իրավունքներից մեկը, ինչը հնարավորություն է տալիս այն որոշել առավել ճկուն մոտեցմամբ, իսկ որոշ դեպքերում հաշվի առնել նաև մեծապես տեխնիկական կամ արտաինստիտուցիոնալ գործոնները (քննիչների ծանրաբեռնվածությունը, գործի հնչեղությունը, քննության տեխնիկական բարդությունը, կադրային կազմը և այլն)»: Կրկին նշենք, դասագրքի այս բաժնում համահեղինակների մեջբերված միտքը վերաբերում է հայեցողական քննչական ենթակայությունը, որտեղ արվում են նաև որոշակի վերապահումներ: Բոլոր դեպքերում, համեմատական քրեական դատավարության գիտակը, ով հաճախ է խոսում ռուսական քննիչի կիսադատական բնույթի գործունեության մասին, նույնիսկ հայեցողական քննչական ենթակայությունը մեկնաբանելիս չպետք է կատարեր քրեական դատավարության մոդելի տրամաբանությանը հակասող դատողություն:

մամբ ապահովվում է մեղադրյալի՝ օրինական (օրենքի հիման վրա ստեղծված) քննիչի իրավունքը, ինչպես որ մեղադրյալի բնական (օրինական) դատարանի իրավունքն է: Ինչպես օրինական դատարանի իրավունքի խախտումը, այնպես էլ ենթակայության կանոնների խախտումը կասկածի տակ է դնում նախաքննության մարմինների անաչառությունը<sup>1</sup>:

Դատավոր Նիկողոսյանը դատական ակտում նշել է.

«Քննչական ենթակայությունը քրեական գործերի իրավաբանական հատկանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե նախաքննության որ մարմինը կամ ստորաբաժանումն է իրավասու տվյալ քրեական գործով իրականացնել քրեական վարույթ: Քննչական ենթակայության կանոնները նպաստում են նաև նախաքննության մարմինների մասնագիտացմանը և քրեական գործերի քննության որակի բարձրացմանը:

Բացի այդ, տեսական գրականության մեջ նշված է, որ քննչական ենթակայությունը նման է ընդդատությանը, իսկ որոշակիորեն նաև նույնաբնույթ ինստիտուտներ են, քանի որ ըստ էության ունեն միևնույն նպատակը՝ որոշել այն իրավասու մարմիններին, որոնք օժտված են լրիվ, բազմակողմանի, օբյեկտիվ և որակյալ քննություն կատարելու համար բավարար հատկանիշներով»:

Այդ կապակցությամբ Դատավորն իրավացիորեն նշել է, որ ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի 6-րդ մասն իմպերատիվորեն սահմանում է, որ այն դեպքում, երբ ենթադրյալ հանցագործությունը վերաբերում է պաշտոնատար անձանց՝ իրենց պաշտոնեական դիրքի կապակցությամբ, ապա նախաքննության կատարումը վերապահվում է հատուկ քննչական ծառայությանը:

Եթե հետևենք այն տրամաբանությանը, որ արդար դատաքննության իրավունքի՝ Եվրոպական կոնվենցիայով սահմանված մի շարք երաշխիքներ տարածվում են նաև մինչդատական վարույթի վրա, ապա կարելի է եզրակացնել, որ քրեական գործերի ենթակայությունը, ինչպես քրեական գործերի ընդդատությունը, արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ տարրեր են:

Քննչական ենթակայության խախտման արդյունքում կարող է առաջանալ Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ «օրենքի հիման վրա ստեղծված» մարմնի կոնցեպցիայի խախտման վտանգ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ

<sup>1</sup> Смирнов А. В., Калиновский К. Б. Уголовный процесс. Учебник. Под общ. ред. А. В. Смирнова. 6-е изд., перераб.- М.: "Норма: ИНФРА-М.", 2015.-С. 388.

քննությունն իրականացվել է ոչ այն մարմնի կողմից, որն օրենքով լիազորված էր դրա համար:

**(b) Քննչական ենթակայությունը իրավական արժեք է, քանի որ ապահովում է քննության անաչառությունը:** Քննչական ենթակայությունը և այն փոխելու հնարավորությունը քննության անաչառություն ապահովելու միջոց է: Այս տրամաբանությամբ է օրենսդիրը սահմանել, որ, օրինակ՝ ՔԿ քննիչների կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերը քննում են ՀՀ հատուկ քննչական ծառայության (այսուհետ՝ ՀՔԾ) քննիչները, իսկ ՀՔԾ քննիչների կատարած հանցագործությունների վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են ԱԱԾ քննիչները:

ՀՀ վճռաբեկ դատարանը թիվ ՏԴ2/0005/01/16 գործով նշել է.

«օրենսդիրը, քրեական հետապնդման մարմնի համար սահմանելով լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն կատարելու պարտականություն, որպես դրա ապահովման երաշխիք քննչական ենթակայության կանոնները սահմանելիս, ի թիվս այլնի, լիազորել է ՀՀ գլխավոր դատախազին առանձին դեպքերում քրեական գործեր վերցնել քննչական այլ մարմինների քննիչների վարույթից և հանձնել հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին: Հիշյալ առանձին դեպքերի շրջանակում են նաև այն քրեական գործերը, որոնցով այլ քննչական մարմինների քննիչները կարող են հանդիսանալ հանցավոր ոտձգությունից տուժած անձ: Ընդ որում, գլխավոր դատախազի հիշյալ լիազորությունը հայեցողական բնույթ է կրում, իսկ դրա իրականացումը պայմանավորված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննություն երաշխավորելու անհրաժեշտությամբ»:

**(c) Քննչական ենթակայությունը պրակտիկ արժեք է, քանի որ ապահովում է քննության մասնագիտացումը:** Քննչական ենթակայության կանոնները նպաստում են նաև նախաքննության մարմինների մասնագիտացմանը և քրեական գործերի քննության որակի բարձրացմանը, օրինակ՝ ՀՔԾ-ին ենթակա են ընտրական իրավունքի դեմ ուղղված մի շարք հանցագործություններ, ուստի այս ծառայության քննիչները մասնագիտանում են իրենց ենթակա հանցագործությունների որակման և քննության առանձնահատկությունների ոլորտում:

#### 4. Քրեական գործի պատմություն

##### 4.1. Թիվ ԵԷԴ/0059/01/15 դատական գործի ընդհանուր բնութագիրը

1) ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ՀՀ ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչություն է ուղարկել Ֆրանսիայում ՀՀ դեսպանություն դիմած Ալբերտ Սլոյանի անվամբ տրված ՀՀ քաղաքացու անձնագրի իսկությունն ստուգելու վերաբերյալ հարցումը: Ստուգումների արդյունքում պարզվել է, որ Ալբերտ Սլոյանի անվամբ տրված անձնագիրը տալու համար հիմք հանդիսացած փաստաթղթերից մեկի՝ անձնական հաշվառման քարտի վրա դրված Էրեբունու զինկոմիսարիատի կնիքը և դրոշմը չեն համապատասխանում իրական կնիքին և դրոշմին:

2) ՀՀ ոստիկանության Էրեբունու բաժնի նախապատրաստած նյութերը 16.03.2014թ. ուղարկվել են ՀՀ ոստիկանության քննչական բաժին, որտեղ 26.03.2014թ. ՀՀ ՔՕ 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է քրեական գործը և կատարվել է նախաքննություն:

3) Քրեական գործն 30.10.2014թ. որոշմամբ ուղարկվել է ՀՔԾ: Ըստ քննչական ենթակայության ուղարկելու որոշման մեջ նշվել է. «(...) Այսպիսով, նախաքննությամբ հիմնավորվել է, որ Ալբերտ Սլոյանը, չգտնվելով ՀՀ-ում, ՀՀ ոստիկանության ԱՎՎ Էրեբունու անձնագրային բաժանմունքից ստացել է անձնագիր: Նկատի ունենալով, որ ՀՀ ոստիկանության աշխատակիցները հատուկ ծառայություն իրականացնող անձինք են, որոնց վերաբերյալ նախաքննությունը կատարում են հատուկ քննչական ծառայության քննիչները, ուստի (...)»:

4) ՀՔԾ պետի տեղակալի գրությամբ քրեական գործը նախաքննությունը շարունակելու նպատակով վերադարձվել է ՀՀ քննչական կոմիտե (այսուհետ՝ ՔԿ) այն պատճառաբանությամբ, որ քրեական գործն ուղարկվել է ՀՀ Քր. ԴՕ 190-րդ հոդվածով սահմանված քննչական ենթակայության կարգի խախտմամբ:

5) ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետը, 21.11.2014թ. գրությամբ, քրեական գործը ՀՀ Քր. ԴՕ 190-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված կարգով ուղարկել է ՀՔԾ՝ նախաքննությունը շարունակելու համար:

6) 26.11.2014 թ-ին քրեական գործն ընդունվել է ՀՔԾ քննիչի վարույթ:

7) 16.12.2014 թ-ին Ն. Սլոյանը ՀՔԾ-ում հանցագործության մասին

հաղորդում է տվել այն մասին, որ ՀՀ-ում չգտնվող Ալբերտ Սլոյանին ՀՀ քաղաքացու անձնագիր հատկացնելու համար Էրեբունու անձնագրային բաժանմունքի աշխատակիցներն իրենից պահանջել և վերցրել են 2000 դոլար, որից հետո տվել են անձնագիրը:

ՀՀ դատարանները սույն գործով քննարկել են քննչական ենթակայությանը վերաբերող նյութաիրավական և ընթացակարգային երկու հարց.

Առաջին ՀՀ ՔՕ 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են ՔԿ քննիչները (ՀՀ Քր. ԴՕ 190-րդ հոդվածի 1-ին մաս): Դատախազը իրավասու է արդյոք ՔԿ քննիչներին ենթակա ՀՀ ՔՕ 325 -րդ հոդվածի 1-ին մասով հարուցված քրեական գործի նախաքննությունը հանձնարարել ՀՔԾ-ին (նյութաիրավական խախտում):

Երկրորդ եթե օրենքը թույլատրում է փոխել քննչական ենթակայությունը, ապա ո՞ր դատախազն է այդ լիազորության կրողը: ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետը իրավասու է արդյոք ՀՀ ՔԴՕ 190-րդ հոդվածի 6-րդ մասով գործը հանձնել ՀՔԾ-ին (ընթացակարգային խախտում):

*4.2. Առաջին ատյանի դատարանի դատավորի անհանդուրժողականությունը դատախազական անհնազանդության դեմ*

Առաջին ատյանի դատարանը 29.12.2017թ. արդարացման դատավճռում նշել է, որ քրեական գործով նախաքննության մարմինը քննչական ենթակայության կանոնների առնչությամբ թույլ է տվել քրեադատավարական օրենքի հիմնարար խախտումներ: Դատարանն առանձնացրել է քննչական ենթակայության կանոնների, ըստ էության միմյանց հետ չկապված, երկու տարբեր խախտումներ:

**Առաջին դատախազը իրավասու չէ փոխել օրենքով ՔԿ իրավասությանը հանձնված գործերի քննչական ենթակայությունը (նյութաիրավական խախտում):** Այս կապակցությամբ դատարանը նշել է.

«Քր. ԴՕ 190-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորման համաձայն՝ ՀՀ ՔՕ 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով նախատեսված հանցագործության վերաբերյալ գործերով նախաքննությունը կատարում են ՀՀ ՔԿ քննիչները, հետևաբար կարող ենք փաստել, որ նախաքննության և հետաքննության նկատմամբ դա-

տավարական ղեկավարում իրականացնող դատախազն իրավասու չէ փոխել ՀՀ ՔԿ ենթակայությանը վերապահված և ՀՀ ՔՕ 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված քրեական գործով նախաքննությունը կատարող մարմնին» :

**Երկրորդ եթե օրենքը թույլատրում է փոխել քննչական ենթակայությունը, ապա այն կարող է կատարել ոչ թե ցանկացած դատախազ, այլ օրենքով լիազորված դատախազը (ընթացակարգային խախտում):** Այս կապակցությամբ դատարանը նշել է.

«Ավելին՝ Հիմք ընդունելով ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերության իրավակարգավորումը՝ պետք է փաստել, որ քրեական գործը բացառապես ՀՀ Գլխավոր դատախազի կողմից կարող էր հանձնվել հատուկ քննչական ծառայությանը: Մինչդեռ, սույն քրեական գործը հատուկ քննչական ծառայությանը հանձնվել է ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետի կողմից, ով նման իրավասությամբ օժտված չէ և չի եղել: ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի 6-րդ մասի երկրորդ պարբերության հիմքով՝ բացի ՀՀ գլխավոր դատախազից, որևէ այլ դատախազ իրավասություն չունի փոխել քրեական գործի քննչական ենթակայությունը: Ընդ որում նման գործառույթի իրականացումը պետք է ոչ թե ինքնանպատակ լինի, այլ պետք է կիրառվի անհրաժեշտությունից դրդված և պայմանավորվի գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտությամբ, հետևաբար դրանից ցանկացած շեղում անօրինական է և անթույլատրելի, քանի որ կհանգեցնի ոչ պատշաճ սուբյեկտի կողմից, ոչ պատշաճ դատավարական կարգով ստուգողական, քննչական և դատավարական գործողություններ կատարելուն, համապատասխանաբար նաև անօրինական քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելուն»:

Սույն գործով առաջին ատյանի դատարանն արձանագրել է՝ քրեական գործով տեղի է ունեցել քննչական ենթակայության օրենքով սահմանված կարգի խախտում, ինչը նաև օրինականության սկզբունքի խախտում է, այն է՝ գործով նախաքննությունն իրականացվել է ոչ պատշաճ նախաքննական մարմնի և ոչ պատշաճ պետական պաշտոնատար անձի կողմից:

*4.3. ՀՀ վերաքննիչ դատարանի դիրքորոշումը ոչ պատշաճ դատախազի կողմից քննչական ենթակայությունը փոխելու վերաբերյալ*

ՀՀ վերաքննիչ դատարանը ՀՀ առաջին ատյանի դատարանի արդարացման դատավճիռը ուժի մեջ թողնելու վերաբերյալ

02.10.2018թ. որոշմամբ անդրադարձել է Առաջին ստյանի դատարանի նշած քննչական ենթակայության երկու տարբեր խախտումներից միայն մեկին՝ ընթացակարգային խախտմանը: Վերաքննիչ դատարանը նշել է.

«Այն դեպքում, երբ քրեական գործի փաստական հանգամանքներով պայմանավորված՝ առկա է դրա բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունը երաշխավորելու անհրաժեշտություն, ապա միայն ՀՀ գլխավոր դատախազն է իրավասու քննչական այլ մարմնի քննիչի վարույթից վերցնել և հատուկ քննչական ծառայության քննիչի վարույթին հանձնել այդ քրեական գործը: Մինչդեռ, սույն քրեական գործը հատուկ քննչական ծառայությանը հանձնվել է ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետի կողմից, ով նման դատավարական իրավասությամբ օժտված չի եղել»<sup>1</sup>:

#### 4.4. Պոռոգատախազական հատուկ կարծիք

Հատուկ կարծիքում դատավորը բարձրացնում է դատավարական նշանակության երկու հարց. մեկը վերաբերում է որոշակի իրավիճակներում հանցագործության հատկանիշների հայտնաբերման դեպքում քրեական գործ չհարուցելու հնարավորությանը<sup>2</sup>, մյուսը՝ քննչական ենթակայությանը:

Քննչական ենթակայության ընթացակարգային խախտման բացակայությունը հիմնավորելու համար դատավորը Հատուկ կարծիքում իրավացիորեն նշել է.

«Եթե տվյալ գործի քննության ընթացքում բացահայտվի պետական հատուկ ծառայություն իրականացնող անձի կատարած հանցագործության դեպք, ապա այդ դեպքում նախաքննությունը պետք է կատարվի բացառապես ՀՔԾ քննիչների կողմից: Ընդ որում, պետական հատուկ ծառայություն իրականացնող անձանց կատարած հանցագործություններով ՀՔԾ քննիչները նախաքննությունը կատարում են օրենքի ուժով՝ առանց ՀՀ գլխավոր դատախազի կողմից տվյալ քրեական գործը ՀՀ հատուկ քննչական ծառայության քննիչների վարույթին հանձնելու լիազորության գործադրման:

(...)

Տվյալ դեպքում ՀՀ գլխավոր դատախազության վարչության պետը

<sup>1</sup> ՀՀ վճռաբեկ դատարանը 30.04.2019թ. որոշմամբ մերժել է ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2018 թվականի հոկտեմբերի 2-ի որոշման դեմ ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը:

<sup>2</sup> Դատավորը՝ վկայակոչելով ՀՀ Քր.ԴՕ 27-րդ, 175-րդ, 182-րդ, 184-րդ հոդվածները, կատարում է «օղից վերցրած» մի եզրահանգում. «հանցագործության հատկանիշների հայտնաբերման դեպքում կարող է քրեական գործ չհարուցվել, եթե բացահայտված հանցագործությունը կապված է այն հանցագործության հետ, որի կապակցությամբ արդեն հարուցված է քրեական գործ»: ՀՀ Քր.ԴՕ-ի դրույթները վերընթերցելիս այդպես էլ մուտք մնաց, թե որն է դատավորի այս ցանկության դատավարական հիմքը:

ոչ թե իրացրել է ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված բացառիկ լիազորությունը, այլ ապահովել է օրենքի ուժով ՀՔԾ քննիչներին ենթակա քրեական գործի հանձնումն այդ ծառայությանը»:

Հատուկ կարծիքի առաջին հատվածում նշված դատողության հետ պետք է համաձայնվել, սակայն այն ակնհայտորեն վերաբերելի չէ սույն գործի փաստական հանգամանքներին, քանի որ ինչպես ՀՀ առաջին աստիճանի դատարանը, այնպես էլ ՀՀ վերաքննիչ դատարանը նշել են.

«ՀՀ ՔՕ 325-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցված սույն քրեական գործը 21.11.2014թ. ՀՔԾ հանձնելիս պարզված չի եղել հանցագործության սուբյեկտը, այսինքն՝ փաստաթղթերում կեղծիք կատարող անձի ինքնությունը, հետևաբար՝ ՀՀ Քր.ԴՕ 190-րդ հոդվածի 6-րդ մասում նշված սուբյեկտների հանցակցության կամ նրանց կողմից հանցագործությունը կատարած լինելու, ինչպես նաև տուժող ճանաչվելու մասին խոսք լինել չի կարող»:

**5. Օրենսդրի լռությունը և դատարանի թողտվությունը**

*5.1. Ինչո՞ւ է լռում օրենսդիր իշխանությունը*

Վերը նշվածը վկայում է այն մասին, որ դատախազությունը մի ձեռքով խախտում է օրենսդրի կողմից սահմանված քննչական ենթակայության իմպերատիվ կանոնները, մյուս ձեռքով՝ ad hoc յուրացնում է ենթակայության իմպերատիվ կանոններ սահմանելու (փոխելու) օրենսդրին պատկանող լիազորությունը:

Թվում էր՝ օրենսդիր իշխանությունը ևս մեկ անգամ պետք է միջամտեր իրավիճակին և առավել հստակ օրենսդրական դրույթներով դադարեցներ դատախազության կողմից օրենսդիր իշխանության կամքի փոփոխումը և յուրացումը:

Մինչդեռ, օրենսդիրը հետևողականորեն լռում է, իսկ «ինչու» հարցի պատասխանը կարող է լինել մի քանի պատճառների հարթությունում, օրինակ՝ հնչեղություն ունեցող այս կամ այն քրեական գործի քննության կոմուտացիաների (տեղափոխումների) միգուցե նաև քաղաքական նպատակահարմարությամբ պայմանավորված գործադիր մարմնի հնարավորությունները չսահմանափակելու ցանկությունը:

ՀՀ Քր.ԴՕ-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի կիրառությունը



իրավական հարթություն կարող է տեղափոխել օրենսդիր մարմինը՝ այդ նորմում վերահաստատելով, որ դատախազը կաշկանդված է քննչական ենթակայության իմպերատիվ կանոններով:

5.2. Ինչո՞ւ է հանդուրժում դատարանը

**(a) Ընդհանուր նկատառումներ:** Ինչպես նշվեց, առաջին ատյանի դատարանի որոշ դատավորները օրենքի մանիպուլատիվ մեկնաբանություններով աջակցում են դատախազական ակտերով քննչական ենթակայության իմպերատիվ կանոնների վերացման և այս ինստիտուտի արժեզրկման գործընթացին:

Ենթադրում ենք, որ ցանկացած դատավոր գիտակցում է քննչական ենթակայության ինստիտուտի էությունը, այդ կանոնների նշանակությունը և դրանց վերաբերյալ օրենսդրի կամքը, սակայն անտեսանելի ինչ-որ նպատակներով պայմանավորված, արտահայտում են անընդունելի դատողություններ:

Քննչական ենթակայության ինստիտուտի հանդեպ դատախազական անհնազանդության վերաբերյալ հանդուրժողականությունը կարող է պայմանավորված լինել տվյալ դատավորի իր վարույթում չգտնվող, սակայն հնչեղություն ունեցող քրեական գործերի ճակատագիրը չվտանգելու և (կամ) գործընկեր դատավորի հանդեպ կորպորատիվ համերաշխությունը չխախտելու ներքին ձգտումներով:

Դատական կորպորացիայում աշխատող դատավորը իրավունքի վերաբերյալ հարցերով դիրքորոշում հայտնելուց ակամայից հաշվի է առնում նաև այլ դատավորների գործունեությունը չվնասելու կորպորատիվ հետաքրքրությունը: Դատական ակտում հաստատել, որ դատախազը իրավասու չէ փոխելու իմպերատիվ կանոններով սահմանված ենթակայությունը, կնշանակի կասկածի տակ դնել հնչեղություն ունեցող գործեր քննող մյուս դատավորների գործողությունների իրավաչափությունը:

«Խոշոր» քրեական գործերի ճակատագիրը վտանգելու վերաբերյալ դատավորի ներքին վախերը պայմանավորված են այն հանգամանքով, որ քննչական ենթակայության իմպերատիվ կանոնների խախտումը ապացույցները (նյութերը) անթույլատրելի ճանաչելու հիմք է: Մեղադրանքի հիմքում չեն կարող դրվել և որպես ապացույց օգտագործվել այն նյութերը, որոնք ձեռք են բերվել տվյալ քրեական գործով քրեական դատավարություն իրականացնելու իրավունք

չունեցող անձի կողմից (ՀՀ Քր.ԴՕ-ի 105-րդ հոդված 1-ին մասի 3-րդ): Չէ որ, եթե դատավորը նշի, որ դատախազը իրավասու չէ փոխելու **իմպերատիվ** կանոններով սահմանված քննչական ենթակայությունը, ապա դա կնշանակի, որ առկա է քննչական ենթակայության կանոնների խախտում, դրանից բխող բոլոր հետևանքներով:

**(b) «Ստրատեգիական փախուստ» ապացույցների թույլատրելիության կանոնից:** Ապացույցների թույլատրելիության տեսության մեջ առայսօր ընդունված է այն մոտեցումը, որ քննչական ենթակայության կանոնների խախտմամբ ձեռք բերված նյութերը համարվում են ոչ պատշաճ սուբյեկտի կողմից ձեռք բերված, որոնք չեն կարող օգտագործվել որպես ապացույց<sup>1</sup>: Ա. Ա. Բարիզինսան նշում է. «Չպետք է մոռանալ, որ քրեական գործը քննող սուբյեկտը պատշաճ է, եթե քրեական գործ հարուցելիս և քննելիս պահպանվել են առարկայական, տարածքային և անձնային քննչական ենթակայության և ընդդատության կանոնները»<sup>2</sup>:

Ի. Երպիլյովը նշում է, որ քննչական ենթակայության կանոնների խախտումը հանգեցնում է ապացույցների անթույլատրելիությանը, թեև այդ ապացույցների ստացման դատավարական ձևը պահպանվել է: Ոչ պատշաճ սուբյեկտի կողմից նյութեր հավաքելը ապացույցների թույլատրելիության ֆորմալացված հատկանիշներից է<sup>3</sup>:

Եթե նույնիսկ քննչական ենթակայության կանոնների խախտումը չդիտենք հիմնարար խախտում, միննույնն է՝ պետք է փաստենք, որ ՀՀ Քր.ԴՕ-ի 105-րդ հոդված 1-ին մասի 3-րդ մասում քննչական ենթակայության իմպերատիվ կանոնների խախտումը համարվում է ապացույցները (նյութերը) անթույլատրելի ճանաչելու ֆորմալ հիմք:

Թեև քննչական ենթակայության իմպերատիվ կանոնների խախտմամբ գործող քննիչի ոչ պատշաճ սուբյեկտ լինելու հարցում գիտության և օրենսդրի մոտեցումները միասնական են, սակայն

<sup>1</sup> Защита по уголовному делу: пособие для адвокатов / Под ред. **Е. Ю. Львовой**. - М.: "Юристь", 1999. - С. 45; Уголовно-процессуальное право Российской Федерации // в 2 ч. Часть 1; под ред. **Г. М. Резнича**. 2-е изд., перераб. и доп. - М.: Изд. "Юрайт", 2019. - С. 224; **Костенко Р. В.** Понятие и признаки уголовно-процессуальных доказательств. - М.: "Юрлитинформ", 2006. - С. 76.

<sup>2</sup> **Барыгина А. А.** Доказывание в уголовном процессе: допустимость доказательств: учебное пособие. 2-е изд., перераб. и доп. - М.: Изд. "Юрайт", 2019. - С. 68-69.

<sup>3</sup> **Ерпылёв И. В.** Допустимость доказательств в уголовном процессе России и зарубежных стран. - М.: "Юрлитинформ", 2017. - С. 59.

դատավորների որոշ խումբ ապացույցների անթույլատրելիության կանոնների կիրառումից խուսափելու նպատակով կամ հաստատում է դատախազի իմպերատիվ կանոններով սահմանված քննչական ենթակայությունը փոխելու իրականում գոյություն չունեցող «լիազորության» գոյությունը կամ իրենց անգործությունն արդարացնելու նպատակով, առանց հաշվի առնելու նախաքննության մոդելի առանձնահատկությունները, քննչական ենթակայությունը համարում են տեխնիկական բնույթի ինստիտուտ, իսկ դրանց խախտումները տեխնիկական, որը իբրև չի կարող ապացույցներն անթույլատրելի ճանաչելու հիմք հանդիսանալ<sup>1</sup>:

Այսպիսով՝ ՀՀ Քր.ԴՕ-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի կիրառությունը իրավական հարթություն կարող է տեղափոխել նաև բարձր դատարանը, օրինակ՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, դիրքորոշում արտահայտելով այն մասին, որ դատախազը ՀՀ Քր.ԴՕ-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված լիազորությունն իրականացնելիս կաշկանդված է 190-րդ հոդվածով սահմանված քննչական ենթակայության իմպերատիվ կանոններով:

**6. Եզրահանգումներ**

Ելնելով վերը նշվածից կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները:

1. Քննչական ենթակայության կանոնները որոշելու կամ այն փոխելու դատախազի լիազորությունը և դրա սահմանները **ուղիղ համեմատական է** մինչդատական վարույթի կազմակերպված մոդելին: Քննչական ենթակայությունը որոշելու կամ այն փոխելու դատախազի լիազորության օրենսդրի կարգավորումները կամ դրանց մեկնաբանությունը և կիրառումը չպետք է հակասի մինչդատական վարույթի կազմակերպման համապատասխան մոդելի տրամաբանությանը:

Կիսադատական բնույթի նախաքննության պայմաններում դա-

<sup>1</sup> Ասվածի համատեքստում պետք է ավելացնել, որ դատավորի աչքը կարող է տեսնել փոքր մասշտաբի շեղումները և այն համարել պատշաճ սուբյեկտի կանոնի խախտում, սակայն չտեսնել ոչ պատշաճ սուբյեկտի կանոնի՝ ավելի մեծ մասշտաբի խախտումը: Օրինակ՝ քննիչը, ում օրենքով սահմանված կարգով հանձնարարվել է կատարելու նախաքննություն, եթե չի կայացրել քրեական գործը վարույթ ընդունելու մասին որոշում (որը խիստ վերապահում կարելի է համարել դատավարական նշանակություն ունեցող փաստաթուղթ), ապա դատական պրակտիկայում այն հարմարվել է պատշաճ սուբյեկտի կանոնի խախտում, մինչդեռ եթե խախտվում են քննչական ենթակայության օրենսդրական իմպերատիվ կանոններ (որն ավելի մեծ մասշտաբի խախտում է), ապա փորձ է արվում դրանց տալ զուտ տեխնիկական խախտման նշանակություն և կանխել ապացույցների թույլատրելիության հարցի բարձրացումը: Այս մասին տե՛ս ԴամբարյանԱ. Քննիչի (քննչական խմբի) կողմից քրեական գործը վարույթը չընդունելու քրեադատավարական հետևանքները. «Քննիչ», թիվ 4, 2016, էջեր 36-40:

տախազը չի կարող ունենալ քննչական ենթակայությունը որոշելու կամ փոխելու ունիվերսալ լիազորություն:

2. ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածը դատախազի համար քննչական ենթակայությունը որոշելու կամ փոխելու ունիվերսալ լիազորություն չի սահմանել, ուստի օրենսդրական փոփոխությունների և (կամ) դատական մեկնաբանման ճանապարհով պետք է գոյազրկել պոզիտիվ իրավունքում չամրագրված, սակայն կյանքում կեցություն ստացած դատախազի՝ քննչական ենթակայությունը որոշելու (փոխելու) ունիվերսալ հնարավորությունը:

3. ՀՀ դատարանը քննչական ենթակայության օրենսդրական իմպերատիվ կանոնների նկատմամբ դատախազական անհնազանդությունը պետք է հաղթահարի վերաբերելի նորմերի գիտականորեն հիմնավորված դատական մեկնաբանման ճանապարհով:

ՀՀ դատարանը, անցնելով այս հարցում իր համար փակ համակարգ ստեղծելու բարդ ճանապարհը, ՀՀ Քր.ԴՕ-ի 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը մեկնաբանելիս և կիրառելիս պետք է անկաշկանդ լինի արտաքին որևէ գործոնից:

4. Քննչական ենթակայության օրենսդրական իմպերատիվ կանոնների նկատմամբ դատախազական անհնազանդությունը օրենսդրական ճանապարհով հաղթահարելու նպատակով՝ ՀՀ օրենսդիրը ՀՀ Քր.ԴՕ 53-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետում պետք է կատարի փոփոխություն և առավել հստակ (թեև առկա ձևակերպումը ունի բավարար հստակություն) կամահայտնությամբ վերահաստատի, որ դատախազը քրեական գործը մի մարմնից հանձնում է նախաքննության մեկ այլ մարմնին **բացառապես քննչական ենթակայության կանոններին համապատասխան:**

**Աղյուսակ**

| 1998թ. խմբագրություն  | Աժ ներկայացված տարբերակ - 05.02.2007թ.   | 1-ին ընթերցում- 20.02.2007թ.   | 2-րդ ընթերցում- 21.02.2007թ.  | 3-րդ ընթերցում- 22.02.2007թ.   | Քր.ԴՕ նախագիծ 37-րդ հոդված  |
|---|--|--|---|--|---|
| 3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից եւ հանձնել քննիչին կամ ստորադաս դատախազին, քրեական գործը վերցնել քննիչից եւ հանձնել ստորադաս դատախազին կամ ընդհակառակը, քրեական գործը նախաքննության մի մարմնի քննիչից հանձնել մյուս մարմնի քննիչին, ինչպես նաեւ մի քննիչից կամ ստորադաս դատախազից մյուսին կամ գործն ընդունել իր վարույթ՝ բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով | «3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից եւ հանձնել քննիչին, քրեական գործը նախաքննության մի մարմնի քննիչից հանձնել մյուս մարմնի քննիչից, ինչպես նաեւ մի քննիչից մյուսին» <sup>1</sup> | «3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից եւ հանձնել քննիչին, քրեական գործը նախաքննության մի մարմնի քննիչից հանձնել մյուս մարմնի քննիչին, ինչպես նաեւ մի քննիչից մյուսին» <sup>2</sup> | «3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից եւ հանձնել քննիչին, քրեական գործը նախաքննության մի մարմնի քննիչից հանձնել մյուս մարմնի քննիչին, ինչպես նաեւ մի քննիչից մյուսին՝ բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով» <sup>3</sup> | «3) ցանկացած քրեական գործ վերցնել հետաքննության մարմնից եւ հանձնել քրեական գործը սույն օրենսգրքի 190 հոդվածով սահմանված նախաքննության մի մարմնից հանձնել նախաքննության մեկ այլ մարմնին՝ բազմակողմանի, լրիվ եւ օբյեկտիվ քննություն ապահովելու նպատակով» | 8) իր որոշմամբ, քննչական ենթակայության կանոններին համապատասխան, վարույթը շարունակելը հանձնարարում է նախաքննության մեկ այլ մարմնի՝ համակողմանի և անաչառ նախաքննություն ապահովելու նպատակով |

**Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ**

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք՝ ընդունված 01.07.1998թ. ՀՕ-248, ուժի մեջ մտած 12.01.1999թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 1998/22 (55), 21.09.98:

ՀՀ քրեական օրենսգիրք՝ ընդունված 18.04.2003թ. ՀՕ-528-Ն, ուժի մեջ մտած 01.08.2003թ., սկզբնաղբյուր՝ ՀՀՊՏ 2003/25 (260), 02.05.03, հոդ. 407:

<sup>1</sup> <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2064&Reading=0>

<sup>2</sup> <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2064&Reading=1>

<sup>3</sup> <http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2064&Reading=2>

1922 թ. ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգիրք:  
1923 թ. ՌԽՖՍՀ քրեական դատավարության օրենսգիրք:  
1923թ ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգիրք:  
1961թ. ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգիրք:  
Ֆրանսիայի քրեական դատավարության օրենսգիրք:  
Գերմանիայի քրեական դատավարության օրենսգիրք:

ՀՀ վճռաբեկ դատարանի թիվ ՏԴ2/0005/01/16 որոշում:  
Թիվ ԵԷԴ/0059/01/15 դատական գործ:

Բուրյատիայի Հանրապետության գերագույն դատարանի նախագահության 24.01.2014թ. № 4У-62/2014 որոշում - <http://www.gcourts.ru>:

ՌԴ Ռոստովի շրջանային դատարանի 21.06.2016թ. № 22-3218/2016 որոշում <https://sudact.ru/regular/doc/dN1WwFAyIB5h/>:

**Ղամբարյան Ա.** Քննիչի (քննչական խմբի ղեկավարի) կողմից քրեական գործը վարույթ չընդունելու քրեադատավարական հետևանքները. «Քննիչ», թիվ 4, 2016:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն (մինչդատական վարույթ): Մաս 2, Հեղ. Խումբ: Գիտ. խմբ. Ա. Ղամբարյան, 2-րդ լրամշակված հրատ., Երևան, «Լուսաբաց հրատարակչատուն», 2018:

**Ղազարյան Ա.** Մինչդատական վարույթի կազմակերպման մոդելները (պատմական և համեմատախրավական վերլուծություն), մենագրություն, Երևան, «Թասկ» ՍՊԸ, 2019:

**Александров А., Марчук А.** Подследственность уголовных дел. Электронный ресурс, 2003.  
[http://www.juristlib.ru/book\\_2772.htm](http://www.juristlib.ru/book_2772.htm)(26.12.2014).

**Барыгина А. А.** Доказывание в уголовном процессе: допустимость доказательств: учебное пособие. 2-е изд., перераб. и доп.-М.: Изд. "Юрайт", 2019.

**Белкин Б., Альтшуллер М.** Строго соблюдать подследственность уголовных дел. Социалистическая законность. 1949. № 8.

**Гамбарян А. С.** Отстранение следователя от производства: ответственность или прокурорская "расправа"? Расследование преступлений: проблемы и пути их решения. 2018. № 4 (22).

**Головко Л. В.** Дознание и предварительное следствие в уголовном процессе Франции.-М.: Фирма «СПАРК», 1995.

**Головко Л. В.** Теоретические основы модернизации учения о

материальной истине в уголовном процессе // Библиотека криминалиста. Научный журнал. 2012. №4 (5)

Курс уголовного процесса. Под ред. **Л. В. Головки**. -М.: "Статут", 2016.

**Ерпылёв И. В.** Допустимость доказательств в уголовном процессе России и зарубежных стран. -М.: "Юрлитинформ", 2017.

**Захаров Н. В.** Теория и практика определения подследственности уголовных дел. Автореф. дисс. ... канд. юрид. наук. -Самара, 2009.

**Коновалов С. Г.** Элементы германской модели досудебного производства в уголовном процессе постсоветских государств. Дис. ... канд. юрид. наук. -М., 2018.

**Костенко Р. В.** Понятие и признаки уголовно-процессуальных доказательств. -М.: "Юрлитинформ", 2006.

Памятники российского права. в. 35 т. Т. 29. Уголовно-процессуальные кодексы РСФСР, под общ. Ред. **В.А.Лазаревой, Р.Л. Хачатурова**. -М.: "Юрлитинформ", 2016.

Защита по уголовному делу: пособие для адвокатов / Под ред. **Е. Ю. Львовой**. М: "Юристъ", 1999.

**Османова Н.В.** Институт подследственности в досудебном уголовном производстве. Автореф. дисс. .. канд. юрид. наук. -М., 2013.

Уголовно-процессуальное право Российской Федерации // в 2 ч. Часть 1; под ред. **Г. М. Резника**. 2-е изд., перераб. и доп. -М.: Изд. "Юрайт", 2019.

**Селютин А. В.** Проблемы разграничения подследственности в уголовном процессе. Автореф. дисс. ... канд. юрид. наук. -М., 2000.

**Смирнов А. В., Калиновский К. Б.** Уголовный процесс. Учебник. Под общ. ред. **А. В. Смирнова**. 6-е изд., перераб. -М.: Норма: ИНФРА-М., 2015.

**Строгович М. С.** О дознании и предварительном следствии и о едином следственном аппарате // Социалистическая законность. 1957. № 5

**Строгович М. С., Карницкий Д. А.** Уголовно-процессуальный кодекс РСФСР: Текст и постатейный комментарий. 2-е издание. -М.: Юридическое издательство НКЮ РСФСР, 1926.

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2064&Reading=0>

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2064&Reading=1>

<http://www.parliament.am/drafts.php?sel=showdraft&DraftID=2064&Reading=2>

**ПРОКУРОРСКОЕ НЕПОВИНОВЕНИЕ ПОДСЛЕДСТВЕННОСТИ  
(МОЛЧАНИЕ ЗАКОНОДАТЕЛЯ И ПОПУСТИТЕЛЬСТВО СУДЬИ)**

**Аннотация**

В статье рассматриваются сущность и значение института подследственности, раскрывается объем полномочий законодателя, прокурора, следователя при определении подследственности.

Авторы рассматривают вопрос прокурорских полномочий по изменению подследственности и ее границы в свете моделей досудебного производства.

Отдельно обсуждается вопрос о характере нарушения правил подследственности. В статье авторы отвечают на вопрос, является ли такое нарушение техническим или фундаментальным.

**Ключевые слова:** подследственность, молчание законодателя, попустительство судьи, модели досудебного уголовного процесса.

**THE PROSECUTOR'S DISOBEDIENCE TO THE INVESTIGATIVE  
JURISDICTION  
(SILENCE OF THE LEGISLATOR AND CONNIVANCE OF THE JUDGE)**

**Annotation**

The article examines the essence and significance of the institution of investigative jurisdiction, reveals the scope of powers of the legislator, prosecutor and investigator in the determination of investigative jurisdiction.

The authors discuss the issue of prosecutorial power to change the investigative jurisdiction and its borders in the light of pre-trial models.

The issue of the nature of the violation of the rules of investigative jurisdiction is discussed separately and in the article the authors attempt to answer the question whether such a violation is technical or fundamental.

**Keywords:** investigative jurisdiction, silence of the legislator, connivance of the judge, models of pre-trial criminal proceedings.





**ԱԻՂԱ ԹԱՂԵՎՈՍՅԱՆ**

*ՀՀ սահմանադրական դատարանի իրավախորհրդատվական վարչության փորձագիտական-վերլուծական բաժնի գլխավոր մասնագետ, Եվրոպական համալսարանի Իրավագիտության ամբիոնի դասախոս, իրավաբանական գիտությունների թեկնածու*

**ՄԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԿԱՍԵՑՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑ, ԹԵ՞ ՕՐԵՆՍԴՐԻ ԿԱՄԱՀԱՅՏՆՈՒԹՅՈՒՆ**

**Ամփոփագիր.** Սույն հոդվածը նվիրված է սնանկության վարույթի կասեցման առանձին խնդիրների հետազոտությանը: Մնանկության վարույթը կարգավորող օրենսդրության ուսումնասիրությունը վկայում է, որ օրենսդիրը չի ամրագրել սնանկության գործով վարույթի կասեցման իրավական մեխանիզմներ, այլ սուսկ սահմանել է առանձին պարտատերերի պահանջների քննությունը կասեցնելու հնարավորություն՝ կիրառելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան դրույթներն այնքանով, որքանով դրանք կիրառելի են սնանկության վարույթում:

Հոդվածի շրջանակներում փորձ է արվել բացահայտել՝ **արդյո՞ք սնանկության վարույթի կասեցման օրենսդրական կառուցակարգեր չնախատեսվին օրենսդրի կամահայտնության արդյունքն է, թե՞ օրենսդրական բաց:**

**Հիմնաբառեր.** Մնանկություն, գործով վարույթի կասեցում, օրենսդրական բաց, պարտապան, պարտատեր, անվճարունակություն:

**Ա)** Մնանկության հարաբերությունների իրավակարգավորման արդյունավետ կառուցակարգերի մշակումը և ապահովումը պետության տնտեսական կայունության երաշխիքներից է: Միաժամանակ, սնանկության ինստիտուտը յուրօրինակ տնտեսաիրավական գործիք է, որը կատարում է նաև տնտեսվարող սուբյեկտների առևտրային հարաբերություններում պատշաճ վարքագիծն ապահովող գործառույթ: Տնտեսական հարաբերությունների մասնակիցների վարքագծում երբեմն դրսևորվում են որոշակի «շեղումներ», որոնք վերացնելու, տնտեսական համակարգում կառուցվածքային փոփո-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021  
41

խությունները երաշխավորման հարցում անառարկելի դերակատարում ունի սնանկության ինստիտուտը<sup>1</sup>: Մասնագիտական գրականության շրջանակներում սնանկության ինստիտուտի որպես շուկայական հարաբերությունները կանոնակարգող առանցքային գործիքի վերաբերյալ, իրավաբան գիտնականները նշում են. «...Առողջ տնտեսության գրավականներից մեկը սնանկությունն է, մասնավորապես, եթե առանձին տնտեսվարող սուբյեկտ չի ներգրավվում շուկայական տնտեսությունում, ապա այն պետք է ենթարկվի քաղաքակիրթ լուծարման գործընթացի<sup>2</sup>...»:

Սահմանադրական դատարանը 2008 թվականի փետրվարի 25-ի ՄԴՈ-735 որոշմամբ ընդգծել է. «...Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը...», իսկ 2021 թվականի հունվարի 26-ին կայացրած ՄԴՈ-1572 որոշմամբ Սահմանադրական դատարանը փաստել է, որ յուրաքանչյուր դեպքում սնանկության գործընթացում պետք է հաշվի առնվեն տարբեր շահագրգիռ կողմերի ներառյալ պարտապանների շահերը:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) համակարգային վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սնանկության վարույթը միմյանց հաջորդող բազմափուլ, զարգացող համակարգ է, որի կառուցվածքային տարր հանդիսացող յուրաքանչյուր փուլի առջև օրենսդիրը դրել է կոնկրետ խնդիրներ, որոնք բխում են սնանկության վարույթի համընդհանուր նպատակից, այն է ապահովել պարտատերերի պահանջների բավարարումը երաշխավորելով պարտատերերի և պարտապանի իրավունքների պաշտպանության ողջամիտ հավասարակշռությունը:

Անդրադառնալով սնանկության գործ» հասկացության սահմանադրաիրավական իմաստի բացահայտմանը՝ Սահմանադրական դատարանը 11.01.2011 թվականին կայացրած ՄԴՈ-932 որոշմամբ

<sup>1</sup> **Пирогова Е.С.** Правовое регулирование несостоятельности (банкротства): учебник для бакалавриата и магистратуры / **Пирогова Е.С., Курбагов А.Я.** - М.: Издательство "Юрайт", 2015. - С. 23.

<sup>2</sup> **Семеусов В.А.** Предпринимательство и право. - Иркутск, 1996. - С. 147; Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 2. - М.: "Статут", 2019. - С. 43; **Гуд Д.О.** Банкротство – инструмент исполнения денежных обязательств. – М.: "ПРИОР", 1998. – С. 90.

նշել է, որ նշված հասկացությունը չի սահմանափակվում միայն պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված վարույթով, և ներառում է այն բոլոր վեճերի լուծմանն ուղղված դատական վարույթները, որոնք կարող են ծագել պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի քննության ընթացքում, կամ առնչվում են պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի բավարարման իրավական հետևանքներին: Այլ կերպ՝ պարտապանին սնանկ ճանաչելու դիմումի հիման վրա հարուցված դատական գործը, որպես սնանկության գործ, ի տարբերություն այլ քաղաքացիաիրավական բնույթ ունեցող գործերի, չի ավարտվում տվյալ վարույթով կայացված դատական ակտով և կարող է բաղկացած լինել մի քանի առանձին վարույթներից, որոնք, սակայն, չեն հանդիսանում առանձին գործեր, այլ ներառվում են տվյալ իրավասուբյեկտի սնանկության վերաբերյալ միասնական դատական գործում:

Սնանկության վարույթի փուլային կառուցվածքը պայմանավորված է սնանկության գործերի քննության առանձնահատկություններով<sup>1</sup>, ընդ որում՝ յուրաքանչյուր փուլին տրամաբանորեն հաջորդում է մյուս փուլը, ուստի կոնկրետ փուլի առջև դրված խնդիրների ողջամիտ ժամկետներում քննությունն ու լուծումը դառնում է առավել քան հրատապ:

Վճռաբեկ դատարանը Սամվել, Սահակ և Սուլթան Մարկոսյաններն ընդդեմ Լուսիկ Գևորգյանի և մյուսների վերաբերյալ ԵԿԴ/0808/02/10 քաղաքացիական գործով 06.11.2013 թվականին կայացրած որոշմամբ անդրադարձել է գործի վարույթը կասեցնելու իրավական կարգավորումներին և արձանագրել, որ գործի վարույթի կասեցումը գործի քննության ընթացքում այնպիսի հանգամանքի ի հայտ գալն է, որն ըստ էության արգելակում է գործի հետագա ընթացքը, գործի վարույթի կասեցումը չի կարող կրել ձևական բնույթ, իսկ դրա միակ նպատակը գործի շարունակմանը խոչընդոտող հանգամանքների վերացումն է:

Հետազոտության առարկա դարձնելով Օրենքի 20.1-րդ հոդվածը, կարելի է եզրահանգել, որ օրենսդիրը հստակ սահմանել է սնանկության գործով առանձին պահանջների քննության կասեցման իրավական հիմքերը և դատավարական կարգը հիշատակված հոդվածի 1-ին մասով ամրագրելով, որ գործով վարույթի կասեցման հնարավորություն նախատեսվում է բացառապես պահանջների քննության փուլում: Այսինքն՝ օրենսդիրը հստակ նախանշել է այն

<sup>1</sup>Фурсов Д.А. Рассмотрение и разрешение дел о банкротстве: Учеб. пособие. - М.: "Статус", 2009. - С. 4-5.

եզրագծերը, որոնց շրջանակներում կասեցման ինստիտուտը կիրառելի է սնանկության վարույթի նկատմամբ՝ բացառելով սնանկության գործի քննության ընդհատում պահանջների հաստատման փուլից հետո:

Ուշադրության է արժանի հանգամանքն առ այն, որ հիշյալ իրավակարգավորումն օրենսդիրը ներմուծել է 2016 թվականի հունիսի 16-ի ՀՕ-105-Ն օրենքով՝ Օրենքի ընդունումից շուրջ տասը տարի անց՝ զերծ մնալով սնանկության վարույթն ամբողջությամբ կասեցնելու իրավական կառուցակարգերի ներդրումից:

Կարծում ենք, որ օրենսդրի նման գործելաճան ինքնանպատակ չէ: Մեր համոզմամբ օրենսդիրը հաշվի է առել, որ եթե սնանկության գործի քննության ցանկացած փուլում իրավական հնարավորություն նախատեսվեր կասեցնել սնանկության գործի քննությունն ամբողջությամբ, ապա նման իրավակարգավորումը կհանգեցներ սնանկության իրավահարաբերությունների բնականոն ընթացքի խաթարմանը՝ խախտելով ինչպես պարտատերերի, այնպես էլ պարտապանի օրինական շահերը: Ավելին, նման պայմաններում կոտնահարվեր նաև գործի ողջամիտ ժամկետներում քննության դատավարական առանցքային սկզբունքը՝ հաշվի առնելով նաև այն, որ սնանկության գործերի քննությունը, պայմանավորված օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով, տևում է տարիներ:

Մեր գնահատմամբ օրենսդրի կամահայտնությունը բացահայտվում է նաև «Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերաբերելի իրավակարգավորումների վերուծության արդյունքում:

**Նախ** «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ և 10-րդ մասերի վերլուծության արդյունքում կարելի է եզրահանգել, որ պահանջների քննության փուլում պարտատիրոջ պահանջի քննության կասեցման իրավական հնարավորությունը պարտապանին թույլ է տալիս պահանջի քննության ընթացքում Սնանկության դատարանում առարկել պարտատիրոջ պահանջի օրինականության, հիմնավորվածության և առաջնահերթության դեմ: Ավելին, արձանագրենք, որ տվյալ փուլում պարտապանը զրկված չէ այլ դատարանում ևս վիճարկել պահանջի հիմքերը՝ բացառելով պահանջի կատարմանն ուղղված ցանկացած գործողություն: Գործող կարգավորումը, ըստ էության, երաշխավորում է պարտապանի իրավունքների ապահովումը, մինչդեռ սնանկության վարույթի մյուս փուլերում նման կառուցակարգի ներդրումը, մեր համոզմամբ, ոչ միայն վտանգում է սնանկության վարույթի քննության ողջամիտ

ժամկետների պահպանումը, այլև անհարկի հետաձգում է պարտատիրոջ պահանջի բավարարմանն ուղղված գործողությունների կատարումը, որոնք առանձին դեպքերում կարող է պարտապանի իրավունքի ուշացած իրացման եղանակով անբարեխղճության արդյունք հանդիսանալ:

**Բացի այդ**, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված կառուցակարգերը սահմանում են, որ պարտատերերն իրենց պահանջները ներկայացնում են դատարան սնանկության մասին հայտարարությունից հետո՝ մեկամսյա ժամկետում: Միաժամանակ, Օրենքի 85-րդ հոդվածը հնարավորություն է ընձեռում պարտատերերին դատարան պահանջներ ներկայացնել նաև նշված ժամկետից դուրս: Արձանագրենք, որ այն պարագայում, երբ սնանկության վարույթի ցանկացած փուլում օրենսդիրը հնարավոր համարի կասեցնել գործի վարույթը, «ուշացած» պահանջների քննությունը և գրանցումը կդառնա անհնարին: Կարծում ենք նման իրավակարգավորումը կխաթարի ենթադրյալ պահանջատերի իրավունքները:

**Ավելին**, «Սնանկության մասին» ՀՀ օրենքի ուսումնասիրությունը թույլ է տալիս փաստել, որ սնանկության կառավարիչը գործի քննության ընթացքում իրականացնում է մի շարք դատավարական և ոչ դատավարական բնույթի գործողություններ, որոնք միտված են պարտապանի գույքի հայտնաբերմանը, գույքագրմանն ու պահպանմանը, պարտապանի դեբիտորական պարտքերի հավաքագրմանը և այլն: Այն դեպքում, երբ սնանկության գործի վարույթն ամբողջությամբ կասեցվի, բնականաբար, կկասեցվեն նաև սնանկության գործով կառավարչի լիազորությունները, մինչդեռ Օրենքի 29-րդ հոդվածի վերլուծությունը վկայում է, որ նման պարագայում, առաջին հերթին, կոտնահարվեն պարտատերերի օրինական շահերը, ինչպես նաև կխաթարվի սնանկության վարույթի ընթացքը, քանզի չեն բացառվի նաև վարույթի մասնակիցների կողմից ոչ իրավաչափ վարքագծի դրսևորումները (գույքի ապօրինի օտարում, պարտապանի պարտավորությունների ապօրինի բավարարում և այլն):

Վերոգրյալի լույսի ներքո եզրահանգում ենք, որ սնանկության վարույթի կասեցման իրավական կառուցակարգերի բացակայությունը ոչ թե օրենսդրական բացի, այլ օրենսդրի կամահայտնության արդյունք է: Խնդրո առարկա հիմնախնդրի շրջանակներում ուշադրության է արժանի նաև Համաշխարհային բանկի կողմից իրակա-

նացված «Գործարարությամբ զբաղվելը-2020<sup>1</sup>» հետազոտությունը, որի «սնանկության կարգավորում» ցուցիչի համար գնահատվող «պարտքի մարման համար պահանջվող ժամանակը» ենթացուցիչով Հայաստանի Հանրապետությունում սնանկության վարույթի ընդհանուր տևողությունը գնահատվել է 1,9 տարի: Սա իրականում համարվում է միջին ցուցանիշ, մինչդեռ սնանկության վարույթի ամբողջական կասեցումը, վստահաբար, կհանգեցնի նշված ցուցանիշի անկմանը: Նման գործընթացը բացասաբար կանդրադառնա Հայաստանի Հանրապետությունում ներդրումային հարաբերությունների վրա:

Ավելին, 2019 թվականին կատարված վիճակագրական հարցումները վկայում են, որ սնանկության վարույթը կասեցնելու նպատակով դատարան են դիմել հարցված պարտապանների միայն 8 տոկոսը՝ 16 անձ, ներքոգրյալ հիմքերով<sup>2</sup>.

| ՀԻՄՔԸ  | ԸՆԴՀԱՄԵՆԸ |       |
|--|-----------|-------|
|  | Քանակ     | Տոկոս |
| Երեք տարի չէի աշխատում, եկամուտ չունեի, անվճարունակ էի     | 3         | 1,5   |
| Անհիմն մեղադրանքով սնանկ են ճանաչել                        | 3         | 1,5   |
| Հարկային անօրինական գործողությունների հիմքով               | 2         | 1     |
| Որպեսզի ժամանակ տային տունը վաճառելու                      | 2         | 1     |
| Դիմում նոր վարկավորման գործունեությունը շարունակելու համար | 1         | 0,5   |
| Վարկային արձակուրդ եմ ուզել                                | 1         | 0,5   |
| Ցանկանում էի ժամանակացույց կազմել                          | 1         | 0,5   |
| Գործընթացի կեսից պարտատիրոջ հետ համաձայնության ենք եկել    | 1         | 0,5   |
| Առողջացման նպատակով տնայնագործությամբ զբաղվելու համար      | 1         | 0,5   |

Ստացվում է, որ սնանկության վարույթի կասեցմամբ պարտապանները մեծապես նպատակ են հետապնդել հետաձգել պարտատերերի պահանջների բավարարման գործընթացը, որի համար սնանկության վարույթը կարգավորող օրենսդրությունը սահմանել է հստակ մեխանիզմներ:

Բ) Ուսումնասիրելով «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգում ներմուծված սնանկության առանձին գործերի (օրի-

<sup>1</sup> «Գործարարությամբ զբաղվելը - 2020» Համաշխարհային բանկի կողմից իրականացված հետազոտություն, հասանելի է <https://www.doingbusiness.org/armenia> > ARM կայքում:

<sup>2</sup> ՀՀ սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվություն: Նյութը պատրաստվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ, էջ 25-26, հասանելի է <https://moj.am/storage/uploads/0AM02.pdf> կայքում:

նակ՝ ՍնԴ/1362/04/20, ՍնԴ/1234/04/20, ՍնԴ/0755/04/20, ՍնԴ/0661/04/20, ՍնԴ/0555/04/20, ՍնԴ/2132/04/20, ՍնԴ/0945/04/19, ՍնԴ/0165/04/20, ԵԴ/0117/04/18, ԵԱՔԴ/0076/04/17, ԵԷԴ/0034/04/17 և այլն) էլեկտրոնային քարտերը՝ կարելի է արձանագրել, որ սնանկության գործերի քննության ընթացքում առավելապես բարձրացվում է գործի վարույթը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով կասեցնելու հարցը, այն է՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակիչ ակտ կայացնելը:

Գայանե Ասլանյանն ընդդեմ Սահակ Ասլանյանի և մյուսների վերաբերյալ ԵԱՔԴ/0169/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը 11.05.2011 թվականին կայացրած որոշմամբ արձանագրել է, որ 1998 թվականի ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված գործի վարույթը կասեցնելու դատարանի պարտականությունը ծագում է երկու վավերապայմանների միաժամանակյա առկայության դեպքում, դրանք են՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարությունների կարգով քննվող այլ գործի առկայությունը և տվյալ գործի քննության անհնարինությունը մինչև նշված դատավարությունների կարգով քննվող գործով կամ հարցով որոշում կայացնելը: Դա պայմանավորված է այն հանգամանքներով, որ այլ՝ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործով կամ հարցով փաստերը տվյալ գործի լուծման համար ունեն նշանակություն, և տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը կարող է հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում:

Վերահաստատելով նախկինում արտահայտած իր իրավական դիրքորոշումը՝ Վերա Ազիզյանն ընդդեմ Նունե Սարգսյանի վերաբերյալ ԵԱԴԴ/0452/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանը 13.01.2010 թվականին կայացրած որոշմամբ փաստել է, որ դատարանի պարտականությունն է կասեցնել գործի վարույթը, եթե դրա քննությունն անհնարին է մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, իսկ գործի վարույթը կասեցնելու մասին դատարանի որոշման մեջ պետք է նշվեն շարժառիթները, օրենքները, այլ իրավական ակտերը, որոնցով դատարանը հանգել է հետևությունների: Ընդ որում, ՀՀ քաղա-

քացիական դատավարության օրենսգրքի 105-րդ հոդվածի 1-ին կետի հիման վրա գործի վարույթը կասեցնելու վերաբերյալ որոշում կայացնելիս դատարանը պարտավոր է նշել այն կապը, որն առկա է քննվող գործի և այլ դատարանում սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող գործի միջև, այսինքն՝ նշել այլ դատավարության կարգով քննվող այն իրավահարաբերությունները կամ փաստերը, որոնք քննվող գործի համար իրավաբանական նշանակություն ունեն, ինչպես նաև պարտավոր է նշել, թե ինչու տվյալ իրավահարաբերությունը կամ փաստը չի կարող հաստատվել տվյալ գործի քննության շրջանակներում, այսինքն՝ ցույց տալ գործի քննության անհնարինությունը:

Ուսումնասիրության առարկա հանդիսացող վերոթվարկյալ և այլ սնանկության գործերի փաստական հանգամանքները վկայում են, որ կասեցման միջնորդություն ներկայացրած վարույթի համապատասխան մասնակիցները համապատասխան շեշտադրումները կատարել են՝ հիմնվելով քաղաքացիական գործերի քննության նկատմամբ կիրառելի իրավակարգավորումները հաշվի չառնելով սնանկության վարույթի առանձնահատկությունները:

«Սնանկության մասին» ՀՀ օրենքի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ սնանկության վարույթի ամբողջ ընթացքում պարտապանը զրկված չէ դատական կարգով վիճարկել պարտատիրոջ դիմումի/պահանջի հիմքում դրված և իր վճարային պարտավորությունը հավաստող դատական կամ վարչական ակտը, գործարքը: Ավելին, պայմանավորված սնանկության վարույթի փուլով՝ պարտապանի կողմից պարտատիրոջ պահանջի հիմքերի վիճարկման գործընթացը կարող է տարբեր «դրվագային զարգացումներ» ունենալ:

Պարտապանին սնանկ ճանաչելու փուլում վճարային պարտավորության հիմքում ընկած դատական ակտի, գործարքի կամ վարչական ակտի դատական կարգով վիճարկման պարագայում, եթե պարտապանը ապացուցում է, որ տվյալ պահանջի դեմ առարկելու բավարար հիմքեր ունի, ապա ստացվում է, որ ներկայացված պահանջը դառնում է վիճելի, ուստի բավարար հիմքերի առկայության պարագայում Սնանկության դատարանը կարող է մերժել սնանկության դիմումը: Այլ է իրավիճակը պահանջի քննության փուլում. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված կարգով պարտապանը, սնանկության գործով կառավարիչը և պարտատերերը յոթնօրյա ժամկետում կարող են գրավոր



առարկություն ներկայացնել պահանջների նախնական ցուցակի առաջնահերթության կամ որևէ պարտատիրոջ պահանջի վերաբերյալ, որն օրենքով սահմանված կարգով քննության առարկա է դառնում Սնանկության դատարանում: Փաստենք, որ հիշատակված փուլում ևս պարտապանը կարող է այլ դատարանում վիճարկել պարտատիրոջ պահանջի հիմքերը, որպիսի պարագայում, բնականաբար, կիրառելի են Օրենքի 20.1-րդ հոդվածի 1-ին մասի ամրագրումները:

Ինչ վերաբերում է պահանջի գրանցման փուլից հետո պահանջի հիմքում դրված դատական ակտը, գործարքը կամ վարչական ակտը վիճարկելուն, ապա կարծում ենք, որ տվյալ փուլում պարտապանի **իրավունքի իրացումը չպետք է խոչընդոտի սնանկության վարույթի այլ մասնակիցների ողջամիտ ժամկետներում արդար դատաքննության իրավունքի իրացմանը**: Մեր գնահատմամբ, յուրաքանչյուր դեպքում պարտապանն է որոշում, թե երբ իրացնի օրենսդրությամբ իրեն վերապահված կոնկրետ իրավունքները, սակայն ասվածը չի նշանակում, որ անձի կողմից իր իրավունքի ոչ ժամանակին իրացումը պետք է բացասական ազդեցություն ունենա վարույթի այլ սուբյեկտների վրա: Տվյալ պարագայում կարելի է արձանագրել, որ պարտապանը, մինչև պահանջի գրանցման փուլը, դատավարական իմաստով երբևէ սահմանափակված չի եղել վիճարկել պահանջի հիմքում դրված դատական ակտը, գործարքը կամ վարչական ակտը, մինչդեռ պարտատիրոջ պահանջի հաստատումից հետո պարտապանի նման վարքագիծը վկայում է պարտապանի գործի քննությունը արհեստականորեն հետաձգելու, սնանկության վարույթում գույքագրված գույքի վաճառքը ձգձգելու, պահանջի բավարարմանն ուղղված գործողությունները կասեցնելու միտում ունենալու մասին:

***Այսպիսով՝ ամփոփելով սույն հոդվածում կատարված վերլուծությունը՝ եզրահանգում ենք, որ սնանկության վարույթում կասեցման մեխանիզմների բացակայությունը օրենսդրի կամքն է՝ պայմանավորված սնանկության վարույթի առանձնահատկություններով և հետապնդվող նպատակներով:***

**Օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկ**

ՀՀ Սահմանադրություն (06.12.2015թ., ուժի մեջ է մտել 22.12.2015թ., ՀՀՊՏ 2015.12.21)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրք (09.02.2018թ.,

ուժի մեջ է մտել 09.04.2018թ., ՀՀՊՏ 2018.03.05/16(1374), ՀՕ-110-Ն)

Սնանկության մասին ՀՀ օրենք (25.12.2006թ., ուժի մեջ է մտել 10.02.2007թ., ՀՀՊՏ 2007.01.31/7(531), ՀՕ-51-Ն)

ՀՀ Սահմանադրական դատարանի 2008 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-735 որոշում

ՀՀ Սահմանադրական դատարանի 2011 թվականի հունվարի 11-ի ՍԴՈ-932 որոշում

ՀՀ Սահմանադրական դատարանի 2021 թվականի հունվարի 26-ի ՍԴՈ-1572 որոշում

ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԿԴ/0808/02/10 քաղաքացիական գործով 06.11.2013 թվականի որոշում

ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԱՔԴ/0169/02/09 քաղաքացիական գործով 11.05.2011 թվականի որոշում

ՀՀ Վճռաբեկ դատարանի ԵԱԴԴ/0452/02/09 քաղաքացիական գործով 13.01.2010 թվականի որոշում

ՍնԴ/1362/04/20, ՍնԴ/1234/04/20, ՍնԴ/0755/04/20, ՍնԴ/0661/04/20, ՍնԴ/0555/04/20, ՍնԴ/2132/04/20, ՍնԴ/0945/04/19, ՍնԴ/0165/04/20, ԵԴ/0117/04/18, ԵԱՔԴ/0076/04/17, ԵԷԴ/0034/04/17 սնանկության գործեր

«Գործարարությամբ զբաղվելը - 2020» Համաշխարհային բանկի կողմից իրականացված հետազոտություն, 66 էջ, հասանելի է <https://www.doingbusiness.org/armenia> ARM կայքում:

ՀՀ սնանկության ոլորտի հետազոտության հաշվետվություն: Նյութը պատրաստվել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության կառավարության ֆինանսավորմամբ, Երևան 2019, 189 էջ, հասանելի է <https://moj.am/storage/uploads/0AM02.pdf> կայքում:

**Пирогова Е.С.** Правовое регулирование несостоятельности (банкротства): Учебник для бакалавриата и магистратуры / Пирогова Е. С., Курбатов А. Я. - М.: Издательство «Юрайт», 2015.

**Семеусов В.А.** Предпринимательство и право. - Иркутск, 1996.  
Несостоятельность (банкротство): Учебный курс. В 2 т. / Под ред. д.ю.н., проф. **С.А. Карелиной**. Т. 2. - М.: «Статут», 2019.

**Гуц Д.О.** Банкротство – инструмент исполнения денежных обязательств. – М.: «ПРИОР», 1998.

**Фурсов Д.А.** Рассмотрение и разрешение дел о банкротстве: Учеб. пособие. -М.: «Статут», 2009.

**НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ПРИОСТАНОВЛЕНИЯ  
ПРОИЗВОДСТВА ПО ДЕЛУ О БАНКРОТСТВЕ.  
ВОЛЯ ЗАКОНОДАТЕЛЯ ИЛИ ЗАКОНОДАТЕЛЬНЫЙ ПРОБЕЛ**

**Аннотация**

Статья посвящена исследованию правовых вопросов приостановления производства по делу о банкротстве.

Изучение законодательства, регулирующего процедуры банкротства, показывает, что законодатель не установил правовые механизмы приостановления производства по делу о банкротстве, а только установил возможность приостановления рассмотрения требований отдельных кредиторов, применив соответствующие положения Гражданского процессуального кодекса РА в той мере, в какой они применимы к процедурам банкротства.

В рамках статьи автор пытается выяснить, является ли отсутствие законодательных структур для приостановления производства по делу о банкротстве результатом воли законодателя или законодательного пробела.

**Ключевые слова:** банкротство, приостановление производства, законодательный пробел, должник, кредитор, несостоятельность.

**SOME ISSUES OF SUSPENSION OF BANKRUPTCY  
PROCEEDINGS.  
LEGISLATOR'S WILL OR LEGISLATIVE GAP**

**Annotation**

This article is devoted to the research of legal issues of suspension of bankruptcy proceedings.

The study of the legislation regulating bankruptcy proceedings shows that the legislator did not establish legal mechanisms for the suspension of bankruptcy proceedings, but only established the possibility to suspend the examination of claims of individual creditors, applying the relevant provisions of the RA Civil Procedure Code to the extent applicable in bankruptcy proceedings.

Within the framework of the article, the author attempts to find out whether the failure to envisage legislative structures for the suspension of bankruptcy proceedings is the result of the legislator's will or legislative gap.

**Keywords:** Bankruptcy, suspension of proceedings, legislative gap, debtor, creditor, insolvency.



ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏԼԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

ԴԱՎԻԹ ՕՅԱՆՅԱՆ

ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ասպիրանտ

**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՐԱՑՆՈՂ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄԸ**

**Ամփոփագիր.** Սույն հոդվածը նվիրված է պայմանագրի լրացնող մեկնաբանման էության բացահայտմանը և հետազոտմանը: Հոդվածում վերլուծվում են պայմանագրային իրավունքի արտասահմանյան երկրների օրենսդրական փորձը, ինչպես նաև միջազգային ունիֆիկացիաները: Այդ վերլուծության արդյունքում քննարկվում է պայմանագրի լրացնող մեկնաբանման առանձնացման հնարավորությունը: Մասնավորապես, հեղինակի կողմից քննարկվում են այն նախադրյալները, որոնք ընկած են այդ մեկնաբանման հիմքում, ինչպես նաև վեր են հանվում այդ մեկնաբանման դրական և բացասական կողմերը:

**Հիմնաբառեր.** պայմանագրի մեկնաբանում, պայմանագրի մեկնաբանման կանոն, լինգվիստիկա, պայմանագրի բաց, կողմերի հիփոթետիկ կամք, պայմանագրի լրացնող մեկնաբանում:

Պայմանագրի մեկնաբանումը համարվում է պայմանագրային վեճերի լուծման ամենաարդյունավետ միջոցներից մեկը: Թե՛ ներպետական, թե՛ արտասահմանյան իրավունքում այս ինստիտուտն ունի իրեն բնորոշ մոտեցումները և նախադրյալները: Պայմանագրի մեկնաբանման ավանդական կանոնները (տառացի և ռեալ) մեծամասամբ լրացնում են պայմանագրային իրավահարաբերություններում առաջացող ճեղքերը: Այնուամենայնիվ, այդ կանոններն արդյունավետ են ավանդական պայմանագրային հարաբերություններում:

Պայմանագրային հարաբերությունների զարգացումը, պայմանագրային նոր կառուցակարգերի ստեղծումը, քաղաքացիական շրջանառությունում նոր սուբյեկտների ձևավորումը առաջացնում են ավելի բարդ պայմանագրային վեճեր: Այդօրինակ դեպքերում՝

մեկնաբանման ավանդական կանոնները օգուտ չեն տալիս, և մեկնաբանման ընթացքը մտնում է փակուղի: Բազմաթիվ են նաև դեպքերը, երբ կողմերի միջև վեճը ծագում է գոյություն չունեցող պայմանի շուրջ: Այլ խոսքերով, կողմերի հարաբերություններում առկա է պայմանագրի բաց: Այս դեպքում դատարանի առաքելությունը պայմանագրի նորոգումն է, որն իրականացվում է լրացնող մեկնաբանման միջոցով:

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԲԱՑԸ ՈՐՊԵՍ ԼՐԱՑՆՈՂ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԱԽԱԴՐՅԱԼ

(a) Պայմանագրի բացի հաստատումը գերմանական իրավունքում (**Vertragslucke**): Պայմանագրային բացի հայեցակարգը կարևոր տեղ է զբաղեցնում գերմանական դոկտրինայում և պրակտիկայում: Գերմանիայում դատարանները պայմանագրի բացը բնորոշում են որպես կողմերի դրսևորած ոչ լրիվ կամահայտնություն (*planwidrige Unvollständigkeit*): Ըստ պրոֆեսոր Օ. Սանդրոկի՝ պայմանագրի բացի տակ պետք է հասկանալ այն իրավիճակը, երբ պայմանագիրը կոնկրետ հարցերի վերաբերյալ չի պարունակում կողմերի կամքի ակնհայտ միասնություն<sup>1</sup>: Բացի մասին կարելի է խոսել այն ժամանակ, երբ պայմանագրի մեկ կամ մի քանի պայման անճանաչելի կամ ոչ ակնհայտ են, բայց միևնույն ժամանակ անհրաժեշտ են պայմանագրային պարտավորությունների կատարման համար<sup>2</sup>:

Պայմանագրի լրացման ժամանակ հաստատվում է պայմանագրի փաստացի և անհրաժեշտ բովանդակությունների հարաբերակցությունը<sup>3</sup>: Այլ խոսքերով պայմանագրի լրացման ժամանակ համադրվում է այն, թե ինչպես են կարգավորված կողմերի հարաբերությունները, և այն, թե ինչպես պետք է դրանք կարգավորվեն: Պայմանագրային բացերը կարող են ունենալ տարբեր բնույթ՝ մի մասը կարող է վերաբերել անմիջականորեն պայմանագրի էությանը, մի մասը՝ լրացուցիչ պարտավորություններին: Կարող է արդյոք դատարանը բոլոր դեպքում լրացնել կողմերի պայմանագիրը: Այս հարցադրման հետ կապված գերմանական իրավունքում գերակշռող է այն տեսակետը, որի համաձայն ոչ բոլոր բացերն է հնարավոր

<sup>1</sup> Տե՛ս **Sandrock O.** Zur ergänzenden Vertragsauslegung im materiellen und internationalen Schuldvertragsrecht: methodologische Untersuchungen zur Rechtsquellenlehre im Schuldvertragsrecht, 1969, էջեր 33-32:

<sup>2</sup> Տե՛ս **Larenz K, Wolf M.** – Allgemeiner Teil des Bürgerlichen Rechts, München 2004, էջ 540:

<sup>3</sup> Տես նույն տեղը:

լրացնել: Պրոֆեսոր Կ. Լարենցի կարծիքով՝ պայմանագրի բացի տակ պետք է հասկանալ այն իրավիճակը, երբ պայմանագրի ինչ-որ պայման բացակայում է, բայց այն անհրաժեշտ է կողմերի նախօրոք մտադրված նպատակին հասնելու համար:

Մեր կարծիքով ևս այս մոտեցումն արդարացված է: Եթե պայմանագրի բացը առկա է, սակայն առանց լրացման պայմանագիրը կարող է կատարվել, դրա լրացման օբյեկտիվ անհրաժեշտությունը բացակայում է: Ավելին, այն բացերի լրացումը, որոնք չունեն էական բնույթ, կնշանակի դատարանի կողմից պայմանագրի առարկայի անհարկի լայնացում, ինչն անթույլատրելի է շրջանառության կայունության տեսանկյունից:

(b) Պայմանագրի բացի հաստատումը անգլիական իրավունքում (**negative exclusiveness**): Ի տարբերություն գերմանական մոդելի պայմանագրային բացի հայեցակարգն այստեղ այդքան էական դեր չի խաղում: Անգլիական իրավաբանների համար պայմանագրի բացը ավելի շուտ հանդիսանում է այն բանի տրամաբանական հետևանքը, որ շահագրգիռ կողմը կապացուցի բոլոր անհրաժեշտ հարցերի շուրջ սպառիչ կարգավորումների բացակայությունը: Դրա հիման վրա անգլիական իրավունքում ձևավորվել է վիճելի պայմանի լրացման դեմ կանխավարկածը, որի համաձայն՝ ենթադրվում է, որ կողմերը պայմանագրով նախատեսել են բոլոր անհրաժեշտ հարցերի կարգավորումները, եթե հակառակը ապացուցված չէ<sup>1</sup>: Ընդ որում, որքան մանրամասն է պայմանագրի բովանդակությունը, այնքան այդ կանխավարկածն ուժեղ է<sup>2</sup>:

Ինչպես նշվում է անգլիական տեսության մեջ՝ ցանկացած միջամտություն պայմանագրային հարաբերություններին կարող է խախտել պայմանագրի անձեռնմխելիությունը (*sanctity of contract*)<sup>3</sup>: Նման մոտեցման տրամաբանական արդյունքն այն է, որ պայմանագրում բացի հայտնաբերումը ռիսկ է, որը կրում են կողմերը: Կողմերից յուրաքանչյուրը պատասխանատու է պայմանագրի ոչ լրիվության համար: Սա էլ իր հերթին հիմք է պայմանագիրը դիտարկելու որպես բացասական բացառիկության (*negative exclusiveness*) մի-

<sup>1</sup> Տե՛ս **Lewison K.** – The interpretation of contracts, L. 2011 էջ 71:

<sup>2</sup> *Aspdin v. Austi* գործով նշվում է՝ երբ կողմերը կնքում են գրավոր համաձայնություն հստակ արտահայտված պայմաններով, ակնհայտ է, որ անցանկալի է նման պայմանների ընդարձակումը ենթադրյալ պայմաններ նախատեսելով: Գանխավարկածը կայանում է նրանում, որ կողմերը նախատեսելով ինչ-որ բան, նախատեսել են բոլոր պայմանները, որոնց հետ նրանք մտադրվել էին կապվել: Տե՛ս **Lewison K.** նշվ. աշխ. էջ 285:

<sup>3</sup> Տե՛ս **Cornet N.** Contract Interpretation and Gap Filling: Comparative and Theoretical Perspectives. Antwerpen, 2006.. էջ 182:

ջոց: Այսինքն՝ պայմանագիրը կողմերի հարաբերությունների կարգավորման բացառիկ միջոց է:

Ստացվում է, որ յուրաքանչյուր անգամ դատարանին անհրաժեշտ է հաղթահարել պայմանագրի բացասական բացառիկությունը՝ դրանում նոր պայման մտցնելու համար: Հաշվի առնելով դա՝ քննարկվող կանխավարկածը կարող է հաղթահարվել, եթե ապացուցվի, որ պայմանագիրը չի պարունակում կողմերի համար կարևոր որևէ հարց:

(c) Դիտավորյալ բաց թողնված պայմանի լրացման հնարավորությունը: Պայմանագրային բացի առաջացման մեկ այլ պատճառ կարող է լինել այն, որ կողմերը դիտավորյալ չեն կարգավորել այդ հարցը պայմանագրի շրջանակներում<sup>1</sup>: Կողմերի դիտավորյալ չկարգավորված բացերի լրացման պրակտիկան բերեց ոչ լրիվ կամահայտնության (*planwidrige Unvollständigkeit*) ավանդական մոտեցման քննադատությանը<sup>2</sup>: Այդ իսկ պատճառով պայմանագրի բացի համար որպես ելակետային նախադրյալ հանդիսացավ պայմանագրի նպատակին հասնելը<sup>3</sup>:

Կողմերի որոշումը՝ թողնել հարցը չկարգավորված, կարող է պայմանավորված լինել տարբեր հանգամանքներով, այդ թվում նաև նրանով, որ պայմանագրի կնքման պահին հնարավոր չի եղել որոշել, թե ինչպես այն կարգավորել: Հետևաբար մերժել կողմերի այդ հարցը բարձրացնել իրավունքը կնշանակել հրաժարվել դատարանի հիմնական ֆունկցիայից՝ վեճի լուծումից: Ավելին, կողմերի դիտավորյալ թողնված բացը կարող է կապված լինել ընթացիկ ծախսերի հետ: Հաճախ կողմերին ձեռնտու է թողնել հարցը չկարգավորված այն ակնկալիքով, որ խնդիր չի առաջանա, կամ կլրացվի դիսպոզիտիվ նորմով կամ դատարանի կողմից<sup>4</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Grigoleit H.C., Canaris C.W.** Interpretation of Contracts. 2010.. էջ 18:

<sup>2</sup> Տե՛ս **Cornet N.** նշվ. աշխ. էջեր 133-134:

<sup>3</sup> Գերմանական իրավունքում բացը, որը հանդիսանում է պայմանագրի կողմերի դիտավորյալ ընտրության արդյունք, նույնպես կարող է լրացվել դատարանի կողմից: Այսպես, Գերմանիայի Գերագույն դատարանը երկարաժամկետ պայմանագրի օրինակով, որում կողմերը բաց էին թողել պայմանագրի ժամկետի գործողության հարցը, հաստատեց, որ այդպիսի դեպքերում դատարանը կարող է լրացնել այդ բացը: Տե՛ս **Cornet N.** նշվ. աշխ. էջեր 133-134: Դրա հետ մեկտեղ պայմանագրային իրավունքի միջազգային ունիֆի-կացիաները չեն ընդունում վերոնշյալ տեսակետը: Այսպես, DCFR-ի 901 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ լրացնող մեկնաբանումը հնարավոր չէ այն ժամանակ, երբ կողմերը դիտավորյալ թողել են հարցը չկարգավորված՝ ընդունելով դրա հետևանքները:

<sup>4</sup> Ինչպես նշվում է գերմանական գրականության մեջ, պայմանագրային բացը կապված չէ կողմերի անխոհեմության կամ պասիվության հետ: Այն ավելի շատ կապված է այն հանգամանքի հետ, որ պայմանագրի կազմումը անվճար չէ և բերում է ծախսերի, որոնք տնտեսագետների կողմից ամփոփվում են մեկ հասկացության մեջ՝ տրանզակցիոն ծախսեր: Դրանք կարող են գերազանցել հնարավոր վնասները, որոնք պետք է գանձվեն պայմանագրի խախտման դեպքում: Տե՛ս **Koetz H.** Dispositives Recht und ergänzende Vertragsauslegung // Juristische Schulung (JuS). Vol. 53, 2013. էջ 291:

2. ԿՈՂՄԵՐԻ ՀԻՓՈԹԵՏԻԿ ԿԱՄՔԸ ՈՐՊԵՍ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՐԱՑՄԱՆ ՀԻՄՔ

(a) Հիփոթետիկ կամքի դրսևորումը գերմանական իրավունքում (*hypothetischen Parteiwillen*): Գերմանական դոկտրինայի համաձայն՝ պայմանագրում բացակայող իրական կամքի փոխարեն դրվում է կողմերի հիպոթետիկ կամքը (*hypothetischen Parteiwillen*): Գերմանական իրավունքում հիպոթետիկ կամքի հիման վրա պայմանագրի լրացումը ձևավորվել է Գերմանիայի Գերագույն դատարանի կողմից: Դատավորը պետք է բացահայտի և ուշադրություն դարձնի այն ամենի վրա, ինչի մասին կողմերը լռել են, բայց ինչը պետք է արձանագրված լիներ, եթե բոլոր բաց թողնված տեղերը կարգավորված լինեին արդարության սկզբունքի և գործարար շրջանառության սկզբունքներին համապատասխան՝ հաշվի առնելով պայմանագրի վերջնական նպատակը<sup>2</sup>: Այդ ձևակերպումը ներկայացվել է Գերմանիայի Գերագույն դատարանի կողմից երկու բժիշկների միջև ծագած վեճի կապակցությամբ, որը հետագայում դարձավ դասագրքային օրինակ<sup>3</sup>:

Կարևոր է այն, որ դատարանի տեսակետի համաձայն՝ կողմերի հիպոթետիկ կամքը պետք է հաստատվի ոչ թե կողմերի սուբյեկտիվ ցանկությունների հիման վրա, այլ կողմերի միջև հավասարակշռության ձևավորման միջոցով օբյեկտիվ չափանիշի հիման վրա<sup>1</sup>: Սա նշանակում է, որ վեճի դեպքում դատարանը պետք է ուշադրություն դարձնի ոչ թե նրան, թե կողմերից յուրաքանչյուրը, ելնելով սեփական շահերից, կարող էր առաջարկել պայմանագրի տեքստի մեջ մտցնել պայման, այլ նրան, որ կողմերից յուրաքանչյուրը, գործելով բարեխղճորեն, կարող էր ընդունել վիճելի պայմանի որոշում՝ հաշվի առնելով փոխադարձ շահերը:

<sup>1</sup> Տե՛ս Цвайрепт К, Керц X. Введение в сравнительное правоведение в сфере частного права, Т. 2.- М., 1998. էջ 112:  
<sup>2</sup> Գործի հանգամանքների համաձայն, տարբեր քաղաքներից երկու բժիշկների միջև կնքվում է փորձի փոխանակման պայմանագիր: Պայմանագրի համաձայն կողմերը պայմանավորվել են աշխատել յուրաքանչյուրը մյուսի բնակության վայրում: Բժիշկներից մեկը 9 ամիս հետո վերադարձավ իր քաղաք և վերսկսեց պրակտիկան, քանզի նոր քաղաքը նրան դուր չեկավ: Մյուս բժիշկը դրա հետ համաձայն չէր: Ուստի կարո՞ղ էր արդյոք վերջինս դիմել դատարան՝ պահանջելով մյուս բժշկի կողմից պրակտիկայի վերսկսման արգելք: Պայմանագիրը այդ մասով պայման չէր նախատեսում, իսկ օրենքի դիսպոզիտիվ նորմերը նույնպես չէին կարգավորում այդ հարցը: Գերմանիայի Գերագույն դատարանը լրացնող մեկնաբանման միջոցով պայմանագրի մեջ պայման մտցրեց, որի համաձայն՝ բժիշկներին արգելվում էր 2-3 տարվա ընթացքում վերսկսել պրակտիկան նախկին աշխատանքի վայրում: Տե՛ս Цвайрепт К, Керц X. նշվ. աշխ. էջ 112: Սույն գործով պայմանագրային բացը կողմերի կամահայտնությունում ակնհայտ է: Ավելին, կողմերի միջև որոշակի տարածքում մրցակցության արգելքը անտողակիորեն կապված էր պայմանագրի նպատակի հետ: Պայմանագրի կատարումը կկորցնե՞ր իր իմաստը մի կողմի իր աշխատանքի վայր վերադառնալու դեպքում, քանզի այդպիսի գործողությունները կհակասեյին պարտավորության էությանը, որը իրենց վրա էին վերցրել կողմերը:

<sup>3</sup> Տե՛ս Cornet N. նշվ. աշխ. էջ 138:



(b) Կողմերի անհատական շահը որպես հիփոթետիկ կամքի կողմնորոշիչ (*atypischen Sachverhalten*): Կողմերի հիպոթետիկ կամքը հաստատելիս կարևոր պրակտիկ նշանակություն ունի ինչպես կողմերի ընդհանուր, այնպես էլ անհատական շահերի հաշվի առնելը: Դատարանը պետք է հետամուտ լինի այն տեսակետին, որը առավել համապատասխանում է կողմերի շահերի հատուկ կարգավիճակին (*atypischen Sachverhalten*): Հատուկ կարգավիճակի տակ պետք է հասկանալ պայմանադիր կողմերի իրավունքների և պարտականությունների հարաբերակցության անհատականացումը, որը համապատասխանում է նրանց շահերին: Ընդ որում, կողմերից մեկի անհատական շահը չպետք է խախտի մյուս կողմի իրավունքները և պարտականությունները:

Կողմերի հիպոթետիկ կամքը հաստատելիս նրանց շահերի գնահատման օրինակ է հանդիպում Գերմանիայի գերագույն դատարանի կողմից վարձակալության պայմանագիրը լրացնելու ժամանակ<sup>2</sup>:

(c) Բարեխղճությունը (*Treu und Glauben*) և ձևավորված պրակտիկական (*Verkehrssitte*) որպես հիփոթետիկ կամքի կողմնորոշիչ: Լրացնող մեկնաբանման նորմատիվ ապահովումը գերմանական դատարանները տեսնում են քաղաքացիական կանոնագրքի 157-րդ և 242-րդ հոդվածներում, որոնք սահմանում են բարեխղճության սկզբունքը<sup>3</sup> (*Treu und Glauben*): Համաձայն այդ կարգավորումների՝ կող-

<sup>2</sup> Կողմերը կնքում են ռեստորանի շենքի վարձակալության պայմանագիր, որի համաձայն պայմանագրի դադարման դեպքում վարձակալն իր հաշվին կիրականացնի ղեկորատիվ աշխատանքներ՝ շենքի նախնական տեսքի վերականգնման համար: Վարձակալն այդ պարտականությունը չի կատարում: Վարձատուն որոշում է կայացնում վերակառուցել շենքը և դիմում է դատարան պահանջելով վարձակալից գանձել ղեկորատիվ աշխատանքների գումարը: Վարձակալը պնդում է, որ իր կողմից վերականգնողական աշխատանքների չկատարումը չի հանգեցրել վարձատուի համար որևէ վնասի, քանզի վերջինիս կողմից շենքը ամբողջությամբ վերակառուցվել է, ինչի արդյունքում վերականգնողական աշխատանքները դարձել են անհնար: *St. u. Cases, Materials and Text on Contract Law: Ius Commune Casebooks for the Common Law of Europe. Oxford, 2010. էջեր 752-753* Հիմնավորելով այս որոշումը, դատարանը նշում է՝ արտորային կլիներ ենթադրել, որ ամբողջական վերակառուցման դեպքում վարձատուն մտադրվել էր շարունակել պահանջել այդ աշխատանքների կատարումը: Ինչպես նշվել էր այդ որոշման մեջ, գործի հանգամանքները հաստատում են, որ այդպիսի դեպքում կողմերը համաձայնեցրած կլինեին ղեկորատիվ աշխատանքների փոխարեն հատուցում, որոնք չէին կատարվել վարձակալի կողմից: Այս գործով դատարանը պահպանել է մի կողմի շահը առանց մյուս կողմի շահին վնաս պատճառելու: Վարձատուի շահը կայանում էր վարձակալի կողմից ղեկորատիվ աշխատանքների կատարման մեջ: Հանգամանքների փոփոխությունից հետո այդ շահը ոչ թե վերացավ, այլ ընդամենը փոխեց իր տնտեսական ձևը: Իր հերթին լրացնող մեկնաբանման արդյունքում վարձակալի շահերը նույնպես չեն խախտվում, քանզի նրա պարտականությունն ամեն դեպքում պետք է կատարվեր, իսկ դատարանը միայն որոշեց այդ պարտականության իրական արժեքը:

<sup>3</sup> Պայմանագրի լրացման նպատակների համար 242-րդ հոդվածը ենթադրում է, որ կողմերը կրում են պատասխանատվություն, որոնք ուղղակիորեն նախատեսված չեն պայմանագրով, բայց հետևում են բարեխղճության սկզբունքից, այդ թվում նաև պարտականությունը կողմին տեղեկացնել այնպիսի հանգամանքների մասին, որոնք էական նշանակություն ունեն պայմանագրի կատարման համար, պարտակա-նությունը ցուցաբերել բավարար չափով հոգաձություն և շրջահայացություն պայմանագրի կատարման համար, կողմերի պարտականությունը համագործակցել միմյանց հետ պայմանագրի կատարման ժամանակ և այլն :

մերը պետք է կատարեն իրենց պարտականությունները բարեխղճության սկզբունքին (*Treu und Glauben*) համապատասխան հաշվի առնելով հասարակ պրակտիկան (*Verkehrssitte*):

Հաստատելով բանական անձի կամահայտնությունը՝ դատարանը, ըստ էության, ստեղծում է նոր պայման ելնելով բարեխղճության պատկերացումներից: Կարելի է պնդել, որ այս դեպքում կարևոր նշանակություն ունի դատարանի հայեցողությունը: Միևնույն ժամանակ կողմերի կամքի ինքնավարության սկզբունքի պաշտպանության տեսանկյունից, նորմատիվ-օբյեկտիվ հանգամանքները պետք է հաշվի առնվեն միայն անհատական-սուբյեկտիվ հանգամանքների գնահատումից հետո<sup>1</sup>:

Այս դեպքում կողմերի հիպոթետիկ կամքը կիրառվում է գերմանական դատարանների կողմից, ավելի շուտ որպես ուղենիշ, քան իրավունքի աղբյուր: Ըստ պրոֆեսոր Օ. Մանդրոկի լրացող մեկնաբանումը հիմնվում է ոչ միայն կողմերի հիպոթետիկ կամքի վրա, այլ նաև արդարության և համաչափության (*aequum et bonum*) սկզբունքների վրա: Որոշ դեպքերում հիպոթետիկ կամքը չի կարող հիմք հանդիսանալ պայմանագրային բացի լրացման համար: Այդպիսի դեպքերում խոսքն արդարության սկզբունքի հիման վրա պայմանագրի լրացման մասին է<sup>2</sup>:

(d) Հիպոթետիկ (ենթադրվող) կամքն անգլիական իրավունքում (*presumed intentions of the parties*): Կողմերի ենթադրվող կամքին հղումը դատարանի համար հանդիսանում է միջոց, որի օգնությամբ նա կարողանում է ներթափանցել պայմանագրային հարաբերությունների մեջ՝ չխախտելով պայմանագրի անձեռնմխելիության սկզբունքը: Երբ հստակ արտահայտված համաձայնությունը չի լուծում կոնկրետ վեճը, դատարաններն ելնում են այն ենթադրությունից, որ դա ոչ թե կապված է կողմերի կամահայտնության բացակայության հետ, այլ հանդիսանում է լեզվի անկատարության հետևանք, կամ այդ հարցը հանդիսանում է ակնհայտ, սակայն չկարգավորված<sup>3</sup>: Այլ խոսքերով խոսքը գնում է լուր մտադրությունների մասին:

Միևնույն ժամանակ, անգլիական տեսությունում կարծիք է արտահայտվում այն մասին, որ այդպիսի հղումը միայն թաքցնում է դատարանի կողմից նոր պայմանների ստեղծումը, քանզի ենթա-

<sup>1</sup> Տե՛ս **Cornet N.** նշվ. աշխ. 140:

<sup>2</sup> Տե՛ս **Sandrock O.** նշվ. աշխ. էջ 93: <sup>1</sup> Տե՛ս **Cornet N.** նշվ. աշխ. էջ 138:

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը:

դրվող մտադրությունները ֆիկցիաներ են հոետորաբանության ոլորտից<sup>1</sup>: Չնայած նման տեսակետը գուրկ չէ տրամաբանությունից, սակայն մեր կարծիքով, կողմերի հիպոթետիկ կամքին հղումը ծառայում է դատարանի համար ոչ միայն գաղափարական ուղենիշ, այլ նաև լրացման սահմանափակիչ, քանզի կողմերի ենթադրվող կամքը պետք է համապատասխանի մի շարք խիստ պահանջների:

(e) Տնտեսական էֆեկտը (*business efficacy*) որպես հիպոթետիկ կամքի կողմնորոշիչ: Կարելի է հաստատապես պնդել, որ ենթադրվող պայմանը պետք է տնտեսապես արդարացված լինի և ցանկալի լինի երկու կողմերի համար: Այլ խոսքերով, այդպիսի պայմանը պետք է համապատասխանի երկու կողմերի տնտեսական շահերին և ցանկություններին: Հարցը, թե արդյոք ենթադրվող պայմանն ունի բավարար տնտեսական էֆեկտ, կախված է նրանից, թե ինչպես է իրականացվում պայմանագիրն առանց այդ պայմանի<sup>2</sup>: Եթե այդ պայմանագիրը չի կարող կատարվել կամ դրա կատարումը կարող է բարդանալ, ապա դատարանը ելնում է նրանից, որ կողմերի հիպոթետիկ կամքը ընդգրկում էր նման պայմանի նախատեսումը<sup>3</sup>: Նման տեսակետը հիմնվում է նաև այն ենթադրության<sup>4</sup> վրա, որ կողմերը մտադրվել էին ձևակերպել իրականացվող և վավեր գործարք:

(f) Տնտեսական էֆեկտի կիրառումը «*The Moorcock*» գործում: Գործի հանգամանքների համաձայն՝ նավի բեռնաթափման համար պատասխանողը պարտավորվել է հայցվորին տրամադրել տարածք՝ Թեմզա գետի ափին: Երբ նավը հասնում է ափին, վնասվում է, քանզի հատակը անհավասար է լինում: Դատարանը գտնում է, որ պատասխանողը խախտել է պայմանագրային պարտականությունը, քանզի ժամանակին չի զգուշացրել հայցվորին բեռնաթափման վայրի անհավասարությունների մասին<sup>5</sup>:

Սույն գործով վերաքննիչ դատարանը (*Court of Appeal*) նշում է, որ իրավունքը ձգտում է նրան, որպեսզի պայմանի լրացմամբ պայ-

<sup>1</sup> Տե՛ս *Cornet N.* նշվ. աշխ. էջ 185:

<sup>2</sup> Տե՛ս *Cornet N.* նշվ. աշխ. էջ 186:

<sup>3</sup> Անգլիական իրավունքում պայմանագրի տնտեսական էֆեկտի չափանիշը, ըստ էության, համապատասխանում է գերմանական իրավունքում պայմանագրի լրացման ժամանակ պայմանագրի նպատակը հաշվի առնելուն:

<sup>4</sup> Ենթադրվող պայմանի այլ օրինակներ, որոնք համապատասխանում են տնտեսական էֆեկտին, անգլիա-կան դատարանների որոշմամբ, կրում են համանման բնույթ. երթևեկության ուսուցման պայմանագրով ենթադրվում է, որ ուսումնական մեքենան ապահովագրված է, թուրքական բաղնիքի վարձակալության պայմանագրով ենթադրվում է, որ նստարանները պետք է մաքրված լինեն վնասակար բակտերիաներից: Տե՛ս *Cornet N.* նշվ. աշխ. էջ 188:

<sup>5</sup> Տե՛ս *Ивayneր K., Керт X.* Указ.сов.-С.117; Cases, Materials and Text on Contract Law: Ius Commune Casebooks for the Common Law of Europe. Oxford, 2010. էջ 744:

մանագրին հաղորդի տնտեսական էֆեկտ (*business efficacy*), որին ցանկանում էին հասնել երկու կողմերը, այլ ոչ թե նրան, որ մի կողմի վրա դնի միայն գործարքից բխող ռիսկեր, իսկ մյուս կողմին ազատի բոլոր պարտականություններից:

Պատասխանողի կողմից հայցվորին հատակի անհավասարության մասին տեղեկացնելու պարտականության չնախատեսումը կբերեր ծանր տնտեսական հետևանքների: Եթե պատկերացնենք պայմանագիրն առանց դատարանի կողմից ավելացված պայմանի, ապա կունենանք ռիսկերի ոչ արդարացի հասցեագրում պատասխանողից հայցվորին, քանզի այդ ռիսկը կրում էր պատասխանողը, ով հանդիսանում էր ավի սեփականատեր:

(g) Ենթադրվող պայմանի ակնհայտությունը որպես հիփոթետիկ կամքի կողմնորոշիչ (*term goes without saying*): Ինչպես նշվում է անգլիական դատարանների որոշումներում, պայմանը կարող է ենթադրվել, եթե այն այնքան ակնհայտ է, որ պետք է նախատեսվեր լռելյայն<sup>1</sup>: Անգլիական դոկտրինայում և դատական որոշումներում այս չափանիշը բնութագրվում է «*officials bystander*» կառուցակարգի միջոցով (ակնհայտ, ուրիշի գործերով չհետաքրքրված վկա, չշահագրգռված դիտորդ): Այս չափանիշի համաձայն պայմանը պետք է այնքան ակնհայտ լինի, որ չշահագրգռված դիտորդը, նկատելով կողմերի անուշադրությունը, կշտապի հարցնել, թե ինչու կողմերը չեն նախատեսել այդպիսի պայման: Այսինքն այդ պայմանն այնքան ակնհայտ պիտի լինի, որ երկու կողմերն էլ պայմանագրի կնքման պահին ենթադրել են, որ այն արդեն ինկորպորացվել է պայմանագրի մեջ<sup>2</sup>:

Ինչպես նշվում է իրավահամեմատական գրականության մեջ, կիրառելով «*officials bystander*» կառուցակարգը՝ դատարանը մտնում է վառ պատկերացման մեջ, որում դրսևորվում է չշահագրգռված դիտորդի և պայմանադիր կողմերի խոսակցությունը պայմանագրի կնքման բանակցությունների ժամանակ<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Lewison K.** նշվ. աշխ. էջ 290:

<sup>2</sup> Կարելի է բերել հետևյալ օրինակը՝ տրանսպորտային միջոցի առուձախի պայմանագրով բանալու փոխանցումը այնքան ակնհայտ է, որ կարող է հատուկ չնախատեսվել պայմանագրի տեքստում: Եվ եթե այդպիսի իրավիճակում չշահագրգռված դիտորդը կողմերին հարցնէր, արդյո՞ք նրանք մտադրվել էին փոխանցել մեքենայի պատկանելիքները, ապա երկու կողմերն էլ առանց որևէ կասկածի դրականորեն կպատասխանեին: Տե՛ս **Grigoleit H.C., Canaris C.-W.** նշվ. աշխ. էջ 192:

<sup>3</sup> Տե՛ս **Cornet N.** նշվ. աշխ. էջ 191:

### 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՐԱՅՆՈՂ ՄԵԿՆԱԲԱՆՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

(a) Պայմանագրի մեկնաբանման և լրացնող մեկնաբանման հարաբերակցությունը: Պրոֆեսոր Կ. Լարենցի կարծիքով, քննարկվող ինստիտուտների միջև տարբերությունը կայանում է նրանում, որ լրացնող մեկնաբանումը դուրս է գալիս կողմերից յուրաքանչյուրի հայտարարության շրջանակներից, քանզի մեկնաբանման ենթակա է պայմանագիրն ամբողջությամբ<sup>1</sup>: Կարելի է պնդել, որ լրացման դեպքում դատարանը չի հաստատում այն, թե ինչպես է ակցեպտանտը հասկացել վիճելի պայմանը, այլ այն, թե ինչպես են երկու կողմերը պատկերացրել համաձայնությունը:

Ինչպես տեսնում ենք, եթե մեկնաբանման օբյեկտ է հանդիսանում պայմանագրի շրջանակներում անհատական կամահայտնությունը, ապա լրացնող մեկնաբանման ժամանակ հետազոտման ենթակա է պայմանագիրն ամբողջությամբ: Առավել կատեգորիկ է արտահայտվում Ե. Շնեյդերը, որի կարծիքով լրացնող մեկնաբանումը կլանվում է ինքնին հենց մեկնաբանման կողմից, քանզի գործ ունենք դեպքերի հետ, երբ պայմանի տառացի նշանակությունը ավելի քան կարճ է ձևակերպված, և դատարանը ղեկավարվում է «lex contractus», այսինքն պայմանագրի գերակա իմաստով: Այստեղ միայն ընդլայնվում է այն փաստերի և ապացույցների շրջանակը, որոնք կարող են հաշվի առնվել դատարանի կողմից<sup>2</sup>:

Միննույն ժամանակ գերմանական դոկտրինայում տարածված է հակառակ տեսակետը, որի համաձայն լրացումը չի կարող դիտարկվել որպես մեկնաբանում, քանզի ի տարբերություն հասարակ մեկնաբանման, լրացման ժամանակ բացակայում է մեկնաբանման օբյեկտ հանդիսացող վիճելի պայմանը:

Այս տեսանկյունից պայմանագրային բացի հաստատման պրոցեսը ինքնին մեկնաբանում է: Սակայն, երբ դատարանը գալիս է այն եզրահանգման, որ կամահայտնության բովանդակությունը ինչ-որ մասով բացակայում է, դատարանը անցում է կատարում լրացմանը, որը չի հանդիսանում մեկնաբանում և կատարվում է ոչ թե կողմերի կամքի վրա հղում կատարելով, այլ օրենքի հիման վրա:

Եթե մեկնաբանումը նեղ իմաստով միտված է նրան, թե ինչպիսին է եղել կողմերի իրական կամքը, ապա լրացնող մեկնաբանումը պատասխանում է այն հարցին, թե ինչպես կողմերը կցանկանային կարգավորել իրենց հարաբերությունները, եթե մտածեին չկարգա-

<sup>1</sup> Տե՛ս **Cornet N.** նշվ. աշխ. էջ 149:

<sup>2</sup> Տե՛ս **Luderitz A.** – Auslegung von Rechtsgeschäften, Köln, 1966 էջ 392:

վորված իրավիճակի մասին պայմանագրի կնքման պահին<sup>1</sup>:

(b) Պայմանագրի լրացնող մեկնաբանման և օրենքի դիսպոզիտիվ նորմերի կիրառման հարաբերակցությունը: Պետք է նշել, որ լրացնող մեկնաբանումը և օրենքի դիսպոզիտիվ նորմերի կիրառումը կատարում են նույն գործառույթը պայմանագրի բացի լրացումը: Ինչպես արդեն նշել ենք, քննարկվող ինստիտուտները հանդիսանում են նույն խնդրի լուծման տարբեր մեթոդներ<sup>2</sup>: Երկու ինստիտուտներն էլ օգնում են կողմերին խուսափել բոլոր գործողությունների մանրակրկիտ նկարագրումից, որոնք պետք է իրականացնեն պայմանագրի կատարման ժամանակ<sup>3</sup>:

Ինչպես նշում է պրոֆեսոր Մ.Բ. Բրագինսկին՝ դիսպոզիտիվ նորմերը նախատեսված են լրացնելու համար պայմանագրի բացերը, որոնք առաջացել են համապատասխան հարցերում որոշումների բացակայության պատճառով: Այդ տեսակ նորմերը հիմնված են կանխավարկածների վրա. իմանալով օրենսդրի կողմից իրենց տրված ինքնուրույն ընտրելու հնարավորության մասին՝ կոնտրագենտները դիտավորյալ կանգ են առնում նրա վրա, որը նրանց առաջարկվում է որպես պահեստային դիսպոզիտիվ նորմ<sup>4</sup>:

Օրենքի դիսպոզիտիվ նորմերը բավականին ամբողջական պահուստային կարգավորումներ են<sup>5</sup>, որոնք կիրառելի են ընդհանուր պայմանագրերի կամ առավել կարևոր տիպային պայմանագրերի նկատմամբ, այն դեպքերում, երբ կողմերը այլ բան չեն նախատեսել<sup>6</sup>:

Պրոֆեսոր Օ. Սանդրոկի կարծիքով՝ քննարկվող ինստիտուտների միջև տարբերությունը կայանում է լրացման մասշտաբի մեջ<sup>7</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>2</sup> Անգլիական իրավունքի տերմինոլոգիայի տեսանկյունից խոսքը գնում է օրենքի նորմերի ենթադրվող պայմանների (terms implied in law) և փաստացի ենթադրվող պայմանների (terms implied in fact) մասին:

<sup>3</sup> Տե՛ս Grigoleit H.C., Canaris C.-W. նշվ. աշխ. էջ 20:

<sup>4</sup> Տե՛ս Брагинский М.И., Витрянский В.В. Договорное право. Книга первая. Общие положения.-М., 2005. էջ 89:

<sup>5</sup> Տե՛ս Koetz H. Dispositives Recht und ergänzende Vertragsauslegung // Juristische Schulung (JuS).Vol. 53, 2013. էջ 291:

<sup>6</sup> Օրենսդիրը արդարացված է համարում օրենքի դիսպոզիտիվ նորմերը սահմանելիս հենվել քաղաքացիական շրջանառության մասնակիցների միջինացված (միջին-վիճակագրական) կամքի վրա, չնայած որոշ դիսպոզիտիվ նորմերում միջինացված կամքը դեր չի խաղում, քանզի էական նշանակություն ունի հանրային շահը: Երբ դատարանը բացի լրացման ժամանակ հիմնվում է հիպոթետիկ կամքի վրա, նա գործում է համանման կերպով, ինչ դիսպոզիտիվ նորմի կիրառման ժամանակ, քանզի կողմերի հիպոթետիկ կամքը նա հենվում է կողմերի միջին-վիճակագրական կամքի վրա, չնայած նրան, որ վերջին դեպքում հաշվի են առնվում գործարքի անհատական հանգամանքները, ինչը բնութագրական չէ դիսպոզիտիվ իրավունքի համար: Տե՛ս նույն տեղը:

<sup>7</sup> Լրացման մասշտաբների միջև տարբերությունը պայմանավորված է այն խնդիրներով, որոնք իրականացնում են դիսպոզիտիվ (lex dispositiva) և անհատական-իրավական (lex privata) կարգավորումները պայմանագրային իրավունքում: Այս առնչությամբ լրացնող մեկնաբանումը անհատական-իրավական կարգավորման շարունակությունն է, իսկ դատարանը, հղում կատարելով կողմերի հիպոթետիկ կամքին, լրացնում է պայմանագիրը այնպես, կարծես թե դա գտնվում է կողմերի կամայականության տարածքում՝ թույլատրված իրավունքի կողմից: Ինչպես նշում է պրոֆ. Սանդրոկը, բացի լրացման ժամանակ դիսպոզիտիվ իրավունքը հաշվի է առնում որոշվող իրավիճակում տիպիկը, այն միաժամանակ ունի ընդհանուր մասշտաբ և ուղղվածություն արդարությանը: Լրացնող մեկնաբանումը հակառակը, ելնում է առանձին (ոչ տիպիկ) հանգամանքներից, հասկացողության անհատական տարբերակներից, կոնտրագենտների կենցաղային պայմանների առանձնահատկություններից, նրանց բառոգտագործումից: Տե՛ս Sandrock O. նշվ. աշխ. էջ 40:

Մի դեպքում պետք է ձևավորվի ընդհանուր գործարքների համար գործող կանոն, իսկ մյուս դեպքում պետք է մշակվի այնպիսի կարգավորում, որը առավելագույն կերպով պետք է համապատասխանի յուրաքանչյուր կոնկրետ գործի հանգամանքներին<sup>1</sup>:

Ինչպես նշում է պրոֆ. Մ.Ի.Բրագինսկին՝ կոնկրետ դիսպոզիտիվ նորմի ընտրությունը հնարավոր բազմաթիվ տարբերակներից պատահական չէ: Այն որպես կանոն, հիմնված է պայմանագրային պրակտիկայի ամփոփման վրա և այդ իմաստով իրենից ներկայացնում է տիպիկ, բազմակիորեն փորձված որոշում<sup>2</sup>:

Գերմանական դոկտրինայում բերվող տեսությունների համաձայն՝ դիսպոզիտիվ նորմերը իրենցից ներկայացնում են շրջանառության կողիֆիկացված սովորույթներ<sup>3</sup>:

Ի տարբերություն դիսպոզիտիվ իրավունքի, լրացնող մեկնաբանումը իր առաջ խնդիր չի դնում հարաբերությունների տիպիկ կարգավորման, այդ իսկ պատճառով չունի ունիվերսալ բնույթ: Հետևաբար կարող են եզրակացնել, որ լրացնող մեկնաբանումը գործում է միայն առանձին իրավիճակներում: Այդ իսկ պատճառով առանձին գործով որոշումը, որտեղ կիրառվել է լրացնող մեկնաբանում, չի կարող ընդհանուր կանոնի համաձայն օգտագործվել որպես նախադեպ մեկ այլ գործով լրացման համար<sup>4</sup>:

Վերոգրյալ մտահանգումները թույլ են տալիս եզրահանգել, որ եթե դիսպոզիտիվ նորմերի կիրառման հիմքում ընկած է ընդհանրացված գնահատական, ապա լրացնող մեկնաբանումը հիմնվում է կազուիստական մեթոդի վրա՝ հաշվի առնելով կոնկրետ պայմանագրի կողմերի շահերի հատուկ կարգավիճակը:

Գերմանական իրավունքում ընդհանուր կանոնի համաձայն՝ նախապատվություն ունեն դիսպոզիտիվ նորմերը: Այս տեսակետը աջակցություն է ստանում գերմանական դատարանների կողմից<sup>5</sup>:

<sup>1</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>2</sup> Տե՛ս **Брагинский М.И., Витрянский В.В.** նշվ. աշխ. էջ 90:

<sup>3</sup> Տե՛ս **Sandrock O.** նշվ. աշխ. էջ 40:

<sup>4</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>5</sup> Առաջին, դիսպոզիտիվ նորմերը պարունակում են տիպիկ որոշումներ պայմանագրերի համապատասխան տեսակների համար: Այսինքն՝ դիսպոզիտիվ նորմը արտացոլում է այն, ինչը սովորաբար պահանջվում է կողմերին: Յուրաքանչյուր նման դեպքում անհատական որոշման փնտրելը փաստացի կնշանակի այն գործառույթից հրաժարում, որը կատարում է դիսպոզիտիվ նորմը: Երկրորդ, դիսպոզիտիվ նորմերի առավելությունը նախընտրելի է նաև իրավական որոշակիության ընդհանուր պահանջով: Այդպիսի դեպքերում անհատական որոշումների կայացումը դիսպոզիտիվ նորմերի առկայության դեպքում հակասում է այդ սկզբունքին: Երրորդ, շատ դեպքերում կողմերը դիտավորյալ պայմանագրում թողում են բացեր՝ հաշվի առնելով, որ այդ հարաբերությունների նկատմամբ կկիրառվի դիսպոզիտիվ նորմ: Տե՛ս Cornet N. նշվ. աշխ. էջ 104-109:

Այնուամենայնիվ, դիսպոզիտիվ իրավունքի առավելությունը չի կարող դիտարկվել որպես բացարձակ, քանզի պրակտիկայում կարող են լինել դեպքեր, երբ դիսպոզիտիվ նորմով նախատեսված կարգավորման բովանդակությունը հակասության մեջ է մտնում պայմանագրի հետ: Ավելին, դիսպոզիտիվ նորմերը կարող են առհասարակ բացակայել:

Պրոֆեսոր Կ. Լարենցի կարծիքով, դիսպոզիտիվ իրավունքը չէր կարող կատարել տիպիկ իրավիճակների համաչափ կարգավորման ֆունկցիա, եթե բոլոր իրավիճակներում դրան տրվեր առավելություն, քանզի այն ժամանակ, երբ պայմանագրի իմաստից և նպատակից հետևում է ինչ-որ ուրիշ բան, դժվար կլինի հիմնավորել դիսպոզիտիվ նորմերի կիրառման անհրաժեշտությունը<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, դիսպոզիտիվ նորմերի առկայության դեպքում լրացնող մեկնաբանումն առավելություն է ստանում կողմերի անհատական շահերի համատեքստում: Դիսպոզիտիվ իրավունքն առավելություն է ստանում դիտավորյալ բացի դեպքում, քանզի այդպիսի դեպքերում կողմերը գիտակցաբար թողում են դիսպոզիտիվ նորմերի կիրառման հնարավորությունը:

(c) Պայմանագրի լրացման և պայմանագրի փոփոխման հարաբերակցությունը: Այս հարաբերակցությունը պայմանավորված է նրանով, որ դատարանը կարող է լրացնել ինչպես պայմանագրի նախնական, այնպես էլ հետագա բացերը: Ընդ որում, նման խնդիր կարող է առաջանալ նաև ներպետական օրենսդրության շրջանակներում: Այսպես, ՀՀ Քաղ. օր. 467 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հանգամանքների, որոնցից ելել էին կողմերը պայմանագիրը կնքելիս, էական փոփոխությունը հիմք է պայմանագրի փոփոխման կամ լուծման համար, եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով կամ չի բխում դրա էությունից: Իսկ նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ հանգամանքների էական փոփոխության կապակցությամբ դատարանի վճռով պայմանագրի փոփոխում թույլատրվում է բացառիկ դեպքերում, եթե պայմանագրի լուծումը հակասում է հանրային շահերին կամ կողմերին պատճառում է այնպիսի վնաս, որն զգալիորեն գերազանցում է դատարանի կողմից փոփոխած պայմաններով պայմանագրի կատարման համար անհրաժեշտ ծախսերը: Ընդ որում, դատարանի կողմից պայմանագրի փոփոխու-

<sup>1</sup> St' u Larenz K., Wolf M. նշվ. աշխ. էջ 505:



թյուն հնարավոր է սույն հոդվածում առկա պայմանների միաժամանակյա առկայության դեպքում: Գերմանական իրավունքում համանման գործառույթ է կատարում պայմանագրի դատական փոփոխության «*Wegfall der Geschäftsgrundlage*» դոկտրինան:

Հետագա բացերի լրացումը և պայմանագրի դատական փոփոխությունը նույնանում է նրանում, որ երկու դեպքում էլ պայմանագիրը չի կարող կատարվել հանգամանքների փոփոխության հետևանքով, որոնցից էլ էին կողմերը: Միևնույն ժամանակ առկա են երկու սկզբունքային տարբերություններ:

Առաջին, լրացման դեպքում բացակայում է պայմանը, որը կարող էր կարգավորել հարցը՝ ծագած հանգամանքների փոփոխության հետ, իսկ հանգամանքների փոփոխության դեպքում խոսքը գնում է այն մասին, որ պայմանագրի պայմանը հակասում է փոփոխված հանգամանքներին: Երկրորդ, լրացման ժամանակ դատարանը միայն լրացնում է պայմանագիրը համապատասխան պայմանով՝ ելնելով արդեն գոյություն ունեցող պայմանագրի բովանդակությունից, իսկ դատական փոփոխության ժամանակ պայմանագիրը կարող է ենթարկվել էական փոփոխությունների, այդ թվում նաև կողմերի հարաբերությունների էությանը վերաբերվող:

Գերմանական դոկտրինայում և պրակտիկայում գերակշիռ է այն տեսակետը, որի համաձայն հետագա բացի լրացումը պետք է նախապատվություն ունենա «*Wegfall der Geschäftsgrundlage*» դոկտրինայի նկատմամբ, քանզի այդ դոկտրինան պետք է կատարվի այն ժամանակ, երբ պայմանագրի լրացման միջոցով դատարանը չի կարողանում արդեն գոյություն ունեցող պայմանագիրը համապատասխանեցնել փոփոխված հանգամանքներին, և կարիք կա կողմերի միջև ձևավորված հարաբերությունների արմատական փոփոխության<sup>1</sup>:

## ВОСПОЛНИТЕЛЬНОЕ ТОЛКОВАНИЕ ДОГОВОРА

### Аннотация

Данная статья посвящена выявлению и исследованию сущности восполнительного толкования договора. В статье анализируются законодательный опыт зарубежных стран, а также международные унификации договорного права. В результате

<sup>1</sup> Տե՛ս **Cornet N.** նշվ. աշխ. էջ 136:

данного анализа обсуждается возможность разделения восполнительного толкования договора. В частности, автор рассматривает те предпосылки, которые лежат в основе восполнительного толкования, а также выявляет положительные и отрицательные аспекты данного вида толкования.

**Ключевые слова:** толкование договора, правила толкования договора, лингвистика, пробел в договоре, гипотетическая воля сторон, восполнительное толкование договора.

## THE SUPPLEMENTARY INTERPRETATION OF CONTRACT

### Annotation

This article is devoted to the study and research of the essence of supplementary interpretation of contract. The legal experience of foreign countries and international condifications about contractual law and elements have been analyzed in the research, which are the origin of this institute. As a result, the author discusses the opportunity of division of supplementary interpretation of contract. The author, particularly, discusses the prerequisites, which are basics of this institute and reveals negative and positive aspects of supplementary interpretation of contract.

**Keywords:** interpretation of contract, the canon of interpretation of contract, linguistics, gap in the contract, hypothetical will of the parties, supplementary interpretation of contract.



**ԵՐԲՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ**

**ԷՂԳԱՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

*Եվրոպական համալսարանի  
Իրավագիտության ամբիոնի ասպիրանտ*

**ՄՈՌԱՑՎԱԾ ԼԻՆԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՒ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ  
ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ**

**Ամփոփագիր.** Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը մարդու իրավունքների վրա ունեցավ այնպիսի ազդեցություն, որը, բացի մարդու որոշ իրավունքների փոփոխումից, որոշ դեպքում դադարումից, առաջացրեց նաև նոր իրավունքների ստեղծում: Դրանցից մեկն է հանդիսանում մոռացված լինելու իրավունքը՝ համացանցից տեղեկատվության հեռացման իրավունքը: Թեև այս իրավունքն ամբողջությամբ ճանաչված չէ, այնուամենայնիվ, դրա անորոշ գոյությունը կարող է լուրջ վտանգ հանդիսանալ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի համար:

Ուսումնասիրության միջոցով փորձեցինք ավելի հստակեցնել մոռացված լինելու իրավունքի սահմաններն այնպես, որ որևէ կերպ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի ապահովմանը չսպառնա: Մասնավորապես, ներկայացնելով միջազգային փորձը՝ հստակեցրեցինք ՀՀ-ում մոռացված լինելու իրավունքի համարժեք կարգավորումները, դրանց ու տեղեկատվության ազատության հարաբերակցությունը, մրցակցությունն ու սահմանազատումը: Արդյունքում պարզ դարձավ, որ մոռացված լինելու իրավունքը պետք է ծագի կոնկրետ հիմքերի ու պայմանների առկայության դեպքում, հետևի կոնկրետ նպատակների, հակառակ պարագայում՝ հնարավոր վնաս կարող է հասցվել տեղեկատվության ազատությանը:

**Հիմնաբառեր.** տեղեկատվության ազատություն, մարդու իրավունք, մոռացված լինելու իրավունք, մրցակցություն, իրավունքի սահմանափակում, միջազգային փորձ, անձնական տվյալ, տեղեկատվության հեռացում:

Տեղեկատվության ազատությունը՝ որպես մարդու հիմնական իրավունք, դրսևորվում է տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ փնտրելու, ստանալու և տարածելու ազատությամբ: Մինչդեռ տեղեկատվության ազատության ապահովման ընթացքը հաճախ բախվում է մարդու անձնական տվյալների, պատվի կամ բարի համբավի պաշտպանության կարևոր շահին՝ արդյունքում առաջացնելով անձնական տվյալների, պատվի կամ բարի համբավի պաշտպանության ու տեղեկատվության ազատության մրցակցություն, որի լուծումը պետք է գտնել մասնավոր և հանրային շահերի օրինաչափ սահմանազատման մեջ:

Նախ՝ անհրաժեշտ ենք համարում հակիրճ ներկայացնել մոռացված լինելու իրավունքի բնույթն ու էությունը: Մոռացված լինելու իրավունքի ծագման օբյեկտիվ անհրաժեշտությունն ուղղակիորեն կապված է տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ու դրա տեղեկատվության ազատության վրա ունեցած ազդեցության հետ: Նախկինում, երբ տեղեկատվությունը տարածվում էր միայն հեռուստատեսությամբ կամ ռադիոյով, հրապարակվող տեղեկությունը հասարակությանը հասանելի էր միայն կարճաժամկետ, հրապարակվող տեղեկությունն էլ շուտ «մոռացվում էր»: Մինչդեռ այսօր, երբ ցանկացած տեղեկատվություն տեղ է գտնում համացանցում, այնտեղ մնում է հավերժ ու այլևս դառնում հասանելի համացանցի հասանելիություն ունեցող ցանկացած անձի համար: Կոնկրետ անձին վերաբերող նախկինում տեղի ունեցած իրադարձության առկայությունը համացանցում անձին կաշկանդում է, հաճախ առաջացնում նաև նրա մի շարք հիմնարար իրավունքների խախտում: Հենց այստեղ էլ առաջ է գալիս իրավակարգի գործոնը՝ անձին շնորհել այնպիսի իրավունքներով, որոնք թույլ չեն տա անցյալում տեղի ունեցած ու արդիականությունը կորցրած որևէ տեղեկություն որևէ կերպ խախտի անձի որևէ իրավունք:

Թեև տեսական գրականության մեջ դեռևս հստակ ձևակերպված ու տրված չէ մոռացված լինելու իրավունքի հասկացությունը, սակայն որոշ գիտնականներ փորձել են որոշակի ձևակերպում տալ այս նոր իրավունքին: Այսպես, համաձայն Ռոլֆ Վեբերի՝ մոռացված լինելու իրավունքը անհատի իրավունքն է պահանջել վերացնել իրեն վերաբերող որոշակի տեղեկատվություն, որը անհասանելի կդառնա երրորդ անձանց համար<sup>1</sup>: Համացանցի շնորհիվ ցանկա-

<sup>1</sup> Weber H. Rolf The Right to Be Forgotten: More than a Pandora box?  
<https://www.jipitec.eu/issues/jipitec-2-2-2011/3084/>

ցած տեղեկատվության ստացումը բավականին հասանելի է դառնում, քանի որ դրանք մշտապես պահպանվում են, ինչպես նաև նպաստում են զրպարտության և անձանց բարի համբավի վնասման հնարավորությանը<sup>1</sup>: Համացանցի առկայությունը անցյալի սխալները թաքցնելը դարձնում է անհնարին<sup>2</sup>: Խնդրահարույց են այն դեպքերը, երբ համացանցում մշտապես պահպանվող տեղեկատվությունը որևէ կերպ վնաս է հասցնում անձին: Շահերի բխում է առաջանում, երբ որևէ անձ, իրացնելով տեղեկատվության ազատության իր իրավունքը, համացանցից ստանում է իր որոնած տեղեկատվությունը, իսկ այլ անձ, ում հետ որևէ առնչություն ունի տվյալ տեղեկատվությունը, պահանջում է համացանցից հեռացնել նշված տեղեկատվությունն այնպես, որ այն անհասանելի լինի որևէ մեկին<sup>3</sup>:

Քննարկման առարկա հանդիսացող իրավունքը մասնագիտական գրականության մեջ համարվում է մի դեպքում՝ որպես մարդու իրավունքների երրորդ սերնդի իրավունք, մյուս դեպքում՝ մարդու իրավունքների նոր՝ չորրորդ սերնդի (տեսության մեջ դեռևս չհաստատված սերունդ) իրավունք և այլն: Կարծում ենք, որ մոռացված լինելու իրավունքը հանդիսանում է ոչ այնքան մարդու առանձին, ինքնուրույն իրավունք, որքան մարդու անձնական տվյալների, պատվի ու բարի համբավի պաշտպանության հիմնական իրավունքից ածանցվող, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման պայմաններում անձնական տվյալների, պատվի ու բարի համբավի պաշտպանության երաշխիք համարվող իրավունք: Ըստ վերջինիս էլ՝ մոռացված լինելու իրավունքը դիտարկում ենք որպես մարդու իրավունքների առաջին սերնդի մեջ ընդգրկվող իրավունք:

Մոռացված լինելու իրավունքը մասնագիտական գրականությունում դեռևս չի հասել իր պատշաճ ու ամբողջական ուսումնասիրությանը, այն դեռևս գտնվում է խորը քննարկումների փուլում, մինչդեռ այս հարցով դատական պրակտիկան մի քայլ առաջ է: Մոռացված լինելու իրավունքը հայտնվել է դեռևս շատ տարիներ առաջ և մինչև միջազգայնորեն ճանաչվելը դրսևորվել է տարբեր դատական գործերով: Օրինակ՝ 1990թ. Իտալիայի Գերագույն դատարանը հա-

<sup>1</sup> Rustad M., Kulevska S. Reconceptualizing the right to be forgotten to enable transatlantic data flow. Harv J Law Technol. 2015; 28(2): էջ 386.

[https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract\\_id=2627383](https://papers.ssrn.com/sol3/papers.cfm?abstract_id=2627383)

<sup>2</sup> Mayer-Schönberger V. Delete: The Virtue of Forgetting in the Digital Age; Princeton: Princeton University Press; 2009. <https://doi.org/10.1108/rmj.2010.28120aee.001>

<sup>3</sup> Kamrul Faisal. Balancing between Right to Be Forgotten and Right to Freedom of Expression in Spent Criminal Convictions, Department of Law, University of Turku, Turku, Finland, 2021, էջ 2: <https://doi.org/10.1002/spy2.157>

կաօրինական ճանաչեց Messaggero թերթի գործունեությունը, որն իր էլեկտրոնային կայքում դրել էր դատվածությունը վաղուց մարված և բնականոն կյանքի վերադարձած նախկին հանցագործի նկարը: Այս տեղեկատվության վերհիշումը ճանաչվեց հասարակական նշանակություն չունեցող, և Մարիո Կեզան, որն արդեն պաշտոնյա էր, դատական կարգով ստացավ այդ տեղեկատվության ոչնչացման իրավունք: Հետագայում մեկ այլ նմանատիպ՝ Ջուլիա Կարադոննայի գործով Օրտոնա քաղաքի դատարանը Primadanoi էլեկտրոնային կայքին ենթարկեց 17,000 եվրո տուգանքի իր արխիվում գտնվող երկու գործարարների մասին դատական գործի վերաբերյալ նյութերի ոչնչացման պահանջը մերժելու համար: Դատարանը նշեց, որ բավականին ժամանակ է անցել այդ դեպքից և այդ տեղեկատվությունն արդեն հասարակական հետաքրքրություն չի առաջացնում: Արդյունքում այդ տեղեկատվությունը ոչնչացվեց կայքի արխիվից<sup>1</sup>:

Այնուամենայնիվ, մոռացված լինելու իրավունքը, կարելի է ասել, առաջին անգամ միջազգայնորեն ճանաչվել և ամրագրվել է Եվրոպական միության (այսուհետ նաև՝ ԵՄ) արդարադատության դատարանի վճիռներից մեկում: 2014թ.-ին ԵՄ արդարադատության դատարանը քննեց Իսպանիայի քաղաքացի Մարիո Կոստեյաս Գոնսալեսն ընդդեմ Google-ի գործը: Քաղաքացու բողոքը կայանում էր նրանում, որ «Google» որոնողական համակարգը շարունակում էր տվյալներ ներկայացնել ժամանակին պարտքերի դիմաց աճուրդի հանված իր տան վերաբերյալ այն պարագայում, երբ համապատասխան վարույթն արդեն մի քանի տարի է փակվել էր և, հետևաբար, ներկայացված տվյալները, բացի իր անձնական կյանքի անձեռնմխելիությունը ոտնահարելուց, ուրիշ ոչ մի բանի պիտանի չէին: 2014թ.-ի մայիսի 13-ի վճռի համաձայն Google-ը պարտավորվեց ոչնչացնել այդ հոդվածի հղումը Google-ի Inc. ենթադոմենից՝ Իսպանիայի տարածքում՝ հիմք ընդունելով ԵՄ 95/46 EC հրահանգը, չնայած, որ տվյալները մշակվել էին ԱՄՆ տարածքում: Տեղեկատվությունը մնաց հասանելի La Vanguardia թերթի կայքում, իսկ Google-ի որոնողական հղումը հանվեց<sup>2</sup>:

<sup>1</sup> Punto Informatico Italia, diritto di cronaca nell'oblio,

<https://www.punto-informatico.it/italia-diritto-di-cronaca-nelloblio/>

<sup>2</sup> Google Spain SL, Google Inc. v. Agencia Espanola de Proteccion de Dators and Mario Costeja Gonzalez. Եվրոպայի արդարադատության դատարան, թիվ C-131/12, 13/05/2014թ.

<https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX%3A62012CJ0131>

Այս վճիռն առաջին դատական նախադեպն էր նմանատիպ գործերով: Կարևոր է, որ դատարանը որոշեց, որ այս գործը համընդհանուր չէ, իսկ մոռացվելու իրավունքը բացարձակ: Նմանատիպ գործերով որոշումներ պետք է կայացվեն կոնկրետ հանգամանքներ հաշվի առնելով, որպեսզի բացառվի մարդու հիմնարար իրավունքների (անձնական տվյալների, պատվի ու բարի համբավի պաշտպանության ու տեղեկատվության ազատություն) հակասությունը և անհիմն սահմանափակումը:

Գործը շատ մեծ արձագանք ունեցավ. ԵՄ արդարադատության դատարանի վճռի ուժի մեջ մտնելու առաջին իսկ օրը Google-ը տեղեկատվության ոչնչացման պահանջի վերաբերյալ 12,000 դիմում ստացավ: Google-ը ստիպված եղավ ոչնչացնել այդ տեղեկատվությունը, սակայն 2014թ.-ին ԵՄ արդարադատության դատարանը նոր վճիռ ընդունեց, որի համաձայն Google-ը պարտավոր չէ վերացնել այն բոլոր տեղեկատվությունը, որը մարդիկ պահանջում են, քանի որ այն կարող է իրենից հասարակական հետաքրքրություններ կամ նշանակություն ունենալ, վնասել հենց ոչնչացման պահանջ ներկայացնող անձի շահերը: Նմանատիպ դեպքերում՝ մարդու անձնական անձեռնմխելիության և մոռացված լինելու իրավունքի հավասարակշռությունը պահպանելու համար Google-ը պետք է այդ գործը փոխանցի տվյալ պետության համապատասխան մարմնին և գործի ըստ այդ մարմնի որոշման<sup>1</sup>:

Մոռացված լինելու իրավունքի «օրենսդրական ծագումը» տեղի է ունեցել 2010 թ.-ին Ֆրանսիայում, որտեղ մշակվեց մոռացված լինելու իրավունքը նախատեսող առաջին օրենսդրական նախագիծը<sup>2</sup>: Արդյունքում ընդունվեց «Մոռացված լինելու իրավունքի» խարտիան, որը նախատեսում էր մոռացված լինելու իրավունքի կամավոր կիրառում խարտիային միացած կազմակերպությունների կողմից, մինչդեռ այնպիսի մեծ կազմակերպություններ, ինչպիսիք են օրինակ Facebook-ը և Google-ը, չմիացան խարտիային:

Կարևոր ենք համարում նշել, որ պատմամշակութային տեղեկությունները պետք է պաշտպանվեն տեղեկատվության ազատության ներքո, դրանք պետք է պահպանվեն արխիվում ու փոխանցվեն

<sup>1</sup> «Մոռացվելու իրավունքը՝ որպես մարդու անձնական անձեռնմխելիության իրավունքի բաղադրատարր», Վ. Պողոսյան, Արդարադատություն ամսագիր, 2018-5, էջ 22:

<sup>2</sup> «Համագործակցող և անդամ կայքերի որոնման համակարգերում մոռանալու իրավունքի կանոնադրություն», հոկտեմբերի 13, 2010. [http://www.aidh.org/Actualite/Act\\_2010/Images/Charte\\_oubli\\_La\\_Charte.pdf](http://www.aidh.org/Actualite/Act_2010/Images/Charte_oubli_La_Charte.pdf)

պատմական հետազոտություններ իրականացնողներին<sup>1</sup>:

Հետագայում, նույն թվականի նոյեմբերին ԵՄ Հանձնաժողովը «Անձնական տվյալների պաշտպանության 95/46 հրահանգ»-ով ստանձնեց մոռացված լինելու իրավունքի ճանաչումը<sup>2</sup>, սակայն դրա պրակտիկ կիրառումը դեռևս անորոշ էր: Իսկ ԵՄ Խորհրդարանի կողմից ընդունված և արդեն 25.05.2018թ.-ին ուժի մեջ մտած «Ընդհանուր տվյալների պաշտպանության կանոնակարգ»-ի 17-րդ հոդվածն ուղղակի ճանաչեց ջնջման իրավունքը (մոռացված լինելու իրավունքը): Նշված հոդվածն ամրագրեց, որ անձն իրավունք ունի պահանջելու վերացնել իր անձնական տվյալները, եթե՝

ա) տվյալ անձի անձնական տվյալներն այլևս անհրաժեշտ չեն այն նպատակի համար, որի համար դրանք հավաքվել կամ մշակվել են,

բ) տվյալ անձը չեղարկում է անձնական տվյալների մշակման համար իր կողմից տրված համաձայնությունը, և այդ տվյալների մշակման այլ օրինական հիմքեր չկան,

գ) տվյալ անձը դեմ է անձնական տվյալների մշակմանը, և դրանք մշակվում են միայն առևտրային նպատակով,

դ) տվյալ անձի անձնական տվյալները մշակվել են անօրինական հիմքերով,

ե) տվյալ անձի անձնական տվյալները պետք է ջնջվեն որևէ օրինական պարտականության կատարման կապակցությամբ, և այլն:

Հետաքրքիր որոշում է կայացրել Գերմանիայի դաշնային սահմանադրական դատարանը<sup>3</sup>, ընգգծելով «որքան շատ է անցյալում կատարված իրադարձությունը վնասում տվյալ անձի անձնական կյանքին և նրա զարգացման հնարավորությանը, այնքան ավելի մեծ կարևորություն պետք է տալ դրա պաշտպանությանը»: Դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր գործով պետք է առաջին աստիճանի դատարանը պարզի մոռացված լինելու իրավունքի առկայությունը, միաժամանակ նշում՝ մոռացված լինելու իրավունքի շրջանակներ-

<sup>1</sup> Contribution of the Belgian Data Protection Authority to the European Commission's consultation on the comprehensive approach to personal data protection in the European Union, Brussels, 2011. <http://bit.ly/pINtNI>

<sup>2</sup> A comprehensive approach on personal data protection in the European Union, COM(2010) 609 final of November 4, 2010.

<https://eur-lex.europa.eu/LexUriServ/LexUriServ.do?uri=COM:2010:0609:FIN:EN:PDF>

<sup>3</sup> Recht auf Vergessen I (BVerfG, Beschluss vom 06.11.2019 – 1 BvR 16/13)

<https://bit.ly/3yz6fz3>



րում, ի թիվս վերոգրյալ այլ հանգամանքների, անհրաժեշտ է պարզել մի քանի պարտադիր հանգամանք՝ ևս՝

1) արդյոք ենթադրյալ տուժածն ի սկզբանե որևէ կերպ նպաստել է այդ տեղեկատվության կամ հենց իր նկատմամբ կենդանի հետաքրքրության առաջացմանը կամ պահպանմանը (մոռացված լինելու ցանկություն),

2) արդյոք այդ տեղեկատվությունն իրականում հասանելի է հանրության լայն շրջանակին. օրինակ՝ արդյոք այն հայտնվում է որոնողական կայքերի առաջին էջերում,

3) արդյոք այդ տեղեկատվությունը հասանելի է դառնում անձնական տվյալի որոնման արդյունքում,

4) արդյոք հասարակությունն ունի իրական հետաքրքրվածություն տվյալ տեղեկատվության հասանելիության նկատմամբ,

5) արդյոք տվյալ տեղեկատվությունը կարող է նոր իրադարձության առաջացման պատճառ դառնալ, և այլն:

Ինչպես ցույց է տալիս վերոգրյալը՝ մոռացված լինելու իրավունքը գնալով ավելի մեծ ճանաչում է ստանում ու տարածվում: Համացանցի արագ տարածման ալիքի ներքո մարդու իրավունքի պաշտպանության ոլորտում առաջատար երկրներ և միջազգային կազմակերպություններ օր առաջ ցանկանում են արձագանքել մարդու ենթադրալ իրավունքների խախտումներին և առաջինը լուծում գտնել դրանց համար: Այնուամենայնիվ, որքան արագ ու անորոշ ձևակերպումներով է զարգանում մոռացված լինելու իրավունքը, այնքան այն ավելի մեծ վտանգ է դառնում տեղեկատվության ազատության համար:

Մինչ ՀՀ-ում մոռացված լինելու իրավունքի և տեղեկատվության ազատության հարաբերակցությանն ու դրանց մրցակցությանն անդրադառնալն անհրաժեշտ ենք համարում պարզել՝ արդյոք ՀՀ իրավական համակարգը ճանաչում է մոռացված լինելու իրավունքը, թե՛ ոչ:

Ուշագրավ է, որ ՀՀ-ում նույնպես մոռացված լինելու իրավունքի պարզ դրսևորումն ի հայտ է եկել դատական պրակտիկայում: Թիվ ԵԱԲԴ/2638/02/14 քաղաքացիական գործով հայցվորը, բացի պատիվն ու արժանապատվությունն արատավորող տեղեկությունների հերքումից, պահանջել էր նաև այդ տեղեկատվություն պարունակող նյութը հեռացնել ինտերնետային կայքից: Ըստ վերոգրյալ դատա-

կան գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի դիրքորոշման. «*Նյութն ինտերնետային կայքից հեռացնելու պահանջը՝ որպես պատասխանատվության միջոց ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 7-րդ կետով (վիրավորանքի դեպքում անձի կողմից դատական կարգով ներկայացվող պահանջները) նախատեսված չէ, իսկ Դատարանն իրավասու չէ կիրառել պատասխանատվության այնպիսի միջոց, որը նախատեսված չէ օրենքով (...): Նյութը հեռացնելու պահանջը կարող է կատարվել «Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի հիմքով արտադատական կարգով, իսկ դատական կարգով վեճի դեպքում՝ Հայցվորը կարող է պահանջել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածի 7-րդ կետով սպառիչ սահմանված պատասխանատվության միջոցներից մեկը կամ մի քանիսը»:*

Ինչպես տեսնում ենք, մոռացված լինելու իրավունքի՝ ՀՀ-ում հստակորեն ճանաչված չլինելու պարագայում առաջանում են իրավունքի պաշտպանության որոշակի խնդիրներ:

ՀՀ-ում գործող օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ որոշ իրավական ակտերում տեղ գտած նորմերը կարող են որոշակի չափով փոխարինել մոռացված լինելու իրավունքին և հասնել դրանով հետապնդվող նպատակին, սակայն այդ ամենը կարող է իրականացվել միայն տվյալ նորմերի հստակ մեկնաբանման դեպքում:

Այսպես, ՀՀ Սահմանադրության 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք իրավունք ունի (...) պահանջելու ոչ հավաստի տվյալների շտկում, ինչպես նաև ապօրինի ձեռք բերված կամ այլևս իրավական հիմքեր չունեցող տվյալների վերացում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքը վիրավորանքի և գրպարտության դեպքում անձի կողմից ներկայացվող պահանջների սպառիչ ցանկի մեջ (հոդվ. 1087.1) չի ներառել նյութը համացանցից հեռացնելու պահանջը, ինչպես տեսանք վերոգրյալ դատական գործով: ՀՀ քաղաքացիական օրենսգրքն իրավունքի պաշտպանության եղանակների մեջ առանձնացնում է *մինչև իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելը* (հոդվ. 14-րդ 2-րդ կետ): Եթե վիրավորանք պարունակող նյութ է տեղադրվել համացանցում, և անձը պահանջում է վերականգնել մինչև իրավունքի խախտումը (վիրավորանք պարունակող նյութի տեղադրումը համացանցում) եղած դրությունը, ստացվում է, որ տվյալ նյութ տեղադրողը պետք է վերականգնի նախկին դրությունը (*մինչև համացանցում նյութը տեղա-*

դրելը եղած դրությունը, համացանցում տվյալ նյութ առկա չլինելու դրությունը) և հեռացնի տվյալ նյութը համացանցից:

ՀՀ քրեական օրենսգրքի 84-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված իրավական բոլոր հետևանքները: Այս նորմի լայն մեկնաբանումը, մեր կարծիքով, կարող է հասցնել նաև տվյալ անձին առնչվող քրեական գործի, դատվածության վերաբերյալ տվյալների համացանցից հեռացմանը կամ ապանձնավորմանը այդ թվում դատական տեղեկատվական օնլայն համակարգից (datalex.am-ից):

«Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Արգելվում է այնպիսի անձնական տվյալների մշակումը, որոնք անհրաժեշտ չեն տվյալները մշակելու նպատակի համար կամ անհամատեղելի են դրա հետ:

«Զանգվածային լրատվության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ արգելվում է (...) այնպիսի տեղեկատվության տարածումը, որը խախտում է մարդու անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը: Մարդու անձնական և ընտանեկան կյանքին վերաբերող տեղեկատվության տարածումը թույլատրվում է, եթե դա անհրաժեշտ է հանրային շահերի պաշտպանության համար:

Վերոգրյալ իրավական ակտերը փաստում են, որ ՀՀ իրավական համակարգն արդեն իսկ որդեգրել է մոռացված լինելու իրավունքի, թեկուզ, միջնորդավորված ապահովմանն ուղղված նորմեր, որոնց որոշակի մեկնաբանմամբ կարող ենք հասնել մոռացված լինելու իրավունքի նպատակին: Օրինակ՝ եթե անձն ապացուցի, որ որևէ լրատվական միջոցում ներառված տեղեկատվությունը խախտում է իր անձնական կամ ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը, կարող է պահանջել՝ հեռացնել նշված տեղեկատվությունը համացանցից (մոռացված լինելու իրավունքի նպատակ), կամ եթե դատվածությունը հանած կամ մարած անձն ապացուցի, որ իր հետ առնչվող քրեական գործի մասին համացանցում առկա տեղեկատվությունը որևէ իրավական հետևանք է առաջացնում իր համար այդ թվում սահմանափակում իր որևէ իրավունք, ազդում իր պատվի կամ բարի համբավի վրա՝ կարող է պահանջել՝ հեռացնել նշված տեղեկատվությունը համացանցից:

Ինչ վերաբերում է տեղեկատվության ազատությանը, ապա այն, համարվելով մարդու հիմնական իրավունք, կարող է սահմանափա-

կվել միայն կոնկրետ հիմք-նպատակներով: ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածը երաշխավորում է տեղեկատվության ազատությունը. «Յուրաքանչյուր ոք ունի (...) առանց պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջամտության և անկախ պետական սահմաններից՝ տեղեկատվության որևէ միջոցով տեղեկություններ ու գաղափարներ փնտրելու, ստանալու և տարածելու ազատություն»: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ տեղեկատվության ազատության հիմնական իրավունքը կարող է սահմանափակվել միայն պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Ստացվում է, որ մոռացված լինելու իրավունքի և տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի միջև եղած մրցակցության «օրինական դաշտը» պետք է գտնենք տեղեկատվության ազատության իրավաչափ սահմանափակումների մեջ: Այլ խոսքով՝ գտնում ենք, որ մոռացված լինելու իրավունքը, ինչպես վերևում նշեցինք, հանդիսանալով անձնական տվյալների, պատվի ու բարի համբավի պաշտպանության հիմնական իրավունքի «ժամանակակից տարր», տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի հետ կարող է մրցակցել միայն տեղավորվելով վերջինիս իրավաչափ սահմանափակումներից մեկում. սույն պարագայում, կարծում ենք՝ դա այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով տեղեկատվության ազատության սահմանափակումն է:

Մեծբրիտանական Article 19 ընկերությունը ևս առանձնացնում է որոշ իրավական հիմք-խնդիրներ, որոնք ապացուցում են, որ մոռացված լինելու իրավունքը երբեք չպետք է գերազանցատվի և տեղեկատվության ազատությանը սպառնացող գործիք դառնա: Ըստ այդմ, պետք է պարտադիր հաշվի առնել անհատները չունեն և չպետք է ունենան իրենց մասին տեղեկատվության մատչելիությունը վերահսկելու անվերապահ իրավունք. խոսքի ազատության նկատմամբ հանրային մեծ հետաքրքրությունը, անօրինական եղանակով ձեռք բերված տեղեկատվության հրապարակումը, այնուամենայնիվ, կարող է բխել հանրային շահերից, մոռացված լինելու իրավունքն ավելի շատ սահմանափակում է տեղեկատվության

ազատությունը, քան ապահովում պատասխանելու և ուղղման իրավունքները, մոռացված լինելու իրավունքի երաշխավորման ու հստակության պակասը կարող է առաջացնել նշված իրավունքի բազմաթիվ չարաշահումներ, նն<sup>1</sup>:

Թեև վերոգրյալ իրավական ակտերը ցույց տվեցին, որ ՀՀ-ում մոռացված լինելու իրավունքի նպատակին կարելի է հասնել որոշ նորմերի շնորհիվ, այնուամենայնիվ, գտնում ենք, որ մոռացված լինելու իրավունքի նման անորոշ գոյությունը մեծ վտանգ է հանդիսանում տեղեկատվության ազատության համար, քանի որ մոռացված լինելու իրավունքի նպատակի իրականացմամբ միաժամանակ սահմանափակվում է անձի տեղեկություններ փնտրելու, ստանալու, ինչպես նաև տարածելու ազատությունները, ուստի խիստ անհրաժեշտ ենք համարում հստակեցնել ՀՀ-ում գործով իրավական ակտերով մոռացված լինելու իրավունքի դրսևորումները, դրանց ու տեղեկատվության ազատության օրինաչափ սամանազատումը:

Ինչպես վերևում նշեցինք, մոռացված լինելու իրավունքի ու տեղեկատվության ազատության մրցակցության միակ «օրինական դաշտը» պետք է գտնվի տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի՝ այլոց պատվի ու բարի համբավի և այլ հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով սահմանափակման տիրույթում: Ըստ դրա՝ ՀՀ-ում մոռացված լինելու իրավունքը կարող է իրացվել միայն, երբ համացանցից տեղեկատվության հեռացումն իրականացվելու է՝

1. անձի (նաև՝ իրավանախորդի) պատվի ու բարի համբավի վերականգնման նպատակով, կամ

2. անձի (նաև՝ իրավանախորդի) խախտված որևէ հիմնական իրավունքի և ազատության պաշտպանության նպատակով:

Ընդ որում, անհրաժեշտ է ընդգծել, որ կարևոր չէ՝ նշված նպատակներին հասնելու իրավաչափ հիմքերը եղել են նշված տեղեկատվության համացանցում տեղադրման, հրապարակման պահին, թե դրանց հեռացման պահանջի պահին:

Այս ամենից պարզ է դառնում, որ մոռացված լինելու իրավունքը կարող է տեղեկատվության ազատության նկատմամբ ունենալ ավելի մեծ կարևորություն միայն այն դեպքում, երբ կհետապնդի վերոգրյալ նպատակներից որևէ մեկը, իսկ եթե մոռացված լինելու իրավունքը ՀՀ-ում իրացվի վերոգրյալից բացի որևէ այլ նպատակով,

ապա այն կհանդիսանա մարդու տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի խախտում:

Մոռացված լինելու իրավունքի վերոգրյալ նպատակներին հասնելու ճանապարհին կարևոր է նաև պահպանել համաչափության սկզբունքը: Այսպես, ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Մոռացված լինելու իրավունքի էությունը պայմանավորված է որևէ տեղեկատվության հետ որևէ անձի անմիջական կապով: Մոռացված լինելու իրավունքն իրացնելով՝ անձը ցանկանում է խզել իր և նշված տեղեկատվության միջև եղած կապը ու պահանջում ամբողջությամբ հեռացնել այդ տեղեկատվությունը: Հաշվի առնելով, որ կոնկրետ տեղեկատվությունը անձանց համար հիմնականում հասանելի է դառնում անձնական տվյալի<sup>1</sup> միջոցով այդ տեղեկատվության որոնմամբ՝ կարծում ենք, անձի ու կոնկրետ տեղեկատվության միջև եղած կապը հնարավոր է վերացնել նաև ապանձնավորմամբ՝ գործողություն, որի արդյունքում հնարավոր չէ որոշել տվյալների պատկանելությունը կոնկրետ անձին: Արդյունքում՝ տեղեկատվությունը կշարունակվի մնալ համացանցում, և ապանձնավորմամբ կվերացվի կոնկրետ տեղեկատվության ու կոնկրետ անձի միջև եղած կապը, ուստի, գտնում ենք, որ ապանձնավորումը կարող է պիտանի ու անհրաժեշտ միջոց համարվել մոռացված լինելու իրավունքի նպատակին՝ տեղեկատվության ազատության սահմանափակմամբ հասնելու համար:

Այսպիսով, ինչպես վերոգրյալ ուսումնասիրությունը ցույց է տալիս, ՀՀ օրենսդրությունում առկա են նորմեր, որոնք հստակ մեկնարանման դեպքում կկարողանան հասնել մոռացված լինելու իրավունքով հետապնդվող նպատակներին: Մինչդեռ մոռացված լինելու իրավունքը կարող է տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի նկատմամբ գերակա համարվել միայն այն դեպքում, երբ դրա իրացմամբ հետապնդվող նպատակն ամբողջությամբ կհամապատասխանի տեղեկատվության ազատության իրավաչափ սահմանափակման համար նախատեսված նպատակներին: Հակառակ պարագայում մոռացված լինելու իրավունքը որևէ կերպ չի կարող մրցակցել տեղեկատվության ազատության հիմնական իրավունքի հետ:

Մոռացված լինելու իրավունքը որոշակի ժամանակ հանրային տեղեկատվությունը կդարձնի մասնավոր տեղեկատվություն այլևս թույլ չտալով նման տեղեկատվության մուտք գործել երրորդ կողմերին : Այնուամենայնիվ, վերոգրյալ ուսումնասիրությունը նպատակ ունի գսպելու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմամբ պայմանավորված մոռացված լինելու իրավունքի ճանաչման լայն թափն ու տեղեկատվության ազատությանը սպառնացող դրա անորոշ գոյությունը: Արդյունքում չեն լինի ուղղակի արդիականությունը կորցրած տեղեկատվության հեռացման ինքնանպատակ պահանջներ, ուշադրության կենտրոնում չհայտնվելու ցանկության կորստով պայմանավորված տեղեկատվության հեռացման պահանջներ, մարդու տեղեկություններ փնտրելու, ստանալու կամ տարածելու հիմնական իրավունքին սպառնացող այլ անհիմն դրսևորումներ: Մոռացված լինելու իրավունքը յուրաքանչյուր գործով պետք է ճիշտ գնահատվի՝ հաշվի առնվի դրանով հետապնդվող նպատակը, մոռացված լինելու իրավունքի իրացմամբ պաշտպանվող իրական շահն ու տեղեկատվության ազատության սահմանափակման իրավաչափությունը:

## КОНКУРЕНЦИЯ ЗА ПРАВО БЫТЬ ЗАБЫТЫМ И СВОБОДУ ИНФОРМАЦИИ В АРМЕНИИ

### Аннотация

Развитие информационных технологий оказало такое влияние на права человека, что, помимо изменения некоторых прав человека, а в некоторых случаях их прекращения, также привело к созданию новых прав. Одно из них - право на забвение, на удаление информации из Интернета. Хотя это право не полностью признано, оно может представлять серьезную угрозу основному праву на свободу информации.

В ходе исследования мы попытались уточнить границы права на забвение, чтобы это никоим образом не угрожало основному праву на свободу информации. В частности, представляя международный опыт, мы разъяснили нормативные акты, эквивалентные праву на забвение в Армении, соотношение между ними и свободой информации, конкуренции и отношения. В результате стало ясно, что право на забвение должно возникать при наличии определенных

оснований и условий, иначе свобода информации может быть нарушена.

**Ключевые слова:** свобода информации, права человека, право на забвение, конкуренция, ограничение прав, международный опыт, личные данные, удаление информации.

## COMPETITION FOR THE RIGHT TO BE FORGOTTEN AND FREEDOM OF INFORMATION IN ARMENIA

### Annotation

The development of information technology has had such an impact on human rights that, in addition to changing some human rights, in some cases terminating them, has also led to the creation of new rights. One of them is the right to be forgotten, i.e. to remove information from the Internet. Although this right is not fully recognized, it can be a serious threat to the fundamental right to freedom of information.

Through the study, we tried to clarify the boundaries of the right to be forgotten so as not to threaten the fundamental right to freedom of information. In particular, presenting the international experience, we clarified the regulations equivalent to the right to be forgotten in the Republic of Armenia, the ratio between them and freedom of information and competition. As a result, it became clear that the right to be forgotten must arise in the presence of specific grounds and conditions, otherwise the possible freedom of information may be harmed.

**Keywords:** freedom of information, human rights, right to be forgotten, competition, international experience, personal data, information removal.





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 49-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ «ՄՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Գ» ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

26 հունվարի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի, գործով որպես պատասխանող ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 69-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ԱՐՁՆԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և «Մնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի՝ Սահմանա-

1(101)2021  
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

դրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2018 թվականի փետրվարի 27-ին, և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Օրենսգրքի «Ի պաշտոնե ներկայացուցիչները» վերտառությամբ 49-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է հետևյալը.

«5. Սնանկ ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց շահերը օրենքով նախատեսված դեպքերում ներկայացնում է սնանկության կառավարիչը: Լուծարման գործընթացում գտնվող իրավաբանական անձանց շահերը ներկայացնում է լուծարային հանձնաժողովի նախագահը»:

Օրենսգրքի վերոնշյալ դրույթը որևէ փոփոխության և լրացման չի ենթարկվել:

«Սնանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2006 թվականի դեկտեմբերի 25-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2007 թվականի հունվարի 22-ին, և ուժի մեջ է մտել 2007 թվականի փետրվարի 10-ին:

Օրենքի «Կառավարչի լիազորությունները» վերտառությամբ 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանվում է.

«1. Սնանկության վերաբերյալ գործով նշանակված կառավարիչը՝

գ) պարտապանի անունից դիմում է դատարաններ՝ դատական կարգով լուծում պահանջող հարցերով, ներգրավվում է պարտապանի այն դատավարություններում, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, առանց լիազորագրի հանդես է գալիս պարտապանի անունից»:

Օրենքի վերոնշյալ դրույթը փոփոխության և խմբագրման է ենթարկվել 2010 թվականի դեկտեմբերի 22-ի ՀՕ-13-Ն օրենքով, որի համաձայն՝ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետում «հանդես է եկել որպես հայցվոր» բառերը փոխարինվել են «հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող» բառերով:

Գործի քննության առիթը «ԱՐԶՆԻ ԳԴՈՒՊ» ՍՊԸ-ի՝ 2020 թվականի հունվարի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**։

**1. Դիմողի դիրքորոշումները**

Ըստ դիմողի թեև Օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասում նշված է սնանկության գործով կառավարչի օրենքով նախատեսված դեպքերում պարտապանի շահերը ներկայացնելու իրավունքը, սակայն հստակեցված չեն այն իրավիճակները, որոնց պայմաններում վերջինս պետք է օգտվի նման իրավական կարգավորումից: Մասնավորապես Օրենքով հստակ և սպառիչ կերպով սահմանված չեն այն դեպքերը, որոնց պարագայում կիրառելի է նշված նորմը, որպիսի պայմաններում էլ դրույթը խոցելի է դառնում իրավական որոշակիության տեսանկյունից:

Բացի այդ, վիճարկվող իրավական նորմերով ամրագրված չէ սնանկ ճանաչված անձի դատական պաշտպանության իրավունքի սահմանափակում: Ըստ դիմողի սնանկության գործով կառավարչի որպես ներկայացուցիչ հանդես գալու իրավունքը դեռևս չի նշանակում, որ սնանկ ճանաչված ընկերությունը՝ ի դեմս իր տնօրենի, գրկված է դատարան դիմելու իրավական հնարավորությունից:

Դիմողը նաև նշել է, որ վիճարկվող դրույթներին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ սահմանափակվել է սնանկ ճանաչված անձի և սնանկության գործով կառավարչի դատավարական իրավասությունները: Մի կողմից սնանկ ճանաչված անձն ինքնուրույն չի կարող օգտվել դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից, մյուս կողմից սնանկության գործով կառավարիչը կարող է հանդես գալ բացառապես սնանկ ճանաչված անձի անունից, այսինքն՝ ըստ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի՝ վերջինս չունի դատավարական ինքնուրույն իրավասություններ:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը նշել է, որ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը հանդիսանում է Օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված այն դեպքերից մեկը, որը լիազորում է սնանկության գործով կառավարչին իրացնել պարտապանի դատավարական իրավունքները, ուստի այս առումով իրավական որոշակիության տեսանկյունից որևէ հարց չի կարող առաջանալ:

Բացի այդ, Օրենքի 31-րդ հոդվածը հնարավորություն է սահմանել պարտապանի և պարտատիրոջ համար վիճարկելու սնանկության գործով կառավարչի ոչ միայն գործողությունները, այլ նաև անգործությունը: Ավելին, Օրենքի 32-րդ հոդվածով կարգավորված են նաև սնանկության գործով կառավարչին պատասխանատվության ենթարկելու ընթացակարգերը, ուստի սնանկության գործով կառավարչի գործողությունների կամ անգործության հետ համաձայն չլինելու դեպքում պարտապանը որևէ կերպ զրկված չէ դրանք դատական կարգով բողոքարկելու հնարավորությունից:

Միաժամանակ պատասխանողը նշել է, որ թեև դիմողը վիճարկել է Օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասի և Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետի սահմանադրականությունը, սակայն ըստ էության բարձրացրել է դատարանների կողմից կոնկրետ գործով նշված դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Վերոնշյալի հիման վրա պատասխանողը եկել է այն եզրահանգման, որ վիճարկվող դրույթները համապատասխանում են Սահմանադրությանը:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն սահմանադրաիրավական վեճը հանգում է սնանկության գործով կառավարչի և պարտապանի կողմից դատարան դիմելու իրավասության հարաբերակցության խնդրին՝ պայմանավորված այն իրողությամբ, որ օրենսդրական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության պայմաններում դիմողի գնահատմամբ՝ սահմանափակվում է սնանկ ճանաչված անձի դատավարական իրավասությունները՝ այն ամբողջությամբ վերապահվելով սնանկության գործով կառավարչին:

Հաշվի առնելով նշված հանգամանքը՝ սույն գործի շրջանակում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել հետևյալը.

- 1) արդյո՞ք վիճարկվող դրույթներն իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանության պայմաններում համահունչ են իրավական որոշակիության սկզբունքին,
- 2) արդյո՞ք վիճարկվող դրույթների և դրանց՝ իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանության պայմաններում պահպանվում է սնանկ ճանաչված անձի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրացումը:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրական դատարանը, անդրադառնալով դատական պաշտպանության և արդար դատաքննության հիմնական իրավունքների իրացման շրջանակներում սնանկ ճանաչված անձի և սնանկության գործով կառավարչի կողմից դատարան դիմելու կառուցակարգին և իրավակիրառ պրակտիկայում դրա սահմանադրականության վերաբերյալ դիմողի կողմից բարձրացված հարցադրումներին, անհրաժեշտ է համարում խնդիրը դիտարկել ինչպես վիճարկվող դրույթներում ամրագրված իրավակարգավորումների, այնպես էլ դրանց հետ փոխկապակցված այլ նորմերի համատեքստում՝ հաշվի առնելով սնանկության վարույթի առանձնահատկությունը և տրամաբանությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության գործընթացի նպատակն է երաշխիքներ ստեղծել մի կողմից՝ պարտատերերի պահանջները համամասնորեն բավարարելու, մյուս կողմից՝ հնարավոր դեպքերում պարտապանի գույքային դրույթունը կայունացնելու (պարտապանի վճարունակության վերականգնումը) և նրա տնտեսական գործունեության շարունակականությունն ապահովելու համար:

Սահմանադրական դատարանը, վերահաստատելով իր՝ 2008 թվականի փետրվարի 25-ի ՍԴՈ-735 որոշմամբ արտահայտած դիրքորոշումն այն մասին, որ «Սնանկության ինստիտուտի նպատակն է հնարավորություն տալ բարեխիղճ և պարտաճանաչ պարտապանին վերականգնել իր բնականոն գործունեությունը, հաղթահարել ֆինանսական դժվարությունները, ինչպես նաև ապահովել անվճարունակ կազմակերպությունների վերակառուցումը և ֆինանսական վերակազմակերպումը, վերականգնել նրա կենսունակությունը և միևնույն ժամանակ ապահովել պարտատերերի շահերի պաշտպանությունը», ընդգծում է, որ յուրաքանչյուր դեպքում սնանկության գործընթացում պետք է հաշվի առնվեն տարբեր շահագրգիռ կողմերի ներառյալ պարտապանների շահերը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով բարձրացված խնդիրն անմիջականորեն առնչվում է սնանկության գործով կառավարչի սնանկության վարույթում զբաղեցրած կարգավիճակին, Սահմանադրական դատարանը հարկ է համարում նախնառաջ օրենսդրական կարգավորումների և օրենսդրության ողջ տրամաբանության լույսի ներքո բացահայտել սնանկության գործով կառավարչի լիազորությունները սնանկության հարաբերություններում, նրա և պարտապանի դերակատարությունը պարտապանին պատկանող գույքի տնօրինման հարաբերություններում:

Սնանկության գործով կառավարչի՝ Օրենքով ամրագրված լիազորությունների, նրա դերակատարման վերաբերյալ ամրագրված օրենսդրական կարգավորումների համալիր ուսումնասիրման արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության գործով կառավարչի լիազորությունները հանգում են պարտապանի գույքի պահպանմանը և պարտատերերի պահանջների պատշաճ բավարարումն ապահովելուն, ուստի վերջինիս տրված բոլոր լիազորությունները մեկնաբանելիս պետք է առաջնորդվել այն սկզբունքով, որ դրանք ուղղված են վերոնշյալ նպատակի կենսագործմանը:

Վերոնշյալ մոտեցումն ընկած է նաև իրավակիրառական պրակտիկայի հիմքում, մասնավորապես՝ թիվ ԵՄԴ/0049/04/15 սնանկության գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 2017 թվականի ապրիլի 7-ի որոշմամբ սնանկության գործով կառավարչի դատավարական կարգավիճակի վերաբերյալ արտահայտված դիրքորոշման համաձայն՝ սնանկության գործով կառավարիչը սնանկության վարույթում պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովող հիմնական անձն է:

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու նպատակը քաղաքացիական շրջանառության կայունության ապահովումն է, որպիսի պայմաններում սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի գործողությունների շրջանակն իրավաչափորեն սահմանափակվում է՝ նպատակ ունենալով ապահովելու պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունը: Հետևաբար՝ անվճարունակ պարտապանի սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի անունից և իր պատասխանատվությամբ պարտապանի գործողություններն իրականացնում է սնանկության գործով կառավարիչը՝ հանդես գալով որպես պարտապանի և պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովող ոչ շահագրգիռ անձ՝ միաժամանակ հաշվի առնելով կողմերից յուրաքանչյուրի շահերը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդպիսի իրավակարգավորումը նպատակ ունի ապահովելու իրավաչափ հավասարակշռություն մի կողմից պարտապանի, մյուս կողմից՝ պարտատերերի շահերի պաշտպանության համար:

Սնանկության գործով կառավարչի լիազորությունների վերաբերյալ վերոնշյալ դիրքորոշումների լույսի ներքո անդրադառնալով սույն գործով սահմանադրաիրավական վեճին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը. սնանկության հարաբերու-

թյունների հիմնական սուբյեկտներն են պարտապանը, պարտատերերը և սնանկության գործով կառավարիչը: Սնանկության վարույթի տարբեր փուլերում նշված սուբյեկտներն օժտված են տարբեր իրավունքներով և պարտականություններով:

Այսպես, Օրենքի 23.1-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով որպես վարքագծի կանոն ամրագրվել է սնանկության գործով կառավարչի պարտականությունն ապահովելու հարգալից և անկողմնակալ վերաբերմունք պարտապանի և պարտատերերի նկատմամբ: Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «ե» և «ժա» կետերի ուժով սնանկության գործով կառավարիչը կազմակերպում է գույքագրում, միջոցներ է ձեռնարկում պարտապանին պատկանող գույքի պահպանության ապահովման համար, ինչպես նաև հսկողություն է իրականացնում պարտապանի ղեկավարի պարտականությունների կատարման նկատմամբ:

Վերոգրյալ իրավական կարգավորումները փաստում են, որ սնանկության վարույթում սնանկության գործով կառավարիչը հանդես է գալիս ոչ թե պարտապանի կամ պարտատիրոջ կողմում, այլ օրենքի սահմաններում իրականացնում է իր՝ որպես սնանկության գործով կառավարչի լիազորությունները, որոնք ուղղված են պարտապանի և պարտատիրոջ շահերի հավասարակշռմանը:

Օրենքի «Կառավարչի գործողությունները (անգործությունը) վիճարկելը» վերտառությամբ 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն պարտապանը և պարտատերը (պարտատերերը) կարող են սնանկության գործը վարող դատավորին բողոքարկել կառավարչի գործողությունները կամ անգործությունը (...): Իսկ մինչև 15.04.2020 թ. գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորն իր նախաձեռնությամբ, պարտատերերի խորհրդի կամ ժողովի կամ պարտատիրոջ կամ պարտապանի միջնորդությամբ պետք է վաղաժամկետ դադարեցնի կառավարչի լիազորությունները, եթե վերջինս չի կատարում կամ ոչ պատշաճ է կատարում նույն օրենքով սահմանված իր լիազորությունները կամ նույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված ժամկետում չի կատարում իր քաղաքացիական պատասխանատվության ապահովագրումը:

Վերոնշյալ իրավական կարգավորումների լույսի ներքո Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ պարտապանին օրենսդրությամբ ընձեռված է սնանկության գործով կառավարչի գործողությունը կամ անգործությունը բողոքարկելու, ինչպես նաև սնանկության գործով կառավարչի լիազորությունները վաղաժամ-

կետ դադարեցնելու միջնորդություն ներկայացնելու իրավունք:

Միաժամանակ, սնանկության հարաբերությունները կարգավորող մի շարք օրենսդրական կարգավորումների ողջ տրամաբանությունը հանգում է նրան, որ սնանկության գործով կառավարիչն այդ հարաբերություններում օժտված է լուրջ դերակատարմամբ և մի շարք դեպքերում այնպիսի լիազորությունների իրականացման իրավասությամբ, որոնք մինչև սնանկ ճանաչվելը կրում էր պարտապանը, սակայն սնանկության առաջացման փաստով պարտապանի դրանց իրացման հնարավորությունը սահմանափակելը պայմանավորված է բացառապես սնանկության վարույթի բարեհաջող և արդյունավետ ընթացքի ապահովմամբ, պարտապանին պատկանող գույքի պահպանմամբ, ինչպես նաև պարտատերերի պահանջների պատշաճ բավարարմամբ:

Մասնավորապես Օրենքի «Պարտապանին սնանկ ճանաչելու կամ սնանկ ճանաչելու դիմումը մերժելու հետևանքները» վերտառությամբ 19-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով սահմանվում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատարանը նույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով անհապաղ նշանակում է սնանկության գործով կառավարիչ դադարեցնելով ժամանակավոր կառավարչի լիազորությունները (...): Իսկ նույն հոդվածի 1-ին մասի «է» կետի համաձայն՝ պարտապանին լուծարելու մասին որոշում կայացնելու պահից դատարանն անհապաղ որոշում է կայացնում պարտապանի գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքները կասեցնելու մասին: Նույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերությամբ սահմանվում է, որ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից պարտապանը (ղեկավարը) գործում է նույն օրենքի 47-րդ հոդվածի երկրորդ և երրորդ մասերով նախատեսված կարգով: Իսկ Օրենքի 47-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանվում է հետևյալը.

«2. Պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը, պարտապանի ղեկավարը գործում է կառավարչի համաձայնությամբ և նրա հսկողության ներքո: Պարտապանի ղեկավարին արգելվում է պարտապանի գույքը տնօրինելու կամ պարտապանի համար գույքային պարտավորություն առաջացնող ցանկացած գործողություն կատարել առանց կառավարչի թույլտվության:

3. Պարտապանին պատկանող գույքի տնօրինումը նրա լուծարման մասին որոշում կայացնելուց հետո իրականացնում է կառա-



վարիչը՝ սույն օրենքով սահմանված կարգով: Պարտապանի ղեկավարը լուծարումից հետո զրկվում է գույքը տնօրինելու և կառավարելու իրավունքներից»:

Սահմանադրական դատարանը 2020 թվականի մայիսի 26-ի թիվ ՄԴՈ-1542 որոշմամբ, անդրադառնալով Օրենքի 47-րդ հոդվածին, նշել է, որ օրենսդիրը տարբերակել է սնանկության վարույթի երկու առանձին փուլեր, որոնց համար, կախված տվյալ փուլի խնդիրներից և նպատակից, ամրագրել է տարբեր կարգավորումներ, ինչը, ինքնին, որևէ իրավական անորոշություն չի առաջացնում:

Վերոնշյալ իրավանորմերի բովանդակությունից և Սահմանադրական դատարանի դիրքորոշումից հետևում է, որ օրենսդիրը սնանկության վարույթը տարանջատել է առանձին փուլերի, այն է՝ նախքան պարտապանին սնանկ ճանաչելը, և պարտապանին սնանկ ճանաչելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում կայացնելը, որպիսի կարգավորումը պայմանավորված է պարտապանի և սնանկության գործով կառավարչի իրավական կարգավիճակի առանձնահատկություններով:

Այսպես, նախքան սնանկ ճանաչվելը պարտապանն իր իրավունքները և պարտականությունները, այդ թվում նաև՝ դատավարական, ինքնուրույն է իրացնում: Այլ կերպ ասած՝ նախքան սնանկ ճանաչվելը պարտապանը, օժտված լինելով դատավարական իրավասություններով, ինքնուրույն կարող է իրացնել իր դատավարական իրավունքները և կրել պարտականություններ:

Մինչդեռ սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի իրավունքները, այդ թվում նաև՝ դատավարական, իրացնում է սնանկության գործով կառավարիչը՝ հանդես գալով պարտապանի անունից և հսկողություն իրականացնելով պարտապանի իրավաբանական անձի ղեկավարի պարտականությունների կատարման նկատմամբ:

Վճռաբեկ դատարանը, թիվ ԱՐԱԴ/0333/02/14 քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշմամբ անդրադառնալով Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանված սնանկության գործով կառավարչի դատավարական լիազորությունների բովանդակությանը, արձանագրել է, որ սնանկ ճանաչվելուց հետո պարտապանի դատավարական իրավունքներն իրացնում է կառավարիչը և սնանկ ճանաչվելուց հետո, ի թիվս այլնի, պարտապանի անունից իրացնում է նաև դատարան հայց ներկայացնելու իրավունքը:

Այդուհանդերձ, օրենսդիրը վերոնշյալ կարգավորումից սահմանել է նաև բացառություն պարտապանի սնանկ ճանաչվելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը պարտապան-իրավաբանական անձի ղեկավարին հնարավորություն տալով գործելու բացառապես սնանկության գործով կառավարչի համաձայնությամբ և վերջինիս հսկողության ներքո (Օրենքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ պարբերություն, 47-րդ հոդվածի 2-րդ մաս):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պարտապանի սնանկ ճանաչվելուց հետո՝ մինչև նրա վերաբերյալ լուծարելու մասին որոշում ընդունելը պարտապան-իրավաբանական անձի ղեկավարը որոշ իրավունքների, այդ թվում նաև՝ դատավարական, իրացման հարցում կաշկանդված է սնանկության գործով կառավարչի համաձայնությամբ: Նշվածից հետևում է, որ օրենսդիրը, պարտապան-իրավաբանական անձի ղեկավարի՝ իր հայեցողությամբ գործելու հնարավորությունը սահմանափակելով, ստեղծել է բավարար երաշխիքներ սնանկության գործով կառավարչի կողմից պարտապան-իրավաբանական անձի ղեկավարի գործողությունները վերահսկելու, վերջինիս կամայականություններից խուսափելու և պարտապանի ու պարտատերերի շահերի հավասարակշռությունն ապահովելու համար: Նման պայմաններում ակնհայտ է, որ պարտապանի համար լայն դատավարական գործառույթներ նախատեսելը, տվյալ դեպքում դատարան դիմելու իրավունքի իրացման ոչ սահմանափակ հնարավորություն նախատեսելը կարող է հանգեցնել վերջինիս կողմից այդ իրավունքի չարաշահման նախադրյալների ստեղծման:

Միաժամանակ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետով ամրագրվում է, որ սնանկության վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելու պահից արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում տալը, ի մարումն պարտքի որևէ գործողություն կատարելը, բացառությամբ պարտապանի բնականոն ընթացիկ գործունեության հետ կապված պարտավորությունների:

Նույն հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից արգելվում է առանց դատարանի որոշման պարտապանի կողմից իր ցանկացած պայմանագրային կամ այլ պարտավորություններով պարտատերերին դրամական կամ այլ բավարարում

տալը, բացառությամբ պարտապանի ֆինանսական առողջացման ծրագրով նախատեսված դեպքերի:

Մինչև 15.04.2020 թ. գործող խմբագրությամբ «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն գույքն օտարելու պայմանագրային պարտավորությունները պարտապանին սնանկ ճանաչելու մասին վճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից չեն կարող կատարվել: Բացառիկ դեպքերում գույքն օտարելու պարտապանի պարտավորության կատարումը, ելնելով պարտապանի գործունեության, գույքի, գործարքի առանձնահատկություններից և այլ հանգամանքներից, կառավարչի միջնորդության հիման վրա կարող է թույլատրվել դատարանի որոշմամբ (...):

Օրենքի 54-րդ հոդվածով նախատեսվում է կառավարչի իրավասությունը՝ դատական կարգով դիմելու և հետ ստանալու պարտապանի կատարած անհատույց փոխանցումները, որոնք նույնպես ուղղված են պարտատերերի պահանջների պատշաճ բավարարմանը: Իսկ Օրենքի 55-րդ հոդվածի 1-ին մասն ամրագրում է կառավարչի՝ պարտապանին պատկանող գույքի պահպանման համար անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկելու պարտականությունը:

Օրենքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանի գույքի վաճառքն իրականացնում է կառավարիչը՝ իր կողմից գույքագրման արդյունքներով ներկայացված և պարտատերերի խորհրդի, իսկ խորհուրդ ձևավորված չլինելու դեպքում պարտատերերի ժողովի կողմից հաստատված գույքի վաճառքի ծրագրի համաձայն և դատարանի թույլտվությամբ՝ հրապարակային սակարկություններով կամ ուղղակի գործարքով:

Վերոգրյալ իրավական կարգավորումների համադրված վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սնանկության գործով կառավարչին օրենսդիրը վերապահել է մի շարք լիազորություններ, որոնց մեծ մասն ուղղված է պարտապանին պատկանող գույքի պահպանմանն ու վաճառքին, որոնք իրականացվում են դատարանի վերահսկողության շրջանակներում: Միաժամանակ, նշված նորմերի արդյունավետ կենսագործման համար օրենսդիրը մի շարք դեպքերում սահմանափակել է պարտապանի՝ գույքի տնօրինմանն ուղղված գործողությունների իրականացումը, քանի որ առանց նշված սահմանափակումների հնարավոր չի լինի ապահովել սնանկության վարույթի ներդաշնակ ընթացքը, պարտապանի գույքի պահպանումը և պարտատերերի պահանջների պատշաճ բավարարումը:

Վերագրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ ինչպես պարտապանը, այնպես էլ սնանկության գործով կառավարիչն օժտված են օրենսդրությամբ հստակ ամրագրված մի շարք իրավունքներով, որոնք չեն կարող հանգեցնել նշված սուբյեկտների նույնացման, քանի որ սնանկության գործով կառավարիչը մի շարք դեպքերում հանդես է գալիս պարտատերերի իրավունքների պաշտպանության կողմում, իսկ այլ դեպքերում՝ պարտապանի, որը պայմանավորված է բացառապես պարտապանի գույքի պահպանման և պարտատերերի պահանջների պատշաճ բավարարման նկատառումով, ինչն էլ հանդիսանում է սնանկության վարույթի էությունն ու նպատակը:

**4.2.** Սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն գործով վիճարկվող դրույթները, ինչպես նաև իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությունը դիտարկել իրավական որոշակիությանը համապատասխանության տեսանկյունից: Այսպես.

Օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասն ամրագրում է սնանկության գործով կառավարչի՝ սնանկ ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց շահերն օրենքով նախատեսված դեպքերում ներկայացնելու իրավասությունը: Իսկ Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով սահմանվում է դատական կարգով լուծում պահանջող հարցերով պարտապանի անունից դատարաններ դիմելու, պարտապանի այն դատավարություններում ներգրավվելու, որոնցում վերջինս հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ, պարտապանի անունից առանց լիազորագրի հանդես գալու՝ սնանկության գործով կառավարչի լիազորությունը: Այսինքն՝ նշված դրույթները վերաբերում են սնանկության գործով կառավարչի պարտապանի համար դատական ներկայացուցչություն ապահովելու իրավական հնարավորությանը:

Քաղաքացիադատավարական օրենսդրությունը, սնանկության գործով կառավարչին վերապահելով սնանկ ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց շահերը ներկայացնելու հնարավորություն, օգտագործում է «օրենքով նախատեսված դեպքերում» ձևակերպումը: Միաժամանակ օրենսդիրը սնանկության գործով կառավարչի կողմից սնանկ ճանաչված ֆիզիկական կամ իրավաբանական անձանց շահերը ներկայացնելու դեպքերը մասնավորեցրել է Օրենքի շրջանակներում, որով էլ նախատեսվում է դատական կարգով լուծում պահանջող հարցերով դատարան

դիմելու, այն դատավարություններում ներգրավվելու՝ սնանկության գործով կառավարչի իրավասությունը, որոնցում պարտապանը հանդես է գալիս որպես հայցվոր, պատասխանող կամ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ: Վերջին դեպքը վկայում է պարտապանի որպես հայցվոր, պատասխանող, վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող երրորդ անձ դատարան դիմելու իրավունքի մասին, թեպետ հիշյալ դեպքում պարտապանի անունից դատարան է դիմում սնանկության գործով կառավարիչը:

Վերոգրյալից բխում է օրենսդրի Սահմանադրությամբ ամրագրված պարտականությունը՝ հստակեցնելու այն դեպքերը, որոնց պարագայում դատարան դիմելու իրավասությունը պատկանում է սնանկության գործով կառավարչին, ինչպես նաև այն դեպքերը, որոնց պարագայում դատարան դիմելու իրավունք ունի սնանկ ձանաչված պարտապանը:

Օրենսդրական կարգավորումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը կատարել է վերոնշյալ պարտականությունը, մասնավորապես՝ Օրենքն ամրագրում է սնանկության գործով կառավարչի օրենքով նախատեսված դեպքերում սնանկության գործով դատարան դիմելու իրավասությունը, **ինչպես նաև դատական կարգով լուծում պահանջող հարցերով** պարտապանի անունից դատարաններ դիմելու իրավասությունը՝ միաժամանակ չբացառելով մի շարք դեպքերում (Օրենքի 20-րդ հոդվածի 2-րդ մաս, 31-րդ հոդվածի 1-ին մաս, 32-րդ հոդվածի 1-ին մաս, 36-րդ հոդվածի 2-րդ մաս, 40-րդ հոդվածի 2-րդ մաս, 47-րդ հոդվածի 2-րդ մաս, 68-րդ հոդվածի 2-րդ մաս) **պարտապանի կողմից անմիջականորեն** դատարան դիմելու իրավունքը, ինչպես նաև հստակեցնելով սնանկության գործով կառավարչի կողմից դատարան դիմելու (Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «գ» կետեր, 36-րդ հոդվածի 2-րդ մաս, 50-րդ հոդվածի 1-ին մաս, 54-րդ հոդվածի 1-ին մաս) կարգն ու պայմանները:

Վերոգրյալից բխում է, որ Օրենքը, սահմանելով սնանկության հարցերով սնանկության գործով կառավարչի՝ դատարան դիմելու ընդհանուր կանոն, միաժամանակ, հստակ ամրագրել է այն դեպքերը, որոնց պարագայում դատարան դիմելու իրավասություն ունի նաև պարտապանը: Դրանից հետևում է, որ սնանկության վերաբերյալ **այլ հարցերով** դատարան դիմելու իրավունքը պատկանում է սնանկության գործով կառավարչին: Ավելին, Օրենքը մի շարք դեպքերի համար սահմանում է սնանկության գործով կառավարչի կողմից դատարան դիմելու կարգի վերաբերյալ առավել մանրամասն կարգավորում:

**4.3.** Սահմանադրական դատարանը սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը հարկ է համարում դիտարկել նաև դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում:

Դատարանի մատչելիության իրավունքին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր 2016 թվականի մարտի 10-ի ՄԴՈ-1257 որոշմամբ: Նշված որոշման 6-րդ կետում Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«(...) Անձի իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության իրավունքի իրացումը երաշխավորելու տեսանկյունից ընդհանրապես առաջնահերթ կարևոր է, թե որքանով է մատչելի (հասանելի) արդարադատությունը, ինչպիսի իրավական պայմաններ են առաջադրված դատարան դիմելու իրավունքն իրացնելու, հետևաբար, նաև դրանով պայմանավորված դատավարական (քրեական, քաղաքացիական և վարչական) կոնկրետ ընթացակարգի շրջանակներում արդար, հրապարակային դատաքննությամբ անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու համար: Առանց անձի դատարան դիմելու կամահայտ դրսևորման, դատական պաշտպանության իրավունքի իրացումը և ընդհանրապես արդարադատության իրականացումն իրավաբանորեն անիրագործելի են (...):»:

Կարևորելով անձի իրավունքների երաշխավորման հարցում դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման օրենսդրական հնարավորության ապահովումը՝ միաժամանակ պետք է հաշվի առնել, որ այդ իրավունքի իրացումը կարող է պայմանավորվել որոշակի պահանջների պահպանմամբ, որոնց նախատեսումն ինքնին չի կարող համարվել այդ իրավունքի սահմանափակում: Մասնավորապես օրենսդիրը սահմանում է յուրաքանչյուր կոնկրետ դեպքում դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, դիմելու ընթացակարգն ու պայմանները, որոնց ամրագրումն առավել արդյունավետ է դարձնում դատական պաշտպանության իրավունքի իրացումը, քանի որ այն դարձնում է առավել հստակ և կանխատեսելի:

Տվյալ դեպքում գործ ունենք սնանկության հարաբերության հետ, որի շրջանակներում գլխավոր նպատակը սնանկ ճանաչված պարտապանին պատկանող գույքի պահպանումն է և նրա պարտավորությունների պատշաճ կատարման ապահովումը: Պարտապանի սնանկ ճանաչվելու փաստն ինքնին ենթադրում է, որ վերջինս չի կարողացել կատարել իր ֆինանսական պարտավորությունները, այդ իսկ պատճառով սնանկ ճանաչվելուց հետո դատարանի

կողմից նշանակվում է սնանկության գործով կառավարիչ, որի լիազորություններն էլ հանգում են պարտատերերի պահանջների պատշաճ բավարարման ապահովմանը: Հենց դա է պատճառը, որ օրենսդիրը սնանկության գործով կառավարչին է վերապահել դատական կարգով լուծում պահանջող հարցերով պարտապանի անունից դատարաններ դիմելու իրավասությունը: **Նման իրավա-կարգավորումը չի կարող դիտարկվել որպես պարտապանի դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակում, քանի որ բոլոր դեպքերում այդ իրավունքն իրացվում է անկախ նրանից անմիջականորեն դատարան է դիմում պարտապանը, թե նրա անունից սնանկության գործով կառավարիչը:**

Ընդ որում, սնանկության գործով կառավարիչը գործում է բացառապես դատարանի վերահսկողության ներքո, որպեսզի ապահովվի պարտապանի պարտավորությունների կատարումը, հակառակ պարագայում, եթե պարտապանը հնարավորություն ունենա անմիջականորեն դիմելու դատարան և այդ ձևով տնօրինելու իր դրամական միջոցները, կիմաստագրկվի ինչպես սնանկության վարույթի ողջ էությունը, այնպես էլ սնանկության գործով կառավարչի դերակատարումը:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում պարտապանի և սնանկության գործով կառավարչի որպես առանձին սուբյեկտների նույնացման, պարտապանի որպես առանձին սուբյեկտի դերակատարումը բացառելուն, սնանկության վարույթին առնչվող հարցերով դատարան դիմելու իրավունքից պարտապանի՝ զրկված լինելու, սնանկության գործով կառավարչի բոլոր դեպքերում պարտապանի անունից հանդես գալու և այդ հիմքով պարտապանի՝ որպես առանձին սուբյեկտի բոլոր իրավունքները սահմանափակելու վերաբերյալ դիմողի փաստարկները:

Հիմնավոր չեն նաև վիճարկվող դրույթների՝ իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանելու վերաբերյալ դիմողի փաստարկները: Օրենսդրության վերաբերելի նորմերի վերոնշյալ վերլուծությունից բխում է, որ վիճարկվող դրույթները հնարավորինս հստակ սահմանում են այն կարգավորումները, որոնք օրենսդիրն անհրաժեշտ և բավարար է համարում, որպեսզի դրանց հասցեատերերը դրսևորեն համապատասխան վարքագիծ և կանխատեսեն վրա հասնող հնարավոր հետևանքները: Միաժամանակ դրանք չեն կարող գործել օրենսդրական մյուս կարգավորումներից առանձին, ուստի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենսդրական

**ՀՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ**

կարգավորման ամբողջական ընկալման և դրա որոշակիության ապահովման համար հարկ է այն դիտարկել օրենսդրական մյուս կարգավորումների հետ համադրված վերլուծության արդյունքում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63-րդ, 64-րդ և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
2. «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետը համապատասխանում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:
3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

26 հունվարի 2021 թվականի  
ՍԴՈ-1572





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՌԱՄՁԵՍ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 5-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 10-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 388-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, 396-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 3-ՐԴ ԿԵՏԻ, 415-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ ԵՎ 423-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

27 հունվարի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի «ՌԱՄՁԵՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՌԱՄՁԵՍ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարու-

1(101)2021  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 97

թյան օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 2-րդ մասի, 388-րդ հոդվածի 1-ին մասի, 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 415-րդ հոդվածի 1-ին մասի և 423-րդ հոդվածի 2-րդ մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Օրենսգրքի **«Քաղաքացիական գործերով դատական ակտերը և դրանց պարտադիր լինելը»** վերտառությամբ 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է.

«3. Միջանկյալ դատական ակտեր են սույն հոդվածի 2-րդ մասում չնշված որոշումները, որոնք կայացվում են առանձին ակտի ձևով կամ արձանագրային որոշմամբ»:

Օրենսգրքի **«Վերաքննության և վճռաբեկության կարգով դատական ակտերի բողոքարկումը»** վերտառությամբ 10-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Գործին մասնակցող անձինք ունեն վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք ներկայացնելու իրավունք՝ սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով»:

Օրենսգրքի **«Վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերը»** վերտառությամբ 388-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Վճռաբեկ դատարանը վճռաբեկ բողոքի հիման վրա սույն օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով քննում է վերաքննիչ դատարանի եզրափակիչ և միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները»:

Օրենսգրքի **«Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելը»** վերտառությամբ 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը սահմանում է.

«1. Վճռաբեկ բողոքը թողնվում է առանց քննության, եթե՝  
(...)

3) բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճռաբեկության կարգով»:

Օրենսգրքի **«Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայման ենթակա դատական ակտերը»** վերտառությամբ 415-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով կարող են վերանայվել առաջին ատյանի դատարանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած այն դատական ակտերը, որոնք ենթակա են բողոքարկման, վճարման կարգադրությունները, ինչպես նաև Վճռաբեկ դատարանի՝ վճռաբեկ բողոքը վերադարձնելու, այն առանց քննության թողնելու, վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելը մերժելու մասին և վճռաբեկ բողոքի քննության արդյունքով կայացված որոշումները»:

Օրենսգրքի **«Դատական ակտի վերանայման բողոքն առանց քննության թողնելը և բողոքը վարույթ ընդունելը մերժելը»** վերտառությամբ 423-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է.

«2. Վճռաբեկ դատարանը դատական ակտի վերանայման բողոքն առանց քննության է թողնում և վարույթ ընդունելը մերժում է սույն օրենսգրքի համապատասխանաբար 396-րդ և 397-րդ հոդվածներով սահմանված հիմքերով և կարգով»:

Ընդունվելուց հետո Օրենսգրքի վիճարկվող դրույթներում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Գործի քննության առիթը «ՌԱՄԶԵՍ» ՍՊԸ-ի՝ 2020 թվականի հոկտեմբերի 30-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

«ՌԱՄԶԵՍ» ՍՊԸ-ն Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով վիճարկել է նաև ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի սահմանադրականությունը: Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ սույն գործի շրջանակում ներկայացված անհատական դիմումը՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի մասով, ակնհայտ անհիմն է, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ինչպես նաև 69-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերի պահանջներով, 2021 թվականի հունվարի 27-ի ՍԴԱՌ-17 աշխատակարգային որոշմամբ գործի վարույթն այդ մասով կարճել է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթներն ու դրանց հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթներում որոշակի և հստակ չի նախատեսվում վճարբեկության կարգով բողոքարկման ենթակա դատական ակտերի շրջանակը, ինչը հակասում է Սահմանադրության 75-րդ և 79-րդ հոդվածներին:

Օրենսգրքի 155-րդ հոդվածի 3-րդ մասով, 371-րդ հոդվածի 6-րդ մասով, 380-րդ հոդվածի 5-րդ մասով, 383-րդ հոդվածի 3-րդ մասով և 384-րդ հոդվածի 2-րդ մասով վճարբեկության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերն իրենց բնությամբ վճռորոշ և/կամ գործի քննությունը եզրափակող բնույթ չունեն, հետևապես այսպիսի պայմաններում անհասկանալի և անընդունելի է օրենսդրի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը վճարբեկության կարգով բողոքարկելու իրավունքի սահմանափակումը: Եթե նույնիսկ պայմանականորեն ընդունենք, որ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը միջանկյալ դատական ակտ է, ապա վճարբեկության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի լույսի ներքո այդ որոշման բողոքարկման իրավունքի սահմանափակումն արդարացված չէ, չունի օբյեկտիվ հիմք, առավել ևս երբ այդ որոշման բողոքարկման իրավունքի ուղղակի ցուցումը տրվել էր Սահմանադրական դատարանի կողմից:

Դիմողի կարծիքով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի կողմից դատական ակտով անձի իրավունքների խախտում արձանագրվելու դեպքում օրենսդրի կողմից բողոքարկման իրավունքի սահմանափակման վերաբերյալ իրավակարգավորումներն անթույլատրելի են: Եթե Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կամ Սահմանադրական դատարանն արձանագրում են անձի իրավունքի խախտում, ապա Վճռաբեկ դատարանին ոչինչ չի մնում, քան բեկանել կայացված միջանկյալ կամ եզրափակիչ դատական ակտը այդպիսով այդ մասով վերականգնել անձի խախտված իրավունքը: Մինչդեռ օրենսդիրն Օրենսգրքի 423-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսել է այնպիսի կառուցակարգ, որով Վճռաբեկ դատարանին հնարավորություն է տվել դատական ակտը նոր հանգամանքի հիմքով վերանայելու բողոքը թողնել առանց քննության կամ մերժել վարույթ ընդունելը:

Բացի դրանից, Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ դատական ակտը Վճռաբեկ դատարանի կողմից նոր հանգամանքի հիմքով կարող է վերանայվել, եթե տվյալ դատական ակտը բողոքարկման ենթակա դատական ակտ է, հակառակ դեպքում այն նոր հանգամանքի հիմքով չի կարող վերանայվել՝ անկախ նրանից, թե Մարդու իրավունքների եվրոպական դատարանը կամ Սահմանադրական դատարանը համապատասխան դատական ակտով ինչ եզրահանգման է եկել:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշման ուսումնասիրության արդյունքների հիման վրա գտնում է, որ դիմողի կողմից վիճարկվող Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասը և 423-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի նկատմամբ ուղղակիորեն չեն կիրառվել:

Պատասխանողը նշել է, որ Օրենսգրքում օրենսդրի կողմից միջանկյալ դատական ակտերի հասկացությունների սահմանումների չնախատեսումը պայմանավորված է դրանց առանց պարզաբանման միանշանակ ընկալվելու հատկանիշով:

Ըստ պատասխանողի՝ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա են վերա-քննիչ դատարանի այն միջանկյալ դատական ակտերը, որոնց դեպքում օրենքով նախատեսված է վճռաբեկության կարգով բողոքարկման հնարավորություն, ընդ որում՝ օրենսդիրը սպառիչ կերպով սահմանել է այդ դատական ակտերը: Չնայած այն հանգամանքին, որ վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը մեկ հոդվածի շրջանակում ներկայացված չեն, այնուամենայնիվ, Օրենսգրքի համակարգային վերլուծությունից ակնհայտ է, որ օրենսդրի կողմից սպառիչ նշված են, թե վերաքննիչ դատարանի ուր միջանկյալ դատական ակտերն են ենթակա բողոքարկման վճռաբեկության կարգով:

Բացի դրանից, վիճարկվող դրույթները բավարարում են իրավական օրենքին ներկայացվող պահանջներին՝ հաշվի առնելով, որ դրանք բավարար չափով կանխատեսելի են, համապատասխանում են իրավական որոշակիության սկզբունքին:

**3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները**

Սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը պարզելու հա-

մար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

1) քաղաքացիական դատավարությունում վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի շրջանակը սահմանվել է արդյոք Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված՝ որոշակիության սկզբունքին համապատասխան.

2) արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքը պահանջում է արդյոք քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումը վճռաբեկության կարգով բողոքարկելու հնարավորության պարտադիր առկայություն.

3) վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, սակայն վճռաբեկության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու արգելքը համահունչ է արդյոք Սահմանադրության 75-րդ հոդվածի պահանջներին՝ փոխկապակցված Սահմանադրության 61-րդ հոդվածի հետ.

4) արդյունավետ դատական պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու պահանջի տեսանկյունից կարո՞ղ է արդյոք Վճռաբեկ դատարանն օժտված լինել նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքն առանց քննության թողնելու կամ բողոքը վարույթ ընդունելը մերժելու լիազորությամբ.

5) Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված՝ վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու հիմքի առկայությունը խոչընդոտում է արդյոք վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, սակայն վճռաբեկության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերի վերանայումը նոր հանգամանքներով՝ հակասության մեջ մտնելով արդյունավետ դատական պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու պահանջի հետ:

#### **4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրական դատարանը փաստում է, որ վիճարկվող որոշ իրավադրույթների՝ Սահմանադրությանն անհամապատասխանության վերաբերյալ դիմողը նշում է, որ դրանցով որոշակի և հստակ չի նախատեսվում վճռաբեկության կարգով բողոքարկման

ենթակա վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի շրջանակը, ինչը հակասում է Սահմանադրության 75 և 79-րդ հոդվածներին: Դիմողի այս դիրքորոշումը վերաբերում է Օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասին, 10-րդ հոդվածի 2-րդ մասին, 388-րդ հոդվածի 1-ին մասին և 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետին:

Նախ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, թե որոնք են միջանկյալ դատական ակտերը, 10-րդ հոդվածի 2-րդ մասը որպես Օրենսգրքի հիմնական/ընդհանուր դրույթ ամրագրում է վճարելության կարգով դատական ակտերի բողոքարկումը, իսկ Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը վճարել բողոքն առանց քննության թողնելու հիմքերի շարքում նախատեսում է վճարելության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ բողոքարկվելու դեպքը: Հաշվի առնելով նշված իրավանորմերի կարգավորման առարկան՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ դրանցով վճարելության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շրջանակի սահմանված չլինելը սահմանադրականության առումով խնդրահարույց չէ: Հետևաբար, այդ իրավադրույթները Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հարցի տեսանկյունից սահմանադրականության խնդիր չեն հարուցում, քանի որ վճարելության կարգով բողոքարկման ենթակա վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի շրջանակի սահմանումը դրանց կարգավորման առարկայում չի ներառվում:

**4.2.** Մինևույն ժամանակ քննարկվող հարցի համատեքստում առանցքային նշանակություն ունի Օրենսգրքի 388-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումը: Անդրադառնալով նշված իրավանորմով սահմանված վճարելության կարգով բողոքարկման ենթակա վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի շրջանակին վերաբերող իրավակարգավորման իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքին համապատասխանելու հարցին՝ Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ իր բազմաթիվ որոշումներում արդեն իսկ անդրադարձել է քննարկվող սկզբունքին՝ նշելով, մասնավորապես, հետևյալը.

- «(...) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համա-

պատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (18.04.2006թ. ՄԴՈ-630),

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008թ. ՄԴՈ-753),

- « (...) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության» (02.12.2014թ. ՄԴՈ-1176),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (09.06.2015թ. ՄԴՈ-1213),

- «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրոյթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով» (03.05.2016թ. ՄԴՈ-1270),

- «... իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակից-



ներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին» (03.05.2016թ. ՄԴՈ-1270):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր վճիռներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի գործով (*Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004*) վճռում Եվրոպական դատարանը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները:

Օրենսգրքի վիճարկվող՝ 388-րդ հոդվածի 1-ին մասը վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վճռաբեկ բողոքները Վճռաբեկ դատարանի կողմից քննվելու իրավական հնարավորությունը պայմանավորել է Օրենսգրքով նախատեսված դեպքի առկայությամբ: Այսինքն՝ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը վճռաբեկության կարգով ենթակա են բողոքարկման միայն այն դեպքում, երբ նման բողոքարկման հնարավորությունը նախատեսված է Օրենսգրքով:

Մինևույն ժամանակ, ի հակադրություն վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի՝ վերաքննության կարգով բողոքարկման ենթակա առաջին ատյանի դատարանի որոշումների ոչ սպառնիչ ցանկն օրենսդիրը սահմանել է առանձին հոդվածով (Օրենսգրքի 361-րդ հոդված): Այսինքն՝ եթե Օրենսգրքի 361-րդ հոդվածը հնարավորություն է տալիս որոշակի պատկերացում կազմել վերաքննության կարգով բողոքարկման ենթակա առաջին ատյանի դատարանի որոշումների շրջանակի մասին, ապա վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերի նման ցանկ (մեկ հոդվածով սահմանված) Օրենսգրքում առկա չէ: Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտի բողոքարկման դեպքի առկայությունը պարզելու համար բավարար է ուսումնասիրել Օրենսգրքի համապատասխան դրույթները, ինչի արդյունքում կարելի է առանձնացնել վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը:

Այսպիսով, Մահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդիրը բավարար հստակությամբ սահմանել է, թե վերաքննիչ դատարանի միջանկյալ ուր դատական ակտերը կարող են բողոքարկվել վճռաբեկության կարգով, ուստի անձը ողջամիտ սահմաններում ի վիճակի է կանխատեսել իր վարքագծի հետևանքները և հնարավորություն ունի իր վարքագիծը ներդաշնակեցնել սահմանված պահանջներին: Նման պայմաններում Օրենսգրքի քննարկվող դրույթներն իրավական որոշակիության առումով սահմանադրականության խնդիր չեն հարուցում:

**4.3.** Օրենսգրքի 388-րդ հոդվածի 1-ին մասով օրենսդիրը, ինչպես նշվեց, վերաքննիչ դատարանի միջանկյալ դատական ակտերը վճռաբեկության կարգով բողոքարկելու հնարավորություն է սահմանել միայն օրենքով սահմանված դեպքերում: Օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումների ուսումնասիրությունը վկայում է, որ վերաքննիչ դատարանի վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի շրջանակից դուրս են մնացել քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի միջանկյալ դատական ակտերի, այդ թվում՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումները: Հաշվի առնելով, որ տվյալ դեպքում դիմումը վերաբերում է միայն քաղաքացիական գործով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշմանը՝ Մահմանադրական դատարանը ստորև անդրադառնում է միայն այդ որոշման վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չլինելու սահմանադրականությանը:

Վերադաս դատարանների կողմից գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վերանայման հարցի վերաբերյալ առանցքային նշանակություն ունեցող դիրքորոշումներ են արտահայտվել Մահմանադրական դատարանի 2019 թվականի մայիսի 7-ի ՍԴՈ-1459 որոշման մեջ, որում, մասնավորապես, Մահմանադրական դատարանը, համադրելով Վճռաբեկ դատարանի գործառույթների վերաբերյալ սահմանադրական կարգավորումը վերաքննիչ դատարանների գործառույթն ամրագրող Մահմանադրության 172-րդ հոդվածի հետ, համաձայն որի՝ վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են, արձանագրել է.

1) վերընթաց վերանայման սահմանափակման սկզբունքն ածանցվում է Սահմանադրության հիշյալ պահանջներից՝ համակցված Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի հետ, և ենթադրում է վերանայման ծավալի սահմանափակում՝ առաջին ատյանի դատարաններից մինչև Վճռաբեկ դատարան «որքան ավելի բարձր է դատական ատյանը, այնքան ավելի սահմանափակ է վերանայման ծավալը» կանոնի համաձայն,

2) ըստ էության դատական ակտերի վերանայումը վերադաս դատարանների հիմնական գործառույթն է արդարադատության էությունը, իսկ նրանց այլ լիազորությունների շրջանակն օրենսդրի կողմից՝ Սահմանադրությամբ կանխորոշված դեպքերից բացի, կարող է էլ ավելի սահմանափակվել՝ ելնելով արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքի իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ապահովելու անհրաժեշտությունից, ...:

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ օրենքով թույլատրվելու դեպքում **գործն ըստ էության չլուծող դատական ակտերի վիճարկումը վճռաբեկ ատյանում պետք է լինի բացառություն, այլ ոչ թե կանոն**՝ այնպես, ինչպես վերաքննիչ ատյանում չեն կարող վիճարկվել առաջին ատյանի դատարանի բոլոր միջանկյալ դատական ակտերը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրությունը չի պահանջում, որ քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի կայացրած բոլոր միջանկյալ դատական ակտերն անվերապահորեն ենթակա լինեն բողոքարկման վերաքննության կարգով, այն չի ենթադրում նաև քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի կայացրած բողոքարկման ենթակա միջանկյալ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված բոլոր որոշումների բողոքարկման հնարավորություն վճռաբեկության կարգով:

Տվյալ դեպքում քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի կայացրած հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումների (բացառությամբ Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված հիմքով հայցադիմումը վերադարձվելու դեպքի) կապակցությամբ սահմանվել է միաստիճան բողոքարկման համակարգ՝ այդ դատական ակտերի վերանայում վերաքննության կարգով, ինչից հետո Վճռաբեկ դատարանն ղիմելու հնարավորություն նախատեսված չէ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի գործառույթներն արդյունավետորեն իրականացնելու համար անհրաժեշտ պայմաններ ստեղծելու նպատակով օրենսդիրը քննարկվող դատական ակտի դեպքում սահմանափակել է Վճռաբեկ դատարանի մատչելիությունը՝ նկատի ունենալով, որ առանձին միջանկյալ հարցերի քննությունը կարող է նաև անհարկի ծանրաբեռնել Վճռաբեկ դատարանը և խոչընդոտել ողջամիտ ժամկետում բուն արդարադատության իրականացումը, ինչը կարող է հակասության մեջ մտնել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված հիմնական իրավունքի հետ:

Քննարկվող հարցի կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև ընդգծել, որ գործող իրավակարգավորումների համաձայն՝ քաղաքացիական գործով առաջին ատյանի դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու դեպքում անձն ունենում է այն վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն (բացառությամբ Օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով սահմանված հիմքով հայցադիմումը վերադարձվելու դեպքի): Այսինքն՝ օրենսդիրը չի բացառում քաղաքացիական գործով հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման օրինականությունն օրենքով սահմանված կարգով վիճարկելու հնարավորությունը, այլ բողոքարկումը սահմանափակում է վերաքննիչ դատական ատյանով:

Ինչ վերաբերում է դիմումում նշված՝ վերաքննիչ դատարանի կողմից կայացվող միջանկյալ այլ դատական ակտերի հետ համեմատությանը, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 155-րդ, 371-րդ, 380-րդ (5-րդ մաս), 383-րդ և 384-րդ հոդվածներում նշված որոշումներն ունեն ընդհանուր հատկանիշ, որով տարբերվում են հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կողմից կայացված որոշումից. դրանք վերաքննիչ դատարանի կողմից չեն կայացվում առաջին ատյանի դատարանի միջանկյալ որոշման դեմ բերված բողոքի քննության արդյունքով, ինչով էլ պայմանավորված՝ օրենսդիրն անհրաժեշտ է համարել անձանց համար սահմանել այդ որոշումները առնվազն մեկ ատյանում (տվյալ դեպքում՝ Վճռաբեկ դատարանում) բողոքարկելու հնարավորություն: Հետևաբար, քննարկվող դատական ակտերը վճռաբե-

կույթյան կարգով բողոքարկելու հնարավորություն նախատեսելու հարցում օրենսդրի կողմից նույնական մոտեցում չդրսևորելը խնդրահարույց չէ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն օրենսդրի կողմից ընտրված այն լուծումը, համաձայն որի՝ առկա է քաղաքացիական գործով առաջին աստիճանի դատարանի կողմից հայցադիմումը վերադարձնելու մասին որոշումը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորություն, սակայն նախատեսված չէ այդ բողոքի քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումը վճարելիության կարգով բողոքարկելու հնարավորություն, սահմանադրականության առումով ինքնին խնդրահարույց չի համարում: Ասվածը չի վերաբերում այդ դատական ակտը նոր հանգամանքներով վերանայելու վճարելի բողոք ներկայացնելուն, որին վերաբերում են ստորև շարադրված դիրքորոշումները:

**4.4.** Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետից և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասից հետևում է, որ անհատական դիմումով անձը կարող է վիճարկել միայն իր նկատմամբ **կիրառված** նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը: Ընդ որում, Սահմանադրական դատարանը 2008 թվականի ապրիլի 4-ի ՍԴՈ-747 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում այն մասին, որ «(...) «կիրառում» հասկացությունը չի վերաբերում դատական ակտերում օրենքի այս կամ այն դրույթի ցանկացած վկայակոչման: Միայն այն պարագայում դա կարող է դիտարկվել որպես օրենքի դրույթի «կիրառում», երբ անձի համար այն առաջացնում է իրավական հետևանքներ: Բոլոր այն դեպքերում, երբ վկայակոչումն ունի ծանուցողական բնույթ կամ դրա միջոցով դատավարության կողմի ուշադրությունն է հրավիրվում իր գործողությունների օրինականության վրա, հարցի սահմանադրականության բարձրացման տեսանկյունից չի կարող դիտարկվել որպես օրենքի դրույթի կիրառում»:

Հնարավոր են նաև այնպիսի իրավիճակներ, ինչպես սույն գործով, երբ դատական ակտերի ուսումնասիրության արդյունքում ակնհայտ է դառնում դիմողի նկատմամբ իրավական հետևանքների առաջացումը դատական ակտում անմիջականորեն չվկայակոչված

նորմերով: Հետևաբար, «նորմատիվ իրավական ակտի դրույթի կիրառում» է համարվում նաև այն դեպքը, երբ դատական ակտերում բացակայում է նորմատիվ իրավական ակտի որևէ դրույթի վկայակոչում, սակայն դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ դիմողի համար իրավական հետևանքներ է առաջացրել չվկայակոչված դրույթի փաստացի կիրառումը:

Տվյալ դեպքում դիմողը Վճռաբեկ դատարան է ներկայացրել նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոք: Թեև վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշմամբ Վճռաբեկ դատարանն ուղղակիորեն չի վկայակոչել դիմողի կողմից վիճարկվող Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասը և 423-րդ հոդվածի 2-րդ մասը, սակայն արձանագրելով, որ վճռաբեկության կարգով բողոքարկվել է հայցադիմումը վերադարձնելու մասին առաջին ատյանի դատարանի որոշման դեմ բերված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված վերաքննիչ դատարանի որոշումը, որը միջանկյալ դատական ակտ է և վճռաբեկության կարգով բողոքարկման ենթակա չէ, եկել է այն եզրահանգման, որ վճռաբեկ բողոքն անհրաժեշտ է թողնել առանց քննության: Վերոգրյալի հիման վրա, հաշվի առնելով Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով և 423-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կարգավորումները Մահմանադրական դատարանը գտնում է, որ չնայած վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին Վճռաբեկ դատարանի որոշման մեջ վերոգրյալ դրույթների վկայակոչված չլինելու հանգամանքին՝ դրանք փաստացի կիրառվել են դիմողի նկատմամբ՝ նրա համար առաջացնելով իրավական հետևանքներ, ինչը հնարավոր է դարձնում դիմողի կողմից նաև այդ դրույթների սահմանադրականության վիճարկումը:

**4.5.** Անդրադառնալով Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցին՝ Մահմանադրական դատարանը դիմումի քննության արդյունքներով նախ՝ արձանագրում է, որ թեև վիճարկվող դրույթում համապատասխան իրավակարգավորումը վերաբերում է ինչպես նոր, այնպես էլ նոր երևան եկած հանգամանքներին, այնուամենայնիվ, սույն գործով քննությունը վերաբերում է դրա սահմանադրականությանը միայն նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայմանը վերաբերող մասով, քանի որ դիմողի նկատմամբ այդ դրույթը կիրառվել է միայն այդ մասով, և դիմողը նշված դրույթի սահմանադրականությունը վիճարկում է միայն նոր հանգամանքներով դատական ակտերը վերանայելու առնչությամբ:

4.6. Օրենսգրքով սահմանված իրավակարգավորումներից հետևում է, որ վերաքննիչ դատարանի այն դատական ակտերը, որոնք ենթակա են վճռաբեկության կարգով բողոքարկման, կարող են բողոքարկվել օրենքով սահմանված ցանկացած հիմքով, այդ թվում՝ օրինական ուժի մեջ մտած լինելու դեպքում՝ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով, իսկ վճռաբեկության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերը որևէ հիմքով բողոքարկման ենթակա չեն, ուստի դրանք չեն կարող վերանայվել նաև նոր հանգամանքներով: Փաստորեն, օրենսդիրը վերաքննիչ դատարանի դատական ակտերի՝ վճռաբեկության կարգով բողոքարկման հարցը կարգավորելիս որևէ տարբերություն չի դրել բողոքարկման հիմքերի միջև, այսինքն՝ դատական ակտը բողոքարկվում է բացառիկ նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով, թե՛ նոր և նոր երևան եկած հանգամանքի ի հայտ գալու հիմքերից տարբերվող հիմքերով:

Վերաքննիչ դատարանի բողոքարկման ոչ ենթակա դատական ակտը նոր հանգամանքներով վերանայելու իրավական հնարավորությունը բացառող Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասը Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դիտարկել Մահմանադրական դատարանի որոշումների իրավաբանական բնույթի, կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտի նշանակության, անձի խախտված իրավունքների՝ Մահմանադրական դատարանի միջոցով դատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության համատեքստում:

Մահմանադրական դատարանը մի շարք որոշումներում անդրադարձել է ՀՀ **ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների ակտերի համակարգում** իր որոշումների առանձնահատուկ իրավաբանական բնույթին. «Մահմանադրական դատարանի որոշումների և դատական այլ ակտերի բնույթի, բովանդակության և դրանց իրավաբանական ուժի համեմատական վերլուծությունը վկայում է, որ.

- սահմանադրական արդարադատություն իրականացնելը և այդ գործառույթի շրջանակներում գործով ըստ էության որոշում կայացնելը, (...), ՀՀ սահմանադրական դատարանի բացառիկ իրավասությունն է (ՀՀ Մահմանադրության 92-րդ հոդվածի երկրորդ մաս և 93-րդ հոդված), *[համանման կարգավորում առկա է նաև 2015 թվականի փոփոխություններով Մահմանադրության 167-րդ հոդվածի 1-ին մասում և 171-րդ հոդվածի 1-ին մասում]*,

- քննելով սահմանադրական (հանրային-իրավական բնույթի) գործեր՝ սահմանադրական դատարանը կայացնում է որոշումներ,

որոնք ենթակա են պարտադիր կատարման դատական համակարգի մյուս մարմինների՝ ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված բոլոր դատարանների կողմից,

- իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելիս, ելնելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19 և 63-րդ հոդվածների պահանջներից [2018 թվականի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ և 63-րդ հոդվածներ], սահմանադրական դատարանը գնահատում է նաև արդարադատական (ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարանների) պրակտիկան, բացահայտելով նաև կիրառվող (այդ թվում՝ դատական պրակտիկայում) օրենքների (դրանց առանձին դրույթների) սահմանադրաիրավական բովանդակությունը՝ զարգացնելով ինչպես սահմանադրական, այնպես էլ ճյուղային իրավունքը,

- իրավական ակտերի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշմանը հաջորդում են իրավական հետևանքներ (նոր հանգամանքներ), որոնք պարտադիր հանգեցնում են օրենքով սահմանված կարգով դատական ակտերը վերանայելուն,

- սահմանադրական դատարանն իր որոշումներով ըստ էության մեկնաբանում է ՀՀ Սահմանադրությունը,

- սահմանադրական դատարանի որոշումները վիճարկման ենթակա չեն ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային որևէ դատարանում» (25.02.2011թ. ՄԴՈ-943):

Նույն որոշմամբ Սահմանադրական դատարանն արձանագրել է նաև, որ՝ «(...) առաջնորդվելով ՀՀ Սահմանադրության հիմնարար սկզբունքներով՝ սահմանադրական դատարանն իր որոշումներով և իր իրավասության շրջանակներում ապահովում է ինչպես անձանց (ֆիզիկական, իրավաբանական) խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումը, մարդու սահմանադրական իրավունքների անմիջական գործողությունը, այդ իրավունքներով պետության սահմանափակումը (ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդված), այնպես էլ սահմանադրական կարգի հիմունքների կայունությունը (սահմանադրական օրինականությունը), որով պարտավորեցնում է հանրային իշխանության բոլոր մարմիններին ու պաշտոնատար անձանց ձեռնարկել արդյունավետ միջոցներ կատարելու սահմանադրական դատարանի որոշումների պահանջները, այդ թվում ՀՀ ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններին՝ մեկնաբանելու և կիրառելու օրենքներն իրենց սահմա-



նադրաիրավական բովանդակությանը համապատասխան, ինչպես նաև նոր հանգամանքների հիմքով վերանայելու անձանց նկատմամբ կայացված դատական ակտերը»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերով կայացված որոշումների հիման վրա անհրաժեշտ օրենսդրական ընթացակարգերով դատական ակտերի վերանայումը Սահմանադրության գերակայությունը երաշխավորող արդյունավետ միջոց է, հետևաբար՝ նաև սահմանադրաիրավական պահանջ:

Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայության պայմաններում դատական ակտի վերանայման անհրաժեշտությունը բխում է նաև կոնկրետ գործերով սահմանադրական վերահսկողության ինստիտուտի էությունից և նշանակությունից:

Այսպես՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներից մեկում նշել է, որ Սահմանադրական դատարանի կողմից իրականացվող կոնկրետ վերահսկողությանը, մասնավորապես, բնորոշ է իրավական ակտի սահմանադրականության մասին որոշման տարածումը տվյալ գործին առնչվող իրավահարաբերությունների վրա: Կոնկրետ վերահսկողության դեպքում առաջին պլան է մղվում նաև անհատական շահերի պաշտպանության խնդիրը (15.04.2008թ. ՄԴՈ-751): Անդրադառնալով 2005 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո Հայաստանի Հանրապետությունում ներդրված անհատական սահմանադրական դիմումին (գանգատին) Սահմանադրական դատարանը նշել է, որ դրա հիմքում ընկած են անձի սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության գաղափարն ու նպատակը: «Այս նպատակի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա՝ անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնում: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ պայմանավորված անհատական սահմանադրական գանգատի այս կամ այն մոդելի ընտրությամբ և առանձնահատկություններով՝ սահմանադրական արդարադատության մարմինների որոշումների հիման վրա՝ խախտված սահմանադրական իրավունքների վերականգնման մեխանիզմները տարբեր են: Անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտ ունեցող երկրներում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումն իրականացվում է հենց սահմանադրական դատարանի կողմից, որը,

հակասահմանադրական ճանաչելով վիճարկվող նորմը կամ նորմի կիրառումը, միաժամանակ վերացնում է նաև հակասահմանադրական նորմ կիրառած կամ անձի սահմանադրական իրավունքը խախտած դատական ակտը: Նման մեխանիզմի դեպքում պետությունն ինքն է ապահովում խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումը սահմանադրական արդարադատության շրջանակներում՝ կատարելով քաղաքացիների սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության իր պարտավորությունը: Այն երկրներում, որտեղ սահմանադրական վերահսկողության օբյեկտ են հանդիսանում միայն դատական ակտերով կիրառված օրինադրույթները, խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը երաշխավորվում է սահմանադրական դատարանների որոշումների հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի միջոցով» (15.07.2011թ. ՄԴՈ-984):

Հաշվի առնելով, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է այն մոտեցումը, համաձայն որի՝ Սահմանադրական դատարաններ կայացվող դիմումով անձը կարող է միայն վիճարկել դատարանի վերջնական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի, սակայն ոչ հակասահմանադրական նորմ կիրառած կամ իր սահմանադրական իրավունքը խախտած դատական ակտի սահմանադրականությունը, անձի խախտված սահմանադրական իրավունքի վերականգնումը պետք է կատարվի դատական ակտի վերանայման միջոցով:

Այսինքն՝ Սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման ինստիտուտի միջոցով ապահովվում է խախտված սահմանադրական իրավունքների վերականգնումը: Խախտված իրավունքների վերականգնումը պահանջում է խախտման արդյունքում տվյալ անձի համար առաջացած բացասական հետևանքների վերացում, ինչն իր հերթին պահանջում է հնարավորինս վերականգնել մինչև իրավախախտումը գոյություն ունեցած վիճակը (*restitutio in integrum*) (15.07.2011թ. ՄԴՈ-984): Ըստ այդմ «(...) սահմանադրական դատարան դիմելու՝ անձի իրավունքի արդյունավետ իրացումը պահանջում է սահմանադրական դատարանի որոշման հիման վրա դատական ակտերի վերանայման այնպիսի լիարժեք օրենսդրական կարգավորում, որը հնարավորություն կտա անձին վերականգնելու սահմանադրական դատարանի կողմից Սահմանադրությանը հակասող ճանաչված նորմատիվ ակտի կիրառման արդյունքում խախտված իր սահմանադրական իրավունքը» (31.05.2013թ. ՄԴՈ-1099):

Վերը նշված մոտեցումներին համահունչ՝ Սահմանադրական դատարան ներկայացված անհատական դիմումի հիման վրա անձի սահմանադրական իրավունքների պաշտպանության համակարգի լիարժեքությունն ու արդյունավետությունն ապահովելու նպատակով օրենսդիրը նախատեսել է անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ Սահմանադրական դատարանի որոշման արդյունքում տվյալ դիմողի առնչությամբ կայացված դատական ակտի վերանայման հնարավորությունը: Մասնավորապես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Կոնկրետ գործերով վերջնական դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականությունը որոշելու վերաբերյալ գործերի քննությունը ֆիզիկական և իրավաբանական անձանց դիմումների հիման վրա» վերտառությամբ 69-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված է, որ նույն հոդվածում նշված գործերով՝ նորմատիվ իրավական ակտի դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանը, այդ դրույթն իր մեկնաբանությամբ ճանաչելով Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ գտել է, որ այն նրա նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

Ընդ որում, Սահմանադրական դատարանի 2018 թվականի մայիսի 15-ի ՍԴՈ-1417 որոշման համաձայն՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ «(...) դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով», յուրաքանչյուր դեպքում Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասում անհրաժեշտ չէ ամրագրել, քանի որ այն պարտադիր է հիշյալ սահմանադրական օրենքի ուժով:

Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասը նոր հանգամանքներով դատական ակտի վերանայումը հնարավոր է համարել առաջին ատյանի և վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, միայն բողոքարկման ենթակա դատական ակտերի դեպքում: Արդյունքում ստեղծվում է իրավիճակ, երբ անձի անհատական դիմումի հիման վրա ընդունված՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ նորմատիվ իրավական ակտի՝ դիմողի նկատմամբ

կիրառված դրույթը ճանաչվում է Սահմանադրությանը հակասող և անվավեր կամ նորմատիվ իրավական ակտի դիմողի նկատմամբ կիրառված դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ ճանաչվում է Սահմանադրությանը համապատասխանող, միաժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ այդ դրույթը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ, սակայն չի ապահովվում դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտի վերանայումը (ինչպես նշվեց, այդ պահանջը սահմանված է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասով)՝ Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արգելքի պատճառով:

Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ դատավարական օրենսդրությամբ սահմանված իրավակարգավորումները չպետք է խոչընդոտեն Սահմանադրական դատարանի որոշումների կատարումը, անձի խախտված իրավունքների վերականգնումը: Հետևաբար, Սահմանադրական դատարանը, ընդունելով, որ հնարավոր են դեպքեր, երբ նախատեսված չէ վերաքննիչ դատարանի որոշ դատական ակտերի բողոքարկման հնարավորություն վճռաբեկության կարգով, միաժամանակ ընդգծում է, որ բողոքարկման այդ սահմանափակումը չի կարող վերաբերել այն դեպքերին, երբ վճռաբեկ բողոքը ներկայացվում է Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայությամբ պայմանավորված՝ նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման նպատակով: Անձը պետք է ունենա վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած, նաև այլ հիմքերով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտը նոր հանգամանքներով վերանայելու բողոք ներկայացնելու հնարավորություն այն դեպքում, երբ դա անհրաժեշտ է իր նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը վերանայելու համար՝ պայմանավորված Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման առկայությամբ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արգելքի գոյությունն իմաստագրկում է որոշ դեպքերում Սահմանադրական դատարան անհատական դիմումներ ներկայացնելը, քանի որ Սահմանադրական դատարանի կողմից կայացվող որոշումը, փաստորեն, դիմողի համար կոնկրետ գործով չի կարող լինել վերջնական դատական ակտի վերանայման նախադրյալ, արգելափակվում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության առումով Սահմանադրական դատարանի որոշման կատարումը, փակուղի է մտնում իրավունքի

գերակայության, հետևաբար և Սահմանադրության գերակայության երաշխավորման սկզբունքի իրացումը: Ավելին, այդ արգելքի առկայության պայմաններում որոշ դեպքերում հնարավորություն չի ստեղծվում անձի խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնման և պաշտպանության համար:

4.7. Սահմանադրության 61-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերին համապատասխան իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրով մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններ դիմելու անձի իրավունքը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում սույն որոշմամբ նաև քննարկել մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններից մեկի՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կոնվենցիոն իրավունքների խախտման փաստի արձանագրման հետևանքով դատական ակտերի վերանայման հարցը՝ հաշվի առնելով, որ ներկայումս ՀՀ քաղաքացիները որպես իրենց իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային կառուցակարգ առավել հաճախ օգտվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանում գանգատարկման հնարավորությունից:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ «(...) վճիռը, որով Դատարանն արձանագրել է իրավունքի խախտում, Պատասխանող պետությանը պարտավորեցնում է վերջ տալ խախտմանը և դրա հետևանքների դիմաց հատուցել այնպես, որ հնարավորինս վերականգնվի մինչև խախտումը գոյություն ունեցած վիճակը» (*Case of Papamichalopoulos and others v. Greece, application no. 14556/89, 31/10/1995*):

Եվրոպական դատարանի այս վճռում արտահայտված *restitutio in integrum* սկզբունքը հետագայում իր արտացոլումը գտավ Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի՝ «Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների հիման վրա ներպետական մակարդակում որոշ գործերի վերաքննության կամ վերաբացման մասին» R (2000) 2 հանձնարարականում: Սահմանադրական դատարանը հարկ է համարում ընդգծել, որ հիշյալ հանձնարարականի համաձայն Դատարանի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնելուն ուղղված Նախարարների կոմիտեի պրակտիկան ցույց է տալիս, որ բացառիկ հանգամանքներում գործերի վերաքննությունը կամ վարույթի վերաբացումը հանդիսանում

է ամենաարդյունավետ, եթե ոչ միակ միջոցը մինչև խախտումը գոյություն ունեցած վիճակը վերականգնելուն (restitutio in integrum) հասնելու համար, ուստի Նախարարների կոմիտեն խրախուսում է Պայմանավորվող պետություններին, մասնավորապես, ուսումնասիրել իրենց ազգային իրավական համակարգերը՝ ապահովելու գործի վերաքննության համարժեք հնարավորությունների առկայություն, այդ թվում՝ վարույթի վերաբացումը, այն դեպքերում, երբ Դատարանը գտել է Կոնվենցիայի խախտում:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն դեպքում, երբ անձի կոնվենցիոն իրավունքը խախտվել է օրինական ուժի մեջ մտած դատական ակտով, անձը պետք է ունենա այդ իրավունքի վերականգնման նպատակով դատական ակտի վերանայման բողոք ներկայացնելու հնարավորություն:

Նշված դիրքորոշմանը համահունչ՝ Օրենսգրքի 419-րդ հոդվածով օրենսդիրը սահմանել է, որ նոր հանգամանքները հիմք են դատական ակտի վերանայման համար, ի թիվս այլնի, եթե Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրի հիման վրա գործող միջազգային դատարանի՝ ուժի մեջ մտած վճռով կամ որոշմամբ հիմնավորվել է անձի՝ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրով նախատեսված իրավունքի խախտման փաստը, կամ եթե անձը տվյալ վճռի կամ որոշման ուժի մեջ մտնելու պահին ունեցել է այդ իրավունքը միջազգային պայմանագրով նախատեսված պահանջներին (Ժամկետներին) համապատասխան իրացնելու հնարավորություն:

Սակայն անձի կոնվենցիոն իրավունքի խախտումն արձանագրող դատական ակտի առկայության պայմաններում վերաքննիչ դատարանի դատական ակտը նոր հանգամանքներով վերանայելու իրավական հնարավորություն առկա է միայն այն դեպքում, երբ այդ դատական ակտը ենթակա է վճռաբեկության կարգով բողոքարկման: Այլապես դատական ակտի վերանայման միջոցով մինչև խախտումը գոյություն ունեցած վիճակի վերականգնումն անհնար է: Հետևաբար, Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, սակայն բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերը նոր հանգամանքներով վերանայելու արգելքը ոչ միայն չի ապահովում արդյունավետ դատական պաշտպանության անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր, այլև դրա կիրառումը կարող է հակասել նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային մի շարք պարտավորություններին:

Այսպիսով, Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով բացառում է վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած, սակայն բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերի վերանայումը նոր հանգամանքներով, հակասում է Սահմանադրության 61-րդ և 75-րդ հոդվածներին:

**4.8.** Դիմողը նշում է նաև, որ Վճռաբեկ դատարանը չի կարող ունենալ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոքն առանց քննության թողնելու կամ այն վարույթ ընդունելը մերժելու լիազորություն:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այն հանգամանքը, որ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման, դեռևս չի նշանակում, որ ցանկացած դեպքում պետք է վերանայման վարույթ հարուցվի: Այսպես ինչպես բխում է նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասից նոր հանգամանքներով դատական ակտի վերանայումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով, իսկ օրենքով իրավաչափորեն սահմանվում են նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոքին և այն ներկայացնելուն առնչվող պահանջներ և սահմանափակումներ (օրինակ սուբյեկտային կազմի, բողոք ներկայացնելու ժամկետի, կոնկրետ դատական ակտը վերանայելու իրավասություն ունեցող դատարանի վերաբերյալ), որոնք չպահպանելը պետք է հանգեցնի համապատասխան իրավական հետևանքների, այդ թվում՝ նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու վարույթ չհարուցելուն: Այսինքն միայն այն հանգամանքը, որ օրենսդիրը որոշ դեպքերում Վճռաբեկ դատարանին օժտել է նոր հանգամանքներով դատական ակտի վերանայման բողոքն առանց քննության թողնելու կամ այն վարույթ ընդունելը մերժելու լիազորությամբ, սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ: Այլ հարց է, թե վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու կամ այն վարույթ ընդունելը մերժելու կոնկրետ հիմքը որքանով կարող է կիրառելի լինել նոր հանգամանքներով դատական ակտը վերանայելու բողոքի նկատմամբ, և արդյոք իրավաչափ է այդ հիմքի տարածումը նաև նշված բողոքի նկատմամբ:

Հաշվի առնելով, որ դիմողի ներկայացրած վճռաբեկ բողոքը Վճռաբեկ դատարանն առանց քննության է թողել վճռաբեկության կարգով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտ բողոքարկվելու հիմքով, Սահմանադրական դատարանը բարձրացված խնդիրը

դիտարկում է վճարեկ բողոքն առանց քննության թողնելու այդ հիմքի տեսանկյունից՝ հաշվի առնելով նաև Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույթի սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի՝ սույն որոշմամբ արտահայտված դիրքորոշումները:

Վճարեկ բողոքն Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով առանց քննության թողնելու հարցը քննելիս Վճարեկ դատարանը պարզում է, թե արդյոք բողոքարկվող դատական ակտը ենթակա է վճարեկության կարգով բողոքարկման, թե ոչ:

Սահմանադրական դատարանը ևս մեկ անգամ փաստում է, որ այն դեպքում, երբ անձը ներկայացնում է վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած, սակայն բողոքարկման ոչ ենթակա դատական ակտը նոր հանգամանքներով վերանայելու բողոք, այդ բողոքը գործող իրավակարգավորումների պայմաններում թողնվում է առանց քննության այն հիմքով, որ բողոքարկվել է այն դատական ակտը, որը ենթակա չէ բողոքարկման վճարեկության կարգով: Սակայն այս իրավիճակում խնդիրն առաջանում է ոչ թե Վճարեկ դատարանի՝ վճարեկ բողոքը քննարկվող հիմքով առանց քննության թողնելու լիազորությունից, այլ այն կարգավորումից, որը բացառում է վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած, սակայն բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերի վերանայումը նոր հանգամանքներով: Նման դիրքորոշման հիմքում ընկած է այն հանգամանքը, որ հակառակ դեպքում, այսինքն՝ եթե բացակայի Օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ սույն որոշման 4.6-րդ և 4.7-րդ կետերում քննարկված արգելքը, անձը հնարավորություն կունենա վերաքննիչ դատարանի օրինական ուժի մեջ մտած, սակայն այլ հիմքերով բողոքարկման ոչ ենթակա դատական ակտը նոր հանգամանքներով վերանայելու բողոք ներկայացնել Վճարեկ դատարան, և վերջինս էլ Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքի առկայությունը պարզելիս հաշվի կառնի այդ դատական ակտի՝ նոր հանգամանքներով վերանայելու շրջանակներում վճարեկության կարգով բողոքարկման ենթակա լինելու հանգամանքը:

Այսպիսով, Օրենսգրքի 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 423-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանադրականության առումով խնդրահարույց չեն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին



մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**։

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդվածի 3-րդ մասը, 10-րդ հոդվածի 2-րդ մասը, 388-րդ հոդվածի 1-ին մասը, 396-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետը և 423-րդ հոդվածի 2-րդ մասը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 415-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով բացառում է վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած, սակայն բողոքարկման ոչ ենթակա դատական ակտերի վերանայումը նոր հանգամանքներով, ճանաչել Սահմանադրության 61-րդ և 75-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

27 հունվարի 2021 թվականի  
ՍԴՈ-1573



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՎԱՀԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 95-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ՝ «(...) ԿԱՄ ՀԱՍՑԵԱՏԻՐՈՋ ԾԱՆՈՒՑՄԱՆ (ՀԱՇՎԱՌՄԱՆ) ՀԱՍՑԵՈՒՄ ՆՐԱ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԲՆԱԿՎՈՂ ԿԱՄ ԱՅԴ ՀԱՍՑԵՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ՉԱՓԱՀԱՍ ԱՆՁԻՆ» ԴՐՈՒՑԹԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

2 փետրվարի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող Վահան Խաչատրյանի ներկայացուցիչ Կ. Թումանյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածներին, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վահան Խաչատրյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության

քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» դրույթի՝ Մահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքին (այսուհետ նաև Օրենսգրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է.

«2. Ֆիզիկական անձի դեպքում դատական ծանուցագիրը պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին, բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձը գործի քննությանը մասնակցում է որպես հակադիր շահեր ունեցող կողմ»:

Ընդունումից ի վեր Օրենսգրքի 95-րդ հոդվածում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Գործի քննության առիթը Վահան Խաչատրյանի (ներկայացուցիչ՝ Կ. Թումանյան)՝ 2020 թվականի ապրիլի 27-ին Մահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, կողմերի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Մահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### 1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» իրավական ձևակերպումը չի համապատասխանում Մահմանադրության 1-ին հոդվածում նշված իրավական պետության սկզբունքին և Մահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ «Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք» ապահովող սկզբունքին, ինչպես նաև Մահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասում նշված՝ «Յուրաքանչյուր ոք ունի (...) քննության իրավունք» սկզբունքին:

Դիմողը մատնանշում է, որ օրենսդիրը չի նախատեսել՝ ստուգման ենթակա են արդյոք Օրենսգրքում նշված հանգամանքները (համատեղ բնակվելը, տվյալ հասցեում աշխատելը և չափահաս լինելը), ու մ կողմից պետք է ստուգվի նշված փաստերի իսկությունը, և հետագայում ո՞վ պետք է կրի այդ փաստերի ճշմարտացիության ապացուցման բեռը:

Դիմողը պնդում է, որ վիճարկվող իրավակարգավորումը, այն է՝ անձի մասնակցությունն իր վերաբերյալ գործի քննությանն ապահովելու դատավարական նորմը, ձևակերպված չէ այն աստիճանի հստակությամբ, որ դատավարության սուբյեկտների համար այն լինի բավարար կանխատեսելի դատավարական վարքագիծ կազմակերպելու համար, ինչպես նաև այդ նորմի կիրառողը կարողանա հիմնավորել նորմի կիրառման իրավաչափությունը:

Դիմողը գտնում է, որ «արդար դատաքննության իրավունքի» իրացումը կարող է սահմանափակվել բացառապես Սահմանադրությամբ նախատեսված նպատակներին հասնելու ձևով և միջոցներով: Այն չի կարող սահմանափակվել ձևական ընթացակարգերով: Արդար դատաքննության իրավունքը չի կարող սահմանափակվել դատավորների գործի քննությունը դյուրինացնելու համար: Դատավարական ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես Սահմանադրությամբ երաշխավորված՝ դատարանից օգտվելու, նիստին մասնակցելու իրավունքի սահմանափակման հիմնավորում:

Դիմողը պնդում է, որ արդար դատաքննության իրավունքի համատեքստում «իր վերաբերյալ գործի քննությանը մասնակցելու» իրավունքը պետք է լինի իրական և ոչ թե պատրանքային: Իսկ դա ենթադրում է, որ գործի քննությունն իրականացնող դատարանները պետք է միջոցներ ձեռնարկեն դատավարության կողմ հանդիսացող անձին իր վերաբերյալ քննվող գործի մասին տեղեկացնելու: Տեղեկացնող դատարանը պետք է ողջամիտ համոզմունք ունենա, որ իր վարույթում քննվող գործին մասնակցող կողմն ունի տեղեկություն այն մասին, որ իր իրավունքների վերաբերյալ գործ է քննության առնվում:

Ըստ դիմողի՝ դատական պաշտպանության իրավունքի ապահովումը չպետք է կրի ձևական բնույթ, որպեսզի շահագրգիռ անձը հավասար պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունքի իրացման հնարավորություն ունենա:

Ելնելով վերոնշյալից՝ դիմողը խնդրում է Մահմանադրական դատարանին Օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում նշված «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» ձևակերպումը ճանաչել Մահմանադրության 1-ին հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Ըստ պատասխանողի Օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասի բովանդակությունից երևում է, որ դատավարության մասնակցի նշած հասցեով (ծանուցման հասցե) ծանուցելը և ծանուցագիրը նրան անձամբ հանձնելն օրենսդիրը սահմանել է որպես ընդհանուր կանոն: Սակայն ծանուցումներից դիտավորյալ խուսափելը նվազագույնի հասցնելու, ինչպես նաև օբյեկտիվ պատճառներով ծանուցման հասցեատիրոջ՝ ծանուցման հասցեից ժամանակավոր բացակայելու դեպքում ծանուցումը հնարավոր դարձնելու, արդարադատության իրականացումը պատշաճ կազմակերպելու համար օրենսդիրը սահմանել է հնարավոր այն անձանց շրջանակը, որոնց կարող է հանձնվել ծանուցագիրը: Նրանք են՝ ծանուցման հասցեում ծանուցվողի հետ համատեղ բնակվող չափահաս անձինք:

Պատասխանողը նշում է, որ օրենսդիրը, առաջնորդվելով դատավարական խնայողության և գործի՝ ողջամիտ ժամկետում արդյունավետ քննության իրացման, ինչպես նաև քաղաքացիական դատավարության կանխատեսելիության սկզբունքներով, սահմանել է ծանուցման այնպիսի կառուցակարգ, որով բոլոր այն դեպքերում, երբ ինչ-ինչ պատճառներով անհնար է դատավարության մասնակցի նշած հասցեով (ծանուցման հասցե) անձամբ հասցեատիրոջը դատական ծանուցագիր հանձնելը, հնարավոր կդառնա հասցեատիրոջն այլ եղանակով այն «հասցնելը»:

Պատասխանողը գտնում է, որ օրենսդրի կողմից նման կարգավորման նախատեսումն ինքնանպատակ չէ, հետապնդում է դատավարության մասնակիցներին հնարավոր բոլոր միջոցներով իրազեկելու իրավաչափ նպատակ և բխում է ողջամիտ ժամկետում պատշաճ արդարադատության իրականացման, իրավական որոշակիության, քաղաքացիական դատավարության կանխատեսելիության և իրավական օրինականության սկզբունքներից:

Պատասխանողը, հղում կատարելով Վճռաբեկ դատարանի 05.04.2013թ. թիվ ԵԱՆԴ/0326/02/12 գործով որոշման մեջ արտա-

հայտված իրավական դիրքորոշմանը, նշում է, որ ծանուցման անդորրագրի վրա առկա ստորագրությունն այլ անձի կողմից կատարված լինելու դեպքում բողոք ներկայացրած կողմն ինքն է կրում իր վկայակոչած փաստի ապացուցման բեռը: Նման դեպքերում գործում է հասցեատիրոջ կողմից ստորագրված լինելու կանխավարկածը, քանի դեռ հակառակն ապացուցված չէ: Ըստ պատասխանողի նշված մոտեցումն ընդունելի է և կիրառվում է նաև եվրոպական մի շարք պետություններում:

Ելնելով վերոնշյալից պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

1) արդյոք Օրենսգրքի վիճարկվող դրույթը համապատասխանում է իրավական որոշակիության սկզբունքին այնքանով, որքանով բավարար չափով որոշակի է և հնարավորություն է տալիս իրավունքի սուբյեկտներին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթով ամրագրված պահանջին.

2) վիճարկվող դրույթը երաշխավորու մ է արդյոք ծանուցման, արդյունքում դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրականացման արդյունավետ կառուցակարգ:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Օրենսգրքի վիճարկվող դրույթի և դրա հետ համակարգային փոխկապվածության մեջ գտնվող այլ վերաբերելի դրույթների համալիր վերլուծությունից, մասնավորապես, հետևում է, որ

1) դատավարության մասնակիցները դատական նիստի ժամանակի և վայրի մասին ծանուցվում են դատական ծանուցագրի միջոցով (եթե Օրենսգրքով ծանուցման այլ կարգ նախատեսված չէ).

2) օրենսդիրը նախատեսել է դատական ծանուցման երեք հիմնական եղանակ ծանուցագիրը պատվիրված նամակով ուղարկելով՝ հանձնման մասին ծանուցմամբ, և/կամ այն առձեռն հանձնելով, և/կամ այն էլեկտրոնային հաղորդակցության միջոցով ուղարկելով՝ Օրենսգրքով սահմանված կարգով, որոնցից յուրաքանչյուրն ունի

ինքնավար բովանդակություն, ինչպես նաև ծանուցման այլ եղանակներ.

3) դատական ծանուցման եղանակներից յուրաքանչյուրի վերաբերյալ օրենսդիրը սահմանել է կանոնակարգումներ՝ Օրենսգրքի առանձին հոդվածների շրջանակում.

4) դատական ծանուցագիրը պատվիրված նամակով *ուղարկվում է դատավարության մասնակցի նշած հասցեով (ծանուցման հասցե)*.

5) դատական ծանուցագիրը պատվիրված նամակով *ուղարկելու եղանակով պատշաճ ծանուցման պարտադիր նախապայման է այդ առնչությամբ հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), որը պետք է տեղեկություններ պարունակի այն անձի վերաբերյալ, որին ծանուցագիրը հանձնվել է*.

6) դատական ծանուցագիրը պատվիրված նամակով ուղարկելիս ֆիզիկական անձի դեպքում այն *պետք է հանձնվի անձամբ հասցեատիրոջը կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին* (բացառությամբ այն դեպքերի, երբ նշված անձը գործի քննությանը մասնակցում է որպես հակադիր շահեր ունեցող կողմ):

**4.2.** Սույն գործի քննության շրջանակներում համեմատական վերլուծության են ենթարկվել նաև համանման հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի, մասնավորապես, Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, «Մնանկության մասին» օրենքի, «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքի համապատասխան դրույթները, որի արդյունքներով՝ **ֆիզիկական անձին հասցեագրված դատական ծանուցագրի մասով**, Սահմանադրական դատարանն արձանագրում է հետևյալը.

1) Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասում արտացոլված է «պատշաճ ձևով ծանուցել» բառակապակցությունը՝ առանց դրա բովանդակության բացահայտման և որպես հասցեատեր ընդունելով հարաբերության մասնակցին, այլ ոչ թե նրա հետ համատեղ բնակվող անձին կամ համապատասխան հասցեում աշխատող անձին.

2) «Մնանկության մասին» օրենքում ևս արտացոլված է «պատշաճ ձևով» կամ «պատշաճ ծանուցում» բառակապակցությունը՝ առանց դրա բովանդակության բացահայտման և որպես հասցեատեր ընդունելով հարաբերության մասնակցին, այլ ոչ թե նրա հետ համա-

տեղ բնակվող անձին կամ համապատասխան հասցեում աշխատող անձին.

3) Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցագիր տեղադրելու ինստիտուտ նախատեսված է Օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նման ինստիտուտ նախատեսված չէ, իսկ «Մնանկության մասին» օրենքով թեպետ նախատեսված է, սակայն չի վերաբերում դատական ծանուցագրին.

4) էլեկտրոնային փոստին ծանուցում ուղարկելու ինստիտուտ նախատեսված է Օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նման ինստիտուտ նախատեսված չէ.

5) օրենքի ուժով ծանուցված համարելու ինստիտուտ նախատեսված է Օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով. Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նման ինստիտուտ նախատեսված չէ, իսկ «Մնանկության մասին» օրենքով թեպետ նախատեսված է, սակայն չի վերաբերում դատական ծանուցագրին.

6) «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքին հղում է կատարվում միայն Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում: Ընդ որում, հիշյալ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ֆիզիկական անձին հասցեագրված առաքվող փաստաթղթերը հանձնվում են անմիջապես նրան կամ նրա լիազորած անձին: Նույն օրենքի 4-րդ հոդվածի 5-րդ մասի ուժով նախքան փաթեթի հանձնումը փոստատարը հավաստիանում է, որ փաթեթն հանձնվում է «Փաստաթղթերի հատուկ առաքման մասին» օրենքի 3-րդ հոդվածով սահմանված անձին և այդ մասին նշում է կատարում ծանուցագրի վրա՝ նշելով իրեն ներկայացված՝ անձը հաստատող փաստաթղթի տվյալները:

Վերոգրյալի հիման վրա Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ **ֆիզիկական անձին հասցեագրված դատական ծանուցագրի** մասով օրենսդրական կարգավորումները հիմնականում հանգում են նրան, որ պատշաճ ծանուցում է համարվում ծանուցագիրն **իրավահարաբերության մասնակցին** կամ նրա լիազորած անձին **առձեռն** հանձնելը կամ նրա էլեկտրոնային փոստին համապատասխան տեղեկություն ուղարկելը: Եվ միայն այն



դեպքում, երբ ծանուցագիրն իրավահարաբերության մասնակցին կամ նրա լիազորած անձին առձեռն հանձնելը հնարավոր չէ (հասցեատերը հրաժարվել է ստանալ ծանուցագիրը, հասցեն անհայտ է, հասցե նշված չէ, բնակչության պետական ռեգիստրում մշտական բնակության վայրը նշված չէ, պատասխանողը Հայաստանի Հանրապետությունում մշտական բնակության վայր չունի, առկա է հասցեն որոշելու անհնարինություն), կիրառվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում ծանուցագիր տեղադրելու ինստիտուտը (Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի ուժով ծանուցագիրն ստանալուց հրաժարվելը հավասարեցվում է այն հանձնված լինելուն):

**4.3.** Վճռաբեկ դատարանը մի շարք գործերով արձանագրել է, որ դատական ծանուցումը ենթադրում է դատավարության մասնակիցներին՝ դատական նիստի ժամանակի և վայրի մասին իրազեկելու կապակցությամբ ակտիվ գործողություններ, որոնք պետք է իրականացվեն օրենքով նախատեսված միջոցների և եղանակների օգտագործմամբ: Ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր է ապացուցել դատավարության մասնակցին դատական նիստի մասին տեղեկացնելու փաստը (Վճռաբեկ դատարանի թիվ 3-21(Ա) քաղաքացիական գործով 01.02.2008թ. որոշումը, թիվ ԵԿԴ/0964/02/10 քաղաքացիական գործով 29.07.2011թ. որոշումը): Դա վերաբերում է նաև դատական ծանուցագիրը պատվիրված նամակով ուղարկելու եղանակով ծանուցմանը: Օրենսդիրը սահմանել է հիշյալ եղանակով ծանուցումը պատշաճ համարելու պարտադիր նախապայման՝ հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը): Այդ առնչությամբ, համաձայն Վճռաբեկ դատարանի դիրքորոշման՝ «ծանուցված չլինելու փաստը մի դեպքում կարող է հաստատվել գործում համապատասխան անդորրագրի բացակայությամբ, իսկ մյուս դեպքում՝ անդորրագրի վրա առկա ստորագրությունն այլ անձի կողմից կատարված լինելով: Առաջին դեպքում փաստի հաստատման համար չի պահանջվում հատուկ գիտելիքների առկայություն, փաստը՝ ծանուցված չլինելը, հաստատվում է համապատասխան անդորրագրի բացակայությամբ: Այլ է իրավիճակը երկրորդ դեպքում, քանի որ ստորագրության պատկանելիության փաստը կարող է հաստատվել միայն փորձագիտական եզրակացության առկայությամբ, անկախ անգն աչքով համեմատվող ստորագրությունների միջև տարբերությունների տեսանկյունից լինե-

լուց: Ընդ որում, բողոք ներկայացրած կողմն ինքն է կրում իր վկայակոչած փաստի ապացուցման բեռը: (...) նման դեպքերում գործում է ծանուցման անդորրագրերի վրա առկա ստորագրությունները հասցեատիրոջ կողմից ստորագրված լինելու կանխավարկածը, քանի դեռ հակառակն ապացուցված չէ» (Վճռաբեկ դատարանի թիվ ԵԱՆԴ/0326/02/12 քաղաքացիական գործով 05.04.2013թ. որոշումը):

Վերոնշյալի համատեքստում անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքում (ընդունված 17.06.1998թ., ուժը կորցրած՝ 09.04.2018թ.) առկա չէր դրույթ ֆիզիկական անձի դեպքում դատական ծանուցագիրը վերջինիս հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին հանձնելու վերաբերյալ: Ավելին, հիշյալ Օրենսգրքի 78-րդ հոդվածի 5-րդ մասում (10.06.2014թ. ՀՕ-49-Ն խմբ.) բովանդակվում էր դրույթ առ այն, որ դատական ծանուցագիրը պետք է հանձնվեր անձամբ հասցեատիրոջը: Ծանուցագիրը համարվում էր անձամբ հանձնված, եթե դրա ստացման մասին անդորրագիրը ստորագրված էր անձամբ հասցեատիրոջ կողմից, կամ հասցեատերը ծանուցումը ստանալու անդորրագրի վրա ստորագրել էր ծանուցագիրը ստանալուց հրաժարվելու մասին:

Հարկ է նկատի ունենալ, որ «Փոստային կապի օպերատորի գործունեության կանոնակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2012 թվականի փետրվարի 16-ի N 211-Ն որոշման հավելվածի 44-րդ կետի համաձայն՝ փոստային առաքանիները հանձնվում են դրանց վրա նշված հասցեին համապատասխան (...): Նույն հավելվածի 47-րդ կետի համաձայն՝ «Ցպահանջ» հասցեագրված հասարակ փոստային առաքանին և գրանցված փոստային առաքանին *հանձնվում են ստացողին* (օրինական ներկայացուցչին)՝ *միայն անձը հաստատող փաստաթղթի առկայության դեպքում*: Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարի 2006 թվականի օգոստոսի 30-ի N 224-Ն հրամանի հավելվածի 8-րդ կետով սահմանված է, որ *հասցեատերը, ստանալով նամակը, (...) համապատասխան վանդակում ստորագրում է և կատարում հատուկ նշումներ (ամիս, ամսաթիվ և այլն)*: Նշյալ դրույթներից հետևում է, որ *առաքանին/նամակը հանձնվում է ստացողին (օրինական ներկայացուցչին)/հասցեատիրոջը*: *Նամակ ստանալը հավաստվում է ստորագրությամբ և հատուկ նշումներ կատարելով*:

**4.4.** Օրենսգրքի վիճարկվող դրույթի՝ «հասցեատիրոջ (...) հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձ»

ձևակերպման սահմանադրաիրավական բովանդակությունը բացահայտելու հարցի համատեքստում կարևորվում է օրենսդրական նորմերի հստակության և որոշակիության ապահովման հանգամանքը: Այդ առնչությամբ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սահմանադրական պահանջների բովանդակությանը արձանագրելով, մասնավորապես, ներքոնշյալը.

ա) իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի (03.05.2016թ. ՄԴՈ-1270),

բ) օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (18.04.2006թ. ՄԴՈ-630),

գ) իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը (13.05.2008թ. ՄԴՈ-753),

դ) իրավական որոշակիության ապահովման տեսանկյունից օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (02.12.2014թ. ՄԴՈ-1176),

ե) իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև

վստահությունը հանրային իշխանության և դրա հաստատությունների նկատմամբ: Իրավական պետությունում բացառապես որոշակի՝ կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը (18.11.2019թ. ՄԴՈ-1488),

զ) իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ (02.04.2014թ. ՄԴՈ-1142, 09.06.2015թ. ՄԴՈ-1213),

է) իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (14.03.2017թ. ՄԴՈ-1357),

ը) նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար՝ օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով (03.05.2016թ. ՄԴՈ-1270, 18.11.2019թ. ՄԴՈ-1488):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետ՝ Եվրոպական դատարան) բազմիցս դիրքորոշում է արտահայտել առ այն, որ՝ «չնայած այն բանին, որ սահմանումների որոշակիությունը խիստ ցանկալի է, միաժամանակ, անհրաժեշտ է խուսափել դրանց չափազանց կոշտ լինելուց. իրավունքը պետք է ունակ լինի հետևել փոփոխվող հանգամանքներին: Այդ իսկ պատճառով հաճախ օրենքներում առկա են եզրույթներ, որոնք քիչ թե շատ անորոշ են: Դրանց մեկնաբանումը և կիրառումը դատական պրակտիկայի

խնդիր է» (The Sunday Times v. the United Kingdom, application no. 6538/74, 26/04/79, § 49; Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004):

Սույն գործով վիճարկվող դրույթի՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանության հարցի առնչությամբ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը չի մանրամասնել, թե ինչ պետք է հասկանալ համատեղ բնակչության ներքո՝ վերջինս որոշելու հիմքում դրվող հայտանիշի/չափանիշի առումով որոշակի ժամանակահատվածը, համապատասխան սուբյեկտների շրջանակը, համատեղ տնտեսություն վարելը, տվյալ հասցեում հաշվառված լինելը և այլն: Այդ առումով, համատեղ բնակչությունը որոշելու հիմքում դրվող հայտանիշը սահմանված է, օրինակ, «Հանրային ծառայության մասին» օրենքով կապված հայտարարագրման պարտականության հետ (հոդված 34, մաս 10): Ըստ այդմ, «Սույն օրենքի իմաստով՝ համատեղ բնակվող է համարվում պաշտոնն ստանձնելու կամ դադարեցնելու օրվան նախորդող կամ հայտարարագրման տարվա ընթացքում 183 և ավելի օր հայտարարատուի հետ բնակվող անձը»: Այսինքն՝ տվյալ դեպքում շեշտադրումը կատարված է որոշակի ժամանակահատվածի վրա:

«(...) այդ հասցեում աշխատող չափահաս անձ» ձևակերպման առնչությամբ, անձի չափահաս լինելը հնարավոր է պարզել՝ նկատի ունենալով գործող իրավակարգավորումներին համապատասխան անձը հաստատող փաստաթղթի առկայության պարտադիրության և ըստ այդմ՝ վերաբերելի տվյալի՝ ստուգելի լինելու հանգամանքը: Սակայն պարզ չէ՝ կոնկրետ իրավիճակում ինչպես պետք է պարզվի անձի՝ տվյալ հասցեում աշխատող լինելու/աշխատելու հանգամանքը:

Ելնելով վերոնշյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթի՝ «հասցեատիրոջ (...) հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող (...) անձ» ձևակերպումը բավարար չափով որոշակի չէ և հնարավորություն չի ընձեռում իրավունքի սուբյեկտներին ընկալել օրենսդրի պահանջը, կանխատեսել դրա հետևանքները և իրենց վարքագիծը համապատասխանեցնել վիճարկվող դրույթով ամրագրված պահանջին: **Հետևաբար՝ Օրենսգրքի վիճարկվող դրույթի հիշյալ ձևակերպումը համահունչ չէ իրավական որոշակիության սկզբունքին:**

4.5. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքները և պարտականությունները (...), ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք:

Համաձայն Եվրոպական դատարանի դիրքորոշման՝ դատավարությունում կողմերի իրավահավասարության սկզբունքը՝ կողմերի միջև «արդարացի հավասարակշռության» իմաստով, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված արդար դատաքննության հիմնական տարրերից մեկն է և պահանջում է, որպեսզի յուրաքանչյուր կողմին տրամադրվի ողջամիտ հնարավորություն՝ ներկայացնելու իր գործն այնպիսի պայմաններում, այդ թվում՝ ներկայացնելու ապացույցներ, որոնք նրան իր հակառակորդի նկատմամբ չեն դնի էականորեն նվազ բարենպաստ վիճակում (Case of Ankerl v. Switzerland, app. no. 17748/91, Judgment 23 October 1996, p. 38):

Եվրոպական դատարանը գործերից մեկով արձանագրել է. «(...) անհրաժեշտ է հավասարակշռություն գտնել շահագրգիռ տարբեր շահերի միջև: Դատավարությունն անորոշ ժամկետով երկարաձգելը դատավարությանը ներգրավված անձանցից մեկի հասցեն գտնելու նպատակով կարող է անհամատեղելի լինել իրավական օրինականության և արդարադատության պատշաճ իրականացման սկզբունքների հետ: Հետևաբար՝ դատարան դիմելու իրավունքը պայմանավորվող կողմերին չի արգելում իրենց օրենսդրությամբ նախատեսելու նման իրավիճակներում կիրառվող ընթացակարգեր՝ երաշխավորելով այդ շահերի պատշաճ պաշտպանվածու-

թյունը» (Case of Nunes Dias v. Portugal, application no. 69829/01; 2672/03, 10/04/2003): Այդ առնչությամբ, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ դատաքննության մասնակիցներից յուրաքանչյուրն ինքը պետք է շահագրգռված լինի իր իրավունքների պաշտպանությամբ և ողջամիտ ժամկետում գործի քննությունն ավարտվելու հարցում և չպետք է կատարի այնպիսի գործողություններ, որոնք կխոչընդոտեն գործի քննության բնականոն ընթացքը և կձգձգեն դատավարությունը: Հակառակ պարագայում կատացվի, որ կողմերից մեկը, ունենալով անսահմանափակ իրավունքներ, պաշտպանության գործող կառուցակարգը կօգտագործի ի վնաս մյուս կողմի՝ խախտելով վերջինիս իրավունքները և օրինական շահերը, ինչը կհակասի արդարադատության բուն էությանն ու դատավարության նպատակին, քանի որ դատավարությունը կոչված է վերականգնելու և պաշտպանելու մարդու իրավունքները և օրինական շահերը («ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի քաղաքապետարանն ընդդեմ Ստյոպա Հովհաննիսյանի» թիվ ՄԴ2/0196/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 30.04.2015թ. որոշումը):

Եվրոպական դատարանն իր նախադեպային իրավունքում արտահայտել է դիրքորոշում առ այն, որ Պայմանավորվող պետությունները ոչ միայն պետք է ամրագրեն իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, այլև կոնկրետ գործով պետք է ապահովեն անձի կողմից այդ իրավունքի իրականացման իրական հնարավորությունը (Case of Colozza v. Italy, app. no. 9024/80, Judgment 12 February 1985, p. 28): Համաձայն Եվրոպական դատարանի դիրքորոշման իրավական պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ ոչ միայն օրենսդրական մակարդակում, այլև պրակտիկայում: Ավելին, արդյունավետ միջոցը պետք է օժտված լինի մարդու իրավունքի ենթադրյալ խախտումը կամ դրա շարունակումը կանխելու կամ իրավունքի խախտման համար պատշաճ փոխհատուցում ապահովելու հատկանիշով (Case of Kudła v. Poland, app. no. 30210/96, Judgment 26 October 2000, §§ 157-158):

Սահմանադրական դատարանն իր 2015 թվականի հունվարի 27-ի ՄԴՈ-1189 որոշման մեջ հարկ է համարել ընդգծել. «(...) շահագրգիռ սուբյեկտների կողմից (...) պատշաճ ծանուցված լինելը վերջիններիս իրավունքների պաշտպանության *conditio sine qua non* (պայման, առանց որի հնարավոր չէ) կարևոր պայման է, առանց որի հնարավոր չէ երաշխավորել նրանց իրավունքների արդյունավետ պաշտպանությունը: Ուստի ծանուցման ինստիտուտի իրավական կանոնակարգումները պետք է կրեն ոչ թե ձևական բնույթ, այլ պետք



է ուղղված լինեն (...) սուբյեկտի (...)՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքների պաշտպանությանը: Նշված նպատակն իրագործելու համար օրենսդիրը պետք է նախատեսի (...) արդյունավետ ծանուցման (...) ընթացակարգ, որը գործնականում կբացառի (...) շահագրգիռ անձանց օբյեկտիվորեն ոչ իրազեկված լինելու իրավիճակները»:

Վերահաստատելով և զարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումը՝ սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական նիստի վայրի և ժամանակի մասին դատավարության մասնակցին ծանուցելը պետք է նպատակ հետապնդի ապահովելու նրան լսելու հնարավորությունը, ինչը հնարավորություն կտա վերջինիս լիարժեք իրացնել իր իրավունքները, իրականացնել դրանց պաշտպանությունը: Հետևաբար՝ ծանուցման ձևը պետք է լինի այնպիսին, որ անձին հնարավորություն ընձեռվի ապահովել վերոհիշյալ պահանջները: Դատական գործընթացում անձն իր իրավունքների իրացումը և պաշտպանությունն ամբողջ ծավալով կարող է կազմակերպել այն դեպքում, երբ նրան ընձեռված է դատական նիստին ներկա գտնվելու հնարավորություն (գործի բանավոր քննության դեպքում), քանի որ այդպիսի հնարավորությունն է կողմերի դատական պաշտպանության իրավունքի, իրավահավասարության և մրցակցության սկզբունքների ապահովման կարևոր պայմանը:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ այլ անձի՝ ծանուցագրի հասցեատիրոջ հետ տվյալ հասցեում համատեղ բնակվելու կամ տվյալ հասցեում աշխատելու հանգամանքը **փոստային ծառայության աշխատակցի կողմից ստուգելու օրենսդրական կառուցակարգը բացակայում է:**

Թեպետ օրենսդիրը վիճարկվող դրույթով հետապնդում է դատավարության մասնակիցներին դատարանի կողմից հնարավոր բոլոր միջոցներով իրազեկելու իրավաչափ նպատակ, ինչը բխում է դատավարական խնայողության, դատավարության կանխատեսելիության, օրինականության, գործի ողջամիտ ժամկետում քննության սկզբունքներից, սակայն նման իրավակարգավորումը չի երաշխավորում ծանուցման, արդյունքում՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրականացման արդյունավետ կառուցակարգ:

Եվ դա այն դեպքում, երբ Օրենսգրքի 95-րդ հոդվածի մյուս դրույթներով նախատեսված են ծանուցման այլ եղանակներ կամ **օրենքի ուժով ծանուցված համարելու ինստիտուտ:** Մասնավորապես,



Օրենսգրքի 95-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն.

«5. Եթե դատավարության մասնակիցը հրաժարվել է ստանալ ծանուցագիրը, կամ նրա հայտնած հասցեով ուղարկված ծանուցագիրը վերադարձվել է դատարան, կամ ուղարկելու օրվանից երկշաբաթյա ժամկետում դատարանը չի ստացել հետադարձ ծանուցումը (ծանուցման մասին անդորրագիրը), կամ դատավարության մասնակցի հասցեն անհայտ է, ապա դատարանը դատական ծանուցագիրը ուղարկում է՝

1) ֆիզիկական անձի դեպքում՝ այդ անձի հաշվառման, աշխատանքի վայրի հայտնի հասցեով և անձի վերջին հայտնի բնակության վայրի համապատասխան համայնքի կամ վարչական շրջանի ղեկավարին, իսկ գործի նյութերում ֆիզիկական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ նաև այդ հասցեներով.

2) իրավաբանական անձի դեպքում՝ այդ անձի մշտապես գործող մարմնի գտնվելու վայրի հասցեով, իսկ գործի նյութերում իրավաբանական անձի այլ հասցեների, այդ թվում՝ էլեկտրոնային փոստի վերաբերյալ տվյալների առկայության դեպքում՝ նաև այդ հասցեներով:

6. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված գործողությունները կատարելու հետ միաժամանակ դատական ծանուցագիրը տեղադրվում է Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն մասով նախատեսված գործողությունները կատարելուց հետո 15-րդ օրն անձը համարվում է ծանուցված»:

Այդ կապացությամբ հարկ է վկայակոչել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի (թեև Օրենսգրքի և նշված օրենքի կարգավորման առարկաները տարբեր են. Օրենսգրքի դեպքում խոսքը մասնավոր իրավահարաբերություններից ածանցվող վեճերի քննության և լուծման դատավարական կարգի մասին է, իսկ հիշյալ օրենքի դեպքում՝ ընդհանուր վարչական, այսինքն՝ սուսկ հանրային իրավահարաբերությունների մասին) 59-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին, 2-րդ և 3-րդ պարբերությունների դրույթները, որոնց համաձայն.

«Գրավոր վարչական ակտը, ընդունումից հետո՝ եռօրյա ժամկետում, պետք է հանձնվի վարույթի մասնակիցներին: Դա կարող է իրականացվել պատվիրված փոստով, այդ թվում՝ ստանալու մասին ծանուցմամբ, հասցեատիրոջը ստորագրությամբ առձեռն հանձնելու, ինչպես նաև հանձնման այնպիսի եղանակներով, որոնք թույլ

են տալիս հաստատել հասցեատիրոջ կողմից ակտը ստանալու կամ օրենքով սահմանված դեպքերում պատշաճ ծանուցված լինելու փաստը:

Որպես կանոն, գրավոր վարչական ակտի հանձնումը պետք է կատարվի ակտը վարույթի մասնակիցներին ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

Սույն մասով նախատեսված հանձնման մյուս միջոցները կիրառվում են այն դեպքում, երբ որևէ հիմնավոր պատճառով ստորագրությամբ առձեռն հանձնելու հնարավորություն չկա, այդ թվում, եթե հասցեատերն ինքը խնդրել է օգտագործել հանձնման այլ միջոցներ»:

**Հաշվի առնելով վերոնշյալ՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի վիճարկվող դրույթի «հասցեատիրոջ (...) հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող (...) անձ» ձևակերպումը բավարար չափով որոշակի չէ և հնարավորություն չի ընձեռում իրավունքի սուբյեկտներին ընկալել օրենսդրի պահանջը: Բացի դրանից, այլ անձի ծանուցագրի հասցեատիրոջ հետ տվյալ հասցեում համատեղ բնակվելու կամ տվյալ հասցեում աշխատելու հանգամանքը փոստային ծառայության աշխատակցի կողմից ստուգելու օրենսդրական կառուցակարգը բացակայում է: Նշված հանգամանքներով պայմանավորված Օրենսգրքի վիճարկվող դրույթի վերոնշյալ ձևակերպումը սահմանադրականության առումով խնդրահարույց է:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ «(...) կամ հասցեատիրոջ ծանուցման (հաշվառման) հասցեում նրա հետ համատեղ բնակվող կամ այդ հասցեում աշխատող չափահաս անձին» դրույթը, ճանաչել Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 75-րդ հոդվածին հակասող:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ

գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով:

3. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանի որոշման հրապարակման պահին վիճարկվող դրույթը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին տվյալ նորմատիվ իրավական ակտի դրույթի վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթի ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2021 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 փետրվարի 2021 թվականի  
ՍԴՈ-1574



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՍԱԹԵՆԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ, ՌԱՖԱՅԵԼ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԵՎ  
ԼԻԼԻԹ ԹԱՐՎԵՐԴՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 119-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ ԵՎ  
391-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 փետրվարի 2021 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողներ Սաթենիկ Խաչատրյանի, Ռաֆայել Խաչատրյանի և  
Լիլիթ Թարվերդյանի ներկայացուցիչ Գ. Թորոսյանի,  
գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի  
պաշտոնական ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի  
իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,  
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-  
րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի  
մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,  
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Սաթենիկ

Խաչատրյանի, Ռաֆայել Խաչատրյանի և Լիլիթ Թարվերդյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի և 391-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ **«Դատավարական ժամկետները բաց թողնելը և վերականգնելը»** վերտառությամբ 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը սահմանում են.

«1. Դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձինք գրկվում են այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

(...)

4. Դատարանը, պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, որոշում է կայացնում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին»:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ **«Վճռաբեկ բողոք բերելու ժամկետը»** վերտառությամբ 391-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է.

«1. Վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետի ավարտը, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքի»:

Ընդունումից ի վեր Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերում, 391-րդ հոդվածի 1-ին մասում փոփոխություններ/լրացումներ չեն կատարվել:

Գործի քննության առիթը Սաթենիկ Խաչատրյանի, Ռաֆայել Խաչատրյանի և Լիլիթ Թարվերդյանի (ներկայացուցիչ՝ Գ. Թորոսյան) 2020 թվականի օգոստոսի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**։

**1. Դիմողների դիրքորոշումները**

Դիմողները, մասնավորապես, գտնում են, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը, 391-րդ հոդվածի 1-ին մասը և 396-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետն այնքանով, որքանով չեն նախատեսում բողոքաբերի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով հարգելի համարելու դատարանների պարտականությունը, հակասում են Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներին։

Ըստ դիմողների՝ այն դեպքերում, երբ ակտն իր բովանդակային մասով բողոքաբերին հասանելի է դառնում հրապարակման օրվանից հետո որոշ ժամանակ անց, բողոքաբերը հրապարակման պահից սկսած մինչև ամբողջական դատական ակտն ստանալու պահը չունի այն բողոքարկելու իրական հնարավորություն, քանի որ իր տրամադրության տակ չկան բողոքի արդյունավետության համար անհրաժեշտ կարևոր տվյալներ: Վիճարկվող դրույթների բովանդակությունը հանգում է նրան, որ նույնիսկ բողոք բերողի կամքից անկախ պատճառներով (օրինակ՝ դատական ակտը փոստային առաքմամբ ուշ ստանալու պատճառով) վճարել բողոք բերելու համար սահմանված մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում այն հարգելի համարելու, վճարել բողոքը դատական ակտն ստանալու պահից մեկամսյա ժամկետում ներկայացնելու իրավունքն իրացնելու համար բողոքաբերը պետք է առանձին միջնորդությամբ խնդրի Վճարել դատարանին թույլ տալ իրացնելու իր իրավունքը, իսկ վերջինիս հայեցողության սահմաններն ու շրջանակները որևէ կերպ սահմանված չեն օրենքով: Բողոքաբերի կամքից անկախ պատճառով, ինչպիսին է փոստային առաքմամբ բողոքարկվող դատական ակտն ուշ ստանալը, իր բողոքը ներկայացնելու համար սահմանված ժամկետը փոքրանում է, եթե բողոքարկման ժամկետը պետք է հաշվարկվի ակտի հրապարակման, այլ ոչ թե դրա ստացման օրվանից: Ընդ որում, այս դեպքում որևէ նշանակություն չունի, թե քանի օր ուշացումով է բողոքաբերն ստանում դատական ակտը:

Դիմողները, հղում կատարելով Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ակտերին,

գտնում են, որ քաղաքացիական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտը բողոքարկելու համար օրենսդրությամբ սահմանված մեկամսյա ժամկետի փոխարեն ավելի սեղմ ժամկետում այդ գործողությունը կատարելու պարտականություն սահմանելը և այն բողոքաբերի վրա դնելը դատարանի մատչելիության իրավունքի անհամաչափ սահմանափակում է:

Դիմողները խնդրում են որոշել Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի և 391-րդ հոդվածի 1-ին մասի Մահմանադրության 3-րդ, 61-րդ, 63-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ բացահայտելով դրանց սահմանադրաիրավական բովանդակությունը:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ օրենսդիրը բոլոր հնարավոր ձևերով սահմանել է անձի՝ «արդար դատաքննության իրավունքի» իրացման հնարավորությունը՝ նախատեսելով ինչպես վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ վճարել բողոք բերելու հիմքերն ու ժամկետները, այնպես էլ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձանց կողմից բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջոցներն ու միջնորդություն ներկայացնելու կարգը:

Ըստ պատասխանողի՝ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձանց զրկելով այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքից, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը բավարարում է բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը, օրենսդիրը ոչ միայն չի խախտել անձի՝ անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի քննության իրավունքը, այլ ավելին՝ նույնիսկ ապահովել է վերջինիս՝ ողջամիտ ժամկետում դատական քննության իրավունքը՝ դատավարական ժամկետների ավարտից հետո գործին մասնակցող անձանց զրկելով այդ ժամկետներով պայմանավորված գործողություններ կատարելու իրավունքից: Միաժամանակ, օրենսդիրը, նախատեսելով որոշակի բացառություններ, դատարանին, ելնելով գործի հանգամանքներից, որոնք կարող են լինել բազմաթիվ և բազմաբնույթ, հնարավորություն է ընձեռել բավարարել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդությունը:

Պատասխանողը գտնում է, որ սույն գործով Օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողո-

քարկման ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելն ինքնին չի հակասում Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ:

Ըստ պատասխանողի բազմաթիվ երկրների իրավական պրակտիկան վկայում է, որ հավասարապես ընդունելի են թե՛ այն իրավադրույթները, համաձայն որոնց՝ դատարանի վճռի դեմ բողոք կարող է բերվել դրա հրապարակման կամ դրա պատճենի առաքման պահից և թե՛ այն իրավակարգավորումը, երբ այդ ժամկետը սահմանվում է դատական ակտն ստանալու պահից: Այստեղ էականն այն է, որ բոլոր այն երկրներում, որտեղ բողոքարկման ժամկետի հաշվարկման համար հիմք է ընդունվում դատական ակտի հրապարակման պահը, օրենսդրորեն սահմանվում են անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ, որ դատական ակտն ամբողջությամբ բողոք բերող կողմը կստանա ողջամիտ ժամկետում և ի վիճակի կլինի արդյունավետ իրացնել դատարանի մատչելիության և արդար դատաքննության իր իրավունքը (հիշյալն արտացոլված է Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1052 որոշման 11-րդ կետում):

Պատասխանողը խնդրում է Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը և 391-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել Սահմանադրությանը համապատասխանող:

### **3. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները**

Սույն գործով Օրենսգրքի վիճարկվող իրավադրույթների սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրմանը.

- արդյոք սույն գործով վիճարկվող իրավակարգավորումները երաշխավորում են անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքի իրացման համատեքստում դատարանի մատչելիության իրավունքի պատշաճ իրացումը՝ նկատի ունենալով նաև դրանցով նախատեսված ժամկետային սահմանափակումները:

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականության հարցին Սահմանադրական դատարանն անդրա-



դառնում է՝ հաշվի առնելով իր մի շարք որոշումներում արտահայտված վերաբերելի իրավական դիրքորոշումները, ինչպես նաև գնահատելով վիճարկվող և վերաբերելի այլ իրավակարգավորումների առնչությամբ ձևավորված իրավակիրառ պրակտիկայի՝ նշված իրավակարգավորումներին համահունչ լինելու հանգամանքը:

#### 4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրական դատարանը, իր բազմաթիվ որոշումներում (ՄԴՈ-690, 719, 733, 765, 780, 849, 873, 890, 918, 922, 936, 1037, 1052, 1062, 1114, 1115, 1190, 1191, 1192, 1196, 1197, 1220, 1222, 1231, 1249, 1254, 1257, 1263, 1265, 1268, 1275, 1289, 1290, 1293, 1395) անդրադառնալով արդար դատաքննության և դատական բողոքարկման, դատարանի մատչելիության հիմնախնդիրներին, կարևորել է վերջինս որպես կարևոր նախապայման՝ Սահմանադրությամբ երաշխավորված հիմնական իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանության համար:

Սահմանադրական դատարանը 19.06.2018 թ. ՄԴՈ-1420 որոշմամբ ընդհանրացրել և վերահաստատել է վերոթվարկյալ որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ, որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

«(...) - ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում,

- դատարանի (արդարադատության) մատչելիությունը կարող է ունենալ որոշակի սահմանափակումներ, որոնք չպետք է խաթարեն այդ իրավունքի բուն էությունը,

- դատարանի մեկնելու անձը չպետք է ծանրաբեռնվի ավելորդ ձևական պահանջներով,

- իրավական որոշակիության ապահովման պահանջից ելնելով՝ դատարանի մատչելիության իրավունքի իրացման համար անհրաժեշտ որոշակի իմպերատիվ նախապայմանի առկայությունն ինք-

նին չի կարող դիտվել որպես ՀՀ Սահմանադրությանը հակասող: Այլ հարց է, որ նման նախապայմանը պետք է լինի իրագործելի, ողջամիտ և իր ծանրությամբ չհանգեցնի իրավունքի էության խախտման»:

Հատկանշական է, որ Սահմանադրական դատարանի 18.06.2020 թ. ՍԴՈ-1546 որոշման մեջ արձանագրված է. «Սահմանադրական դատարանն (...) հարկ է համարում առանձնացնել դատական պաշտպանության հիմնական իրավունքը՝ որպես օրենսդրի կողմից ուղղակիորեն (առանց կոլիզիոն սահմանադրական իրավունքով լեգիտիմացման) սահմանափակման ոչ ենթակա հիմնական իրավունք (...)»:

Դատարանի մատչելիության իրավունքի վերաբերյալ դիրքորոշումներ է արտահայտել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (ՄԻԵԴ), որոնք, մասնավորապես, հանգում են հետևյալին.

- «Դատարանի մատչելիության իրավունքը ենթակա է սահմանափակումների, մասնավորապես, երբ քննարկվում են բողոքի ընդունելիության պայմանները: Այս համատեքստում կարգավորումներ սահմանելու հարցում պետություններն ունեն որոշակի հայեցողություն»: (Mamikonyan v. Armenia, 16.03.2010 թ. վճիռ, գանգատ թիվ 25083/05, 25-րդ կետ, Scholz AG v. Armenia, 24.01.2019 թ. վճիռ, գանգատ թիվ 16528/10, 57-րդ կետ),

- «Դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումը պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, և կիրառված միջոցների ու հետապնդվող նպատակի միջև պետք է առկա լինի համաչափության ողջամիտ հարաբերակցություն. հակառակ պարագայում այդպիսի սահմանափակումները չեն համապատասխանի «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասին»: (Khalfaoui v. France, 14.12.1999 թ. վճիռ, գանգատ թիվ 34791/97, 36-րդ կետ, Hirschhorn v. Romania, 26.07.2007 թ. վճիռ, գանգատ թիվ 29294/02, 50-րդ կետ),

- «Անձի՝ դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճան լինեն, որ վնաս հասցնեն այդ իրավունքի բուն էությանը»: (Luordo v. Italy, 17.10.2003 թ. վճիռ, գանգատ թիվ 32190/96, 85-րդ կետ, Staroszczyk v. Poland, 09.07.2007 թ. վճիռ, գանգատ թիվ 59519/00, 124-րդ կետ, Stanev v. Bulgaria, 17.01.2012 թ. վճիռ, գանգատ թիվ 36760/06, 230-րդ կետ),

- «Ընթացակարգային նորմերը կիրառելիս ներպետական դատարանները պետք է խուսափեն և չափազանցված ձևականությունից, որը կազդի ընթացակարգի արդարացիության վրա, և չափազանցված ճկունությունից, որը կհանգեցնի օրենքով սահմանված ընթացակարգային պահանջների վերացմանը»: (Walchli v. France, 26.07.2007 թ. վճիռ, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ, Peca v. Greece (no. 2), 10.06.2010 թ. վճիռ, գանգատ թիվ 33067/08, 30-րդ կետ),

- «Դատարանի մատչելիության իրավունքը խախտվում է, երբ սահմանված կարգավորումները դադարում են ծառայել իրավական որոշակիության և արդարադատության պատշաճ կազմակերպման նպատակներին և վերածվում են իրավասու դատարանի կողմից գործն ըստ էության քննության առնելու խոչընդոտի»: (Efsthathiou and others v. Greece, 27.07.2006 թ. վճիռ, գանգատ թիվ 36998/02, 24-րդ կետ, Vamvakas v. Greece, 16.10.2008 թ. վճիռ, գանգատ թիվ 36970/06, 26-րդ կետ, Louli-Georgopoulou v. Greece, 16.03.2017 թ. վճիռ, գանգատ թիվ 22756/09, 39-րդ կետ):

**4.2.** Սահմանադրական դատարանի 18.10.2006 թ. ՍԴՈ-652 որոշման մեջ արձանագրված է. «Ժամկետային սահմանափակման նպատակն է պահպանել իրավական որոշակիությունը և ապահովել, որպեսզի գործերը վերանայվեն ողջամիտ ժամկետներում»: Սահմանադրական դատարանը նշված դիրքորոշումը վերահաստատել է 16.10.2012 թ. ՍԴՈ-1052 որոշման մեջ, մասնավորապես, արձանագրելով. «(...) ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ երաշխավորելու իրավական որոշակիությունը (...)»:

Համանման դիրքորոշում որդեգրել է նաև ՄԻԵԴ-ը, որն, անդրադառնալով բողոքարկման իրավունքի ժամկետներով սահմանափակման հարցին, նշել է. «Բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը, անկասկած, նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, հատկապես իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգիռ անձինք պետք է հաշվի առնեն, որ այդ կանոնները պետք է կիրառվեն» (Perez de Rada Cavanilles v. Spain, 28.10.1998 թ., Societe anonyme "Sotiris et Nikos Kouras ATTEE" v. Greece (16.11.2000 թ.), 16.02.2001 թ.):

**4.3.** Օրենսգրքի 387-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներն օրինական ուժի մեջ են

մտնում հրապարակման պահից մեկ ամիս հետո: Այլ եզրափակիչ դատական ակտերի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումներն օրինական ուժի մեջ են մտնում հրապարակման պահից 15 օր հետո: Օրենսգրքի 387-րդ հոդվածի 1-ին մասի և սույն գործով վիճարկվող 391-րդ հոդվածի 1-ին մասի համադրված վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ օրենսդիրը սահմանել է վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքով վերաքննիչ դատարանի կայացրած որոշումների՝ Վճռաբեկ դատարան բողոքարկելու մեկամսյա ժամկետ, ընդ որում՝ այդ ժամկետի հաշվարկման սկիզբ դիտարկելով դատական ակտի հրապարակման պահը:

Հարկ է նշել, որ ՄԻԵԴ-ը, համանման հարցով անդրադառնալով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածով սահմանված նախկին կարգավորմանը (համաձայն որի՝ վերաքննիչ դատարանի դատավճիռը կամ որոշումն օրինական ուժի մեջ է մտնում դրա հրապարակման պահից հետո՝ տասնօրյա ժամկետում), արձանագրել է. «...թեպետ տասնօրյա ժամկետը երկար չէր, այն ինքնին այնքան էլ կարճ չէր, որպեսզի զրկեր դիմումատուին բողոքարկման ընթացակարգից օգտվելու իրական և արդյունավետ հնարավորությունից» (Mamikonyan v. Armenia, 16.03.2010 թ. վճիռ, գանգատ թիվ 25083/05, 29-րդ կետ): ՄԻԵԴ-ը, հղում կատարելով իր նախորդ վճիռներից մեկին, արձանագրել է, որ բողոքարկման համար սահմանված կարճ ժամկետներն ընդհանուր են Բարձր պայմանավորվող կողմերի բողոքարկման համակարգերի համար (Bačev v. the Former Yugoslav Republic of Macedonia, 14.02.2006 թ. վճիռ, գանգատ թիվ 13299/02):

Ինչպես վերը նշվեց՝ Օրենսգրքով վճռի դեմ բերված վերաքննիչ բողոքների քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կայացրած որոշման բողոքարկման ժամկետի հաշվարկման սկիզբ է դիտարկվում դատական ակտի հրապարակման պահը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկումը հրապարակման պահից սահմանելու իրավաչափության հարցը պետք է գնահատել այն երաշխիքների համատեքստում, որոնք Օրենսգրքով ապահովվում են բողոք բերող անձանց համար և, մասնավորապես, բողոքարկվող դատական ակտի՝ գործին մասնակցող անձին հասանելիության և բաց թողն-

ված ժամկետը հարգելի համարելու հիմքով՝ վերջինիս վերականգնելիության կառուցակարգերի առկայության առումներով: Հակառակ պարագայում, եթե, մի կողմից՝ բողոք բերելու իրավունք ունեցող անձից անկախ պատճառներով դատական ակտը վերջինիս հասանելի չլինի, իսկ, մյուս կողմից, շարունակեն հոսել դատական ակտի բողոքարկման ժամկետները, կստացվի, որ ընթացակարգային կանոններով անհամաչափորեն սահմանափակվում է անձի դատարանի մատչելիության իրավունքը՝ խաթարելով այդ իրավունքի բուն էությունը:

Նման մոտեցում Սահմանադրական դատարանը որդեգրել է իր մի շարք որոշումներում (ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249, ՄԴՈ-1254, ՄԴՈ-1268 և այլն)՝ առանձնակի կարևորելով այդ առումով բողոքարկվող դատական ակտի՝ կողմի համար հասանելիության երաշխավորման հարցը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանը 16.10.2012 թ. ՄԴՈ-1052 որոշմամբ արձանագրել է, որ համապատասխան կարգավորման արդյունքում առկա է լինում որոշակի ժամանակային խզում դատական ակտը **հրապարակելու, ուղարկելու** և այն հասցեատիրոջ կողմից (մեղադրյալ, պաշտպան և այլն) **փաստացի ստանալու** միջև: Ըստ այդմ՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է.

- «... ստորադաս դատարանի դատական ակտը հրապարակվելու պահից որոշակի ժամկետում բողոքարկելու վերաբերյալ դրույթներ սահմանելիս օրենսդիրը պարտավոր է ելնելով անձի դատարանի մատչելիության և արդյունավետ դատական պաշտպանության սահմանադրական իրավունքներից, օրենսդրորեն անհրաժեշտ նախադրյալներ ամրագրել դրանց երաշխավորման ու ապահովման համար: Սահմանադրական դատարանը միաժամանակ գտնում է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադասության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար».**

- «(...) վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքներն օրենքով դրանց ներկայացված պահանջներին համահունչ նախապատրաստելու

համար հարկ է, որպեսզի վերաքննիչ կամ վճռաբեկ բողոք ներկայացնող անձն իր տնօրինության ներքո ունենա բողոքարկվող դատական ակտը, որպեսզի կարողանա նշված ակտի ուսումնասիրության հիման վրա իր վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքում հիմնավորել, պատճառաբանել ստորադաս դատարանի կողմից նյութական կամ դատավարական իրավունքի նորմերի խախտումը և գործի էլքի վրա դրանց ազդեցությունը, կամ դրանց արդյունքում ծանր հետևանքներ առաջացած լինելու փաստը կամ առաջացման հնարավորությունը».

- «(...) Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, (...), ապա նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից»:

Որպես բողոքարկվող դատական ակտի՝ անձին հասանելիության ապահովման երաշխիք՝ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1052 որոշմամբ դիտարկել է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 402-րդ հոդվածի 2-րդ մասի այն կարգավորումը, համաձայն որի՝ վերաքննիչ դատարանի դատական ակտը հրապարակման օրվանից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում ուղարկվում է վարույթի համապատասխան մասնակիցներին (դատապարտյալին, արդարացվածին, նրանց պաշտպաններին և այլն): Սահմանադրական դատարանը, ընգծելով **ուղարկելու և հանձնելու** ժամանակային առումով ոչ համարժեքությունը, արձանագրել է. «Այդ հասկացությունները բովանդակային առումով կարող են նույնական համարվել միայն այն դեպքերում, երբ դատական ակտի ամբողջական տեքստն այդ ժամկետում **տրամադրվում է** համապատասխան սուբյեկտներին կամ տեղակայվում է դատարանի պաշտոնական կայքում՝ նրանց անմիջապես հասանելի լինելու համար, ինչն արվում է բազմաթիվ երկրներում»:

Սահմանադրական դատարանը 18.12.2012 թ. ՍԴՈ-1062 որոշման մեջ արձանագրել է. «(...) սույն գործով օրենսգրքի վիճարկվող դրույթով գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի **հրապարակման** պահից հաշվար-

կելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար **Ժամանակ** ապահովող երաշխիքներ: (...) սահմանադրական դատարանի կողմից որպես այդպիսի երաշխիք է ճանաչվել օրենսգրքի 402-րդ հոդվածը և այն էլ միայն այն դեպքում, երբ նշված հոդվածի 2-րդ մասով նախատեսված եռօրյա ժամկետում դատական ակտը տրամադրվի (հասանելի դարձվի) անձին: Այսինքն, համաձայն գործող օրենսդրության անձն առնվազն 27 օր ժամանակ պետք է ունենա հիմնավոր բողոք ներկայացնելու համար»:

Սահմանադրական դատարանը 22.12.2015թ. ՄԴՈ-1249, 09.02.2016 թ. ՄԴՈ-1254 որոշումներով վերահաստատել է իր դիրքորոշումները, իսկ 26.04.2016 թ. ՄԴՈ-1268 որոշմամբ, քննության առնելով Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 132-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի, 136-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը և անդրադառնալով դատական ակտի բողոքարկման ժամկետը հրապարակման պահից հաշվարկելու հարցին, արձանագրել է. «Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների ուժով իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի այն ընկալմամբ, որ դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկման ենթակա է այդ ակտի հրապարակման պահից՝ այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված եռօրյա ժամկետում: (...) «առնվազն 27 օր ժամանակը» չի կարող դիտարկվել բողոք ներկայացնելու համար հաշվարկման ենթակա ինքնուրույն և առավելագույն ժամկետ: Միայն այն դեպքում, երբ դատական ակտի հրապարակման պահից օրենքով նախատեսված եռօրյա ժամկետում բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) պետք է ունենա առնվազն 27 օր ժամանակ, որպես նվազագույն ժամկետ, հիմնավոր բողոք ներկայացնելու համար...»:

Սահմանադրական դատարանը 08.12.2017 թ. ՄԴՈ-1394 որոշման մեջ որոշակիորեն զարգացրել է վերոնշյալ իրավական դիրքորոշումը արձանագրելով. «(...) իրավակիրառական պրակտիկայում



ՄԴՈ-1062 որոշման մեջ ամրագրված դիրքորոշումները չեն կարող պարզ անալոգիայով կիրառվել կոնկրետ գործով նմանատիպ հարաբերություններ կարգավորող այլ նորմերի կիրառման դեպքում, այնպես, ինչպես դիմողի գործով արել են քրեական վերաքննիչ և վճռաբեկ դատարանները: Այսինքն, եթե դատական ակտի պատճենը կողմին տրամադրելու եռօրյա ժամկետի դեպքում Սահմանադրական դատարանն առնվազն 27-օրյա ժամկետի առկայությունը բավարար է համարել դատական ակտի բողոքարկման համար, ապա դա չի նշանակում, որ այն ինքնաբերաբար տարածվում է նաև այն դեպքերի վրա, երբ օրենսդրությամբ սահմանված է տվյալ տեսակի դատական ակտի պատճենը կողմին **հանձնելու** հնգօրյա ժամկետ կամ նույնիսկ հնգօրյա ժամկետը խախտելու պարագայում: Ավելին, չպետք է մեխանիկական մոտեցում դրսևորել մարդու իրավունքների արդյունավետ պաշտպանության, դատարանի մատչելիության իրավունքի իրացման ու դատարանին անհիմն չճանրաբեռնելու մոտեցումների միջև ընտրություն կատարելիս:

(...) բոլոր այն դեպքերում, երբ դատարանի թերացման հետևանքով դատական ակտն ուշ է հասանելի դարձել իրավասու անձին, և դա փաստարկվել ու հիմնավորվել է, ապա նրա համար իրավունքի ուժով պետք է երաշխավորվի դատական ակտը հասանելի դառնալու պահից մեկամսյա ժամկետում բողոք բերելու հնարավորությունը:

(...) Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտի հանձնումն անձին (նրա համար հասանելի դարձնելը) այն հրապարակելու օրվանից հնգօրյա ժամկետում՝ ինքնին սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ, **եթե երաշխավորվի դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետն ամբողջությամբ առանց դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով (այդ թվում՝ էլեկտրոնային) հասանելի դարձնելու համար սահմանված ժամկետի հաշվառման, և պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը:**

Ինչ վերաբերում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածին՝ ՄԴՈ-1052 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 375-րդ հոդվածի «պետք է հանձնվի» և «հանձնվում է» արտահայտությունները նշանակում են **ամբողջական ակտի ցանկացած**



եղանակով (այդ թվում՝ էլեկտրոնային) հասանելի դարձնելն օրենքով նախատեսված սուբյեկտներին պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը»:

4.4. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է համարում անդրադառնալ այն հարցին, թե Օրենսգրքի վերաբերելի կարգավորումներով որքանով է ապահովված դատական ակտի հասանելիությունն անձին (կողմին), և արդյոք համապատասխան իրավակարգավորումները համահունչ են Սահմանադրական դատարանի վերոնշյալ իրավական դիրքորոշումներին: Այդ առնչությամբ, Սահմանադրական դատարանը հարկ է համարում Օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել Օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի (ընդունված՝ 17.06.1998 թ., ուժը կորցրած՝ 09.04.2018 թ.), Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի՝ նշված դրույթների հետ համակարգային առումով փոխկապակցված մի շարք դրույթների հետ՝ ընդգծելով համապատասխան իրավակարգավորումների առանցքային տարբերակիչ գծերը: Այսպես, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով (373-րդ հոդվածի 1-ին մաս, 393-րդ հոդվածի 13-րդ մաս), Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով (114-րդ հոդվածի 6-րդ մաս, 149-րդ հոդված) նախատեսված է, իսկ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքով (124-րդ, 2212 հոդվածներ) նախատեսված էր **դատական ակտի** (եզրափակիչ դատական ակտի) **դատական նիստում հրապարակման կարգ**: Մինչդեռ, Օրենսգրքը դատական նիստ գումարելու միջոցով դատարանի եզրափակիչ դատական ակտերը հրապարակելու կարգ չի նախատեսում՝ սահմանելով նշված ակտերի **դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով** հրապարակման կարգ (Օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մաս, 179-րդ հոդվածի 1-ին մաս, 386-րդ հոդվածի 1-ին մաս): Դատարանի եզրափակիչ դատական ակտերի հրապարակման Օրենսգրքով սահմանված նոր կարգը միտված է դատական ակտի հրապարակման և շահագրգիռ (իրավասու) անձին հասանելիության միջև ընկած ժամանակային այն խզումը հնարավորինս բացառելուն, որն առաջանում է(ր) Հայաստանի Հանրա-

պետության քաղաքացիական դատավարության նախկին օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի և Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի կարգավորումների պայմաններում:

Ելնելով վերոնշյալից կարելի է արձանագրել, որ Օրենսգրքի համապատասխան կարգավորումներն, ըստ էության, ուղղված են դատական ակտի՝ դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակման պահից անձի՝ իր իրավունքները շոշափող դատական ակտին նշված կայքի միջոցով հասանելիություն ձեռք բերելուն, դատական ակտին ծանոթանալու հնարավորություն ընձեռելուն, որպիսի պայմաններում դատական ակտի բողոքարկման ժամկետի՝ հրապարակման պահից հաշվարկելու կանոնակարգումն, ընդհանուր առմամբ, անձի վրա անհամաչափ բեռ չի դնում: Այդուհանդերձ, դատական իշխանության պաշտոնական կայքում դատական ակտի հրապարակումը որպես պատշաճ ծանուցում կարող է դիտարկվել էլեկտրոնային սարքավորումների և կապուղիների համընդհանուր հասանելիության պայմաններում:

**4.5.** ՄԻԵԴ պրակտիկայի համաձայն՝ դատական ակտի բողոքարկման (հայց ներկայացնելու) իրավունքը պետք է իրականացվի այն պահից, երբ համապատասխան անձը ստացել է դատարանի որոշմանը ծանոթանալու իրական հնարավորություն (Cherednichenko and Others v. Russia, 07.11.2017 թ. վճիռ, գանգատ թիվ 35082/13, 66-րդ կետ, Ivanova and Ivashova v. Russia, 26.01.2017 թ. վճիռ, գանգատներ թիվ 797/14 և 67755/14, 45, 57-րդ կետեր, Aepi S.A. v. Greece 11.04.2002 թ. վճիռ, գանգատ թիվ 48679/99, 26-րդ կետ):

«Դատարանը նշում է, որ համաձայն ներպետական օրենսդրության և պրակտիկայի (...), դիմումատուն իրավունք ուներ (ex officio) ստանալու Վերաքննիչ դատարանի որոշման գրավոր օրինակը, և այդ գործընթացը դատական մարմինների իրավասության շրջանակներում է, որոնք էլ պատասխանատու են գործընթացի ձգձգումների համար: (...) դատարանը կիսում է Հանձնաժողովի այն տեսակետը (...), որ (...) վեցամսյա ժամկետը, որը հաշվարկվում է սկսած որոշման գրավոր տարբերակի տրամադրման օրվանից» (Worm v. Austria, 29.08.1997 թ. վճիռ, գանգատ թիվ 83/1996/702/894, 33-րդ կետ):

«(...) այն դեպքերում, երբ դիմումատուն իրավունք ունի ստանալու ներքին վերջնական որոշման գրավոր պատճենը, (...) վեցամսյա ժամկետի հաշվարկը մեկնարկում է որոշման գրավոր տարբերակի տրամադրման օրվանից (...): Այն դեպքերում, երբ ներպետական

օրենսդրությունը չի նախատեսում ծառայությունների մատուցում, դատարանը նպատակահարմար է գտնում որպես վճռի ուղարկման վերջնական ելակետային ամսաթիվ հաշվել այն ամսաթիվը, երբ կողմերը հաստատապես կարող էին ծանոթանալ դրա բովանդակությանը» (Papachelas v. Greece, 25.03.1999 թ. վճիռ, գանգատ թիվ 31423/96, 30-րդ կետ):

**4.6.** Օրենսդիրը, մի կողմից՝ սահմանել է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով դատական ակտի հրապարակման կարգ, մյուս կողմից՝ որպես լրացուցիչ երաշխիք, Օրենսգրքի 179-րդ հոդվածի 2-րդ մասով, 386-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսել է դատական ակտի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրը գործին մասնակցող անձանց ուղարկելու դատարանի պարտականությունը (եթե այն մինչ այդ նրանց առձեռն չի հանձնվել):

Վերոնշյալի առնչությամբ, Վճռաբեկ դատարանն Օրենսգրքի համապատասխան դրույթներին տվել է այնպիսի մեկնաբանություն, որով դատական իշխանության պաշտոնական կայքէջում դատական ակտի հրապարակումը, ըստ էության, չի դիտարկել իբրև անձի բողոքարկման իրավունքի իրացման ապահովման ինքնուրույն և լիարժեք երաշխիք: Վճռաբեկ դատարանն, ըստ էության, որդեգրել է այն մոտեցումը, համաձայն որի՝ անձի բողոքարկման իրավունքի իրացումը լիարժեք կապահովվի ոչ թե այն դեպքում, երբ դատական ակտը հրապարակվի կայքէջում, այլ այն ժամանակ, երբ դատական ակտի հրապարակումից հետո դատարանը դրա օրինակն ուղարկի (կամ հանձնի) համապատասխան անձին: Եվ միայն դատական ակտի հրապարակման և այն ուղարկելու (հանձնելու) երկու տարբեր գործողությունների միաժամանակյա առկայության պարագայում կարձանագրվի դատական ակտին՝ հասանելի դարձնելու դատարանի պատշաճ պարտականությունը՝ դրանով իսկ ապահովելով անձի՝ դատական ակտի բողոքարկման իրավունքի իրացման լիարժեք նախադրյալներ: Այսպես, Վճռաբեկ դատարանի թիվ ԿԴ/0412/02/18 քաղաքացիական գործով 30.05.2019 թ. որոշման մեջ նշված է. «(...) դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու պարտականության պատշաճ իրականացման մասին կարելի է եզրահանգումներ կատարել միայն այն դեպքում, երբ դատարանը պատշաճ իրագործել է վերոնշյալ երկու պարտականությունները, այն է՝

ա) հայտարարված օրը դատական ակտը հրապարակել է դատական իշխանության պաշտոնական կայքում,

բ) դատական ակտի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկել է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ այն առձեռն չի հանձնվել նրանց»:

Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԵԴ/17609/02/18 քաղաքացիական գործով 19.04.2019 թ. որոշման մեջ, մասնավորապես, արձանագրված է. «(...) եթե վճռի օրինակը բողոքաբերին ուղարկելու և նրա կողմից ստանալու փաստը հաստատող որևէ ապացույց գործում առկա չէ», ապա «...վերաքննիչ բողոք ներկայացնելու դատավարական ժամկետը հաշվարկելիս Վերաքննիչ դատարանը պետք է հիմք ընդունի վճռի օրինակը ստանալու օրվա վերաբերյալ բողոքաբերի կողմից ներկայացված տեղեկությունը՝ այն համարելով հավաստի (...)»: Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԱԸԴ/0051/02/19 քաղաքացիական գործով 05.05.2020 թ. որոշման մեջ, մասնավորապես, արձանագրված է. «(...) դատական ակտն առձեռն հանձնելու կամ ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրը բողոք բերած անձին ուղարկելու վերաբերյալ ապացույցի բացակայության պայմաններում Դատարանն ամբողջապես չի իրականացրել օրենքով իր վրա դրված պարտականությունը (...)»:

Սույն գործի առնչությամբ թիվ ԵԱԴԴ/3222/02/14 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի՝ «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» 01.07.2020 թ. որոշման մեջ նշված է. «Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ գործում առկա թիվ RL040090715AM, թիվ RL040080772AM և թիվ RL040090769AM փոստային անդորրագրերի և փոստային հավաստագրերի համաձայն, Վերաքննիչ դատարանի 26.03.2020 թվականի որոշումն համապատասխանաբար Ռաֆայել Խաչատրյանին և Լիլիթ Թարվերդյանին (Խաչատրյան), Սաթենիկ, Ռաֆայել Խաչատրյանների և Լիլիթ Թարվերդյանի (Խաչատրյան) ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանին ուղարկվել է հաջորդ օրը՝ 27.03.2020 թվականին, որը վերջիններս ստացել են 13.04.2019 թվականին: Վերաքննիչ դատարանի 26.03.2020 թվականի որոշման դեմ Սաթենիկ, Ռաֆայել Խաչատրյանների և Լիլիթ Թարվերդյանի (Խաչատրյան) ներկայացուցիչը վճռաբեկ բողոք է ներկայացրել 05.05.2020 թվականին փոստային ծառայությանը հանձնելու եղանակով: Նման պայմաններում Վճռաբեկ դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում առկա չէ բողոքաբերից անկախ պատճառներով դատական ակտը նրան ուշ հասու լինելու հանգամանքը, քանի որ Վերաքննիչ դատարանը ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 386-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթով 26.03.2020 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

որոշումը հաջորդ օրը՝ 27.03.2020 թվականի պատվիրված նամակով ուղարկել է Ռաֆայել Խաչատրյանին և Լիլիթ Թարվերդյանին (Խաչատրյան), Սաթենիկ, Ռաֆայել Խաչատրյանների և Լիլիթ Թարվերդյանի (Խաչատրյան) ներկայացուցիչ Գուրգեն Թորոսյանին, հետևաբար բողոք բերած անձի միջնորդությունն անհիմն է և ենթակա է մերժման...»: Այդ առնչությամբ, Վճռաբեկ դատարանի «ՀՀ վճռաբեկ դատարանի քաղաքացիական և վարչական պալատի 01.07.2020 թվականի «Վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին» որոշման մեջ առկա վրիպակն ուղղելու մասին» 17.11.2020 թ. որոշմամբ «(. . .) որը վերջիններս ստացել են 13.04.2019 թվականին» գրառման փոխարեն հարկ է կարդալ «(. . .) որը վերջիններս ստացել են 13.04.2020 թվականին» գրառումը:

Համաձայն Դատական դեպարտամենտից ստացված պատասխան գրության՝ (N ԴԴ-1 Ե-178, 20 հունվարի 2021թ.) «... թիվ ԵԱԴԴ/3222/02/14 քաղաքացիական գործով Վերաքննիչ քաղաքացիական դատարանի 2020 թ. մարտի 26-ի եզրափակիչ դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով «Datalex.am» դատական տեղեկատվական համակարգում հրապարակվել է 2020 թ. մարտի 26-ին (ինչը հավաստվում է համակարգում դատական ակտի հրապարակման դաշտի ստեղծման ամսաթվի գրառումով)»:

4.7. Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքին համապատասխան՝ դատական ակտերի՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով հրապարակման կարգը, նպատակամղված լինելով նաև արդարադատության արդյունավետության բարձրացմանը, դատական վարույթի հրապարակայնության, դատական ակտի ոչ միայն գործին մասնակցող անձանց, այլև հանրային հասանելիության և անձի դատական բողոքարկման իրավունքի իրացման իրական երաշխիքների ապահովմանը, այդուհանդերձ, օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, չի բացառում դատական ակտի թղթային տարբերակը դատական ակտի բողոքարկման՝ Օրենսգրքով սահմանված ժամկետի կեսերին կամ ավարտին կամ ժամկետից հետո գործին մասնակցող անձին հասանելիության հնարավորությունն, անգամ այն պայմաններում, երբ Օրենսգրքով դատարանի՝ դատական ակտը դատական իշխանության պաշտոնական կայքում հրապարակելու պարտականության հետ մեկտեղ, սահմանված է նաև դատարանի՝ դատական ակտի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրը գործին մասնակցող անձանց

ուղարկելու պարտականությունը, եթե մինչ այդ այն առձեռն չի հանձնվել նրանց: Սահմանադրական դատարանի գնահատմամբ դատարանի կողմից վերոնշյալ երկու պարտականությունների պատշաճ կատարումը, այդուհանդերձ, չի կարող ամբողջ ծավալով երաշխավորել անձի դատական բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումը՝ հաշվի առնելով դատական ակտի հրապարակման, այն հասցեատիրոջն ուղարկելու (եթե մինչ այդ այն առձեռն չի հանձնվել) և հասցեատիրոջ կողմից այն փաստացիորեն ստանալու պահերի միջև առկա ժամանակային գործոնը և դրանով պայմանավորված՝ դատական ակտը բողոքարկելու իրական հնարավորության ապահովման անհրաժեշտությունը: Այդ առնչությամբ, Սահմանադրական դատարանը, հաշվի առնելով ՍԴՈ-1052, ՍԴՈ-1062, ՍԴՈ-1249, ՍԴՈ-1254 որոշումներում արտահայտած իրավական դիրքորոշումները, ինչպես նաև դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի հիմնախնդրին առնչվող՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայի վերլուծության հիման վրա սույն գործի քննության շրջանակներում վերահաստատում է նախկինում իր կողմից արտահայտված իրավական դիրքորոշումն առ այն, որ օրենսդրորեն պետք է սահմանվեն անհրաժեշտ ու բավարար երաշխիքներ դատական ակտը բողոք բերողի կողմից ամբողջությամբ ու ողջամիտ ժամկետում ստանալու և դատարանի մատչելիության ու արդար դատաքննության իր իրավունքներն արդյունավետ իրացնելու համար:

**4.8.** Դիմողների այն մոտեցման առնչությամբ, թե Օրենսգրքով սահմանված չեն վճարել բողոք բերելու մեկամսյա ժամկետը բաց թողնելու դեպքում այն հարգելի համարելու Վճարել դատարանի հայեցողության սահմաններն ու շրջանակները, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի դրույթների վերլուծությունից բխում է, որ դատարանը բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդության քննության արդյունքում հայեցողական լիազորություն չունի: Այն բոլոր դեպքերում, երբ դատարանը պարզի, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, իրավական հետևանքը մեկն է՝ պետք է որոշում կայացվի բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին: Օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասում տեղ գտած «որոշում է կայացնում» ձևակերպումը ենթադրում է դատարանի ոչ թե հայեցողությունը, այլ կոնկրետ որոշում կայացնելու պարտականությունը:

Բացի դրանից, հաշվի առնելով նաև Սահմանադրական դատա-

րանի մի շարք որոշումներով (ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249) արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի այն բոլոր դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից (նրա կամքից) անկախ պատճառներով, իրավունքի ուժով (ex jure) բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը թողնվի դատարանի հայեցողությանը, ձևավորված այդպիսի իրավակիրառ պրակտիկայի պայմաններում բացառվում է նաև դատարանների կողմից «հարգելի պատճառի» գնահատման այնպիսի ազատությունը, ինչը կհանգեցնի բողոք բերող անձի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետը հարգելի չհամարելուն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի՝ դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկման ենթակա է այդ ակտի հրապարակման պահից այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված ժամկետում:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 փետրվարի 2021 թվականի  
ՄԴՈ-1575





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ՍԴՈ-1575 ՈՐՈՇՄԱՆ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ՄԱՍԻ  
2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ ԱՅԴ ԿԵՏԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԱՍՈՎ  
ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԱՐՅԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Սաթենիկ Խաչատրյանի, Ռաֆայել Խաչատրյանի և Լիլիթ Թարվերդյանի դիմումի հիման վրա` ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի և 391-րդ հոդվածի 1-ին մասի` Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի փետրվարի 2-ի ՍԴՈ-1575 որոշմամբ (հրապարակվել է 2021 թվականի փետրվարի 5-ին) որոշել է.

«1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, համաձայն որի` դատական ակտի բողոքարկման մեկնաբանությամբ, համաձայն որի` դատական ակտի հրապարակման պահից այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված ժամկետում: (...):»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվա-



կանի փետրվարի 2-ի ՍԴՈ-1575 որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետին և որոշման նշված կետին վերաբերող մասերով պատճառաբանություններին (որի մասով որոշմանը ես դեմ եմ քվեարկել)՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

*Հարկ եմ համարում ընդգծել, որ քննարկվող որոշմանն իմ անհամաձայնությունը վերաբերում է միայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 391-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի պատճառաբանություններին և եզրահանգմանը:*

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններն ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի

կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունը իրավաստեղծ և իրավակիրատ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու՝ փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով պայմանավորված՝ ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

1. Սահմանադրական դատարանի որոշման առանցքում դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկումը հրապարակման պահից սահմանելու իրավաչափության հարցն է (էջ 10), և որոշմամբ ներկայացված պատճառաբանությունների հիման վրա որոշման եզրափակիչ մասում Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասին տրվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկման ենթակա է այդ ակտի հրապարակման պահից այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված ժամկետում:

Անդրադառնալով Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասի վերաբերյալ Սահմանադրական դատարանի պատճառաբանություններին և քննարկվող իրավանորմին որոշման եզրափակիչ մասում տրված մեկնաբանությանը, հարկ եմ համարում նշել հետևյալը.

Սահմանադրական դատարանը 2006 թվականի հոկտեմբերի 18-ի ՍԴՈ-652 որոշմամբ արձանագրել է, որ «ժամկետային սահմանափակման նպատակն է պահպանել իրավական որոշակիությունը և ապահովել, որպեսզի գործերը վերանայվեն ողջամիտ ժամկետներում», իսկ 2012 թվականի հոկտեմբերի 16-ի ՍԴՈ-1052 որոշման մեջ Սահմանադրական դատարանը նշել է, որ «(...) ստորադաս դատարանի դատական ակտի բողոքարկման համար որոշակի ժամկետի սահմանումը հետապնդում է իրավաչափ նպատակ՝ երաշխավորե-

լու իրավական որոշակիությունը (...):»

Այս դիրքորոշումն արտացոլված է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ Եվրոպական դատարան) որոշումներում, որոնց համաձայն՝ բողոք ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարգավորումը նպատակ ունի ապահովել արդարադատության պատշաճ իրականացումը, և մասնավորապես, իրավական որոշակիության սկզբունքը: Շահագրգիռ անձինք պետք է ակնկալեն, որ այդ կանոնները կիրառվելու են (*տե՛ս, օրինակ, Pérez de Rada Cavanilles v. Spain գործով Եվրոպական դատարանի 28.10.1998 թվականի վճիռը, Sotiris and Nikos Koutras ATTEE v. Greece գործով Եվրոպական դատարանի 16.11.2001 թվականի վճիռը*):

Օրենսգրքի վիճարկվող՝ 391-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու առավելագույն ժամկետը՝ այն կապելով բողոքարկվող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետի ավարտի հետ: Հաշվի առնելով, որ օրինական ուժի մեջ մտնելու պահից դատական ակտն օժտվում է որոշակի հատկանիշներով<sup>1</sup>, որոնք իրացվում են այդ դատական ակտի իրավական գործողության ընթացքում, օրենսդիրը որպես ընդհանուր կանոն սահմանել է, որ վերաքննիչ դատարանի դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք կարող է բերվել մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետի ավարտը:

Նման իրավակարգավորումն առաջին հերթին կարևորվում է գործին մասնակցող անձանց իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանությունն ապահովելու անհրաժեշտության տեսանկյունից: Անձինք իրավունք ունեն ակնկալելու, որ իրենց քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին առնչվող գործով կայացված դատական ակտը, մտնելով օրինական ուժի մեջ, գործնականում ձեռք է բերելու վերջնական դարձած դատական ակտին բնորոշ բոլոր հատկանիշները:

Կարծում եմ՝ վերաքննիչ դատարանի դատական ակտի բողոքարկումը մինչև այդ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետի ավարտը թույլատրելը, վերը նշված իրավական դիրքորոշումներին համահունչ, կոչված է ապահովելու արդարադատության պատշաճ իրականացումը և իրավունքի գերակայության, մասնավորապես՝ դրա հիմնարար տարր հանդիսա-

<sup>1</sup> Օրինակ՝ օրինական ուժի մեջ մտնելուց հետո դատական ակտը ձեռք է բերում պարտադիրության և կատարելիության հատկանիշներ (Օրենսգրքի 5-րդ հոդվածի 5-րդ մաս):

ցող իրավական որոշակիության սկզբունքի իրացումը:

Միաժամանակ նպատակ ունենալով անհամաչափ չսահմանափակել բողոք բերող անձի իրավունքները՝ օրենսդիրը նախատեսել է վճռաբեկ բողոք բերելու համար սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում այն վերականգնելու հնարավորություն, որը կարգավորվել է Օրենսգրքի 119-րդ հոդվածով: Այսինքն՝ Օրենսգրքի 119-րդ և 391-րդ հոդվածներով սահմանված կառուցակարգերի միջոցով ապահովվում է ողջամիտ հավասարակշռություն վերոգրյալ իրավունքների և սկզբունքների միջև:

Հետևաբար կարծում եմ, որ օրենսդրի կողմից սահմանված վերոգրյալ իրավակարգավորումներն ապահովում են անձի՝ Սահմանադրության 61-րդ հոդվածով ամրագրված դատական պաշտպանության իրավունքի իրացումը, ուստի Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ: Ավելին՝ տվյալ դեպքում՝ Վճռաբեկ դատարանի կողմից նշված իրավանորմը կիրառվել էր դրա բովանդակությունից անմիջականորեն բխող մեկնաբանությամբ, ուստի Սահմանադրական դատարանի կողմից այն այլ կերպ մեկնաբանելու անհրաժեշտությունը բացակայում էր:

2. Հատկանշական է, որ Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասը վերաբերում է միայն վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու ժամկետի ավարտին (բողոքարկվող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետի ավարտը): Այդ իրավանորմը չի սահմանում վճռաբեկ ատյանում բողոքարկման ժամկետի սկիզբը: Այսինքն՝ քննարկվող իրավանորմի կարգավորման առարկայում ներառված չէ այն հարցը, թե որ պահից է սկսում հոսել վերաքննիչ դատարանի դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու ժամկետը՝ բողոքարկվող դատական ակտը վերաքննիչ դատարանի կողմից հրապարակվելու, դրա օրինակը գործին մասնակցող անձին ուղարկվելու, այն վերջինիս կողմից ստացվելու, թե որևէ այլ պահից:

Կարծում եմ՝ իրավական ակտի վիճարկվող դրույթը Սահմանադրական դատարանի մեկնաբանությամբ Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու դեպքում Սահմանադրական դատարանի կողմից այդ դրույթին տրվող մեկնաբանությունը չպետք է վերաբերի այնպիսի հարցերի, որոնք այդ դրույթի կարգավորման դաշտում ներառված չեն:

Մինչդեռ Սահմանադրական դատարանի քննարկվող որոշումը

կառուցված է վճռաբեկ ատյանում բողոքարկման ժամկետի հաշվարկը հրապարակման պահից սկսելու իրավաչափության հարցի շուրջ, իսկ որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասին տրվել է այնպիսի մեկնաբանություն, որով ոչ թե բացահայտվում է այդ դրույթի համառոտ սահմանադրաիրավական բովանդակությունը, այլ, ըստ էության, կարգավորվում է այդ դրույթին չվերաբերող, դրանով չկարգավորված հարց: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի քննարկվող դիրքորոշումը չէր կարող արտահայտվել Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասի մեկնաբանության միջոցով:

Վերոգրյալի հիման վրա խնդրահարույց եմ համարում Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասին Սահմանադրական դատարանի կողմից այդ դրույթի բովանդակությանը չվերաբերող մեկնաբանություն տալը:

**3.** Միաժամանակ կարծում եմ, որ քննարկվող որոշման եզրափակիչ մասի 2-րդ կետով բացահայտված՝ Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրաիրավական բովանդակության ձևակերպումն ինքնին խնդրահարույց է:

Սահմանադրական դատարանը 2011 թվականի փետրվարի 25-ի ՄԴՈ-943 որոշմամբ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ «Սահմանադրական դատարանի որոշումները պետք է ընկալվեն նաև իրենց կառուցվածքային ամբողջության մեջ (նախաբան, նկարագրական-պատճառաբանական և եզրափակիչ մասեր)՝ ապահովելու այդ որոշումներով առաջադրված իրավակարգավորման բովանդակության, սկզբունքների ու առանձնահատկությունների, ինչպես նաև դրանցից բխող օրյեկտիվ և սուբյեկտիվ վարքագծի կանոնների իրացման հստակությունը»:

Միաժամանակ հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 64-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասին ներկայացվող պահանջը՝ կարծում եմ, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 2-րդ կետով սահմանված որոշումն ընդունելու դեպքում Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասը պետք է ձևակերպվի այնպիսի հստակությամբ, որ միանշանակ կերպով բացահայտի վիճարկվող դրույթի համառոտ սահմանադրաիրավական բովանդակությունը:

Այսպես՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ դատական

ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկման ենթակա է այդ ակտի հրապարակման պահից այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել) օրենքով նախատեսված ժամկետում:

Նման պայմաններում հարց է առաջանում, թե ինչպես պետք է հաշվարկվի դատական ակտի բողոքարկման ժամկետն այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը չի ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ չի ունեցել (հասանելի չի դարձել) օրենքով նախատեսված ժամկետում: Ընդ որում, միայն վերոնշյալ հարցի քննարկման արդյունքում է հնարավոր պարզել բողոքաբերի կողմից բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնված լինելու հանգամանքը և այն վերականգնելու միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը:

Վիճարկվող իրավադրույթի նման սահմանադրաիրավական բովանդակության դեպքում օբյեկտիվ դիտորդի մոտ կարող է տպավորություն ստեղծվել, թե հրապարակման պահից մեկամսյա ժամկետի ավարտից հետո դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը չի դադարեցնում բողոքարկման իրավունքի իրացման հնարավորությունը, որպիսի պայմաններում էլ ստացվում է, որ այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը չի ստացել կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ չի ունեցել (հասանելի չի դարձել) օրենքով նախատեսված ժամկետում, ապա վճռաբեկ բողոքը դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելուց հետո բերվելու դեպքում բողոքարկման ժամկետը կարող է չհամարվել բաց թողնված, որից էլ կբխի այն եզրահանգումը, որ բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու մասին միջնորդություն ներկայացնելու անհրաժեշտությունը բացակայում է:

Մինչդեռ կարծում եմ՝ խոսքը տվյալ դեպքում կարող էր վերաբերել ոչ թե՛ դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկմանը, այլ՝ բաց թողնված դատավարական ժամկետի վերականգնմանը: Այսինքն՝ բողոքաբերի կողմից բողոքարկվող դատական ակտն օրենքով նախատեսված ժամկետում ստանալու/չստանալու կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ ունենալու/չունենալու (հասանելի դառնալու/չդառնալու) հանգամանքը կարող էր նշանակություն ունենալ ոչ թե՛ դատական ակտի բողոքարկման ժամկետը հաշվարկելու, այլ՝ այն վերականգնելու հարցում:

Ընդ որում, նման մոտեցում որդեգրել է նաև Սահմանադրական դատարանը՝ իր որոշումներում (օրինակ՝ ՄԴՈ-1254) արձանագրելով բողոքաբերից անկախ պատճառներով դատական ակտի բողոքարկման ժամկետի բացթողումը համապատասխան միջնորդության և ապացույցների պարագայում իրավունքի ուժով հարգելի ճանաչելու անհրաժեշտությունը:

Տվյալ դեպքում, եթե Սահմանադրական դատարանը նպատակ է ունեցել քննարկվող որոշման հիմքում դնել Սահմանադրական դատարանի նախկին որոշումների նույն տրամաբանությունը, ապա կարծում եմ, որ հնարավոր տարբերակումները բացառելու նպատակով որոշման եզրափակիչ մասում առնվազն անհրաժեշտ էր շեշտադրում կատարել բաց թողնված ժամկետը վերականգնելու անհրաժեշտության վրա:

Այսպիսով, ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ եթե անգամ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ էր համարում բացահայտել վիճարկվող իրավադրույթի նման սահմանադրաիրավական բովանդակությունը, ապա բողոքաբերի կողմից բողոքարկվող դատական ակտն օրենքով նախատեսված ժամկետում ստանալու/չստանալու կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ ունենալու/չունենալու (հասանելի դառնալու/չդառնալու) հանգամանքը որոշման եզրափակիչ մասում պետք է կապվեր ոչ թե՛ դատական ակտի բողոքարկման ժամկետը հաշվարկելու, այլ՝ այն վերականգնելու հարցին:

4. Բացի վերոնշյալից, հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն գործով Սահմանադրական դատարանի կողմից կայացված որոշման պատճառաբանությունները վերաբերում են դատական ակտի բողոքարկման ժամկետի հաշվարկումը հրապարակման պահից սահմանելու իրավաչափության հարցին, վերոնշյալ պատճառաբանությունների համատեքստում, ինչպես նաև ելնելով քաղաքացիական դատավարության օրենսդրական համալիր զարգացումների ընդհանուր հայեցակարգից՝ հարկ եմ համարում կատարել համեմատական վերլուծություն Օրենսգրքով և 1998 թվականի հունիսի 17-ին ընդունված, 1999 թվականի հունվարի 1-ին ուժի մեջ մտած և 2018 թվականի ապրիլի 9-ին ուժը կորցրած ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (այսուհետ՝ Նախկին օրենսգրք) սահմանված դատական ակտերի հրապարակման կարգի և առանձնահատկությունների վերաբերյալ:

Այսպես՝ Օրենսգրքով նախատեսվել է, ի թիվս այլնի, եզրափակիչ

դատական ակտի (այդ թվում՝ վերաքննիչ բողոքի քննության արդյունքով կայացված դատական ակտի) հրապարակում **դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով** (Օրենսգրքի 17-րդ հոդվածի 7-րդ մաս, 386-րդ հոդվածի 1-ին մաս): Միաժամանակ նախատեսվել է դատական ակտի օրինակն առձեռն չհանձնելու դեպքում դատարանի՝ դատական ակտի օրինակը հրապարակման հաջորդ օրը գործին մասնակցող անձանց ուղարկելու պարտականություն (Օրենսգրքի 179-րդ հոդվածի 7-րդ մաս, 386-րդ հոդվածի 3-րդ մաս):

Մինչդեռ Նախկին օրենսգրքի իրավակարգավորմամբ նախատեսվել էր ինչպես վճռի, այնպես էլ Վերաքննիչ դատարանի դատական ակտի միայն եզրափակիչ մասերի **հրապարակում դրն-բաց նիստում**: Միաժամանակ սահմանվել էր վերոնշյալ դատական ակտերի օրինակը հրապարակվելուց անմիջապես հետո գործին մասնակցած անձանց չհանձնելու դեպքում դատարանի՝ հրապարակման կամ հաջորդ օրը պատվիրված նամակով վերջիններիս ուղարկելու պարտականություն (Նախկին օրենսգրքի 8-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերություն, 124-րդ հոդվածի 4-րդ պարբերություն, 2212-րդ հոդված): Դատական ակտերի հրապարակման նման կարգ նաև նախատեսված է ինչպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով (373-րդ հոդվածի 1-ին մաս, 393-րդ հոդվածի 13-րդ մաս), այնպես էլ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով (114-րդ հոդվածի 6-րդ մաս, 393-րդ հոդվածի 13-րդ մաս):

Վերոնշյալ իրավանորմերի բովանդակությունից հետևում է, որ թե՛ նախկին, և թե՛ գործող իրավակարգավորումների պայմաններում դատարանը կրում է (էր) երկու պարտականություն, այն է՝ դատական ակտի հրապարակում և դատական ակտի հանձնում կամ ուղարկում գործին մասնակցող անձանց, սակայն ներկա իրավակարգավորման դեպքում Օրենսգիրքը դատական ակտի հրապարակման առումով բովանդակում է Նախկին օրենսգրքից, ինչպես նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքից տարբերակված իրավակարգավորում:

Մասնավորապես՝ նախկին իրավակարգավորմամբ նախատեսված էր դատական ակտի **միայն եզրափակիչ մասի հրապարակում դատական նիստի ընթացքում**, միաժամանակ, ինչպես արդեն վերը նշվեց, օրենսդիրը դատարանին պարտավորեցնում էր դատական ակտի օրինակը հրապարակումից հետո առձեռն հանձնել, իսկ դրա անհնարինության դեպքում ուղարկել գործին մասնակցող անձանց:



Այսինքն՝ Նախկին օրենսգրքը դատական ակտի հրապարակման միջոցով ամբողջական դատական ակտի՝ գործին մասնակցող անձանց հասանելիության վերաբերյալ կարգավորում չէր բովանդակում, ուստի դատական ակտի հրապարակման միջոցով գործին մասնակցող անձանց կարող էր հասու դառնալ միայն դատական ակտի եզրափակիչ մասը, որպիսի պայմաններում վերջիններս առանց դատական ակտի ամբողջական տեքստի առկայության չէին կարող արդյունավետորեն իրացնել իրենց բողոքարկման իրավունքը: Ուստի դատարանը միաժամանակ կրում էր դատական ակտի հանձնման կամ ուղարկման պարտականություն, սակայն նման պայմաններում հաճախ չէր ապահովվում ամբողջական դատական ակտի՝ գործին մասնակցող անձի կողմից հասանելիությունը դատական ակտի բողոքարկման համար օրենսգրքով սահմանված ժամկետներում, որպիսի պայմաններում էլ վերջինս զրկվում էր դատական պաշտպանության, այդ թվում՝ դատարանի մատչելիության սահմանադրական հիմնարար իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունից: Հարկ է նշել, որ ներկայումս քրեադատավարական և վարչադատավարական կարգով դատական ակտի հրապարակումն ունի բովանդակային համարժեքություն Նախկին օրենսգրքի իրավակարգավորման հետ:

Մինչդեռ այլ է իրավիճակը Օրենսգրքով սահմանված իրավակարգավորման դեպքում, մասնավորապես՝ օրենսդիրը, ելնելով անձի համար դատական ակտի բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման հնարավորություն ապահովելու անհրաժեշտությունից, նախատեսել է դատական ակտի ամբողջական տեքստի՝ գործին մասնակցող անձանց հասանելիության արդյունավետությունն ապահովող կառուցակարգային համապատասխան երաշխիքներ:

Այսպես՝ գործող իրավակարգավորմամբ նախատեսվել է **ամբողջական դատական ակտի հրապարակում դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով**՝ միաժամանակ չբացառելով դատական ակտի օրինակը հրապարակումից հետո առձեռն հանձնելու կամ հաջորդ օրը գործին մասնակցող անձանց ուղարկելու վերաբերյալ դատարանի պարտականությունը: Այսինքն՝ Օրենսգրքով դատական ակտի հրապարակման նոր կարգ սահմանելը միտված է գործին մասնակցող անձանց դատական ակտին առավել սեղմ ժամկետներում հաղորդակից դարձնելուն:

Վերոնշյալ նոր իրավակարգավորման առնչությամբ թիվ ԿԴ/

0412/02/18 քաղաքացիական գործով 2019 թվականի մայիսի 30-ին կայացված որոշմամբ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Օրենսգրքով սահմանված դատական ակտի հրապարակման վերաբերյալ նոր կարգավորմանը, նշել է, որ դատական ակտերի հրապարակման գործող եղանակը, ուղղված լինելով հրապարակայնության սկզբունքի երաշխավորմանը, արդարադատության արդյունավետության բարձրացմանը, առաջնահերթ նպատակաուղղված է բողոքարկման իրավունքի իրականացման համար նախադրյալներ ապահովելուն: Էլեկտրոնային կայքի միջոցով դատական ակտի հրապարակման պայմաններում դատական ակտն անմիջապես հրապարակումից հետո կարող է հասանելի լինել գործին մասնակցող անձանց և ապահովել վերջիններիս բողոքարկման իրավունքի իրականացման համար իրական երաշխիքներ:

Այսպիսով, օրենսդիրը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով դատական ակտի հրապարակումը դիտարկել է որպես դատական ակտը գործին մասնակցող անձանց անմիջապես հասանելի դարձնելու միջոց այն դիտարկելով որպես անհրաժեշտ երաշխիք ամբողջական դատական ակտի գործին մասնակցող անձանց համար գործնականում լիարժեքորեն հասու լինելու և դատական ակտի բողոքարկման իրավունքը սահմանված ժամկետում իրացնելու համար:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով (ՍԴՈ-652, ՍԴՈ-665, ՍԴՈ-690, ՍԴՈ-719, ՍԴՈ-1052, ՍԴՈ-1394) արձանագրել է, որ ստորադաս դատարանի դատական ակտը վերադատության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքի լիարժեք իրացումը մեծապես կախված է այն հանգամանքից, **թե որքանով է բողոքարկվող դատական ակտը հասու շահագրգիռ անձին**, ողջամիտ ինչ ժամկետում նա կարող է հիմնավոր բողոք ներկայացնել իր իրավունքների դատական պաշտպանության համար:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1062 որոշմամբ նշել է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտի բողոքարկման ժամկետը դատական ակտի հրապարակման պահից հաշվարկելն ինքնին չի հակասում ՀՀ Սահմանադրությանը, եթե առկա են **դատական ակտին ծանոթանալու և դրա բողոքարկման իրավունքն արդյունավետ իրականացնելու համար բավարար ժամանակ ապահովող երաշխիքներ:**

Ուստի օրենսդիրը, դատական ակտը վերադատության կարգով բողոքարկելու եղանակով անձի դատական պաշտպանության սահ-

մանադրական իրավունքի իրացման համար որպես երաշխիք ամրագրելով դատական ակտի հրապարակում դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով, նպատակ է ունեցել ապահովել դատական ակտի ամբողջական և ողջամիտ ժամկետում հասանելիությունը գործին մասնակցող անձանց:

Բացի այդ, նախկին իրավակարգավորումների առնչությամբ Սահմանադրական դատարանի կողմից մի շարք որոշումներով տրված մեկնաբանությունները նույնպես չեն բացառում դատական ակտի բողոքարկման ժամկետի հոսքը հրապարակման պահից հաշվարկելը դատական ակտը կողմին ցանկացած եղանակով, այդ թվում **էլեկտրոնային եղանակով** հասանելի դարձնելու դեպքում:

Մասնավորապես քննարկվող որոշմամբ Սահմանադրական դատարանի կողմից վկայակոչված նախկին որոշումների բովանդակությունը հանգում է հետևյալին.

- «(...) Եթե օրենսդիրը, հիմք ընդունելով բողոքարկվող դատական ակտի բնույթը, հաշվի առնելով դատարանի մատչելիության և արդար դատաքննության իրավունքների իրացման անհրաժեշտությունը, տվյալ ակտի բողոքարկման համար բավարար է համարել տվյալ ժամկետը, (...), ապա **նշված ժամկետները պետք է մեկնարկեն բողոքարկվող դատական ակտին ծանոթանալու իրական հնարավորության առաջացման պահից**» (16.10.2012թ., ՄԴՈ-1052):

- Սահմանադրական դատարանը, բողոքարկվող դատական ակտը բողոքաբերին հասանելի դարձնելու հարցի համատեքստում անդրադառնալով «հանձնվի» և «ուղարկվում է» եզրույթներին, նշել է հետևյալը. «Այդ հասկացությունները բովանդակային առումով կարող են նույնական համարվել միայն այն դեպքերում, երբ **դատական ակտի ամբողջական տեքստն** այդ ժամկետում տրամադրվում է համապատասխան սուբյեկտներին **կամ տեղակայվում է դատարանի պաշտոնական կայքում**՝ նրանց անմիջապես հասանելի լինելու համար, ինչն արվում է բազմաթիվ երկրներում» (16.10.2012թ., ՄԴՈ-1052):

- «Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների ուժով իրավակիրառական պրակտիկան պետք է առաջնորդվի այն ընկալմամբ, որ դատական ակտի բողոքարկման մեկամսյա ժամկետը հաշվարկման ենթակա է այդ ակտի հրապարակման պահից՝ այն դեպքում, երբ բողոքաբերը բողոքարկվող դատական ակտը ստացել **կամ դրա ամբողջական տեքստն իր տրամադրության տակ է ունեցել (հասանելի է դարձել)** օրենքով նախատեսված եռօրյա ժամկետում» (26.04.2016թ., ՄԴՈ-1268):

- «(...) դատական ակտի հանձնումն անձին (նրա համար հասանելի դարձնելը) այն հրապարակելու օրվանից հնգօրյա ժամկետում ինքնին սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ, եթե երաշխավորվի դատական ակտի բողոքարկման համար սահմանված ժամկետն ամբողջությամբ առանց **դատական ակտի պատճենը կողմին ցանկացած եղանակով (այդ թվում՝ էլեկտրոնային) հասանելի դարձնելու** համար սահմանված ժամկետի հաշվառման, և պայմանով, որ դատական ակտի պատճենը կողմին էլեկտրոնային եղանակով հասանելի դարձնելը չբացառի դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելը» (08.12.2017թ., ՍԴՈ-1394):

Սահմանադրական դատարանի վերոնշյալ որոշումների մեջբերված դիրքորոշումների համալիր մեկնաբանությունից բխում է, որ նույնիսկ նախկին իրավակարգավորման պայմաններում Սահմանադրական դատարանի մոտեցումը միտված էր նախատեսելու դատական ակտի հասանելիություն ցանկացած եղանակով, այդ թվում՝ էլեկտրոնային՝ միաժամանակ չբացառելով դատական ակտի թղթային տարբերակը կողմին տրամադրելու դատարանի պարտականությունը:

Այսինքն՝ ըստ Սահմանադրական դատարանի որոշումների տրամաբանության՝ օրենքով նախատեսված ժամկետում դատական ակտի՝ էլեկտրոնային եղանակով հասանելիությունը չբացառելը նպատակ է ունեցել ապահովելու գործին մասնակցող անձանց կողմից դատական ակտին առավել արագ և սեղմ ժամկետներում ծանոթանալու իրական հնարավորությունը:

Հարկ էմ համարում նշել, որ օրենսդիրը, նախատեսելով դատական ակտի հրապարակումը դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով, միաժամանակ հաշվի առնելով ներկայումս էլեկտրոնային ռեսուրսի օբյեկտիվորեն սահմանափակ բնույթը, նախատեսել է նաև գործին մասնակցող անձանց դատական ակտի օրինակը հանձնելու կամ ուղարկելու պահանջ: Ուստի նման պայմաններում դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու նպատակով դատարանն ունի երկու պարտականություն:

Վերոնշյալ պարտականությունների առնչությամբ իր դիրքորոշումն է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը 2019 թվականի մայիսի 30-ի թիվ ԿԴ/0412/02/18 քաղաքացիական գործով կայացված որոշմամբ՝ վեր հանելով դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելուն ուղղված դատարանի կողմից պար-

տականությունների պատշաճ կատարման եղանակները: Հիշյալ որոշմամբ Վճռաբեկ դատարանը, մասնավորապես, արձանագրել է հետևյալը.

«(...) դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու պարտականության պատշաճ իրականացման մասին կարելի է եզրահանգումներ կատարել միայն այն դեպքում, երբ դատարանը պատշաճ իրագործել է վերոնշյալ երկու պարտականությունները, այն է՝

ա) հայտարարված օրը դատական ակտը հրապարակել է դատական իշխանության պաշտոնական կայքում,

բ) դատական ակտի օրինակը ոչ ուշ, քան դրա հրապարակման հաջորդ օրն ուղարկել է գործին մասնակցող անձանց, եթե մինչ այդ այն առձեռն չի հանձնվել նրանց»:

Վերոնշյալից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը կրում է դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու երկու եղանակների պատշաճ կատարման պարտականություն, որպիսի պարտականության չկատարման դեպքում էլ բացասական հետևանքները չեն կարող դրվել վերադատության կարգով բողոք բերող անձի վրա:

Միաժամանակ անդրադառնալով վերադատության կարգով բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու և այն վերականգնելու հարցի վերաբերյալ գործնականում առաջացող իրավիճակներին՝ հարկ եմ համարում նշել, որ դրանք երկուսն են՝

1) երբ դատարանը պատշաճորեն չի կատարում գործին մասնակցող անձանց հայտարարված օրը դատական ակտն առձեռն հանձնելու կամ հրապարակման հաջորդ օրն ուղարկելու իր պարտականությունը<sup>2</sup>,

2) երբ դատարանը պատշաճորեն կատարում է դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու իր պարտականությունները, սակայն բողոք բերող անձը բողոքը ներկայացնում է օրենքով սահմանված ժամկետի խախտմամբ (*հայտարարված օրը դատական ակտը հրապարակվում է դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով, և դատական ակտն առձեռն հանձ-*

<sup>2</sup> Ինչ վերաբերում է դատարանի կողմից դատական ակտը հայտարարված օրը հրապարակելու պարտականությունը պատշաճ չկատարելուն, ապա տվյալ դեպքում հարկ չեմ համարում քննարկել նշված իրավիճակը՝ հաշվի առնելով այն իրավակարգավորումը, որ դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու ժամկետը սկսվում է հաշվարկվել դատական ակտի հրապարակման պահից, ուստի դատարանի կողմից այն ուշ հրապարակելը «հետաձգում է» դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետի հաշվարկը՝ բացառելով դրանով պայմանավորված բողոք բերելու համար սահմանված ժամկետի բացթողումը:

նվում է կամ հրապարակման հաջորդ օրը դատական ակտն ուղարկվում է գործին մասնակցող անձանց):

Այսինքն՝ գործնականում առկա առաջին իրավիճակի պայմաններում գործին մասնակցող անձանց կողմից բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելը կարող է համարվել դատարանի պարտականության ոչ պատշաճ կատարման հետևանք, մինչդեռ երկրորդ իրավիճակի դեպքում առկա է դատարանի պարտականության պատշաճ կատարում, ուստի նման պայմաններում անհրաժեշտ է պարզել, թե որն է գործին մասնակցող անձանց կողմից բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու պատճառը, արդյոք այն կախման մեջ է գտնվում բողոք բերող անձի կամքից անկախ պատճառների հետ, թե՛ ոչ, որպիսի հարցի պարզումից հետո էլ հնարավոր է եզրահանգում կատարել բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդության բավարարման կամ մերժման ենթակա լինելու մասին:

Վերոգրյալի լույսի ներքո հարկ եմ համարում արձանագրել, որ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ չի տարանջատել վերոնշյալ իրավիճակները չկարևորելով բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետի բացթողնման հիմքում ընկած պատճառները: Նման դիրքորոշումը հնարավոր է դարձնում դատարանի կողմից դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու իր պարտականությունների պատշաճ կատարման պայմաններում գործին մասնակցող անձանց կողմից բողոք բերելու համար օրենքով սահմանված ժամկետը բաց թողնելու դեպքում իրենց դատավարական իրավունքներից օգտվելու իրավունքի չարաշահման դեպքերի առաջացումը:

Ավելին՝ Սահմանադրական դատարանը, թիվ ԿԴ/0412/02/18 քաղաքացիական գործով 2019 թվականի մայիսի 30-ին Վճռաբեկ դատարանի կողմից կայացված որոշմանը տալով ընդարձակ մեկնաբանություն, վերջինիս կողմից արտահայտված դիրքորոշումները կիրառելի է համարել նաև վերոնշյալ իրավիճակի համար, մինչդեռ Վճռաբեկ դատարանը նշված որոշմամբ անդրադարձել է միայն դատարանի կողմից դատական ակտը գործին մասնակցող անձանց հասանելի դարձնելու պարտականությունները պատշաճ չկատարելու և այդ դեպքում բողոք բերելու համար օրենքով սահմանված դատավարական ժամկետը վերականգնելու հարցերին:

5. Նշվածի համատեքստում անհրաժեշտ էմ համարում նաև անդրադառնալ ներկայացված դիմումով Սահմանադրական դատարանի առջև բարձրացված հարցին:

Ըստ դիմողների՝ վիճարկվող դրույթները «այնքանով, որքանով չեն նախատեսում բողոքաբերի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետն իրավունքի ուժով հարգելի համարելու դատարանների պարտականությունը», հակասում են Սահմանադրությանը (էջեր 6 և 11): Դիմողներն այդպիսի դեպքի օրինակ են համարել դատական ակտը փոստային առաքմամբ ուշ ստանալը (էջ 6): Ըստ դիմողների՝ «դատական ակտի հրապարակումից և այն դիմումատուներին ուղարկելու պահից մինչև փաստացիորեն դիմումատուների կողմից այն ստանալը և դատական ակտի բովանդակությանը ամբողջությամբ ծանոթանալը անցել է որոշակի ժամանակահատված և այս դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բողոքաբերներն իրենց կամքից անկախ պատճառներով դատական ակտը ստացել են ավելի ուշ և ներկայացրել են վճռաբեկ բողոք բերելու ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու միջնորդություն, ապա իրավունքի ուժով (ex jure) բաց թողնված ժամկետը պետք է համարվեր հարգելի (...):» (էջեր 11-12):

Տվյալ դեպքում դիմողների կողմից բարձրացված խնդիրը վերաբերում է դատական ակտի բողոքարկման ժամկետը բաց թողնելու պատճառը հարգելի համարելու հարցին այն դեպքում, երբ բողոքաբերները դատական ակտի թղթային օրինակն ուշ են ստացել: Մինչդեռ, ինչպես վերը նշվեց, այն հարցի պարզումը, թե արդյոք կոնկրետ դեպքում դատական ակտը գործին մասնակցող անձանց ուղարկելու՝ դատարանի պարտականությունը պատշաճ կատարված լինելու պայմաններում դիմողներն այն ուշ են ստացել իրենց կամքից անկախ պատճառներով, թե իրենց կամքից կախված՝ ոչ պատշաճ դատավարական վարքագիծ դրսևորելու պատճառներով, ենթակա է պարզման բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու միջնորդության քննարկման շրջանակում:

Այսպես՝ Օրենսգրքի 119-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է, որ դատարանը, պարզելով, որ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել հարգելի պատճառով, որոշում է կայացնում բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը բավարարելու մասին:

Վճռաբեկ դատարանը, թիվ ԵԿԴ/2628/02/13 քաղաքացիական գործով 2014 թվականի դեկտեմբերի 3-ի որոշմամբ անդրադառնալով Նախկին օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված

իրավակարգավորմանը<sup>3</sup>, արձանագրել է, որ «(...) բաց թողնված ժամկետը հարգելի համարելու հիմքեր օրենսդիրը կոնկրետ չի նշել՝ այդ հիմքերի ողջամիտ և բավարար լինելու հանգամանքի գնահատողական ֆունկցիան թողնելով դատարանների հայեցողությանը: Այնուամենայնիվ, ժամկետը բաց թողնելու հիմքերը պայմանականորեն կարելի է բաժանել երկու խմբի՝ օբյեկտիվ և սուբյեկտիվ:

Օբյեկտիվ հիմքերի մեջ կարելի է դասել ֆորսմաժորային դեպքերը՝ տարերային աղետները, ինչպես նաև արտակարգ իրավիճակը և նմանատիպ այլ՝ անձանց կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Սուբյեկտիվ գործոնը պայմանավորված է անմիջականորեն տվյալ անձի հետ կապված և գործնականում ավելի երկար ժամանակ պահանջող ողջամիտ խնդիրների լուծմամբ, առանց որի անհնար է դատավարական գործողության կատարումը (...):»

Թեև Վճռաբեկ դատարանի վերոգրյալ դիրքորոշումն արտահայտվել է Նախկին օրենսգրքով սահմանված իրավակարգավորումների կապակցությամբ, սակայն դրանք, ինչպես Օրենսգրքի համապատասխան իրավանորմը, դատավարական ժամկետի վերականգնումը պայմանավորում են դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու հետ՝ չմանրամասնելով այդ պատճառները հարգելի համարելու չափանիշները:

Փաստորեն, մի կողմից օրենսդիրը սահմանել է, որ դատավարական ժամկետը գործին մասնակցող անձի կողմից հարգելի պատճառով բաց թողնվելու դեպքում դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունը ենթակա է դատարանի կողմից բավարարման, իսկ մյուս կողմից Վճռաբեկ դատարանը դատավարական ժամկետը բաց թողնելու «հարգելի պատճառ» է համարել նաև անձի կամքից անկախ հիմքերով առաջացող պատճառները:

Ավելին՝ Սահմանադրական դատարանը նույնպես արձանագրել է, որ «(...) հաշվի առնելով նաև Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներով (ՄԴՈ-1052, ՄԴՈ-1062, ՄԴՈ-1249) արտահայտված այն իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ այն բոլոր դեպքերում, երբ բողոք բերելու համար օրենքով սահմանված ողջամիտ ժամկետը խախտվում է բողոք բերող անձից (նրա կամքից) անկախ պատճառներով, իրավունքի ուժով (ex jure) բաց թողնված ժամկետը պետք է համարվի հարգելի, այլ ոչ թե այդ հարցի լուծումը

<sup>3</sup> «Դատարանը, գործին մասնակցող անձի դիմումի հիման վրա, նույն օրենսգրքով կամ այլ օրենքներով սահմանված դատավարական ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի համարելու դեպքում, վերականգնում է բաց թողնված ժամկետը»:



թողնվի դատարանի հայեցողությանը, ձևավորված այդպիսի իրավակիրառ պրակտիկայի պայմաններում բացառվում է նաև դատարանների կողմից «հարգելի պատճառի» գնահատման այնպիսի ազատությունը, ինչը կհանգեցնի բողոք բերող անձի կամքից անկախ պատճառներով բաց թողնված ժամկետը հարգելի չհամարելուն»:

Վերոգրյալից հետևում է, որ գործող իրավակարգավորումների պայմաններում առկա է դատարանի պարտականությունը՝ բավարարել բաց թողնված դատավարական ժամկետը վերականգնելու վերաբերյալ միջնորդությունն այն դեպքում, երբ գործին մասնակցող անձը դատավարական ժամկետը բաց է թողել իր կամքից անկախ պատճառներով, իսկ կոնկրետ դեպքում վճռաբեկ ատյանում բողոքարկման ժամկետը բողոքաբերի կամքից անկախ պատճառներով բաց թողնելու հարցի պարզումը ենթադրում է ներկայացված միջնորդության քննարկում, որը տվյալ դեպքում Վճռաբեկ դատարանի լիազորությունն է:

Այս կապակցությամբ հարկ էմ համարում ընդգծել, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետն անձին հնարավորություն է տալիս վիճարկելու դատական ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Ասվածը նշանակում է, որ անձը չի կարող Սահմանադրական դատարանից հայցել դատական ակտի վերանայում, դրա սահմանադրականության գնահատում, նույնիսկ եթե նա ձևականորեն պահպանում է Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումին առաջադրվող պահանջները՝ իր կողմից բարձրացվող խնդիրը ներկայացնելով որպես նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականության վիճարկում:

Տվյալ դեպքում դիմողները, համաձայն չլինելով Վճռաբեկ դատարանի այն եզրահանգմանը, որ «(...) տվյալ դեպքում առկա չէ բողոքաբերից անկախ պատճառներով դատական ակտը նրան ուշ հասու լինելու հանգամանքը (...)», Սահմանադրական դատարան ներկայացրած դիմումով նաև բարձրացնում են Վճռաբեկ դատարանի որոշման օրինականության, դրանով նորմատիվ իրավական ակտի դրույթների կիրառման իրավաչափության հարց, ինչը, Սահմանադրական դատարանի 2009 թվականի մարտի 17-ի ՄԴԱՌ-21 աշխատակարգային որոշմամբ արտահայտված և բազմիցս վերահաս-

տատված իրավական դիրքորոշման համաձայն, Սահմանադրական դատարանում քննության ենթակա չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ ներկայացված անհատական դիմումն ակնհայտ անհիմն չհամարելու, սույն գործի վարույթը չկարճելու և վիճարկվող դրույթի սահմանադրականությանն ըստ էության անդրադառնալու պայմաններում անհրաժեշտ էր կիրառել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 1-ին կետով սահմանված լիազորությունը՝ կայացնելով Օրենսգրքի 391-րդ հոդվածի 1-ին մասը Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին որոշում:

Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ Սահմանադրական դատարանի որոշման՝ վերը նշված մասերին իմ անհամաձայնությունն առավելապես պայմանավորված է այն հանգամանքով, որ Սահմանադրական դատարանի կողմից քննարկվող հարցերը դիտարկվել են միակողմանիորեն՝ միայն դատական ակտի դեմ բողոք բերող անձի իրավունքների իրացումն ապահովելու տեսանկյունից: Միանշանակ ընդունելի համարելով գործին մասնակցող անձանց կողմից բողոք բերելու իրավունքի իրացման համար արդյունավետ կառուցակարգեր նախատեսելու անհրաժեշտությունը, միաժամանակ կարծում եմ, որ այն չպետք է ուղեկցվի գործին մասնակցող մյուս անձանց իրավունքների անհամաչափ սահմանափակմամբ: Ուստի նման իրավիճակում անհրաժեշտ էր գտնել գործին մասնակցող բոլոր անձանց իրավունքները հավասարակշռող լուծում, ինչն օրենսդիրն այս դեպքում իրականացրել էր մի կողմից նախատեսելով դատական ակտի բողոքարկման հնարավորություն մինչև այդ ակտի օրինական ուժի մեջ մտնելու համար սահմանված ժամկետի ավարտը, մյուս կողմից՝ սահմանելով բաց թողնված ժամկետը վերականգնելու դատարանի պարտականությունը՝ այն հարգելի պատճառներով բաց թողնելու դեպքում՝ համապատասխան միջնորդության և միջնորդությունը հիմնավորող ապացույցների առկայության պայմաններում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«11» փետրվարի 2021թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԻՈՂԱՆՆԱ ՉԱԽՄԱԽՉՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 21-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Դ» ԿԵՏԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

12 փետրվարի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի Իոհաննա Չախմախչյանի ներկայացուցիչներ Ա. Թևանյանի, Ս. Մանուկյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Իոհաննա Չախմախչյանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 21-րդ հոդվածի «դ» կետի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2004 թվականի դեկտեմբերի 8-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի ապրիլի 19-ին:

Օրենսգրքի «Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեցող անձինք» վերտառությամբ 21-րդ հոդվածի «դ» կետը սահմանում է.

«Ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունեն

(...)

(...)

(...)

դ) ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսինը.

(...)»:

Ընդունումից ի վեր Օրենսգրքի 21-րդ հոդվածը որևէ փոփոխության չի ենթարկվել:

Գործի քննության առիթն Իոհաննա Չախմախյանի 2020 թվականի օգոստոսի 14-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի վերաբերելի դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը վիճարկում է ՀՀ ընտանեկան օրենսգրքի 21-րդ հոդվածի «դ» կետի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 78 և 79-րդ հոդվածներին:

Իր դիրքորոշումը փաստարկելու համար դիմողը, նախ, արձանագրում է, որ 29.10.2019թ. վճռով Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանը մերժել է ամուսնությունն անվավեր ճանաչելու մասին իր պահանջն այն պատճառաբանությամբ, որ հայցվորն ի սկզբանե իմացել է ամուսնության կեղծ լինելու մասին, որպիսի պայմաններում Օրենսգրքի 21-րդ հոդվածի «դ» կետի ուժով հայցը ենթակա է մերժման:

Դիտարկելով Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումները՝ դիմողը նշում է, որ ստացվում է

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

այնպես, որ տվյալ նորմով «օրենսդիրը նախատեսել է ամուսնու կամ ամուսինների կեղծ ամուսնությունն անվավեր ճանաչելու հիմքերը, և միաժամանակ այդպիսի հիմքերի սահմանված լինելու պայմաններում՝ դատարան դիմելու անհնարինություն, այնքանով, որ վիճարկվող իրավանորմով օրենսդիրը դատարան դիմելու իրավունքը վերապահել է ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսնուն, իսկ դա էլ այն պայմաններում, երբ ամուսինները կեղծ ամուսնությունը գրանցելիս դրսևորում են այդպիսի փոխադարձ կամահայտնություն»:

Դիմողը մատնանշում է, որ եթե օրենսդրի նպատակը լիներ սահմանափակել ամուսիններից որևէ մեկի դատարան դիմելու իրավունքը, ապա Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում չէր նախատեսի **ամուսինների փոխադարձ կամահայտնությամբ** առանց ընտանիք ստեղծելու մտադրության գրանցված ամուսնությունն անվավեր ճանաչելու հիմքեր:

Դիմողը գտնում է, որ ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի մեկնաբանմամբ «օրենսդիրը շահագրգիռ անձին/ամուսնուն կամ շահագրգիռ անձանց/ամուսիններին հնարավորություն է ընձեռել առանց ընտանիք ստեղծելու մտադրության գրանցված ամուսնությունը ճանաչել անվավեր. այսինքն՝ օրենսդիրը համապատասխան հիմքերի առկայության դեպքում ինչպես մեկ, այնպես էլ երկու ամուսնուն հնարավորություն է տվել դիմելով դատարան անվավեր ճանաչել կեղծ ամուսնությունը: Ընդ որում՝ ամուսնությունն անվավեր է ճանաչում միայն դատարանը (ՀՀ ընտանեկան օրենսգրքի 20-րդ հոդվածի 1-ին մաս)»:

Սակայն, ըստ դիմողի՝ վիճարկվող իրավանորմով սահմանափակվում է ամուսիններից որևէ մեկի՝ կեղծ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունքը, չկա ողջամիտ հարաբերակցություն առկա սահմանափակման, ձեռնարկվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև:

Դիմողը գտնում է, որ նման պայմաններում օրենսդիրը որևէ իրավաչափ նպատակ չէր կարող հետապնդել՝ սահմանելով անձի դատարան դիմելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ այսպիսի իրավակարգավորումներ, և դրանով անհամաչափորեն և արհեստականորեն սահմանափակվում են ամուսիններից որևէ մեկի ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունքը՝ նշելով նաև առկա իրավակարգավորման հստակ, հասանելի և կանխատեսելի չհամարվելու հանգամանքը:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը նշում է, որ անվավեր ճանաչվում է այն ամուսնությունը, որը կնքվել է օրենքով սահմանված պայմանների խախտումով, ինչպես նաև այն ամուսնությունը, որը գրանցվել է առանց ընտանիք կազմելու մտադրության (կեղծ ամուսնություն) և դատարանի կողմից ճանաչվել է անվավեր՝ նրա կնքմամբ առաջացած իրավական հետևանքների վերացմամբ: Ընդ որում, ամուսնությունը կարող է անվավեր ճանաչվել միայն օրենքով սահմանված որոշակի հանգամանքների առկայության դեպքում, ի թիվս այլնի՝ նաև կեղծ ամուսնության դեպքում: Ընդ որում, ամուսնության անվավերության հետևանքով ծագում են ամուսինների իրավունքների և պարտականությունների վրա որոշակի ազդեցություն ունեցող իրավաբանական հետևանքներ, որպիսի ցանկը հստակ սահմանված է օրենսդրությամբ:

Պատասխանողը, անդրադառնալով նման հայցով դատարան դիմելու իրավունք ունեցող անձանց ցանկին, նշում է, որ օրենսդիրն ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք տվել է այն անձանց, որոնց այս կամ այն իրավունքը խախտվել է տվյալ ամուսնության կնքմամբ, և ամուսնության կեղծ լինելու մասին իմացող ամուսնուն ևս ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունք վերապահելը չի բխում ինչպես ամուսնությունն անվավեր ճանաչելու գործող իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությունից, այնպես էլ Մահմանադրությամբ երաշխավորված ընտանիքի պաշտպանության ու արդարության սկզբունքներից և բարոյական նորմերից:

Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասի և 21-րդ հոդվածի «դ» կետի միջև դիմողի կողմից նշված առկա հակասության վերաբերյալ պատասխանողը նշում է, որ Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասում տրված է «կեղծ ամուսնություն» սահմանումը, ինչն էլ նշանակում է, որ չէր կարող չօգտագործվել «ամուսիններ» եզրույթը, բացի դրանից, ուսումնասիրելով այլ երկրների ընտանեկան օրենսդրությունը (Ռուսաստան, Ղազախստան), որտեղ կարգավորումները գրեթե նույնական են, ինչ ներպետական օրենսդրությունում, հատկանշական է, որ կեղծ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունք, բացի ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսնուց, վերապահված է նաև դատախազին, և դատախազի կողմից նման հայցերի ներկայացումը նպատակ ունի պաշտպանել պետական և հանրային շահերը:

Պատասխանողի կարծիքով կա անհրաժեշտություն կատարել օրենսդրական փոփոխություն և «Օրենսգրքի վիճարկվող դրույթում որպես այդպիսի պահանջով դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտ նախատեսել նաև դատասիսագին՝ հաշվի առնելով հանրային և պետական շահերի պաշտպանության անհրաժեշտությունը, դիմել դատարան ամուսինների կամ նրանցից մեկի իմացությամբ կնքված կեղծ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով»:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող նորմով նախատեսվող սահմանափակումը պայմանավորված է անվավերության ինստիտուտով և բխում է ամուսնությունն անվավեր ճանաչելու իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությունից, մասնավորապես նման իրավունքի վերապահումը նպատակ ունի վերականգնել խախտված իրավունքը, մինչդեռ օրենքի պահանջների խախտմամբ ամուսնություն կնքած ամուսնու կամ ամուսինների խախտված իրավունքի վերականգնման խոսք չի կարող լինել, և վերջիններիս նման իրավունքով օժտելը չի բխում առկա օրենսդրական կարգավորումներից: Հետևաբար, Օրենսգրքի վիճարկվող դրույթն այնքանով, որքանով չի նախատեսում ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունքը նաև ամուսնության կեղծ լինելու մասին իմացող ամուսնուն, չի հակասում Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 78 և 79-րդ հոդվածներին:

**3. Գործի շրջանակներում պարզաբանման ենթակա հանգամանքները**

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյո՞ք վիճարկվող դրույթը վիճահարույց է իրավական որոշակիության սահմանադրաիրավական սկզբունքի տեսանկյունից և խախտում է անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքը:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության 16-րդ հոդվածի համաձայն՝ ընտանիքը, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք, ինչպես նաև մայրությունը և մանկությունը պետության հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո են: Կոնկրետացնելով համապատասխան դրույթ-

ները՝ օրենսդիրն Օրենսգրքի «Ընտանեկան օրենսդրության հիմնական սկզբունքները» վերտառությամբ 1-ին հոդվածում սահմանել է, որ ընտանեկան օրենսդրությունը ելնում է ընտանիքի ամրապնդման, ընտանեկան հարաբերությունները փոխադարձ սիրո ու հարգանքի վրա կառուցելու, ընտանիքի բոլոր անդամների փոխադարձ օգնության և պատասխանատվության, ընտանեկան գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, ընտանիքում երեխաների դաստիարակության առաջնայնության, ընտանիքի անդամների կողմից իրենց իրավունքների անարգել իրականացումն ապահովելու, այդ իրավունքների դատական պաշտպանության հնարավորության անհրաժեշտությունից:

Մյուս կողմից, նախատեսելով ամուսնության ազատությունը՝ Սահմանադրության 35-րդ հոդվածով նախատեսվել է, որ ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն: Ամուսնության, ամուսնությունը դադարելու և անվավեր ճանաչելու պայմաններն ու կարգը սահմանված են ընտանեկան օրենսդրությամբ: Մասնավորապես, ամուսնությունը կնքվում է քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ ամուսնացող անձանց պարտադիր ներկայությամբ, իսկ ամուսինների իրավունքներն ու պարտականությունները ծագում են քաղաքացիական կացության ակտերի պետական գրանցում իրականացնող մարմիններում ամուսնության պետական գրանցման պահից:

Միաժամանակ Օրենսգրքը նախատեսում է ամուսնության դադարման և ամուսնությունն անվավեր ճանաչելու հիմքերը և կարգը: Մասնավորապես, Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է ամուսնության անվավեր ճանաչման երկու տարբեր հիմքեր: Հիմքերից մեկը վերաբերում է ամուսնության Օրենսգրքի 10-րդ, 11-րդ հոդվածներով և 12-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պայմանների խախտմանը, մյուսը՝ ընտանիք կազմելու մտադրության բացակայությանը (կեղծ ամուսնություն):

Ըստ Օրենսգրքի կեղծ ամուսնությունն **ամուսինների** կամ նրանցից մեկի առանց ընտանիք ստեղծելու մտադրության գրանցված ամուսնությունն է (հոդված 20): Այսինքն, սահմանելով կեղծ ամուսնության հիմքերը՝ օրենսդիրը չի բացառում, որ երկու ամուսիններն էլ ունենան կեղծ ամուսնություն կնքելու մտադրություն, կամ ամուսնությունը գրանցվի այդպիսի մտադրության մասին մյուս



ամուսնու տեղյակ լինելու պայմաններում:

Մյուս կողմից, Օրենսգրքի 21-րդ հոդվածը նախատեսում է ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմող սուբյեկտների սահմանափակ շրջանակը: Ըստ այդմ, ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ կարող են ներկայացնել միայն

ա) անչափահաս ամուսինը, նրա ծնողները (օրինական ներկայացուցիչները), ինամակալության և հոգաբարձության մարմինը, եթե ամուսնությունը կնքվել է ամուսնական տարիքի չհասած անձի հետ: Անչափահաս ամուսնու տասնութ տարին լրանալուց հետո ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավունք ունի միայն այդ ամուսինը:

բ) ամուսինը, որի իրավունքներն ամուսնության կնքմամբ խախտվել են, եթե ամուսնությունը կատարվել է ամուսիններից մեկի կամավոր համաձայնության բացակայության դեպքում՝ հարկադրանքի, խաբեության, մոլորության կամ ամուսնության պետական գրանցման պահին իր գործողությունները գիտակցելու և դրանք ղեկավարելու անհնարինության արդյունքով:

գ) ամուսինը, որը չի իմացել ամուսնության կնքմանն արգելք հանդիսացող հանգամանքների առկայության մասին, դատարանի կողմից անգործունակ ճանաչված ամուսնու ինամակալը, նախորդ չամուսնալուծված ամուսնության մեջ գտնվող ամուսինը, այլ անձինք, որոնց իրավունքները խախտվել են սույն օրենսգրքի 11-րդ հոդվածի պահանջների խախտումով կատարված ամուսնության կնքմամբ, ինչպես նաև ինամակալության և հոգաբարձության մարմինը:

դ) ամուսնության կեղծ լինելու մասին չիմացող ամուսինը:

ե) ամուսինը, որի իրավունքները խախտվել են սույն օրենսգրքի 12-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված հանգամանքների առկայության պատճառով:

Վերոշարադրյալից բխում է, որ այն դեպքերում, երբ երկու ամուսիններն էլ ունեցել են կեղծ ամուսնություն կնքելու մտադրություն, կամ ամուսիններից մեկը մինչև ամուսնությունը գրանցելն իմացել է մյուս ամուսնու կեղծ ամուսնություն կնքելու մտադրության մասին, ապա Օրենսգրքի համաձայն՝ **երկու ամուսիններն էլ ձեռք չեն բերում կեղծ ամուսնությունը դատական կարգով վիճարկելու իրավունք:**

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 20-րդ հոդվածով սահմանված պահանջից, ըստ

որի՝ միաժամանակ երկու ամուսինների՝ առանց ընտանիք ստեղծելու մտադրության գրանցված ամուսնությունը կեղծ ամուսնություն է, և, հետևաբար, դատական կարգով կարող է ճանաչվել անվավեր, ուղղակիորեն չի բխում, որ ամուսիններից յուրաքանչյուրը պետք է օժտվի նման ամուսնությունը դատական կարգով անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու հնարավորությամբ: Միանշանակ է, որ եթե կնքված ամուսնությունը չի համապատասխանում ընտանիքին և դրա կազմավորմանը ներկայացվող սահմանադրաիրավական պահանջներին, պետք է նախատեսվի հնարավորություն նման ամուսնությունն անվավեր ճանաչելու համար: Այսինքն՝ Օրենսգրքի 20-րդ հոդվածում «ամուսինները» բառի օգտագործումը չի նշանակում ամուսիններից յուրաքանչյուրի՝ դատարան դիմելու իրավունք, այլ դրանով օրենսդիրը, որպես անվավերության հիմք է դիտարկում ոչ միայն մեկ, այլ նաև երկու ամուսինների կողմից կեղծ ամուսնություն կնքելու հնարավոր դեպքը: Այս կապակցությամբ հիմնավոր չէ դիմողի այն տեսակետը, որ Օրենսգրքի 20-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված իրավակարգավորումն ինչպես մեկ, այնպես էլ երկու ամուսիններին հնարավորություն է տալիս կեղծ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դիմելու դատարան, և այդ առումով վիճարկվող դրույթը ձևակերպված է բավարար չափով հստակ և չի հանգեցնում իրավական անորոշության, իսկ համապատասխան իրավահարաբերությունների հասցեատերերն ի վիճակի են դրսևորելու կանխատեսելի վարքագիծ:

Այլ խնդիր է, թե ո՞վ պետք է կեղծ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դիմի դատարան այն դեպքում, երբ երկու ամուսիններն էլ ունեցել են կեղծ ամուսնություն կնքելու մտադրություն, այդ թվում, երբ ամուսիններից մեկը մինչև ամուսնությունը գրանցելն իմացել է մյուս ամուսնու կեղծ ամուսնություն կնքելու մտադրության մասին: Հաշվի առնելով, որ կեղծ ամուսնության արդյունքում ձևավորված դաշինքը համահունչ չէ ընտանիքի սահմանադրաիրավական բովանդակությանը, չի բխում հասարակության շահերից և որպես կանոն խախտում է այլ անձանց իրավունքները և շահերը, ակնհայտ է, որ պետք է լինեն համապատասխան գործիքակազմեր նման ամուսնությունները շահագրգիռ անձանց պահանջով անվավեր ճանաչելու համար: Միաժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ վերոնշյալ հարցը դուրս է անհատական դիմումի հիման վրա քննվող սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներից և անմիջականորեն չի առնչվում վիճարկվող դրույթի հետ, քանի որ Սահմանադրության

169-րդ հոդվածի համաձայն՝ անձն իրավասու է վիճարկել իր նկատմամբ կիրառված այն նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, որը հանգեցրել է **իր իրավունքների և ազատությունների խախտման**: Այդ առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ շահագրգիռ անձանց կամ մարմինների կողմից կեղծ ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջ ներկայացնելու իրավակարգավորումների հետ կապված թերությունների վերացումը գտնվում է Ազգային ժողովի տիրույթում, իսկ սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն իրավասու չէ գնահատել նման իրավակարգավորումների բացակայության սահմանադրականությունը:

**4.2.** Օրենսգրքի իրավակարգավորումների համաձայն՝ ամուսնական դաշինքն հնարավոր է խզել երկու եղանակով՝ ամուսնալուծությամբ կամ ամուսնությունն անվավեր ճանաչելու միջոցով: Ընդ որում, տարբեր են դրանց հիմքերը և իրավական հետևանքները: Այդ է պատճառը, որ ըստ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասի՝ անվավեր ճանաչված ամուսնությունը, առանձին բացառություններով հանդերձ, չի առաջացնում Օրենսգրքով ամուսինների համար նախատեսված իրավունքներ և պարտականություններ, կամ ըստ նույն հոդվածի 2-րդ մասի, ամուսնությունն անվավեր ճանաչած անձանց կողմից համատեղ ձեռք բերված գույքի նկատմամբ կիրառվում են բաժնային սեփականության մասին քաղաքացիական օրենսդրության նորմերը (ամուսնալուծության պարագայում Օրենսգրքի 26-րդ հոդվածի և Քաղաքացիական օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի ուժով կիրառվում է «ամուսնության ընթացքում ամուսինների ձեռք բերած գույքը նրանց համատեղ սեփականությունն է» կանոնը), կամ՝ ըստ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության՝ բարեխիղճ ամուսինն իրավունք ունի պահանջելու հատուցել իրեն պատճառված գույքային վնասը՝ քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով, որպիսի իրավունքը բացակայում է ամուսնալուծության պարագայում:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 23-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված և նույն հոդվածի 4-րդ և 5-րդ մասերում ամրագրված՝ վերը հիշատակված բացառություններին, ապա այդպիսի իրավակարգավորումն իր էությանմբ բնորոշ է ամուսնալուծության ինստիտուտին: Ամուսնությունն անվավեր ճանաչելու իրավակարգավորման շրջանակներում, որպես բացառություն, ամուսնալուծության ինստիտուտին բնորոշ իրավակարգավորում նախատեսելու հանգամանքը պայմանավորված է ընտանիքի հասարակության բնական և հիմ-

նական բջիջը հանդիսանալու, երեխայի շահերի առաջնահերթության, ընտանիքը, մայրությունը և մանկությունն իր հատուկ պաշտպանության և հովանավորության ներքո վերցնելու՝ պետության պոզիտիվ պարտականության հանգամանքներով: Դրանով է պայմանավորված նաև այն, որ Օրենսգրքի 23-րդ հոդվածի 5-րդ մասում ամուսնուց ապրուստի միջոցներ ստանալու մյուս ամուսնու իրավունքի պաշտպանության մինչև ամուսնությունն անվավեր ճանաչելու պահը ձեռք բերված համատեղ գույքը բաժանելու առնչությամբ դատարանին հայեցողական լիազորություն (օրենսդիրը դատարանի համար օգտագործում է «կարող է», «իրավունք ունի» բառերը) վերապահելն այն դեպքում, երբ դրանք ամուսնալուծության իրավակարգավորման շրջանակներում դատարանի կողմից պարտադիր լուծման հարցեր են: Նույն շահերով առաջնորդվելու տրամաբանությամբ էլ օրենսդիրն Օրենսգրքի 22-րդ հոդվածով սահմանել է ամուսնության անվավերությունը բացառող հանգամանքները:

Վերոգրյալից բխում է, որ օրենսդիրն ամուսնության անվավերության համար հատուկ կարգավորում նախատեսելիս կեղծ ամուսնություն կնքելը դիտարկել է որպես ամուսնության **իրավունքի չարաշահում**, քանի որ սուբյեկտիվ իրավունքն ի վնաս այլ անձի և հասարակության օգտագործելը նենգափոխում է ընտանիքի գաղափարը:

Իրավունքի տեսության մեջ իրավունքի չարաշահումն արձանագրվում է, երբ առկա է, որպես կանոն, հետևյալ պայմանների համակցությունը.

1. անձը պետք է ունենա համապատասխան իրավունքը,
2. իրավունքի չարաշահումը տեղի է ունենում սուբյեկտիվ իրավունքի իրացման ընթացքում, անձն առերևույթ գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան,
3. անձի՝ առերևույթ իրավաչափ գործողություններն հանգեցնում են պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերի խախտմանը, իսկ անձն ձգտում է հասնել իր համար ցանկալի արդյունքին կամ նպատակին,
4. իրավունքի չարաշահումը կամային գործընթաց է, այսինքն՝ անձը գիտակցում է, որ ինքն իր սուբյեկտիվ իրավունքը չարաշահում է, հետևաբար՝ պետք է կանխատեսի, որ կարող է վնաս պատճառել պետության, հանրության կամ այլ անձանց օրինական շահերին:

Այդ առումով իրավունքի չարաշահման առանձնահատկությունն այն է, երբ իրավունքի սուբյեկտն իր գործունեության ընթացքում

գործում է իրավական կարգադրագրերին համապատասխան, կատարում է օրենքով իր վրա դրված ֆորմալ պարտականությունները, սակայն խեղաթյուրում է իրավունքի նշանակությունը գործելով տվյալ իրավանորմի նպատակային նշանակությանը կամ տվյալ դեպքում՝ ամուսնության իրավունքի նպատակին և ոգուն հակառակ, ինչի արդյունքում վնաս է հասցվում այլ անձին, պետությանը, հասարակությանը:

Սույն գործի դատավարական նախապատմությունը վկայում է, որ ընդհանուր իրավասության դատարանում գործի քննության ընթացքում դատարանի կողմից արձանագրվել է, որ կեղծ ամուսնությունը կնքվել է նպատակ ունենալով ամուսնության պետական գրանցման վկայականն օգտագործել երիտասարդ ընտանիքներին արտոնյալ պայմաններով տրամադրվող բնակարանի ձեռքբերման նպատակով:

**4.3.** Վիճարկվող իրավակարգավորումը դիտարկելով դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով հանգամանորեն անդրադարձել է արդարադատության մատչելիության, արդար և արդյունավետ դատական քննության իրավունքների երաշխավորման սահմանադրական իրավաչափության խնդիրներին:

Սասնավորապես Սահմանադրական դատարանն իր՝ 2007 թվականի նոյեմբերի 28-ի ՍԴՈ-719 որոշման մեջ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «... որ հայցը կամ դիմումը դատարան իրավական պաշտպանության այն միջոցներն են, որոնցով հիմնական իրավունքների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքի կրող հանդիսացող ֆիզիկական կամ իրավաբանական անձը պաշտպանվում է **իր իրավունքների տարաբնույթ խախտումներից**, որոնք կարող են կատարվել ինչպես հանրային իշխանության, այնպես էլ մասնավոր անձանց կողմից»:

Միաժամանակ, դատարանի մատչելիության սահմանափակումների վերաբերյալ ՄԻԵԴ-ի արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ պետությունը դատարան դիմելու իրավունքից օգտվելու համար կարող է սահմանել որոշակի պայմաններ, «... պարզապես պետության կողմից կիրառված սահմանափակումները չպետք է այն կերպ կամ այն աստիճանի սահմանափակեն անձի դատարանի մատչելիության իրավունքը, որ վնաս հասցվի այդ իրավունքի բուն էությանը: Բացի դրանից, սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրա-

վաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» (*Case of Khalfaoui v. France, application no. 34791/97, 14/03/2000*):

Այս առումով, կեղծ ամուսնություն կնքելով՝ անբարեխիղճ ամուսինը գործում է ամուսնության իրավունքի նպատակին և ոգուն հակառակ: Հետևաբար, վերջինս չի կարող ձեռք բերել բարեխիղճ ամուսնու կարգավիճակ:

Նման մոտեցումն է որդեգրել օրենսդիրը, սահմանելով, որ օրենքի խախտմամբ ձեռք բերված կամ ձևականորեն օրենքի պահպանմամբ, սակայն իրավունքի նպատակային նշանակությանը հակառակ գործելու մտադրությամբ, այսինքն՝ իրավունքի չարաշահմամբ ձեռք բերված սուբյեկտիվ իրավունքը ենթակա չէ պաշտպանության:

Ինչ վերաբերում է իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքին, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով վիճարկվող դրույթով անբարեխիղճ ամուսնու կեղծ ամուսնությունը դատական կարգով անվավեր ճանաչելու հնարավորության սահմանափակումը հետապնդում է լեգիտիմ նպատակ, այն է՝ ապահովել ընտանիքի, որպես հասարակության բնական և հիմնական բջիջ, բնակչության պահպանման և վերարտադրման հիմք հանդիսանալը: Միաժամանակ, վիճարկվող դրույթը չի սահմանափակում ամուսինների հնարավորությունն ամուսնալուծության կարգով դադարեցնելու կնքված ամուսնությունը:

Բացի դրանից, վիճարկվող դրույթը կոչված է թույլ չտալու կեղծ ամուսնություն կնքելու միջոցով խախտել այլոց իրավունքները և օրինական շահերը՝ հետագայում անվավերության կարգով այն վիճարկելով հասնել իր համար բարենպաստ արդյունքի: Միաժամանակ, չեն կարող բացառվել այն դեպքերը, երբ ի սկզբանե կեղծ չհանդիսացող ամուսնություն կնքած ամուսինները, հետագայում գործելով անբարեխիղճորեն, փորձեն վիճարկել ամուսնությունը կեղծ լինելու հիմքով՝ այս կամ այն արդյունքին հասնելու համար, նկատի ունենալով, որ ամուսնությունն անվավեր է ճանաչվում կնքման պահից և ի տարբերություն ամուսնալուծության՝ հանգեցնում է իրավական այլ հետևանքների:

Այդ առումով Սահմանադրական դատարանը փաստում է, որ տվյալ պարագայում անձի՝ դատարան դիմելու իրավունքի սահմանափակման վերաբերյալ առկա իրավակարգավորումներն անհա-

մաշափորեն չեն սահմանափակվում ամուսիններից որևէ մեկի ամուսնությունն անվավեր ճանաչելու պահանջով դատարան դիմելու իրավունքը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 3.**

1. Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի 21-րդ հոդվածի «դ» կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

12 փետրվարի 2021 թվականի  
ՍԴՈ-1576



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ  
ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 416-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ  
ԿԵՏԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

19 փետրվարի 2021 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021



Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի հոկտեմբերի 4-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2016 թվականի նոյեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի բովանդակությունը հետևյալն է.

**«Հոդված 416. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության և (կամ) հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշվարկների կանոնները չպահպանելը**

(...)

3. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

(...)

2) 600 հազար դրամի չափով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով»:

Վիճարկվող դրույթը լրացվել է 21.12.17 թ. ՀՕ-266-Ն օրենքով, որով Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասը «կանոնների» բառից հետո լրացվել է «(բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի)» բառերով: Վիճարկվող դրույթը փոփոխության է ենթարկվել նաև 21.06.18 թ. ՀՕ-338-Ն օրենքով, որի համաձայն՝ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի «հանրային սննդի օբյեկտում իրականացվող հանրային սննդի գործունեության մասով, եթե այդ գործունեությունը Օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կամ 5-րդ կետի համաձայն, չի համարվում արտոնագրային հարկով հարկման օբյեկտ» բառերը փոխարինվել են «հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով» բառերով:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 2020 թվականի օգոստոսի 20-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգիրքը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը վիճարկում է Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համապատասխանությունը Սահմանադրության 28 և 29-րդ հոդվածներին:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի վերը նշված դրույթը «թույլատրելիի սահմաններից դուրս» տարբերակված մոտեցում է ցուցաբերում հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ, «ուստի խտրականություն է»:

Իր դիրքորոշումը փաստարկելու համար դիմողն արձանագրում է, որ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետը միևնույն (հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման) արարքի համար հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ սահմանում է 600 հազար դրամի չափով տուգանք, իսկ մնացած տնտեսվարող սուբյեկտների համար՝ 150 հազար դրամի չափով: Նշվածի հիման վրա դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթով հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտներն ավելի խիստ վերաբերմունքի են արժանացել, քան մնացածները:

Դիմողը նշում է նաև, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ ավելի մեծ չափով տուգանք սահմանելու առերևույթ բացատրություն չի տեսնում: Ասվածը հիմնավորելու համար դիմողն արձանագրում է, որ Պետական եկամուտների կոմիտեն, որը կիրառել է նորմը, միայն նշել է 600 քմ մակերեսը գերազանցող սպասարկման սրահ ունեցող հանրային սննդի օբյեկտների համար նախկինում գործող ավելի խիստ տուգանք սահմանելու պատճառները, սակայն, ըստ դիմողի, ներկայումս՝ վիճարկվող նորմով տարբերակման հիմքում դրված չէ սպասարկման սրահի մեծությունը:

Չվիճարկելով դիտարկվող իրավախախտումները կանխարգելելու համար ընդհանրապես խիստ տուգանքներ սահմանելու անհրաժեշտությունը՝ դիմողը նման մոտեցումն արդարացված է համարում, եթե դրանք տարածվում են հավասարապես բոլոր ոլորտների նկատմամբ, և եթե չկան տարբերակման օբյեկտիվ և ողջամիտ պատճառներ: Ըստ դիմողի՝ եթե օրենսդիրը մյուս ոլորտի հարկատուների համար ևս նման խիստ տուգանքներ չի սահմանել, ապա տվյալ պահին հանրային սննդի ոլորտում գործող սուբյեկտները «ենթարկվում են պակաս բարենպաստ վերաբերմունքի, քան մյուս-

ները՝ առանց պատշաճ հիմնավորման»:

Դիմողը գտնում է նաև, որ նման պայմաններում վիճարկվող նորմով դրսևորված տարբերակված մոտեցումը չի հետապնդում նաև իրավաչափ նպատակ: Ըստ այդմ՝ ընտրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև համաչափ կապի հարցը այլևս ենթակա չէ քննարկման: Այդուհանդերձ, դատարանն ավելորդ չի համարում նկատել, որ հանրային սննդի ոլորտում ընտրված տուգանքի չափը չորս անգամ գերազանցում է մյուս ոլորտներում գործող սուբյեկտների նկատմամբ միննույն խախտման համար սահմանված տուգանքի չափից:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը: Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում ամրագրված իրավական դիրքորոշումները՝ պատասխանողն արձանագրում է, որ ցանկացած տարբերակված մոտեցում չէ, որ հանգեցնում է խտրականության: Տարբերակված մոտեցումը, որն ունի **օբյեկտիվ և ողջամիտ հիմքեր, հետապնդում է իրավաչափ նպատակ, խտրականություն չէ:**

Վկայակոչելով Օրենսգրքի 253, 258 և 260-րդ հոդվածները և նշելով, որ հանրային սննդի ոլորտն այն բացառիկ ոլորտներից է, որտեղ շրջանառության հարկի շեմ չի կիրառվում և հարկի մեծությունը կախված է իրացման շրջանառության չափից, պատասխանողը գտնում է, որ «*օբյեկտիվորեն առաջացել է վտանգ, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները կունենան տնտեսական շարժառիթ՝ թերհայտարարագրել իրացման շրջանառությունների իրական ծավալները, քանի որ շրջանառության հարկի գծով հարկային բեռը մի քանի անգամ ավելի ցածր է, քան գործունեության համապատասխան տեսակը հարկման ընդհանուր համակարգում իրականացնելու պարագայում ձևավորվող ԱԱՀ-ի և շահութահարկի արդյունավետ դրույքաչափերի հանրագումարն է*»: Դա բավականին բարդացնում է հարկային մարմինների խնդիրը՝ վերահսկել իրացման շրջանառության իրական ծավալները, ուստի հսկիչ դրամարկդային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկդային մեքենաների կիրառության համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով առավել խիստ տուգանքների սահմանումը միտ-

ված է շրջանառությունը թաքցնելու ռիսկերի առավել արդյունավետ պետական կառավարմանը:

**3. Սահմանադրաիրավական վեճի շրջանակները**

Սույն սահմանադրաիրավական վեճը հանգում է այն խնդրին, որ մինևույն հարկային իրավախախտման համար նախատեսված պատասխանատվության տեսակի՝ տուգանքի չափերը հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մասով ավելի խիստ են մյուս տնտեսվարողների համեմատ, ինչը կարող է հանգեցնել հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված խիստ վերաբերմունքի:

**4. Գործի ելքի համար նշանակություն ունեցող հանգամանքները**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ գործի ելքի համար անհրաժեշտ է պարզել հետևյալ հանգամանքները.

- արդյոք իրենց կարգավիճակով հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող անձինք մտնում են «մինևույն կատեգորիա» հասկացության բովանդակային ծավալում,

- արդյոք զանազան տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների առնչությամբ տարբերակված հարկային քաղաքականության և դրանից բխող հարկային պատասխանատվության իրականացումը հանգեցնում է Սահմանադրության 28 և 29-րդ հոդվածներով նախատեսված՝ օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի խախտմանը:

**5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**5.1.** Հսկիչ դրամարկղային մեքենաների համակարգի ներդրման հիմնական նպատակը դրամաշրջանառության նկատմամբ պետության կողմից հսկողության իրականացումն է, որի արդյունքում հարկային մարմինները հնարավորություն են ստանում ճշգրիտ հաշվարկել տնտեսվարող սուբյեկտների շրջանառությունը, հետևաբար հարկային պարտավորությունների չափը, ապահովել հարկերի ամբողջական մուտքը պետական բյուջե:

Օրենսգրքի 416-րդ հոդվածը սահմանում է պատասխանատվություն հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության, ինչպես նաև հսկիչ դրամարկղային մեքենաների միջոցով դրամական հաշ-

վարկների կանոնները չպահպանելու համար: Այդ հոդվածի համալիր վերլուծության արդյունքում նկատելի է, որ ինչպես տեխնիկական պահանջները բավարարող հսկիչ դրամարկղային մեքենան գրանցած չլինելու, հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման, այնպես էլ այդ խախտումները կրկնելու դեպքերում օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներն առանձնանում են որոշակի տարբերությամբ, մի կողմից կազմակերպության, անհատ ձեռնարկատիրոջ կամ նոտարի, մյուս կողմից հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար: Մասնավորապես, վիճարկվող դրույթը հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ դրանց կիրառության համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով նախատեսում է տուգանք՝ 600 հազար դրամի չափով այն դեպքում, երբ նույն իրավախախտման համար մյուս տնտեսվարող սուբյեկտները տուգանվում են 150 հազար դրամի չափով:

**5.2.** Մահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործի համար ելակետային են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի հիմնադրույթները, համաձայն որոնց՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն **համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ** վերաբերմունքների միջև:

Ելնելով այս հանգամանքից՝ վերը նշված տնտեսվարող սուբյեկտների մոտ տարբերությունների առկայության կամ բացակայության հաստատման համար անհրաժեշտ է վեր հանել այդ խմբի սուբյեկտների առանձնահատկությունները, համապատասխանաբար՝ դրանց ամրագրումն օրենսդրության մեջ:

**5.2.1.** Հարկային օրենսդրության համալիր ուսումնասիրման արդյունքում նկատելի են, որ բացի հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտումների վերաբերյալ առկա իրավակարգավորումներից, **հանրային սննդի ոլորտի մասով առկա են որոշ առանձնահատկություններ**: Մասնավորապես, Օրենսգրքի՝ «Շրջանառության հարկի դրույքաչափերը» վերտառությամբ 258-րդ հոդվածի ուսումնասիրումից բխում է, որ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից և հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնելու համար շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հարկային մարմնի հաստատած ձևով հայտարարություն ներկայացրած շրջանառության հարկ վճա-

րողների կողմից Հայաստանի Հանրապետությունում կիրառվող՝ տնտեսական գործունեության դասակարգչի «Հանրային սննդի կազմակերպում» հատվածում չներառվող այլ ակտիվների օտարումից, ինչպես նաև այլ գործունեությունից ստացվող եկամուտների նկատմամբ հաշվարկվող դրույքաչափերն են համապատասխանաբար՝ 6 և 20, որոնք տարբերվում են գործունեության մյուս ոլորտների համար սահմանված դրույքաչափերից:

**5.2.2.** Շրջանառության հարկ վճարողները հաշվետու ժամանակաշրջանի գործունեության արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան դրույքաչափերի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարը: Այս մասով ևս օրենսդիրը նախատեսել է բացառություն առևտրական և հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության համար: Հանրային սննդի ոլորտում գործող տնտեսվարող սուբյեկտները՝ որպես շրջանառության հարկ վճարողներ, հաշվետու ժամանակաշրջանի արդյունքներով պետական բյուջե են վճարում այդ ժամանակաշրջանում ձևավորվող հարկման բազայի նկատմամբ Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափի կիրառությամբ հաշվարկված շրջանառության հարկի գումարի և Օրենսգրքի 258-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով հաշվարկված՝ շրջանառության հարկի գումարից նվազեցվող գումարի տարբերությունը: Ընդ որում, եթե Օրենսգրքի 258-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է դրույքաչափերը, ապա նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվում է, որ հաշվետու ժամանակաշրջանի համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի մասով նույն հոդվածի 1-ին մասով սահմանված դրույքաչափերով հաշվարկված շրջանառության հարկի գումարը նվազեցվում է տվյալ հաշվետու ժամանակաշրջանում հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության հետ կապված՝ Օրենսգրքի 55-րդ հոդվածի 2-րդ մասի 1-5-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 11-13-րդ մասերով սահմանված փաստաթղթերով հիմնավորված ծախսերի (բացառությամբ հիմնական միջոցներ ձեռք բերելու կամ կառուցելու ծախսերի, հիմնական միջոցների վրա կատարվող կապիտալ և ընթացիկ ծախսերի ու հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ամորտիզացիոն մասհանումների, ինչպես նաև խոհարարական արտադրանք չհանդիսացող այլ ակտիվների օտարման դեպքում՝ դրանք ձեռք բերելու ծախսերի) հանրագումար

րի երեք տոկոսը կազմող գումարի չափով: Եթե նույն մասով սահմանված նվազեցումներից հետո շրջանառության հարկի գումարը կազմում է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսից պակաս գումար, ապա ծախսերի գծով նվազեցումը կատարվում է այն չափով, որ շրջանառության հարկի գումարը կազմի հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեությունից ձևավորվող հարկման բազայի չորս տոկոսը: Նույն մասի կիրառության իմաստով՝ ծախսերի մեջ ներառվում են նաև ձեռք բերվող կամ ներմուծվող ապրանքների համար վճարվող մաքսատուրքի, ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և (կամ) բնապահպանական հարկի գումարները: Օրենսդրությամբ սահմանվում է նաև, որ առևտրական (առք ու վաճառքի) կամ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով շրջանառության հարկի հաշվարկման նպատակով իրականացվում է ապրանքների առանձնացված հաշվառում:

**Վերոգրյալից երևում է, որ օրենսդիրը հանրային սննդի մասով առանձնահատուկ կարգավորում է նախատեսել շրջանառության հարկի հաշվարկման և վճարման ոլորտում:**

**5.2.3.** Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել նաև, որ օրենսդիրն իր հայեցողության սահմաններում վարած հարկային քաղաքականության շրջանակներում հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարողների նկատմամբ տարբերակված, հատուկ պահանջներ է նախատեսում ոչ միայն հարկային օրենսդրությամբ, այլ նաև տնտեսական գործունեության այլ կողմերը կարգավորող օրենքներով, ի մասնավորի՝

ա) «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-234-Ն ընդունվել է 1997 թվականի դեկտեմբերի 26-ին), ի թիվս այլնի, համայնքի վարչական տարածքում ժամը 24.00-ից հետո գործունեություն ծավալելու համար հանրային սննդի օբյեկտների համար սահմանվող տուրքի նվազագույն շեմն առնվազն հինգ անգամ ավել է, քան առևտրի օբյեկտների համար (հոդ. 12),

բ) «Գովազդի մասին» ՀՀ օրենքի (ՀՕ-55 ընդունվել է 1996 թվականի ապրիլի 30-ին) 14-րդ հոդվածով հանրային սննդի օբյեկտների տարածքում արգելվում է ակոհոլային խմիչքների գովազդի տեղակայումը, մինչդեռ նման սահմանափակումներ ունեցող կազմակերպությունների շարքին նույն հոդվածը չի դասում, օրինակ՝ առևտրի օբյեկտները,



զ) «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով (ՀՕ-134-Ն ընդունվել է 2004 թվականի նոյեմբերի 24-ին) մի շարք առանձնահատուկ պահանջներ են ներկայացվում հանրային սննդի ոլորտում ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտներին:

Վերոգրյալը թույլ է տալիս փաստելու, որ հանրային սննդի ոլորտում ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտները տնտեսական շրջանառության մեջ ընկալվում են որպես որոշակի օբյեկտիվ հիմքերով առանձնացված խումբ և չեն ընդգրկվում այլ տնտեսավարող սուբյեկտների հետ «միևնույն խումբ (կատեգորիա)» հասկացության բովանդակային ծավալում: Տնտեսավարող սուբյեկտների նման օրենսդրական տարբերակումը հիմնված է հասարակական իրողությունների վրա, ունի տնտեսական, հանրային և այլ շահերի ապահովմանն ուղղված ողջամիտ հիմքեր:

5.3. Սահմանադրության «Օրենքի առջև ընդհանուր հավասարությունը» վերտառությամբ 28-րդ հոդվածով սահմանվում է, որ բոլորը հավասար են օրենքի առջև: Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած այն հանգամանքին, որ Սահմանադրության 28-րդ հոդվածով նախատեսված օրենքի առջև ընդհանուր հավասարության և 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքի սկզբունքները սերտորեն փոխկապակցված են, այնուամենայնիվ դրանք ունեն առանձին բովանդակություն և դրսևորման ձևեր:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքին, իր՝ 04.05.2010 թ. ՄԴՈ-881 որոշմամբ արտահայտել, այնուհետև բազմիցս (ՄԴՈ-947, ՄԴՈ-1124, ՄԴՈ-1262, ՄԴՈ-1326) վերահաստատել է այն իրավական դիրքորոշումը, որ՝ «...*օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է օրենքի առջև հավասար պատասխանատվության, պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ ... կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն*»:

Վերահաստատելով իր նախկին դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի առջև ընդհանուր հավասարության սահմանադրական սկզբունքը երաշխավորում է միևնույն խմբի (կատեգորիայի) սուբյեկտների նկատմամբ հավասար



իրավունքների և պարտականությունների օրենսդրական ամրագրում և չի բացառում օբյեկտիվ հիմքերով առանձնացված զանազան խմբերին (կատեգորիաներին) պատկանող անձանց նկատմամբ տարբերվող վերաբերմունքի ամրագրումը: Հիշյալ սահմանադրական սկզբունքը կարող է խաթարվել միայն հավասար իրավական կարգավիճակ ունեցող և հավասար իրավական դաշտում գործող սուբյեկտների նկատմամբ իրավաստեղծ և իրավակիրատ պրակտիկայի շրջանակներում տարբերակված մոտեցում ցուցաբերելու դեպքում, որը կարտահայտվի նրանցից մեկին կամ մի քանիսին որևէ ողջամիտ իրավական հիմնավորում չունեցող արտոնության կամ բարենպաստ վերաբերմունքի տրամադրմամբ:

Հետևաբար, օրենքի առջև հավասարության սահմանադրական սկզբունքը որևէ դեպքում չի արգելում, որ օրենսդիրը հայեցողական քաղաքականության շրջանակներում տարբերակված մոտեցում նախատեսի որոշակի խումբ անձանց նկատմամբ, օբյեկտիվ հիմքով առանձնացված որոշակի խումբ անձանց համար առանձին տեսակի իրավախախտումների համար սահմանի պատասխանատվության (հարկային, վարչական, քրեական և այլն) ավելի մեղմ կամ խիստ միջոցներ:

Միննույն ժամանակ, Սահմանադրական դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ ըստ գործունեության բնույթի զանազան հատկանիշներով իրավունքի սուբյեկտների իրավական կարգավիճակի տարբերակումը պետք է լինի օբյեկտիվորեն արդարացված, հիմնավորված և համապատասխանի սահմանադրությամբ պաշտպանվող հիմնական արժեքներին, հետապնդվող շահերին և նպատակներին:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «օրենքի առջև հավասարությունը» չի բացառում օբյեկտիվ և ողջամիտ տարբերությունների հիմքով առանձին խումբ սուբյեկտների համար արտոնությունների և առավելությունների տրամադրումը, ինչպես նաև լրացուցիչ սահմանափակումների ու արգելքների սահմանումը, եթե դրանք հիմնավորված, հավասարակշռված և ողջամիտ են, չեն խաթարում սահմանադրորեն ամրագրված հիմնական իրավունքների էությունը:

5.4. Սահմանադրության 29-րդ հոդվածը, ամրագրելով խտրականության արգելքի սկզբունքը, մասնավորապես, սահմանում է. *«Խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ*

*հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է»:*

Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքի բոլոր պայմանները քննարկելուց առաջ Սահմանադրական դատարանը հարկ է համարում ստուգել խտրականության արգելքի պաշտպանված հիմքի առկայությունը սույն սահմանադրափրավական վեճի շրջանակներում: Ըստ էության, Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված են այն հիմքերը, որոնցով պայմանավորված տարբերակված մոտեցում ցուցաբերելն արգելվում է:

Սահմանադրության 29-րդ հոդվածով պաշտպանվող հիմքի առկայության հարցը պարզելիս Սահմանադրական դատարանը հաշվի է առնում, որ դիմողը բարձրացնում է հարկային իրավահարաբերություններում պետության կողմից սուբյեկտների նկատմամբ տարբերակված մոտեցման հարցը, մասնավորապես պատասխանատվության ավելի խիստ չափ սահմանելով, որը պայմանավորված է տարբերակված վերաբերմունքի հասցեատեր անձանց տնտեսական գործունեության տեսակով՝ հանրային սննդի ոլորտով:

Սահմանադրության 29-րդ հոդվածում թվարկված են խտրականության սահմանադրական արգելքով պաշտպանված հիմքերը, որոնք ունեն հստակ և որոշակի բովանդակություն, բացառությամբ նույն հոդվածում պաշտպանվող հիմքերի թվարկման համար օգտագործված «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» ձևակերպումից, որն, ի տարբերություն պաշտպանվող հիմքերի մնացած մասի, բաց ցանկի հնարավորություն է տալիս:

Այդուամենայնիվ, թեպետ «անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներ» սահմանադրական ձևակերպումը խտրականության արգելքով պաշտպանվող բաց և անորոշ ցանկ է նախատեսում, այն խիստ որոշակիորեն սահմանում է այդ ցանկով հնարավոր այլ հիմքերի բնույթը, որոնք պետք է լինեն «անձնական» կամ «սոցիալական» բնույթի հանգամանքներ: Տնտեսության որոշակի ոլորտում, դիցուք՝ հանրային սննդի ոլորտում, գործունեություն իրականացնողի կարգավիճակը չի կարող դիտարկվել Սահմանադրության 29-րդ հոդվածում նշված որևէ հիմքի ներքո, ինչպես նաև իր բնույթով չի կարող դասվել Սահմանադրության 29-րդ հոդվածով

նախատեսված «անձնական» կամ «սոցիալական» բնույթի հանգամանքների շարքին: Հետևաբար, Սահմանադրական դատարանը, առանց անդրադառնալու խտրականության արգելքի կիրառման այլ պայմանների առկայությանը, գտնում է, որ սույն սահմանադրաիրավական վեճի գործում չկա տարբերակման որևէ հիմք, որը պաշտպանվում է խտրականության սահմանադրական արգելքով:

Արդյունքում, Սահմանադրական դատարանը գտնում է, որ կոնկրետ գործով դիմումում բարձրացված հարցի շրջանակներում չի կարող խոսք լինել տարբեր տեսակի տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների նկատմամբ Սահմանադրության 29-րդ հոդվածով արգելված որևէ հիմքով խտրականության դրսևորման մասին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

19 փետրվարի 2021 թվականի  
ՍԴՈ-1577



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ՍԴՈ-1577 ՈՐՈՇՄԱՆ  
ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ  
ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի փետրվարի 19-ի ՍԴՈ-1577 որոշմամբ որոշել է. **«1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը...»:**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 19-ի ՍԴՈ-1577 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումից տարբերվող հետևյալ դիրքորոշումը.

1. Սահմանադրական դատարանը 2021 թվականի փետրվարի 19-ի ՍԴՈ-1577 որոշման (այսուհետ՝ Որոշում) 4-րդ կետում գործի ելքի համար նշանակություն ունեցող հանգամանքների համատեքստում անհրաժեշտ է համարել պարզել, թե ՀՀ գործող օրենսդրության շրջանակները թույլ տալիս են հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտներին և այլ տնտես-

վարող սուբյեկտներին ընդգրկել «միևնույն կատեգորիա» հասկացության բովանդակային ծավալում, և թե տարբեր տնտեսական գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների առնչությամբ տարբերակված հարկային և վարչական քաղաքականության իրականացումը շոշափել է Սահմանադրության 28 և 29-րդ հոդվածներով նախատեսված օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքները (էջ 5):

Դիմողը «Հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի իրավաչափությունը ստուգելու համար անհրաժեշտ է համարել պարզել՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ ավելի խիստ վերաբերմունքի համար արդյոք առկա է օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում... և պահպանվել է արդյոք համաչափ կապ ընտրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև»: Հետագայում, կատարված եզրահանգումներով պայմանավորված՝ դիմողը ընտրված միջոցի և հետապնդվող նպատակի միջև համաչափ կապի հարցն այլևս քննարկման առարկա չի դիտարկել:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) վիճարկվող դրույթով հարկային միևնույն իրավախախտման համար պատասխանատվության տարբեր չափի տուգանքներ սահմանելու, հետևաբար՝ հնարավոր անհամաչափ միջամտության վերաբերյալ սահմանադրաիրավական խնդրի լուծման նպատակով կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը գործի էլքի համար պետք է նաև պարզեր, մասնավորապես, վիճարկվող դրույթով սահմանված իրավակարգավորման պայմաններում հարկային իրավախախտման և դրա համար նախատեսված պատասխանատվության միջոցի միջև համաչափության պահպանվածության, ինչպես նաև տնտեսական

գործունեության ազատության, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի արդյունավետ իրականացման անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի ու ընթացակարգերի ապահովման հանգամանքները: Այսինքն, Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթի սահմանադրականությունը պետք է գնահատեր Սահմանադրության ոչ միայն 28 և 29-րդ հոդվածների շրջանակում, այլև 78-րդ հոդվածի հիման վրա:

2. Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-881 որոշման մեջ արտահայտել է իրավական դիրքորոշում, համաձայն որի՝ «Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերաժվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, որը զուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից»:

Միաժամանակ, անձի նկատմամբ խտրական վերաբերմունքի վերաբերյալ Սահմանադրական դատարանը հայտնել է նաև այլ իրավական դիրքորոշում, ըստ որի՝ պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (29.01.2008թ., ՍԴՈ-731):

Վերոգրյալի հաշվառմամբ անհրաժեշտ է նկատել, որ հարկային օրենսդրության վիճարկվող նորմը նախատեսում է տարբերակված մոտեցում, այն է՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտումների համար սահմանվել է մի քանի անգամ ավելի բարձր տուգանք, քան մյուս տնտեսվարողների դեպքում:

Սակայն անհրաժեշտ է նշել նաև այն հանգամանքը, որ մինչև 2018 թվականի հունվարի 1-ը հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտումների համար գործունեության

բոլոր տեսակների համար կիրառվում էր միասնական տուգանք՝ միննույն պատժաչափով (օրինակ՝ «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի նոյեմբերի 22-ի ՀՕ-129 օրենքի (ուժի մեջ է մտել 2005 թվականի հունվարի 1-ին և ուժը կորցրել է 2018 թվականի հունվարի 1-ին) 11-րդ հոդվածը):

Բացի դրանից, անհրաժեշտ է կարևորել, որ հարկային օրենսդրության տրամաբանության շրջանակում թեև հանրային սննդի ոլորտն 2018 թվականի հունվարի 1-ից հետո ամբողջությամբ անցել է շրջանառության հարկով կամ հարկման ընդհանուր համակարգով հարկման, սակայն դա չի նշանակում է, որ նշված ոլորտն առանձնանում է որևէ ձևի առանձնահատկությամբ, որով պայմանավորված՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման կանոնների խախտումների դեմ պայքարը կենթադրեր առավել խիստ տուգանքների կիրառում, քան մյուս ոլորտներում:

Դա հավաստվում է նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 19-ի N 1865-Լ որոշմամբ, որը վերաբերում է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծին հավանություն տալու մասին առաջարկություններին (Պ-344-06.11.2019-SՀ-011/0): Ընդ որում օրենսդրական այդ նախաձեռնության շրջանակում առաջարկվում էր հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մասով նախատեսված բացառություններն ուժը կորցրած ճանաչել՝ հիմք ընդունելով հարկային իրավախախտումների համար հավասար պատասխանատվության սկզբունքը: Սակայն Հայաստանի Հանրապետության կառավարությունն այդ որոշման շրջանակում արտահայտել է հետևյալ դիրքորոշումը, որ թեև հանրային սննդի ոլորտում «(...) ՀԴՄ կտրոններ չտրամադրելու միջոցով հարկային պարտավորություններից խուսափելու ռիսկերը շատ ավելի մեծ են», այդուհանդերձ կատարել է հետևյալ ամփոփումը, որ՝ «(...) ՀԴՄ-ների կիրառության խախտումների համար գործունեության բոլոր տեսակների համար միասնական տուգանքներ կիրառելու առաջարկությունն ընդունելի է, սակայն պայմանով, որ տուգանքների միասնականացման արդյունքում ոչ թե նվազեցվեն հանրային սննդի ոլորտի մասով սահմանված տուգանքները, այլ մյուս ոլորտների համար նախատեսված տուգանքները սահմանվեն առնվազն հանրային սննդի ոլորտի համար սահմանված տուգանքների չափով»:

Ողջ վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ հարկային օրենսդրությամբ նախատեսված տարբերակված մոտեցման համար օբյեկտիվ և արդարացի հիմնավորում առկա չէ, իսկ շրջանառության հարկի գումարի հաշվարկման կարգի որոշ առանձնահատկություններ անմիջականորեն կապված չեն հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ վրա հասնող պատասխանատվության հետ:

Իսկ ինչ վերաբերում է Կառավարության կողմից հիշատակված մեկ այլ դիրքորոշմանն առ այն, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների մասով առկա են իրացման շրջանառությունները թաքցնելու ռիսկեր, կարծում եմ, որ, նախ՝ այդ ռիսկերը կարող են առկա լինել նաև մյուս տնտեսվարողների մասով, և երկրորդ՝ շրջանառության ռիսկերը նվազեցնելու լավագույն միջոցն առավել խիստ պատասխանատվության միջոցի նախատեսումը չէ, քանի որ սահմանված կանոնների պահպանումը պայմանավորված է ոչ թե պատասխանատվության միջոցի խստությամբ, այլ դրա անխուսափելիությամբ:

Ավելին, գործող իրականակարգավորումների համատեքստում հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտները կարող են ունենալ առավել նվազ բարենպաստ վիճակ, քան մյուս ոլորտներում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտները, նույնիսկ եթե հարկային քաղաքականության տեսանկյունից նման կարգավորումներն ունեն իրենց նպատակները, այնուամենայնիվ, վերջիններս պետք է լինեն արդարացված, հիմնավոր և նպատակաուղղված:

Միաժամանակ, նույն իրավախախտման համար առանձին սուբյեկտների համար առավել խիստ պատասխանատվության միջոցի նախատեսումը պետք է լինի հիմնավորված, հետապնդի որոշակի իրավաչափ նպատակ, հստակ սահմանի այն էական հատկանիշները, որոնցով պայմանավորված այդ տնտեսվարող սուբյեկտների վրա նման պատասխանատվություն պետք է տարածվի:

Ուստի կարծում եմ, որ թեև տնտեսվարող սուբյեկտների գործունեության իրական շրջանառության արտացոլումն իրավաչափ նպատակ է, սակայն դրա իրագործման համար ընտրված միջոցը՝ անհամեմատ բարձր տուգանքի նշանակումը, համաչափ չէ հետապնդվող նպատակին:



3. Սահմանադրական դատարանը՝ Որոշման պատճառաբանական մասի 5.2.3-րդ կետում կատարել է հետևյալ իրավական եզրահանգումը, որ «...հանրային սննդի ոլորտում ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտները տնտեսական շրջանառության մեջ ընկալվում են որպես որոշակի օբյեկտիվ հիմքերով առանձնացված խումբ և չեն ընդգրկվում այլ տնտեսվարող սուբյեկտների հետ «միևնույն խումբ (կատեգորիա)» հասկացության բովանդակային ծավալում»։ Միաժամանակ, նույն եզրահանգման շրջանակում ընդգծվում է, որ՝ «Տնտեսվարող սուբյեկտների նման օրենսդրական տարբերակումը հիմնված է հասարակական իրողությունների վրա, ունի տնտեսական, հանրային և այլ շահերի ապահովմանն ուղղված ողջամիտ հիմքեր»։

Հիշյալ եզրահանգման առնչությամբ, հանրային սննդի ոլորտի առանձնահատկությունների առկայության կամ դրանց բացառման համար անհրաժեշտ է Օրենսգրքի 254, 258, 397 և 400-րդ հոդվածներին անդրադառնալ համակարգային վերլուծության համատեքստում, որից հետևում է.

ա) թեև օրենսդիրը սահմանում է միևնույն հարկային իրավախախտման համար հարկային պատասխանատվության նույն տեսակը կիրառելու պահանջ, այնուամենայնիվ չի բացառում Օրենսգրքի համապատասխան բաժնով նախատեսված հարկային պատասխանատվության տարբեր տեսակներ կիրառելու հնարավորություն (հոդվ. 400, մաս 7)։ Այստեղ, օրենսդիրը հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար հանրային սննդի մասով նախատեսել է ոչ թե հարկային պատասխանատվության տուգանքից տարբերվող այլ տեսակ<sup>1</sup>, այլ սահմանել է պատասխանատվության միևնույն տեսակ (տուգանք) տարբեր չափով, ինչը նշանակում է, որ տնտեսական շրջանառության մեջ հանրային սննդի ոլորտում ծառայություններ մատուցող տնտեսվարող սուբյեկտները և տնտեսվարող այլ սուբյեկտները գտնվում են «միևնույն կատեգորիա» հասկացության բովանդակային ծավալում,

բ) շրջանառության հարկով հարկման համակարգը ևս բովանդակում է հարկման ընդհանուր համակարգի տարբեր այն տարբերությամբ, որ օրենքով սահմանված պայմանները բավարարող առանձին խումբ առևտրային կազմակերպություններ, անհատ ձեռնարկատերեր և նոտարներ՝ կախված շրջանառության ծավալի թույլատրելի սահմանից (հոդվ. 254), կարող են պարզ ընթացակար-

<sup>1</sup> Հարկային պատասխանատվության տեսակները սահմանվել են Հարկային օրենսգրքի 400-րդ հոդվածի 1-ին մասով:

գով վճարել շրջանառության հարկ առանձին հարկատեսակների փոխարեն: Միաժամանակ, գործունեության առանձին տեսակների, այդ թվում՝ հանրային սննդի ոլորտի տնտեսվարողների մասով շրջանառության հարկի տարբեր դրույքաչափերի սահմանումը (հոդվ. 258) դեռևս չի վկայում նույն հանրային սննդի ոլորտում առանձնահատկությունների առկայության մասին: Ե՛վ շրջանառության հարկով հարկման, և՛ ընդհանուր հարկման համակարգերում տարբեր դրույքաչափերի սահմանումը, այդ թվում՝ հանրային սննդի ոլորտում, նպատակ է հետապնդում տարբեր եկամտաբերություն կամ շահութաբերություն ունեցող ճյուղերի հարաբերական հավասարակշռվածությունն ապահովելու համար, և այստեղ նույնպես որևէ առանձնահատկության մասին խոսք չի կարող լինել:

Հաշվի առնելով վերոշարադրյալը գտնում եմ, որ ինչպես Սահմանադրության օրենքի առջև բոլորի հավասարության և խտրականության արգելումն ամրագրող պահանջների, այնպես էլ Օրենսգրքի՝ հարկային համակարգի սկզբունքներում տեղ գտած հավասարության, հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը բոլոր հարկ վճարողների նկատմամբ հավասարապես կիրառելու պահանջի ապահովման նկատառումներից ելնելով, մինևնույն հարկային իրավախախտման համար պետք է նախատեսել պատասխանատվության նույն տեսակը մինևնույն պատժաչափով:

Ընդհանուր այս կանոնից կարող են բացառություն կազմել այն դեպքերը, երբ առկա է օբյեկտիվ և ողջամիտ արդարացում՝ տարբերակված մոտեցման համար:

**Սահմանադրական դատարանի քննության առարկա իրավակարգավորումների շրջանակում հանրային սննդի ոլորտում հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար մի քանի անգամ ավելի բարձր չափի տուգանքի սահմանումը, իմ կարծիքով, չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, քանի որ նման տարբերակված մոտեցումը չի կարող համաչափ լինել հետապնդվող իրավաչափ նպատակին:**

4. Սահմանադրական դատարանի քննության առարկա դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ 416-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ, 2-րդ մասի 2-րդ, 4-րդ մասի 2-րդ և 5-րդ մասի 2-րդ կետերում՝ հանրային սննդի ոլորտում որոշակի ժամանակահատվածում կրկնակի հարկային իրավախախտումների համար նախատեսված է ինչպես ավելի խիստ՝ բացարձակ չափերով տու-

զանք, այնպես էլ հավելյալ միջոց՝ գործունեության կասեցում որոշակի ժամանակով:

Անհրաժեշտ է նկատել, որ կրկնակի սահմանափակումն այդ դեպքերում հետապնդում է ոչ թե կանխարգելիչ, այլ իր էությամբ սոսկ պատժիչ նպատակ, որը սահմանադրորեն արդարացված չէ: Այն կարող է կիրառվել առանձին՝ որպես էապես ավելի խիստ պատասխանատվության միջոց բացառապես խիստ որոշակի դեպքերում, երբ դրանով, օրինակ, կանխվում է հանրային շահերին ավելի էական վնաս հասցնելը, կամ տնտեսվարող սուբյեկտի գործունեության շարունակությունը կարող է հանգեցնել արտակարգ իրավիճակների առաջացման (վտանգ անձանց կյանքին կամ առողջությանը, թմրանյութերի ապօրինի շրջանառության կանխում, և այլ նմանատիպ դեպքեր):

Բոլոր այն դեպքերում, երբ սահմանվում է տուգանք, ապա տնտեսվարող սուբյեկտը պետք է հնարավորություն ունենա շարունակել իր գործունեությունը՝ ապահովելու համար տուգանքը մարելու համար անհրաժեշտ դրամական միջոցների ձեռքբերումը: Խոշոր տուգանքներ նշանակելիս տուգանքի և գործունեության կասեցման զուգորդումը կարող է ձեռք բերել շահույթ կամ եկամուտ ստանալու խոչընդոտի բնույթ՝ անարդարացի վնաս պատճառելով տնտեսվարող սուբյեկտին:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը ճանաչել Սահմանադրության 28, 29 և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

Միաժամանակ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն ուներ բավարար հիմքեր Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հետ համակարգային առումով փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 1-րդ մասի 2-րդ կետը, 2-րդ մասի 2-րդ կետը, 4-րդ մասի 2-րդ կետը և 5-րդ մասի 2-րդ կետը նույնպես ճանաչել Սահմանադրության 28, 29 և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ

Ա.ԽԱԶՍՏՐՅԱՆ

1 մարտի 2021թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի ՍԴՈ-1577 ՈՐՈՇՄԱՆ  
ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓՈՒԿԻՉ  
ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 1(101)2021

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա` ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի` Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի փետրվարի 19-ի ՍԴՈ-1577 որոշմամբ (հրապարակվել է 2021 թվականի փետրվարի 22-ին) որոշել է.

*«1. Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը: (...):»:*

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 19-ի ՍԴՈ-1577 որոշման հետ` Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում են իմ հատուկ կարծիքը` որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

Նախքան հատուկ կարծիքի պատճառաբանություններին անդրադառնալը` հարկ են համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն` Սահմանադրական դատարանի դատավորը պարտավոր է մասնակցել քվեարկությանը և քվեարկել կողմ կամ

դեմ Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը: Նույն հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-4-րդ և 7-րդ կետերով նախատեսված հարցերով որոշում կամ եզրակացություն ընդունելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի դատավորը կարող է ներկայացնել հատուկ կարծիք որոշման կամ եզրակացության ինչպես եզրափակիչ, այնպես էլ պատճառաբանական մասի վերաբերյալ, որն անհապաղ հրապարակվում է Սահմանադրական դատարանի պաշտոնական կայքէջում, ինչպես նաև հրապարակվում է նորմատիվ իրավական ակտերի պաշտոնական հրապարակման օրենքով սահմանված կարգով և Սահմանադրական դատարանի տեղեկագրում:

Վերոգրյալ հոդվածի բովանդակությունից հետևում է, որ Սահմանադրական դատարանի կողմից որոշումներ և եզրակացություններ ընդունելիս քվեարկությանը մասնակցելը և Սահմանադրական դատարանի համապատասխան որոշման կամ եզրակացության ընդունմանը կողմ կամ դեմ քվեարկելը Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունն է:

Հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների (դրանցում արտահայտվող իրավական դիրքորոշումների) նշանակությունն իրավաստեղծ և իրավակիրառ պրակտիկայի համար՝ հանրությանը պետք է հասանելի լինեն այդպիսի գործով ընդունված որոշմանը Սահմանադրական դատարանի դատավորի անհամաձայնության պատճառները, իսկ օրենքով սահմանված է Սահմանադրական դատարանի դատավորի՝ ընդունված որոշումից տարբերվող դիրքորոշումը պաշտոնապես ներկայացնելու մեկ եղանակ՝ հատուկ կարծիք շարադրելը: Հետևաբար կարծում եմ, որ նորմատիվ իրավական ակտերի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու վերաբերյալ գործերի քննության արդյունքում համապատասխան որոշման ընդունմանը դեմ քվեարկելու փաստից ուղղակիորեն բխում է հատուկ կարծիք ներկայացնելու Սահմանադրական դատարանի դատավորի պարտականությունը, ինչով պայմանավորված՝ ներկայացնում եմ իմ հատուկ կարծիքը:

1. Հիմք ընդունելով քննության առարկա սահմանադրաիրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

վական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանի պատճառաբանությունները՝ հարկ եմ համարում անդրադառնալ օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքին և դրա համատեքստում վիճարկվող դրույթով պայմանավորված՝ տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ տարբերակված վերաբերմունքի դրսևորման սահմանադրականության հարցին:

Այսպես՝ Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրում են ստացել մարդու հիմնական իրավունքները և ազատությունները, իսկ Սահմանադրության 74-րդ հոդվածի ուժով հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքները և ազատություններն իրենց էությանը կիրառելի են դրանց նկատմամբ: Այս իրավակարգավորման համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատություններն իրավաբանական անձանց վերագրելու չափանիշն այդ իրավունքների և ազատությունների ըստ էության կիրառելիությունն է իրավաբանական անձանց նկատմամբ, ինչը պարզելու համար անհրաժեշտ է բացահայտել կոնկրետ իրավունքի կամ ազատության նշանակությունը, դրա պաշտպանության առարկան, այսինքն՝ դրանով պաշտպանվող շահերը:

Հայաստանի Հանրապետությունը որպես հիմնական իրավունք սահմանադրական մակարդակով երաշխավորում է օրենքի առջև ընդհանուր հավասարությունը՝ Սահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրելով, որ բոլորը հավասար են օրենքի առջև: Այս իրավունքը ենթադրում է, որ յուրաքանչյուր անձ իրավունք ունի ակնկալելու պետությունից հավասար վերաբերմունք, որպիսի շահն իր էությանը վերագրելի է նաև իրավաբանական անձանց, ուստի օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքի ուժով պետության կողմից հավասար վերաբերմունքի պետք է արժանանան ոչ միայն ֆիզիկական, այլև իրավաբանական անձինք:

Անդրադառնալով քննարկվող սահմանադրական սկզբունքի բովանդակությանը՝ հարկ է նշել, որ դրա ուժով համադրելի իրավիճակների նկատմամբ չպետք է դրսևորվի տարբերակված վերաբերմունք, եթե առկա չեն նման տարբերակման օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորումներ:

Այսպես՝ Սահմանադրական դատարանը, անդրադառնալով օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքին, 2010 թվականի մայիսի 4-ի ՍԴՈ-881 որոշմամբ նշել է հետևյալը. «(...) օրենքի առջև բոլորի հավասարության սահմանադրական սկզբունքը ենթադրում է **օրենքի առջև հավասար պատասխանատվության**,

պատասխանատվության անխուսափելիության և իրավական պաշտպանության հավասար պայմանների ապահովում, և չի առնչվում իրավական տարբեր կարգավիճակ ունեցող սուբյեկտների համար որևէ իրավաչափ նպատակով պայմանավորված նախադրյալներ (...) կամ իրավունքի տվյալ կատեգորիայի սուբյեկտների համար լրացուցիչ պարտականություններ սահմանելուն»:

Վերոգրյալից հետևում է, որ օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքն իրենից ենթադրում է ոչ միայն հավասար իրավունքների և պարտականությունների նույնակերպ ապահովում, այլ նաև պատասխանատվության հավասար պայմանների ապահովում:

Մասնավորապես՝ տնտեսվարող բոլոր սուբյեկտների դեպքում պետությունը, ապահովելով տնտեսվարող սուբյեկտների օրենքի առջև հավասարությունը, պետք է հետամուտ լինի ոչ միայն տնտեսվարող սուբյեկտների կողմից իրավախախտման համար պատասխանատվության անխուսափելիությանը, այլ նաև միևնույն իրավախախտման համար սահմանի պատասխանատվության միևնույն միջոցների կիրառում և պատասխանատվության միջոցների կիրառումից առաջացող հավասար հետևանքներ, հակառակ պարագայում միևնույն իրավախախտման դեպքում տնտեսվարող սուբյեկտները կգտնվեն անհավասար պայմաններում:

Այսպիսով, օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքից հետևում է, որ բոլորի համար պետք է ապահովվի իրավունքների և ազատությունների իրացման միևնույն ծավալը, նախատեսվեն այդ իրավունքների և ազատությունների իրացման նույնական հնարավորություններ, ինչպես նաև նշվածին զուգահեռ պետք է ապահովվեն իրավական պարտականությունների միևնույն ծավալը և կատարված նույն իրավախախտման համար պատասխանատվության կիրառման միևնույն միջոցներն ու պայմանները:

Հարկ է ընդգծել, որ օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքը չի արգելում համադրելի իրավիճակների նկատմամբ տարբերակված վերաբերմունքի դրսևորում միայն այն դեպքում, երբ այն ունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորումներ:

Վերոգրյալ վերլուծությունների հիման վրա կարելի է առանձնացնել օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքի խախտումների առկայությունը կամ բացակայությունը գնահատելու հետևյալ չափանիշները.

- 1) արդյո՞ք քննարկվող իրավիճակները համադրելի են,
- 2) արդյո՞ք առկա է տարբերակված վերաբերմունք,

3) արդյո՞ք նման մոտեցումն օբյեկտիվորեն և ողջամտորեն հիմնավորված է:

Հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 416-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է. «3. Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ սույն հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար կազմակերպությունը, անհատ ձեռնարկատերը կամ նոտարը տուգանվում է՝

1) 150 հազար դրամի չափով, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի.

2) 600 հազար դրամի չափով՝ հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով»:

Օրենսգրքի վերոգրյալ դրույթով հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ դրսևորված վերաբերմունքով պայմանավորված՝ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրության 28-րդ հոդվածին համապատասխանությունը գնահատելու համար անհրաժեշտ է վիճարկվող դրույթը դիտարկել վերը նշված չափանիշների տեսանկյունից:

**1) Իրավիճակների համադրելիություն.**

Իրավիճակների համադրելիությունը գնահատելիս առանցքային նշանակություն ունի այն հարցը, թե այդ իրավիճակները բնութագրող հատկանիշներն ինչ սահմաններում պետք է քննարկվեն, այսինքն՝ արդյո՞ք պետք է հաշվի առնել համեմատվող իրավիճակներին բնորոշ ցանկացած հատկանիշ, թե՛ այդ իրավիճակները պետք է գնահատման ենթարկվեն միայն խնդրո առարկա իրավակարգավորումների համատեքստում:

Տվյալ դեպքում Սահմանադրական դատարանը, քննարկելով մի կողմից հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների, մյուս կողմից՝ այլ ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների իրավիճակների համադրելիության հարցը, անհրաժեշտ է համարել վեր հանել հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների առանձնահատկությունները, համապատասխանաբար դրանց ամրագրումն օրենսդրության մեջ: Մասնավորապես՝ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ հարկային



օրենսդրության մեջ բացի հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտումների վերաբերյալ առկա իրավակարգավորումներից, հանրային սննդի ոլորտի մասով առկա են նաև այլ առանձնահատկություններ՝ կապված շրջանառության հարկի դրույքաչափի և հարկման բազայի հետ: Բացի այդ, Սահմանադրական դատարանն առանձնացրել է հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համար սահմանված հատուկ կարգավորումներ՝ նախատեսված «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքով, «Գովազդի մասին» ՀՀ օրենքով և «Առևտրի և ծառայությունների մասին» ՀՀ օրենքով:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը եզրահանգել է, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտները տնտեսական շրջանառության մեջ ընկալվում են որպես որոշակի օբյեկտիվ հիմքերով առանձնացված խումբ և չեն ընդգրկվում այլ տնտեսվարող սուբյեկտների հետ «միննույն խումբ (կատեգորիա)» հասկացության բովանդակային ծավալում: Ըստ Սահմանադրական դատարանի՝ տնտեսվարող սուբյեկտների նման օրենսդրական տարբերակումը հիմնված է հասարակական իրողությունների վրա, ունի տնտեսական, հանրային և այլ շահերի ապահովմանն ուղղված ողջամիտ հիմքեր:

Վերոգրյալից հետևում է, որ Սահմանադրական դատարանը հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների և այլ ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների իրավիճակների համադրելիությունը գնահատելիս կարևորել է հանրային սննդի ոլորտը բնորոշող ցանկացած տարբերակիչ հատկանիշ:

Ի հակադրություն Սահմանադրական դատարանի վերը նշված դիրքորոշման՝ կարծում եմ, որ կոնկրետ դեպքում քննարկվող տարբեր իրավիճակները համեմատելիս անհրաժեշտ է դրանք գնահատել վիճելի իրավակարգավորման առարկայի և նպատակի լույսի ներքո՝ հաշվի առնելով նաև այն ոլորտը, որին վերաբերում է այդ կարգավորումը: Այսինքն՝ քննարկվող իրավիճակների համեմատությունը պետք է լինի ոչ թե վերացական՝ վեր հանելով դրանց միջև առկա նմանությունները և տարբերություններն ընդհանրապես, այլ այն պետք է կատարվի վիճելի իրավակարգավորման առարկայի և նպատակի համատեքստում: Ընդ որում, իրավիճակների համադրելիության այս մոտեցումը կիրառվում է նաև Սարդու իրավունքների

Եվրոպական դատարանի դատական պրակտիկայում<sup>1</sup>: Ավելին՝ միննույն մոտեցումը հանդիպում է նաև Եվրոպական միության արդարադատության դատարանի դատական ակտերում<sup>2</sup>:

Վերոգրյալ դիրքորոշման համատեքստում անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորման տեսանկյունից հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների և այլ ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների իրավիճակների համադրելիության հարցին՝ հարկ եմ համարում նշել հետևյալը.

Օրենսգրքի 379-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվել է ընդհանուր կանոն, համաձայն որի՝ Օրենսգրքի 380-րդ հոդվածով այլ բան սահմանված չլինելու դեպքում կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները պարտավոր են կիրառել հսկիչ դրամարկղային մեքենա: Ընդ որում, Օրենսգրքի 380-րդ հոդվածով սահմանվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության ոլորտը: Մասնավորապես՝ այդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, շրջիկ առևտրի կետերի, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս: Նույն հոդվածի 3-րդ մասով սահմանվել են գործունեության այն տեսակները, որոնց շրջանակներում կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի կողմից կանխիկ դրամով կամ վճարային քարտերի կամ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող այլ վճարային գործիքների միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր չէ:

<sup>1</sup> ECHR (GC), 5 September 2017, *Fábián v. Hungary*, Application no. 78117/13, § 121 (Թեև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանը նշված դիրքորոշումը հայտնել է խտրականության իրավունքի համատեքստում, այդուհանդերձ, հաշվի առնելով, որ այն վերաբերում է իրավիճակների համադրելիության գնահատման չափանիշներին, կարծում եմ, որ այն հավասարապես կիրառելի է նաև օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքի կիրառման շրջանակներում):

<sup>2</sup> CJEU (GC), 16 December 2008, *Société Arcelor Atlantique et Lorraine and others v. Premier ministre, Ministre de l'Écologie et du Développement durable et Ministre de l'Économie, des Finances et de l'Industrie*, case C-127/07:

Միաժամանակ Օրենսգրքի 381-րդ հոդվածով սահմանվել են հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները:

Անհրաժեշտ է նշել, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության միջոցով արձանագրվում է տնտեսվարող սուբյեկտի իրացման շրջանառությունը, ինչը նաև հեշտացնում է տնտեսվարող սուբյեկտի կողմից հարկերի հաշվարկման և վճարման նկատմամբ հարկային մարմնի կողմից վերահսկողության իրականացումը: Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության որոշակիությունն ու միատեսակությունն ապահովելու համար օրենսդրությամբ սահմանվել են դրանց կիրառության կանոնները, որոնք չպահպանելն օրենսդիրը համարել է հարկային իրավախախտում և Օրենսգրքի 416-րդ հոդվածով դրա համար սահմանել հարկային պատասխանատվություն, որն ուղղված է պետության ֆինանսական կայունության և ֆինանսական շահերի ապահովմանը՝ հարկային հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթները խախտելու հետևանքով պետությանը պատճառված նյութական վնասը լրիվ ծավալով հատուցելու, հարկային իրավախախտում կատարած հարկ վճարողի նկատմամբ լրացուցիչ պարտավորություն սահմանելու, ինչպես նաև նրան հարկային պարտավորության անհապաղ կատարումը պարտադրելու և հետագա հարկային իրավախախտումները կանխարգելելու միջոցով (Օրենսգրքի 397-րդ հոդվածի 2-րդ մաս):

Փաստորեն, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառման պարտականություն ունեցող ցանկացած տնտեսվարող սուբյեկտի կողմից դրա կիրառության կանոնների (բացառությամբ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար տնտեսվարող սուբյեկտը ենթակա է հարկային պատասխանատվության Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա, իսկ այդ պատասխանատվության նպատակները նույնական են՝ անկախ նրանից, թե ենթադրյալ իրավախախտումը կատարած տնտեսվարող սուբյեկտն ինչ ոլորտում է իրականացնում իր գործունեությունը՝ հանրային սննդի, թե՛ որևէ այլ ոլորտում: Ասվածից հետևում է, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառման պարտականություն ունեցող տնտեսվարող սուբյեկտն այդ պարտականությունը կրող՝ ցանկացած այլ ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի հետ համադրելի իրավիճակում է՝ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի կիրառության տեսանկյունից:

Միաժամանակ, անդրադառնալով Սահմանադրական դատարանի կողմից մատնանշված՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտին այլ ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտներից տարբերող հատկանիշներին, հարկ եմ համարում ընդգծել, որ դրանցից որևէ մեկը չի առնչվում ոչ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության հարցում հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտի կարգավիճակի առանձնահատկություններին, ոչ դրանց կիրառության կանոնների խախտման համար հարկային պատասխանատվություն սահմանող Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի առարկային և նպատակներին: Կարծում եմ, որ հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման պարտադիրության տեսանկյունից որևէ տնտեսվարող սուբյեկտի կողմից վճարման ենթակա հարկի դրույթաչափը կամ հարկման բազան նրան չեն կարող դարձնել այլ տնտեսվարողների հետ անհամադրելի իրավիճակում գտնվող սուբյեկտ:

Ավելին՝ Սահմանադրական դատարանի որոշմամբ կարևորություն է տրվել նաև հանրային սննդի ոլորտին վերաբերող այնպիսի իրավակարգավորումների, ինչպիսին, օրինակ, ալկոհոլային խմիչքների գովազդին վերաբերող սահմանափակումն է, որոնք ընդհանրապես որևէ առնչություն չունեն հարկային իրավահարաբերությունների հետ, ուստի դրանց չպետք է իրավական նշանակություն տրվեր սույն գործով հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների և այլ ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտների իրավիճակների համադրելիության հարցում:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ սվյալ դեպքում օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքին համապատասխանության տեսանկյունից Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի սահմանադրականության հարցի շրջանակներում հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության պարտականություն կրող հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտները և այդ պարտականությունը կրող՝ այլ ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտները գտնվում են համադրելի իրավիճակներում:

*Սահմանադրական դատարանը, անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորման օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքին համապատասխանության հարցը գնահատելու վերո-*

գրյալ երեք չափանիշներից միայն առաջինին և հերքելով համադրելի իրավիճակների առկայությունը, այլևս չի անդրադարձել տարբերակված վերաբերմունքի առկայության և նման մոտեցման օբյեկտիվորեն և ողջամտորեն հիմնավորված լինելու հարցերին: Այդուհանդերձ վերը նշված վերլուծությունների հիման վրա չհամաձայնելով Մահմանադրական դատարանի որոշմամբ արտահայտված վերոգրյալ իրավական դիրքորոշմանը, գտնում եմ, որ սույն դեպքում առկա են համադրելի իրավիճակներ, ուստի անհրաժեշտ եմ համարում ստորև անդրադառնալ նաև վիճարկվող իրավակարգավորման՝ օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքին համապատասխանության հարցը գնահատելու մյուս երկու չափանիշներին:

**2) Տարբերակված վերաբերմունքի առկայությունը (բացակայությունը).**

Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված իրավակարգավորումներից հետևում է, որ դրանով սահմանված իրավախախտման օբյեկտիվ կողմը նույնն է՝ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառությունը հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ, իսկ այդ արարքի համար նախատեսված սանկցիան տարբերակված է կախված նրանից, թե իրավախախտումը տնտեսական գործունեության որ ոլորտում է կատարվում, ընդ որում, հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով տնտեսվարող սուբյեկտի համար սահմանված է տուգանք՝ 600 հազար ՀՀ դրամի չափով, այլ դեպքում սահմանված է տուգանք՝ 150 հազար ՀՀ դրամի չափով:

Վերոգրյալից հետևում է, որ հանրային սննդի ոլորտում իրակա՝ նացվող գործունեության մասով տնտեսվարողը միևնույն արարքի հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների (բացառությամբ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 5.1-ին մասում նշված դեպքի) խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար ենթարկվում է ավելի խիստ պատասխանատվության, քան այլ ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարողները, ուստի տուգանքի չափի հարցում անվիճելիորեն առկա է տարբերակված վերաբերմունք:

**3) Տարբերակված վերաբերմունքի հիմնավորման առկայությունը (բացակայությունը).**

Մահմանադրության 28-րդ հոդվածով ամրագրված՝ ընդհանուր հավասարության սկզբունքի համատեքստում անհավասարության

յուրաքանչյուր դրսևորում չէ, որ հանգեցնում է այդ սկզբունքի խախտման, և յուրաքանչյուր դեպքում քննարկվող սկզբունքի խախտման վերաբերյալ գնահատական տալու համար պետք է նաև բացահայտել, թե արդյոք վերաբերմունքի տարբերակման հիմքում ընկած են օբյեկտիվ ու ողջամիտ հիմնավորումներ: Ընդ որում, համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված վերաբերմունքը թույլատրելի է, եթե այդ տարբերակումը հետապնդում է իրավաչափ նպատակ և առկա է ողջամիտ հարաբերակցություն համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ դրսևորվող վերաբերմունքի տարբերակման և դրանով հետապնդվող իրավաչափ նպատակի միջև: Այս դիրքորոշումը համահունչ է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դիրքորոշումներին<sup>3</sup>:

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումը վերոգրյալի համատեքստում դիտարկելու դեպքում պարզ է դառնում, որ տվյալ դեպքում առկա չէ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտի նկատմամբ այլ ոլորտներում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների համեմատությամբ տարբերակված վերաբերմունք դրսևորելու իրավաչափ նպատակ: Նման նպատակի առկայության վերաբերյալ հնարավոր չէ պատկերացում կազմել նաև Օրենսգրքի դրույթների վերլուծության արդյունքում:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչը Սահմանադրական դատարանում գործի քննության շրջանակներում ներկայացրել է վիճարկվող դրույթով հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարողների նկատմամբ տարբերակված վերաբերմունքի հիմքում ընկած պատճառները հարկ եմ համարում նաև դրանց անդրադառնալ:

Այսպես Ազգային ժողովի դիրքորոշման համաձայն՝ «(...) օբյեկտիվորեն առաջացել է վտանգ, որ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնողները կունենան տնտեսական շարժառիթ՝ թերհայտարարագրել իրացման շրջանառությունների իրական ծավալները, քանի որ շրջանառության հարկի գծով հարկային բեռը մի քանի անգամ ավելի ցածր է, քան գործունեության համապատասխան տեսակը հարկման ընդհանուր համակարգում իրականացնելու պարագայում ձևավորվող՝ ԱԱՀ-ի և շահութահարկի

<sup>3</sup> ECHR (GC), 19 December 2018, Molla Sali v. Greece, Application no. 20452/14, § 135:

արդյունավետ դրույքաչափերի հանրագումարն է: Տնտեսվարող սուբյեկտների՝ վերոնշված շարժառիթը բավականին բարդացնում է հարկային մարմինների խնդիրը՝ վերահսկել իրացման շրջանառությունների իրական ծավալները: Իրացման շրջանառությունների թերհայտարարագրմամբ հարկման արտոնյալ համակարգերում հայտնվելու հնարավորությունները խնդիրներ են ստեղծում նաև հարկային քաղաքականության հասցեականության և շուկայական մրցակցության առումներով: Քանի որ 2018 թվականի հուլիսի 1-ից հանրային սննդի ոլորտի հարկումն ամբողջությամբ տեղափոխվել է շրջանառության հարկի կամ հարկման ընդհանուր համակարգ, որոնց շրջանակներում հարկային պարտավորությունները հաշվարկվում են իրացման շրջանառությունների հիման վրա, ուստի հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով առավել խիստ տուգանքների սահմանումը միտված է պետության կողմից առավել արդյունավետ կառավարել իրացման շրջանառությունները թաքցնելու ռիսկերը»:

Վերոգրյալ դիրքորոշման կապակցությամբ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ տարբերակված մոտեցումը հիմնավորելու համար թույլատրելի կարող են լինել այն հանգամանքները, որոնք ընկած են ոչ թե ընդհանրապես քննարկվող իրավախախտումը նախատեսելու կամ դրա համար խիստ պատասխանատվություն նախատեսելու հիմքում, այլ այն հանգամանքները, որոնք հիմնավորում են տարբերակված վերաբերմունքը: Մինչդեռ պատասխանող Ազգային ժողովի դիրքորոշման մեջ նշված որևէ հանգամանք վերագրելի չէ միայն հանրային սննդի ոլորտին, որով էլ պայմանավորված օրենսդիրն ընտրել է հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության մասով հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար ավելի խիստ պատասխանատվություն սահմանելու միջոցը՝ «իրացման շրջանառությունները թաքցնելու ռիսկերն առավել արդյունավետ կառավարելու նպատակով»:

Այսպիսով, կարծում եմ, որ սույն դեպքում՝ 1) Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի՝ օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքին համապատասխանության հարցի տեսանկյունից հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության պարտականություն

կրող՝ հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտները և այդ պարտականությունը կրող՝ այլ ոլորտներում գործունեություն իրականացնող սուբյեկտները գտնվում են համադրելի իրավիճակներում, 2) այդ սուբյեկտների նկատմամբ օրենսդիրը դրսևորել է տարբերակված վերաբերմունք՝ ի վնաս հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող սուբյեկտների, 3) վերաբերմունքի նման տարբերակումը չունի օբյեկտիվ և ողջամիտ հիմնավորում: Ասվածը բավարար է արձանագրելու համար, որ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը չի համապատասխանում օրենքի առջև ընդհանուր հավասարության սկզբունքին:

2. Միաժամանակ հարկ են համարում վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը քննարկել նաև Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ համաչափության սկզբունքի համատեքստում, մասնավորապես՝ որպես տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության ազատության սահմանափակումներ՝ դիտարկելով հարկային իրավախախտման համար օրենսդրությամբ սահմանված համապատասխան տուգանքները:

Սահմանադրությունը, երաշխավորելով տնտեսական գործունեության ազատությունը, միաժամանակ սահմանել է, որ այս իրավունքի իրականացման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով (59-րդ հոդվածի 1-ին մաս): Նշվածից հետևում է, որ այս իրավունքի իրականացման պայմանները և դրանց իրացումն ապահովող կարգն ամրագրվում են օրենքով, իսկ օրենսդրի կողմից սահմանափակող միջոցներ նախատեսվելիս պետք է հիմք ընդունվեն Սահմանադրությամբ ամրագրված պահանջները:

Օրենսդրի լիազորությունների շրջանակներում է, ի թիվս այլնի, հարկային իրավախախտումների վերաբերյալ համապատասխան կարգավորումների սահմանումը, մասնավորապես՝ հարկային իրավախախտում համարվող արարքների շրջանակների նախատեսումը, նշված արարքների կատարման համար հարկային պատասխանատվության համապատասխան միջոցների, ինչպես նաև պատասխանատվության համապատասխան չափերի նախատեսումը: Նման պայմաններում օրենսդիրն իր լիազորություններն իրացնելիս պետք է անպայմանորեն առաջնորդվի սահմանադրական սկզբունքներով:

Ուստի հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների կողմից հսկիչ դրամարկղային



մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար պատասխանատվություն սահմանող դրույթի Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի սահմանադրականությունը գնահատելիս այն անհրաժեշտ է դիտարկել նաև Սահմանադրության 78-րդ հոդվածի շրջանակներում:

Այսպես՝ Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներով անդրադարձել է համաչափության սկզբունքի էությանը, որը հանգում է հետևյալին.

- «Համաչափության սկզբունքն առաջին հերթին պահանջում է ապահովել արդարացի **հավասարակշռություն սահմանվող պատասխանատվության միջոցի ու չափի և պատասխանատվության սահմանմամբ հետապնդվող իրավաչափ նպատակի միջև**» (ՄԴՈ-924),

- «(...) օրենսդիրը, իրացնելով իրավունքների և ազատությունների սահմանափակումներ նախատեսելու իր իրավասությունը, պետք է այնպիսի համամասնությամբ դա կատարի, որ ընտրված սահմանափակումը համահունչ լինի ՀՀ Սահմանադրության 78-րդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքին, այն է՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար **ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար:**» (ՄԴՈ-1293),

- «(...) որևէ հիմնական իրավունքի սահմանափակում հնարավոր է միայն օրենքով, իսկ համաչափության սկզբունքով պայմանավորված՝ օրենքով հիմնական իրավունքի սահմանափակումներին վերաբերող պահանջները հետևյալն են.

1) **սահմանափակման նպատակի լեգիտիմությունը**, այն է՝ Սահմանադրությամբ սահմանված լինելը.

2) սահմանափակման համար **ընտրված միջոցների՝**

ա) **պիտանիությունը**՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

բ) **անհրաժեշտությունը՝** Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար.

գ) **համարժեքությունը** սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը» (ՄԴՈ–1546):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ սոցիալական և տնտեսական օրենսդրության, այդ թվում հարկային օրենսդրության ոլորտում պետությունն ունի հայեցողության լայն շրջանակ (...): Միաժամանակ նշել է, որ ցանկացած միջոցի կիրառում պետք է լինի խտրականության և համաչափության պահանջներին համապատասխան<sup>4</sup>:

Համաչափության սկզբունքը կոչված է ապահովելու մասնավոր և հանրային շահերի հավասարակշռությունը, ուստի օրենսդիրն իր լիազորությունների շրջանակներում հիմնական իրավունքները սահմանափակելիս պետք է առաջնորդվի բացառապես Սահմանադրությամբ նախատեսված նպատակներով՝ ընտրելով այդ նպատակներին հասնելու համար պիտանի, անհրաժեշտ և համարժեք միջոցներ, հետևաբար յուրաքանչյուր սահմանափակման սահմանադրականությունը գնահատելիս անհրաժեշտ է պարզել դրա նշված պահանջներին համապատասխանությունը:

Համաչափության սկզբունքի վերաբերյալ վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում անդրադառնալով տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ Սահմանադրությամբ ամրագրված տնտեսական գործունեության ազատությանն առնչվող սահմանափակումներին՝ գտնում եմ, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 8-րդ մասով վերջիններիս համար սահմանված պարտականությունը՝ օրենքին համապատասխան սահմանված հարկեր, տուրքեր մուծելու, պետական կամ համայնքային բյուջե մուտքագրվող պարտադիր այլ վճարումներ կատարելու վերաբերյալ, համարվում է Սահմանադրությամբ ամրագրված իրավաչափ նպատակով պայմանավորված սահմանափակում:

Հարկային իրավահարաբերությունների առանձնահատկությունը պայմանավորված է հանրային շահի տիրույթում գտնվելով, ուստի վիճարկվող դրույթով՝ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված իրավախախտման համար տուգանք նախատեսելը նաև հանդիսանում է երաշխիք՝ տնտեսվարող

<sup>4</sup> ECHR, 14 May 2013, N.K.M. v. HUNGARY, Application no 66529/11, § 65:

սուբյեկտների կողմից հարկային պարտականությունները բարեխղճորեն կատարելու համար:

Այդուհանդերձ, սահմանված իրավակարգավորումը Սահմանադրության 78-րդ հոդվածին համահունչ լինելու հարցը պարզելու համար պետք է բացահայտել նաև, թե արդյոք դրանով ընտրված միջոցը համարվում է այդ իրավաչափ նպատակին հասնելու համար պիտանի, անհրաժեշտ և համարժեք միջոց:

Նշվածը վերաբերելի է նաև քննության առարկա սահմանադրաիրավական վեճի շրջանակներում վիճարկվող դրույթի պարագայում, մասնավորապես՝ օրենսդիրը տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հարկային իրավահարաբերություններից բխող պատասխանատվության միջոցներ սահմանելիս պետք է ապահովի միջոցների պիտանիություն, անհրաժեշտություն և համարժեքություն: Այսինքն՝ ընտրված պատասխանատվության միջոցը պետք է նախատեսված լինի Սահմանադրությամբ ամրագրված նպատակին հասնելու համար և չպետք է անհամաչափորեն սահմանափակի տնտեսվարող սուբյեկտների հիմնական իրավունքը, այն է՝ տնտեսական գործունեության ազատությունը:

Մինչդեռ վիճարկվող դրույթով հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ կիրառված մոտեցման ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով սահմանված տուգանքը որպես սահմանադրորեն ամրագրված նպատակին հասնելու միջոց, չի համապատասխանում համաչափության սկզբունքին, մասնավորապես՝ տարբերակված պատասխանատվության կիրառումը չի համարվում այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ միջոց, ինչն էլ հանգեցնում է հանրային սննդի ոլորտում գործունեություն իրականացնող տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության իրականացման ոչ համաչափ սահմանափակման՝ ի տարբերություն այլ տնտեսվարող սուբյեկտների:

Նման պայմաններում գտնում եմ, որ օրենսդրի կողմից սահմանված իրավաչափ նպատակին հնարավոր է հասնել նաև քննարկվող իրավիճակում բոլոր տնտեսվարող սուբյեկտների համար հավասար պատասխանատվության չափ նախատեսելու միջոց ընտրելով:

Միաժամանակ հարկ եմ համարում նշել, որ թեև քննարկվող որոշմամբ Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթի սահմանադրականության հարցը չի դիտարկել Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ համաչափության սկզբունքի շրջա-

նակներում, այդուհանդերձ, կարծում եմ, որ Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի սահմանադրականությունը պետք է քննության առարկա դարձվեր նաև Սահմանադրության 78-րդ հոդվածի համատեքստում և արձանագրվեր վիճարկվող դրույթի անհամապատասխանություն Սահմանադրության 78-րդ հոդվածին:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ անհրաժեշտ է կիրառել «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 3-րդ կետով սահմանված լիազորությունը Օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը ճանաչելով Սահմանադրության 28-րդ և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«01» մարտի 2021թ.



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ**

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ 2021 ԹՎԱԿԱՆԻ  
ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի «ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 416-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ»  
ՍԴՈ-1577 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՒ  
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը՝ ստորև ներկայացնում եմ *հատուկ կարծիք*՝ Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 19-ի «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով» ՍԴՈ-1577 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 19-ի ՍԴՈ-1577 որոշումն ուղղակիորեն շոշափում է բազմաթիվ տնտեսվարող սուբյեկտների՝ տնտեսական գործունեության ազատությունը, ներառյալ՝ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

Անհրաժեշտ եմ համարում նշել, որ Մահմանադրական դատարանի ահմանադրական առաքելության շրջանակներում հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունն ուղղված է այդ թվում՝ օրենսդրական կամայական հայեցողության դեմ: Քննության առարկա կոնկրետ դեպքում այն վերջնաորոշումն է ուղղված է ազատ, մրցակցային միջավայրի ապահովմանը, տնտեսական մրցակցության համար ոչ խտրական նախադրյալների երաշխավորմանը, ըստ այդմ՝ նաև դրա միջոցով տնտեսության կայուն զարգացման ապահովմանը:

Սույն գործով վեճի առարկան հանգում է նրան, որ Հարկային օրենսգրքի վիճարկվող դրույթով՝ 416-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, հանրային սննդի ոլորտում գործունեություն ծավալող տնտեսվարող սուբյեկտների նկատմամբ հարկային որոշակի իրավախախտման համար որպես պատասխանատվություն է ապետավելի բարձր տուգանքի չափ է սահմանվում, քան նույն իրավախախտման համար տնտեսվարող մյուս սուբյեկտների նկատմամբ: Ընդ որում, տուգանքները սահմանվում են բացարձակ չափով՝ առանց կոնկրետ գործի հանգամանքներով պայմանավորված անհատականացման հնարավորության:

Իմ գնահատմամբ՝ հիշյալ տարբերակված մոտեցումը կարող է հանգեցնել տնտեսական գործունեության ազատության և տնտեսական մրցակցության երաշխավորման իրավունքի նկատմամբ հակասահմանադրական միջամտության:

Այդ հարցը պարզելու համար Մահմանադրական դատարանը պետք է գնահատեր գործի էլքի համար անհրաժեշտ հետևյալ հանգամանքները.

- 1) վիճարկվող դրույթով սահմանված իրավակարգավորման պայմաններում դրսևորված տարբերակված մոտեցումը հետապնդու մ է արդյոք իրավաչափ նպատակ,
- 2) վիճարկվող դրույթով ապահովվու մ է արդյոք խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքը,
- 3) վիճարկվող դրույթով պահպանվե լ է արդյոք հարկային իրավախախտման և դրա համար նախատեսված պատասխանատվության միջոցի միջև համաչափությունը,
- 4) վիճարկվող դրույթով սահմանված իրավակարգավորումն ապահովու մ է արդյոք անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր՝ տնտեսական գործունեության ազատության, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքի արդյունավետ իրականացման համար,

5) արդյունքում վիճարկվող դրույթն ապահովում է արդյոք տնտեսական գործունեության ազատությունը, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը:

Ելնելով թե՛ դիմումի բովանդակությունից, թե՛ գործի հանգամանքները ի պաշտոնե պարզելու ընդհանուր սկզբունքից՝ Սահմանադրական դատարանը պետք է անդրադառնար վիճարկվող դրույթի սահմանադրականությանը Սահմանադրության 29-րդ, 59-րդ, 75-րդ և 78-րդ հոդվածների համատեքստում, մինչդեռ դատարանն ամբողջովին անտեսել է թե՛ տնտեսական գործունեության հիմնական ազատության, թե՛ այդ ազատության ապահովման արդյունավետ կառուցակարգերի, թե՛ հատկապես նաև համաչափության սկզբունքի հարցերը՝ ինքն իրեն կանխավ, առանց որևէ հիմնավորման սահմանափակելով միայն Սահմանադրության 28 և 29-րդ հոդվածներով նախատեսված՝ օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքներին համապատասխանության ստուգմամբ:

2. Ինքնասահմանափակման այն հակվածությունը, որը դրսևորվում է Սահմանադրության 2020 թվականի փոփոխություններից հետո Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության կողմից, դառնում է միտում և հնարավորություն է ստեղծում առանց փաստարկված հիմնավորումների որոշել, թե Սահմանադրության ո՞ր դրույթներին համապատասխանության շրջանակներում իրականացնել վիճարկվող դրույթի սահմանադրականության ստուգումը՝ անտեսելով Սահմանադրության հրամայական պահանջներն անգամ այն դեպքում, երբ դիմողը բարձրացնում է դրանց վերաբերող հարցեր:

Այսպես՝ Սահմանադրական դատարանը ՍԴՈ-1577 որոշմամբ ընդհանրապես շրջանցել է վերաբերելի ելակետային հիմնական իրավունքի (ազատության) հիմնահարցը՝ չանդրադառնալով Սահմանադրության 59-րդ հոդվածում ամրագրված՝ տնտեսական գործունեության ազատությանը, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքին, մինչդեռ առանց ելակետային հիմնական իրավունքի (ազատության) առնվազն անտրամաբանական է պարզել օրենքի առջև ընդհանուր հավասարության և խտրականության արգելքի սկզբունքների ստուգումը: Առավել ևս հնարավոր չէ անդրադառնալ համաչափության սկզբունքին, եթե Սահմանադրական դատարանը չի պարզում, թե ո՞ր հիմնական իրավունքը կամ ազատությունն են սահմանափակվում վիճարկվող

դրույթով, քանի որ համաչափության սկզբունքը հիմնական իրավունքների կամ ազատությունների սահմանափակումներին վերաբերող հիմնարար պահանջ է: Անկախ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության մոտեցումներից կամ շարժառիթներից՝ վարչական (հարկային) պատասխանատվության միջոցների սահմանադրականության հարցը պարզելիս հնարավոր չէ անտեսել այն փաստը, որ ցանկացած իրավաբանական պատասխանատվության միջոց որևէ հիմնական իրավունքի սահմանափակում է, որը պարտադիր կարգով պետք է ստուգվի սահմանափակումներին վերաբերող Սահմանադրության պահանջների տեսանկյունից: Իսկ այն դեպքերում, երբ խոսքը որևէ պատասխանատվության միջոցի տեսակի և չափի մասին է, ապա Սահմանադրական դատարանը առավել ևս պարտավոր է անդրադառնալ այդպիսի միջոցի համաչափությանը, ինչը տեղի չի ունեցել:

**3.** Սահմանադրական դատարանն իր բազում որոշումներում անդրադարձել է ոչ միայն համաչափության սկզբունքին ընդհանրապես, այլև հենց իրավաբանական պատասխանատվությանը վերաբերող՝ համաչափության սկզբունքից ածանցվող սահմանադրական պահանջներին: Այսպես, օրինակ՝ 16.11.2010թ. ՄԴՈ-924 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Իրավաբանական պատասխանատվության հիմքում ընկած համաչափության սահմանադրական սկզբունքը պահանջում է նաև, որ սահմանված պատասխանատվության չափը լինի տարբերակված՝ ելնելով կատարված արարքի ծանրությունից, հանրային վտանգավորության աստիճանից, պատճառված վնասից, մեղքի աստիճանից և այլ էական հանգամանքներից: Ըստ այդմ, օրենսդրից պահանջվում է սահմանել պատասխանատվության այնպիսի իրավակարգավորում, որը պատասխանատվության ենթարկող իրավասու մարմնին հնարավորություն կընձեռի որոշելու նշանակվող պատասխանատվության կոնկրետ չափը՝ ելնելով զանցանքի բնույթից և լրջությունից»:

Իրավաբանական պատասխանատվությունը, հատկապես՝ քրեական և վարչական (հարկային պատասխանատվությունը վարչական պատասխանատվության տարատեսակ է), պայմանավորված է իրավախախտում կատարած անձով, իրավախախտման բնույթով, ծանրությամբ, իրավախախտի գույքային դրությամբ և բոլոր այլ էական փաստերով: Այն դեպքերում, երբ օրենսդիրը մեկ միասնական տույժ է սահմանում բոլոր դեպքերի համար, ապա էա-



պես նվազեցնում է իրավակիրառ մարմնի հնարավորությունը համաչափ ներգործելու որևէ իրավախախտում կատարած անձի վրա՝ պարտավորեցնելով նրան բոլոր դեպքերի համար արհեստականորեն կիրառել օրենքով սահմանված պատասխանատվության կոնկրետ չափ: Դա դեպքերի գերակշիռ մեծամասնությունում չի կարող ապահովել արդարացի հավասարակշռություն մասնավոր և հանրային շահերի միջև՝ հանգեցնելով հիմնական իրավունքի կամ ազատության այնպիսի սահմանափակման, որն ավելին է, քան անհրաժեշտ է իրավաբանական պատասխանատվության նպատակին հասնելու համար: Միայն պատասխանատվության խստությունը կամ միասնական չափը որևէ կերպ չի կարող երաշխավորել համաչափությունը՝ Սահմանադրության տեսանկյունից:

Հետևապես, իրավաբանական պատասխանատվության միջոցները, որպես կանոն, պետք է լինեն տարբերակված՝ ապահովելով նույն արարքի համար յուրաքանչյուր դեպքում անհատական մոտեցում դրսևորելու իրավական հնարավորություն: Մինչդեռ որոշման մեջ լիովին անտեսվել է, մասնավորապես, նաև տուգանքի չափի հարցը, ինչն անընդունելի է, քանի որ «տարբերակված խիստ վերաբերմունք» արտահայտությունը, որը գործածվում է հենց ՍԴՈ-1577 որոշման մեջ՝ սահմանադրաիրավական վեճի շրջանակները ուրվագծելու համար, ուղղակիորեն վկայում է համաչափության ստուգման անհրաժեշտության մասին: Բացի դրանից, հիշյալ որոշմամբ ամբողջովին անտեսվել է այն հարցը, թե արդյո՞ք բացարձակ գումարի չափով, առանց անհատականացման հնարավորության, սահմանված տուգանքները կարող են բոլոր դեպքերում համաչափ լինել: Գտնում եմ, որ դեպքերի գերակշիռ մեծամասնությունում, այդ թվում՝ վիճարկվող դրույթով կարգավորվող դեպքում, տուգանքը չի կարող ունենալ օրենքով սահմանված մեկ կոնկրետ չափ: Դրանով խախտվում է համաչափության սահմանադրական սկզբունքը՝ անկախ անգամ խտրականության կամ ընդհանուր հավասարության սկզբունքների ենթադրյալ կամ իրական խախտումներից:

4. Ինչ վերաբերում է խտրականության արգելքի տեսանկյունից վիճարկվող դրույթի գնահատմանը, որը դարձել է ՍԴՈ-1577 որոշման առանցքը, ապա հարկ է նշել, որ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության համար հանրային սննդի ոլորտում իրականացվող գործունեության դեպքում նախատեսվում է տուգանք 600 հազար դրամի չափով այն դեպքում, երբ նույն իրավա-

խախտման համար մնացած տնտեսավարող սուբյեկտները տուգանվում են 150 հազար դրամի չափով:

Բացի դրանից, 2018 թվականի հուլիսի 1-ից հետո կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում հանրային սննդի ոլորտն ամբողջությամբ հարկվում է շրջանառության հարկի կամ հարկման ընդհանուր համակարգերում: Սակայն, արդյոք ք հարկման կամ այլ՝ վարչական պատասխանատվության համար էական նշանակություն չունեցող առանձնահատկությունները կարող են պայմանավորել միննույն արարքի կատարման համար վարչական պատասխանատվության էապես ավելի բարձր չափը: Ինձ համար ընդունելի չէ, երբ ՄԴՈ-1577 որոշման մեջ վարչական պատասխանատվության հետ ուղիղ պատճառական կապ չունեցող օրենսդրական առանձնահատկությունները դիտարկվում են որպես տուգանքի տարբերակված չափը Սահմանադրության տեսանկյունից արդարացնող, այսինքն՝ որպես ոչ խտրական, օբյեկտիվ հիմքեր: Հարկման կամ այլ, վարչական պատասխանատվության հանգեցնող արարքի հետ չառնչվող առանձնահատկությունները դիտարկելով որպես օբյեկտիվ տարբերակիչ՝ ՄԴՈ-1577 որոշմամբ հիմք է ստեղծվել կամայական օրենսդրական կարգավորումների և իրավակիրառ պրակտիկայի համար, քանի որ չկա հանրային կյանքի ոլորտ, որը չունենա առանձնահատկություններ: Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնությունն անտեսել է այն առանցքային հարցը, թե այդ ի՞նչ եղանակով հանրային սննդի ոլորտում գործունեության մասով անձինք *հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտմամբ* կարող են *կիրառել հսկիչ դրամարկղային մեքենաները*, որպեսզի տուգանվեն բազմակի անգամ ավելի չափով (600 հազար դրամի չափով 150 հազար դրամի փոխարեն), քան այլ անձինք: Ի՞նչ կապ ունեն ՄԴՈ-1577 որոշմամբ թվարկված հարկման և այլ առանձնահատկությունները կոնկրետ փաստակազմի հետ, ի՞նչպես պետք է նման առանձնահատկությունները, որոնք իրավացիորեն մատնանշվում են հիշյալ որոշման մեջ, ազդեն հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման վրա, որպեսզի պայմանավորեն տուգանքի չափի էական տարբերությունը: Ընդամին, հարկ է նկատել, որ նման արարքների տարածվածությունը պրակտիկայում չի կարող Սահմանադրության տեսանկյունից արդարացնել նույն արարքի համար տուգանքի էական տարբերությունը:

Ուստի գտնում եմ, որ տուգանքների չափերի նման տարբերակման օբյեկտիվ հիմք առկա չէ, նույնիսկ եթե նպատակը ինքնին

լեզիտիմ լինի, իսկ հարկման առանձնահատկությունները չեն կարող պայմանավորել հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտման համար սահմանված պատասխանատվության չափը: Հետևապես՝ ի հակադրություն ՄԴՈ-1577 որոշման՝ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 29-րդ հոդվածում ամրագրված խտրականության արգելքի սկզբունքին:

5. Վերոգրյալի հիման վրա գտնում եմ, որ վիճարկվող դրույթը հակասում է Սահմանադրության 29-րդ և 78-րդ հոդվածների պահանջներին: Այդպիսի հակասությունը հանգեցնում է նաև Սահմանադրության 59-րդ և 75-րդ հոդվածների խախտման, քանի որ տնտեսական գործունեության ազատությունը, ներառյալ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունքը սահմանափակվում է ավելի, քան թույլատրելի է, և օրենսդրորեն սահմանվում են կառուցակարգեր, որոնք խոչընդոտում են նշված իրավունքի արդյունավետ իրականացմանը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ**

**Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ**

1 մարտի 2021թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ  
ՄԱՍԻ 1-ԻՆ ԿԵՏԻ, 29-ՐԴ ԳԼԽԻ ԵՎ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 223-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

23 փետրվարի 2021 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵՎՎՈՐ ♦ 1(101)2021

վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 29-րդ գլխի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքը (այսուհետ՝ Օրենսգրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ից:

Օրենսգրքի «Վարչական դատարան դիմելու իրավունքը» վերնագրով 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը սահմանում է.

*«2. Վարչական դատարան կարող են դիմել նաև վարչական մարմինները կամ պաշտոնատար անձինք՝*

*1) ֆիզիկական կամ իրավաբանական անձին վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջով, եթե օրենքով նախատեսված է, որ վարչական պատասխանատվության կարող է ենթարկել միայն դատարանը»:*

Օրենսգրքի «Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի վարույթը» վերնագրով 29-րդ գլխի հետևյալ հոդվածներով սահմանվում է.

**«Հոդված 214. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերի հարուցումը**

*1. Վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերը հարուցվում են Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով նախատեսված անձանց հայցադիմումով:*

*2. Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին հայցադիմումը դատարան է ներկայացվում Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 37-րդ հոդվածով նախատեսված ժամկետում:*

**Հոդված 215. Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հայցադիմումին ներկայացվող պահանջները**

*1. Անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, նաև ներառում է՝*

*1) տեղեկություններ վարչական իրավախախտման մասին ար-*

ձանագրությունը կազմելու համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրի և ժամանակի մասին.

2) վարչական իրավախախտման մասին արձանագրությունը կազմած անձի պաշտոնը, անունը, ազգանունը.

3) տեղեկություններ այն անձի մասին, որի նկատմամբ կազմվել է վարչական իրավախախտման մասին արձանագրությունը.

4) այն օրենքի դրույթները, որոնք վարչական պատասխանատվություն են նախատեսում վարչական իրավախախտման մասին արձանագրություն կազմելու համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար.

5) հայցվորի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

2. Իրավասու պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումին կցվում են վարչական իրավախախտման մասին արձանագրությունը և արձանագրությանը կցվող փաստաթղթերը:

3. Անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցադիմումը, ի լրումն սույն օրենսգրքի 73-րդ հոդվածով ներկայացվող պահանջների, նաև ներառում է՝

1) տեղեկություններ՝ հայցադիմումը ներկայացնելու համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման վայրի և ժամանակի մասին.

2) հայցադիմումի համար հիմք հանդիսացած գործողությունների կատարման համար վարչական պատասխանատվություն նախատեսող օրենքի դրույթները.

3) հայցվորի պահանջը վարչական պատասխանատվության ենթարկելու մասին:

4. Անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին կուսակցությունների դաշինքի կամ քարոզչության կողմի հայցադիմումը, ի լրումն սույն հոդվածի 3-րդ մասով ներկայացվող պահանջների և սույն օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված տեղեկատվության փոխարեն, ներառում է՝

1) կուսակցության դաշինքի ներկայացրած հայցադիմումի դեպքում՝ կուսակցության դաշինքի անվանումը, լիազոր ներկայացուցչի վերաբերյալ անձնական տվյալները, բնակության (գտնվելու) վայրը, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է բնակության վայրից).

2) քարոզչության կողմի ներկայացրած հայցադիմումի դեպքում՝ քարոզչության կողմի լիազոր ներկայացուցչի վերաբերյալ անձնա-

կան տվյալները, բնակության (գտնվելու) վայրը, ծանուցման հասցեն (եթե այն տարբերվում է բնակության վայրից):

**Հոդված 216. Դատաքննությունը վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործերով և վարչական դատարանի դատական ակտը**

1. Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերով վարչական իրավախախտման մասին արձանագրություն կազմելու կամ հայցադիմումի համար հիմք ծառայած հանգամանքների ապացուցման բեռը չի կարող դրվել այն անձի վրա, որի գործողությունների վերաբերյալ կազմվել է համապատասխան արձանագրությունը: Արձանագրությունն ինքնին ապացույց չէ:

2. Պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինը (պաշտոնատար անձը), որը կատարել է վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ ֆիզիկական կամ իրավաբանական անձի հայցադիմումի համար հիմք հանդիսացած գործողություն կամ չի կատարել որևէ հայցվող գործողություն, սակայն հայցվորի պնդմամբ պարտավոր էր այն կատարել, կրում է իր որոշման, գործողության կամ անգործության համար հիմք ծառայած փաստական հանգամանքների ապացուցման բեռը:

3. Վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործը քննելիս վարչական դատարանը, ի թիվս Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ և 279-րդ հոդվածներում նշված հարցերի, պարզում է նաև, թե տեղի է ունեցել արդյոք վարչական իրավախախտման մասին արձանագրության կամ հայցադիմումի մեջ նշված արարքը, և առկա է արդյոք հայցադիմումում նշված անձի դա կատարելու փաստը, նախատեսված է արդյոք օրենքով վարչական պատասխանատվություն տվյալ արարքը կատարելու համար:

3.1. Անձին վարչական պատասխանատվության ենթարկելու մասին կուսակցության, կուսակցությունների դաշինքի, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուի կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմի ներկայացրած հայցադիմումի հիման վրա վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ գործը դատարանը քննում է անկախ վարչական իրավախախտման մասին արձանագրության առկայության հանգամանքից:



4. Սույն օրենսգրքի 214-րդ հոդվածով նախատեսված գործերով վարչական դատարանը որոշում է կայացնում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու կամ հայցադիմումը մերժելու մասին»:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգիրքն ընդունվել է 1985 թվականի դեկտեմբերի 6-ին ՀՍՍՀ Գերագույն խորհրդի կողմից, ուժի մեջ է մտել 1986 թվականի հունիսի 1-ին:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի «Վարչական դատարանները» վերնագրով 223-րդ հոդվածը սահմանում է.

«Վարչական դատարանները քննում են`

1) սույն օրենսգրքի 41.5, 972, 973, 147, 1661, 172.3 հոդվածներով, 1801, 182, 1831, 1892 -1896, 189.9-189.10 հոդվածներով, 1982 հոդվածի չորրորդ մասով և 2065, 20610, 20611, 20612, 20613, 206.16, 206.14 հոդվածներով նախատեսված դեպքերում` վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների (պաշտոնատար անձանց) հայցադիմումով.

2) սույն օրենսգրքի 1705, 1897, 18918 հոդվածներով և 1982 հոդվածի հինգերորդ մասով նախատեսված դեպքերում` ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով.

3) սույն օրենսգրքի 2069 հոդվածով նախատեսված դեպքում` դատավճռի, վճռի կամ այլ դատական ակտի կատարումն ապահովող պետական մարմնի (պաշտոնատար անձի) հայցադիմումով.

4) սույն օրենսգրքի 2068 հոդվածով նախատեսված դեպքում` մարդու իրավունքների պաշտպանի հայցադիմումով.

5) սույն օրենսգրքի 206.15-րդ հոդվածով նախատեսված դեպքում` Սահմանադրական դատարանի աշխատակազմի ղեկավարի հայցադիմումով.

5.1) սույն օրենսգրքի 206.17-րդ հոդվածով նախատեսված դեպքում` Բարձրագույն դատական խորհրդի աշխատակազմի ղեկավարի (Դատական դեպարտամենտի ղեկավարի) հայցադիմումով.

6) սույն օրենսգրքի 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմելու իրավասություն ունեցող պետական մարմինների (պաշտոնատար անձանց) կամ համապատասխան ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների, համայնքի ղեկավարի կամ ավագանու



անդամի թեկնածուների կամ այդ ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելություն իրականացնող հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև հանրաքվեի ժամանակ քարոզչության կողմերի հայցադիմումով»:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի՝ թիվ ՎԴ/0015/05/20 գործով 2020 թվականի մարտի 24-ին կայացրած «Վարչական գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշման հիման վրա՝ 2020 թվականի մարտի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով հիշյալ օրենսգրքերի վերաբերելի մյուս դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### **I. Դիմողի դիրքորոշումը**

**1.1** Դիմողը ՀՀ վարչական դատարանը, 2020 թվականի մարտի 24-ին «Վարչական գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշման եզրափակիչ մասով որոշել է. «... 2. Դիմել Սահմանադրական դատարան՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի և դրա հետ փոխկապակցված՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխի, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածի՝ ՀՀ սահմանադրության 4-րդ հոդվածին համապատասխանությունը որոշելու հարցով»:

**1.2.** Դիմողը գտնում է, որ վիճարկվող իրավադրույթներով նախատեսված կարգավորումներով դատավարության իրականացումը խնդրահարույց է Սահմանադրության 4-րդ հոդվածով նախատեսված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի տեսանկյունից, քանի որ վիճարկվող իրավադրույթների կիրառմամբ անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը համարում է որպես վարչարարության շարունակություն, հետևաբար՝ պետական գործադիր իշխանության գործառույթ: Իր դիրքորոշումը դիմողը հիմնավորում է հետևյալ փաստարկներով և հանգամանքներով.

**ա)** գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթը դատարանն իրականացնում է բացառապես վարչարարությունից ազդված անձի ներկայացրած հայցադիմումի դեպքում,

մինչդեռ վիճարկվող իրավակարգավորումների համաձայն՝ դատարանին վերապահվել է վարչական մարմինների սկսած վարչարարությունն ավարտին հասցնելու գործառույթ.

բ) վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով որևէ ողջամիտ տարբերակում չի ներկայացված դրանով նախատեսված այլ զանցակազմերի և այն զանցակազմերի միջև, որոնց վերաբերյալ վերջնական որոշում կայացնելու իրավասությունը վերապահված է դատարանին.

գ) համեմատության համար նշել էր, որ Գերմանիայի Դաշնային Հանրապետության վարչական դատավարության կանոններով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորություն դատարանի համար նախատեսված չէ:

**II. Պատասխանողի դիրքորոշումը**

2. Պատասխանողի դիրքորոշումը վիճարկվող իրավադրույթները համապատասխանում են Սահմանադրությանը և, ի հիմնավորումն՝ ներկայացրել է հետևյալ փաստարկները.

ա) գործադիր իշխանության կողմից իրականացվող վարչարարության նկատմամբ դատական վերահսկողության ձևերը բազմազան են և կարող են արտահայտվել ինչպես նախնական դատական վերահսկողության (վարչական մարմնի իրականացրած վարչարարության ստուգմամբ անձին վարչական պատասխանատվության ենթարկելու միջոցով), այնպես էլ հետագա դատական վերահսկողության (վարչարարության իրավաչափության վիճարկման) միջոցով: Վերահսկողության այս երկու միջոցներն էլ ապահովում են անձանց Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով նախատեսված իրավունքների իրացումը.

բ) վիճարկվող իրավակարգավորումների պայմաններում անձի իրավունքների դատական պաշտպանությունը պայմանավորվել է ոչ թե նրա կամաարտահայտությամբ, այլ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելն է պայմանավորվել անձին դատական պաշտպանությամբ ընձեռված երաշխիքների առկայությամբ, քանի որ դատարանի կողմից անձին վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթում դատարանը անմիջապես կիրառում է այն երաշխիքները և գործիքակազմը, որոնք դատարանին վերապահված են վարչական պատասխանատվության ենթարկելիս վարչական մարմնի վարչարարության իրավաչափությունը ստուգելու համար.

գ) վկայակոչելով Սահմանադրական դատարանի ՄԴՈ-864 որո-

շումը՝ պատասխանողը համարում է, որ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի գոյությունը ընդունելի է համարվել նաև Սահմանադրական դատարանի կողմից.

դ) վարչական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դատական վարույթներով վարչական դատարանը ոչ թե իրականացնում է գործադիր գործառույթ, այլ վերահսկում է գործադիր իշխանության արդեն իրականացրած լիազորությունները և դրանց իրավաչափության դեպքում միայն անդրադառնում անձին վարչական պատասխանատվության ենթարկելու հարցին:

### III. Կիրառելի սահմանադրական իրավունքը

3.1. Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունն ... իրավական պետություն է»:

3.2. Սահմանադրության 4-րդ հոդվածի համաձայն՝ «Պետական իշխանությունն իրականացվում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման ու հավասարակշռման հիման վրա»:

3.3. Սահմանադրության 61-րդ հոդվածի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք: ... »:

3.4. Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

3.5. Սահմանադրության 162-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետությունում արդարադատությունն իրականացնում են միայն դատարանները՝ Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: ... »:

3.6. Սահմանադրության 163-րդ հոդվածի համաձայն՝ «1. Հայաստանի Հանրապետությունում գործում են Սահմանադրական դատարանը, Վճռաբեկ դատարանը, վերաքննիչ դատարանները, առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանները, ինչպես նաև վարչական դատարանը: ... »:

3.7. Սահմանադրության 164-րդ հոդվածի համաձայն՝ «1. Արդարադատություն իրականացնելիս դատավորն անկախ է, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: ... »:

**3.8.** Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու առնչությամբ Սահմանադրական դատարանն իր 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշմամբ, անդրադառնալով վարչական դատավարության օրենսգրքի (ՀՕ-269-Ն, ընդունված 2007 թվականի նոյեմբերի 28-ին և ուժը կորցրած 2014 թվականի հունվարի 7-ին) 26-րդ գլխի դրույթների («Դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու մասին գործերի վարույթը»)՝ Սահմանադրությանը (2005 թվականի փոփոխություններով) համապատասխանությանը, Հայաստանի Հանրապետության դատական իշխանության կողմից դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վարչական դատավարության ինստիտուտի սահմանադրականությունը խնդրահարույց չի դիտարկել: Դատարանն իր հիշյալ որոշմամբ, մասնավորապես, նշել է. «6. Նկատի ունենալով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի հարաբերակցությունը հանրային շահերի պաշտպանության խնդրի հետ, հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի դրույթները, սահմանադրական դատարանը սույն գործի շրջանակներում հարկ է համարում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող դրույթները դիտարկել հանրային շահերի պաշտպանության և իրավական անվտանգության տեսանկյունից: Այս կապակցությամբ հարկ է վիճարկվող դրույթները դիտարկել օրենսգրքի մյուս հոդվածների, Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հետ համակարգային փոխկապակցության մեջ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի ուսումնասիրությունից բխում է, որ նշված օրենսգրքով նախատեսված է անձանց վարչական պատասխանատվության ենթարկելու երկու կարգ՝ արտադատարանական, որն իրականացվում է նույն օրենսգրքով սահմանված՝ կոնկրետ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու դրանց պաշտոնատար անձանց կողմից, և դատական, որն իրականացվում է դատարանների կողմից:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածը մատնանշում է նույն օրենսգրքի այն բոլոր հոդվածները, որոնցով նախատեսված իրավախախտումների համար նախատեսվում է դատական կարգով վարչական պատասխանատվություն:

Վարչական դատավարության օրենսգրքի՝ վիճարկվող հոդվածները ներառող 26-րդ գլխի և Վարչական իրավախախտումների

վերաբերյալ ՀՀ օրենսգրքի դրույթների համակարգային վերլուծությունը վկայում է, որ անձին դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 26-րդ գլխի իրավակարգավորումը սահմանելիս չի դրսևորվել համակարգային մոտեցում: Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքով հստակ սահմանված չեն բռնոր այն կոնկրետ վարչական մարմիններն ու դրանց պաշտոնատար անձինք, որոնք իրավասու են վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն կազմել և այն ներկայացնել դատարան՝ անձանց դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու նպատակով՝ Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 223-րդ հոդվածում մատնանշված հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումները կատարելու համար: ...»:

**IV. Սահմանադրաիրավական վեճի շրջանակը**

Դիմողի կողմից վիճարկվող իրավադրույթներով նախատեսված դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտի սահմանադրականության խնդիրը բարձրացված է միայն Սահմանադրության 4-րդ հոդվածով նախատեսված իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին համապատասխանության առումով:

Սույն գործի քննության շրջանակը Սահմանադրական դատարանը սահմանում է միայն վիճարկվող իրավադրույթների՝ Սահմանադրության 4-րդ հոդվածին համապատասխանությունն ստուգելու շրջանակում: Սահմանադրական դատարանը, սույն գործի շրջանակներում ուսումնասիրելով վիճարկվող իրավադրույթների՝ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին և 63-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասին, 163-րդ հոդվածի 1-ին մասին և 164-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխանության հարցը, վիճարկվող իրավադրույթների սահմանադրականության հարցը դիտարկել է բացառապես իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքին համապատասխանության տեսանկյունից:

**V. Սահմանադրական դատարանի դիրքորոշումը**

**5.1.** Սահմանադրական ժողովրդավարություններում իշխանությունների բաժանման սկզբունքի ներդրման նպատակը իշխանության կենտրոնացումը և մեկ մարմնին կամ պաշտոնյային կամ հա-

մակարգին վերահսկելի դարձնելը կանխելու միջոցով ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայման ստեղծելն է:

Իշխանությունների բաժանման սկզբունքը կայուն ամրագրում է ունեցել 1995 թվականին Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունմամբ և անընդհատ շարունակել է մնալ դրա հետագա բոլոր փոփոխություններում՝ որպես Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի առանցքային հիմնադրույթ (2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 5-րդ հոդվածի 1-ին մաս, 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 4-րդ հոդված): Այս սկզբունքը Հայաստանի սահմանադրական իրավունքում հիմնվել է «Անկախ պետականության մասին հիմնադրույթների մասին» օրենքի 3-րդ հոդվածում, որտեղ Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունքում առաջին անգամ ստացել է նորմատիվ ամրագրում:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, ձևակերպված լինելով Սահմանադրության 4-րդ հոդվածում, ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության համար անհրաժեշտ պայման լինելուց բացի, կոչված է նաև ապահովելու անհրաժեշտ միջավայր Սահմանադրության 1-ին հոդվածով հռչակված՝ Հայաստանի Հանրապետության իրավական պետության որակի համար՝ հանդիսանալով իրավական պետության մյուս հատկանիշների, մասնավորապես՝ հանրային իշխանության մարմինների գործունեության օրինականության, իրավական որոշակիության, իշխանության չարաշահման կամ կամայականությունների արդյունավետ արգելքի, օրենքի առջև հավասարության, խտրականության արգելքի, արդարադատության մատչելիության և արդար դատաքննության իրավունքի ապահովման կարևոր երաշխիքներից մեկը:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման մասին Սահմանադրության 4-րդ հոդվածով նախատեսված սկզբունքի պահանջն է պետական իշխանության գործառույթային (օրենսդիր, դատական և գործադիր) և այդ գործառույթների իրագործմանը կոչված ինստիտուտների (պետական մարմինների և պաշտոնատար անձանց) հստակ տարանջատվածությունը: Իշխանությունների բաժանումը, սակայն, ինքնանպատակ չէ, քանի որ իշխանության իրականացման ընթացքում պետության կենսական կարևոր խնդիրների իրագործման նպատակով այն անհրաժեշտաբար պետք է գուգորդվի իշխանությունների հավասարակշռմամբ: Այսինքն՝

հստակ տարանջատվածության հետ մեկտեղ պետական իշխանության ճյուղերը անհրաժեշտաբար պետք է գտնվեն ընդհանուր հավասարակշռության մեջ:

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի վերը նշված ընդհանուր բնորոշումների լույսի ներքո դիմողի կողմից վիճարկվող իրավադրույթների սահմանադրականության հարցը լուծելու համար Սահմանադրական դատարանի կողմից պարզման ենթակա են հետևյալ հանգամանքները.

**ա)** արդյոք դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու դատարանի լիազորության իրականացումը վտանգում է դատարանի և դատավորի անկախությունը,

**բ)** արդյոք վիճարկվող իրավադրույթների կիրառմամբ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու գործառույթը դուրս է դատական իշխանությանը վերապահված իրավագործության սահմաններից, իսկ վիճարկվող դրույթների կիրառումը կարող է կասկածի տակ դնել դատական իշխանության գործունեության սահմանադրական նպատակը,

**գ)** արդյոք դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վիճարկվող իրավադրույթների համաձայն իրականացված ընթացակարգում պաշտպանված են անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները:

**5.2.** Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավադրույթների կիրառմամբ իր արդարադատական լիազորությունների իրականացումը վարչական դատարանին դուրս չի դնում Սահմանադրությամբ, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքով և Հայաստանում դատարանների և դատավորների անկախության համար երաշխիքներ նախատեսող այլ իրավական ակտերի գործողությունից, որոնք հավասարապես գործում և տարածվում են նաև դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու պահանջի վերաբերյալ գործերի քննության ընթացքում վարչական դատարանի դատավորների նկատմամբ՝ դատարանի և դատավորների անկախության համար նախատեսված երաշխիքների ողջ ծավալով: Միաժամանակ, վարչական դատարանի կողմից անձին վարչական պատասխանատվության ենթարկելու գործառույթը, որն իրականացվում է վիճարկվող իրավադրույթների կիրառմամբ, վարչական դատարանին չի դնում գործադիր կամ օրենսդիր իշխանության այնպիսի ազդեցության ներքո, որն անհամատեղելի լիներ իշխանությունների բաժանման սկզբունքի հետ:



Հետևաբար, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթները չունեն այնպիսի առանձնահատուկ կանոններ և պայմաններ, որոնք նման վարույթների իրականացմամբ հանրային իշխանության որևէ համակարգի կամ մարմնի կողմից դատարանի արդարադատություն իրականացնելու գործառույթի նկատմամբ ներագոյելու հնարավորություն ընձեռեին:

**5.3.** Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի այն մոտեցումը, որ դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելը վարչարարության շարունակություն է և, հետևաբար, դուրս է արդարադատություն իրականացնող մարմնի սահմանադրական լիազորությունների շրջանակից: Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը չի կարող բացարձակացվել և դիտարկվել ինքնանպատակ: Վարչական արդարադատությունն իրականացվում է ինչպես դատական կարգով անձին վարչական պատասխանատվության ենթարկելու, այնպես էլ վարչական ակտի իրավավաչափության ստուգման միջոցով: Սահմանադրության 162-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված միայն դատարանների կողմից արդարադատություն իրականացնելու սահմանադրական հստակ պատվիրանը չի բացառում դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու դատարանի լիազորությունը, որպիսին դատարանի համար նախատեսելը կամ բացառելը վերապահված է օրենսդիր իշխանության հայեցողությանը:

Այլ խոսքով, վարչական իրավախախտումների գերակշիռ մեծամասնության դեպքում վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորության վերապահումը վարչական մարմիններին, *ipso facto*, չի կարող փաստարկել դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու դեպքում դատարանի կողմից վարչական գործառույթի իրականացման մասին դիմողի մոտեցումը: Ավելին, դատական կարգով վարչական պատասխանատվություն նախատեսող մի շարք իրավախախտումների դեպքում դատական վարույթներն առհասարակ հարուցվում են ոչ թե վարչական մարմինների, այլ մասնավոր՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից: Օրինակ՝ վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածի համաձայն՝ նույն օրենսգրքի 1705, 1897, 18918, 40.1-40.4 և 40.6-40.15 հոդվածներով նախատեսված դեպքերում դատական կարգով վարչական պատասխանատվության վարույթները հա-



րուցվում են ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հայցադիմումով, առանց նախնական վարչական ընթացակարգերի:

**5.4.** Սահմանադրական դատարանը, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ինստիտուտը կանոնակարգող և սույն գործով վիճարկվող իրավադրույթների վերլուծությունը կատարելով նաև անձի արդար դատաքննության իրավունքի պաշտպանության համատեքստում, գտնում է, որ վարչական դատավարության օրենսգրքի 29-րդ գլխի կանոններով իրականացվող վարույթի նկատմամբ անշեղորեն տարածվում են վարչական դատավարության բոլոր սկզբունքները: Մասնավորապես, կողմերի իրավահավասարության (Վարչական դատավարության օրենսգրքի 5-րդ հոդված), փաստերի ի պաշտոնե պարզման (Վարչական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդված) սկզբունքների հետ մեկտեղ ապացուցման բեռի բաշխմամբ այն չի կարող դրվել պատասխանող քաղաքացու վրա (Վարչական դատավարության օրենսգրքի 216-րդ հոդվածի 1-ին մաս), իսկ ֆիզիկական կամ իրավաբանական անձ հանդիսացող կողմը կրում է վարչական դատարանում այլ տեսակի վարույթների մասնակցի իրավունքներ և պարտականություններ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ բացի դատական կարգով վարչական պատասխանատվության մասին վարույթների նկատմամբ վերը նշված ընթացակարգային սկզբունքների կիրառելիության պահանջից, Վարչական դատավարության օրենսգրքի վիճարկվող 216-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «... *վարչական դատարանը, ի թիվս Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 247-րդ և 279-րդ հոդվածներում նշված հարցերի, պարզում է նաև, թե տեղի է ունեցել արդյոք վարչական իրավախախտման մասին արձանագրության կամ հայցադիմումի մեջ նշված արարքը, և առկա է արդյոք հայցադիմումում նշված անձի դա կատարելու փաստը, նախատեսված է արդյոք օրենքով վարչական պատասխանատվություն տվյալ արարքը կատարելու համար*», որով արդեն իսկ վարչական դատավարությունում առկա դատավարական երաշխիքներին ավելանում են այս տեսակի գործերում վերոհիշյալ հոդվածներով նախատեսված լրացուցիչ դատավարական երաշխիքներ:

Հետևաբար, վիճարկվող իրավադրույթներով նախատեսված ընթացակարգով դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորության իրականացումը դատարանի կողմից չի կարող բացասական ազդեցություն ունենալ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդյունավետ

դատական պաշտպանության և Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման հնարավորության և արդյունավետության վրա:

**5.5.** Միաժամանակ, դատական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու վարույթը արտադատարանական կարգով վարչական պատասխանատվության ենթարկելու ընթացակարգի համեմատ քաղաքացու և իրավաբանական անձի համար ապահովում է իրավունքի համեմատաբար ավելի արդյունավետ պաշտպանության մեխանիզմ՝ հաշվի առնելով այն իրողությունը, որ իր գործը լսվում է անկախության, քաղաքական չեզոքության և իրավունքների պաշտպանության տեսանկյունից ավելի մասնագիտացված ատյանի՝ դատարանի կողմից: Դատարանի և դատական իշխանության՝ որպես իրավունքների պաշտպանության ճանաչված արդյունավետությամբ ատյանների բնորոշումը Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից շարունակաբար արձանագրվել է համապատասխան որոշումներում (տե՛ս, օրինակ՝ *Z and Others v. the United Kingdom*, դիմում թիվ 29392/95, 2001 թվականի մայիսի 10-ի վճիռ, կետեր 110-111):

**5.6.** Ինչ վերաբերում է դիմողի կողմից բարձրացված այն փաստարկին, որ Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 223-րդ հոդվածով նախատեսված զանցակազմերը չունեն ողջամիտ տարբերակում նույն օրենսգրքով նախատեսված մյուս զանցակազմերից, ապա Սահմանադրական դատարանը փաստում է, որ օրենսդրի կողմից հիշյալ զանցակազմերի ընտրությունը և դրանցով վարչական պատասխանատվության ենթարկելու համար դատական կարգ սահմանելու նրա ընտրությունը, շրջանցելով օրենսդրի՝ նման քաղաքականության նպատակահարմարության գնահատականը, վերը նշված հանգամանքների պայմաններում չեն կարող վերաբերելի փաստարկ համարվել վիճարկվող իրավադրույթների՝ Սահմանադրության 4-րդ հոդվածին հակասության եզրահանգման համար:

Վարչական պատասխանատվության ենթարկելու լիազորությունը դատարանին վերապահելն ինչպես վիճարկվող իրավադրույթներով, այնպես էլ համապատասխան օրենսդրական փոփոխություններով դատարանի նման լիազորության դադարեցումը, Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրենսդիր իշխանության իրավագործության տիրույթում է: Այնքանով, որքանով որ վարչական պատասխանատվության ենթարկելու

լիազորությունը դատարանին վերապահելը կամ արդեն իսկ գոյություն ունեցող նման լիազորության դադարեցումը չի հանգեցնում սահմանադրական որևէ սկզբունքի կամ իրավունքի խախտման, այդ ընտրությունը լիովին համատեղելի է Սահմանադրության 88-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված օրենսդիր իշխանության իրականացման համար Ազգային ժողովին վերապահված հայեցողության սահմանների հետ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 29-րդ գլուխը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածը համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

23 փետրվարի 2021 թվականի  
ՍԴՈ-1578



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ**

**ՀԱՄԸՆԿՆՈՂ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝  
2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 23-Ի ՄԴՈ-1578 ՈՐՈՇՄԱՆ  
ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 29-րդ գլխի և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը և 2021 թվականի փետրվարի 23-ի ՄԴՈ-1578 որոշմամբ (հրապարակվել է 2021 թվականի փետրվարի 25-ին) որոշեց. «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետը, 29-րդ գլուխը և Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 223-րդ հոդվածը համապատասխանում են Սահմանադրությանը»:

Համաձայն լինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի փետրվարի 23-ի ՄԴՈ-1578 որոշմանը՝ ես Սահմանադրական դատարանի դատավոր Ա. Վաղարշյանս, շարադրում եմ իմ հատուկ կարծիքը որոշման պատճառաբանական մասի վերաբերյալ:

ՀՀ Սահմանադրության 162-րդ հոդվածի («Արդարադատության իրականացումը») 1-ին մասն ավանդաբար օգտագործվող իրավական ձևակերպում է: Այդ սահմանադրական ձևակերպումը չի կա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ ♦ 1(101)2021  
252

րելի մեկնաբանել այն իմաստով, որ դատարանների (դատական իշխանության) սահմանադրական միակ լիազորությունն արդարադատությունն է: Սահմանադրական ձևակերպման տրամաբանական իմաստն այն է, որ արդարադատությունը որպես պետական գործունեության տեսակ, միայն ու միայն, բացառապես դատարանների իրավասությունն է: Այդ տրամաբանական պնդումից չի հետևում, որ դատարանները չեն կարող իրականացնել այլ լիազորություններ:

Արդի շրջանում դատական իշխանության տեսությունն ավելի լայն տեսական մոտեցումներ ունի «արդարադատության» և «դատական իշխանության իշխանական լիազորությունների (հնարավորությունների)» հայեցակարգային հարցերում:

Իշխանությունների տարանջատման սահմանադրական սկզբունքի կենսագործման արդյունքում պետական իշխանության անկախ և ինքնուրույն ճյուղերից մեկն էլ դատական իշխանությունն է, որի կրող սուբյեկտը հատուկ կարգավիճակ ունեցող պետական մարմիններն են դատարանները: Դատական իշխանության սոցիալական կոչումն ու առաքելությունը հասարակությանն առանձին անհատների ու կազմակերպությունների հակաիրավական վարքագծից պաշտպանելն է, մարդու իրավունքների ու ազատությունների պաշտպանությունը, հսկողությունը պետական իշխանության այլ ճյուղերի գործունեության սահմանադրականության և օրինակաւնության նկատմամբ:

Դատական իշխանությունը պետության հատուկ մարմինների՝ դատարանների բացառիկ իրավազորությունն է, որի հիմնական բովանդակությունը հատուկ դատավարական ձևերով սոցիալական կոնֆլիկտների քննությունն ու լուծումն է: Դատարանը լուծում է ոչ բոլոր սոցիալական կոնֆլիկտները, այլ միայն իրավաբանորեն միջնորդավորված կամ կարգավորվող կոնֆլիկտները, որոնք ուղակիորեն սահմանվում են օրենքով: Իրավական վեճերի հնարավոր շրջանակը, որոնք ենթակա են դատարաններին, բաժանվում է հետևյալ տեսակների. սահմանադրական վեճեր (սահմանադրական արդարադատություն), վարչական վեճեր (վարչական արդարադատություն), քաղաքացիական, ընտանեկան, աշխատանքային վեճեր (քաղաքացիական արդարադատություն), տնտեսական վեճեր (տնտեսական արդարադատություն) և քրեաիրավական վեճեր (քրեական արդարադատություն):

Արդարադատությունը Սահմանադրությամբ ամրագրված պետական գործունեության հատուկ տեսակ է, որն իրականացնում է միայն դատարանը՝ դատական համապարտադիր որոշումների

օրինականությունը, արդարացիությունը, հիմնավորվածությունն ապահովող օրենքով սահմանված պահանջների ու կարգի խստագույն պահպանմամբ, համապատասխան դատավարական ձևերով և ուղղված է սահմանադրական, վարչական, քրեական, քաղաքացիական (տնտեսական) գործեր քննելուն և լուծելուն:

Քրեական դատավարությունում, բացի զուտ քրեական արդարադատության իրականացումից, դատական իշխանությունը դրսևորվում է քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությամբ: Դատարանը քննում է քննչական, օպերատիվ-հետախուզական գործողություններ կատարելու և անձի սահմանադրական իրավունքները և ազատությունները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցներ կիրառելու վերաբերյալ միջնորդությունները: Բացի դրանից, դատարանն օրենքով սահմանված դեպքերում և կարգով քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները:

Դատարանը, բացի վարչական արդարադատությունից, իրականացնում է որոշակի վերահսկողություն գործադիր իշխանության մարմինների գործունեության նկատմամբ: Այդ վերահսկողությունը կոչված է կանխելու և վերացնելու գործադիր մարմինների կամայականությունները, պաշտպանելու մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները վարչարարության ոլորտում: Քաղաքացիական դատավարության կարգով դատարանները մի շարք դեպքերում չեն լուծում սոցիալական կոնֆլիկտներ, այլ հաստատում են իրավաբանական նշանակություն ունեցող փաստեր և կացություններ: Այս գործերում չկա քաղաքացիաիրավական վեճ, հետևաբար և վեճի կողմեր:

Այսպիսով, դատական իշխանության խնդիրը (գործառույթը) ոչ միայն սոցիալական կոնֆլիկտների լուծումն է **արդարադատության իրականացման միջոցով**, այլև իրավաբանական նշանակություն ունեցող փաստերի ու կացությունների հաստատումն է քաղաքացիական ոլորտում, դատական վերահսկողությունը որոշակի ոլորտներում, ներառյալ գործադիր իշխանության:

**Սահմանադրական դատարանի  
դատավոր**

**Ա. Վաղարշյան**

**5 մարտի 2021 թ.**



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ՌԱՏԻՆԱ» ՍՊԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ  
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 145-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ  
ՄԱՍԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 մարտի 2021 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի «ՌԱՏԻՆԱ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ Մ. Դանիելյանի և Մ. Մանուկյանի,

գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՌԱՏԻՆԱ» ՍՊԸ-ի դիմումի հիման վրա ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2013 թվականի

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(101)2021

դեկտեմբերի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2013 թվականի դեկտեմբերի 28-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հունվարի 7-ին:

Օրենսգրքի «Վերաքննիչ դատարանի լիազորությունները» վերտառությամբ 145-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է.

«1. Գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանը՝

1) մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն վարչական դատարանի կայացրած գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը.

2) ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վերաքննիչ բողոքը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով վարչական դատարանի դատական ակտը՝ բեկանված մասով գործն ուղարկելով վարչական դատարան՝ նոր քննության, և սահմանելով նոր քննության ծավալը, իսկ չբեկանված մասով դատական ակտը թողնելով անփոփոխ.

3) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում և փոփոխում է վարչական դատարանի ակտը՝ կայացնելով նոր դատական ակտ, եթե վարչական դատարանի հաստատած փաստական հանգամանքները հնարավորություն են տալիս կայացնելու նման ակտ, և եթե դա բխում է արդարադատության արդյունավետության շահերից, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ.

4) ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանում է դատական ակտը և կարճում է գործի վարույթն ամբողջովին կամ դրա մի մասը, իսկ բողոքարկված և չբեկանված մասով դատական ակտը թողնում է անփոփոխ»:

Օրենսգրքի վերոնշյալ հոդվածը որևէ փոփոխության և լրացման չի ենթարկվել:

Գործի քննության առիթը «ՌԱՏԻՆԱ» ՍՊԸ-ի՝ 2020 թվականի մարտի 9-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի վերաբերելի դրույթները և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.



**1. Դիմողի դիրքորոշումները**

Դիմողը նշում է, որ վիճարկվող իրավակարգավորումների պայմաններում վարչական գործերով կայացվող գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերաքննության արդյունքում վերաքննիչ դատարանն օժտված չէ առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի միայն պատճառաբանական մասի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը քննելու և դրա արդյունքում համապատասխան որոշում կայացնելու լիազորությամբ, այսինքն՝ այն դեպքերում, երբ վարչական դատավարության մասնակիցն իր համար անբարենպաստ է համարում գործն ըստ էության լուծող դատական ակտի միայն պատճառաբանական մասը կամ դրա վի հատվածը, վերջինս ապահովված չէ տվյալ դատական ակտի իր համար անբարենպաստ մասը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությամբ:

Ըստ դիմողի՝ վերոգրյալից ստացվում է, որ վարչական գործով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի իր համար անբարենպաստ մասը վերաքննության կարգով բողոքարկելու հնարավորությամբ ապահովված չէ վարչական դատավարության այն մասնակիցը, որի պահանջն առաջին ատյանի դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտով թեև բավարարվել է, այդուհանդերձ, տվյալ դատական ակտի պատճառաբանական մասում առկա որոշ պատճառաբանություններ իրենց առկայությամբ կամ բացակայությամբ բարենպաստ չեն դատավարության տվյալ մասնակցի համար:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ դիմողը գալիս է այն եզրահանգման, որ Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով վերաքննիչ վարչական դատարանի համար չի նախատեսում առաջին ատյանի դատարանի կայացրած գործն ըստ էության լուծող դատական ակտի միայն պատճառաբանական մասի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքը քննելու և որևէ կերպ լուծելու լիազորություններ, հակասում է Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, ինչպես նաև 63-րդ հոդվածի 1-ին մասին և, պարունակելով իրավունքների անհամաչափ ու չարդարացված սահմանափակումներ՝ խախտում է դրանցով ամրագրված հիմնական իրավունքների էությունը:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը հայտնում է, որ վարչական դատավարության ոլորտում դատական ակտերի բողոքարկման իրավունքը կոչված է

ապահովելու անձի խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումն անկախ և անկողմնակալ դատարանի կողմից: Այդ գործընթացում դատարանը կիրառում է ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմեր, որի արդյունքում է կայացվում դատական ակտը: Հետևաբար, այդ ակտի օրինականության վիճարկումը դատական բողոքարկման ընթացակարգով անհրաժեշտաբար կարող է լինել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով:

Ըստ պատասխանողի՝ դատական ակտերի բողոքարկման ինստիտուտը դատական բոլոր այն սխալները բացահայտելու և շտկելու միջոց է, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծման, որը նույնն է թե՛ անձի համար ոչ բարենպաստ դատական ակտի կայացման: Ուստի Օրենսգրքի վիճարկվող կարգավորումները որևէ կերպ չեն խախտում անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքները, քանի որ վերջինս արդեն իսկ հասել է ցանկալի արդյունքի՝ կայացվել է իր համար բարենպաստ դատական ակտ:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրության պահանջներին:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով սահմանադրաիրավական վեճի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյոք Հայաստանի Հանրապետության վերաքննիչ վարչական դատարանը (այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան) օժտված է վարչական դատարանի կայացրած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի միայն պատճառաբանական մասի դեմ վերաքննիչ բողոք բերելու դեպքում այդպիսի բողոքը քննելու և լուծելու իրավասությամբ, եթե ոչ, ապա արդյոք նման պարագայում ապահովվում է անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների իրացման անհրաժեշտ կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու պահանջը:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՄԴՈ-1546 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է, որ «...ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) արդյունավետ իրականացման համար (2) անհրաժեշտ (3) կազմակերպական (4) կառուցակարգեր և (5) ընթացակարգեր: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը»:

Միաժամանակ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, ինչպես նաև անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (մասնավորապես՝ ՄԴՈ-652, ՄԴՈ-665, ՄԴՈ-673, ՄԴՈ-690, ՄԴՈ-719, ՄԴՈ-758, ՄԴՈ-765, ՄԴՈ-780, ՄԴՈ-873, ՄԴՈ-936, ՄԴՈ-1037, ՄԴՈ-1127, ՄԴՈ-1190, ՄԴՈ-1192) արտահայտել է իրավական դիրքորոշումներ դատական պաշտպանության արդյունավետ միջոցների և դատարանի մատչելիության սահմանադրական իրավունքների լիարժեք իրացման երաշխավորման և ապահովման վերաբերյալ: Սահմանադրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «... նախապայմանների խստացումը չպետք է տեղի ունենա անհամաչափ անձանց համար ստեղծելով իրավունքների պաշտպանության խոչընդոտներ: Բացի դրանից, վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքները վարույթ ընդունելու հարցում դատարանները պետք է

ունենան ոչ թե հայեցողական անսահմանափակ ազատություն, այլ՝ օրենսդրորեն նախատեսված, հստակ, և անձանց համար միակերպ ընկալելի հիմքերով, բողոքը վարույթ ընդունելու կամ մերժելու իրավունք և պարտականություն:

(...)

Վերոհիշյալ խնդրին անդրադառնալով՝ սահմանադրական դատարանը նաև կարևորում է դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի համակարգային ամբողջականությունը և կիրառման արդյունավետությունն ապահովող կառուցակարգային ու օրենսդրական համապատասխան երաշխիքների առկայությունը ...» (09.04.2007 թ., ՍԴՈ-690),

- «Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից:

Ակնհայտ է, որ առաջին հերթին այս պահանջը վերաբերում է դատարաններին, քանի որ այդ մարմիններն են, որ օժտված են իրավական պաշտպանության համապարփակ լիազորություններով:

... Այլ է իրավիճակը վերադաս դատական ատյաններում, որոնցում դիմումի թույլատրելիության պահանջները կարող են ավելի խիստ լինել: Սակայն այս ատյաններում ևս դիմումների ընդունումը դատարանի վարույթ չի կարող իրականացվել կամայականորեն» (28.11.2007 թ., ՍԴՈ-719),

- «... դատավարական որևէ առանձնահատկություն կամ ընթացակարգ չի կարող խոչընդոտել կամ կանխել դատարան դիմելու իրավունքի արդյունավետ իրացման հնարավորությունը, իմաստագրվել ՀՀ Սահմանադրության 18-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը կամ դրա իրացման արգելք հանդիսանալ» (22.12.2015 թ., ՍԴՈ-1249):

Դատական պաշտպանության իրավունքի կարևոր բաղադրատարր է դատական բողոքարկման հնարավորությունը, որի վերաբերյալ Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքո-

րոշումները հանգում են հետևյալին.

«... սահմանադրորեն նախատեսված է խախտված իրավունքների ու ազատությունների դատական պաշտպանության (դրա արդյունավետության) երաշխավորման առանձնահատուկ այնպիսի ինստիտուտ, ինչպիսին վերադաս դատարանի կողմից դատական ակտի վերանայման անձի իրավունքն է (դատական բողոքարկումը (ՀՀ Մահմ. 20-րդ հոդվածի 3-րդ մաս): Վերջինս նաև անձի իրավունքների դատական պաշտպանության և արդար դատաքննության իրականացման խնդրում պետության առաջնային պարտականություն է՝ որոշակի ընթացակարգի, այդ թվում՝ դատական հնարավոր սխալների ուղղման միջոցով արդարադատության նպատակների իրագործումը» (08.02.2011 թ., ՄԴՈ-936),

«Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական բողոքարկման ինստիտուտի կարգավորման և գործադրման հիմքում պետք է իրացվեն հետևյալ առաջնահերթ իրավապայմանները, մասնավորապես.

- անձի հիմնական իրավունքներն ու ազատությունները՝ որպես բարձրագույն արժեք, դատարանների կողմից ենթակա են անվերապահ պաշտպանության կոնկրետ գործի ինչպես ըստ էության քննության, այնպես էլ հնարավոր հետագա վերաքննության շրջանակներում,

- դատական բողոքարկումը, որպես դատական պաշտպանության եղանակ, պետք է արդյունավետ միջոց ծառայի վերականգնելու անձի խախտված իրավունքներն ու ազատությունները՝ պահպանելով արդարադատության իրականացման սահմանադրական սկզբունքները (մասնավորապես՝ ՀՀ Մահմ. 18, 19-րդ հոդվածներ),

- դատական բողոքարկման ինստիտուտը, առանց բացառության, պետք է միջոց հանդիսանա հավասարության պայմաններում, օբյեկտիվ, բազմակողմանի, արդար և հրապարակային դատաքննության արդյունքում, ողջամիտ ժամկետներում բացահայտելու և շտկելու դատական բոլոր այն սխալները, որոնք թույլ են տրվել ինչպես նյութական, այնպես էլ դատավարական իրավունքի նորմերի խախտման արդյունքում, հետևաբար հանգեցրել են դատական գործի սխալ լուծմանը,

- դատական ակտերի վերանայումը (վերաքննիչ կամ վճռաբեկ բողոքի հիման վրա) որպես արդարադատական գործառույթ կարող է ծառայել վերոհիշյալ սահմանադրաիրավական խնդիրների իրագործմանը, եթե իրականացվի անկախ և անկողմնակալ դատարանի կողմից» (08.02.2011 թ., ՄԴՈ-936),

- «...ընթացակարգային որևէ առանձնահատկություն չի կարող մեկնաբանվել որպես ՀՀ Սահմանադրությամբ երաշխավորված դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման հիմնավորում ...» (10.03.2016 թ., ՄԴՈ-1257),

- «Դատական ակտերի բողոքարկման ինստիտուտի նպատակը ոչ միայն ներկայացված պահանջի մերժման կամ բավարարման իրավաչափության ստուգումն է: Այս ինստիտուտն այն հիմնական և էական իրավական երաշխիքն է, որի միջոցով ապահովվում է ստորադաս դատարանի կողմից արդար դատաքննության իրավունքի հիմնական բաղադրատարրերի, մասնավորապես, ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածի 1-ին մասով և [«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»] Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դատավարական երաշխիքների պահպանումը: Բոլոր այն դեպքերում, երբ առաջին ատյանի դատարանը չի պահպանել հիշյալ դատավարական երաշխիքները, քաղաքացին չունենալով վերաքննության իրավունք, ըստ էության զրկվում է իր գործի արդար դատաքննության իրավունքն արդյունավետորեն իրացնելու հնարավորությունից և արդար դատաքննության իրավունքի խախտման դեմ պաշտպանության արդյունավետ միջոցից» (18.07.2012 թ., ՄԴՈ-1037):

**4.2.** Վերաքննիչ դատարանին վերապահված լիազորությունների համատեքստում դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների, ինչպես նաև դրանց բաղադրատարր հանդիսացող բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացման տեսանկյունից կարևորվում է վերաքննիչ ատյանի դերի բացահայտումը: Այսպես.

Սահմանադրության 172-րդ հոդվածի համաձայն՝ «Վերաքննիչ դատարաններն առաջին ատյանի դատարանների դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող դատական ատյան են»:

Օրենսգրքի 130-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն.

«1. Վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտերի, ինչպես նաև սույն օրենսգրքի 131-րդ հոդվածով նախատեսված միջանկյալ դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեն՝

1) դատավարության մասնակիցները.

2) դատավարության մասնակից չդարձված անձինք, որոնց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կայացվել է

գործն ըստ էության լուծող դատական ակտ»:

Վերոնշյալ իրավունքի իրացման համար Օրենսգրքով սահմանվում են վերաքննիչ բողոք բերելու կարգն ու ժամկետները, բողոքի ձևին և բովանդակությանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև բողոքը վարույթ ընդունելու, այն վերադարձնելու, դրա ընդունումը մերժելու հիմքերն ու կարգը: Օրենսդրությամբ հստակ սահմանվում է նաև այն լիազորությունների շրջանակը, որոնք իրավասու է կիրառել վերաքննիչ ատյանը դատական ակտի վերաքննության արդյունքում:

Ելնելով արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներից Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 172-րդ հոդվածում «օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայող» բառակապակցության ամրագրումը հիմք չի հանդիսանում անվերապահորեն պնդելու, որ եթե օրենսդրությամբ Վերաքննիչ դատարանի համար որևէ լիազորություն սահմանված չէ, ապա նման իրավակարգավորումը համապատասխանում է կամ հակասում է Սահմանադրությանը: Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում Վերաքննիչ դատարանի լիազորությունների շրջանակում որևէ ենթադրյալ լիազորության բացակայությունը պետք է գնահատվի այդպիսի լիազորության անհրաժեշտության տեսանկյունից, այն է արդյոք բացակայող լիազորության օրենսդրական ամրագրումը բխում է արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության սահմանադրական իրավունքների էությունից, կամ արդյոք այդպիսի լիազորության բացակայությունը խաթարում է նշված սահմանադրական իրավունքների էությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի 130-րդ հոդվածը, սահմանելով վարչական դատարանի դատական ակտերի դեմ վերաքննիչ բողոք բերելու իրավունք ունեցող անձանց շրջանակը, ուղղակիորեն չի սահմանում, որ այդ անձինք կարող են դատական ակտը բողոքարկել միայն այն դեպքում, երբ նրանց համար անբարենպաստ է դրա եզրափակիչ մասը: Այսինքն Օրենսգրքի 130-րդ հոդվածն ինքնին չի արգելափակում անձի բողոքարկման իրավունքի իրացումն այն դեպքում, երբ թեև դատական ակտի եզրափակիչ մասը (դրա մի մասը) այդ անձի համար բարենպաստ է, սակայն նա համաձայն չէ այդ դատական ակտի պատճառաբանական մասին:

Միաժամանակ, գործն ըստ էության լուծող դատական ակտի

վերաքննության արդյունքում Վերաքննիչ դատարանի կողմից կիրառման ենթակա լիազորությունների ուսումնասիրության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վերաքննիչ դատարանն օժտված չէ առանց դատական ակտի եզրափակիչ մասին անդրադառնալու դրա պատճառաբանական մասը փոփոխելու լիազորությամբ, ուստի վերոգրյալ իրավական դիրքորոշումների հաշվառմամբ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ այդ լիազորությամբ Վերաքննիչ դատարանի օժտված չլինելու սահմանադրականության հարցին այն դիտարկելով նաև դատական ակտի պատճառաբանվածության պահանջի ապահովման, ինչպես նաև դատավարության մասնակիցների համար դատական ակտի պատճառաբանական մասի ունեցած ազդեցության համատեքստում:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում (մասնավորապես՝ ՄԴՈ-690, ՄԴՈ-691, ՄԴՈ-752, ՄԴՈ-754, ՄԴՈ-765, ՄԴՈ-818, ՄԴՈ-886, ՄԴՈ-896, ՄԴՈ-919 որոշումներում) արտահայտել է իրավական դիրքորոշումներ արդար դատաքննության տարր հանդիսացող դատական ակտի պատճառաբանվածության վերաբերյալ: Մասնավորապես, 2010 թվականի հունիսի 15-ի ՄԴՈ-896 որոշմամբ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը.

«Այլ է վիճակը «... կամ պատճառաբանված չէ» բառակապակցության առնչությամբ: Նման ձևակերպման առկայությունն ինքնաբերաբար ենթադրում է չպատճառաբանված դատական ակտի գոյություն: ... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրությունն ընդհանրապես պետք է բացառի չպատճառաբանված դատական ակտի գոյությունը, որովհետև նման ակտը չի կարող համապատասխանել իրավական պետության հիմնարար սկզբունքներին, չի կարող երաշխավորել մարդկանց իրավունքների արդյունավետ դատական պաշտպանություն, ինչպես նաև ապահովել խախտված իրավունքների արդյունավետ վերականգնում»:

Դատական ակտի պատճառաբանվածության հարցին անդրադարձել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանը արտահայտելով նաև հետևյալ իրավական դիրքորոշումները.

- [«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի] 6-րդ հոդվածի 1-ին կետով ամրագրված երաշխիքները ներառում են դատարանների իրենց որոշումների վերաբերյալ բավարար պատճառներ երկայացնելու պարտականությունը (**Case of H. v. Belgium**,



application no. 8950/80, 30/11/1987),

- չնայած ներպետական դատարանը փաստարկներն ընտրելիս և ապացույցներն ընդունելիս ունի որոշակի հայեցողական լիազորություններ, այն պարտավոր է հիմնավորել իր գործողությունները իր որոշումների պատճառները ներկայացնելով (**Case of Suominen v. Finland, application no. 37801/97, 01/07/2003**),

- ներկայացված պատճառները պետք է այնպիսին լինեն, որ կողմերը կարողանան արդյունավետորեն օգտագործել բողոքարկման ցանկացած գործող իրավունք (**Case of Hirvisaari v. Finland, application no. 49684/99, 27/09/2001**),

- «արդար ընթացակարգ» հասկացությունը պահանջում է, որ ստորադաս դատարանի պատճառաբանությունը ներառելու միջոցով կամ որևէ այլ կերպ իր որոշումների վերաբերյալ թերի պատճառաբանություն ներկայացրած ազգային դատարանը փաստացի անդրադարձած լինի իր իրավասությանն առնչվող հարցերին և ոչ թե առանց լրացուցիչ քաջքնուկի գուտ հաստատած լինի ստորադաս դատարանի կողմից արված եզրահանգումները (**Case of Helle v. Finland, application no. 20772/92, 19/12/1997**):

Օրենսգրքի՝ «Գործն ըստ էության լուծող դատական ակտի բովանդակությունը» վերտառությամբ 126-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանվում է.

«Վճռի պատճառաբանական մասը բովանդակում է՝

1) գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերը.

2) գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերը՝ շարադրելով դատարանի եզրահանգումները յուրաքանչյուր փաստի ապացուցված լինելու վերաբերյալ և գնահատելով տվյալ փաստի հաստատման կամ մերժման համար պիտանի դատավարության մասնակիցների ներկայացրած յուրաքանչյուր ապացույցը»:

Վերոգրյալից բխում է, որ վարչական դատարանը գործն ըստ էության լուծող դատական ակտ կայացնելիս պետք է անդրադարձ կատարի ինչպես գործի լուծման համար էական նշանակություն ունեցող, այնպես էլ գործի լուծման համար նշանակություն չունեցող փաստերին՝ ներկայացնելով այդ փաստի հաստատված լինել կամ չլինելու վերաբերյալ համապատասխան եզրահանգում: Վերոնշյալ իրավական կարգավորման նպատակը, առաջին հերթին, հնարավորինս հստակ և որոշակի դատական ակտի կայացման ապահովումն է, որպեսզի դատարան դիմած անձի համար հստակ լինեն այն բոլոր հարցերի պատասխանները, որոնց առնչությամբ դիմել է

դատարան: Դատարանի կողմից կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտի պատճառաբանական մասը մեծ կարևորություն ունի, քանի որ դրա շրջանակներում ներկայացվում են այն վերլուծությունները, որոնք հետագայում հիմք են հանդիսանում կոնկրետ եզրահանգման գալու համար:

Դատական ակտի պատճառաբանական մասի վերաբերյալ Սահմանադրական դատարանը նախկինում արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Վճռի պատճառաբանական մասում պետք է նշվեն դատարանի կողմից պարզված՝ գործի հանգամանքները, ապացույցները, որոնց վրա հիմնված են դատարանի հետևությունները, այս կամ այն ապացույցները մերժելու փաստարկները, ինչպես նաև այն օրենքները, որոնցով դատարանը ղեկավարվել է վճիռ կայացնելիս: Օրենսդիրը դատարանից պահանջում է կայացնել օրինական և հիմնավորված վճիռ, իսկ դրա համար դատարանին անհրաժեշտ է ճիշտ ընտրել և կիրառել օրենքը՝ անկախ նրանից, թե կողմերն ինչ դիրքորոշում են արտահայտել կիրառելի նորմերի վերաբերյալ: Դատարանը կաշկանդված չէ կողմերի՝ վիճելի իրավահարաբերության որակման և դրա նկատմամբ կիրառելի նորմերի վերաբերյալ դիրքորոշումներով: Հայցվորի դատավարական պարտականությունն է հստակ ներկայացնել իր պահանջները, իր պահանջի հիմքում ընկած փաստերը, այդ փաստերը հիմնավորող ապացույցները, պատասխանողի պարտականությունն է հստակ դիրքորոշում արտահայտել հայցվորի ներկայացրած պահանջներից յուրաքանչյուրի, հայցապահանջի/ների հիմքում ընկած փաստերի վերաբերյալ, այդ փաստերի դեմ առարկելու դեպքում ներկայացնել դրանք հերքող ապացույցներ: Մինչդեռ դատարանի խնդիրն ու գործառույթն է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա որոշել գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը, կողմերի ներկայացրած ապացույցների հիման վրա հաստատված կամ չհաստատված համարել այս կամ այն փաստը և ըստ այդմ որոշել վիճելի իրավահարաբերության բնույթը և դրա նկատմամբ կիրառելի իրավանորմը» (06.12.2011 թ., ՄԴՈ- 1004):

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ արդարադատության իրականացման տեսանկյունից կարևորվում է ոչ միայն դիմողի պահանջը բավարարելու կամ մերժելու վերաբերյալ դատարանի եզրահանգումը, այլև այն իրավական վերլուծությունները, որոնք ներկայացված փաստերի և հանգամանքների լույսի ներքո հիմք են ծառայել կոնկրետ եզրահանգ-

ման գալու համար: Դա է նաև պատճառը, որ յուրաքանչյուր կոնկրետ գործով դատարան դիմելիս անձը չի սահմանափակվում միայն այս կամ այն պահանջի ներկայացմամբ, այլ նշում է այն բոլոր էական փաստերը, որոնց վրա հիմնվում է իր պահանջը: Այդ իսկ պատճառով անձի պահանջի բավարարումը դեռ չի նշանակում, որ անձի խնդիրն ամբողջությամբ լուծվել է, քանի որ նրա համար իրավական հետևանքներ է առաջացնում ոչ միայն իր պահանջի բուն բավարարումը կամ մերժումը, այլև այն հանգամանքը, թե ինչ պատճառաբանություններ են դրվել նման եզրահանգման հիմքում: Եթե դատարանի քննությանը հանձնված վեճը լուծվում է հոգուտ դատավարության այս կամ այն մասնակցի, դեռ հնարավոր չէ միանշանակ պնդել, որ այդ դատական ակտի պատճառաբանական մասում ներկայացված վերլուծությունները նույնպես դրական ազդեցություն են ունենում դատավարության այդ մասնակցի համար: Վերջիվերջո, հարկ է նկատի ունենալ, որ նույնպիսի եզրահանգման հնարավոր է գալ տարբեր պատճառաբանություններով, ուստի իրավական հետևանքների գնահատման տեսանկյունից պետք է գնահատման առարկա դարձնել ոչ միայն դատական ակտի եզրափակիչ մասում ձևակերպված եզրահանգումը, այլև այն պատճառաբանությունները, որոնք հիմք են հանդիսացել դրա համար: Դատական ակտի պատճառաբանական մասում ներկայացված վերլուծություններն ու դիրքորոշումները կարևոր են նաև այն առումով, որ դրանց առկայությամբ անձի համար հստակ, որոշակի և կանխատեսելի է դառնում իր հետագա ճիշտ վարքագծի դրսևորումը:

Ավելին, Վարչական դատարանի՝ գործն ըստ էության լուծող դատական ակտի պատճառաբանական մասի նշանակությունն արտահայտվում է նաև դատական ակտի նախադատելիության հատկանիշի ամրագրման միջոցով: Մասնավորապես՝ վարչական գործով կայացված գործն ըստ էության լուծող դատական ակտը, մտնելով օրինական ուժի մեջ, ի թիվս այլնի՝ օժտվում է նաև նախադատելիության հատկանիշով, որն իր ամրագրումն է ստացել Օրենսգրքի 30-րդ հոդվածի 2-րդ մասում: Այդ իրավանորմի համաձայն՝ նախկինում վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը միննույն կողմերի մասնակցությամբ նույն օրենսգրքով նախատեսված դրևէ գործ քննելիս վերստին ապացուցման կարիք չունեն: Այսինքն՝ վերը նշված իրավակարգավորումից հետևում է, որ նախադատելիությունը ենթադրում է վարչական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը հետագայում քննվող վարչական գործով ապացուցելու պարտականությունից ազատում որոշակի սահմաններում, ինչպես նաև բացառում է այդ փաստերը հետագայում քննվող վարչական գործի շրջանակներում հերքելու հնարավորությունը: Ավելին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը ևս ամրագրել է վարչական գործով կայացված դատական ակտի նախադատելիության հատկանիշը 61-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանելով, որ նախկինում քննված վարչական գործով դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտով հաստատված գործի քննության համար նշանակություն ունեցող փաստերը գործին մասնակցող նույն անձանց մասնակցությամբ այլ գործ քննելիս կրկին չեն ապացուցվում:

Վերոգրյալը վկայում է այն մասին, որ վարչական դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած՝ գործն ըստ էության լուծող դատական ակտով հաստատված փաստերը, անկախ դատարանի կողմից քննվող վեճին տրված լուծումից, կարող են կանխորոշիչ նշանակություն ունենալ նույն անձանց մասնակցությամբ հետագայում քննվող վարչական և քաղաքացիական գործերի լուծման համար:

Վարչական դատարանի գործն ըստ էության լուծող դատական ակտի պատճառաբանությունների նշանակության և դրանց վերանայման տեսանկյունից ուշադրության է արժանի հատկապես Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ամրագրված իրավակարգավորումը, որով սահմանվում է, որ գործն ըստ էության լուծող դատական ակտի վերաքննության արդյունքում Վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը՝ դատական ակտը թողնելով անփոփոխ, իսկ այն դեպքում, երբ Վերաքննիչ դատարանը մերժում է վերաքննիչ բողոքը, սակայն վարչական դատարանի կայացրած՝ գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտը թերի կամ սխալ է պատճառաբանված, ապա պատճառաբանում է անփոփոխ թողնված դատական ակտը:

Վերոգրյալ իրավակարգավորումը հիմք է տալիս եզրակացնելու, որ օրենսդիրը կարևորել է վերաքննիչ ատյանին բողոքարկվող դատական ակտի պատճառաբանական մասին անդրադառնալու իրավասությամբ օժտելը, որը թույլ է տալիս Վերաքննիչ դատարանին պատճառաբանել այն դատական ակտը, որով թեև գործն ըստ էության ճիշտ է լուծված, սակայն լուծման հիմքում դրված պատճառաբանությունները թերի են կամ սխալ: Վերոգրյալը վկայում է այն մասին, որ օրենսդիրը չի բացառում այն դեպքերը, երբ վարչական

դատարանը կարող է կայացնել գործն ըստ էության ճիշտ լուծող դատական ակտ, սակայն դրա հիմքում դնել սխալ կամ թերի պատճառաբանություններ: Սակայն օրենսդիրը, կարևորելով բողոքարկվող դատական ակտի պատճառաբանական մասը քննության առարկա դարձնելու՝ վերադասատյանի իրավասությունը, հետևողական մոտեցում չի ցուցաբերել և այդ լիազորությունը կապել է միայն վերաքննիչ բողոքը մերժելու հետ: Այլ կերպ՝ Վերաքննիչ դատարանն Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված լիազորության կիրառմամբ իրավասու է փոփոխել բողոքարկվող դատական ակտի պատճառաբանությունները միայն այն դեպքում, երբ մերժում է ներկայացված վերաքննիչ բողոքը, այսինքն՝ երբ պարզում է, որ թեև դատարանը գործին բողոք բերող դատավարության մասնակցի համար իրավացիորեն անբարենպաստ լուծում է տվել, սակայն այդ լուծումը սխալ կամ թերի է պատճառաբանել:

Փաստորեն՝ Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների պայմաններում Վերաքննիչ դատարանն օժտված չէ բողոքարկվող դատական ակտի բացառապես պատճառաբանական մասի վերաբերյալ բողոքների քննության իրավասությամբ: Այս պարագայում ստացվում է մի իրավիճակ, որ ըստ էության ճիշտ լուծում ստացած դատական ակտերը երբեմն կարող են մնալ թերի կամ սխալ պատճառաբանված, ինչը չի բխում արդարադատության էությունից, չի ապահովում անձի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացումը, քանի որ նշված իրավունքները ենթադրում են ոչ միայն դատարանի դիմելու և վեճի լուծում ստանալու, այլև ճիշտ և ամբողջական պատճառաբանված դատական ակտ ունենալու հնարավորություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ դատական ակտերի բողոքարկման սահմանադրական իրավունքի կենսագործման և արդյունավետ իրացման համար անհրաժեշտ է նախատեսել համարժեք օրենսդրական կարգավորումներ, որոնք սահմանադրական պահանջներին համահունչ մեկնաբանվելու և կիրառվելու դեպքում կապահովեն անձանց բողոքարկման իրավունքի արդյունավետ իրացումը և կձառայեն այդ իրավունքի իրացման բուն նպատակներին՝ խախտված իրավունքների վերականգմանը կամ իրավունքի խախտման արդյունքում պատճառված վնասի հատուցմանը: Ուստի, յուրաքանչյուր կոնկրետ դեպքում օրենսդրական կարգավորումները և դրանց տրված մեկնաբանությունը պետք է կառուցվեն Սահմանադրությամբ ամրագրված դատական պաշտ-

պանության և արդար դատաքննության իրավունքների էության անխախտելիության և դրանց իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու պահանջի համատեքստում՝ գերծ մնալով այնպիսի կարգավորումներից, որոնք չեն ապահովում կամ խոչընդոտում են վերը նշված իրավունքների իրացումը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Մահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող իրավակարգավորումների պայմաններում, երբ Վերաքննիչ դատարանն օժտված չէ վարչական դատարանի կայացրած գործն ըստ էության լուծող դատական ակտի միայն պատճառաբանական մասի վերաբերյալ վերաքննիչ բողոքը քննելու և լուծելու իրավասությամբ, չի ապահովվում դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրացման հնարավորությունը, իսկ սահմանված իրավակարգավորումը այդ իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգ չէ:

Սույն գործով քննարկվող հարցադրման առնչությամբ Մահմանադրական դատարանը հարկ է համարում նաև կատարել իրավահամեմատական վերլուծություն՝ համադրելով Օրենսգրքի և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համարժեք իրավակարգավորումները: Այսպես՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի «**Վերաքննիչ դատարանի լիազորությունները**» վերտառությամբ 380-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով օրենսդիրը ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանին իրավասություն է վերապահել վճռի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքով բավարարել վերաքննիչ բողոքը՝ փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին:

Վարչական և քաղաքացիական դատավարություններում դատական ակտի դեմ ներկայացված վերաքննիչ բողոքի քննության արդյունքում վերաքննիչ դատարանի կողմից կիրառման ենթակա լիազորությունների վերլուծությունից պարզ է դառնում, որ քաղաքացիական դատավարությունում վերաքննիչ դատարանը նաև իրավասու է քննության առարկա դարձնել բողոքարկվող դատական ակտի միայն պատճառաբանական մասը և, բողոքը բավարարելով՝ պատճառաբանական մասը փոփոխել՝ չանդրադառնալով դատական ակտի եզրափակիչ մասին, մինչդեռ վարչական դատավարությունում Վերաքննիչ դատարանը, ինչպես նշվեց, նման

լիազորությամբ օժտված չէ:

Իրավահամեմատական վերը նշված վերլուծությունը թույլ է տալիս պնդելու, որ գործող Քաղաքացիական դատավարության օրենսգրքով օրենսդիրը, ելնելով անձի դատական պաշտպանության և արդար դատաքնության իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելու նկատառումներից, վերաքննիչ քաղաքացիական դատարանին օժտել է առանց բողոքարկվող դատական ակտի եզրափակիչ մասին անդրադառնալու դրա պատճառաբանական մասը փոփոխելու լիազորությամբ, որպիսի լիազորությունը բացակայում է Օրենսգրքում, և առկա չէ որևէ օրյեկտիվ հիմք պնդելու, որ Օրենսգրքում դիտարկվող լիազորության վերաբերյալ դրույթի բացակայությունը պայմանավորված է քաղաքացիական և վարչական դատավարությունների առանձնահատկություններով:

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասը՝ վերաքննիչ բողոքը բավարարելով՝ առանց բողոքարկվող դատական ակտի եզրափակիչ մասին անդրադառնալու դրա պատճառաբանական մասը փոփոխելու լիազորությամբ վերաքննիչ դատարանին չօժտելու մասով, Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի, 63-րդ հոդվածի 1-ին մասի և 75-րդ հոդվածի տեսանկյունից խնդրահարույց է:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

**1.** Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով ՀՀ վերաքննիչ վարչական դատարանին լիազորություն չի վերապահում բավարարելու վերաքննիչ բողոքը փոփոխելով վճռի պատճառաբանական մասը՝ առանց անդրադառնալու դրա եզրափակիչ մասին, ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին և 75-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 մարտի 2021 թվականի  
ՍԴՈ-1579





**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
«ՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔԻ 41-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 5-ՐԴ ԿԵՏԻ՝ ԴԱՏԱՎՈՐԻ ՄԱՍՈՎ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 մարտի 2021 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ դատավորի մասով՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

«Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2010 թվականի դեկտեմբերի 22-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2010 թվականի դեկտեմբերի 30-ին, ուժի մեջ է մտել 2011 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի «Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելը և վերականգնելը, կենսաթոշակ վճարելը դադարեցնելը և վերսկսելը» վերտառությամբ 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված է.

«1. Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է՝  
(...)

5) սույն օրենքով զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո համապատասխան մարմիններում զինվորական ծառայության անցնելու, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու դեպքում.»:

Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը փոփոխվել է 2014 թ. մայիսի 19-ին ընդունված ՀՕ-32-Ն օրենքով:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի թիվ ՎԴ/9849/05/19 գործով 2020 թ. մարտի 2-ին կայացրած «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարան դիմելու և վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման հիման վրա 2020 թվականի մարտի 3-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով վիճարկվող իրավադրույթն ու վերջինիս առնչվող օրենսդրական այլ նորմերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ը Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Ա. Մկրտչյանը 2019 թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Ոստիկանության և Մոցիալական ապահովության ծառայության՝ երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու մասին որոշումը և վարչական բողոքարկման արդյունքում կայացված որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին: Ա. Մկրտչյանը 1995 թվականից 2017 թվականը գտնվել է զինվորական ծառայության մեջ: Զինվորական ծառայությունից ազատվելուց հետո նրան նշա-

նակվել է երկարամյա ծառայության զինվորական կենսաթոշակ: Ա. Մկրտչյանը ՀՀ նախագահի հրամանագրով 2018 թվականին նշանակվել է ՀՀ Լոռու մարզի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր: Ոստիկանության կողմից Ա. Մկրտչյանի կենսաթոշակի վճարումը 2019 թվականի հունիսի 1-ից դադարեցվել է՝ հիմք ընդունելով Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը:

Դիմողը բարձրացնում է Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ դատավորի մասով՝ Սահմանադրության 29, 57, 60, 78 և 83-րդ հոդվածներին համապատասխանության հարցը: Դիմողը, հղումներ կատարելով Սահմանադրության նշված հոդվածներին, Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտահայտված վերաբերելի իրավական դիրքորոշումներին, վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային պրակտիկան, վերլուծելով Օրենքի վիճարկող դրույթով սահմանված իրավակարգավորումը և համադրելով այն օրենսդրական այլ դրույթների հետ, գտնում է, որ Օրենքի վիճարկող դրույթով առնվազն հանրային (պետական) այլ պաշտոնների համեմատ նաև դատավորի պաշտոնի նկատմամբ դրսևորվում է տարբերակված ու խտրական մոտեցում, ինչով նաև դատավորը զրկվում է հավասար իրավական պայմաններում գտնվող այլ պաշտոնների (առնվազն հանրային (պետական) պաշտոններ) համեմատ զինվորական ծառայության կենսաթոշակ ստանալու իրավունքից, խախտվում է նշված իրավունքից բխող կենսաթոշակի գումարի նկատմամբ դատավորի սեփականության իրավունքը, սահմանափակվում դատավորի աշխատանքի ազատ ընտրության իրավունքը, որպիսի սահմանափակման համար ընտրված միջոցները պիտանի և անհրաժեշտ չեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, ինչպես նաև նման միջոցները համարժեք չեն սահմանափակվող հիմնական իրավունքների և ազատության նշանակությանը:

Դիմողը նշում է, որ աշխատանքի ազատ ընտրության իրավունքն այնպիսի իրավական վիճակ է, երբ անձին երաշխավորվում է առանց որևէ միջամտության աշխատանք ընտրելու հնարավորությունը: Ընդ որում, վերոհիշյալ իրավունքն ի սկզբանե ենթադրում է, որ այն կիրառելի է կոնկրետ աշխատանքին ներկայացվող չափանիշներին ու պահանջներին համապատասխանության շրջանակներում: Այսինքն՝ յուրաքանչյուր անձ տվյալ աշխատանքի պայման-

ներին բավարարելու դեպքում ևս իրավունք ունի հավակնել դրան, և այդ իրավունքի իրացման գործընթացում չի կարող տեղի ունենալ որևէ իրավական անհամաչափ կամ փաստացի միջամտություն:

Դիմողի գնահատմամբ, եթե փաստացի միջամտությունն իրավական նորմերից դուրս և դրանց խախտմամբ գործողություններ են, որոնց ընթացքում տեղի է ունենում անձի աշխատանքի ազատ ընտրության իրավունքի խախտում, ապա իրավական միջամտության դեպքում այդ իրավունքը սահմանափակվում է հենց իրավական նորմի ուժով, հետևաբար՝ իրավական միջամտության դեպքում պարզման է ենթակա այն հարցը, թե արդյոք նման միջամտությամբ անձի աշխատանքի ազատ ընտրության իրավունքի սահմանափակումը պիտանի ու անհրաժեշտ է Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար, ինչպես նաև սահմանափակման համար ընտրված այդպիսի միջոցը համարժեք է սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Դիմողը եզրակացնում է, որ զինվորական կենսաթոշակի իրավունքն անձի նախկին աշխատանքային գործունեությամբ ձեռք բերված իրավունք է, որը չի կարող առանց իրավաչափ հիմնավորման ու նպատակի ինքնին սահմանափակվել նրա ներկայիս աշխատանքային գործունեությամբ՝ անձին դնելով երկրնտրանքի առաջ շարունակել օգտվել իր կենսաթոշակի իրավունքից, թե՛ իրացնել իր աշխատանքի ազատ ընտրության իրավունքը:

## 2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը վիճարկվող դրույթի վերաբերյալ դիմողի բարձրացրած ենթադրյալ սահմանադրականության հարցերին անդրադարձել է՝ վերլուծելով Սահմանադրության, Օրենքի վերաբերելի դրույթները, ինչպես նաև վկայակոչելով Սահմանադրական դատարանի և ՄԻԵԴ-ի մի շարք ակտերում արտահայտված վերաբերելի իրավական դիրքորոշումները:

Ըստ պատասխանողի՝ անձի կենսաթոշակի իրավունքը կազմում է վերջինիս սոցիալական ապահովության սահմանադրական իրավունքի հիմնական բաղադրիչներից մեկը: Այն անձի արժանապատիվ կենսամակարդակի ապահովման նախապայմանն է և սոցիալական պետության առաջնահերթություններից մեկը, որն ունի առանցքային նշանակություն անձի սոցիալ-տնտեսական իրա-

վունքների շարքում: Կենսաթոշակի տեսակները, այն ստանալու կապակցությամբ ծագող իրավահարաբերությունները որոշվում և կարգավորվում են պետության կողմից արտահայտելով որդեգրված սոցիալական քաղաքականության տեսլականը, որը նպատակաուղղված է անձի կեցության արժանի կենսապայմանների ապահովմանը: Մասնավորապես, պետությունը գործադրում է ջանքեր՝ ձևավորելու անհրաժեշտ տնտեսական և սոցիալական հիմքեր՝ իր բնակչության համար բավարար կենսամակարդակ և սոցիալական ապահովության համակարգ ստեղծելու համար: Այդ ջանքերը գործադրելիս պետությունը սոցիալական ապահովության համակարգի ձևավորման հիմքում դնում է օրինականության, սոցիալական հավասարության, արդարության ապահովման սկզբունքները՝ միտված սոցիալական ապահովության նպատակահեն համակարգ ստեղծելուն՝ հիմնված համասեռ, տրամաբանական, կայուն և միասնական չափանիշների վրա:

Պատասխանողը, արձանագրելով, որ Օրենքը հստակեցնում է որոշակի հանգամանքների պայմաններում կենսաթոշակի իրավունքի դադարեցման հետ կապված առանձնահատկությունները, նշում է, որ կենսաթոշակի իրավունքի դադարեցմանը հանգեցնող որոշակի հանգամանքների շրջանակը որոշելիս պետությունն ունի հայեցողության լայն շրջանակ: Այդ մասին է վկայում ՄԻԵԴ-ի և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը, որոնց համաձայն՝ սոցիալական ապահովության և կենսաթոշակային վճարումների իրավունքի բնագավառում պետությունն ազատ է կանխորոշելու իր քաղաքականությունը՝ հիմնված որոշակի սկզբունքների վրա: Ըստ պատասխանողի՝ հենց այդ հայեցողության շրջանակներում են որոշվել նաև Օրենքի 41-րդ հոդվածի համապատասխան կարգավորումները: Դրանց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը որդեգրված պետական քաղաքականության և ունեցած հայեցողության շրջանակներում, ելնելով նաև սոցիալական ապահովության ներդրված համակարգի առանձնահատկություններից, ընտրել է որոշակի խումբ սուբյեկտների շրջանակ, որոնց դեպքում գործում է կենսաթոշակ ստանալու և զուգահեռաբար այլ աշխատանքով զբաղվելու ու աշխատավարձ ստանալու անհամատեղելիությունը:

Ըստ պատասխանողի՝ Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետում գինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը դատավորի պաշտոն զբաղեցնելու հիմքով դադարեցնելու օրենսդրի դր-

սևորած տարբերակված մոտեցումն ունի օբյեկտիվ հիմք և հետապնդում է իրավաչափ նպատակ:

Ելնելով վերոնշյալից պատասխանողը գտնում է, որ Օրենքի վիճարկվող դրույթը համապատասխանում է Մահմանադրությանը:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

- Օրենքով զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո համապատասխան պաշտոնների նշանակման հիմքով զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման դեպքերի մասով տարբերակված մոտեցումը համապատասխան պաշտոնների, մասնավորապես՝ դատավորի պաշտոնի մասով Մահմանադրությամբ ամրագրված խտրականության պրզելքի սկզբունքի համատեքստում ի՞նչ օբյեկտիվ հիմք ունի, և ո՞րն է այդ մոտեցման իրավաչափ նպատակը.

- արդյոք սահմանափակվում է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեգիտիմ ակնկալիքի հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը:

**4. Մահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1.** Օրենքում օգտագործված «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» բառակապակցությունների սահմանադրաիրավական բովանդակության հարցի առնչությամբ Մահմանադրական դատարանի 2016 թվականի նոյեմբերի 29-ի ՄԴՈ-1325 որոշման մեջ արձանագրված է.

« (...)

ա/ կենսաթոշակի իրավունքը (...) ելակետային է, այն նախապայման է կենսաթոշակ ստանալու իրավունք ձեռք բերելու համար,

բ/ կենսաթոշակի իրավունքն ունի ծագման իր նախադրյալներն ու օրինական հիմքերը,

գ/ կենսաթոշակ ստանալու իրավունքը կենսաթոշակի իրավունքի իրացման երաշխիքն է՝ օրենքով սահմանված իրավապայմանների առկայության պարագայում:

(...)

Ընդ որում, օրենքի 36 և 41-րդ հոդվածներից հետևում է, որ **օրենսդիրը նախատեսել է միայն կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման, այլ ոչ թե կենսաթոշակի իրավունքի դադարեցման**

**հնարավորություն:** Դրանից բխում է նաև խնդրո առարկա օրենքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնելու և կենսաթոշակ վճարելը վերսկսելու վերաբերյալ դրույթների նախատեսումը (...): Ընդ որում, (...) նախ՝ պետք է վերականգնվի կենսաթոշակ ստանալու իրավունքը, հետո միայն վերսկսվի կենսաթոշակ վճարելը:

(...) Ակնհայտ է, որ «կենսաթոշակ ստանալու իրավունքը» բխում է «կենսաթոշակի իրավունքից»:

**4.2.** Օրենքի վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելու հարցի համատեքստում Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ Օրենքի և այլ օրենքների վերաբերելի առանձին իրավակարգավորումներին: Մասնավորապես՝

ա) Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով որպես պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունք ամրագրված է կենսաթոշակի իրավունքի իրականացումն ապահովելը՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից,

բ) Օրենքի 8-րդ հոդվածով՝ որպես Օրենքով սահմանված կենսաթոշակների տեսակներ, սահմանված են աշխատանքային և *զինվորական* կենսաթոշակները,

գ) Օրենքի 17-րդ հոդվածում թվարկված են *զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող սուբյեկտները*՝ պաշտպանության, ռստիկանության, ազգային անվտանգության մարմինների և փրկարար ծառայության համակարգի հրամանատարական և ոչ հրամանատարական (սպայական, ենթասպայական, շարքային) կազմի ծառայողը, վարժական հավաքների կանչված զինապարտը և Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակիցը, արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողը և դատական ակտերի հարկադիր կատարողը,

դ) «**Ձինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին**» օրենքի 72-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին համապատասխան «1. Սույն օրենքի 6-րդ բաժնի դրույթների կիրառման իմաստով՝ *զինծառայողներ են համարվում* պաշտպանության նախարարության, ազգային անվտանգության, ռստիկանության մարմինների համակարգերում համապատասխան ծառայության մեջ գտնվող անձինք:

2. *Զինձառայողներին հավասարեցված անձինք են՝*

1) մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը վարժական հավաքների կանչված զինապարտները, ինչպես նաև սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո պահեստագորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին մասնակցող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի (...) դրույթները.

2) Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների մասնակցի կամ երկրապահ կամավորականի կարգավիճակ ունեցող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի (...) դրույթները.

3) քրեակատարողական ծառայողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 6-րդ բաժնի դրույթները, և հարկադիր կատարողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասի դրույթները.

4) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությունում, քրեակատարողական ծառայությունում և Ոստիկանությունում քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող կամ պաշտպանության նախարարության, քրեակատարողական ծառայության և Ոստիկանության քաղաքացիական ծառայության կադրերի ռեզերվում գրանցված անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի (...) դրույթները, ինչպես նաև պաշտպանության նախարարությունում հայեցողական պաշտոն զբաղեցնող անձինք, որոնց վրա տարածվում են սույն օրենքի (...) դրույթները.

5) փրկարարական ծառայողները, որոնց վրա տարածվում են սույն օրենքի 64-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները»,

ե) Օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին համապատասխան՝ «Կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է (...) սահմանված կարգով կենսաթոշակ նշանակելուց հետո կենսաթոշակառուի աշխատելու դեպքում, *բացառությամբ դատավորի և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի, որի կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է հանրային ծառայության անցնելու դեպքում*»,

զ) «**Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին**» օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասին համապատասխան պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի զբաղեցնում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն: Նույն օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված է, որ նշված օրեն-



քով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է պետական պաշտոն զբաղեցրած անձի և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի՝ հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Միաժամանակ, հիշյալ օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասին համապատասխան՝ «Սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ սույն օրենքով սահմանված կենսաթոշակը նշանակվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը (...):

Սույն մասով սահմանված դեպքերում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակ նշանակվելուց հետո անցել է զինվորական ծառայության, նշանակվել է քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, դատավորի պաշտոնում կամ ինքնավար պաշտոնի է նշանակվել քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում»,

ե) «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում և վերականգնվում է «Պետական կենսաթոշակների մասին» օրենքով զինվորական կենսաթոշակների համար սահմանված կարգով,

ը) Օրենքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի 6-րդ կետին համապատասխան՝ կենսաթոշակ ստանալու իրավունքը վերականգնվում է Օրենքի նշված հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով նախատեսված հիմքով կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվելուց հետո համապատասխան մարմիններում զինվորական ծառայությունից արձակվելու, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնից ազատվելու օրվանից հետո՝ մեկ ամսվա ընթացքում, դիմելու և անհրաժեշտ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ արձակվելու կամ ազատվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից...

թ) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ մասին և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ համապատասխանա-

բար՝ դատավորի և Սահմանադրական դատարանի դատավորի կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու դեպքում, բացառությամբ հանրային ծառայության անցնելու դեպքերի:

**4.3.** Օրենքը սահմանում է զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու հիմքերը, որոնց շրջանակներում նախատեսվում է դադարեցնել ոչ միայն այն անձանց զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը, որոնք կենսաթոշակի իրավունք ձեռք բերելուց հետո շարունակում են աշխատել որպես զինծառայող կամ զինծառայողին հավասարեցված անձ, այլև այն անձանց, որոնք կենսաթոշակի իրավունք ձեռք բերելուց հետո շարունակում են աշխատել զբաղեցնելով զինվորական ծառայության կամ վերջինիս մոտ ծառայության հետ իր բնույթով առնչություն չունեցող պաշտոն, այդ թվում՝ դատավորի պաշտոն:

Օրենսդիրը տարբերակված մոտեցում է դրսևորել նաև դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարման հիմքի առումով, ինչպես նաև Օրենքով զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո նաև դատավորի պաշտոնի նշանակման հիմքով կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցման հարցում: Հետևաբար՝ հարկ է պարզել նշված մոտեցումը Սահմանադրությամբ ամրագրված խտրականության արգելքի սկզբունքի համատեքստում ի՞նչ օբյեկտիվ հիմք ունի, և ո՞րն է դրա իրավաչափ նպատակը: Այդ առնչությամբ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող իրավակարգավորումը դիտարկել Սահմանադրության 29 և 83-րդ հոդվածներով ամրագրված խտրականության արգելքի և սոցիալական ապահովության վերաբերյալ դրույթների լույսի ներքո (անձի սոցիալական ապահովության իրավունքը 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ որպես սուբյեկտիվ իրավունք ամրագրված չէ):

Սահմանադրության «Խտրականության արգելքը» վերտառությամբ 29-րդ հոդվածով սահմանված է, որ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականության արգելման սկզբունքի վերաբերյալ Սահմանա-

դրական դատարանն արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

- պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները (29.01.2008 թ., ՄԴՈ-731).

- Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է այն տարբերակված մոտեցումը, որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից (04.05.2010 թ., ՄԴՈ-881).

- խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (07.07.2015 թ., ՄԴՈ-1224):

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա)՝ խտրականության արգելքն ամրագրող 14-րդ հոդվածով ամրագրված է, որ Կոնվենցիայում շարադրված իրավունքներից և ազատություններից օգտվելն ապահովվում է առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծնունդից կամ այլ դրությունից: ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի համաձայն՝ խտրականության արգելքի խնդիր առաջանալու համար պետք է լինի տարբերություն՝ համադրելի իրավիճակներում գտնվող անձանց նկատմամբ վերաբերմունքի միջև: Համաձայն ՄԻԵԴ-ի դիրքորոշման՝ վերաբերմունքի տարբերակումը խտրական է, եթե այն չունի որևէ օբյեկտիվ և ողջա-

միտ հիմնավորում, կամ եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, կամ եթե չկա համաչափության որևէ ողջամիտ կապ միջոցների և հետապնդվող նպատակի միջև (Fabris v. France, զանգաստ թիվ 16574/08, 07.02.2013 թ. վճիռ, կետ 56):

Ըստ ՄԻԵԴ-ի՝ ցանկացած տարբերակում կամ տարբերություն չէ, որ կարելի է խտրականություն համարել: Մասնավորապես, իր վճիռներից մեկում (Andrejeva v. Latvia (GC 18.02.2009, 55707/00, § 81) դատարանը նշել է. «...տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին»: Նմանատիպ իրավական դիրքորոշումներ ՄԻԵԴ-ն արտահայտել է նաև այլ գործերով (Stec and Others v. the United Kingdom [GC], nos. 65731/01 and 65900/01, § 51, ECHR 2006-VI և Carson and Others v. the United Kingdom [GC], no. 42184/05, ECHR 2010):

Սահմանադրական դատարանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 11-ի ՍԴՈ-991 որոշման մեջ արձանագրված է. «...կենսաթոշակը և աշխատանքը միտված են միևնույն նպատակին՝ գոյության միջոցների ապահովմանը. աշխատանքը՝ որպես կենսաապահովման միջոց, գործում է անձի լրիվ աշխատունակության պայմաններում, իսկ կենսաթոշակը՝ աշխատունակության սահմանափակման կամ կորստի պայմաններում: Հետևաբար, կենսաթոշակի իրավունքը ծագում է այն ժամանակ, երբ անձը, որոշակի օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված, այլևս չի կարող այդ նպատակն իրացնել աշխատանքի միջոցով: Կենսաթոշակի իրավունքի ծագումն անմիջականորեն պայմանավորվում է աշխատանքի իրավունքի իրացման հնարավորությունների կրճատմամբ»:

Սահմանադրական դատարանի՝ 2019 թվականի փետրվարի 12-ի և հուլիսի 12-ի համապատասխանաբար ՍԴՈ-1443 և ՍԴՈ-1475 որոշումներում արձանագրված է, որ թեև Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրին է վերապահված անձի (...) կենսաթոշակի իրավունքի բովանդակությունը (օրինակ՝ կենսաթոշակի չափը, նշանակման և վճարման կարգը և այլն) որոշակիացնելու լիազորությունը, այդուհանդերձ, Սահմանադրությունը, ի թիվս այլնի, բացառում է այս իրավունքն ընդհանրապես օրենքով չերաշխավորելը, այսինքն՝ օրենսդիրը պարտավոր է կենսաթոշակի իրավունքը երաշխավորող օրենք ընդունել: Բացի դրանից, նման օրենքը չպետք է խախտի իրավահավասարության, խտրականության ար-

գելքի սկզբունքները:

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորման սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանը գտնում է, որ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցումը հանրային ծառայության անցնելու հանգամանքով պայմանավորելը, այդ համատեքստում՝ հանրային (պետական) և հանրային (պետական) ծառայության առանձին պաշտոններ զբաղեցնող անձանց կողմից կենսաթոշակ և, զուգահեռաբար, հանրային (պետական) ծառայության մեջ գտնվելու հանգամանքով պայմանավորված, աշխատավարձ ստանալու անհամատեղելիությունը սահմանելը, այլ խոսքերով՝ կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցումը Օրենքում թվարկված մի շարք պաշտոնների նշանակման հանգամանքով պայմանավորելը՝ դրանց շրջանակի սահմանմամբ, և, ըստ այդմ, համապատասխան պաշտոնների մասով տարբերակված մոտեցում դրսևորելը գտնվում է օրենսդիր մարմնի հայեցողության/իրավասության տիրույթում: Հատկանշական է, որ տվյալ դեպքում առանձնացվել են նաև «**Հանրային ծառայության մասին**» օրենքի իմաստով որոշ ինքնավար պաշտոններ (պետական պաշտոնի տեսակ) դատախազի, դատավորի, քննչական մարմինների ղեկավարների և նրանց տեղակալների, քննիչների պաշտոնները՝ վերջին դեպքում Օրենքում նշված քննչական կոմիտեի և հատուկ քննչական ծառայության ծառայողների (լայն առումով) պաշտոնների մասով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցումը Օրենքով զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո Օրենքում թվարկված մի շարք պաշտոնների նշանակման հանգամանքով պայմանավորելու իրավակարգավորման նպատակը միևնույն ֆինանսական աղբյուրից, տվյալ դեպքում՝ պետական բյուջեից, միևնույն անձին կենսաթոշակի և աշխատավարձի տեսքով գումարների վճարումը բացառելն է և ըստ այդմ՝ բյուջեն, ըստ էության, կրկնակի ֆինանսական բեռից զերծ պահելը՝ նկատի ունենալով նաև Օրենքի վիճարկվող իրավակարգավորման համատեքստում դատավորի որպես ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված, նրա կարգավիճակային առանձնահատկություններով պայմանավորված սոցիալական երաշխիքները: Սահմանադրական դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ օրենսդիրը համապատասխան անձին ընձեռել է ընտրության հնարավորություն՝ ստանալ Օրենքով սահմանված զինվորական կենսաթոշակ կամ համապատասխան, այդ թվում՝ դատավորի, պաշտոնին նշանակվելու հանգամանքով պայ-

մանավորված, ստանալ աշխատավարձ՝ օգտվելով դատավորի համար սահմանված սոցիալական երաշխիքներից: Տվյալ դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցումը օրենսդիրը պայմանավորում է Օրենքով զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո համապատասխան պաշտոնի նշանակվելու հանգամանքով, հետևաբար՝ օրենսդիրն անձին չի գրկել ընտրություն կատարելու հնարավորությունից՝ երկու դեպքում էլ նախատեսելով համապատասխանաբար՝ կենսաթոշակի կամ աշխատավարձի տեսքով գումարների վճարման՝ պետության պարտականությունը:

Պետական կենսաթոշակի և աշխատավարձի միաժամանակյա ստացման հնարավորության հարցին անդրադարձել է ՄԻԵԴ-ը: Այդ առնչությամբ, կատարելով Եվրոպայի խորհրդի 36 անդամ պետությունների օրենսդրության համեմատական վերլուծություն՝ ՄԻԵԴ-ը, մասնավորապես, արձանագրել է. «գրեթե բոլոր (...) պետություններում այս կամ այն ձևով պետական կենսաթոշակի և աշխատավարձի միաժամանակյա ստացումը հնարավոր է: (...) Այդուհանդերձ, պետությունների ճնշող մեծամասնությունում տարբեր իրավիճակներում կիրառվում են կենսաթոշակի կրճատման կամ դրա վճարումը կասեցնելու որոշ ձևեր: Մասնավորապես, առանձին պետություններ կասեցնում են պետական կենսաթոշակային վճարումների կատարումն այն անձանց, որոնք շարունակում են աշխատել պետական հատվածում, այն դեպքում, երբ նրանց կենսաթոշակն ամբողջ ծավալով պահպանվում է, եթե նրանք շարունակում են աշխատել մասնավոր հատվածում: Օրինակ՝ Անդորրայում քաղաքացիական ծառայողի կենսաթոշակի վճարումը կասեցվում է, եթե նա շարունակում է աշխատել որպես քաղաքացիական ծառայող կամ պաշտոնատար անձ պետական կառավարման ոլորտում: Վրաստանում կենսաթոշակի վճարման կասեցումը կիրառվում է պետական հատվածում աշխատատեղերի բոլոր կատեգորիաների հանդեպ: Պորտուգալիայում անձը, որը շարունակում է աշխատել մասնավոր հատվածում, կարող է միաժամանակ ստանալ կենսաթոշակ, այն դեպքում, երբ կենսաթոշակի վճարումը կասեցվում է պետական հատվածում զբաղվածության դեպքում: Իսպանիայում, Թուրքիայում, Ուկրաինայում վճարումները հնարավոր են ինքնազբաղված անձանց (մինչև որոշակի մակարդակ), սակայն ոչ պետական հատվածի ծառայողների մեծամասնության համար: (...) Նկատի ունենալով սոցիալական ապահովության և կենսաթոշակների ոլորտում պետության հայեցողության լայն շրջանակները՝ Եվրոպական դատարանը հիմքեր չի գտնում կաս-

կաճի տակ առնելու այն հանգամանքը, որ աշխատավարձերի և կենսաթոշակների միաժամանակյա վճարման արգելքը, որին ենթարկվել է դիմումատուն, ծառայել է պետական գանձարանի պաշտպանության ընդհանուր շահերին»: Անդրադառնալով այն հարցին, թե արդյոք աշխատանքի անցնելու պայմաններում դիմումատուն ուներ իր կենսաթոշակի վճարման կասեցումից խուսափելու կամ այն կանխելու հնարավորություն, ՄԻԵԴ-ն արձանագրել է, որ կենսաթոշակի վճարումը դիմումատուին չի կասեցվել, առանց վերջինիս ընտրության որևէ հնարավորություն ընձեռելու: Դիմումատուն հնարավորություն ուներ դադարեցնելու իր աշխատանքը պետական ծառայությունում և շարունակելու ստանալ կենսաթոշակ կամ պահպանելու իր աշխատանքը և, ըստ այդմ, դադարելու ստանալ կենսաթոշակ» (FÁBIÁN v. HUNGARY, գանգատ թիվ 78117/13, 05.09.2017 թ. վճիռ, կետեր 32, 33, 38, 67, 76):

Նկատի ունենալով վերոնշյալը Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդրի հայեցողությանն է թողնված ինչպես սոցիալական ապահովության ծավալի քանակական որոշակիության և ձևերի ընտրության խնդիրը, այնպես էլ այդ իրավունքի իրացման պայմանների սահմանումը: Տվյալ ոլորտում հայեցողության սահմանները պայմանավորվում են, մի կողմից պետության սոցիալ-տնտեսական հնարավորություններով, մյուս կողմից սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով:

Սահմանադրական դատարանի 2019 թ. նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշման մեջ արձանագրված է. «Դատավորի պաշտոնն զբաղեցնող անձանց համար՝ այնքանով, որքանով որ դա վերաբերում է *դատավորի՝ որպես հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի կրողին*, առկա է լրացուցիչ իրավական պետության հիմնարար սկզբունքից ածանցվող *անփոփոխելիության սահմանադրական երաշխիք (...)*»:

Ելնելով վերոնշյալից Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի վիճարկվող իրավակարգավորման առնչությամբ տարբերակված մոտեցումն ունի օբյեկտիվ հիմք և հետապնդում է իրավաչափ նպատակ, առավել ևս դատավորի պաշտոնի պարագայում նկատի ունենալով դատավորի կարգավիճակային առանձնահատկությունները և նրա համար Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված սոցիալական երաշխիքների համակարգը, այդ թվում սահմանադրական մակարդակում ամրագրում ստացած այն դրույթը, որի համաձայն՝ դատավորի համար սահմանվում է նրա բարձր կարգավիճակին և պատասխանատվությանը համապատասխանող վարձատրություն:



4.4. Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

Սահմանադրական դատարանը և ՄԻԵԴ-ը բազմիցս անդրադարձել են սեփականության իրավունքին, դրա բովանդակությանը, այդ համատեքստում՝ «լեզիտիմ ակնկալիք» եզրույթի բովանդակության բացահայտմանը: Մասնավորապես, Սահմանադրական դատարանի 2015 թվականի դեկտեմբերի 1-ի ՍԴՈ-1238 որոշման մեջ արձանագրված է. «Դիմողը, փաստորեն, ձեռք է բերել (...) սեփականության իրավունքի օրինական ակնկալիք, ինչի վրա տարածվում է սեփականության իրավունքին համարժեք պաշտպանության ռեժիմ՝ համաձայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և ՀՀ սահմանադրական դատարանի նախադեպային իրավունքի: Մասնավորապես, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ մասնավորապես, Տրզոն ընդդեմ Խորվաթիայի գործով 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44) գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու լեզիտիմ ակնկալիքը»: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նշված վճիռը վկայակոչված է նաև Սահմանադրական դատարանի 2010 թվականի հուլիսի 7-ի ՍԴՈ-902 որոշման մեջ: Իսկ Սահմանադրական դատարանի ՍԴՈ-723, ՍԴՈ-741, ՍԴՈ-881 որոշումներում Սահմանադրական դատարանը փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ լեզիտիմ ակնկալիքների հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ավելին, 2008 թ. մարտի 18-ի ՍԴՈ-741 որոշման 8-րդ կետում Սահմանադրական դատարանը նշել է. «Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ ՀՀ Սահմանադրության (...) հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանություն տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք» (նաև ՍԴՈ-1326):

Սահմանադրական դատարանի՝ 2006 թվականի հոկտեմբերի 4-ի ՍԴՈ-649 որոշման մեջ արձանագրված է. «Կենսաթոշակի վճարումը գործնականում սեփականությունը սեփականատիրոջը փոխանցելու միջոց է: Կենսաթոշակը սոցիալական ապահովության միջոց լինելով հանդերձ, սեփականության ձև է՝ նաև ըստ Եվրոպա-



կան դատարանի նախադեպային իրավունքի (տես՝ Բուրդովն ընդդեմ Ռուսաստանի գործը)»:

Վիճարկվող իրավակարգավորման առնչությամբ, Սահմանադրական դատարանի՝ 2008 թվականի հունվարի 15-ի ՍԴՈ-723 որոշման մեջ արձանագրված է. «Եթե օրենքն արդեն սահմանել է կենսաթոշակի տեսակները, կենսաթոշակի իրավունք ունեցող անձանց շրջանակը, կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու պայմանները, կենսաթոշակի չափը և վճարման պայմանները, պետության համար ծագում է պարտականություն երաշխավորելու կենսաթոշակի իրավունքի առնչությամբ լեգիտիմ ակնկալիքների հանդեպ հարգանքի և իրավական որոշակիության սկզբունքների իրացումը»:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասով ամրագրված է, որ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ *հանրության շահերի* կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով: Այդ առնչությամբ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ տվյալ դեպքում կենսաթոշակի՝ որպես սեփականության ձևի, հետևաբար կենսաթոշակի գումարների նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակման օբյեկտիվ հիմքը հանրության շահն է: Այն դրսևորվում է նրանում, որ պետությունը, ելնելով, մի կողմից՝ իր սոցիալ-տնտեսական հնարավորություններից, մյուս կողմից՝ առաջնորդվելով սոցիալական պետության սահմանադրական բնույթի պահանջներով, զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելուց հետո հանրային (պետական)/հանրային (պետական) ծառայության մի շարք պաշտոններում պաշտոնավարման առնչությամբ նախատեսում է զինվորական կենսաթոշակի իրավունքը պահպանել միայն այն պաշտոնյաների/ծառայողների համար, որոնց զբաղեցրած պաշտոնի մասով նախատեսված է սոցիալական երաշխիքների համեմատաբար ցածր շեմ: Ինչ վերաբերում է, մասնավորապես, զինվորական կենսաթոշակի իրավունք ձեռք բերելուց հետո դատավորի պաշտոն զբաղեցնող անձանց, ապա հաշվի առնելով օրենսդրությամբ դատավորի համար նախատեսված սոցիալական երաշխիքների համեմատաբար բարձր շեմը, որը կոչված է ապահովելու դատավորի անկախությունը, պետությունը դատավորի պաշտոնում պաշտոնավարման ժամանակահատվածի կտրվածքով իրավաչափորեն սահմանափակել է զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը, ինչը չի բացառում, որ պետությունը, ելնելով իր սոցիալ-տնտեսական հնարավորություններից, հետագայում վերացնի նշված սահմանափակումը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը՝ դատավորի մասով, համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 մարտի 2021 թվականի  
ՍԴՈ-1580



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՈՐ

ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ  
2-Ի ՄԴՈ-1580 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ  
ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մարտի 2-ի ՄԴՈ-1580 որոշմամբ որոշել է. «1. «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը: (...):»:

Հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 62-րդ հոդվածի 10-րդ մասը ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 2-ի ՄԴՈ-1580 որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ Սահմանադրական դատարանի դատավորների մեծամասնության դիրքորոշումից տարբերվող հետևյալ դիրքորոշումը.

1. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործի փաստական հանգամանքները Սահմանադրական դատարանը պարզում է ի պաշտոնե: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Սահմանադրական դատարանը կաշկանդված չէ սահմանադրական դա-

տավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, բացատրություններով, միջնորդություններով, առաջարկություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

«Պետական կենսաթոշակների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) վիճարկվող դրույթով համապատասխան մարմիններում զինվորական ծառայության անցնելու, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու դեպքում զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու, հետևաբար՝ հնարավոր անհամաչափ միջամտության վերաբերյալ սահմանադրաիրավական խնդրի լուծման նպատակով, կարծում եմ՝ Սահմանադրական դատարանը գործի էլքի համար պետք է նաև պարզեր, մասնավորապես, վիճարկվող դրույթով սահմանված իրավակարգավորման պայմաններում օրենքի առջև համընդհանուր հավասարության և որոշակիության պահպանվածության, ինչպես նաև կենսաթոշակային հարաբերությունների կարգավորման շրջանակում հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի արդյունավետ իրականացման անհրաժեշտ կառուցակարգերի ապահովման հանգամանքները: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն իր 2021 թվականի մարտի 2-ի ՄԴՈ-1580 որոշման (այսուհետ՝ Որոշում) 3-րդ կետում քննության առարկա հարցադրումների շրջանակում վիճարկվող դրույթի սահմանադրականությունը պետք է գնահատեր Սահմանադրության ոչ միայն 29-րդ և 60-րդ հոդվածների շրջանակում, այլև՝ 28, 49 և 79-րդ հոդվածների հիման վրա:

2. Որոշման 4.1-րդ կետում պարզ շարադրանքի ձևով անդրադարձ է կատարվում Օրենքում օգտագործված «կենսաթոշակի իրավունք» և «կենսաթոշակ ստանալու իրավունք» բառակապակցությունների սահմանադրաիրավական բովանդակության հարցի առնչությամբ Սահմանադրական դատարանի 2016 թվականի նոյեմբերի 29-ի ՄԴՈ-1325 որոշման մեջ տեղ գտած իրավական ձևակերպումներին (էջ 6): Իսկ Օրենքի վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելու հարցի համատեքստում Որոշման 4.2-րդ կետում Սահմանադրական դատարանը անդրադարձել է

Օրենքի և այլ օրենքների վերաբերելի առանձին իրավակարգավորումներից մեջբերումներին (էջ 7): Այսպիսով, Որոշման 4.1 և 4.2-րդ կետերից պարզ չէ, թե ինչպիսի վերլուծության կամ այդ վերլուծության արդյունքների հետևության կապի մասին պետք է խոսք լիներ: Բացի դրանից, վիճարկվող դրույթին և այլ օրենսդրական կարգավորումներին կատարված հղումների հետ համակարգային փոխկապակցվածության շրջանակներում ենթադրվում է, որ պետք է համապատասխան հետևություն արվեր, ինչը առավել փաստարկված բովանդակություն կհաղորդեր ինչպես շարադրանքին, այնպես էլ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելուն առնչվող իրավակարգավորումների բովանդակային առանձնահատկություններին ու ներքին հակասության առկայությանը:

Սահմանադրական դատարանի քննության առարկա դրույթի և այդ դրույթի հետ համակարգային առումով փոխկապակցված իրավակարգավորումների, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումների ուսումնասիրությունը վկայում է, որ

ա) որպես նախապայման «կենսաթոշակ ստանալու իրավունք» ձեռք բերելու համար «կենսաթոշակի իրավունքի» իրականացումն ապահովվում է՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից (Օրենքի 4-րդ հոդվ., մաս 1, կետ 1),

բ) իր հերթին՝ որպես «կենսաթոշակի իրավունքի» իրացման երաշխիք, «կենսաթոշակ ստանալու իրավունքի» ձեռքբերումն իրականացվում է, եթե անձը օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում (Օրենքի 7-րդ հոդվ., մաս 2),

գ) միաժամանակ, «կենսաթոշակ նշանակելը» որպես «կենսաթոշակ ստանալու իրավունքի» իրացման հետևանք կամ արդյունք՝ կատարվում է օրենքով սահմանված հիմքերի առկայության պայմաններում (Օրենքի 7-րդ հոդվ., մաս 2, հոդվ. 33),

դ) կենսաթոշակ վճարվում է «կենսաթոշակի իրավունք» ունեցող և «կենսաթոշակ ստանալու իրավունքն» իրականացրած անձին, որը օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է կենսաթոշակ նշանակելու իրավասություն ունեցող մարմնի համապատասխան ստորաբաժանում, և նրան նշանակվել է կենսաթոշակ (Օրենքի 7, 33 և 35-րդ հոդվածներ):

Փաստորեն, հիշյալ իրավակարգավորումների ընդհանուր տրա-

մաքանությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է միայն «կենսաթոշակ վճարելու դադարեցման», այլ ոչ թե «կենսաթոշակի իրավունքի» կամ «կենսաթոշակ ստանալու իրավունքի» դադարեցման հնարավորություն: Ակնհերև է, որ եթե «կենսաթոշակ ստանալու իրավունքը» բխում է «կենսաթոշակի իրավունքից», ապա «կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցումը» չի կարող ընկալվել որպես կենսաթոշակ վճարելու դադարեցում, քանի որ այն չի բխում Սահմանադրության 29-րդ հոդվածով ամրագրված խտրականության արգելքի սահմանադրական սկզբունքի և Օրենքի 4-րդ հոդվածով ամրագրված պետական կենսաթոշակային քաղաքականության սկզբունքի բովանդակությունից ու նշանակությունից:

Դրանից անխուսափելիորեն կարող է բխել իրարամերժ հետևություն այն մասին, որ քննության առարկա Օրենքում «կենսաթոշակի իրավունքի իրականացման» համատեքստում «կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցումն» ուղղակիորեն նույնականացվել է «կենսաթոշակ վճարելու դադարեցման» հետ, ինչը, իմ կարծիքով, խնդրահարույց է Սահմանադրության 29-րդ և 79-րդ հոդվածներով ամրագրված խտրականության արգելքի և որոշակիության սկզբունքների տեսանկյունից:

Այսպիսով, Որոշման պատճառաբանական մասում անհրաժեշտ էր անդրադառնալ «կենսաթոշակ ստանալու իրավունք», «կենսաթոշակի իրավունք», «կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցում» և «կենսաթոշակ վճարելու դադարեցում» հասկացությունների իրավական չափորոշիչների նորմատիվ բովանդակության ապահովման հիմնահարցերի վերլուծությանը, ինչը կապահովեր իրավական ակտի միասնական ըմբռնումը, հետևաբար հասարակական հարաբերությունների արդյունավետ կարգավորման առաջնահերթության երաշխավորումը:

3. Օրենքի վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելու հարցի համատեքստում վիճարկվող դրույթի հետ կապված կենսաթոշակային հարաբերությունների միակերպ կարգավորման անհրաժեշտությունից ելնելով անհրաժեշտ է նկատել, որ այստեղ ևս առկա են տարբեր ձևակերպումներ: Այսպես.

1) «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքը սահմանում է, որ

ա) պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի զբաղեցնում հանրային պաշտոն կամ հանրային

ծառայության պաշտոն (հոդվ. 2, մաս 3),

բ) նույն օրենքով սահմանված կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարում է պետական պաշտոն զբաղեցրած անձի և Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձի՝ հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից (հոդվ. 6, մաս 4),

գ) «(...) սույն օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի և 6-րդ հոդվածի 4-րդ մասի դրույթները չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ սույն օրենքով սահմանված կենսաթոշակը նշանակվել է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը, (...)

Սույն մասով սահմանված դեպքերում կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակ նշանակվելուց հետո անցել է զինվորական ծառայության, նշանակվել է քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, դատավորի պաշտոնում կամ ինքնավար պաշտոնի է նշանակվել քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում» (հոդվ. 9, մաս 5),

2) Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատավորի կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու դեպքում, բացառությամբ հանրային ծառայության անցնելու դեպքերի,

3) «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Սահմանադրական դատարանի դատավորի կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու դեպքում, բացառությամբ հանրային ծառայության անցնելու դեպքերի:

Այսինքն՝ հիշյալ իրավակարգավորումների ընդհանուր տրամաբանությունից անխուսափելիորեն կարելի է բխեցնել հետևյալ իրարամերժ ընդհանրացումները.

ա) Հանրային ցանկացած պաշտոն կամ հանրային ծառայության ցանկացած պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակի իրավունքի սահմանափակում չի նախատեսվում, եթե կենսաթոշակ է նշանակվել մինչև 2014 թվականի հուլիսի 1-ը:

Սակայն, «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի իմաստով՝ պետական պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է, եթե վերջինս կենսաթոշակ

նշանակվելուց հետո անցել է զինվորական ծառայության, նշանակվել է քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, դատավորի պաշտոնում կամ ինքնավար պաշտոնի է նշանակվել քննչական կոմիտեում, հատուկ քննչական ծառայությունում:

բ) «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի իմաստով 2014 թվականի հուլիսի 1-ից հետո միայն պետական պաշտոն զբաղեցրած անձը չունի կենսաթոշակային իրավունք, եթե նա զբաղեցնում է հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն, իսկ համայնքային պաշտոն, պետական կամ համայնքային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի նկատմամբ այդպիսի սահմանափակում չկա:

Սակայն «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի վիճարկվող դրույթի՝ 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի իրավակարգավորման տրամաբանությունից հետևում է, որ կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցվում է՝ պետական ծառայության մաս կազմող զինվորական ծառայության ծառայողի համար զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո համապատասխան մարմիններում զինվորական ծառայության անցնելու, ինչպես նաև քրեակատարողական ծառայողի, դատական ակտերի հարկադիր կատարողի, դատախազի, քննչական կոմիտեի ծառայողի, հատուկ քննչական ծառայության ծառայողի կամ դատավորի պաշտոնի նշանակվելու դեպքում:

Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրքի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի կարգավորման համատեքստում՝ դատավորի կենսաթոշակ ստանալու իրավունքը չի կարող դադարեցվել այլ աշխատանք կատարելու դեպքում, բացառությամբ հանրային ծառայության անցնելու դեպքերի: Վերջինս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի կարգավորումների շրջանակում ընդգրկում է պետական ծառայությունը, համայնքային ծառայությունը, պետական և համայնքային պաշտոնները:

Այսինքն՝ հիշյալ իրավակարգավորումների բովանդակությունից անխուսափելիորեն կարելի է բխեցնել, որ հանրային ոլորտի կենսաթոշակային հարաբերություններում նույն իրավական կարգավիճակի, սակայն տարբեր կամ նույն իրավակարգավորումների շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում՝ նրանց զրկելով պետական



կենսաթոշակ ստանալու իրավունքից:

Վերոգրյալից ելնելով՝ կարծում եմ, որ կենսաթոշակային ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենսդրական ակտերով պայմանավորված տարբերակումը չունի օբյեկտիվ բնույթ, հիմնավորված չէ և չի հետապնդում իրավաչափ նպատակ:

4. Որոշման պատճառաբանական մասի 4.3-րդ կետում Սահմանադրական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական եզրահանգումը, որ «(...) օրենսդրի կողմից կենսաթոշակ ստանալու իրավունքի դադարեցումը Օրենքով զինվորական կենսաթոշակ նշանակելուց հետո Օրենքում թվարկված մի շարք պաշտոնների նշանակման հանգամանքով պայմանավորելու իրավակարգավորման նպատակը միևնույն ֆինանսական աղբյուրից, տվյալ դեպքում պետական բյուջեից, միևնույն անձին կենսաթոշակի և աշխատավարձի տեսքով գումարների վճարումը բացառելն է և ըստ այդմ՝ բյուջեն, ըստ էության, կրկնակի ֆինանսական բեռից զերծ պահելը նկատի ունենալով նաև Օրենքի վիճարկվող իրավակարգավորման համատեքստում դատավորի որպես ինքնավար պաշտոն զբաղեցնող անձի համար սահմանված, նրա կարգավիճակային առանձնահատկություններով պայմանավորված սոցիալական երաշխիքները» (էջ 14):

Վերոգրյալի լույսի ներքո ուսումնասիրելով Սահմանադրական դատարանի քննության առարկա դրույթի իրավական բովանդակությունն ու նշանակությունը՝ կարծում եմ, որ Սահմանադրական դատարանը համակարգային փոխկապակցվածության մեջ պետք է գնահատեր այդ դրույթի սահմանադրականությունը ոչ միայն միևնույն անձին կենսաթոշակ և աշխատավարձ վճարելու կամ այդ վճարումը բացառելու տեսանկյունից, այլև հանրային առանձին ոլորտի պաշտոն զբաղեցնող կամ ոչ հանրային ոլորտում ներգրավված անձանց միաժամանակ կենսաթոշակ և աշխատավարձ վճարելը հետապնդող իրավաչափ նպատակի և դրա օբյեկտիվ հիմքի տեսանկյունից:

Այսպես, ինչպես հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն զբաղեցրած անձանց դեպքում, այնպես էլ ոչ հանրային ոլորտում աշխատած անձանց դեպքում կենսաթոշակի իրավունքն ունի ծագման իր նախադրյալներն ու օրինական հիմքերը, և կենսաթոշակ ստանալու իրավունքն իրացվում է օրենքով սահմանված իրավապայմանների առկայության պարագայում, այլ ոչ թե հանրային իշխանության որևէ մարմնի հայեցողությամբ: Հենց այս

հանգամանքի վրա է կատարվել շեշտադրումը Որոշման 4.3-րդ կետում վկայակոչված Սահմանադրական դատարանի 2019 թվականի փետրվարի 12-ի և հուլիսի 12-ի համապատասխանաբար՝ ՄԴՈ-1443 և ՄԴՈ-1475 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշման մեջ, ըստ որի՝ «(...) թեև Սահմանադրության 83-րդ հոդվածի համաձայն՝ օրենսդրին է վերապահված անձի (...) կենսաթոշակի իրավունքի բովանդակությունը (օրինակ՝ կենսաթոշակի չափը, նշանակման և վճարման կարգը և այլն) որոշակիացնելու լիազորությունը, այդուհանդերձ, Սահմանադրությունը, ի թիվս այլնի, բացառում է այս իրավունքն ընդհանրապես օրենքով չերաշխավորելը, այսինքն՝ օրենսդիրը պարտավոր է կենսաթոշակի իրավունքը երաշխավորող օրենք ընդունել: Բացի դրանից, նման օրենքը չպետք է խախտի իրավահավասարության, խտրականության արգելքի սկզբունքները» (էջ 13):

Հետևաբար, Սահմանադրական դատարանը պետք է պարզեր, թե արդյոք սահմանադրական կարգավորումների տեսանկյունից արդարացված է՝

ա) միևնույն աղբյուրից, այդ թվում՝ պետական բյուջեից աշխատավարձ և կենսաթոշակ վճարելու հիմքով տարբերակված մոտեցումը, մի կողմից՝ հանրային և հանրային ծառայության պաշտոն գրադեցնող անձանց և, մյուս կողմից՝ ոչ հանրային ոլորտում ներգրավված անձանց միջև,

բ) պետական բյուջեից աշխատավարձ և կենսաթոշակ վճարելու հիմքով տարբերակված մոտեցումը հանրային կամ հանրային ծառայության տարբեր խմբերի պաշտոններում գրադեցնող անձանց միջև:

Բնականաբար դա վերաբերում է հատկապես դատավորներին, սակայն չի սահմանափակվում այդ պաշտոնը գրադեցնող անձանցով: Ընդամին՝ դատավորների կարգավիճակին վերաբերող առանձնահատկություններն ինքնին չեն կարող դիտվել որպես տարբերակման օբյեկտիվ հիմք, քանի որ հանրային ծառայողների տարբեր խմբերին պատկանող անձանց մասով նույնպես առկա են էական կամ ոչ էական կարգավիճակային կամ այլ բնույթի առանձնահատկություններ:

Միաժամանակ, Որոշման 4.3 և 4.4-րդ կետերում բերված փաստարկներով չի հիմնավորվում նաև այն, թե ինչու՝ առանձին դեպքերում հանրային կամ հանրային ծառայության պաշտոն գրադեցնող անձինք իրավունք ունեն ստանալ և՛ կենսաթոշակ, և՛ աշխատավարձ, իսկ, օրինակ՝ դատավորները իրավունք չունեն: Կամ ինչու՝

ոչ հանրային ոլորտում աշխատած անձանց դեպքում, երբ նրանք անցնում են հանրային ծառայության, պահպանվում է կենսաթոշակ ստանալու իրավունքը, իսկ, օրինակ՝ զինվորական ծառայության անցած անձը, զբաղեցնելով, մասնավորապես, դատավորի պաշտոն, զրկվում է զինվորական կենսաթոշակ ստանալու իրավունքից:

Ավելին, քննության առարկա դրույթի շրջանակում, պարզ չէ նաև, թե ինչ հիմնավորումներով է պայմանավորված օրենսդրի այն հայեցողությունը, որով նույնացվել են դատավորի և քննիչի, կամ դատախազի և այլ առանձին խմբերի պաշտոնատար անձանց կարգավիճակները:

Ուստի, վերոշարադրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ Որոշման մեջ բերված հիմնավորումները բավարար չեն վիճարկվող դրույթի Սահմանադրությանը համապատասխանությունը փաստելու համար:

5. Որոշման 4.4-րդ կետում վկայակոչելով Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասը՝ Սահմանադրական դատարանը արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը, որ «(...) կենսաթոշակի՝ որպես սեփականության ձևի, հետևաբար կենսաթոշակի գումարների նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակման օբյեկտիվ հիմքը հանրության շահն է» (էջ 18):

Հիշյալ իրավական դիրքորոշման վերաբերյալ անհրաժեշտ է հաշվի առնել այն հանգամանքը, որ Սահմանադրության 60-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորման տրամաբանության շրջանակում միայն օրենքով, և այն էլ կոնկրետ դեպքերի մասով կարող էր սահմանվել, որ սեփականության իրավունքի սահմանափակման օբյեկտիվ հիմքը կազմում է հանրության շահը: Ավելին, քննության առարկա դրույթի շրջանակում, պարզ չէ, թե ինչ հիմնավորումներով է պայմանավորված իրավական դիրքորոշման հիմքում ընկած այն մոտեցումը, ըստ որի՝ որպես կենսաթոշակի գումարների նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակման օբյեկտիվ հիմք անհրաժեշտ է դիտարկել հանրության շահը:

Սահմանադրական դատարանը հանրության շահի և դրա իրավապայմանների սահմանադրաիրավական բովանդակությանն անդրադարձել է իր բազմաթիվ որոշումներում: Տվյալ դեպքում կարծում եմ, որ պատճառաբանական մասում հանրության շահի և կենսաթոշակ ստանալու իրավունքի սահմանափակման միջև ուղղակի որևէ կապի մասին խոսք չի կարող լինել:

Այս հանգամանքով պայմանավորված՝ կարծում եմ, որ Որոշման մեջ բերված հիմնավորումը նույնպես բավարար չէ վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը փաստելու համար:

6. Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ կենսաթոշակային ոլորտի հարաբերությունները կարգավորող օրենսդրական առանձին ակտերի դրույթներ չեն ապահովում հիմնախնդրի համակարգային և միասնական կարգավորումը, ուստի պատճառաբանական մասում Ազգային ժողովին պետք է առաջարկվեր Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքներում, ինչպես նաև «Պետական կենսաթոշակների մասին» ու «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքներում համապատասխան փոփոխություններ ու լրացումներ կատարել, ինչը կապահովեր իրավական ակտերի միասնական ըմբռնման, հետևաբար՝ այդ ոլորտի հարաբերությունների միասնական, ամբողջական և համակարգային կարգավորման առաջնահերթության երաշխավորումը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կածում եմ, որ Սահմանադրական դատարանն ունեւ բավարար հիմքեր «Պետական կենսաթոշակների մասին» օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետը ճանաչել Սահմանադրության 28, 29 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԱՏԱՎՈՐ

Ա. ԽԱԶԱՏՐՅԱՆ

10 մարտի 2021 թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ  
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ  
ԵՎ ԻՐ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ  
ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՍ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ  
ԱԶՍ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 մարտի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Միմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և

1(101)2021  
ՏԵՂԵԿԱԳԻՐ  
◆  
ՏԵՂԵԿԱԳԻՐ  
◆  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի դեկտեմբերի 10-ի N 2011-Ա որոշմամբ 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի դեկտեմբերի 16-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի դեկտեմբերի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա այլ փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվայում՝ Կողմերի տնտեսական զարգացման արագացման, արտադրության և ֆինանսական կայունությանը հասնելու համար փոխադարձ ազատ առևտրի և տնտեսական հարաբերությունների ընդլայնման ու զարգացման նպատակով:

2. Համաձայնագիրն ունի վերջինիս անբաժանելի մաս կազմող հինգ հավելվածներ՝ Հավելված 1. «Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են հանումներ ազատ առևտրի ռեժիմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Սերբիայի Հանրապետության մաքսային տարածք ներմուծելու ժամանակ», Հավելված 2. «Ապրանքների ցանկ, որոնց նկատմամբ կիրառվում են հանումներ ազատ առևտրի ռեժիմից Սերբիայի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության մաքսային

տարածք ներմուծելու ժամանակ», Հավելված 3. «Ապրանքների ծագման երկիրը որոշելու կանոններ», Հավելված 4. «Դրույթներ հակազնագցման ուսումնասիրությունների ընթացքում նորմալ արժեքի որոշման մասին» և Հավելված 5. «Վեճերի լուծում»: Հավելված 3-ն իր հերթին բաղկացած է երկու հավելվածից՝ Հավելված 1. «Ապրանքի ծագման մասին հավաստագիր (CT-2 ձև) և ծագման հավաստագրի լրացուցիչ թերթի ձևաթուղթ» և Հավելված 2. «Ապրանքի ծագման մասին հայտարարագիր»:

**3.** Համաձայնագրի կատարման համար պատասխանատու մարմիններն են Էկոնոմիկայի նախարարությունը, Արտաքին գործերի նախարարությունը, Արդարադատության նախարարությունը, Ֆինանսների նախարարությունը, Պետական եկամուտների կոմիտեն, Կենտրոնական բանկը, Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը և Մննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը:

**4.** Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

4.1. Համաձայնագրի և Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին 1994 թվականի ապրիլի 15-ի Մարաքեշի Համաձայնագրի (այսուհետ՝ «ԱՀԿ համաձայնագիր») դրույթների միջև անհամապատասխանության դեպքում (ԱՀԿ համաձայնագրի տվյալ դրույթը գերակայում է այդպիսի տարբերության մասով) անհապաղ խորհրդակցել Կողմերի հետ փոխադարձ ընդունելի լուծում գտնելու նպատակով (Հոդված 3),

4.2. չկիրառել մաքսատուրքեր և մաքսատուրքերին համարժեք նշանակություն ունեցող ցանկացած վճարներ սերբական ծագում ունեցող ապրանքների ներմուծման համար կամ ներմուծման հետ կապված, եթե Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ (Հոդված 4, կետ 1),

4.3. մաքսատուրքերը և մաքսատուրքերին համարժեք ցանկացած վճարները կիրառել այն ապրանքների նկատմամբ, որոնք նշված են Համաձայնագրի 1-ին և 2-րդ Հավելվածներում, և այդպիսի մաքսատուրքերն ու վճարները կիրառել ՄԱԳՀ 1994-ի I հոդվածում սահմանված առավել բարենպաստության ռեժիմի գործելու պայմաններին համապատասխան (Հոդված 4, կետ 3),

4.4. արտահանման մաքսատուրքերի կիրառումը կարգավորել Հայաստանի Հանրապետության օրենքների ու այլ նորմատիվ իրա-

վական ակտերի և ԱՀԿ համաձայնագրի շրջանակներում Հայաստանի Հանրապետության համապատասխան պարտավորությունների համաձայն (Հոդված 4, կետ 4),

4.5. ապահովել ապրանքների ներմուծման կամ արտահանման համար կամ դրանց առնչվող բոլոր վճարների և վճարումների համապատասխանությունը ՄԱԳՀ 1994-ի VIII հոդվածին (Հոդված 6),

4.6. տրամադրել ազգային ռեժիմ սերբական կողմի ապրանքների նկատմամբ ՄԱԳՀ 1994-ի III հոդվածին համապատասխան (Հոդված 8),

4.7. համագործակցել և տեղեկատվություն փոխանակել սերբական կողմի հետ ստանդարտների, տեխնիկական կանոնակարգերի, չափագիտության, շուկայի վերահսկողության և համապատասխանության գնահատման ընթացակարգերի ներառյալ հավատարմագրման, փորձարկման և սերտիֆիկացման վերաբերյալ իրենց համապատասխան համակարգերի փոխըմբռնումը բարելավելու և իրանց միջև ցանկացած տեխնիկական արգելքների առաջացումը կանխելու նպատակով (Հոդված 9, կետ 1),

4.8. Համաձայնագրի դրույթների իրագործման նպատակներով խրախուսել ստանդարտացման, տեխնիկական կանոնակարգերի, չափագիտության, շուկայի վերահսկողության, համապատասխանության գնահատման, ներառյալ հավատարմագրման, փորձարկման և սերտիֆիկացման ընթացակարգերի համար պատասխանատու Հայաստանի Հանրապետության և սերբական կողմի լիազոր մարմինների կամ հաստատությունների միջև երկկողմ համագործակցությունը (Հոդված 9, կետ 2),

4.9. որպես ներմուծող կողմ՝ ապահովել, որ արտադրանքի պարտադիր պահանջներին համապատասխանության գնահատման պահանջները և մեթոդները սահմանվեն Հայաստանի Հանրապետության պատասխանատու մարմինների կամ հաստատությունների կողմից՝ Հայաստանի Հանրապետության կիրառելի օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի համաձայն և ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում պարունակվող Առևտրում տեխնիկական արգելքների մասին համաձայնագրի դրույթներին համապատասխան (Հոդված 9, կետ 4),

4.10. փոխընդունելի լուծում գտնելու համար համաձայնել Համատեղ կոմիտեի շրջանակներում անցկացնել տեխնիկական խորհրդատվություններ, եթե սերբական կողմը կհամարի, որ հայկական կողմը ձեռնարկել է այնպիսի միջոց, որը մեծ հավանականությամբ կստեղծի կամ արդեն ստեղծել է ավելորդ խոչընդոտ առևտրում



(Հոդված 9, կետ 5),

4.11. սերբական կողմի գրավոր հարցման դեպքում պատշաճ ժամկետում տրամադրել տեղեկատվություն սանիտարական և բուսասանիտարական միջոցներին վերաբերող ցանկացած հարցով, որն առաջացել է կամ կարող է առաջանալ փոխադարձ առևտրում (Հոդված 10, կետ 3),

4.12. փոխընդունելի լուծում գտնելու համար համաձայնել Համատեղ կոմիտեի շրջանակներում անցկացնել տեխնիկական խորհրդատվություններ, եթե սերբական կողմը կհամարի, որ հայկական կողմը ձեռնարկել է այնպիսի միջոց, որը մեծ հավանականությամբ կստեղծի կամ արդեն ստեղծել է քողարկված սահմանափակում առևտրում (Հոդված 10, կետ 4),

4.13. ապրանքների ծագումը որոշել Համաձայնագրի 3-րդ հավելվածում պարունակվող Ապրանքների ծագման երկիրը որոշելու կանոնների հիման վրա (Հոդված 11),

4.14. Համաձայնագրում ոչինչ չմեկնաբանել որպես Համաձայնագրի 13-րդ հոդվածի 1-ին կետում նշված միջոցների ձեռնարկումը կամ կիրառումը խոչընդոտող՝ պայմանով, որ այդ միջոցները չեն կիրառվում այնպիսի կերպով, որը կարող է հանգեցնել հավասար պայմաններում գործող Կողմերի միջև կամայական կամ չարդարացված խտրականության կամ միջազգային առևտրում քողարկված սահմանափակման (Հոդված 13, կետ 1),

4.15. Համաձայնագրի ոչ մի դրույթ չմեկնաբանել որպես ցանկացած Կողմին ներկայացվող որևէ տեղեկատվություն տրամադրելու պահանջ, որի բացահայտումը նա համարում է իր անվտանգության էական շահերին հակասող կամ Համաձայնագրի ոչ մի դրույթ չմեկնաբանել որպես ցանկացած Կողմին՝ այնպիսի գործողություններ նախաձեռնելուն խոչընդոտող, որոնք նա համարում է անհրաժեշտ իր անվտանգության էական շահերի պաշտպանության համար՝ կապված տրոհվող նյութերի կամ այն նյութերի հետ, որոնցից դրանք արտադրվում են, կապված զենքի, զինամթերքի և ռազմական նշանակության արտադրանքի առևտրի, ինչպես նաև այլ ապրանքների և նյութերի առևտրի հետ, որն իրականացվում է անմիջապես կամ միջնորդավորված՝ զինված ուժերի մատակարարման նպատակների համար, որոնք նախաձեռնվում են պատերազմի կամ միջազգային հարաբերություններում այլ արտակարգ իրավիճակների ժամանակ, կամ Համաձայնագրի ոչ մի դրույթ չմեկնաբանել որպես ցանկացած Կողմին՝ ցանկացած գործողություններ ձեռնարկելուն խոչընդոտող, որոնք, ի կատարումն Միավորված ազգերի կազմա-

կերպության կանոնադրությամբ ստանձնած իր պարտավորությունների, ձեռնարկվում են միջազգային խաղաղության և անվտանգության պահպանման համար (Հոդված 14),

4.16. Համաձայնագրի 15-րդ հոդվածի 1-ին կետում նշված կարգով ներմուծման սահմանափակման միջոցների ընդունման պարագայում անհապաղ ծանուցել սերբական կողմին՝ վճարային հաշվեկշռի ապահովման համար այդպիսի միջոցների գործողության դնելու մտադրության և դրանց կիրառման և դադարեցման ժամանակացույցի մասին (Հոդված 15, կետ 2),

4.17. ընդունել մտավոր սեփականության իրավունքի պահպանման կարևորությունը և ապահովել մտավոր սեփականության վերաբերյալ միջազգային համաձայնագրերի, որոնց կողմ է հանդիսանում Հայաստանի Հանրապետությունը, համարժեք և արդյունավետ իրագործումը, և որպես ԱՀԿ համաձայնագրի 1C հավելվածում պարունակվող՝ Մտավոր սեփականության իրավունքների առևտրին առնչվող հայեցակետերի մասին համաձայնագրի (այսուհետ՝ ԹԲԻՓՍ համաձայնագիր) կողմ, վերահաստատել դրանով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության պարտավորությունները (Հոդված 16, կետ 2),

4.18. սերբական կողմի քաղաքացիների նկատմամբ կիրառել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որ կիրառվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքի պահպանության առումով՝ ԹԲԻՓՍ համաձայնագրի 3-րդ և 5-րդ հոդվածներում նախատեսված դրույթներին և բացառություններին համապատասխան (Հոդված 16, կետ 3),

4.19. սերբական կողմի քաղաքացիների նկատմամբ կիրառել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը կիրառվում է ցանկացած այլ երկրի քաղաքացիների նկատմամբ մտավոր սեփականության իրավունքի պահպանության առումով՝ ԹԲԻՓՍ համաձայնագրի դրույթներին, մասնավորապես՝ դրա 4-րդ և 5-րդ հոդվածներին համապատասխան (Հոդված 16, կետ 4),

4.20. ձգտել Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքներում և այլ նորմատիվ իրավական ակտերում ապահովել մտավոր սեփականության իրավունքի պահպանման նույն մակարդակ նախատեսող դրույթներ, ինչպիսին նախատեսված է ԹԲԻՓՍ համաձայնագրի 41-ից 50-րդ հոդվածներում՝ այդպիսով թույլ տալով արդյունավետ միջոցների կիրառումը Համաձայնագրում ընդգրկված մտավոր սեփականության իրավունքի ցանկացած խախտման

դեպքում, ինչպես նաև ապահովել անբարեխիղճ մրցակցությունից արդյունավետ պաշտպանություն Հայաստանի Հանրապետության համապատասխան օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի և Արդյունաբերական սեփականության պահպանության մասին 1883 թվականի մարտի 20-ի Փարիզյան կոնվենցիայի 10բիս հոդվածի համաձայն (Հոդված 16, կետ 5),

4.21. համագործակցել սերբական կողմի հետ մտավոր սեփականության հետ կապված հարցերով և սերբական կողմի հարցմամբ անցկացնել փորձագետների խորհրդակցություններ այդպիսի հարցերի շուրջ, մասնավորապես մտավոր սեփականության իրավունքի ներդաշնակեցման, վարչարարության և պաշտպանության վերաբերյալ գոյություն ունեցող կամ ապագա միջազգային կոնվենցիաների առնչությամբ գործունեության վերաբերյալ և ԱՀԿ-ի, Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության նման միջազգային կազմակերպություններում գործունեության վերաբերյալ, ինչպես նաև մտավոր սեփականության հարցերով երրորդ կողմերի հետ Հայաստանի Հանրապետության և Սերբիայի հարաբերությունների վերաբերյալ հարցերի շուրջ (Հոդված 16, կետ 6),

4.22. կիրառել գլոբալ հատուկ պաշտպանական միջոցները ՄԱԳՀ 1994-ի XIX հոդվածի դրույթներին և ԱՀԿ համաձայնագրի 1A հավելվածում պարունակվող՝ Հատուկ պաշտպանական միջոցների մասին համաձայնագրին (պաշտպանական միջոցների համաձայնագիր) համապատասխան հաշվի առնելով Համաձայնագրի 19, 20 և 22-րդ հոդվածների դրույթները (Հոդված 19, կետ 2),

4.23. գլոբալ հատուկ պաշտպանական միջոց կիրառելու մտադրության դեպքում անհապաղ սերբական կողմին ուղղել գրավոր ծանուցում, որը պարունակում է ուսումնասիրության սկզբի, ուսումնասիրության արդյունքում կատարած նախնական և վերջնական եզրահանգումներին վերաբերող ամբողջ անհրաժեշտ տեղեկատվություն (Հոդված 19, կետ 4),

4.24. Համաձայնագրի 21-րդ հոդվածի 1-ին կետում սահմանված երկկողմ պաշտպանական միջոցներ կիրառելիս ղեկավարվել Համաձայնագրի 21-րդ հոդվածով սահմանված դրույթներով՝ ապահովելով դրանց կատարումը (Հոդված 21),

4.25. ապահովել, որ Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինը Համաձայնագրի 21-րդ հոդվածի 3-րդ, 5-ից 7-րդ կետերին համապատասխան իրականացրած ծանուցումների և հարցումների էլեկտրոնային օրինակները տրամադրի այն օրը, երբ ուղարկվում

են ծանուցման կամ հարցման պաշտոնական նամակների թղթային տպագիր օրինակները (Հոդված 22, կետ 2),

4.26. Համաձայնագրի մեկնաբանությունից և/կամ կիրառումից բխող ցանկացած վեճ լուծել Համաձայնագրի 5-րդ «Վեճերի լուծում» հավելվածով սահմանված կանոններին և ընթացակարգերին համապատասխան (Հոդված 23),

4.27. Հայաստանի Հանրապետության օրենքներին և այլ նորմատիվ իրավական ակտերին համապատասխան ապահովել, որ Հայաստանի Հանրապետության ընդհանուր կիրառման օրենքները և այլ նորմատիվ իրավական ակտերը, ինչպես նաև Համաձայնագրի գործողության ոլորտին առնչվող ցանկացած հարցերով համապատասխան միջազգային համաձայնագրերը ժամանակին հրապարակվեն՝ առնվազն դրանց ուժի մեջ մտնելու պահից, կամ այլ ձևով դրանց հանրային հասանելիության պահից, այդ թվում՝ հնարավորության դեպքում՝ էլեկտրոնային ձևով և առավելագույն հնարավորության սահմաններում ծանուցել սերբական կողմին ցանկացած միջոցների մասին, որոնք, հայկական կողմի կարծիքով, կարող են զգալիորեն ազդել Համաձայնագրի գործողության վրա կամ որևէ ձևով էապես ազդել Համաձայնագրի շրջանակներում սերբական կողմի շահերի վրա (Հոդված 24),

4.28. Ընդունել Հայաստանի Հանրապետության և Սերբիայի Հանրապետության միջև առևտրում էլեկտրոնային առևտրի աճող դերը, և Համաձայնագրի ապրանքների առևտրին վերաբերող դրույթներին աջակցելու նպատակով, փոխադարձ շահերից ելնելով՝ սերբական կողմի հետ համագործակցել էլեկտրոնային առևտրի ոլորտում (Հոդված 25),

4.29. Համաձայնագրի արդյունավետ կիրառումն ապահովելու և սերբական կողմի հետ Համաձայնագրի շրջանակներում ցանկացած հարցով հաղորդակցությունը հեշտացնելու նպատակով, Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու պահից մեկ (1) ամսվա ընթացքում նշանակել կոնտակտային կետ կամ կոնտակտային կետեր և դրանց մասին ծանուցել սերբական կողմին, ինչպես նաև անհապաղ ծանուցել Հայաստանի Հանրապետության կոնտակտային կետերի մասին տվյալների ցանկացած փոփոխությունների մասին (Հոդված 29, կետ 1),

4.30. որպես Եվրասիական տնտեսական միության անդամ պետություն՝ առանց ներմուծման մաքսատուրքի վճարման, ներմուծման հնարավորություն ընձեռել այն ապրանքների համար, որոնք ծագում են Սերբիայի Հանրապետությունից՝ Համաձայնագրի 2-րդ

Հավելվածի համաձայն սահմանված սակագնային քվոտաների ծավալով (Հավելված 2, հոդված 2, կետ 2),

4.31. Համաձայնագրի 3-րդ Հավելվածով նախատեսված ապրանքների ծագման երկիրը որոշելու կանոնները կիրառել սակագնային արտոնություններ տրամադրելու նապատակով համաձայն Համաձայնագրի (Հավելված 3, հոդված 1),

4.32. Համաձայնագրի 3-րդ Հավելվածի 4-րդ հոդվածում նշված ապրանքները ամբողջությամբ դիտարկել որպես Սերբիայում ստացված կամ արտադրված ապրանքներ (Հավելված 3, հոդված 4),

4.33. չնայած Համաձայնագրի 3-րդ Հավելվածի՝ «Ապրանքների ծագման երկիրը որոշելու կանոններ» (այսուհետ՝ Կանոններ) 3-րդ հոդվածի «b» ենթակետի դրույթներին, մի Կողմից ծագող ապրանքները կամ նյութերը, որոնք օգտագործվում են մյուս Կողմում ապրանքի արտադրության ընթացքում որպես նյութեր, դիտարկել որպես ծագող այն Կողմից, որտեղ իրականացվել են դրանց վերամշակման վերջին գործողությունները, բացառությամբ այն նյութերի, որոնք նշված են Կանոնների 7-րդ հոդվածի 1-ին կետում. այդպիսի նյութերի ծագումը հաստատվում է լիազոր մարմնի կողմից տրված ապրանքի ծագման հավաստագրով (CT-2 ձև) (Հավելված 3, հոդված 6),

4.34. որպես արտահանող կողմ՝ ներմուծող սերբական կողմի մաքսային մարմիններին ներկայացնել Համաձայնագրի Հավելված 3-ի 9-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված պայմանների կատարումը հաստատող համապատասխան փաստաթղթային ապացույցներ՝ Համաձայնագրի Հավելված 3-ի 9-րդ հոդվածի 3-րդ կետում նշված փաստաթղթերից մեկի ներկայացմամբ (Հավելված 3, հոդված 9, կետ 3),

4.35. ապրանքներին տրամադրել ազատ առևտրի ռեժիմ՝ Համաձայնագրի 3-րդ Հավելվածի 10-րդ հոդվածում շարադրված ազատ առևտրի ռեժիմի տրամադրման պայմաններին համաձայն, իսկ ազատ առևտրի ռեժիմի տրամադրումը մերժելիս առաջնորդվել Համաձայնագրի 3-րդ Հավելվածի 11-րդ հոդվածում շարադրված ազատ առևտրի ռեժիմի տրամադրումը մերժելու հիմքերով (Հավելված 3, հոդվածներ 10 և 11),

4.36. ապահովել, որ ազատ առևտրի ռեժիմ ստանալու նպատակով ապրանքների ծագումը հաստատելու համար սերբական կողմի մաքսային մարմնին բնօրինակով և թղթային տարբերակով՝ բացառությամբ Կանոնների 14-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքի, ներկայացվի ապրանքի ծագման հավաստագիր (CT-2 ձև)

Կանոնների N 1 Հավելվածում նախատեսված ձևով և պատշաճորեն լրացված՝ Կանոնների 12-րդ և 18-րդ հոդվածներում նշված պահանջներին համապատասխան (Հավելված 3, Հոդված 12, կետեր 1, 2),

4.37. ապահովել, որ ապրանքի ծագման մասին հավաստագրի կամ ապրանքի ծագման մասին հայտարարագրի կամ ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) ներկայացում ազատ առևտրի ռեժիմից օգտվելու իրավունք ստանալու համար չպահանջվի այն ծագող ապրանքների բեռների ներմուծման ժամանակ, որոնց մաքսային արժեքը չի գերազանցում երկու հարյուր (200) եվրոյին համարժեք գումարը, պայմանով, որ այդ ներմուծումը չի հանդիսանում մի քանի խմբաքանակի մաս, որը հիմնավորված ձևով կարող է դիտարկվել որպես ապրանքի ծագման հավաստագրի (CT-2 ձև) կամ ապրանքի ծագման հայտարարագրի տրամադրումից խուսափելու նպատակով ձեռնարկված կամ կազմակերպված միջոց (Հավելված 3, Հոդված 14, կետ 1),

4.38. սերբական կողմի հետ իրականացնել վարչական համագործակցություն Համաձայնագրի 3-րդ Հավելվածի 15-րդ հոդվածում սահմանված կանոններին համապատասխան կարգով (Հավելված 3, Հոդված 15),

4.39. որպես ներմուծող կողմ արտագնա ստուգում իրականացնելու համար Հայաստանի Հանրապետության մաքսային մարմնի միջոցով արտահանող սերբական կողմի վերիֆիկացիայի մարմնին ուղարկել գրավոր հարցում (այսուհետ արտագնա ստուգման հարցում) այդպիսի ստուգում իրականացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մտադրության մասին, որը կլինի հիմնավորված, հնարավորինս լիարժեք և inter alia կներառի Համաձայնագրի 3-րդ Հավելվածի 16-րդ հոդվածի 4-րդ կետում նախատեսված տեղեկատվությունը (Հավելված 3, Հոդված 16, կետեր 3 և 4),

4.40. այն դեպքում, եթե Համաձայնագրի 3-րդ Հավելվածի 16-րդ հոդվածի 5-րդ կետում նշված պատասխանը չի ստացվել նույն հոդվածի 3-րդ կետում նշված արտագնա ստուգման հարցումն ուղարկելուց հետո վաթսուն (60) օրվա ընթացքում, կամ ստացվել է արտագնա ստուգումն իրականացնելու մերժում, ապա որպես հարցումն ուղարկած ներմուծող Կողմ, մերժել ազատ առևտրի ռեժիմի տրամադրումն արդեն իսկ ներմուծված ապրանքների համար, որոնց նկատմամբ հայցվել էր արտագնա ստուգում (Հավելված 3, Հոդված 16, կետ 6),

4.41. ապահովել, որ արտագնա ստուգումը սկսվի գրավոր համաձայնությունը ստանալու օրվանից վաթսուն (60) օրվա ընթացքում և ավարտվի ողջամիտ ժամկետում, սակայն ոչ ուշ, քան այդպիսի գրավոր համաձայնությունը ստանալուց հետո հարյուր հիսուն (150) օրվա ընթացքում, որի արդյունքները կձևակերպվեն անգլերեն լեզվով՝ արտագնա ստուգման արդյունքների մասին հաշվետվության ձևով՝ պարունակելով Համաձայնագրի 3-րդ Հավելվածի 16-րդ հոդվածի 10-րդ կետում նշված տեղեկատվությունը, ինչպես նաև ապահովել, որ արտագնա ստուգումն իրականացնող ստուգող անձնակազմը ոչ ուշ, քան գրավոր համաձայնությունը ստանալուց հետո երկու հարյուր (200) օրվա ընթացքում ստուգվող անձին ուղարկի այդպիսի ստուգման արդյունքների վերաբերյալ հաշվետվություն (Հավելված 3, Հոդված 16, կետեր 7, 10 և 11),

4.42. հակազնագցման ուսումնասիրությունների և ցանկացած հետագա հակազնագցման ընթացակարգերի անցկացման նպատակով, ներառյալ՝ վերանայումները, չկիրառել արտահանող սերբական կողմի ներքին շուկայում սպառման համար նախատեսված համանման ապրանքների նորմալ արժեքի որոշման ոչ մի մեթոդ, որոնք, համաձայն Հակազնագցման մասին համաձայնագրի 2-րդ հոդվածի 2.7 կետի կամ ՄԱԳՀ 1994-ի I-ին Հավելվածում (Օանոթագրություններ և լրացուցիչ դրույթներ) պարունակվող ՄԱԳՀ 1994-ի VI-րդ հոդվածի 1-ին կետի Երկրորդ լրացուցիչ դրույթի, մասամբ կամ ամբողջությամբ հիմնված են սուտոգատ երկրի տվյալների վրա (Հավելված 4),

4.43. հակազնագցման ուսումնասիրությունների և ցանկացած հետագա հակազնագցման գործողությունների անցկացման նպատակով, ներառյալ՝ վերանայումները, չկիրառել որևէ մեթոդ, որը թույլ է տալիս հաշվի չառնել կամ ճշգրտել արտահանող սերբական կողմի ներքին շուկայում սպառման համար նախատեսված համանման ապրանքի արտահանողների և (կամ) արտադրողների ծախքերի մասին տվյալները այն դեպքերում, երբ ուսումնասիրությունն անցկացնող մարմինը եզրակացրել է, որ շուկաների գործելու, արտադրության գործոնների առանձնահատկությունների հետևանքով գոյություն ունի «հատուկ շուկայական իրավիճակ» համանման ապրանքի շուկայում՝ և (կամ) ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ապրանքի արտահանողների կամ արտադրողների փաստաթղթերում գրանցված ծախքերը ողջամտորեն չեն արտացոլում ուսումնասիրության օբյեկտ հանդիսացող ապրանքի արտադրության և վաճառքի հետ կապված ծախքերը, այն ժամանակ, երբ

փաստաթղթերը ցանկալի կամ բավարար չափով համապատասխանում կամ վերարտադրում են այն ծախքերը, որոնք այդ արտահանողները կամ արտադրողները կրել են (Հավելված 4),

4.44. եթե Համաձայնագրով այլ բան նախատեսված չէ, Համաձայնագրի 5-րդ Հավելվածի դրույթները կիրառել սերբական կողմի հետ ցանկացած վեճերի նկատմամբ, որոնք ծագում են Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և/կամ կիրառման ժամանակ, երբ հայկական կողմը համարում է, որ սերբական կողմի միջոցը հակասում է Համաձայնագրի դրույթներով սահմանված պարտավորությանը, կամ որ սերբական կողմը չի կատարում Համաձայնագրով ստանձնած իր պարտավորությունները (Հավելված 5, Հոդված 3),

4.45. ապահովել, որ քննությունները, որոնց շրջանակներում ներգրավվել են բարի ծառայություններ, միջնորդություն և հաշտարարություն և, մասնավորապես, այդպիսի քննությունների ընթացքում վեճի Կողմերի դիրքորոշումները գաղտնի պահվեն և չվնասեն վեճի Կողմերի որևէ իրավունք ցանկացած հետագա քննություններում (Հավելված 5, Հոդված 6, կետ 2):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 մարտի 2021 թվականի  
ՍԴՈ-1581





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2019 թՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԻ ԿՈՂՄԻՑ, ԵՎ ՍԵՐԲԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ ՄՅՈՒՄ ԿՈՂՄԻՑ, ՄԻՋԵՎ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 թՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1581 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Մահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Մահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մարտի 2-ի ՍԴՈ-1581 որոշմամբ (հրապարակվել է 03.03.2021 թվականին) որոշել է.

*«1. 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Մահմանադրությանը: (...):»:*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 2-ի ՄԴՈ-1581 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-1581 որոշմամբ 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և իր անդամ պետությունների՝ մի կողմից, և Սերբիայի Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահ-

մանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարանն զիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարանն ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարանն միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարանն զիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հարթակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում

պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարան դիմող անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել՝ այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում ամկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանի դիմող անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլև այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարանի դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի՝ իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարանի դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային

փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կա՛մ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված՝ էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել

Է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**Էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրոնային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ.

**Էլեկտրոնային թվային ստորագրություն՝** էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիչստորագրաֆիզիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականաց-

նելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար.

**էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ՝ ստորագրող անձ)՝ ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ՝ ստուգման տվյալներ)՝ պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար.

**էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ**՝ ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը՝ օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները.

**էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն**՝ էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ**:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրո-



նային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Մահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առկայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է եռօրյա ժամկետում Մահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող գրկվել սահմանադրական արդարադատություն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:*

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«05» մարտի 2021թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ  
ԵՎ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ  
ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2000 ԹՎԱԿԱՆԻ  
ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

2 մարտի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Հ. Թովմայանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Ա. Ֆիդանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Կառավարությունն իր՝ 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1947-Ա որոշմամբ «2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու նպատակով դիմել է Սահմանադրական դատարան: Հիշյալ որոշումը Հայաստանի Հանրապետության վարչապետը Սահմանադրական դատարան է ներկայացրել 2020 թվականի դեկտեմբերի 16-ին:

Գործի քննության առիթը Կառավարության՝ 2020 թվականի դեկտեմբերի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 25-ին Մոսկվա քաղաքում՝ թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի, դրանց համարժեքների, ածանցյալների, ինչպես նաև բաղադրիչների և հոգեակտիվ նյութերի ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցությունը կատարելագործելու նկա-

տառումներով 2000թ. նոյեմբերի 30-ին ստորագրված՝ «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում (այսուհետ՝ Համաձայնագիր) փոփոխություններ կատարելու նպատակով:

Իր հերթին, Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության կողմից վավերացվել է Հանրապետության նախագահի՝ 2001 թվականի հոկտեմբերի 24-ի ՆՀ-969 հրամանագրով:

**2.** Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին կետի ուժով Համաձայնագրի 1-ին հոդվածը լրացվում է «Օգտագործվող հասկացություններ» վերտառությամբ 1.1 հոդվածով, նույն հոդվածի 2-րդ կետի ուժով Համաձայնագրի 4-րդ հոդվածի երկրորդ պարբերությունը շարադրվում է Արձանագրության 1-ին հոդվածի 2.1 կետում սահմանված բովանդակությամբ, իսկ 4-րդ հոդվածի 4-րդ պարբերությունից հետո ավելացվում են նոր պարբերություններ՝ Արձանագրության 1-ին հոդվածի 2.2 կետում սահմանված բովանդակությամբ:

**3.** Հայաստանի Հանրապետությունը փոխադարձության հիման վրա պարտավորվում է Արձանագրությամբ սահմանված կարգով փոփոխել Համաձայնագիրը, որի արդյունքում ստանձնում է հետևյալ պարտավորությունները.

- Համաձայնագրի կողմերի հետ թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցությունն իրականացնել նշված ոլորտում հանցավորության իրավիճակի մասին օպերատիվ, վիճակագրական, գիտամեթոդական և այլ տեղեկատվության, թմրանյութերի և բաղադրիչների, համարժեքների, ածանցյալների, հոգեակտիվ նյութերի ապօրինի շրջանառությանն առնչություն ունեցող անդրազգային հանցավոր խմբերի և դրանց առաջնորդների մասին տվյալների միասնական բանկը լրացնելու համար տեղեկատվության փոխանակման ձևով, այդ թվում՝ ներառելով Արձանագրության 1-ին Հոդվածի 2.1 կետում նշված տվյալները (Հոդված 1, կետ 2.1),

- Համաձայնագրի կողմերի հետ թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցությունն իրականացնել թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության հետ կապված անդրազգային բնույթի հանցագործու-

թյունների բացահայտման և հետաքննության նպատակով օպերատիվ-հետաքննչական համատեղ խմբերի ստեղծման ձևով (Հոդված 1, կետ 2.2),

- Համաձայնագրի կողմերի հետ թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում համագործակցությունն իրականացնել համալիր համաձայնեցված և/կամ համատեղ միջգերատեսչական, կանխարգելիչ և օպերատիվ-հետախուզական միջոցառումների, հատուկ օպերացիաների անցկացման ձևով՝ ԱՊՀ մասնակից պետությունների սահմաններով թմրանյութերի փոխադրման ուղիների հայտնաբերման, խափանման, ինչպես նաև դրանց ապօրինի շրջանառության հետ կապ ունեցող անձանց հայտնաբերման, թմրանյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառությունից ստացված եկամուտների օրինականացման (լվացման) համար բանկային, կոմերցիոն և այլ կառուցվածքների օգտագործումը խափանելու, թմրանյութերի արտադրման ընդհատակյա (ապօրինի) լաբորատորիաների ոչնչացման, թմրանյութ պարունակող ապօրինի մշակաբույսերի, ինչպես նաև թմրանյութ պարունակող վայրի բույսերի պոպուլյացիաների ոչնչացման և թմրանյութերի տարածման համար համացանցի հնարավորությունների օգտագործումը խափանելու նպատակներով (Հոդված 1, կետ 2.2):

4. Արձանագրությամբ նախատեսված փոփոխությունների արդյունքում Համաձայնագրի 4-րդ հոդվածի 5-11-րդ պարբերությունները համարվում են 7-13-րդ պարբերություններ:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

2 մարտի 2021 թվականի  
ՍԴՈ-1582



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «2019  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ  
«ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՆԵՐԳՈՐԾՈՂ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ  
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԱՊՕՐԻՆԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԴԵՄ  
ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ  
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»  
2000 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»  
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ ԱՄՐԱԳՐՎԱԾ  
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 2-ԻՆ  
ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1582 ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մարտի 2-ի ՍԴՈ-1582 որոշմամբ (հրապարակվել է 03.03.2021 թվականին) որոշել է.

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(101)2021



«1. 2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը: (...):»:

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 2-ի ՍԴՈ-1582 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ դրա վերաբերյալ իմ հատուկ կարծիքը:

Նախ՝ հարկ եմ համարում նշել, որ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի՝ «Միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության որոշումը» վերտառությամբ 74-րդ հոդվածի 6-րդ մասում նշված որոշումներից որևէ մեկն ընդունելու համար անհրաժեշտ է օրենքով սահմանված կարգով Սահմանադրական դատարան ներկայացված դիմում: Հակառակ դեպքում, եթե առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված դիմում կամ այն չի համապատասխանում օրենքով սահմանված պահանջներին, ապա Սահմանադրական դատարանն իրավասու չէ ըստ էության որոշում ընդունել միջազգային պայմանագրում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Ինչպես վերը նշվեց, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-1582 որոշմամբ 2019 թվականի հոկտեմբերի 25-ին ստորագրված «Թմրամիջոցների, հոգեներգործող նյութերի և բաղադրիչների ապօրինի շրջանառության դեմ պայքարում Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» 2000 թվականի նոյեմբերի 30-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» արձանագրությամբ ամրագրված պարտավորությունները ճանաչել է Սահմանադրությանը համապատասխանող: Հարկ եմ համարում ընդգծել, որ սույն հատուկ կարծիքի շրջանակներում նշված որոշմանը բովանդակային առումով անդրադառնալը հնարավոր և անհրաժեշտ չեմ համարում, քանի որ այդ որոշմանն իմ անհամաձայնության հիմքում ընկած է

թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմումի բացակայությունը, որպիսի պայմաններում կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ըստ էության որոշում ընդունել անկախ այդ որոշման բովանդակությունից:

Այսպես «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Սահմանադրական դատարանը գործը քննում է միայն համապատասխան դիմումի առկայության դեպքում:

Միաժամանակ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքը սահմանում է դիմումին ներկայացվող պահանջները և Սահմանադրական դատարանի դիմումի ներկայացման եղանակը:

Վերոգրյալ իրավական նորմերից հետևում է, որ Սահմանադրական դատարանում գործերի քննության միակ հնարավոր առիթը դիմումն է, որը պետք է ներկայացվի իրավասու անձի կողմից, համապատասխանի «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին և ներկայացված լինի թույլատրելի եղանակով:

Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով մինչև միջազգային պայմանագրի վավերացումը որոշում է դրանում ամրագրված պարտավորությունների համապատասխանությունը Սահմանադրությանը, իսկ Սահմանադրության 169-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված դեպքում Սահմանադրական դատարանի դիմում է Կառավարությունը<sup>1</sup>:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 46-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ որպես կողմի ի պաշտոնե ներկայացուցիչ կարող են հանդես գալ Սահմանադրական դատարանի դիմած մարմնի ղեկավարը, վիճարկվող ակտն ընդունած մարմնի ղեկավարը, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով նշանակված անձը:

<sup>1</sup> Համանման իրավական կարգավորում է սահմանում նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 74-րդ հոդվածի 1-ին մասը:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դիմումը Սահմանադրական դատարան է ներկայացվում գրավոր **իրավասու անձի կողմից ստորագրված**: Դիմումը ներկայացվում է **թղթային կամ էլեկտրոնային եղանակով**: Ընդ որում, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասը սահմանում է, որ նույն օրենքի 24-րդ հոդվածով նախատեսված **էլեկտրոնային եղանակով** դիմումները Սահմանադրական դատարան կարող են ներկայացվել **Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում**:

Վերը նշված իրավակարգավորումները թույլ են տալիս կատարել հետևյալ դատողությունները.

- մինչև Ազգային ժողովի կողմից միջազգային պայմանագրի վավերացումը դրանում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը վերապահված է Կառավարությանը.

- այդ հարցով Սահմանադրական դատարան ներկայացվող դիմումը պետք է լինի իրավասու անձի կողմից ստորագրված.

- այդ հարցով դիմումը կարող է թղթային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան առանց նախապայմանների.

- այդ հարցով դիմումը կարող է էլեկտրոնային եղանակով ներկայացվել Սահմանադրական դատարան միայն այն դեպքում, երբ Սահմանադրական դատարանում առկա են համապատասխան տեխնիկական հնարավորություններ:

Կարծում եմ, որ գործող իրավակարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայությունը և դրանով պայմանավորված՝ էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու, դրանց հիման վրա գործեր քննելու Սահմանադրական դատարանի իրավասությունը պետք է հավաստվեն Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտով: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող հնարավոր սուբյեկտները (դրա իրավունքն ունեցող անձինք) Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտից պետք է իրազեկվեն, որ Սահմանադրական դատարանում առկա են էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, ինչպես նաև տեղեկանան էլեկտրոնային այն հար-

թակի մասին, որով Սահմանադրական դատարանն ընդունելու է էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, և միայն այդ պայմաններում անձինք կարող են էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան:

Ասվածի հիմքում ընկած է այն հանգամանքը, որ առանց համապատասխան իրավական հիմքի հնարավոր չէ միանշանակ եզրահանգում կատարել այն մասին, թե Սահմանադրական դատարանում առկա են արդյոք էլեկտրոնային եղանակով դիմումներ ընդունելու համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և թե Սահմանադրական դատարանն էլեկտրոնային որ հարթակով է դիմումներ ընդունում. նման եզրահանգման հիմքում պետք է ընկած լինի Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտը:

Ավելին, Սահմանադրական դատարանի կայքում նշված է Սահմանադրական դատարանի էլեկտրոնային փոստի հասցեն, նշված են նաև Սահմանադրական դատարանի դատավորների էլեկտրոնային փոստի հասցեները: Եթե կարելի է էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնել Սահմանադրական դատարան, և վերջինս իրավասու է նման դիմումների հիման վրա գործեր քննել նաև Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտի բացակայության պայմաններում, ապա ինչպե՞ս է Սահմանադրական դատարանն ընդունում անձի համար պարզ լինելու, թե արդյոք նա կարող է դիմումը նաև ներկայացնել այն ուղարկելով Սահմանադրական դատարանի կամ Սահմանադրական դատարանի դատավորի էլեկտրոնային փոստի հասցեով, և նման դիմումներն արդյոք Սահմանադրական դատարանը համարելու է գործի քննության առիթ:

Վերոգրյալը ևս վկայում է Սահմանադրական դատարան էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորության վերաբերյալ համապատասխան իրավական ակտի անհրաժեշտության մասին, որում նշված կլինի նաև էլեկտրոնային այն հարթակը, որի միջոցով դիմումների ներկայացումը Սահմանադրական դատարանը համարելու է ընդունելի, ինչպես նաև տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների այն գործիքակազմը, որի միջոցով Սահմանադրական դատարանում իրականացվելու է էլեկտրոնային փաստաթղթում առկա էլեկտրոնային ստորագրության իսկության ստուգումը: Դրա միջոցով Սահմանադրական դատարանն ընդունում է անձանց համար հստակ և կանխատեսելի կլինի ոչ միայն այն, թե Սահմանադրական դատարանի կողմից որ հարթակի

միջոցով են ընդունվում էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումները, այլն այն, թե տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների ինչ գործիքակազմով է Սահմանադրական դատարանում պարզվում ստացված դիմումի իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը: Այսինքն՝ Սահմանադրական դատարան դիմող անձանց համար պետք է պարզ լինի նաև, թե ինչ միջոցների կիրառմամբ է Սահմանադրական դատարանում հաստատվում կամ հերքվում ներկայացված էլեկտրոնային փաստաթղթի իրավասու անձի կողմից ստորագրված լինելու հանգամանքը, ինչը հնարավորություն կտա Սահմանադրական դատարան դիմող անձանց նախքան էլեկտրոնային եղանակով էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելը կանխատեսել, թե ինչ գնահատական է տրվելու դրանում առկա էլեկտրոնային ստորագրությանը:

Ավելին, կարծում եմ, որ անձանց համար պետք է գործնականում ապահովվեն Սահմանադրական դատարան դիմելու համանման պայմաններ, և պետք է բացառվի Սահմանադրական դատարան դիմող անձանց նկատմամբ անհավասար վերաբերմունքը՝ Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու եղանակների ընտրության հարցում: Մասնավորապես՝ էլեկտրոնային եղանակով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հնարավորության ապահովումը կոչված է խթանելու սահմանադրական արդարադատության փաստացի մատչելիությունը՝ խնայելով Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու համար ծախսվող նյութական և ժամանակային ռեսուրսները: Սահմանադրական դատարան դիմումների ներկայացման էլեկտրոնային հարթակի գործարկումը կարող է ապահովել դրանց ներկայացման առավել պարզ և արագ ընթացակարգ: Հետևաբար Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում էլեկտրոնային եղանակով դիմումներ ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար:

Ըստ այդմ, եթե Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում էլեկտրոնային եղանակով դիմումների ներկայացումը (որն անվերապահորեն ընդունելի է նաև իմ կողմից), ապա այդ հնարավորությունը պետք է հավասարապես վերագրելի լինի Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձանց, այսինքն՝ կամ Սահմանադրական դատարանում առկա չեն համապատասխան տեխնիկական հնարավորություններ, և

որևէ անձ չի կարող դիմումը ներկայացնել էլեկտրոնային եղանակով, կա՛մ նման տեխնիկական հնարավորություններ առկա են, և Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող բոլոր անձինք կարող են դիմում ներկայացնել նաև էլեկտրոնային եղանակով՝ Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտում նշված էլեկտրոնային մեկ կամ մի քանի հարթակների միջոցով:

Տվյալ դեպքում սույն գործի նյութերում առկա է թղթային տարբերակով դիմում, որի վրա առկա չէ դիմողի ստորագրություն: Միաժամանակ պարզվել է, որ Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումը ներկայացվել է «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգով այն դեպքում, երբ առկա չէ Սահմանադրական դատարանում համապատասխան տեխնիկական հնարավորությունների առկայության մասին Սահմանադրական դատարանի համապատասխան իրավական ակտ, որում նշված կլինի նաև, որ Սահմանադրական դատարանն ընդունելի է համարում «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումը: Ընդ որում, այդ դեպքում էլեկտրոնային որևէ հարթակի միջոցով Սահմանադրական դատարան դիմում ներկայացնելու հնարավորությունը պետք է ապահովվեր Սահմանադրական դատարանի դիմելու իրավունք ունեցող բոլոր, այդ թվում՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Միաժամանակ հաշվի առնելով, որ սույն գործի նյութերում առկա դիմումի թղթային օրինակում բացակայում է որևէ ստորագրություն և Սահմանադրական դատարանի կողմից գործի քննության առիթ համարված դիմումի վրա առկա է էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված լինելու մասին նշում, հարկ եմ համարում անդրադառնալ Սահմանադրական դատարան էլեկտրոնային փաստաթղթի ձևով դիմում ներկայացնելու հարցին:

Այսպես էլեկտրոնային փաստաթղթերի և էլեկտրոնային թվային ստորագրությունների կիրառման ընթացքում ծագող իրավահարաբերությունները կարգավորվում են «էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքով:

Նշված օրենքի 2-րդ հոդվածով սահմանված են այդ իրավական ակտում օգտագործվող, ի թիվս այլնի, հետևյալ հիմնական հասկացությունները.

**էլեկտրոնային փաստաթուղթ՝** տեղեկություն գրանցված նյութական կրիչի վրա էլեկտրոնային եղանակով, վավերացված էլեկտրո-

նային թվային ստորագրությամբ: Էլեկտրոնային փաստաթուղթը ստեղծվում, մշակվում և պահպանվում է տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

**Էլեկտրոնային թվային ստորագրություն`** Էլեկտրոնային թվային ստորագրության ստեղծման տվյալների և տվյալ էլեկտրոնային փաստաթղթի տեղեկատվության կրիպտոգրաֆիկական փոխակերպությունների միջոցով ստացված և էլեկտրոնային թվային ձևով ներկայացված պայմանանշանների եզակի հաջորդականություն, որը կցված կամ տրամաբանորեն կապված է էլեկտրոնային փաստաթղթի հետ և օգտագործվում է ստորագրող անձին նույնականացնելու, ինչպես նաև էլեկտրոնային փաստաթուղթը կեղծիքներից ու աղավաղումներից պաշտպանելու համար:

**Էլեկտրոնային փաստաթուղթը ստորագրող անձ** (այսուհետ` ստորագրող անձ)` ֆիզիկական անձ, որի (կամ այն անձի, որին նա ներկայացնում է) անունով տրամադրվել է էլեկտրոնային թվային ստորագրության հավաստագիրը:

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալներ** (այսուհետ` ստուգման տվյալներ)` պայմանանշանների ուրույն հաջորդականություն, որն օգտագործվում է յուրաքանչյուր էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը հաստատելու համար:

**Էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման միջոցներ**` ապարատային և/կամ ծրագրային միջոցներ, որոնք հնարավորություն են տալիս ստուգել էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը` օգտագործելով էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալները:

**Էլեկտրոնային թվային ստորագրության իսկություն`** էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն` էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթն ունի նույն իրավական նշանակությունը, ինչ որ անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, եթե հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը և չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ

Էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար, իսկ նույն հոդվածի 3-րդ պարբերության համաձայն՝ պետական, տեղական ինքնակառավարման մարմինները, ֆիզիկական և իրավաբանական անձինք, կազմակերպությունները **պարտավոր չեն ընդունել էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթղթեր, եթե նրանք չունեն համապատասխան տեխնիկական միջոցներ:**

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի և «Էլեկտրոնային փաստաթղթի և էլեկտրոնային թվային ստորագրության մասին» օրենքի վկայակոչված իրավական նորմերի վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված, էլեկտրոնային փաստաթուղթ համարվող դիմումն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի իրավասու անձի կողմից ձեռագիր ստորագրված դիմումը հետևյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում.

- հաստատվել է էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը, այսինքն՝ առկա է էլեկտրոնային թվային ստորագրության ստուգման տվյալների և միջոցների կիրառման հնարավորություն և կիրառման դրական արդյունք, որը նույնականացնում է ստորագրող անձին.

- չկան բավարար ապացույցներ այն մասին, որ փաստաթուղթը փոփոխվել կամ կեղծվել է այն պահից, երբ այն հաղորդվել և (կամ) տրվել է պահպանության, բացառությամբ այն դարձունակ փոփոխությունների, որոնք անհրաժեշտ և անխուսափելի են այդ էլեկտրոնային փաստաթղթի հաղորդման և (կամ) պահպանման համար:

Վերոգրյալի հաշվառմամբ կարծում եմ, որ «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի միջոցով դիմումների ներկայացումն ընդունելի համարելու պայմաններում անգամ սույն դեպքում գործի քննության առիթ համարված դիմումին կարող էր տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն միայն վերը նշված պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ միայն այդ դեպքում հնարավոր կլիներ արձանագրել, որ դիմումն իսկապես ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ Սահմանադրական դատարանում էլեկտրոնային թվային ստորագրության իսկությունը ստուգելու տեխնիկական հնարավորությունների առ-



կայության մասին իրավական ակտի բացակայության պայմաններում կարծում եմ, որ ներկայացված դիմումը պետք է համարվեր իրավասու անձի կողմից չստորագրված, ուստի պետք է վրա հասնեին «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 26-րդ հոդվածով նախատեսված հետևանքները, այն է՝ դիմողը պետք է **եռօրյա ժամկետում Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից տեղեկացվեր դիմումի՝ «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածին անհամապատասխանության մասին, ինչի արդյունքում դիմողը նաև կկարողանար օգտվել դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու օրենսդրական հնարավորությունից:**

Միաժամանակ, եթե Սահմանադրական դատարանը համարել է, որ սույն դեպքում առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, որն ունի նույն իրավական նշանակությունը, ինչն ունի անձի ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթուղթը, ապա կարծում եմ, որ նման եզրահանգում կատարելու համար սույն գործում առնվազն պետք է առկա լիներ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից կազմված փաստաթուղթ այն մասին, որ տվյալ դեպքում իսկապես առկա է էլեկտրոնային թվային ստորագրությամբ պաշտպանված էլեկտրոնային փաստաթուղթ, և Սահմանադրական դատարանի աշխատակազմը ստուգել է ստորագրության իսկությունը՝ պարզելով, որ այդ փաստաթուղթը ստորագրվել է դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) կողմից: Մինչդեռ սույն գործում նման փաստաթղթի բացակայության պայմաններում անհասկանալի է, թե ինչպես է սույն գործի քննության առիթ համարված դիմումին տրվել դիմողի (նրա անունից հանդես եկող իրավասու անձի) ձեռագիր ստորագրությամբ ամրագրված փաստաթղթի նշանակություն, այլ կերպ՝ ներկայացված փաստաթուղթն ինչ հիմքով է համարվել իրավասու անձի կողմից ստորագրված:

*Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ սույն գործով առկա չէ թույլատրելի եղանակով ներկայացված, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքով դիմումին ներկայացվող պահանջներին բավարարող դիմում, որպիսի պայմաններում Սահմանադրական դատարանն իրավասու չէր սույն գործով ընդունել ըստ էության որոշում: Միաժամանակ հարկ եմ համարում*

ընդգծել, որ տվյալ դեպքում նաև առկա չէին ինչպես գործի քննությունը մերժելու, այնպես էլ գործի վարույթը կարճելու հիմքեր: Կարծում եմ, որ տվյալ դեպքում սահմանադրական դատավարության կողմը չի կարող զրկվել սահմանադրական արդարադատությունն ստանալու իրավունքից, քանի որ Սահմանադրական դատարանի աշխատակազմի կողմից նրան պետք է տրամադրվեր օրենքով սահմանված ժամկետը՝ առկա թերությունները շտկելու և դիմումը «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխանեցնելու համար:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«05» մարտի 2021թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**«ԱՐՏԱԴՐԱ-ՏՊԱԳՐԱԿԱՆ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԳՐՔԻ 251-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ (ՄԻՆՉԵՎ 2011  
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 23-Ի ՀՕ-233-Ն ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ  
ՄՏՆԵԼԸ ԳՈՐԾՈՂ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ԻՐԱՎԱԿԻՐԱՌ  
ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 մարտի 2021 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,  
մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝  
դիմողի «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի ներկայացուցիչներ  
Ա. Ջեյնայանի, Կ. Տոնոյանի,  
գործով որպես պատասխանող ներգրավված Ազգային ժողովի  
ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական  
ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,  
համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-  
րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի  
մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,  
դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Արտադրա-  
տպագրական» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

պետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի՝ (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրատ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հունիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի «Գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարը բաշխելը» վերտառությամբ 251-րդ հոդվածի 1-ին մասը (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) սահմանում էր.

«1. Գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից՝ այդ գույքի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո, բավարարվում են գրավառուի պահանջները, իսկ մնացած գումարը տրվում է գրավատուին:»:

Օրենսգրքի հիշյալ հոդվածը մինչև 2011 թվականի հունիսի 23-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքով նոր խմբագրությամբ շարադրելը փոփոխությունների կամ լրացումների չի ենթարկվել: Սակայն հետագայում Օրենսգրքի 251-րդ հոդվածը խմբագրվել է 23.06.2011թ. ՀՕ-233-Ն, 17.12.2014թ. ՀՕ-264-Ն, օրենքներով, լրացվել է 17.06.2016թ. ՀՕ-110-Ն օրենքով, խմբագրվել 27.10.2016թ. ՀՕ-190-Ն, փոփոխության ենթարկվել և լրացվել 14.12.2017թ. ՀՕ-319-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի՝ 2020 թվականի հոկտեմբերի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգրքի վերաբերելի դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

**1. Դիմողի դիրքորոշումները**

Հղում կատարելով Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումներին՝ դիմողը բարձրացնում է

վիճարկվող դրույթում իրավական անորոշության խնդիր, որը դրսևորվում է նրանում, որ վիճարկվող դրույթը չի հստակեցնում, թե որ պահի դրությամբ պետք է կատարվեն գրավատուի և գրավառուի միջև փոխհաշվարկները:

Ընդ որում, դիմողը վկայակոչում է Վճռաբեկ դատարանի երկու որոշումներ, որոնցից մեկով (ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով (դիմողի գործով) 08.05.2020թ. կայացված որոշումը) Վճռաբեկ դատարանը գտել է, որ գրավատուի և գրավառուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավառուի կողմից գույքն իրացնելու պահի դրությամբ, իսկ մեկ այլ գործով, որը կայացվել է ավելի վաղ (ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015թ. կայացված որոշումը) Վճռաբեկ դատարանն արտահայտել է այլ իրավական դիրքորոշում, այն է՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման ավարտ, և գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն այդ օրվա դրությամբ:

Դիմողի պնդմամբ՝ իր գործով սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթն իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, կարող է ստեղծել մի իրավիճակ, երբ գրավառուն գույքն իրացնի այն որպես սեփականություն ընդունելուց 10 տարի հետո, որպիսի պայմաններում գրավատուն պարտավորության չափը գերազանցող (ավել կազմող) գումարը կարող է ստանալ միայն 10 տարի հետո, կամ գրավառուն գույքն ընդհանրապես չիրացնի, որպիսի պայմաններում գրավատուն երբեք չի ստանա պարտավորության չափի և գույքի արժեքի տարբերությունը: Դիմողը նշում է նաև, որ գույքի արժեքը ժամանակի ընթացքում կարող է էական տատանումների ենթարկվել (արժեզրկվել կամ արժևորվել), որի դեպքում կողմերից մեկը կարող է կրել վնասներ:

Այսպիսով, Դիմողը վիճարկում է դատարանի կողմից տրված՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի՝ (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) այն մեկնաբանությունը, համաձայն որի՝ գրավառուի և գրավատուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավառուի կողմից գույքն օտարելու պահի դրությամբ, և ոչ թե՛ գրավի առարկան որպես սեփականություն ընդունելիս:

Միաժամանակ, դիմողը գտնում է, որ սահմանադրաիրավական վեճի առարկա դրույթին իրավակիրառ պրակտիկայի կողմից հաղորդած բովանդակությունը կարող է հանգեցնել անձի սեփակա-

նության իրավունքի խախտման այն իմաստով, որ գրավառուի կողմից գույքն ի սեփականություն ընդունելուց հետո մինչև դրա օտարումը գրավատուն այդ ամբողջ ժամանակահատվածում զրկվում է իր սեփականությունն անարգել տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սահմանադրական իրավունքից:

Ըստ Դիմողի՝ ՀՕ-233-Ն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի՝ մինչև 23.06.2011թ. խմբագրությունը գործող 251-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայի կողմից տրված իմաստը՝ հաղորդած բովանդակությամբ հանդերձ, համաձայն որի գրավառուի և գրավատուի միջև փոխհաշվարկները պետք է կատարվեն գրավառուի կողմից գույքը օտարելու պահի դրությամբ, այլ ոչ թե գրավի առարկան որպես սեփականություն ընդունելիս, հակասում է Սահմանադրության 1-ին, 3, 4, 10, 60, 61, 63, 78, 79, 80, և 81-րդ հոդվածներին:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Անդրադառնալով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետին, ինչպես նաև դատական պաշտպանության, սեփականության իրավունքի և իրավական որոշակիության վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումներին՝ պատասխանողը եզրակացնում է, որ իրավական որոշակիությունը հանդիսանում է իրավական պետության ներսում գործող կարևորագույն սկզբունքներից մեկը: Սակայն, օրենքում որոշակիությունը կարող է հանգեցնել դրա (օրենքի) չափազանց կոշտության, իսկ օրենքը պետք է կարողանա համընթաց քայլել փոփոխվող հանգամանքներին: Այսինքն՝ իրավական որոշակիության սկզբունքի մեկնաբանումը պետք է ուղղված լինի ոչ թե օրենքի դրույթը կոնկրետ իրավիճակին հարմարեցնելուն, այլ դրույթը մեկնաբանելուն, որը կիրառելի կլինի կոնկրետ իրավիճակի նկատմամբ:

Ըստ դիմողի՝ մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ գրավ դրված գույքի իրացումից ստացված գումարից մնացած (պարտավորության չափը գերազանցող) գումարը տրվում է գրավատուին: Այս իսկ պատճառով, տրամաբանական է, որ գրավառու բանկի և գրավատուի միջև փոխհաշվարկները տեղի են ունենում գրավադրված գույքի իրացման օրվա դրությամբ:

Բացի դրանից, անդրադառնալով համաչափության սկզբունքին՝

պատասխանողը նշում է, որ վիճարկվող դրույթում «...որոշակի ժամկետների բացակայությունը պայմանավորված է գործարար պրակտիկայի առանձնահատկություններով, և օրենսդիր մարմնի նպատակն է եղել՝ ապահովել իրավահարաբերության սուբյեկտների հիմնական իրավունքների միջև արդարացի հավասարակշռություն: Ուստի, հետապնդվող նպատակին հասնելու համար իրավակարգավորման ընտրված միջոցը հանդիսանում է պիտանի, քանի որ այն առնվազն կարող է նպաստել այդ նպատակին հասնելու համար, անհրաժեշտ, քանի որ հետապնդվող նպատակին անհնար է հասնել մեկ այլ, սակայն նույնչափ արդյունավետ ճանապարհով, որն ավելի քիչ կսահմանափակի անձանց հիմնական իրավունքները, համարժեք, քանի որ հիմնական իրավունքին «միջամտությունը», այն է՝ իրավահարաբերության մյուս կողմերի հիմնական իրավունքների պաշտպանության ապահովման նպատակը, համարժեք է սահմանափակվող իրավունքի կշռին և նշանակությանը»:

Պատասխանողն անդրադառնում է նաև բանկերի կողմից իրականացվող գործունեության առանձնահատկություններին նշելով, որ ռիսկերը, որոնց ենթարկված է կամ կարող է ենթարկվել բանկը, ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են սպառնալ բանկի գործունեության անընդհատությանը կամ բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալի և/կամ շահույթի, ինչպես նաև գործարար համբավի վրա: Այս իսկ պատճառով, բանկի առաջնային նպատակն է ապահովել հնարավոր ռիսկերի առաջացման նվազ հավանականություն:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ պատասխանողը եզրահանգում է, որ բանկը շահագրգռված է ապահովելու բանկային գործունեության անխափան իրականացում և բանկային ռիսկերի հնարավորինս բացակայություն: Ուստի, նշյալ նպատակն իրագործելու համար բանկերը շահագրգռված են ապահովելու՝ իրենց ի սեփականություն անցած գույքերի հնարավորինս արագ իրացվելիությունը: Հետևաբար, «կատարվող փոխհաշվարկները ևս տեղի են ունենում հնարավորինս արագ և սեղմ ժամկետներում: Ուստի, «գրավատուն երբեք չի ստանա գույքի իրացումից հետո իր պարտավորության չափը գերազանցող գումարը» միտքն անընդունելի է և հակասում է բանկային գործունեության հիմնական նպատակներին»:

Բացի դրանից, ըստ պատասխանողի՝ անհրաժեշտ է հաշվի առնել, որ ակտիվների իրացվելիության ժամկետը պայմանավորված է կոնկրետ ակտիվի տեսակով, այն է՝ առավել լիկվիդային ակտիվ-

ներ, արագ իրացվող ակտիվներ, դանդաղ իրացվող ակտիվներ, դժվար իրացվող ակտիվներ: Այս ամենը հաշվի առնելով՝ օրենսդիր մարմինը վիճարկվող դրույթի ստեղծման փուլում գերծ է եղել կարգավորմանը հաղորդել այնպիսի կոշտություն, որը չի կարողանա համահունչ գործել փոփոխական հանգամանքներին զուգահեռ: Միաժամանակ, պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթն անհրաժեշտ է մեկնաբանել Օրենսգրքով սահմանված կարգավորումների համատեքստում: Մասնավորապես, Օրենսգրքի 352-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

Ըստ պատասխանողի՝ վիճարկվող դրույթն իր իրավակարգավորիչ դերով և հետապնդվող նպատակով անձի արդար դատաքնության իրավունքի իրացումը խաթարելու որևէ տարր չի պարունակում, ինչպես նաև համապատասխանում է համաչափության և որոշակիության սկզբունքներին, հետևաբար չի առաջացնում սահմանադրականության խնդիր:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) համապատասխանում է Սահմանադրությանը:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ վիճարկվող դրույթը վերաբերում է գրավառուի և գրավատուի միջև փոխադարձ հաշվարկներ կատարելու ընթացակարգային հիմնախնդրին՝ պայմանավորված այն իրողությամբ, որ իրավահարաբերության պահին գործող օրենսդրական կարգավորումների պայմաններում չի հստակեցվել իրավահարաբերության մասնակիցների միջև փոխհաշվարկներ կատարելու պահը, Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- արդյոք վիճարկվող դրույթը իրավակիրառ պրակտիկայում դրան տրված մեկնաբանությամբ, համահունչ է Սահմանադրությամբ պաշտպանվող սեփականության իրավունքի բովանդակությանը:

**4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1. Սույն գործով սահմանադրաիրավական վեճի լուծման նպա-**



տակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ գրավի ինստիտուտի հետ կապված մի շարք վերաբերելի իրավակարգավորումներին և դրանց առնչությամբ ձևավորված իրավակիրառական պրակտիկային:

Ըստ այդմ, գրավի իրավունքը, հանդիսանալով գրավառուի (պարտատիրոջ) հանդեպ հիմնական պարտավորության կատարման ապահովման միջոց, միաժամանակ գրավատուի գույքի նկատմամբ գրավառուի գույքային իրավունքն է: Այդ իրավունքը դրսևորվում է նրանով, որ գրավով ապահովված պարտավորության պարտատերը (գրավառուն) պարտապանի կողմից այդ պարտավորությունը չկատարելու դեպքում գույքի տիրոջ (գրավատուի) մյուս պարտատերերի հանդեպ գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք ունի: Դրան համապատասխան գրավառուի (պարտատիրոջ) պահանջները բավարարելու համար գրավ դրված գույքի վրա կարող է բռնագանձում տարածվել պարտապանի կողմից գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու այնպիսի հանգամանքներում, որոնց համար վերջինս պատասխանատվություն է կրում:

Օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 249-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գրավառուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի առանց դատարանի դիմելու՝ գրավի առարկայի վրա **բռնագանձում տարածելու և իրացնելու այն, այդ թվում՝** գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի **դիմաց գրավառուին կամ գրավառուի նշած երրորդ անձին ի սեփականություն հանձնելու:**

Նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերության համաձայն՝ բռնագանձման ծանուցումը պարտապանին հանձնելուց երկու ամիս հետո գրավառուն իրավունք ունի **գրավատուի անունից** իրացնելու գրավի առարկան ուղղակի վաճառքի կամ հրապարակային սակարկությունների միջոցով:

Օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 250-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերության համաձայն՝ գրավ դրված գույքն **իրացվում (վաճառվում)** է հրապարակային սակարկություններով՝ հրապարակային սակարկությունների մասին օրենքով սահմանված կարգով:

Օրենսգրքի՝ իրավահարաբերության պահին գործող խմբագրությամբ 251-րդ հոդվածի 1-ին մասի (վիճարկվող դրույթի) համաձայն՝ գրավ դրված գույքի իրացումից **ստացված** գումարից՝ այդ գույքի

վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը վճարելու համար անհրաժեշտ գումարներ պահելուց հետո, բավարարվում են գրավառուի պահանջները, իսկ մնացած գումարը տրվում է գրավատուին:

Վերոգրյալ իրավանքների համադրված վերլուծությունից և, մասնավորապես, 249-րդ հոդվածի 1-ին մասում՝ «այդ թվում», նույն հոդվածի 2-րդ մասի 3-րդ պարբերությունում՝ «գրավատուի անունից», 250-րդ հոդվածի 1-ին մասի առաջին պարբերությունում՝ «վաճառվում է», 251-րդ հոդվածի 1-ին մասում՝ «ստացված» արտահայտությունների օգտագործումից բխում է, որ թեպետ օրենսդիրը դիտարկվող 249-րդ հոդվածի 1-ին մասում «բռնագանձում տարածելու և իրացնելու այն» արտահայտության ներքո նկատի է ունեցել նաև գրավ դրված գույքը **հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց** գրավառուին ի սեփականություն հանձնելը, ինչը ենթադրում է, որ գույքի արժեքը հիմնական պարտավորության համապատասխան չափից ավելին լինելու դեպքում գույքի արժեքի մնացած մասը ենթակա է վերադարձման գրավատուին, այդուհանդերձ, Օրենսգրքի մյուս դրույթներում **ուղղակիորեն** իրավակարգավորման է ենթարկել բացառապես գրավադրված գույքի վաճառքի հետ կապված հարաբերությունները: Այսինքն՝ տվյալ դեպքում իրավական անորոշությունը պայմանավորված է եղել **օրենսդրական բացով**, որը դրսևորվել է նրանում, որ թեպետ օրենսդիրն իրացման ներքո նկատի է ունեցել նաև գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին ի սեփականություն հանձնելը, սակայն, Օրենսգրքի հետագա տեքստում **ուղղակիորեն** չի կարգավորել ի սեփականություն հանձնված գույքի և այդ գույքի հիմնական պարտավորության համապատասխան չափը գերազանցող գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները:

Մինևույն ժամանակ, Վճռաբեկ դատարանը, ելնելով օրենքի միատեսակ կիրառությունն ապահովելու իր սահմանադրական գործառնությունից, իր դիրքորոշմամբ վերացրել է նշված օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշությունը՝ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015թ. կայացված որոշմամբ արտահայտելով իրավական դիրքորոշում առ այն, որ գրավադրված գույքի իրացումից ստացված գումարի բաշխումը կարգավորող Օրենսգրքի 251-րդ հոդվածի մինչև «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ 23.06.2011 թվականի ՀՕ-233-Ն օրենքով կատարված

փոփոխությունը գործող դրույթները տարածվել են նաև գրավադրված գույքը գրավառուին ի սեփականություն անցնելու դեպքերի վրա, քանի որ բռնագանձման հիմքով գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն ընդունելը ևս համարվում է գրավի իրացում: Նույն որոշմամբ Վճռաբեկ դատարանն արտահայտել է նաև իրավական դիրքորոշում առ այն, որ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման ավարտ:

Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ գրավի իրավունքը, ըստ էության, այլ անձի գույքի նկատմամբ ունեցած այնպիսի իրավունք է, որի շնորհիվ գրավառուն հնարավորություն ունի պարտապանի կողմից պարտավորությունը չկատարելու դեպքում գրավադրված գույքի արժեքից բավարարելու իր պահանջները: Այսինքն՝ ի վերջո գրավի նպատակը գրավառուի գրավով ապահովված պարտավորությունը չկատարելու դեպքում գրավ դրված գույքի արժեքից բավարարում ստանալն է, հետևաբար գրավառուի կողմից Օրենսգրքի 249-րդ հոդվածի 1-ին կետին համապատասխան՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը, ըստ էության, նշանակում է գրավի առարկայի բռնագանձման ավարտ:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ հետագայում 23.06.2011թ. ընդունված ՀՕ-233-Ն օրենքով Օրենսգրքի 251-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որով օրենսդիրն արդեն ուղղակիորեն կարգավորել է ի սեփականություն հանձնված գույքի և այդ գույքի՝ հիմնական պարտավորության համապատասխան չափը գերազանցող գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները՝ այդպիսով օրենսդրական մակարդակում վերացնելով դիտարկվող օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշությունը: Մասնավորապես, Օրենսգրքի՝ 23.06.2011թ. ընդունված ՀՕ-233-Ն օրենքի խմբագրությամբ 251-րդ հոդվածի 3-րդ մասով օրենսդիրը գրավադրված գույքը վարկատուին բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցնելու դեպքում **գույքն իրացված է համարել**:

1. դրա հետագա օտարման օրը, եթե նման օտարումը տեղի է ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում,

2. գույքն ի սեփականություն վերցնելուն հաջորդող վեցամսյա ժամկետի վերջին օրը՝ **այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գնով**, եթե այդ վեցամսյա ժամկետում գույքը չի օտարվել:

Ընդ որում, օրենսդիրը հաշվի չի առնում 6 ամսվա ընթացքում

գույքը չօտարելու որևէ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող նորմի սահմանադրաիրավական բովանդակությունը հանգում է նրան, որ գրավադրված գույքը գրավառուին ի սեփականություն հանձնելը համարվում է այդ գույքի իրացում, և այդ պահից ծագում է գրավի առարկայի վրա բռնագանձում տարածելու և իրացնելու համար ծախսերը և գրավով ապահովված, չկատարված (ոչ պատշաճ կատարված) պարտավորության գումարը գերազանցող գրավի առարկայի արժեքի մնացած մասը գրավառուին վերադարձնելու՝ գրավառուի պարտականությունը:

Այդ առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթը, հաշվի առնելով նաև այդ դրույթի իրացման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի կողմից ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015թ. կայացված որոշմամբ արտահայտված դիրքորոշումն առ այն, որ «գրավատուն ևս չպետք է գրկվի պարտավորությունից անհամեմատ ավելի մեծ արժեքով գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն ընդունելու դեպքում գրավի առարկայի արժեքի և պարտավորության տարբերությունը հետ պահանջելու իրավունքից» և «օրենսդիրը երկուստեք երաշխիքներ է նախատեսել ինչպես գրավառուի, այնպես էլ գրավատուի համար՝ հավասարակշռելով վերջիններիս իրավունքները և օրինական շահերը», միտված է ապահովելու Սահմանադրությամբ նախատեսված անձի սեփականության իրավունքի արդյունավետ իրացումը:

Այս առումով Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գրավով ապահովված, չկատարված (ոչ պատշաճ կատարված) պարտավորության գումարը գերազանցող գրավի առարկայի արժեքի մնացած մասի նկատմամբ նախկին գրավատուն ունի սեփականության իրավունքի օրինական ակնկալիքի իրավունք:

4.2. Սահմանադրության 60 և 75-րդ հոդվածներով ամրագրված իրավակարգավորումների ուժով պետությունը երաշխավորում է անձի՝ սեփականության իրավունքի նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքի իրացումը, ի թիվս այլնի՝ վերջինիս իրացման համար արդյունավետ ընթացակարգերի և կառուցակարգերի օրենսդրական ամրագրման միջոցով:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ կոնվենցիոն նորմի իմաստով գույք է համարվում ոչ միայն գոյություն ունեցող նյութական միջոցը, այլ նաև նյութական միջոցը ձեռք բերելու **լեզիտիմ ակնկալիքը** (տե՛ս,

մասնավորապես, Տրգոն ընդդեմ Խորվաթիայի գործով, Trgo v. Croatia, 2009թ. հունիսի 11-ի վճիռը, կետ 44):

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-723, ՍԴՈ-741, ՍԴՈ-881 որոշումներում փաստել է սեփականության իրավունք ձեռք բերելու նկատմամբ **լեզիտիմ ակնկալիքների** հիմքով սեփականության իրավունքի պաշտպանության հնարավորությունը: Ավելին, 18.03.2008թ. ՍԴՈ-741 որոշման 8-րդ կետում Սահմանադրական դատարանն արձանագրել է. «ՀՀ Սահմանադրության 31 հոդվածով երաշխավորված՝ սեփականության իրավունքի պաշտպանությունը տրամադրվում է այն անձանց, ում սեփականության իրավունքն օրենքով սահմանված կարգով արդեն իսկ ճանաչված է, կամ ովքեր օրենքի ուժով ունեն սեփականության իրավունք ձեռք բերելու օրինական ակնկալիք»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ չնայած գրավի առարկայի բռնագանձման գործընթացի ավարտի վերաբերյալ գոյություն ունեցող և սույն որոշման մեջ մատնանշված կայուն մեկնաբանությանը, ըստ որի՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման և իրացման ավարտ, այդուհանդերձ, իրավակիրառական պրակտիկան կապված գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման և իրացման դեպքում գրավատուին վերադարձման ենթակա գումարի հաշվարկման առանձնահատկությունների, մասնավորապես (նախկին) գրավատուի և (նախկին) գրավառուի միջև գրավադրված գույքի իրացումից հետո փոխհաշվարկների իրականացման պահի հետ, զարգացել է այն տրամաբանությամբ, ըստ որի՝ վերջիններիս միջև փոխհաշվարկի կատարման համար պետք է հիմք ընդունվեն ոչ թե գույքը գրավառուի սեփականության անցնելու (իրացնելու), այլ (նախկին) գրավառուի կողմից այդ գույքը վաճառելու կամ այդպիսի իրական հնարավորություն ունենալու պահը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթի վերոհիշյալ մեկնաբանության պայմաններում ոչ միայն փոխակերպվում են, մասնավորապես, ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով կայացված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ հետապնդվող նպատակները (սեփականության իրավունքի պաշտպանություն, գրավառուի և գրավատուի շահերի ողջամիտ հավասարակշռում և այլն), այլ նաև անհամաչափորեն սահմանափակվում է անձի, տվյալ դեպքում՝ գրավատուի սեփականության իրավունքի ձեռքբերման նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքը, այն առումով, որ գույքն իրացված լինելու

պայմաններում անորոշ ժամանակահատվածով հետաձգվում է դրան հաջորդող գրավադրված գույքի հետ կապված փոխհաշվարկների, հետևաբար դրա արդյունքներով վերադարձման ենթակա գումարը նախկին գրավատուի սեփականությանն հանձնելու ժամկետը:

Եզրափակելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը համահունչ չէ Սահմանադրությամբ ամրագրված անձի սեփականության իրավունքի երաշխիքներին, քանի որ նման պայմաններում գրավատուն իր համար անկանխատեսելի և անորոշ ժամկետով զրկվում է գրավառուի սեփականությանն անցած գույքի՝ հիմնական պարտավորության համապատասխան չափը գերազանցող և իր սեփականությունը հանդիսացող գումարը (դրա նկատմամբ գրավատուն օժտված է լեզիտիմ ակնկալիքի իրավունքով) իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը, 170-րդ հոդվածի 1-ին, 4-րդ մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման և իրացման ավարտ, և այդ պահի դրությամբ պետք է կատարվեն գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկները:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ

զալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

9 մարտի 2021 թվականի  
ՍԴՈ-1583



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ «ԱՐՏԱԴՐԱՏՊԱԳՐԱԿԱՆ» ՓԲԸ-Ի ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍՊՐՔԻ 251-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ (ՄԻՆՉԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի ՀՕ-233-Ն ՕՐԵՆՔԻ ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ ԳՈՐԾՈՂ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ԻՐԱՎԱԿԻՐԱՌ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾՈՎ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 9-ԻՆ ԿԱՅԱՑՎԱԾ ՍԴՈ-1583 ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Սահմանադրական դատարանը, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննելով «Արտադրա-տպագրական» ՓԲԸ-ի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասի՝ (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը, 2021 թվականի մարտի 9-ի ՍԴՈ-1583 որոշմամբ (հրապարակվել է 2021 թվականի մարտի 12-ին) որոշել է.

*«1. Քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ գրավի*

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(101)2021



առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման և իրացման ավարտ, և այդ պահի դրությամբ պետք է կատարվեն գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկները:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 251-րդ հոդվածի 1-ին մասը (մինչև 2011 թվականի հունիսի 23-ի ՀՕ-233-Ն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ) դիմողի նկատմամբ կիրառվել է սույն որոշման առաջին կետում տրված մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանությամբ: (...):»

Համաձայն չլինելով Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 9-ի ՍԴՈ-1583 որոշմանը՝ Սահմանադրական դատարանի դատավոր Ե. Խունդկարյանս շարադրում եմ իմ հատուկ կարծիքը՝ որոշման պատճառաբանական և եզրափակիչ մասերի վերաբերյալ:

1. Անդրադառնալով Սահմանադրական դատարանում գործի քննության առիթ հանդիսացած դիմումին՝ հարկ եմ համարում նշել, որ Սահմանադրական դատարանի որոշման մեջ արտացոլված դիմումի համառոտ շարադրանքից պարզ է դառնում, որ դիմողը բարձրացնում է վիճարկվող դրույթում իրավական անորոշության խնդիր, որը դրսևորվում է նրանում, որ վիճարկվող դրույթը չի հստակեցնում, թե որ պահի դրությամբ պետք է կատարվեն գրավատուի և գրավառուի միջև փոխհաշվարկները, իսկ Վճռաբեկ դատարանը թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով (դիմողի գործով) և թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով կայացրած որոշումներով այդ հարցի վերաբերյալ արտահայտել է իրարից տարբերվող իրավական դիրքորոշումներ:

Նախ վերոգրյալի կապակցությամբ հարկ եմ համարում նշել հետևյալը.

Սահմանադրության 1-ին հոդվածի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունն ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական, իրավական պետություն է:

Սահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և

ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ:

Իր բազմաթիվ որոշումներում Սահմանադրական դատարանն անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ նշելով, մասնավորապես.

- «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլոց, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը» (13.05.2008 թվականի ՍԴՈ-753 որոշում),

- «Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (09.06.2015 թվականի ՍԴՈ-1213 որոշում),

- «(...) իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է նաև դատարանների որոշումների հստակություն և կանխատեսելիություն, ինչը թույլ է տալիս իրավահարաբերությունների մասնակիցներին համապատասխան պատկերացում կազմել իրենց վարքագծի հնարավոր հետևանքների մասին» (03.05.2016 թվականի ՍԴՈ-1270 որոշում):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նույնպես իր վճիռներում բազմիցս անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ «օրենքով նախատեսված» արտահայտության պահանջներից մեկն այն է, որ համապատասխան միջոցը պետք է լինի կանխատեսելի: Նորմը չի կարող համարվել «օրենք», քանի դեռ ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որպեսզի անձին հնարավորություն տա կարգավորելու իր վարքագիծը. անձը

պետք է կարողանա տվյալ հանգամանքներում ողջամիտ կերպով կանխատեսել իր տվյալ գործողության հետևանքները: Այդ հետևանքները չեն կարող կանխատեսելի լինել բացարձակ որոշակիությամբ: Թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին<sup>1</sup>:

Անդրադառնալով դատարանների կողմից օրենքների մեկնաբանմանը՝ հարկ եմ համարում նշել, որ այն բնորոշ է դատարանների գործունեությանը, և որքան էլ իրավական նորմերը հստակ լինեն, դատական մեկնաբանումն անխուսափելի է և անհրաժեշտ: Ասվածը, իհարկե, չի նշանակում, որ թույլատրելի են դատարանների կողմից օրենքների կամայական կամ իրարամերժ մեկնաբանությունները: Դրանք, անձանց համար անկանխատեսելի դարձնելով իրավական նորմերի կիրառումը, հետևողականությունն ապահովող մեխանիզմի բացակայության դեպքում կարող են հանգեցնել նաև արդար դատաքննության իրավունքի խախտման և խաթարել հասարակության վստահությունը դատական համակարգի նկատմամբ<sup>2</sup>: Այս նկատառումներից ելնելով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր որոշումներում արձանագրել է, որ Պայմանավորվող պետությունները կրում են պարտականություն իրենց իրավական համակարգերը կազմակերպելու այնպես, որ խուսափեն իրար հակասող դատական ակտերի ընդունումից<sup>3</sup>:

Հայաստանի Հանրապետությունում օրենքների և այլ նորմատիվ իրավական ակտերի միատեսակ կիրառությունն ապահովելու գործառնությունը վերապահված է Վճռաբեկ դատարանին (Սահմանադրության 171-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ), ուստի Վճռաբեկ դատարանի կողմից հակասական որոշումների կայացումն առավել վտանգավոր է:

Միևնույն ժամանակ հարկ եմ համարում ընդգծել, որ Վճռաբեկ դատարանը որոշումներ է կայացնում և իր սահմանադրական գործառնություններն իրականացնում է դատական ակտերն օրենքով սահմանված լիազորությունների շրջանակներում վերանայելու միջոցով: Այսինքն՝ Վճռաբեկ դատարանն իրավական դիրքորոշումներ է հայտնում միայն կոնկրետ գործերի շրջանակներում ներկայացվող

<sup>1</sup> Տե՛ս, ECHR, case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21.12.2004.

<sup>2</sup> Հակասական դատական ակտերի առկայության դեպքում արդար դատաքննության իրավունքի խախտման պայմանների վերաբերյալ՝ տե՛ս, ECHR, case of Iordan Iordanov and others v. Bulgaria, application no. 23530/02, 02.07.2009.

<sup>3</sup> Տե՛ս, ECHR, case of Nejdett Şahin and Perihan Şahin v. Turkey [GC], application no. 13279/05, 20.10.2011.

վճռաբեկ բողոքների քննության արդյունքում: Դրանով պայմանավորված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվել է, որ նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը:

Պատահական չէ վերը նշված դրույթում օրենսդրի կողմից «նույնանման փաստեր» արտահայտության օգտագործումը: Այսինքն այդ դրույթը չի ենթադրում որևէ դատարանի (այդ թվում՝ Վճռաբեկ դատարանի) կողմից մեկ այլ գործով Վճռաբեկ դատարանի արտահայտած դիրքորոշումների մեխանիկական կիրառում առանց հաշվի առնելու գործի փաստերը: Ընդ որում, այդ հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ «(...) յուրաքանչյուր գործ իր փաստական հանգամանքներով եզակի է, և Վճռաբեկ դատարանի (...) դատական ակտով տրված իրավական մեկնաբանության՝ համապատասխան գործով կիրառելիության հարցը լուծելիս դատարանները պետք է համադրեն նախադեպային գործի և քննության առարկա գործի էական նշանակություն ունեցող փաստերը: Այսինքն՝ դատարանը նախադեպային որոշմամբ տրված օրենքի մեկնաբանության՝ քննվող գործով կիրառելիության հարցը լուծելիս պետք է նախ առանձնացնի այն փաստական հանգամանքները, որոնք էական նշանակություն են ունեցել նախադեպային որոշման կայացման համար և այնուհետև դրանք համադրի քննվող քաղաքացիական կամ վարչական գործի փաստական հանգամանքների հետ՝ որոշելով դրանց նույնական լինել կամ չլինելու հարցը»<sup>4</sup>:

Ավելին, այն հանգամանքը, որ խնդրահարույց կարող է լինել միայն նման գործերով կայացված հակասական դատական ակտերի առկայությունը, բխում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի պրակտիկայից<sup>5</sup>: Այս դիրքորոշումն է արտահայտել նաև Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը: Վերջինս, մասնավորապես, նշել է, որ դատական ակտի ընդունումը ենթադրում է քննվող գործի բոլոր առանձնահատուկ հանգամանք-

<sup>4</sup> Տե՛ս, ըստ հայցի «Արաբկիր Ալկո Լիկյոր-Օղու գործարան» ՍՊԸ-ի ընդդեմ Սոս Բաղդասարյանի՝ բնակարանի 1/7 մասի սեփականատեր ճանաչելու և բնակարանի մասի վրա բռնագանձում տարածելու պահանջների մասին գործով Վճռաբեկ դատարանի 25.07.2008 թվականի թիվ 3-480 (ՎԴ) որոշումը:

<sup>5</sup> Տե՛ս, ECHR, case of Emel Boyraz v. Turkey, application no. 61960/08, 02.12.2014.

ների ուսումնասիրություն: Նախադեպային իրավունքի կշիռն այն է, որ նախորդ նախադեպային նշանակության որոշումն իսկապես հիմնված է եղել էականորեն նման փաստերի վրա: Նախադեպը կիրառելիս պատշաճ ուշադրություն է պետք դարձնել այն համատեքստին ու հանգամանքներին, որոնցում այն ձևավորվել է: Երկու առանձին վեճերի տարբեր կարգավորումները չպետք է դիտվեն որպես միմյանց հակասող նախադեպերի ձևավորմանը նպաստող գործընթաց, քանի դեռ նման կարգավորումները հիմնավորված են այդ գործերի փաստերի տարբերությամբ<sup>6</sup>:

Վերոգրյալի համատեքստում հարկ եմ համարում անդրադառնալ թիվ ԵԿԴ/0384/02/13 և թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործերի փաստերին՝ պարզելու համար դրանց նույնանման լինելու հանգամանքը, ինչպես նաև հարցերին, որոնց Վճռաբեկ դատարանն անդրադարձել է այդ գործերով ներկայացված բողոքների քննության արդյունքներով կայացված որոշումներով:

Այսպես՝ թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով քննվել է քաղաքացու և բանկի միջև ծագած վեճ: Բանկն՝ արտադատական կարգով բռնագանձում էր տարածել քաղաքացու՝ գրավ դրված գույքի վրա, այն ընդունել էր ի սեփականություն, ապա վաճառել երրորդ անձի՝ մինչև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 251-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրող 23.06.2011 թվականին ընդունված ՀՕ-233-Ն օրենքն ուժի մեջ մտնելը:

Առաջին ատյանի և վերաքննիչ դատարանները քաղաքացու և բանկի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ կիրառելի էին համարել Օրենսգրքի՝ 23.06.2011 թվականին ընդունված ՀՕ-233-Ն օրենքով կատարված փոփոխություններից հետո գործող կարգավորումները և գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկների համար հիմք էին ընդունել գրավի առարկայի շուկայական արժեքը:

Վճռաբեկ դատարանը, թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով ներկայացված վճռաբեկ բողոքի քննության արդյունքներով 30.04.2015 թվականին կայացված որոշմամբ անդրադառնալով ժամանակի մեջ Օրենսգրքի 251-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրող 23.06.2011 թվականին ընդունված ՀՕ-233-Ն օրենքի գործողությանը, արձանագրել է, որ գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն ընդունելը ևս համարվում է գրավի առարկայի իրացում, Օրենսգրքի 251-րդ հոդվածը նոր խմբագրությամբ

<sup>6</sup> St' u, Consultative Council of European Judges (CCJE), Opinion no. 20 (2017) to the attention of the Committee of Ministers of the Council of Europe on the role of courts with respect the uniform application of the law.

շարադրող 23.06.2011 թվականին ընդունված ՀՕ-233-Ն օրենքը կիրառելի է միայն այն գույքի հետ կապված հարաբերությունների նկատմամբ, որը գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) սեփականության իրավունքով անցել է այդ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո: Վճռաբեկ դատարանը, նաև վկայակոչելով թիվ ԵԱՆԴ/0399/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշմամբ արտահայտված իրավական դիրքորոշումները, արձանագրել է, որ մինչև 23.06.2011 թվականին ընդունված ՀՕ-233-Ն օրենքով Օրենսգրքի 251-րդ հոդվածում կատարված փոփոխությունը բռնագանձման հիմքով գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն ընդունելու դեպքում Օրենսգրքի 251-րդ հոդվածով նախատեսված փոխհաշվարկների համար **պետք է հիմք ընդունվի այդ գույքի ոչ թե շուկայական, այլ լիկվիդացիոն արժեքը**: Վերոգրյալի հիման վրա Վճռաբեկ դատարանը գտել է, որ դատարանները սխալ են որոշել կիրառման ենթակա իրավանորմը, որպիսի հիմքով նաև ապացուցման առարկան:

Ի հակադրություն այդ գործի թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով քննվել է իրավաբանական անձի և բանկի միջև ծագած վեճ: Բանկն արտադատական կարգով բռնագանձում էր տարածել իրավաբանական անձի՝ գրավ դրված գույքի վրա: Բանկը, այդ գույքն ընդունելով ի սեփականություն, տևական ժամանակ զրկված էր եղել այն վաճառելու և դրա հաշվին պարտապանի հանդեպ իր ունեցած պահանջի փաստացի բավարարում ստանալու հնարավորությունից, ինչը **պայմանավորված էր եղել գրավատուի գործողություններով**: Մասնավորապես գրավ դրված գույքի բռնագանձման արդյունքում բանկի սեփականության իրավունքի գրանցման իրավաչափության վերաբերյալ գրավատուի կողմից ներկայացված հայցադիմումի հիման վրա հարուցված վարչական գործով, ինչպես նաև սույն դիմումի հիմքում ընկած թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով արգելանք էր դրվել բանկին ի սեփականություն անցած գույքի վրա, իսկ այդ գույքի նկատմամբ կիրառված վերջին արգելանքը վերացվելուց մեկ օր հետո բանկն այն վաճառել էր երրորդ անձի:

Այդ գործով Վճռաբեկ դատարանը որպես գրավ դրված գույքի բռնագանձման և իրացման դեպքում գրավատուի և գրավառուի միջև փոխհաշվարկի կատարմանը վերաբերող իրավակարգավորումների կիրառման **ուղենիշ արձանագրել է, որ փոխհաշվարկի արդյունքում գրավառուն չպետք է հայտնվի ավելի անբարենպաստ վիճակում, քան կլիներ, եթե պարտավորությունը գրավով ապահով-**

**ված չլինել:**

Վճռաբեկ դատարանը գտել է, որ տվյալ դեպքում փոխհաշվարկի կատարման համար պետք է հիմք ընդունվեն ոչ թե գույքը բանկի կողմից ի սեփականություն ընդունելու, այլ կոնկրետ դեպքում հաշվի առնելով գործի համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքների առանձնահատկությունները՝ այն բանկի կողմից վաճառվելու դրությամբ առկա տվյալները **հիմք ընդունելով այդ պահին գույքի լիկվիդացիոն արժեքը**: Ըստ Վճռաբեկ դատարանի հակառակ դեպքում կատեղծվեր իրավիճակ, երբ բանկը, ի սեփականություն ընդունելով գրավ դրված գույքը, ստիպված կլիներ այդ պահին գույքի լիկվիդացիոն արժեքի հիման վրա և այն ի սեփականություն ընդունելու հետ կապված ծախսերի հաշվառմամբ գրավատուի հետ կատարել փոխհաշվարկ այն պայմաններում, երբ դրանից հետո տևական ժամանակ բանկը գրկված էր այդ գույքը վաճառելու և վաճառքից ստացված միջոցների հաշվին իր պահանջները փաստացի բավարարելու իրական հնարավորությունից ընդ որում, այդ հնարավորությունից գրկված լինելով հենց գրավատուի գործողությունների արդյունքում: Վճռաբեկ դատարանը գտել է, որ նման մոտեցումը կխախտեր գրավատուի և գրավառուի իրավունքների և օրինական շահերի միջև ողջամիտ հավասարակշռությունը: **Վճռաբեկ դատարանն ընդգծել է, որ գրավատուի գործողությունները չպետք է հանգեցնեն գրավառուի իրավունքների անհամաչափ սահմանափակման իմաստագրկելով գրավի իրավունքը**:

Վճռաբեկ դատարանի այս որոշման ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Վճռաբեկ դատարանը դրանով անդրադարձել է փոխհաշվարկների կատարման հարցին միայն վերը նշված փաստերի պայմաններում, Վճռաբեկ դատարանը չի քննարկել այն իրավիճակները, երբ գրավ դրված գույքի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, կամ դրանք գրավատուի գործողությունների հետևանքը չեն, կամ այն իրավիճակները, երբ գրավառուի կողմից ի սեփականություն ընդունված գույքի նկատմամբ սահմանափակումների վերացումից հետո տևական ժամանակ այն չի վաճառվում:

Վերը նշված երկու քաղաքացիական գործերի փաստերի համեմատությունը թույլ է տալիս արձանագրել, որ այդ գործերի փաստերը նույնանման չեն, դրանք էապես տարբերվում են, ինչն ինքնին կասկածի տակ է դնում հակասական դատական ակտերի առկայության վերաբերյալ դիմողի պնդումը, քանի որ վերը վկայակոչված

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021



դիրքորոշումների համատեքստում կարելի է քննարկել հակասական դատական ակտերի առկայության կամ այդ հիմքով անձի հիմնական իրավունքների խախտման հարց միայն այն դեպքում, երբ քննարկվող դատական ակտերը կայացվել են նույնանման փաստերով գործերի շրջանակներում:

Ինչ վերաբերում է դիմումով բարձրացվող այն խնդրին, որ կարող է ստեղծվել մի իրավիճակ, երբ գրավառուն գույքն իրացնի այն որպես սեփականություն ընդունելուց 10 տարի հետո, կամ այն ընդհանրապես չիրացնի, ապա նշվածն ընդհանուր վերացական հիմնավորում է, առնչություն չունի դիմողի մասնակցությամբ ծավալված իրավահարաբերության հետ, ուստի չէր կարող քննության առարկա դառնալ տվյալ դեպքում ներկայացված անհատական դիմումի հիման վրա իրականացվող սահմանադրական վերահսկողության շրջանակներում:

Բացի այդ, Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք՝ կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական վերը նշված կարգավորումից հետևում է, որ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից Սահմանադրական դատարան դիմումի ներկայացումը թույլատրվում է, եթե, ի թիվս այլնի, այն վերաբերում է նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությանը՝ հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը: Փաստորեն, Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է ոչ թե ամբողջական, այլ՝ նորմատիվ սահմանադրական գանգատի ինստիտուտը, ինչը, մասնավորապես, ենթադրում է, որ թեև սահմանադրական գանգատը կապված է կոնկրետ գործի հետ, սակայն այն կարող է միայն վերաբերել դատական ակտի հիմքում ընկած նորմատիվ իրավական ակտի, և ոչ թե դատական ակտի սահմանադրականությանը: Հետևաբար անձը չի կարող Սահմանադրական դատարանի առջև բարձրացնել, իսկ վերջինս էլ իրավասու չէ անդրադառնալ նորմատիվ իրավական ակտի կիրառման



իրավաչափության հարցին<sup>7</sup>:

Վերոգրյալով պայմանավորված՝ Սահմանադրական դատարանում ենթակա չեն քննության նաև անհատական այն դիմումները, որոնք կապված են ոչ թե վիճարկվող դրույթների սահմանադրականության հարցի հետ, այլ վերաբերում են դրանց կիրառման իրավաչափության հարցին, նույնիսկ եթե դիմողը Սահմանադրական դատարանին ըստ ձևի ներկայացնում է վիճարկվող դրույթները՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու խնդրանք<sup>8</sup>: Ընդ որում, Սահմանադրական դատարանն իր հերթին կրում է պարտականություն չանդրադառնալու վիճարկվող դրույթների կիրառման իրավաչափության հարցին:

Կարծում եմ, որ տվյալ դեպքում դիմողի կողմից Սահմանադրական դատարանի առջև բարձրացվող խնդիրներն իրականում վերաբերում են Վճռաբեկ դատարանի կողմից նորմատիվ ակտի դրույթների կիրառությանը: Այլ կերպ՝ դիմողը, չհամաձայնելով իր մասնակցությամբ գործով վիճարկվող դրույթի կիրառմամբ Վճռաբեկ դատարանի կողմից վեճին տրված լուծմանը, ըստ էության քողարկված ձևով բարձրացնում է այնպիսի խնդիրներ, որոնք կապված են ոչ թե նորմատիվ ակտի դրույթի սահմանադրականությանը, այլ դատական ակտով կոնկրետ գործի փաստերի նկատմամբ դրա կիրառման իրավաչափության հարցին: Փաստորեն, դիմողը Սահմանադրական դատարանին ըստ ձևի ներկայացնելով վիճարկվող դրույթը՝ իրավակիրառ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ Սահմանադրությանը հակասող ճանաչելու խնդրանք, ըստ էության բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց, ինչը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն, **Սահմանադրական դատարանում քննության ենթակա հարց չէ:**

Այդուհանդերձ, չնայած դրան՝ Սահմանադրական դատարանը, ներկայացված դիմումի հիման վրա քննելով գործը, ընդունել է ըստ էության որոշում, որով արձանագրել է, որ Օրենսգրքի վերաբերելի իրավակարգավորումներում առկա է եղել իրավական անորոշություն, և «(...) տվյալ դեպքում իրավական անորոշությունը պայմա-

<sup>7</sup> Առավել մանրամասն՝ տե՛ս, օրինակ, European Commission for Democracy through Law (Venice Commission), Revised report on individual access to constitutional justice, CDL-AD(2021)001, 22.02.2021.

<sup>8</sup> Տե՛ս, օրինակ, Սահմանադրական դատարանի 22.11.2011 թվականի ՍԴՈ-998, 19.05.2015 թվականի ՍԴՈ-1205, 11.04.2017 թվականի ՍԴՈ-1361 որոշումները, 17.03.2009 թվականի ՍԴԱՈ-21, 22.02.2019 թվականի ՍԴԱՈ-17 աշխատակարգային որոշումները:

նավորված է եղել **օրենսդրական բացով**, որը դրսևորվել է նրանում, որ թեպետ օրենսդիրն իրացման ներքո նկատի է ունեցել նաև գրավ դրված գույքը հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց գրավառուին ի սեփականություն հանձնելը, սակայն, Օրենսգրքի հետագա տեքստում **ուղղակիորեն** չի կարգավորել ի սեփականություն հանձնված գույքի և այդ գույքի հիմնական պարտավորության համապատասխան չափը գերազանցող գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները»:

Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ **Վճռաբեկ դատարանն իր դիրքորոշմամբ վերացրել է նշված օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշությունը**, թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015 թվականին կայացված որոշմամբ:

Այնուհետև Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «(...) չնայած գրավի առարկայի բռնագանձման գործընթացի ավարտի վերաբերյալ գոյություն ունեցող և սույն որոշման մեջ մատնանշված կայուն մեկնաբանությանը, ըստ որի՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման և իրացման ավարտ, այդուհանդերձ, իրավակիրառական պրակտիկան կապված գրավառուի կողմից գրավի առարկայի բռնագանձման և իրացման դեպքում գրավատուին վերադարձման ենթակա գումարի հաշվարկման առանձնահատկությունների, մասնավորապես (նախկին) գրավատուի և (նախկին) գրավառուի միջև գրավադրված գույքի իրացումից հետո փոխհաշվարկների իրականացման պահի հետ, զարգացել է այն տրամաբանությամբ, ըստ որի՝ վերջիններիս միջև փոխհաշվարկի կատարման համար պետք է հիմք ընդունվեն ոչ թե գույքը գրավառուի սեփականության անցնելու (իրացնելու), այլ (նախկին) գրավառուի կողմից այդ գույքը վաճառելու կամ այդպիսի իրական հնարավորություն ունենալու պահը»:

Սահմանադրական դատարանի որոշման մեջ տեղ գտած՝ վերը նշված վերլուծություններից հետևում է, որ ըստ Սահմանադրական դատարանի՝ գրավառուին ի սեփականություն հանձնված գույքի և այդ գույքի հիմնական պարտավորության համապատասխան չափը գերազանցող գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունների կարգավորման կապակցությամբ **օրենսդրական բացի հետևանքով առկա է եղել իրավական անորոշություն, որը վերացվել է** թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշմամբ, սակայն վերջինս,

չնայած գրավի առարկայի բռնագանձման գործընթացի ավարտի վերաբերյալ գոյություն ունեցող իր կողմից տրված կայուն մեկնաբանությանը, դիմողի մասնակցությամբ գործով այլ ուղղությամբ է զարգացրել իրավակիրառ պրակտիկան: Այլ կերպ ասած՝ Սահմանադրական դատարանը համարել է, որ գրավառուին ի սեփականություն հանձնված գույքի և այդ գույքի հիմնական պարտավորության համապատասխան չափը գերազանցող գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունների կարգավորման կապակցությամբ օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշությունը թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշմամբ վերացվել է, իսկ դիմողի մասնակցությամբ գործով Վճռաբեկ դատարանը շեղվել է իր կողմից նախկինում կայացված որոշման տրամաբանությունից:

Նման պայմաններում ստացվում է, որ Սահմանադրական դատարանն իրականում քննության առարկա է դարձրել ոչ թե վիճարկվող դրույթի սահմանադրականությունը, այլ Վճռաբեկ դատարանի կողմից սույն գործով վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարցը թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 30.04.2015 թվականի որոշմամբ Օրենսգրքի համապատասխան իրավակարգավորումներին տրված մեկնաբանությունների պայմաններում, ինչը չի բխում անհատական սահմանադրական գանգատի ինստիտուտի էությունից:

2. Սահմանադրական դատարանի որոշման համաձայն՝ վիճարկվող դրույթի այնպիսի մեկնաբանության պայմաններում, համաձայն որի՝ (նախկին) գրավատուի և (նախկին) գրավառուի միջև գրավադրված գույքի իրացումից հետո փոխհաշվարկի կատարման համար պետք է հիմք ընդունվեն ոչ թե գույքը գրավառուի սեփականության անցնելու (իրացնելու), այլ (նախկին) գրավառուի կողմից այդ գույքը վաճառելու կամ այդպիսի իրական հնարավորություն ունենալու պահը, ոչ միայն փոխակերպվում են, մասնավորապես, թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով կայացված որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշմամբ հետապնդվող նպատակները (սեփականության իրավունքի պաշտպանություն, գրավառուի և գրավատուի շահերի ողջամիտ հավասարակշռում և այլն), այլ նաև անհամաչափորեն սահմանափակվում է անձի, տվյալ դեպքում՝ գրավատուի սեփականության իրավունքի ձեռքբերման նկատմամբ օրինական ակնկալիքների իրավունքը, այն առումով, որ գույքն իրացված լինելու պայմաններում անորոշ ժամանակա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021  
363

հատվածով հետաձգվում է դրան հաջորդող՝ գրավադրված գույքի հետ կապված փոխհաշվարկների, հետևաբար դրա արդյունքներով վերադարձման ենթակա գումարը նախկին գրավատուի սեփականությանը հանձնելու ժամկետը:

Վերոգրյալի հիման վրա վիճարկվող դրույթին Սահմանադրական դատարանի կողմից տրվել է այնպիսի մեկնաբանություն, համաձայն որի՝ գրավի առարկան ի սեփականություն ընդունելը համարվում է գրավի առարկայի բռնագանձման և իրացման ավարտ, և այդ պահի դրությամբ պետք է կատարվեն գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկները:

Չհամաձայնելով Սահմանադրական դատարանի՝ նաև վերը նշված դիրքորոշմանը, նախ հարկ եմ համարում նշել, որ տվյալ դեպքում հաշվի չեն առնվել դիմողի մասնակցությամբ քաղաքացիական գործի և թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործի փաստերի էական տարբերությունների առկայության հիմքով՝ գրավ դրված գույքի լիկվիդացիոն արժեքի վերհանման առանձնահատկությունները, որոնց անդրադարձ կատարվել է սույն հատուկ կարծիքի 1-ին կետում:

Ավելին, կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իր կողմից քննարկվող հարցը չի դիտարկել հակադրվող իրավունքների առկայության տեսանկյունից<sup>9</sup>, ուստի նաև չի հիմնավորել առկա հակադրությանը տրված լուծումը:

Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին ու ազատություններին երբեմն հակադրվում են այլ անձանց հիմնական իրավունքները և ազատությունները, իսկ պետությունը Սահմանադրության 75-րդ հոդվածի ամրագրված իրավակարգավորման ուժով պարտավոր է օրենքներով ամրագրել անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր հիմնական բոլոր իրավունքների ազատությունների արդյունավետ իրականացման համար:

Վիճարկվող դրույթը վերաբերում է գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկների կատարմանը, ինչից ակնհայտ է, որ գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն ընդունելու և վաճառելու դեպքում գրավատուի ու գրավառուի միջև փոխհաշվարկների կատարման պահի որոշումն առնչվում է ինչպես գրավատուի, այնպես էլ գրավառուի հիմնական իրավունքներին:

<sup>9</sup> Սույն հատուկ կարծիքում իրավունքների հակադրությանը և դրա լուծմանը անդրադարձ կկատարվի միայն տվյալ դեպքում հակադրվող կոնկրետ իրավունքների տեսանկյունից:

Այսպես՝ Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք, իսկ նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք (...):

Հաշվի առնելով Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջը՝ հարկ եմ համարում Սահմանադրության 60-րդ հոդվածով ամրագրված սեփականության իրավունքը մեկնաբանելիս վկայակոչել և հաշվի առնել նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից դրա վերաբերյալ ձևավորված վերաբերելի դիրքորոշումները:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի 1-ին մասով նախատեսված «գույք» հասկացությանը, արձանագրել է, որ այն ունի ինքնավար նշանակություն, որը չի սահմանափակվում նյութական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով և կապված չէ ներպետական օրենսդրության ձևական դասակարգման հետ: Ինչպես նյութական իրերը, գույքային հանդիսացող որոշակի այլ իրավունքներն ու շահերը նույնպես կարող են համարվել «գույքային իրավունքներ» և հետևաբար նաև «գույք» նույն դրույթի իմաստով: Յուրաքանչյուր գործով պարզաբանման ենթակա հարցն այն է, թե արդյոք, գործի բոլոր հանգամանքներից ելնելով, դիմումատուն ունեցել է Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածով պաշտպանվող նյութական շահ<sup>10</sup>:

<sup>10</sup> St' u, ECHR, case of Minasyan and Semerjyan v. Armenia, application no. 27651/05, 23.06.2009.

Միաժամանակ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով «սեփականություն» հասկացությունը բնորոշել է ընդլայնված կերպով՝ օգտագործելով «օրինական սպասելիք» հասկացությունը: Մասնավորապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ պահանջի իրավունքն ստանում է «սեփականություն» որակումն այն պահից, երբ անձն ունենում է «օրինական սպասելիք» իր իրավունքներն իրականացնելու համար<sup>11</sup>: Պահանջի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի իմաստով կարող է ընկալվել որպես գույքային իրավունք, եթե բավարար չափով հիմնավորված է, որ այն կարող է իրավաբանորեն իրացվել<sup>12</sup>: Ավելին, Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածում կիրառվող «գույք» եզրույթը սահմանափակված չէ միայն ֆիզիկական իրերի նկատմամբ սեփականության իրավունքով. այն իր մեջ ընդգրկում է նաև ակտիվներ հանդիսացող որոշ այլ իրավունքներ ու շահեր, որոնցից է, օրինակ, պարտավորության գույքային ապահովման իրավունքը<sup>13</sup>:

Վերոգրյալի համատեքստում անդրադառնալով գրավի իրավունքին՝ հարկ եմ համարում նշել, որ գրավի իրավունքը կամ գրավը զբաղեցնում է առանձնահատուկ տեղ ինչպես պարտավորությունների կատարման ապահովման միջոցների, այնպես էլ իրային իրավունքների շարքում, ինչը պայմանավորված է դրա երկակի բնույթով: Օրենսգրքի 170-րդ և 226-րդ հոդվածներից հետևում է, որ գրավի իրավունքը կամ գրավը պարտավորության իրային-իրավական ապահովման միջոց է, որը գրավառուին վերապահում է հիմնական պարտավորության չկատարման դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ գրավի առարկայի արժեքից բավարարում ստանալու նախապատվության իրավունք: Գրավի իրավունքի կամ գրավի (սահմանափակ) իրային իրավունք լինելու հանգամանքից բխում են դրա «բացարձակության» (գրավի իրավունքին համապատասխանում է բոլորի և յուրաքանչյուրի պարտականությունը՝ ձեռնպահ մնալու այդ իրավունքը խախտող կամ դրա իրականացումը խոչընդոտող արարքներից (Օրենսգրքի 241-րդ հոդված)) և «հետևելու» (գրավի իրավունքը պահպանում է իր ուժն անգամ այն դեպքում, երբ գրավի առարկայի նկատմամբ գրավատուի սեփականության իրավունքն անցնում է այլ անձի (Օրենսգրքի 242-րդ

<sup>11</sup> St' u, ECHR, case of Pressos Compania Naviera S.A. and others v. Belgium, application no. 17849/91, 20.11.1995.

<sup>12</sup> St' u, ECHR, case of Burdov v. Russia, application no. 59498/00, 07.05.2002.

<sup>13</sup> St' u, ECHR, case of Gasus Dosier- Und Fördertechnik GmbH v. The Netherlands, application no. 15375/89, 23.02.1995.

հողվածի 1-ին կետ)) հատկությունները:

Փաստորեն, գրավի իրավունքը կամ գրավը սահմանափակ իրա-  
յին իրավունք է, որի ուժով գրավատուն ունի «օրինական սպասելիք»,  
որը դրսևորվում է հիմնական պարտավորությունը չկատարվելու  
դեպքում գրավատուի այլ պարտատերերի հանդեպ գրավի առար-  
կայի արժեքից նախապատվության իրավունքով իր պահանջների  
բավարարում ստանալով: Ասվածից կարելի է եզրահանգել, որ գրա-  
վի իրավունքը Կոնվենցիայի թիվ 1 Արձանագրության 1-ին հողվածի  
իմաստով «գույք» է, ինչն իր հերթին նշանակում է, որ գրավի իրա-  
վունքը ենթակա է պաշտպանության ինչպես Կոնվենցիայի թիվ 1  
Արձանագրության 1-ին հողվածի, այնպես էլ Սահմանադրության  
60-րդ հողվածի ուժով:

Վերոգրյալից հետևում է, որ գրավի իրացման և գրավատուի ու  
գրավատուի միջև փոխհաշվարկների կատարման շրջանակներում  
շոշափվում են ոչ միայն գրավատուի (ինչը բխում է Սահմանադրա-  
կան դատարանի որոշումից), այլև գրավատուի հիմնական իրա-  
վունքները (ինչն անտեսվել է Սահմանադրական դատարանի որոշ-  
մամբ), և այդ իրավահարաբերությունները կարգավորող իրավա-  
նորմերը պետք է ունենան այնպիսի բովանդակություն, որոնք  
հաշվի կառնեն իրար հակադրվող իրավունքների առկայությունը:  
Ավելին, հաշվի առնելով գրավի իրավունքի նշանակությունը և դրա  
պարտավորության կատարումն ապահովելու գործառույթը, կար-  
ծում եմ, որ գրավատուի և գրավատուի միջև առաջացող հարաբե-  
րությունների նորմատիվ կարգավորումը **չպետք է հանգեցնի այն-  
պիսի իրավիճակների առաջացման, երբ գրավատուն կհայտնվի  
ավելի անբարենպաստ վիճակում, քան կլիներ գրավի բացակայու-  
թյան դեպքում, իսկ Սահմանադրական դատարանն առանձին իրա-  
վակարգավորումներին տրվող մեկնաբանություններով չպետք է  
նպաստի նման իրավիճակների առաջացմանը:** Մինչդեռ Սահմա-  
նադրական դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ վի-  
ճարկվող նորմից հետևում է, որ նույնիսկ այն դեպքում, երբ գրա-  
վատուի գործողությունների հետևանքով գրավատուն որոշակի  
ժամանակահատվածում զրկված է լինում ի սեփականություն ըն-  
դունված գրավի առարկան վաճառելու և իր պահանջները փաս-  
տացի բավարարելու հնարավորությունից, մինևույն է, գրավատուի  
հետ փոխհաշվարկները պետք է կատարի գրավի առարկան ի սե-  
փականություն ընդունելու պահի դրությամբ այդ գույքի լիկվիդա-  
ցիոն արժեքով, որպիսի պայմաններում գրավատուն, ինչպես սույն  
գործով դիմողի դեպքում է, կարող է ոչ միայն զրկվել գրավի առար-



կայի արժեքի հաշվին իր պահանջների բավարարում ստանալու հնարավորությունից, այլև ստիպված լինել գրավատուին վճարել իր միջոցների հաշվին տրամադրված վարկի գումարը բազմապատիկ անգամներ գերազանցող գումար այն դեպքում, երբ հենց գրավատուն է խոչընդոտներ հարուցել գրավ դրված գույքի լիկվիդացիոն արժեքը որոշելու գործընթացում: Ավելին, նման մեկնաբանությունը կարող է իմաստազրկել գրավի առարկան հետագայում վաճառելու նպատակով այն ի սեփականություն ընդունելու ինստիտուտը (օրինակ՝ բանկերի և վարկային կազմակերպությունների դեպքում), ինչը վերջնարդյունքում կարող է բացասական հետևանքներ առաջացնել ոչ միայն գրավատուների, այլև գրավատուների համար:

Այս համատեքստում հարկ եմ համարում անդրադառնալ նաև Սահմանադրական դատարանի որոշման մեջ տեղ գտած հետևյալ դատողությանը. «[ու]շադրության է արժանի այն հանգամանքը, որ հետագայում 23.06.2011թ. ընդունված ՀՕ-233-Ն օրենքով Օրենսգրքի 251-րդ հոդվածը շարադրվել է նոր խմբագրությամբ, որով օրենսդիրն արդեն ուղղակիորեն կարգավորել է ի սեփականություն հանձնված գույքի և այդ գույքի հիմնական պարտավորության համապատասխան չափը գերազանցող գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները՝ այդպիսով օրենսդրական մակարդակում վերացնելով դիտարկվող օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշությունը: Սահմանադրապես, Օրենսգրքի 23.06.2011թ. ընդունված ՀՕ-233-Ն օրենքի խմբագրությամբ 251-րդ հոդվածի 3-րդ մասով օրենսդիրը գրավադրված գույքը վարկատուին՝ բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն անցնելու դեպքում գույքն իրացված է համարել:

1. դրա հետագա օտարման օրը, եթե նման օտարումը տեղի է ունեցել գույքն ի սեփականություն վերցնելուց հետո՝ 6 ամսվա ընթացքում,

2. գույքն ի սեփականություն վերցնելուն հաջորդող վեցամսյա ժամկետի վերջին օրը՝ այդ օրվա դրությամբ գույքի շուկայական գնով, եթե այդ վեցամսյա ժամկետում գույքը չի օտարվել:

Ընդ որում, օրենսդիրը հաշվի չի առնում 6 ամսվա ընթացքում գույքը չօտարելու որևէ օբյեկտիվ կամ սուբյեկտիվ պատճառ»:

Հարկ եմ համարում նշել, որ եթե 23.06.2011 թվականին ընդունված ՀՕ-233-Ն օրենքով Օրենսգրքի 251-րդ հոդվածը նոր խմբագրությամբ շարադրելով օրենսդիրը «օրենսդրական մակարդակում վերացրել է դիտարկվող օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշությունը՝ ուղղակիորեն կարգավորելով ի սե-



փականություն հանձնված գույքի և այդ գույքի՝ հիմնական պարտավորության համապատասխան չափը գերազանցող գումարի տնօրինման հետ կապված հարաբերությունները», ապա դա արել է **միայն մասնակիորեն**, քանի որ Օրենսգրքի՝ 23.06.2011 թվականին ընդունված ՀՕ-233-Ն օրենքի խմբագրությամբ 251-րդ հոդվածի 3-րդ մասը վերաբերում է այն դեպքերին, երբ գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը) ի սեփականություն է անցել քաղաքացուն պատկանող գրավ դրված գույքը<sup>14</sup>: Այսինքն՝ այդ նորմը գործում է այն դեպքում, երբ

- գրավատուն քաղաքացի է, իսկ գրավառուն՝ բանկ կամ վարկային կազմակերպություն, և

- գրավի առարկան ի սեփականություն է անցել գրավառուին: Վերոգրյալից հետևում է, որ առնվազն օրենսդիրն Օրենսգրքի՝ 23.06.2011 թվականին ընդունված ՀՕ-233-Ն օրենքի խմբագրությամբ 251-րդ հոդվածի 3-րդ մասն ուղղակիորեն կիրառելի չի համարել այն դեպքերի նկատմամբ, երբ գրավատուն ֆիզիկական անձ չէ (ինչպես սույն գործով դիմողի դեպքում է), կամ գրավառուն բանկ կամ վարկային կազմակերպություն չէ<sup>15</sup>:

Ամփոփելով վերոգրյալը կարծում եմ, որ վիճարկվող դրույթին Սահմանադրական դատարանի կողմից տրվող մեկնաբանությունն առնվազն չպետք է կառուցվեր բացառապես քաղաքացիական իրավահարաբերության մասնակիցներից մեկի իրավունքների իրացումն ապահովելու անհրաժեշտության շուրջ, քանի որ Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված իրավունքի կրողը միայն դիմումատուն չէր, և նրա սեփականության իրավունքը տվյալ դեպքում պաշտպանության ենթակա միակ իրավունքը չէր, իսկ նախապատվությունը հենց դիմումատուի սեփականության իրավունքին տալու դեպքում Սահմանադրական դատարանի որոշումը պետք է առնվազն պարունակեր համապատասխան հիմնավորումներ: Ինչու՞ Սահմանադրական դատարանը հաշվի չի առել, որ վիճարկվող դրույթին տրվող մեկնաբանությունը շոշափելու է նաև գրավառուի հիմնական իրավունքները, ի նչ հիմնավորումներով է Սահմանադրական դատարանը եկել այն եզրահանգման, որ վիճարկվող դրույթը մեկնաբանելիս պետք է առաջնորդվել բացառապես գրա-

<sup>14</sup> Այդ իրավանորմի համաձայն՝ այն դեպքում, երբ **քաղաքացուն պատկանող** գրավ դրված գույքն ի սեփականություն անցել է **գրավառու բանկին (վարկային կազմակերպությանը)**, գրավ դրված գույքը սույն հոդվածի իմաստով համարվում է իրացված (...):

<sup>15</sup> Սույն հատուկ կարծիքում չի քննարկվում այդ իրավանորմը դրանով ուղղակիորեն չկարգավորված հարաբերությունների նկատմամբ անալոգիայով կիրառելու հնարավորությունը, ինչն իրավակիրառ պրակտիկայի խնդիրն է:

վատուի սեփականության իրավունքի իրացումն ապահովելու անհրաժեշտությամբ: Այս հարցերի պատասխանները Սահմանադրական դատարանի որոշման մեջ բացակայում են, որպիսի հանգամանքը, կարծում եմ, **կատարված եզրահանգումները դարձնում է բավարար չափով չհիմնավորված:**

Ամփոփելով վերոգրյալը՝ հարկ եմ համարում արձանագրել, որ գրավատուի և գրավառուի միջև փոխհաշվարկների կատարման վերաբերյալ Վճռաբեկ դատարանի որոշումներում (որոնք պարունակում են քննարկվող հարցի վերաբերյալ ուղենիշային լուծումներ) առկա են, մասնավորապես, հետևյալ դիրքորոշումները.

- թիվ ԵԱՆԴ/0399/02/09 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 01.04.2011 թվականի որոշմամբ արտահայտվել է այն իրավական դիրքորոշումը, որ գրավատուն իր պահանջի բավարարման նպատակով իրավունք ունի գրավ դրված գույքը տվյալ պահին շուկայում գործող ռոջամիտ գնի հաշվարկով հիմնական պարտավորության համապատասխան չափի դիմաց դարձնել իր սեփականությունը կամ հանձնել երրորդ անձին ի սեփականություն, իսկ գրավադրված անշարժ գույքն իրացնելիս տվյալ պահին շուկայում գործող ռոջամիտ գինը կարող է լինել միայն դրա արագ վաճառքի գինը, այսինքն՝ լիկվիդացիոն արժեքը, քանի որ միայն նման ձևով է հնարավոր ապահովել գրավի առարկայի արագ իրացումն ու գրավառուի պահանջների բավարարումը.

- թիվ ԵԿԴ/0384/02/13 քաղաքացիական գործով 30.04.2015 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ այն դեպքում, երբ բռնագանձման հիմքով գրավի առարկան գրավառուի կողմից ի սեփականություն է ընդունվել մինչև 23.06.2011 թվականին ընդունված ՀՕ-233-Ն օրենքով Օրենսգրքի 251-րդ հոդվածում կատարված փոփոխությունները, ապա գրավատուի և գրավառուի միջև փոխհաշվարկներ կատարելիս պետք է կիրառել Օրենսգրքի մինչև այդ փոփոխությունները գործող խմբագրությամբ 251-րդ հոդվածը, և այդ փոխհաշվարկները պետք է կատարվեն՝ հիմք ընդունելով գույքի լիկվիդացիոն արժեքը.

- թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործով 08.05.2020 թվականի որոշմամբ Վճռաբեկ դատարանը վերլուծել է, թե ինչպես պետք է վեր հանել գրավ դրված գույքի լիկվիդացիոն արժեքը, այսինքն՝ առաջին իսկ հնարավորության դեպքում գույքի արագ վաճառքի գինը՝ այն առանձնահատուկ դեպքում, երբ այդ գույքը գրավառուի կողմից ի սեփականություն ընդունելուց հետո գրավատուի գործողությունների հետևանքով գտնվել է արգելանքի տակ, իսկ

արգելանքը վերացվելուց հետո կարճ ժամանակահատվածում վաճառվել է:

Կարծում եմ, որ Սահմանադրական դատարանն իր որոշմամբ վկայակոչված՝ Վճռաբեկ դատարանի որոշումների հիմքում ընկած տրամաբանությունների տարբեր լինելու, իրավակիրառ պրակտիկան նախկինից տարբերվող ուղղությամբ զարգանալու վերաբերյալ եզրահանգումները կատարել է հաշվի չառնելով վերը նշված քաղաքացիական գործերի և դրանց շրջանակներում կայացված որոշումների առանձնահատկությունները, անտեսելով դիմողի գործով կայացված որոշման հիմքում ընկած պատճառաբանությունները և իրավահարաբերության նաև մյուս մասնակցի հիմնական իրավունքների իրացումն ապահովելու անհրաժեշտությունը:

**3.** Սույն հատուկ կարծիքում ներկայացված՝ թիվ ԵՄԴ/1206/02/09 քաղաքացիական գործի փաստերի պայմաններում խնդրահարույց եմ համարում նաև գրավադրված գույքի հետ կապված փոխհաշվարկների կատարումն անորոշ ժամանակահատվածով հետաձգվելով պայմանավորված գրավատուի սեփականության իրավունքի խախտման վերաբերյալ Սահմանադրական դատարանի պատճառաբանությունը, քանի որ Սահմանադրական դատարանը հաշվի չի առել, թե ինչ փաստերով գործի շրջանակներում է վիճարկվող դրույթը կիրառվել այդ մեկնաբանությամբ: Մասնավորապես Սահմանադրական դատարանն անհրաժեշտ նշանակություն չի տվել այն իրավիճակների առանձնացմանը, երբ, ըստ էության, գրավատուն է իր գործողություններով հետաձգում գրավատուի կողմից ի սեփականություն ընդունված գույքի վաճառքը (դրանով իսկ հնարավորություն չտալով որոշելու գույքի առաջին իսկ հնարավորության դեպքում հնարավորինս արագ վաճառքի գինը, այն է՝ գույքի լիկվիդացիոն արժեքը), և այդ պայմաններում անհասկանալի է, թե գրավատուի և գրավառուի միջև փոխհաշվարկների կատարման հետաձգումն ինչպես է խախտում գրավատուի սեփականության իրավունքը:

Այս տեսանկյունից խնդրահարույց է նաև Սահմանադրական դատարանի որոշման հիմքով նոր հանգամանքի առկայության շեշտադրումը, քանի որ Սահմանադրական դատարանը հաշվի չի առել հակադրվող իրավունքների առկայությունը, չի քննարկել վիճարկվող դրույթը կոնկրետ դեպքում որոշակի եղանակով մեկնաբանելու և կիրառելու պատճառները և չի հերքել դրանք:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը՝ սույն գործի վարույթն անհրաժեշտ էր կարճել, մինչդեռ Սահմանադրական դատարանը, ներկայացված դիմումի հիման վրա քննելով գործը, ոչ միայն ըստ էության անդրադարձել է վիճարկվող դրույթի կիրառման իրավաչափության հարցին, որի իրավասությունը չունեք, այլև այն կատարել է՝ առանց հաշվի առնելու դիմողի մասնակցությամբ գործի առանձնահատկությունները:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«19» մարտի 2021թ.



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՎԵՐԱՔՆՆԻՉ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ  
ՎՐԱ՝ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 185-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԱՌԱՋԻՆ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

9 մարտի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

դիմող՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասության՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի հուլիսի 1-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի սեպտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 12-ից:

Օրենսգրքի «Քրեական գործի հարուցումը մերժելը» վերտառությամբ 185-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանում է.

«5. Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից գործի հարուցումը»:

Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասը փոփոխվել է 25.05.06 ՀՕ-91-Ն օրենքով՝ 5-րդ մասի առաջին նախադասությունից հանելով «վերաքննիչ» բառը:

Գործի քննության շրջանակը ներառում է Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված «Քրեական գործ հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն» դրույթը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քրեական դատարանի (այսուհետ՝ դիմող) թիվ ՍԴ/0029/11/19 գործով 2020 թվականի հունվարի 20-ին կայացրած «ՀՀ սահմանադրական դատարանի դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին որոշման հիման վրա» 2020 թվականի հունվարի 22-ին Սահմանադրական դատարանի մուտքագրված դիմումն է:

ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը Սահմանադրական դատարանի ներկայացրած դիմումով վիճարկել է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականությունն ամբողջությամբ: Սահմանադրական դատարանը 2021 թվականի մարտի 9-ի ՍԴԱՌ-43 աշխատակարգային որոշմամբ սույն գործի վարույթը՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի երկրորդ նախադասության մասով, կարճել է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

**1. Գործի դատավարական նախապատմությունը**

Սույն գործով դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին:

Վ. Ալեքսանյանը 26.06.2019թ. ՀՀ գլխավոր դատախազին հասցեագրված դիմումով հաղորդում է տվել հանցագործության մասին, որի քննարկման արդյունքում 06.07.2019թ. ՀՀ ոստիկանության Կապանի բաժանմունքի տեսուչը որոշում է կայացրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին՝ հանցագործության դեպքի բացակայության պատճառաբանությամբ: Այնուհետև Վ. Ալեքսանյանը 18.07.2019թ. բողոք է ներկայացրել ՀՀ գլխավոր դատախազին, որով խնդրել է վերացնել ՀՀ ոստիկանության Կապանի բաժանմունքի տեսուչի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 06.07.2019թ. որոշումը:

22.07.2019թ. ՀՀ Սյունիքի մարզի դատախազի պաշտոնակատարը որոշում է կայացրել քրեական գործ հարուցելու մասին որոշման օրինականությունը հաստատելու և դիմողի բողոքը մերժելու մասին:

29.08.2019թ. Վ. Ալեքսանյանը վերոնշյալ որոշումների դեմ բողոք է ներկայացրել ՀՀ Սյունիքի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, որի քննության արդյունքում 10.09.2019թ. դատարանը որոշում է կայացրել բողոքը բավարարելու մասին և վերացրել է ՀՀ ոստիկանության Կապանի բաժանմունքի տեսուչի քրեական գործի հարուցումը մերժելու մասին 06.07.2019թ. որոշումը: Նշված որոշման դեմ 18.09.2019թ. ՀՀ Սյունիքի մարզի դատախազի տեղակալը վերաքննիչ բողոք է ներկայացրել: Վերաքննիչ բողոքի վերաբերյալ գործը ՀՀ վերաքննիչ քրեական դատարանը ստացել է 25.09.2019թ.:

**2. Դիմողի դիրքորոշումները**

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննության արդյունքում այդ որոշումը վերացնելու կամ հաստատելու մասին Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանված դատարանի լիազորությունը և, որպես պարտադիր հետևանք, դատախազի կողմից քրեական գործ հարուցելու պարտականությունը, հակասում են Մահմանադրության 61, 63 և 176-րդ հոդվածներին, քանի որ մի դեպքում՝ դատարանի սահմանադրական կարգավիճակից և գործառույթներից չի բխում մինչդաստական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում հետաքննության մարմնի, քն-

նիչի կամ դատախազի (եթե դատախազն է կայացրել նման որոշում) որոշումը վերացնելու կամ հաստատելու օրենսդրական լիազորությունը, իսկ մյուս կողմից՝ դատարանի որոշման պարտադիր հետևանքը՝ դատախազի կողմից քրեական գործ հարուցելու պարտականությունը, չի բխում թե՛ դատախազի սահմանադրական կարգավիճակից բխող լիազորություններից և գործառույթներից, թե՛ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հարաբերությունից, թե՛ անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության սահմանադրական կառուցակարգերից:

Վերաքննիչ դատարանի գնահատմամբ՝ օրենսդիրն Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասում կատարել է «ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներում ամրագրված թեզիսի (անձի իրավունքների պաշտպանության) նենգափոխում (քրեական հետապնդման մարմինների կայացրած որոշման օրինականության և հիմնավորվածության ստուգման), որի արդյունքում դատական պաշտպանությունը փաստացի վերածել է դատախազական հսկողության, քանի որ, ի հակադրություն ՀՀ Սահմանադրության 61-րդ և 63-րդ հոդվածներում ամրագրված գաղափարախոսության, դատարանի ստուգման առարկան է դարձել ոչ թե անձի իրավունքների և ազատությունների խախտված լինելը կամ չլինելը հաստատելը և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելը, այլ հետաքննության մարմնի կամ քննիչի կայացրած որոշման օրինականությունը և հիմնավորվածությունը ստուգելը և որպես հետևանք՝ այն հաստատելը կամ վերացնելը: Մինչդեռ, ... հետաքննության մարմնի, քննիչի որոշումները վերացնելը դատախազական հսկողության էությունն է»:

Դիմողը նաև նշում է, որ քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշումն այն եզակի որոշումն է, որը դատարանը դատական վերահսկողության շրջանակներում վերացնում է, իսկ մնացած այլ որոշումների բողոքարկման դեպքում դատարանը պարզապես արձանագրում է անձի իրավունքի խախտումը և սահմանում իրավասու մարմինների կամ պաշտոնատար անձանց պարտականությունը՝ վերացնելու այդ խախտումները: Հենց այս համատեքստում էլ առաջանում է Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության խնդիրը, քանի որ դատարանը մինչդատական վարույթում վերահսկողության անվան տակ փաստացի հսկողություն է իրականացնում:



**3. Պատասխանողի դիրքորոշումը**

Պատասխանողը, վկայակոչելով Վճռաբեկ դատարանի մի շարք իրավական դիրքորոշումներ, նկատում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության նպատակն անձի իրավունքների և ազատությունների անօրինական և չհիմնավորված սահմանափակումների կանխումը և խախտված իրավունքների ու ազատությունների վերականգնումն է: Եթե հարուցված վարույթի շրջանակներում դատարանն անձի խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումն ապահովում է թույլ տրված խախտումը վերացնելու և անձի խախտված իրավունքներն ու ազատությունները վերականգնելու վերաբերյալ իրավասու մարմնի պարտականությունը սահմանելով, ապա այլ է իրավիճակը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման առկայության պայմաններում: Անձի խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը գերակշռող դեպքերում հնարավոր է միայն հարուցված վարույթի շրջանակներում, որպիսի հանգամանքը հաշվի առնելով՝ օրենսդրի կողմից ամրագրվել է Օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված կարգավորումը:

Ըստ պատասխանողի վերը նշվածը պայմանավորված է նրանով, որ քրեական գործի հարուցմամբ իրավասու մարմինն իրավունք է ստանում ձեռնարկել օրենքով նախատեսված բոլոր միջոցառումներն ամբողջ ծավալով անձի խախտված իրավունքների և ազատությունների վերականգնման ուղղությամբ: Եթե մինչդատական վարույթի ընթացքում դատարանը պարզապես արձանագրում է վերջիններիս խախտման փաստը և պարտավորեցնում իրավասու մարմնին (պաշտոնատար անձին) վերացնել թույլ տրված խախտումը, ապա քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բողոքը քննության առնելիս միայն խախտումն արձանագրելը ոչ միշտ է, որ կարող է բավարար լինել անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու համար: Հետևաբար, դատարանի վերահսկողական գործունեության հիմնական նպատակը իրավապաշտպան գործառույթի իրականացումը, կկրի ձևական բնույթ:

Պատասխանողը շեշտում է, որ դատական վերահսկողության առարկան քրեական գործ հարուցելու առիթի օրինականության, ինչպես նաև հիմքերի բավարարության պարզումն է, ուստի դրանից բացի դատարաններն այլ հարցեր չեն քննարկում: Քրեադատավարական օրենսդրության պահանջների, ինչպես նաև անձի իրավունքների և օրինական շահերի խախտման փաստ հայտնաբերելիս

դատարանն իրավասու չէ վերացնել բողոքարկվող որոշումն այն դեպքում, երբ քրեական վարույթը բացառող հանգամանքն անվիճելի է, քանի որ այդպիսի հանգամանքի առկայության դեպքում քրեական գործ չի կարող հարուցվել: Մինևույն ժամանակ դատարանը պարտավոր է արձանագրել քրեադատավարական օրենսդրության պահանջների, անձի իրավունքների և օրինական շահերի խախտման փաստերը:

**4. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Հաշվի առնելով դիմումում բարձրացված հարցերը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով պարզման ենթակա է այն հարցը, թե Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների լույսի ներքո իրավաչափ է արդյոք քրեադատարանի կողմից քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման վերացման մասով հատուկ իրավակարգավորում սահմանելը:

**5. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**5.1.** Սահմանադրական դատարանի գնահատմամբ՝ իրավական պետության գաղափարից բխում է այն մոտեցումը, որ որևէ իրավական ակտ, այդ թվում՝ նորմատիվ (բացառությամբ Սահմանադրության) չի կարող դուրս մնալ դատական վերահսկողությունից, որի նպատակն անձի խախտված իրավունքների պաշտպանությունն է, ներառյալ՝ արդյունավետ դատական պաշտպանությունը, որն ապահովվում է անկախ և անաչառ դատարանի կողմից գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննությամբ:

Ընդ որում, քրեական դատավարության բնագավառում Սահմանադրությամբ երաշխավորված «արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի» հասցեատեր են ոչ միայն գործով մեղադրվող անձինք (կասկածյալ, մեղադրյալ, ամբաստանյալ), այլ նաև ենթադրյալ հանցավոր արարքից տուժածները, որոնք հետազայում ձեռք են բերում տուժողի կարգավիճակ: Հետևաբար, քրեական վարույթի օրենսդրական կարգավորումը նպատակ է հետապնդում, բացի պաշտպանության կողմում հանդես եկող անձանցից, ապահովել նաև մեղադրանքի կողմում հանդես եկող անձանց, իսկ մինչև քրեական հետապնդում հարուցելը՝ ենթադրյալ հանցավոր արարքից տուժածների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Այդ հավասարակշռված մոտեցումն է ընկած քննարկվող հոդվածի կարգավորման հիմքում, այն առումով, որ քրեական գործ

հարուցելը մերժելու վերաբերյալ բողոքի հիման վրա դատարանն իրավասու է ոչ միայն վերացնել, այլ նաև հաստատել բողոքարկվող որոշումը:

Վերը նշված տրամաբանության համատեքստում Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերը սահմանում են, որ դատախազությունը, ի թիվս այլնի, օրենքով սահմանված դեպքերում և կարգով հարուցում է քրեական հետապնդում, հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:

Ի իրացումն սահմանադրական վերոնշյալ նորմերի՝ Օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետը սահմանում է, որ դատախազը մինչդատական վարույթի ընթացքում, ի թիվս այլնի, լիազորված է վերացնել հետաքննության մարմնի և քննիչի որոշումը քրեական գործի հարուցումը մերժելու մասին և հարուցել քրեական գործ:

Վերը նշված նորմից բխում է, որ քննիչի որոշումը վերացնելը և քրեական գործ հարուցելը միաժամանակյա պայմաններ են: Այսինքն՝ օրենսդիրը ելել է այն տրամաբանությունից, որ քրեական գործի հարուցումը մերժելու մասին քննիչի որոշումը դատախազի կողմից վերացնելը բավարար չէ հանցագործությունների կանխման և բացահայտման բնագավառներում պետության գործառույթների լիարժեք իրականացման համար, քանի որ քննիչի դիտարկող որոշման վերացումը դեռևս չի հանգեցնում քրեական գործի հարուցման:

Ինքնանպատակ չէ նաև այն հանգամանքը, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ դատախազական հսկողության վերաբերյալ դրույթներից զատ ամրագրում է նաև հետաքննության և նախաքննության մարմինների գործունեության նկատմամբ դատական վերահսկողության վերաբերյալ դրույթներ: Տվյալ դեպքում օրենսդիրը քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման առնչությամբ դատախազական հսկողության վերաբերյալ դրույթների տրամաբանությամբ նախատեսել է նաև դրույթներ դատախազական հսկողության գործառույթի օրինականության նկատմամբ դատական վերահսկողության վերաբերյալ: Այսինքն, եթե դատախազը քննիչի որոշումը վերացնելու հետ միաժամանակ հարուցում է քրեական գործ, ապա նույն տրամաբանությամբ դիտարկվող դեպքում դատարանը վերացնում է քննիչի որոշումը չվերացնելու կապակցությամբ դատախազի կայացրած որոշումը, որին հետևում է քրեական գործ հարուցելու մասին որոշում ընդունելու դատախազի պարտականությունը: Այսինքն՝ դատական վերահսկողության

դեպքում ևս օրենսդիրը ելել է այն տրամաբանությունից, որ դատական վերահսկողության շրջանակներում միայն դատախազի որոշման վերացումը կարող է բավարար չլինել հանցագործությունների կանխման և բացահայտման բնագավառներում պետության գործառույթների լիարժեք իրականացման համար:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության ինստիտուտը կոչված է ոչ միայն դատարանների կողմից խախտման արձանագրմանը, այլ նաև անհրաժեշտ միջոցների ձեռնարկմանը՝ այդ խախտումները վերացնելու համար, քանզի այն անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից է և կոչված է ապահովելու դատական պաշտպանության համընդհանուր իրավունքի արդյունավետ իրացումը քրեական դատավարության սկզբնական փուլում: Դատարանի խնդիրն է ոչ միայն իրավունքի խախտման արձանագրումը, այլև դրա վերացումը, որը բխում է դատական իշխանության սահմանադրաիրավական առաքելությունից և դրան համապատասխան՝ Օրենսգրքով նախատեսված դատարանի լիազորություններից:

Քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման դեմ բողոքի քննության արդյունքում այդ որոշումը վերացնելու լիազորությունը չի կարող դիտվել որպես դատարանին դատախազական հսկողության լիազորության վերագրում: Ընդ որում, դատական վերահսկողության առարկան չի սահմանափակվում միայն օրինախախտման արձանագրմամբ և չպետք է դիտվի որպես դատարանի կողմից դատախազական հսկողության լիազորության կատարում, քանզի հետաքննության մարմնի, քննիչի, օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնի, ինչպես նաև դատախազի որոշումների վերացումը դատախազական հսկողության **բացառիկ լիազորություն** չէ:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը հիմնավոր չի համարում դիմողի դիրքորոշումները, որ դատախազի կողմից կայացվող մյուս որոշումների դեպքում դատարանը ոչ թե վերացնում է այդ որոշումները, այլ սահմանում է իրավունքների խախտումը վերացնելու՝ նախաքննության մարմնի պարտականությունը, կամ որ տվյալ դեպքում դատական վերահսկողությունը վերածվում է դատախազական հսկողության, կամ որ դատարանի սահմանադրական կարգավիճակից և գործառույթներից չի բխում մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում հետաքննության մարմնի, քննիչի կամ դա-

տախազի (եթե դատախազն է կայացրել նման որոշում) որոշումը վերացնելու կամ հաստատելու օրենսդրական լիազորությունը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննարկվող դեպքում դատական վերահսկողության շրջանակներում որոշման վերացումը բխում է դատական վերահսկողության էությունից և անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության սահմանադրական կառուցակարգերից. լայն առումով առկա չէ որևէ տարբերություն՝ դատարանը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին (Օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մաս), թե՛ որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտող որոշումը վերացնելու մասին:

**5.2.** Սահմանադրական դատարանը, անդրադառնալով Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքների իրացմանը, նշել է, որ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները սահմանադրական այն հիմնարար իրավունքներից են, որոնց իրացմամբ երաշխավորվում են սահմանադրական մի շարք այլ իրավունքների հարգումն ու պաշտպանությունը, ուստի «... Անձի դատական պաշտպանության սահմանադրական իրավունքից ածանցվում է պետության պոզիտիվ պարտականությունը՝ ապահովել այն թե՛ նորմաստեղծ, թե՛ իրավակիրառման գործունեություն իրականացնելիս: Դա ենթադրում է, մի դեպքում, օրենսդրի պարտականությունը՝ լիարժեք դատական պաշտպանության հնարավորություն և մեխանիզմներ ամրագրել օրենքներում, մյուս կողմից, իրավակիրառողի պարտականությունը՝ առանց բացառությունների քննարկման ընդունել անձանց՝ օրինական կարգով իրենց ուղղված դիմումները, որոնցով նրանք հայցում են իրավական պաշտպանություն իրենց իրավունքների ենթադրյալ խախտումներից» (ՄԴՈ-1249):

Մեկ այլ որոշմամբ Սահմանադրական դատարանը նշել է, որ ինչպես դատական պաշտպանության, այնպես էլ մյուս հիմնարար իրավունքների պատշաճ իրացման նկատառումներից ելնելով, Սահմանադրությամբ նախատեսվել է նաև հիմնական իրավունքների և ազատությունների իրականացման կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի ամրագրման պահանջ նախատեսող դրույթ, համաձայն որի՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթա-

ցակարգեր: Հիմնական իրավունքի կենսագործումն առավել իրական և արդյունավետ է դառնում բոլոր այն դեպքերում, երբ օրենսդրությամբ առկա են այդ իրավունքի իրացման համապատասխան կառուցակարգեր և ընթացակարգեր, դրանք հստակ են և որոշակի (ՄԴՈ-1439):

Սահմանադրական դատարանն իր՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի ՄԴՈ-844 որոշմամբ անդրադառնալով մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությանը և դատախազական հսկողությանը՝ արձանագրել է հետևյալը. «Այսպիսով, քրեական գործերով մինչդատական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության և դատական վերահսկողության հետ կապված իրավահարաբերությունները կարգավորող, այդ թվում՝ սույն գործով վիճարկվող, իրավանորմերի համալիր վերլուծությունը միանշանակ վկայում է այդ գործառույթների ընդհանուր նպատակի (որպես իրավապահ գործունեություն), սակայն տարբեր առանձնահատկությունների մասին, հետևաբար, պատասխանող կողմի փաստարկն այն մասին, թե «...և դատախազական հսկողությունը, և դատական հսկողությունը միմյանց լրացնող ինստիտուտներ են», չի բխում սույն գործով վեճի առարկայից և այդ գործառույթների սահմանադրահրավական բովանդակությունից: Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործերով մինչդատական վարույթի շրջանակներում քրեական վարույթ իրականացնող մարմինների ու պաշտոնատար անձանց որոշումների, գործողությունների ու անգործության դատական բողոքարկման ինստիտուտի կիրառման պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ այդ բնագավառը կարգավորող նորմերի դրույթները պետք է ընկալվեն նաև որպես համակարգային ամբողջություն, որը պայմանավորված է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության սահմանադրահրավական բովանդակությամբ և երաշխիք է ՀՀ Սահմանադրության 18 հոդվածով<sup>1</sup> նախատեսված անձանց իրավունքների արդյունավետ իրացումն ապահովելու համար»:

Իր հերթին, Վճռաբեկ դատարանը 10.04.2009թ. որոշմամբ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության միջոցով իրացվող դատական պաշտպանության իրավունքի նշանակության և արժեքի վերաբերյալ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «Սահմանադրությամբ ամրագրված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոց-

<sup>1</sup> Խոսքը 2005թ. փոփոխություններով Սահմանադրության 18-րդ հոդվածում ամրագրված դատական և այլ մարմինների առջև արդյունավետ պաշտպանության միջոցների իրավունքի մասին է:

ների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթացքում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության խնդիրներն են՝

- դատավարության մասնակիցների և այլ անձանց իրավունքների և ազատությունների, օրինական շահերի պահպանության ապահովումը,

- դատավարության մասնակիցների և այլ անձանց խախտված իրավունքների և ազատությունների վերականգնումը մինչդատական վարույթում:

Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»:

**5.3. Սահմանադրական դատարանը** հարկ է համարում ընդգծել, որ **միջազգային իրավական փաստաթղթերը** ևս ելնում են վերոնշյալ դիրքորոշումից: Այսպես, Եվրոպական դատավորների խորհրդատվական խորհուրդը և Եվրոպական դատախազների խորհրդատվական խորհուրդը Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեին ներկայացրած «Ժողովրդավարական հասարակությունում դատավորների և դատախազների փոխհարաբերության մասին» միասնական կարծիքում (ներառում է Բորդոյի հռչակագիրը և Բացատրական պարզաբանումները<sup>2</sup>), հայտարարում են, որ

*«1. Հասարակության շահերից է բխում, որ իրավունքի գերակայությունը երաշխավորվի արդարադատության արդար, անաչառ և արդյունավետ իրագործմամբ: Դատախազները և դատավորները պետք է ապահովեն, որ վարույթի բոլոր փուլերում երաշխավորվեն անձնական իրավունքներն ու ազատությունները և պաշտպանվի հանրային կարգը: Սա ներառում է պաշտպանության կողմի և տու-*

<sup>2</sup> Council of Europe 2009 English edition: Opinion No 12 (2009) of the Consultative Council of European Judges (CCJE) and Opinion No 4 (2009) of the Consultative Council of European Prosecutors (CCPE)// <https://rm.coe.int/no12-in-armenian-12-2009-16808e64ee>



ժողների իրավունքների լիարժեք պահպանումը:

Քրեական հետապնդում իրականացնելուց հրաժարվելու մասին դատախազի որոշումը պետք է ենթակա լինի դատական վերանայման: Տուժողը պետք է ունենա անմիջականորեն դատարան դիմելու հնարավորություն»:

2. Արդարադատության արդար իրականացման համար անհրաժեշտ է, որ մեղադրանքի և պաշտպանության կողմերը լինեն իրավահավասար:

(...)

9. ... Քրեական հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու մասին հանրային դատախազի որոշման օրենքով սահմանված կարգով ցանկացած վերանայում պետք է կատարվի պահպանելով անաչառությունը և օբյեկտիվությունը: Ցանկացած դեպքում պատշաճ կերպով պետք է հաշվի առնվեն տուժողի շահերը»:

Նույն փաստաթղթի Պարզաբանումների 32-րդ կետում ասվում է, որ «Քրեական հետապնդում իրականացնելու կամ չիրականացնելու մասին ցանկացած որոշում պետք է իրավաբանորեն հիմնավորվի: Դատախազի այդպիսի որոշման օրենքով սահմանված կարգով կատարված ցանկացած վերանայում պետք է իրականացվի անաչառ և օբյեկտիվ կերպով, անկախ այն հանգամանքից, թե դա իրականացվում է հենց դատախազության կողմից, թե անկախ դատական մարմնի կողմից: Տուժողի շահերը, ինչպես նաև ցանկացած այլ անձի օրինական շահերը պետք է մշտապես պատշաճ կերպով հաշվի առնվեն»:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի «Տուժողի վիճակը քրեական իրավունքի և դատավարության ոլորտում» Rec(85) 11 հանձնարարականը, որ ընդունվել է 1985 թվականի հունիսի 28-ին, հստակ ընդգծում է այն հանգամանքը, որ «Տուժողը պետք է ունենա իրավունք իրավասու մարմնից հայցելու վերանայել քրեական գործի հարուցումից հրաժարվելու որոշումը կամ հարուցել մասնավոր քննություն»<sup>3</sup>:

5.4. Ինչ վերաբերում է քրեական գործ հարուցելը մերժելու մասին որոշման մասով հատուկ իրավակարգավորում սահմանված լինելու իրավաչափությանը, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վկայակոչել Վճռաբեկ դատարանի 13.07.2011թ. ԵԿԴ/0004/11/11 որոշմամբ արտահայտած դիրքորոշումը.

«17...ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի

<sup>3</sup> <http://www.legislationline.org/ru/documents/action/popup/id/14469>



2-րդ մասի համաձայն՝ «Դատարանը, սույն օրենսգրքով սահմանված դեպքերում և կարգով, քննում է հետաքննության մարմինների, քննիչի, դատախազի և օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմինների որոշումների և գործողությունների օրինականության վերաբերյալ բողոքները»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «Բողոքը ճանաչելով հիմնավորված՝ դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Գտնելով, որ բողոքարկված գործողությունները կատարված են օրենքին համապատասխան, և անձի իրավունքները և ազատությունները խախտված չեն, դատարանը որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին (...):»:

18. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից երևում է, որ այն նպատակ է հետապնդում սահմանել քրեական դատավարության համակարգում անձի սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության կարևորագույն երաշխիքներից մեկը՝ մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության իրավական կառուցակարգը: Ընդ որում, այդ իրավանորմն ընդհանրական է. այն չի սահմանում վերահսկողության կոնկրետ օբյեկտները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 5-րդ մասը նույնպես ամրագրում է ընդհանուր նորմ: Այն սահմանում է մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության կարգով բերված բողոքների քննության արդյունքում կայացվող որոշումների շրջանակը: Մասնավորապես, եթե բողոքը ճանաչվում է հիմնավորված, ապա դատավորը որոշում է կայացնում անձի իրավունքների և ազատությունների խախտումը վերացնելու՝ վարույթն իրականացնող մարմնի պարտականության մասին: Իսկ եթե դատարանը գտնում է, որ բողոքարկված գործողությունները և որոշումները հիմնավորված են և օրինական, հետևաբար՝ անձի իրավունքները կամ ազատությունները խախտված չեն, ապա որոշում է կայացնում բողոքը մերժելու մասին:

19. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ նորմ, որը հստակ կարգավորում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը, ինչպես նաև ընդունված որոշումների հետևանքները: Մասնավորապես, հիշատակված իրավանորմը սահմանում է, որ քրեական գործի

հարուցումը մերժելու մասին որոշման դեմ բերված բողոքի հիման վրա դատարանը վերացնում է բողոքարկվող որոշումը կամ հաստատում այն: Ընդ որում, բողոքարկվող որոշման վերացումը պարտադիր է դարձնում դատախազի կողմից քրեական գործի հարուցումը: Այսինքն՝ քննարկվող իրավանորմը սահմանում է քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման ինքնավար ընթացակարգ:

20. Սույն որոշման 18-19-րդ կետերում շարադրված հիմնավորումները թույլ են տալիս եզրակացնել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը բովանդակում է հատուկ իրավանորմեր, որոնք հստակ կարգավորում են մինչդատական վարույթի շրջանակներում ընդունվող դատավարական ակտերից մեկի՝ քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման կարգը, դրա արդյունքում ընդունվող որոշումների շրջանակը և այդ որոշումների հետևանքով որոշակի իրավահարաբերությունների փոփոխությունները: Հակառակ դրան՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներն ամրագրում են առավելապես ընդհանրական բնույթի նորմեր, որոնք մինչդատական վարույթի նկատմամբ հետագա դատական վերահսկողության սահմանները և քրեական դատավարության այդ փուլում դատարանի լիազորությունները կարգավորում են ընդհանրական ձևով:

Վճռաբեկ դատարանը գտնում է, որ ՀՀ քրեադատավարական օրենքում նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ օրենսդիրը կոնկրետ իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր նորմերից, տվյալ դեպքում՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 278-րդ և 290-րդ հոդվածներից առանձնացրել է այդ նույն իրավահարաբերությունը կարգավորող հատուկ նորմ՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածը արդյունքում հստակեցնելով քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման բողոքարկման դատական կարգն ու դրա արդյունքում դատարանի կողմից կայացվող որոշումը:

21. Սույն որոշման նախորդ կետում շարադրված վերլուծության հիման վրա Վճռաբեկ դատարանը գտնում է, որ նույն իրավահարաբերությունը կարգավորող ընդհանուր և հատուկ նորմերի առկայության դեպքում իրավակիրառողը պետք է կիրառի հատուկ նորմերը և չկիրառի ընդհանուր նորմերը»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ քրեական

դատավարությունում դատական վերահսկողության ընդհանուր իրավակարգավորումներից առանձնացված հատուկ իրավակարգավորման նախատեսումն ունի օբյեկտիվ իրավական հիմքեր և պայմանավորված է քրեադատավարական հարաբերություններում քրեական գործի հարուցման մասին որոշման նշանակությունից: Այդ որոշմամբ ընթացք է առնում քրեական մինչդատական վարույթը: Նման որոշման բացակայության պայմաններում սահմանափակվում է անձի՝ իր խախտված իրավունքների արդյունավետ պաշտպանության հնարավորությունը, միաժամանակ չլուծված կմնան քրեական դատավարության օրենսդրության խնդիրները:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսդիրը, ընդհանուր կանոնից բացառություն կատարելով, քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշման առնչությամբ դատարանին վերապահել է հատուկ լիազորություն՝ մինչդատական վարույթի նշված փուլում ոչ միայն արձանագրելու խախտումը, այլև վերացնելու այն, որպիսի լիազորությունն առավել քան բխում է Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված՝ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների արդյունավետ իրականացումից:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը Ո Ր Ո Շ Ե Ց Ց:

1. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 185-րդ հոդվածի 5-րդ մասի առաջին նախադասությամբ ամրագրված դրույթը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

9 մարտի 2021 թվականի  
ՍԴՈ-1584

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀՀ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ  
ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ  
ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ  
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

16 մարտի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Վ. Գրիգորյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ ♦ 1(101)2021

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2018 թվականի փետրվարի 10-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ին:

Օրենսգրքի «Ողջամիտ ժամկետում գործի քննությունը և լուծումը» վերստառությամբ 9-րդ հոդվածը սահմանում է.

«1. Գործի քննությունը և լուծումը պետք է իրականացվեն ողջամիտ ժամկետում:

2. Դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝

1) գործի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները,

2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը,

3) գործի քննության ընդհանուր տևողությունը,

4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած՝ գործի քննության միջին ուղենիշային տևողությունը:

3. Եթե գործի քննության և լուծման համար օրենքով սահմանված է հատուկ ժամկետ, ապա այն պետք է քննվի և լուծվի այդ ժամկետում: Նման ժամկետի երկարաձգումը թույլատրվում է բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Ընդունվելուց հետո Օրենսգրքի վիճարկվող հոդվածում փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել:

Գործի քննության առիթը ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2019 թվականի դեկտեմբերի 27-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, դիմողի և պատասխանողի գրավոր բացատրությունները, գործում առկա մյուս փաստաթղթերը և վերլուծելով վիճարկվող իրավադրույթն ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

### 1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը նշում է, որ, ըստ էության, ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն այնքանով, որքանով այդ իրավունքի խախտ-

ման կանխարգելման կամ խախտված իրավունքի վերականգնման պատշաճ կառուցակարգեր չեն գործում, հոչակագրային է: Մասնավորապես, դիմողը գտնում է, որ առկա օրենսդրական բացը չի ապահովում ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքի ամբողջական իրացման հնարավորություն:

Դիմողի կարծիքով՝ ողջամիտ ժամկետում արդար դատաքննության իրավունքի լիարժեքությունն ապահովող տարրի՝ ողջամիտ ժամկետի պաշտպանության գործուն կառուցակարգերի բացակայության հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերության ամբողջական և բնականոն իրագործումը:

Վերլուծելով դատական ակտերի բողոքարկման, ընթացիկ դատական գործերով մեկ այլ դատարանի կողմից ողջամիտ ժամկետի պահպանման հարցի քննարկման և ոչ նյութական վնասի հատուցման ընթացակարգերը, դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու և նրան կարգապահական պատասխանատվության ենթարկելու կառուցակարգերը՝ դիմողը եզրահանգում է, որ դրանք արդյունավետ չեն ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումը վերացնելու կամ այն կանխելու համար:

Դիմողը, վկայակոչելով մի շարք երկրների (Մոնտենեգրո, Լեհաստան, Ռուսաստան, Խորվաթիա) ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման կանխարգելիչ միջոցների վերաբերյալ իրավակարգավորումները՝ փաստում է, որ ի տարբերություն ներպետական կարգավորումների՝ նշված երկրների օրենսդրական կարգավորումների արդյունքում սահմանվել են այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառության շնորհիվ հնարավոր է հասնել ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման վերացման կամ այդ իրավունքի խախտման կանխարգելման:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը խնդրում է որոշել Օրենսգրքի 9-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 61, 63, 75 և 81-րդ հոդվածներին:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը հայտնում է, որ արդար դատաքննության իրավունքի բաղկացուցիչ մասը կազմող ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն ապահովելու համար ներպետական համակարգում գոյություն ունեցող միջոցները և դրանց արդյունավետությունը չպետք է կամայական գնահատման ենթարկվեն:

Վերլուծելով Օրենսգրքի 32, 70, 138 և 142-րդ հոդվածները՝ պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքով ուղղակիորեն սահմանված են այն գործուն գսայիչ մեխանիզմ-երաշխիքները, որոնք կոչված են նպաստելու դատավորի կողմից ողջամիտ ժամկետում իր իրավասությանը վերապահված գործերը քննելուն և լուծելուն: Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցումը կարող է ազդեցություն ունենալ և նպաստել նույն դատավորի կողմից գործի քննության ժամկետի ողջամտության ապահովման համար անհրաժեշտ ջանասիրության դրսևորմանը:

Պատասխանողը նշում է, որ ներպետական մակարդակում սահմանվել է արագացված կարգով քննության ենթական գործերի շարք: Մնացած գործերի դեպքում, ընդհանուր չափանիշների կիրառմամբ, դատարանները պետք է անհրաժեշտ ջանասիրություն դրսևորեն գործերը ողջամիտ ժամկետում քննելու համար: Բացի դրանից, իրավունքի խախտման պայմաններում անձը կարող է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17 և 162.1-րդ հոդվածներով սահմանված կարգով պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում:

Ինչ վերաբերում է դիմումում վկայակոչված մի շարք երկրներում կիրառվող կանխարգելիչ միջոցին, այն է՝ դատավարության ձգձգվելու դեպքում շահագրգիռ անձի կողմից դատարանի նախագահին դիմում-բողոք ներկայացնելուն, պատասխանողի կարծիքով նման կարգավորումը կարող է խախտել դատավորների անկախության սկզբունքը:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 9-րդ հոդվածը համապատասխանում է Մահմանադրության պահանջներին:

**3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականությունը որոշելիս Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

- վիճարկվող դրույթով ամրագրված իրավակարգավորումների պայմաններում ապահովվա՞ծ է արդյոք արդար դատաքննության հիմնական իրավունքի բաղադրատարր հանդիսացող ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կենսագործմանն ուղղված անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի առկայությունը:

**4. Մահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**4.1. Մահմանադրության՝ «Արդար դատաքննության իրավունքը»**



վերտառությամբ 63-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է. «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և **ողջամիտ ժամկետում** քննության իրավունք»:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործը ողջամիտ ժամկետում քննելու պահանջն արդար դատաքննության իրավունքի անկյունաքարերից մեկն է, և դրա խախտումը կարող է խաթարել արդարադատության բուն էությունը, ուղղակիորեն վտանգել արդարադատության իրականացման ողջ գործընթացի արդյունավետությունը և կասկածի տակ դնել այդ գործընթացի վստահելիությունը: Միջազգայնորեն ընդունված է այն մոտեցումը, որի համաձայն «ուշացած արդարադատությունը հավասար է մերժված արդարադատության» (օրինակ ECHR, *Cases of Vazagashvili and Shanava v. Georgia, application no. 50375/07, 18/07/2019, and Lopatin and Medvedskiy v. Ukraine, applications nos. 2278/03 and 6222/03, 20/05/2010*), քանի որ գործի քննության անհարկի ձգձգումները, նույնիսկ անկախ գործի ելքից, անարդյունավետ են դարձնում մարդու իրավունքների պաշտպանությունը:

Ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքն իր ամրագրումն է ստացել նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայում (այսուհետ Կոնվենցիա): Այսպես Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի (...) դատարանի կողմից **ողջամիտ ժամկետում** (...) դատաքննության իրավունք:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը բազմիցս անդրադարձել է գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի բովանդակությանը՝ ընդգծելով նաև այդ պահանջի կարևորությունը: Վերջինս, մասնավորապես, նշել է, որ պահանջելով գործերի քննությունն «ողջամիտ ժամկետում» Կոնվենցիան ընդգծում է այն հանգամանքը, որ արդարադատությունը չպետք է իրականացվի այնպիսի ձգձգումներով, որոնք կարող են վտանգել դրա արդյունավետությունն ու վստահելիությունը (*Cases of H. v. France, application no. 10073/82, 24/10/1989, and Katte Klitsche de la Grange v. Italy, application no. 12539/86, 27/10/1994*):

Միևնույն ժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ գործի քննության ողջամիտ ժամկետը չունի ընդհանուր,



բոլոր իրավիճակների համար կիրառելի թվային արտահայտություն. այն ենթակա է գնահատման յուրաքանչյուր դեպքում՝ հաշվի առնելով կոնկրետ գործի հանգամանքները: Ընդ որում, Մահմանադրության 81-րդ հոդվածի ուժով անձի արդար, դատաքննության իրավունքը և դրա բաղադրատարր հանդիսացող՝ ողջամիտ ժամկետում գործի քննության պահանջը մեկնաբանելիս պետք է հաշվի առնվի և կիրառվի, ի թիվս այլնի, նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած պրակտիկան:

Այսպես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որպես գործի քննության տևողության ողջամտության գնահատման չափանիշ առանձնացնում է հետևյալները. գործի բարդությունը, դիմումատուի և համապատասխան մարմինների դրսևորած վարքագիծը, վեճի առարկայի նշանակությունը դիմումատուի համար (**Cases of Comingersoll S.A. v. Portugal [GC], application no. 35382/97, 06/04/2000, Frydlender v. France [GC], application no. 30979/96, 27/06/2000, and Sürmeli v. Germany [GC], application no. 75529/01, 08/06/2006**): Ընդ որում, ըստ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի արտահայտած դիրքորոշումների

- գործի բարդությունը կարող է կապված լինել և՛ փաստերի, և՛ իրավունքի հարցերի հետ (**Case of Katte Klitsche de la Grange v. Italy, cit.**).

- շահագրգիռ անձից պահանջվում է միայն ջանասիրություն ցուցաբերել իրեն առնչվող դատավարական քայլերի կատարման հարցում, ձեռնպահ մնալ ձգձգելու հնարքների գործադրումից և օգտվել ներպետական օրենսդրությամբ տրամադրվող շրջանակներից՝ վարույթի ժամկետը կրճատելու համար (**Case of Unión Alimentaria Sanders S.A. v. Spain, application no. 11681/85, 07/07/1989**).

- միայն պետությանը վերագրելի ձգձգումները կարող են արդարացնել «ողջամիտ ժամկետի» պահանջը խախտելու մասին եզրահանգումը (**Cases of Buchholz v. Germany, application no. 7759/77, 06/05/1981, and Humen v. Poland [GC], 26614/95, 15/10/1999**): Վերոգրյալի լույսի ներքո անդրադառնալով սույն գործով վիճարկվող դրույթի բովանդակությանը՝ Մահմանադրական դատարանն արձանագրում է, որ դրանով սահմանված են ինչպես գործի քննությունը և լուծումը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջը, այնպես էլ այն չափանիշները, որոնք պետք է հաշվի առնել գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս: Մասնավորապես՝ օրենսդիրը սահմանել է, որ դատարանում գործի քննության տևողության ողջամտությունը որոշելիս հաշվի են առնվում՝ 1) գոր-

ծի հանգամանքները, ներառյալ՝ իրավական և փաստական բարդությունը, վարույթի մասնակիցների վարքագիծը և վարույթի մասնակցի համար գործի տևական քննության հետևանքները, 2) հնարավոր սեղմ ժամկետում գործի քննությունն ու լուծումն իրականացնելու նպատակով դատարանի կատարած գործողությունները և դրանց արդյունավետությունը, 3) գործի քննության ընդհանուր տևողությունը, 4) Բարձրագույն դատական խորհրդի սահմանած գործի քննության միջին ուղենիշային տևողությունը: Մինևույն ժամանակ վիճարկվող հողվածով սահմանված է նաև, որ գործի քննության և լուծման համար օրենքով սահմանված հատուկ ժամկետի առկայության դեպքում այն պետք է քննվի և լուծվի այդ ժամկետում, իսկ նման ժամկետի երկարաձգումը թույլատրվում է բացառապես օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող դրույթով ամրագրված իրավակարգավորումները՝ գործի քննության ժամկետի ողջամտության գնահատման համար նախատեսված չափանիշների արդյունավետության առումով, հաշվի առնելով նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանում դրանց վերաբերյալ առկա պրակտիկան և ներպետական պրակտիկայում կիրառելու իրավական հնարավորությունները, համահունչ են արդար դատաքննության սահմանադրական իրավունքին և չեն խոչընդոտում այդ իրավունքի բաղադրատարր հանդիսացող գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի ապահովումը:

Մինևույն ժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ թեև օրենսդիրը որպես գործի քննության ժամկետի ողջամտությունը գնահատելու չափանիշ նախատեսել է նաև Բարձրագույն դատական խորհրդի սահմանած գործի քննության միջին ուղենիշային տևողությունը, սակայն վերջինս մինչ սույն որոշման ընդունման պահը չի իրացրել Օրենսգրքի 89-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետով իրեն վերապահված լիազորությունը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Բարձրագույն դատական խորհրդի կողմից իր նշված լիազորությունն իրականացնելու, իսկ գործի քննության ողջամիտ ժամկետի խախտումների դեպքում իրավասու մարմինների կողմից դրանց արդյունավետորեն արձագանքելու պարագայում հնարավոր է գործնականում բարձրացնել վիճարկվող դրույթում ամրագրված, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից բացահայտված չափորոշիչների հաշվառմամբ գնահատվող գործի

քննության ողջամիտ ժամկետի պահպանման արդյունավետության մակարդակը:

**4.2.** Քանի որ դիմողի կողմից բարձրացվում է նաև ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի իրացման և պաշտպանության համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի, հատկապես կանխարգելիչ կառուցակարգերի բացակայության խնդիրը, Սահմանադրական դատարանը հարկ է համարում բարձրացված հարցը դիտարկել նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի առկայության համատեքստում:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրական դատարանը, 2020 թվականի հունիսի 18-ի ՄԴՈ-1546 որոշման մեջ անդրադառնալով Սահմանադրության 75-րդ հոդվածի բովանդակությանը, արձանագրել է, որ «... ցանկացած օրենսդրական կարգավորում, այլ ոչ թե միայն որևէ հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակում, պետք է նպատակ ունենա և ապահովի բոլոր հիմնական իրավունքների (1) *արդյունավետ իրականացման համար* (2) *անհրաժեշտ* (3) *կազմակերպական* (4) *կառուցակարգեր* և (5) *ընթացակարգեր*: Միայն բոլոր այս պայմանների միաժամանակյա առկայությունը ցանկացած օրենսդրական կարգավորման մեջ, առավել ևս որևէ հիմնական իրավունք կամ ազատություն սահմանափակող օրենսդրական կարգավորման մեջ, կարող է ապահովել դրա համապատասխանությունը Սահմանադրությանը»: Իսկ 2020 թվականի դեկտեմբերի 8-ի ՄԴՈ-1571 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է, որ «Պետությունը պետք է ստեղծի անհրաժեշտ երաշխիքներ մարդու իրավունքների և ազատությունների արդյունավետ իրացման համար: Պետությունը պարտավորվում է ոչ միայն ճանաչել, պահպանել և պաշտպանել իրավունքները և ազատությունները, այլև ստեղծել պետական-իրավական այնպիսի կառուցակարգեր, որոնք արդյունավետ ձևով կարող են կանխել, վերացնել դրանց ցանկացած խախտումներ, վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ պետությունն առաջին հերթին պետք է սահմանի անհրաժեշտ կազմակերպական այնպիսի կառուցակարգեր և ընթացակարգեր, որոնք կապահովեն ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի արդյունավետ իրացումը՝ կանխելով արդար դատաքննության իրավունքի հնարավոր խախտումները, մյուս կողմից, գործի քննության ձգձգումների դեպքում պետք է ապահովի ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի արդյունավետ պաշտպանության հնարավորություն:

Անդրադառնալով գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի պահպանումն ապահովելու հարցին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ պետությունն իր իրավական համակարգը պետք է կազմակերպի այնպես, որ դատարանները հնարավորություն ունենան և իրենց իրավասությանը վերապահված գործերը քննեն ողջամիտ ժամկետում (տե՛ս նաև՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ **Case of Cappello v. Italy, application no. 12783/87, 27/02/1992** գործով արտահայտած դիրքորոշումը):

Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի տարեկան հաղորդման<sup>1</sup> մեջ արտացոլված գործերի քանակական ցուցանիշների և գործերի քննության ժամկետների վերաբերյալ տվյալների, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից Հայաստանի Հանրապետության դեմ կայացված վճիռների ուսումնասիրությունը վկայում է ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի կենսագործման հարցի կապակցությամբ առկա խնդրահարույց իրավիճակի մասին: Դրա հիմքում կարող են ընկած լինել տարբեր գործոններ: Ընդ որում, դրանց մի մասի վրա հնարավոր է ներազդել գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի չպահպանման դեպքում դատավորի համար հետևանքներ նախատեսելու միջոցով, որոնք գործող իրավակարգավորումների պայմաններում արտահայտվում են դատավորի գործունեության գնահատման և դատավորի կարգապահական պատասխանատվության կառուցակարգերի շրջանակներում (Օրենսգրքի 138-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետ, 142-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ՝ փոխկապակցված 67-րդ հոդվածի 1-ին մասի և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետի հետ): Սակայն քննարկված միջոցներն առաջարկում են միայն տեղային լուծումներ՝ էական

<sup>1</sup> Հասանելի է հետևյալ հղումով՝ [https://new.court.am/storage/uploads/files/service-page/T63G7RkWdVgDq\\_UN-jPVM5ddAQjTGmCyQJhrhWaXm.pdf](https://new.court.am/storage/uploads/files/service-page/T63G7RkWdVgDq_UN-jPVM5ddAQjTGmCyQJhrhWaXm.pdf).

նշանակություն չունենալով համակարգային խնդրի տեսանկյունից:

Միննույն ժամանակ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ հաճախ մատնանշվում է դատարանների ծանրաբեռնվածությունը՝ առանձին դեպքերում այն կապելով գործերի քննության երկարաձգումների հետ (օրինակ Բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի տարեկան հաղորդումը, «Հայաստանի Հանրապետության դատական և իրավական բարեփոխումների 2019-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագրերը հաստատելու մասին» Կառավարության 2019 թվականի հոկտեմբերի 10-ի 1441-Լ որոշումը): Այս կապակցությամբ Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ արդարադատության արդյունավետության մակարդակը չի բնութագրվում բացառապես հնարավոր ամենակարճ ժամկետում քննվող և լուծվող գործերի թվային ցուցանիշով. դատարանները կրում են արդար դատաքննության բոլոր պահանջներին համահունչ գործերի քննություն իրականացնելու պարտականություն, իսկ դատարանների ծանրաբեռնվածությունը կարող է վտանգել առաջադրված բոլոր պահանջների միաժամանակյա ապահովումը: Ուստի՝ անհրաժեշտ է ապահովել դատարանների այնպիսի ծանրաբեռնվածություն, որի պայմաններում վերջիններս հնարավորություն կունենան գործերի քննությունն իրականացնել ողջամիտ ժամկետում՝ միաժամանակ արդար դատաքննության իրավունքի նաև մյուս պահանջների պահպանմամբ:

Այսպիսով, գործերի քննության ժամկետները սերտորեն կապված են հետևյալ տարրերի հետ.

- քննվող գործերի քանակ,
- գործերը քննող համակարգին հասանելի ռեսուրսներ (մարդկային և նյութական),
- գործերի քննության որակ (նյութական առումով դատական ակտի որակ և համապատասխանություն դատավարական պահանջներին) (**այս մասին նաև՝ Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով, CEPEJ (2004) 19 REV 2, 13/09/2005**):

Ասվածը նշանակում է, որ վերոթվարկյալ տարրերում կատարվող փոփոխությունները (դատարաններում քննվող գործերի քանակի նվազեցում, դատարաններին հասանելի մարդկային և նյութական ռեսուրսների ավելացում, գործերի քննության կարգի պարզեցում)՝ հանգեցնում են գործերի քննության ժամկետների կրճատմանը՝ նպաստելով գործի քննությունը ողջամիտ ժամկետում

իրականացնելու պահանջի կատարման ապահովմանը: Մահմանադրական դատարանը հարկ է համարում Ազգային ժողովի ուշադրությունը հրավիրել գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի կենսագործման ընդհանուր խնդրի վրա՝ հորդորելով նախատեսել գործի քննության ողջամիտ ժամկետի խախտման հետևանքով արդար դատաքննության իրավունքի բուն էության խաթարումը կանխող անհրաժեշտ և բավարար երաշխիքներ:

4.3. Անդրադառնալով գործի քննության անհարկի ձգձգումների դեպքում անձին տրամադրվող պաշտպանության միջոցներին՝ Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում դրանք քննարկել՝ հաշվի առնելով նաև այդ հարցի կապակցությամբ առկա միջազգային փորձը:

Այսպես Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, անդրադառնալով ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտման կապակցությամբ պաշտպանության արդյունավետ միջոցներ սահմանելու հարցին, մասնավորապես, արտահայտել է հետևյալ դիրքորոշումները.

- պաշտպանության միջոցը պետք է լինի արդյունավետ, բավարար և հասանելի (**Case of Paulino Tomas v. Portugal (dec.), application no. 58698/00, 27/03/2003**).

- ինչ վերաբերում է դատական գործերի տևողության կապակցությամբ պաշտպանության միջոցների «արդյունավետությանը», լավագույն լուծումը, անվիճելիորեն, ինչպես շատ ոլորտներում, կանխարգելումն է: Երբ որևէ պետության դատական համակարգը թերանում է ողջամիտ ժամկետի պահանջի կատարման ապահովման տեսանկյունից, գործի քննության արագացման համար նախատեսված միջոցը՝ դրա չափազանց երկարաձգումը կանխելու համար, ամենաարդյունավետ լուծումն է: Նման միջոցն անհերքելի առավելություն ունի միայն փոխհատուցում պարունակող միջոցի նկատմամբ, քանի որ այն նաև կանխում է հետագա խախտումների արձանագրումը նույն վարույթի կապակցությամբ և միայն a posteriori չի վերականգնում խախտումը, ինչն անում է փոխհատուցման միջոցը: Հետևաբար, այս տեսակի միջոցներն «արդյունավետ» են այնքանով, որքանով դրանք արագացնում են համապատասխան դատարանի որոշման կայացման գործընթացը: Միևնույն ժամանակ, դատավարությունը արագացնելու համար նախատեսված միջոցը կարող է համարժեք չլինել այն իրավիճակը շտկելու համար,

երբ գործի քննությունն ակնհայտորեն արդեն չափազանց երկար է տևել: Նման իրավիճակներում տարբեր տեսակի միջոցները, ներառյալ՝ փոխհատուցման միջոցը, կարող են պատշաճ կերպով վերականգնել խախտումը: Բացի դրանից, պետությունները կարող են ընտրել երկու տեսակի միջոցները. մեկը՝ նախատեսված վարույթն արագացնելու համար, և մյուսը՝ փոխհատուցում տալու համար՝ չնայած որ նրանք կարող են նաև որոշել ներդնել միայն փոխհատուցումը միջոց առանց այդ միջոցն անարդյունավետ համարելու (**Cases of Scordino v. Italy (no. 1) [GC], application no. 36813/97, 29/03/2006, Fil LLC v. Armenia, application no. 18526/13, 31/01/2019, and Keaney v. Ireland, application no. 72060/17, 30/04/2020**):

Գործի քննության չափազանց երկար տևողության կապակցությամբ պաշտպանության ազգային միջոցների արդյունավետության հարցին անդրադարձել է նաև «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովը (Վենետիկի հանձնաժողով) նշելով, մասնավորապես, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված ողջամիտ ժամկետի պահանջի կապակցությամբ Կոնվենցիայի 13-րդ հոդվածի պահանջներին ամբողջությամբ համապատասխանելու համար Եվրոպայի խորհրդի անդամ պետությունները պետք է ապահովեն առաջին հերթին արագացնող միջոցներ, որոնք նախատեսված են կանխելու ցանկացած (հետագա) անհարկի ձգձգում ցանկացած պահի մինչև գործի քննության ավարտը: Ի լրումն՝ նրանք պետք է ապահովեն փոխհատուցող միջոցներ ողջամիտ ժամկետի պահանջի ցանկացած խախտման համար, որն արդեն առաջացել է գործի քննության ընթացքում (նախքան արագացնող արդյունավետ միջոցների գործադրումը) (**CDL-AD(2006)036rev, 03/04/2007**):

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ, որպես ողջամիտ ժամկետում գործի քննության իրավունքի խախտումներից պաշտպանության միջոց՝ Հայաստանի Հանրապետությունում ներդրվել է փոխհատուցման ինստիտուտ, այն է՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանված է նման դեպքերում ոչ նյութական վնասի հատուցում պահանջելու իրավական հնարավորություն (ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 162.1-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ փոխկապակցված նույն օրենսգրքի 14-րդ հոդվածի և 17-րդ հոդվածի 1-ին մասի հետ): Սահմանադրական դատարանը, արձանագրելով նման կառուցակարգի առկայությունը, դրա սահմանադրականությանը սույն գործի շրջանակներում չի



անդրադառնում՝ հաշվի առնելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 10-րդ մասի պահանջը:

4.4. Սահմանադրական դատարանը հարկ է համարում դիմողի բարձրացրած հարցը դիտարկել նաև օրենսդրական բացի տեսանկյունից՝ պայմանավորված այն իրողությամբ, որ, ըստ դիմողի, գործի քննությունը ողջամիտ ժամկետում իրականացնելու պահանջի խախտումից պաշտպանության լավագույն միջոցը կանխարգելիչ կառուցակարգերի նախատեսումն է, ինչը բացակայում է ՀՀ օրենսդրությամբ:

Այդ առումով միջազգային մարմինների վերը վկայակոչված իրավական դիրքորոշումները հաշվի առնելով՝ Սահմանադրական դատարանը, համաձայնելով դիմողի հետ և արձանագրելով նման ինստիտուտի նշանակությունն արդար դատաքննության իրավունքի պաշտպանության առավել ամբողջական և արդյունավետ համակարգի ապահովման տեսանկյունից, այդուհանդերձ, գտնում է, որ այդ հարցի լուծումը գտնվում է օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում: Սահմանադրական դատարանն իր մի շարք, մասնավորապես՝ ՍԴՈ-864, ՍԴՈ-914, ՍԴՈ-922, ՍԴՈ-1020, ՍԴՈ-1143, ՍԴՈ-1255 որոշումներում իրավունքի բացի սահմանադրականության հարցը քննության առնելու իրավասության վերաբերյալ արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ իրավակարգավորման բացի նորմատիվ իրավական լուծումն օրենսդիր իշխանության իրավասությունն է: Մասնավորապես՝ համաձայն հիշյալ որոշումների՝ իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և Սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարել արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Զարգացնելով իր հիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ Սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական



երաշխիքներ, կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ Սահմանադրական դատարանի քննությանը (29.10.2019թ., ՄԴՈ-1486):

Տվյալ դեպքում որպես ենթադրյալ օրենսդրական բացի հաղթահարմանն ուղղված միջոցների օրինակ՝ դիմողը ներկայացնում է արտասահմանյան մի շարք երկրներում գործող գործի քննության ողջամիտ ժամկետի ապահովման, դրա մշտադիտարկման կամ այդ ժամկետի խախտման դեպքում հետևանքների վերացմանն ուղղված օրենսդրական կարգավորումներ: Այս առնչությամբ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ կասկածից վեր է, որ գործի քննության ողջամիտ ժամկետի պահպանումը, դրա խախտումները կանխելու և/կամ խախտումների հետևանքները վերացնելուն ուղղված միջոցների ձեռնարկումը պետության պոզիտիվ պարտականությունն են, սակայն այն հարցը, թե պրակտիկայում գործող միջոցներից որի ն է նպատակահարմար նախապատվություն տալ, ամբողջովին գտնվում է օրենսդրի հայեցողական լիազորությունների տիրույթում: Ընդ որում, այդ միջոցներն ընտրելիս նաև անհրաժեշտ է հաշվի առնել Սահմանադրության պահանջների պահպանման անհրաժեշտությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող Օրենսգրքի 9-րդ հոդվածն ինքնին սահմանադրականության առումով խնդրահարույց չէ, սակայն օրենսդրի խնդիրն է, արձագանքելով սույն որոշմամբ մատնանշված խնդիրներին, նախատեսել այնպիսի ընթացակարգեր, որոնք առավել արդյունավետ կերպով կապահովեն ողջամիտ ժամկետում գործի քննության սահմանադրական իրավունքի իրացումը և պաշտպանությունը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 9-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ**

**Ա. ԴԻԼԱՆՅԱՆ**

16 մարտի 2021 թվականի  
ՍԴՈ-1585



**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՌՈՒԲԵՐՏ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԵՎ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ  
ԱՅՑԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ  
ԴԻՍՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ  
300.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Քաղ. Երևան

26 մարտի 2021թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Ա. Դիլանյանի (նախագահող), Հ. Թովմասյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Ե. Խունդկարյանի, Է. Շաթիրյանի, Ա. Պետրոսյանի, Ա. Վաղարշյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմող՝ Ռոբերտ Քոչարյանի ներկայացուցիչ՝ փաստաբան Ա. Վարդևանյանի, դիմող՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի և 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 69 և 71-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021  
403

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Ռոբերտ Քոչարյանի և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումների հիման վրա Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2003 թվականի ապրիլի 18-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2003 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի օգոստոսի 1-ին:

*Օրենսգրքի՝ սույն գործով վիճարկվող՝ «Սահմանադրական կարգը տապալելը» վերտառությանը 300.1-ին հոդվածը սահմանում է.*

*«1. Սահմանադրական կարգը տապալելը՝ Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված որևէ նորմը փաստացի վերացնելը, որն արտահայտվում է իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցմամբ՝*

*պատժվում է ազատազրկմամբ՝ տասից տասնհինգ տարի ժամկետով:*

*2. Սույն հոդվածով նախատեսված հանցագործության նախապատրաստության փուլում դրան մասնակցող անձի կողմից հանցագործության նախապատրաստության մասին իրավապահ մարմիններին կամավոր հայտնած անձն ազատվում է սույն հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվությունից»:*

Օրենսգիրքը 300.1-ին հոդվածով լրացվել է Ազգային ժողովի կողմից 2009 թվականի մարտի 18-ին ընդունված, Հանրապետության նախագահի կողմից 2009 թվականի մարտի 20-ին ստորագրված և 2009 թվականի մարտի 24-ին ուժի մեջ մտած ՀՕ-53-Ն օրենքով:

Գործի քննության առիթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով 2019 թվականի մայիսի 20-ին կայացրած՝ «Սահմանադրական դատարանի դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշման հիման վրա 2019 թվականի մայիսի 20-ին, ինչպես նաև Ռոբերտ Քոչարյանի՝ 2019 թվականի մայիսի 29-ին և հունիսի 4-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

Սահմանադրական դատարանը 2019 թվականի հունիսի 21-ի ՍԴԱՈ-61 աշխատակարգային որոշմամբ «Ռոբերտ Քոչարյանի

դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ Սահմանադրության 72 և 73-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել է քննության, միավորել այն 2019 թվականի հունիսի 21-ի ՍԴԱՌ-60 աշխատակարգային որոշմամբ քննության ընդունված «Ռոբերտ Քոչարյանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի հետ և որոշել է հիշյալ գործերը քննել դատարանի նույն նիստում:

Սահմանադրական դատարանը 2019 թվականի հուլիսի 8-ի ՍԴԱՌ-72 աշխատակարգային որոշմամբ «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել է քննության, իսկ նույն դիմումի հիման վրա գործի քննությունը՝ ա) Քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2009 թվականի մարտի 20-ին ընդունված ՀՕ-53-Ն օրենքի ուժի մեջ գտնվելը գործող խմբագրությամբ)՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասով, և բ) Սահմանադրության 56.1-րդ և 57-րդ հոդվածները (2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 140-րդ և 141-րդ հոդվածները) Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածների համատեքստում մեկնաբանելու մասով, մերժել:

2019 թվականի հուլիսի 18-ի ՍԴԱՌ-81 և ՍԴԱՌ-82 աշխատակարգային որոշումներով Սահմանադրական դատարանը Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 16-րդ արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա՝ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանին:

Միաժամանակ, նույն որոշումներով Սահմանադրական դատարանը «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Վենետիկի հանձնաժողով) կանոնադրության հիման վրա՝ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով դիմել է նաև այդ հանձնաժողովին:

Հիշյալ որոշումներով Սահմանադրական դատարանը որոշել է համապատասխանաբար՝ «Ռոբերտ Քոչարյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության

հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը և «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցնել՝ մինչև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Վենետիկի հանձնաժողովի խորհրդատվական կարծիքներն ստանալը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի խորհրդատվական կարծիքը հրապարակվել է 2020 թվականի մայիսի 29-ին, իսկ Վենետիկի հանձնաժողովի խորհրդատվական կարծիքը՝ 2020 թվականի հունիսի 18-ին, Սահմանադրական դատարանն իր 2020 թվականի հունիսի 22-ի ՄԴԱՌ-136 և ՄԴԱՌ-137 աշխատակարգային որոշումներով արձանագրել է, որ վերը նշված գործերի վարույթները կասեցնելու հիմքերը վերացել են, և որոշել է դրանք վերսկսել:

2020 թվականի հունիսի 22-ի ՄԴԱՌ-138 աշխատակարգային որոշմամբ Սահմանադրական դատարանը «Ռոբերտ Քոչարյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը և «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը միավորել է և որոշել քննել դատարանի նույն նիստում:

Ուսումնասիրելով դիմումները և գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև կողմերի գրավոր բացատրությունները, վերլուծելով վիճարկվող հոդվածի ու դրա հետ փոխկապակցված օրենսդրական այլ նորմեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

**1. Դիմողների դիրքորոշումները**

1.1. Դիմող Ռոբերտ Քոչարյանը բարձրացրել է Օրենսգրքի՝ «Սահմանադրական կարգը տապալելը» վերտառությամբ 300.1-ին հոդվածի՝ Սահմանադրության 72, 73, 78 և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը:

Հղումներ կատարելով Սահմանադրության նշված հոդվածներին, Սահմանադրական դատարանի մի շարք որոշումներում արտա-

հայտված իրավական դիրքորոշումներին, վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ նաև Կոնվենցիա), ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ նաև ՄԻԵԴ) պրակտիկան, վերլուծելով Օրենսգրքի վիճարկվող հոդվածով սահմանված իրավակարգավորումը և համադրելով այն օրենսդրական այլ դրույթների հետ՝ դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 300.1-ին հոդվածը ձևակերպված չէ բավարար հստակությամբ, որոշակիությամբ և չի ապահովում նորմի կանխատեսելիությանը ներկայացվող պահանջները:

Դիմողի պնդմամբ, նախևառաջ, որոշակի և կանխատեսելի չէ «իրավական համակարգում սահմանադրական նորմի գործողության դադարեցում» եզրույթը, և կարիք կա դրա սահմանադրաիրավական բովանդակության բացահայտման: Իրավակիրատ պրակտիկայում սահմանադրական նորմի ենթադրյալ խախտումը նույնացվում է այդ նորմի գործողության դադարեցման հետ: Նշված դեպքում հնարավոր է իրավիճակ, երբ համապատասխան նորմի ցանկացած խախտում դիտարկվի որպես սահմանադրական կարգի տապալում: Դիտարկելով «իրավական համակարգ» եզրույթը՝ դիմողը նշում է, որ նեղ իմաստով այն ընկալվում է որպես իրավական ակտերի ամբողջություն, որի դեպքում նորմի գործողության դադարեցումը դրսևորվում է ակտի փոփոխությամբ կամ ուժը կորցնելով, ինչը խնդրահարույց է, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ոչ բոլոր դեպքերում իրավական ակտի փոփոխելը կամ ուժը կորցրած ճանաչելը կարող է հանդիսանալ սահմանադրական կարգի տապալում: Բացի դրանից, Օրենսգրքի 300.1-ին հոդվածի ընդունման պահին դրանով նախատեսված սահմանադրական համապատասխան նորմերը 2015 թվականի խմբագրությամբ Սահմանադրությամբ էական փոփոխություններ են կրել, և հարց է առաջանում, թե 300.1-ին հոդվածը գործնականում իրացնելիս պետք է ղեկավարվել նախկին, թե՛ ներկա խմբագրությամբ Սահմանադրության համապատասխան նորմերով, քանի որ դրանց օբյեկտները և կարգավորման շրջանակներն էապես տարբեր են: Լայն մեկնաբանման դեպքում հոդվածում հստակ չեն այն չափանիշները, որոնցով պետք է գնահատել իրավական նորմի գործողության դադարեցումն իրավական համակարգում, մասնավորապես, արդյոք այն ենթադրում է կոնկրետ հոդվածի ուժը կորցրած ճանաչելու գործընթաց, թե՛ գործողություններ, որոնք հիմք կտան ենթադրելու, որ այդ նորմերը փաստացի չեն գործում: Ըստ դիմողի՝ պարզ չէ նաև ժամանակային

տևողության հարցը: Պարզ չէ նաև, թե արդյոք «սահմանադրական կարգ» եզրույթը պետք է դիտարկել որպես ավելի բարդ և համընդգրկուն երևույթ, թե՛ մեկնաբանել միայն Սահմանադրության առանձին հոդվածների շրջանակում: Բացի դրանից, դիմողի կարծիքով՝ օրենսդիրը նաև ամբողջությամբ նոր մոտեցումներ է սահմանել վրահասնող իրավական հետևանքների առումով: 2008 թվականին առկա չի եղել «փաստացի դադարեն իրավական համակարգում գործողությունից» ձևակերպումը, ինչը ևս չի համապատասխանում իրավական որոշակիության չափորոշիչին:

Անդրադառնալով իրավակիրառ պրակտիկայի միջոցով որոշակիությանն առնչվող խնդրի հաղթահարմանը՝ դիմողը նշել է, որ 2009 թվականից ի վեր առկա չէ դրա մեկնաբանությանը վերաբերող կայուն դատական պրակտիկա, որը կապահովեր իրավական որոշակիություն և կանխատեսելիություն:

Դիմողի կարծիքով որոշակիությանն առնչվող սահմանադրական պահանջի տեսանկյունից խնդրահարույց են նաև Օրենսգրքի 300.1-ին հոդվածի հանցակազմի տարրերը՝ ի թիվս այլնի, հաշվի առնելով Օրենսգրքի 300.1-ին հոդվածի և Օրենսգրքի նախկին խմբագրությամբ 300-րդ հոդվածի հանցակազմերի տարրերի միջև տարբերությունները (այդ թվում՝ էական):

Ի լրումն դիմողը վկայակոչում է Ազգային ժողովի նիստերի սղագրությունները՝ ի հավաստումն այն բանի, որ օրենսդիր մարմնի կողմից ևս հավաստվել է նշված դրույթի իրավական որոշակիության պահանջներին չհամապատասխանելու հանգամանքը:

Անդրադառնալով վիճարկվող իրավադրույթների՝ համաչափության սկզբունքին համապատասխանության հարցին՝ դիմողը նշում է, որ նշված իրավադրույթներով օրենսդիրը սահմանադրական կարգի հիմունքները պաշտպանելու նպատակով քրեական պատասխանատվություն է սահմանել նաև այնպիսի արարքների համար, որոնք կարող են չվտանգել սահմանադրական կարգի հիմունքները, որի արդյունքում Օրենսգրքի 300.1-ին հոդվածի քրեական պատասխանատվության օբյեկտիվ հիմքերը պիտանի և անհրաժեշտ չեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար (նշվածը դիմողը հիմնավորում է նաև ներկայացված իրավահամեմատական վերլուծությամբ): Սահմանափակվող իրավունքի և ազատության նշանակության համատեքստում ընտրված միջոցի համարժեքության վերաբերյալ դիմողը նշել է, որ խնդրահարույց է այնպիսի գործողությունների քրեականացումը, որոնք, նույնիսկ եթե կարող են հանգեցնել սահմանադրական



կարգի տապալմանը, սակայն նպատակաուղղված չեն սահմանադրական կարգի հիմունքների մերժմանն ու վերացմանը (չեն ուղղորդվում բռնությամբ, անհանդուրժողականությամբ, ատելության քարոզով):

Դիմողը, իրականացնելով Օրենսգրքի 300.1-ին հոդվածի և 300-րդ հոդվածի (նախկին խմբագրությամբ) հանցակազմերի տարրերի համադրություն, հանգել է հետևության, որ նշվածում պարունակվող սահմանադրական կարգի շրջանակները ոչ միայն չեն համապատասխանում Սահմանադրությամբ ամրագրված շրջանակներին և, ըստ էության, հանցագործությանը ներկայացվող պահանջներին Սահմանադրության 72-րդ հոդվածի լույսի ներքո, այլ նաև տեղի է ունեցել հանցակազմի տարրերի այնչափ էական փոփոխություն, որ կիրառելով այն 2008 թվականի փետրվար-մարտ ամիսներին տեղի ունեցած ենթադրյալ քրեորեն հետապնդելի արարքների նկատմամբ՝ խախտվում և խախտվել է դիմողի Սահմանադրության 72-րդ հոդվածով երաշխավորված իրավունքը և սահմանադրի պահանջը, քանի որ վիճարկվող դրույթները 2008 թվականի փետրվար-մարտ ամիսներին «կատարման պահին հանցագործություն չեն հանդիսացել»:

Միաժամանակ, դիմողն անդրադարձել է նաև Օրենսգրքի նախկին խմբագրությամբ 300-րդ հոդվածի իրավակիրատ պրակտիկային, ինչպես նաև Օրենսդրի, Վեներտիկի հանձնաժողովի կողմից նշված հանցակազմերի համեմատություններին՝ փաստելով, որ 300.1-ին հոդվածը դիտարկվում է որպես որակապես նոր, ինքնուրույն հանցակազմ:

Արդյունքում՝ ի թիվս այնի, դիմողը եզրակացնում է, որ Օրենսգրքի 300.1-ին հոդվածով նախատեսված արարքը նման ձևով և բովանդակությամբ ենթադրյալ կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել, որի արդյունքում նշված մեղադրանքի առաջադրումը, կալանավորման կիրառումը և դրա վերաբերյալ դատական պաշտպանության սպառման արդյունքում խնդրին պատշաճ գնահատական չտալը խախտել են Սահմանադրության 72 և 73-րդ հոդվածներով սահմանված պահանջները:

**1.2.** Դիմող Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (այսուհետ՝ Դատարան) բարձրացրել է Օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրության 72, 73 և 79-րդ հոդվածներին համապատասխանության հարցը՝ նշելով, որ առկա են հիմնավոր կասկածներ առ այն, որ կիրառման ենթակա նոր օրենքը ոչ միայն չի ապահովում իրավական որոշակիության

պահանջը, այլև, ի համեմատություն նախորդ օրենքի, անձանց իրավական վիճակը վատթարացնող օրենք է:

Մասնավորապես, նախորդ կամ գործող օրենքի ճիշտ կիրառման հարցը լուծելիս անհրաժեշտ է համադրել ոչ միայն պատժամասերը, այլև դիսպոզիցիաները: Տվյալ դեպքում, ըստ դիմողի թեև նախորդ և նոր օրենքները նախատեսում են միևնույն պատժատեսակը և պատժաչափը, սակայն դրանցում էականորեն տարբերվում են այդ հոդվածների դիսպոզիցիաները, որոնցից նախորդ օրենքի դիսպոզիցիայի ծավալն ավելի նեղ է (նախորդող իրավանորմով պատասխանատվություն էր սահմանվում սահմանադրական կարգը բռնությամբ տապալելուն ուղղված գործողությունների համար, մինչդեռ գործող կարգավորմամբ հանցակազմն առկա է նաև առանց այդ հատկանիշի (բռնությունը կարող է լինել տվյալ հոդվածով նախատեսված հանցակազմի ոչ պարտադիր տարր):

Դատարանը նշում է նաև, որ Օրենսգրքի 300.1-ին հոդվածի բովանդակության բացահայտման համար պետք է հիմնվել այդ հոդվածում նշված Սահմանադրության համապատասխան հոդվածների վրա, սակայն առկա է անորոշություն՝ հաշվի առնելով այն հանգամանքը, թե ո՞ր թվականի խմբագրությամբ Սահմանադրությանը (2005, թե՛ 2015 թվականի) պետք է հղում կատարվի:

Բացի դրանից, Դատարանը խնդրահարույց է համարում այն հարցը, թե արդյոք Օրենսգրքի 300.1-ին հոդվածի հնարավոր տարածական և լայն ձևակերպման համատեքստում հնարավոր է դրսևորել համապատասխան վարքագիծ՝ մասնավորապես, արդյոք ողջամտորեն որոշակի և կանխատեսելի է, թե «իրավական նորմի փաստացի վերացումը» ի՞նչ գործողություններ է ենթադրում, ինչպե՞ս կարող է այն իրականացվել, «իրավական համակարգ» եզրույթը օգտագործված է լա՞յն, թե՛ նեղ իմաստով, նույն իրավական նորմի գործողությունը ինչպե՞ս կարող է դադարեցվել, մասնավորապես դադարեցումը կարող է կրել էպիգոդի կ՞ թե՛ համակարգային, վերջնակա՞ն, թե՛ նաև ժամանակավոր բնույթ:

**2. Պատասխանողի դիրքորոշումները**

Պատասխանողը, վկայակոչելով Սահմանադրության 1, 72, 73, 78 և 79-րդ հոդվածները, վերլուծելով Օրենսգրքի 300.1-ին հոդվածը, նշում է, որ հանցագործության օբյեկտիվ կողմը կարող է դրսևորվել Սահմանադրությամբ նախատեսված պետական իշխանության կառուցվածքը փոխելով, իշխանության առանձին ինստիտուտներ վերացնելով և դրանց փոխարեն նոր ինստիտուտներ սահմանելով,

կառավարման ժողովրդավարական սկզբունքները վերացնելով, իշխանության առանձին ինստիտուտների ձևավորման Սահմանադրությամբ նախատեսված կարգը խախտելով, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը խախտելով, մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները ռոտնահարելով, սահմանափակելով, Սահմանադրության բարձրագույն իրավաբանական ուժը և նրա նորմերի անմիջական գործողությունը վերացնելով: Ինչ վերաբերում է հանցագործության սուբյեկտիվ կողմին, պատասխանողը նշում է, որ այն բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, որտեղ հանցագործության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձը:

Պատասխանողը հավելել է, որ օրենսդիրը սույն սահմանադրաիրավական վեճի առարկա հանդիսացող Օրենսգրքի 300.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանել է խրախուսական նորմ, համաձայն որի՝ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության նախապատրաստության փուլում դրան մասնակցող անձի կողմից հանցագործության նախապատրաստության մասին իրավապահ մարմիններին կամավոր հայտնած անձն ազատվում է հոդվածի 1-ին մասով նախատեսված քրեական պատասխանատվությունից:

Պատասխանողը, հղում կատարելով Օրենսգրքի 3-րդ հոդվածին, արձանագրել է, որ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք կատարելն է, որից հետևում է, որ քրեական պատասխանատվության է ենթակա այն անձը, որի կողմից կատարված հանրորեն վտանգավոր արարքն ուղղակիորեն նախատեսված է Օրենսգրքի հատուկ մասի որևէ նորմով, և նշված դրույթն ապահովելու համար պետք է իրականացնել անձի կողմից կատարված հանցանքի ճիշտ որակում՝ անդրադառնալով նաև հանցագործության որակման կարգին:

Անդրադառնալով սահմանադրաիրավական վեճի շրջանակներին վերաբերող իրավական որոշակիության, համաչափության, կանխատեսելիության և հետադարձ ուժի կիրառման սահմանադրաիրավական պահանջներին՝ պատասխանողը վկայակոչել է, մասնավորապես, ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1000, ՄԴՈ-1148, ՄԴՈ-1270 որոշումներում Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները:

Իր եզրահանգումների և դիրքորոշումների համակցությունից բխեցնելով, որ վիճարկվող իրավակարգավորումը՝ օրենսդրի կողմից ամրագրված համապատասխան իրավական գործիքակազմով սույն սահմանադրաիրավական վեճի շրջանակներում ապահովում

է սահմանադրական պահանջների լիարժեք իրացումը, պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 300.1-ին հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

**3. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի խորհրդատվական կարծիքը<sup>1</sup>**

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի հուլիսի 18-ի ՍԴԱՈ-81 և ՍԴԱՈ-82 աշխատակարգային որոշումներով, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի (այսուհետ՝ նաև՝ Կոնվենցիա) 16-րդ արձանագրության 1-ին հոդվածի հիման վրա՝ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով դիմել է Մարդու իրավունքների եվրոպական դատարան՝ առաջադրելով հետևյալ հարցերը. 1) արդյո՞ք որակական նույն պահանջներն են ներկայացվում (որոշակիություն, հասանելիություն, կանխատեսելիություն, կայունություն) Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով հանցագործություն սահմանող «օրենք» հասկացության և Կոնվենցիայի այլ օրինակ՝ 8-11-րդ հոդվածներում գործածվող «օրենք» հասկացության նկատմամբ, 2) եթե ոչ, ապա ինչպիսի՞ չափորոշիչներով են դրանք սահմանազատվում, 3) կարո՞ղ է, արդյո՞ք, ավելի բարձր իրավաբանական ուժ և վերացականության ավելի բարձր աստիճան ունեցող իրավական ակտերի որոշակի իրավադրույթներին հղում պարունակող և դրա ուժով հանցագործություն սահմանող քրեական օրենքը բավարարել որոշակիության, հասանելիության, կանխատեսելիության և կայունության պահանջները, 4) քրեական օրենքի հետադարձ կիրառման արգելքի սկզբունքին (Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մաս) համապատասխան՝ ինչպիսի՞ չափորոշիչներ են սահմանված հանցանքի կատարման պահին գործող և դրանից հետո փոփոխված քրեական օրենքների համադրման համար՝ պարզելու դրանց բովանդակային (էական) նմանությունները կամ տարբերությունները:

2020 թվականի մայիսի 29-ի՝ «Հանցանքի սահմանման մեջ «բլանկետային հղում» կամ «օրենսդրություն՝ ըստ հղման» տեխնիկայի կիրառման և հանցանքի կատարման պահին գործող ու փոփոխված քրեական օրենքի համեմատության չափորոշիչների վերաբերյալ» խորհրդատվական կարծիքում (դիմում թիվ P16-2019-001) ՄԻԵԴ-ը, մասնավորապես, նշել է.

«(...) 77. 7-րդ հոդվածով ամրագրված երաշխիքը, որը օրենքի

<sup>1</sup> <https://www.echr.am/resources/echr/judgments/19963d5f567f262c689eab822767f39c.pdf>

գերակայության էական տարր է, Կոնվենցիայի պաշտպանության համակարգում գլխավոր տեղ է գրավում, որը հատկապես ընդգծվում է այն հանգամանքով, որ 15-րդ հոդվածի համաձայն՝ դրանից որևէ շեղում անթույլատրելի է նույնիսկ պատերազմի կամ ազգաբնակչության կյանքին վտանգոտ սպառնացող արտակարգ իրավիճակի դեպքում: Ելնելով օբյեկտից և նպատակից այն պետք է մեկնաբանվի և կիրառվի այնպես, որ արդյունավետ երաշխիքներ ապահովվեն կամայական հետապնդման, դատապարտման և պատժի դեմ (տե՛ս *S.W. v. the United Kingdom*, 22 November 1995, § 34, Series A no. 335-B; *C.R. v. the United Kingdom*, 22 November 1995, § 32, Series A no. 335-C; and *Kafkaris [v. Cyprus [GC]]*, no. 21906/04, ... § 137[, ECHR 2008])

78. Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի սահմանափակվում քրեական օրենսդրության հետադարձ ուժի կիրառման արգելմամբ ի վնաս մեղադրյալի (պատժի հետադարձ ուժի կիրառման հետ կապված, տե՛ս *Welch v. the United Kingdom*, 9 February 1995, կետ 36, Series A no. 307-A; *Jamil v. France*, 8 June 1995, 35 կետ, Series A no. 317-B; *Ecer and Zeyrek v. Turkey*, nos. 29295/95 and 29363/95, կետ 36, ECHR 2001-II; and *Mihai Toma v. Romania*, no. 1051/06, 26-31 կետեր, 24 January 2012): Այն նաև առավելապես մարմնավորում է այն սկզբունքը, որ միայն օրենքը կարող է սահմանել հանցագործությունը և պատիժը (*nullum crimen, nulla poena sine lege* – see *Kokkinakis v. Greece*, 25 May 1993, կետ 52, Series A no. 260-A): Թեև այն մասնավորապես արգելում է ընդլայնել գոյություն ունեցող հանցագործությունների շրջանակը այն գործողությունների համար, որոնք նախկինում չեն եղել հանցավոր արարք, այն նաև սահմանում է այն սկզբունքը, որ քրեական օրենսդրությունը չպետք լայնորեն մեկնաբանվի ի վնաս մեղադրյալի, օրինակ՝ անալոգիայով (տե՛ս *Coëme and Others v. Belgium*, nos. 32492/96, 32547/96, 32548/96, 33209/96 and 33210/96, կետ 145, ECHR 2000-VII; օրինակ՝ անալոգիայով պատժամիջոցի կիրառումը, տե՛ս *Başkaya and Okçuoğlu v. Turkey [GC]*, nos. 23536/94 and 24408/94, 42-43 կետեր, ECHR 1999-IV)։

79. Այստեղից հետևում է, որ իրավախախտումները և համապատասխան պատիժները պետք է հստակ սահմանված լինեն օրենքով: Այս պահանջը բավարարվում է այն դեպքում, երբ անձը համապատասխան դրույթի ձևակերպումից կարող է իմանալ, անհրաժեշտության դեպքում դատարանների կողմից տված մեկնաբանությունների օգնությամբ և համապատասխան իրավաբանական խորհրդատվություն ստանալուց հետո, թե՛ որ գործողությունները և անգոր-

ծուրթունն իր նկատմամբ կառաջացնի քրեական պատասխանատվություն և ինչ պատիժ է նախատեսված այդ դեպքում (տես *Cantoni v. France*, 15 November 1996, § 29, Reports of Judgments and Decisions 1996-V, and *Kafkaris*, cited above, կետ 140)։

80. Դատարանը հետևաբար պետք է պարզի, թե մեղադրյալի կողմից վերջինիս հետապնդմանը և դատապարտմանը հանգեցրած արարքը կատարելիս ուժի մեջ եղել է այն իրավական դրույթը, որն այդ արարքը պատժելի է դարձրել, և թե արդյոք սահմանված պատիժը չի գերազանցում այդ դրույթով սահմանված պատժամիջոցները (տես *Coëme and Others*, cited above, § 145, and *Achour v. France [GC]*, no. 67335/01, § 43, ECHR 2006-IV)։

(...)

91. «Օրենքի» մասին խոսելիս՝ 7-րդ հոդվածը վկայակոչում է այն նույն հասկացությունը, որին Կոնվենցիան հղում է կատարում այդ եզրույթը կիրառելիս. մի հայեցակարգ, որն իր մեջ ներառում է կանոնադրական իրավունք, ինչպես նաև նախադեպային իրավունք և ենթադրում է որակական պահանջներ, մասնավորապես մատչելիության և կանխատեսելիության դրսևորում (տես *Kokkinakis*, cited above, §§ 40-41; *Cantoni*, cited above, § 29; *Coëme and Others*, cited above, § 145; and *E.K. v. Turkey*, no. 28496/95, § 51, 7 February 2002)։ Այս որակական պահանջները պետք է բավարարվեն ինչպես իրավախախտման բնութագրման, այնպես էլ պատժի կրման համար։

92. (...) Կանոնների միջոցով կարգավորման ստանդարտ տեխնիկայից մեկը ընդհանուր դասակարգումների օգտագործումն է՝ ի տարբերություն սպառիչ ցուցակների։ Ըստ այդմ, շատ օրենքներ անխուսափելիորեն զուգորդվում են այնպիսի եզրույթներով, որոնք առավել մեծ կամ պակաս չափով անորոշ են, և որոնց մեկնաբանությունն ու կիրառումը պրակտիկայի հարցեր են (տես *Kokkinakis*, cited above, կետ 40, and *Cantoni*, cited above, կետ 31)։ Այնուամենայնիվ, հստակ մշակված իրավական դրույթը կարող է լինել ցանկացած իրավական համակարգում, ներառյալ քրեական իրավունքում, և հանդես գալ որպես դատական մեկնաբանությունների անխուսափելի տարր։ Միշտ անհրաժեշտություն կլինի պարզաբանել կասկածելի կետերը և հարմարվել փոփոխվող հանգամանքներին։ Դարձյալ, չնայած որոշակիությունը խիստ ցանկալի է, այն կարող է հանգեցնել գերկոշտության, և օրենքը պետք է կարողանա համընթաց քայլել փոփոխվող հանգամանքների հետ (տես *u Kafkaris*, cited above, կետ 141)։

93. Դատարաններին վերապահված դերը եղած (ibid) հենց այդպիսի մեկնաբանական կասկածները փարատելն է: Քրեական օրենսդրության առաջադիմական զարգացումը դատական օրենսդրության կայացման միջոցով Կոնվենցիայի պետություններում իրավական ավանդույթի լավ ներդրված և անհրաժեշտ մաս է (տե՛ս *Kruslin v. France*, 24 April 1990, կետ 29, Series A no. 176-A): Կոնվենցիայի 7-րդ հոդվածը չի կարող ընթերցվել որպես քրեական պատասխանատվության կանոնների աստիճանական պարզաբանման արգելք այս կամ այն գործով, հատկապես որ հետագա զարգացումը համահունչ է հանցագործության էությանը և ողջամտորեն կանխատեսելի է (տե՛ս *S.W. v. the United Kingdom*, cited above, կետ 36; *C.R. v. the United Kingdom*, cited above, կետ 34; *Streletz, Kessler and Krenz [v. Germany [GC]*, nos. 34044/96 and 2 others, կետ 50[, ECHR 2001-II]; *K.-H.W. v. Germany [GC]*, no. 37201/97, կետ 85, 22 March 2001; *Korbely v. Hungary [GC]*, no. 9174/02, կետ 71, ECHR 2008; and *Kononov v. Latvia [GC]*, no. 36376/04, կետ 185, ECHR 2010): Հասանելի և ողջամտորեն կանխատեսելի դատական մեկնաբանության բացակայությունը կարող է հանգեցնել նույնիսկ 7-րդ հոդվածով նախատեսված մեղադրյալի իրավունքի խախտմանը (տե՛ս հանցագործության բաղադրիչ տարրերին վերաբերող *Pessino v. France*, no. 40403/02, 35-36 կետեր, 10 October 2006, and *Dragotoni and Militaru-Pidhorni v. Romania*, nos. 77193/01 and 77196/01, 43-44 կետեր, 24 May 2007; as regards the penalty, see *Alimuçaj v. Albania*, no. 20134/05, 154-62 կետեր, 7 February 2012)»:

(...)

«80. Դատարանը վերահաստատում է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածն անվերապահորեն արգելում է քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառումը, երբ այն ի վնաս մեղադրյալի է (տե՛ս վերոնշյալ 60-րդ կետում նշված Դել Ռիո Պրադայի գլխավոր սկզբունքներին վերաբերող ընդհանուր սկզբունքը): Քրեական օրենքի հետադարձ ուժի մերժման սկզբունքը տարածվում է ինչպես իրավախախտումը սահմանող դրույթների (տե՛ս *Vasiliasukas*, վերոնշյալ 165-66-րդ կետեր) այնպես էլ պատժամիջոցների նկատմամբ (տե՛ս *M. v. Germany*, no. 19359/04, 123-րդ և 135-37-րդ կետեր, ECHR 2009):

(...)

83. Մույն դատավարության ընթացքում Սահմանադրական դատարանը հայցում է Դատարանին կարծիք հայտնել հետադարձ ուժի մերժման սկզբունքի կիրառման վերաբերյալ: ... Դատարանը գտնում է, որ հետաքրքրական է իր նախադեպային իրավունքը, որը վերա-



բերում է մեղադրանքի վերադասակարգմանը՝ համաձայն քրեական օրենսգրքի փոփոխված խմբագրության, որն ուժի մեջ է մտել քննության առարկա գործողության կատարումից հետո: Նման իրավիճակներում Դատարանը նախևառաջ փորձում է որոշել, թե արդյոք կա իրավախախտման շարունակականություն՝ հաշվի առնելով իրավախախտման կատարման պահը և դատապարտման պահը:

(...)

85. Նման դեպքերում Դատարանը, ըստ էության, քննել է, թե արդյոք այդ գործողությունները պատժելի էին կատարման պահին գործող դրույթներով:

86. Դատարանի նախադեպային իրավունքը չի նախատեսում չափանիշների համապարփակ շարք՝ համեմատելու իրավախախտման կատարման պահին գործող և փոփոխված քրեական օրենքները: Այնուամենայնիվ, կարելի է եզրակացնել, որ Դատարանը հաշվի է առնում գործի առանձնահատուկ հանգամանքները, այն է՝ գործի կոնկրետ փաստերը, որոնք հաստատվել են ներպետական դատարանների կողմից, երբ վերջիններս գնահատել են, թե արդյոք կատարված արարքները պատժելի են եղել կատարման պահին գործող դրույթներով: Ավելին, իրավախախտման կատարման պահին գործող օրենքի կանխատեսելիության վերաբերյալ իր նախադեպային իրավունքի ընդհանուր սկզբունքներին համապատասխան Դատարանը հաշվի է առել ներպետական դատարանի նախադեպային իրավունքը, եթե այդպիսիք առկա են, պարզաբանելով այդ ժամանակ գործող օրենքում կիրառված հասկացությունները (տես G. v France, վերոնշյալ 25-26-րդ կետեր, և Berardi and Mularoni, վերոնշյալ 46-56-րդ կետեր):

87. Ի հակադրություն՝ Դատարանը մտահոգված չէ ներպետական օրենսդրությամբ քրեական հանցագործություններին տրված պաշտոնական դասակարգումներով կամ անվանումներով (...):

Արդյունքում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, ի թիվս այլնի, եզրահանգել է.

1. «(...) Գործողությունը կամ անգործությունը քրեականացնելու նպատակով «բլանկետային հղման» կամ «հղում անելու մասին օրենսդրության» տեխնիկայի կիրառումն ինքնին անհամատեղելի չէ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջների հետ: Հղում կատարող դրույթը և հղում կատարված դրույթը, իրենց ամբողջություն մեջ, պետք է հնարավորություն ընձեռեն շահագրգիռ անձին, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան իրավաբանական խոր-



հրդատվության օգնությամբ կանխատեսել, թե իր վարքագծի ինչպիսի դրսևորումը կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության: Այս պահանջը հավասարապես կիրառվում է այն իրավիճակների դեպքում, երբ հղում կատարված դրույթը նշված իրավական համակարգում ունի ավելի բարձր աստիճանակարգություն, կամ վերացականության ավելի բարձր աստիճան, քան հղում կատարող դրույթը:

2. Հստակության և կանխատեսելիության ապահովման ամենաարդյունավետ միջոցն այն է, որ հղումը պետք է լինի պարզ, իսկ հղում կատարող դրույթը պետք է սահմանի իրավախախտման բաղկացուցիչ տարրերը: Ավելին, հղում կատարված դրույթները չեն կարող ընդլայնել հղում կատարող դրույթով սահմանված քրեականացման շրջանակը: Ամեն դեպքում, թե հղում կատարող դրույթը և թե հղում կատարված դրույթը կիրառելիս դատարանը պետք է գնահատի, թե արդյոք գործի հանգամանքներում քրեական պատասխանատվությունը կանխատեսելի է եղել:

3. Անհրաժեշտ է հաշվի առնել գործի կոնկրետ հանգամանքները (կոնկրետացման սկզբունքը) պարզելու համար, թե արդյոք Կոնվենցիայի 7-րդ հոդվածի իմաստով ենթադրյալ իրավախախտումը կատարելուց հետո ընդունված օրենքը մեղադրյալի համար պակաս, թե ավելի բարենպաստ է, քան ենթադրյալ իրավախախտումը կատարելու պահին գործող օրենքը: Եթե հետագայում ընդունված օրենքն ավելի խիստ է, քան ենթադրյալ իրավախախտման կատարման պահին գործող օրենքը, ապա հետագայում ընդունված օրենքը չի կարող կիրառվել»:

#### 4. «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով եվրոպական հանձնաժողովի» (Վենետիկի հանձնաժողով) խորհրդատվական կարծիքը<sup>2</sup>

Սահմանադրական դատարանն իր՝ 2019 թվականի հուլիսի 18-ի ՍԴԱՌ-81 և ՍԴԱՌ-82 աշխատակարգային որոշումներով, Վենետիկի հանձնաժողովի կանոնադրության հիման վրա՝ խորհրդատվական կարծիք ստանալու նպատակով դիմել է Վենետիկի հանձնաժողով՝ առաջադրելով հետևյալ հարցերը. 1) արդյո՞ք Վենետիկի հանձնաժողովի անդամ պետությունների քրեական օրենքներում «սահմանադրական կարգի դեմ ուղղված» հանցագործությունները պարունակում են հղումներ սահմանադրություններին կամ դրանց

<sup>2</sup> [https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2020\)005-e](https://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2020)005-e)

կոնկրետ հոդվածներին, 2) ինչպե՞ս են Վենետիկի հանձնաժողովի անդամ պետությունների վերաբերելի իրավական ակտերում և, մասնավորապես, քրեական օրենքներում նկարագրվում «սահմանադրական կարգ», «սահմանադրական կարգի յտապալում», «իշխանության յուրացում» եզրույթները, և արդյո՞ք առկա են այդ եզրույթների դատական մեկնաբանություններ, 3) որո՞նք են հանցագործություն սահմանող օրենքին ներկայացվող որոշակիության պահանջի եվրոպական չափորոշիչները, 4) արդյո՞ք Վենետիկի հանձնաժողովի անդամ պետություններում առկա է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածի բովանդակությանը համանման հանցագործություն, 5) եթե՞ այո, ապա ո՞րն է իրավական որոշակիության տեսանկյունից լավագույն փորձը:

Նշվածի հիման վրա 123-րդ լիազուգումար նիստում ընդունված Օրենսգրքի 300.1-ին հոդվածին առնչվող իր կարծիքում (Վենետիկ, 18 հունիսի 2020 թվական, CDL-AD (2020) 005), Վենետիկի հանձնաժողովը, մասնավորապես, նշել է.

«9. Վենետիկի հանձնաժողովի անդամ պետությունների շարքում սահմանադրական կարգի հայեցակարգը գրեթե միշտ վերաբերում է նրանց սահմանադրության ինստիտուցիոնալ կողմին: Մինչ որոշ երկրներ կիրառում են սահմանադրական կարգ եզրույթը, մյուսները գերադասում են կիրառել սահմանադրական համակարգ կամ ժողովրդավարություն եզրույթները: Դա հաճախ ենթադրում է իշխանությունների տարանջատման սկզբունքը, ավելի կոնկրետ՝ սահմանադրական մարմինների բնականոն գործունեության դեմ ուղղված գործողություններ:

(...)

19. Այս բնութագրումները ենթադրում են, որ համապատասխան անդամ պետություններում սահմանադրական կարգը վերաբերում է սահմանադրական տարբեր սկզբունքներին (ինչպիսիք են ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, ժողովրդավարական կարգը, իրավական պետություն, օրենքի գերակայությունը, իրավական ֆորմալիզմը, ուժերի հավասարակշռությունը), ինչպես նաև ընդգրկում են մարմիններ, որոնք սահմանված են համապատասխան սահմանադրություններով և դրանց պատշաճ գործունեությամբ:

20. (...) Այս հանցավոր գործողությունները ներառում են բարձրագույն պետական մարմինների տապալումը (այդ թվում չսահմանափակվելով միայն կառավարության տապալմամբ), քաղաքական

հիմքերի փոփոխությունը, ինչպես նաև տարածքային ամբողջականության խախտման տարբեր դրսևորումները:

(...)

33. (...) «Իրավական որոշակիությունն ունի մի քանի գործառույթ. այն օգնում է հասարակության մեջ խաղաղություն և կարգուկանոն ապահովել և նպաստում է իրավական արդյունավետությանը՝ թույլ տալով, որ անձինք բավարար իրագեկված լինեն օրենքի մասին համապատասխան վարքագիծ դրսևորելու համար: Այն նաև անձին հնարավորություն է ընձեռում, որպեսզի վերջինս կարողանա գնահատել, թե արդյոք պետական իշխանությունն իր գործունեության ընթացքում կամայականություն դրսևորվել է, թե ոչ: Այն օգնում է անձանց իրենց կյանքը կազմակերպել հնարավորություն տալով երկարաժամկետ ծրագրավորել և ձևավորել օրինական ակնկալիքներ»:

34. (...) իրավական որոշակիությունը կախված է օրենքների մատչելիությունից (օրենսդրության մատչելիություն) և դատական որոշումների մատչելիությունից (դատական որոշումների մատչելիություն): Քանի որ դատական որոշումները կարող են սահմանել, մշակել և հստակեցնել օրենքը, ուստի այդ որոշումների հասանելիությունն իրավական որոշակիության բաղկացուցիչ մասն է: Դրա սահմանափակումները թույլատրվում են միայն այն դեպքում, երբ անձի իրավունքների պաշտպանության անհրաժեշտություն է առաջանում: Օրենքի հետևանքները նույնպես պետք է կանխատեսելի լինեն, ինչը նշանակում է, որ օրենքը պետք է հրապարակվի նախքան դրա կիրառումը, և դրա հետևանքները պետք է կանխատեսելի լինեն, այսինքն՝ օրենքը պետք է լինի շարադրված բավարար ճշգրտությամբ և հստակությամբ, որպեսզի իրավունքի սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ: Պահանջվող կանխատեսելիության աստիճանը կախված է օրենքի բնույթից (հատկապես կարևոր է քրեական օրենսդրության դեպքում), որին հաջորդում է այն հարցը, թե արդյոք օրենքները կայուն և հետևողական են ...:

35. Քրեական օրենքների հետադարձ ուժի արգելումը և օրենքներում հանցավոր գործողությունների բավարար հստակ և ճշգրիտ սահմանումներ ամրագրելու պահանջը կարևոր նշանակություն ունի դրանց կիրառման համար: Սույն խորհրդատվական կարծիքի համատեքստում հստակության և ճշգրտության պահանջի մասով պետք է նշել, որ այս առումով սահմանադրական կարգի չհստակեցված հայեցակարգը կարող է խնդրահարույց լինել: Մինչդեռ, անդամ

պետությունների մեծ մասում կարծես թե առկա է ընդհանուր համաձայնություն, որը կարող է վերաբերել սահմանադրության և օրենքների ոչ հստակ ձևակերպմանն առնչվող հնարավոր քննադատությանը այն հարցի առնչությամբ, թե որն է այդ սկզբունքը (*սահմանադրական կարգ, սահմանադրական կարգի տապալում*): Սահմանադրական կարգի բնորոշումն անորոշ թողնելու ընդհանուր պրակտիկայի վերաբերյալ Վենետիկի հանձնաժողովի կողմից ստացված նյութերի վերլուծությունը թույլ չի տալիս եզրակացնել, որ այս սկզբունքի սահմանման բացակայությունը հանգեցնում է իրավական որոշակիության սկզբունքի խախտման: Եթե հնարավոր չէ սահմանադրական կարգի հասկացության ընդհանուր սահմանում ապահովել այն բոլոր դեպքերում, երբ կիրառվում է քրեական օրենքը, ապա անհրաժեշտ է հղում կատարել հատուկ սահմանադրական դրույթներին կամ հստակ սահմանադրական սկզբունքներին, որոնք ենթադրաբար խախտվել են:

36. ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածը մեկնաբանման տեղ է թողնում այն առումով, թե ինչ է նշանակում «Սահմանադրության 1-ից 5-րդ հոդվածներով կամ 6-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ նորմի փաստացի վերացում», ինչը դժվարացնում է այլ անդամ պետությունների օրենսդրության մեջ նման դրույթների նույնականացումը: Բացի դրանից, այդ դրույթներով նախատեսված իրավական սահմանումը («որն արտահայտվում է իրավական համակարգում գործողության դադարեցմամբ») չի հստակեցնում իրավիճակը, ինչն, այնուամենայնիվ կարող է պայմանավորված լինել թարգմանությամբ: Հստակեցնելու նպատակով «փաստացի վերացման» հարցը բացակայում է ստորև ներկայացվող մեկնաբանություններից:

(...)

44. Պետական դավաճանության, խռովության կամ ապստամբության լայն իմաստով ձևակերպված հանցագործությունները սովորաբար պահանջում են բռնության, ուժի կամ սպառնալիքի տարր, որը զուգորդվում է դիտավորությամբ (կամ դրա իրական փորձով)՝ նպատակ հետապնդելով այդ բռնի կամ բիրտ գործողությունն ուղղել սահմանադրական կարգի կամ դրա միջոցով պաշտպանվող շահերի դեմ: Այն դրույթները, որոնցում չի նշվում բռնությունը և/կամ սահմանադրական կարգի դեմ ուղղված նման մտադրությունը, ընդհանուր առմամբ նախատեսում են ավելի կոնկրետ գործողություններ (օրինակ՝ տպագիր նյութերի տարածումը կամ հակասահմանադրական կուսակցության կամ միավորման խորհր-

դանիշների օգտագործումը), որոնք իրենց բնույթով համարվում են հակասահմանադրական:

(...)

49. Ի պատասխան սահմանադրական կարգը տապալելու համար պատիժ սահմանող ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից Վենետիկի հանձնաժողովին ուղղված սույն խորհրդատվական կարծիքի շրջանակներում առաջադրված հինգ հարցերին՝ Վենետիկի հանձնաժողովը նշել է, որ անդամ պետությունների մեծ մասից ստացված տեղեկատվությունը վկայում է քննության առարկա հարցերի և ներկայացված մանրամասնությունների միջև էական տարբերությունների մասին: Այդ իսկ պատճառով սույն խորհրդատվական կարծիքում ներկայացված եզրակացությունները միայն նախնական են:

50. Անդամ պետություններն իրենց իսկ ազգային սահմանադրություններում և օրենսդրություններում տարբեր մոտեցումներ են ցուցաբերում սահմանադրական կարգի դեմ ուղղված հանցագործությունների առնչությամբ: Եթե անդամ պետություններում առկա են նման հանցագործություններ և սահմանադրությունը համապատասխան հղում է պարունակում, ապա դրանք հաճախ սահմանում են Սահմանադրության բռնի և ապօրինի փոփոխությունը՝ որպես այս հանցագործության տարր, և սահմանադրությունը վկայակոչում են որպես ամբողջություն: Մյուս անդամ պետություններն անմիջականորեն հղում են կատարում սահմանադրական կարգը պահպանելու պարտականությանը՝ առանց այն սահմանելու: Այնուամենայնիվ, կարծես թե առկա չեն օրենսդրական դրույթներ, որոնք ուղղակի հղում կպարունակեն սահմանադրության կոնկրետ հոդվածներին: Այնուամենայնիվ, քրեական օրենսգրքերով/օրենսդրությամբ նախատեսված դրույթներից շատերը (եթե ոչ բոլորը, քանի որ կիրառվող եզրույթները կարող են տարբերվել) անուղղակիորեն հղում են կատարում սահմանադրությանը՝ վկայակոչելով սահմանադրական այնպիսի սկզբունքներ, ինչպիսիք են ինքնիշխանությունը, տարածքային ամբողջականությունը, ժողովրդավարությունը և ընտրությունները, կամ հղում են կատարում կոնկրետ սահմանադրական այնպիսի մարմնի, ինչպիսին է խորհրդարանը: Հետևաբար, սահմանադրություններում կարծես թե առկա չէ «սահմանադրական կարգի դեմ» ուղղված հանցագործությունների վերաբերյալ որևէ ուղղակի հղում, սակայն կարելի է եզրահանգել, որ դրանց վերաբերյալ առկա են անուղղակի կամ ենթադրյալ հղումներ:

51. Սահմանադրական կարգ, սահմանադրական կարգի տապալում, իշխանության յուրացում եզրույթները, որպես այդպիսին կարծես սահմանված չեն անդամ պետությունների մեծ մասի օրենսդրություններում: Բազմաթիվ անդամ պետություններ, բայց ոչ բոլորը, սահմանադրական կարգը տապալելու իրավախախտմանը վերաբերում են որպես պետական դավաճանություն, այն է՝ հանցավոր մտադրություն կամ իրական փորձ՝ խաբեությամբ, բռնի և անօրինական եղանակով փոփոխելու Սահմանադրությունը, ինչին միշտ չէ, որ պահանջում է սահմանադրական կարգի փաստացի տապալում:

52. Առկա է սահմանադրական կարգի, սահմանադրական կարգի տապալման, իշխանության յուրացման եզրույթների վերաբերյալ նախադեպային իրավունքի պակաս, որը վկայում է, որ հիմնականում այդ եզրույթները կարգավորող օրենսդրական դրույթներն առ օրս չեն կիրառվել: Սա իր հերթին վկայում է, որ առկա չէ լավագույն պրակտիկա՝ կապված այն փաստական հանգամանքների հետ, որոնցով պատիժ է նախատեսվում նմանատիպ հանցագործության, օրինակ պետական դավաճանության համար, որին կարող են առնչվել անդամ պետությունները: Ինչ վերաբերում է քրեական օրենսդրության հետադարձ ուժի արգելմանը և օրենքներում հանցավոր գործողությունների բավարար հստակ և ճշգրիտ սահմանումներ նախատեսելու պահանջին, ապա սահմանադրական կարգի հասկացությունների և սահմանադրական կարգի տապալման վերաբերյալ անճշտությունների քննադատությունները կարող են մեղմացուցիչ հանգամանք հանդիսանալ այն առումով, որ Վենետիկի հանձնաժողովի անդամ պետությունները եկել են կոնվերգենցիայի (միատեսակ մոտեցում) թողնել այդ եզրույթները անորոշ և ոչ հստակ ձևակերպված: Հետևաբար, որևէ եզրակացություն չի կարող արվել այն հարցում, թե որն է իրավական որոշակիության տեսանկյունից լավագույն փորձը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով այս սկզբունքը և համաչափության սկզբունքը թվում է, որ կարելի է ողջամտորեն ակնկալել, որ որքան ավելի լայնորեն է ձևակերպված օրենսդրական դրույթը, այնքան ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել մեղադրյալի անձնական ազատություններին և հիմնարար իրավունքներին: Նման դրույթն ավելի նեղ իմաստով մեկնաբանելիս պետք է հաշվի առնել *dubio pro reo* սկզբունքը (մեղադրյալը չի կարող դատապարտվել, եթե նրա մեղքի վերաբերյալ կան չփարատված կասկածներ):»:

**5. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները**

Սույն գործով Օրենսգրքի վիճարկվող 300.1-ին հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու համար Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, մասնավորապես, այն հարցը, թե վիճարկվող հոդվածը համապատասխանո՞ւ մ է արդյոք որոշակիության և համաչափության սահմանադրական սկզբունքներին, և ըստ այդմ երաշխավորված են արդյոք Սահմանադրության 72 և 73-րդ հոդվածներով ամրագրված հիմնական իրավունքները:

**6. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները**

**6.1.** Սահմանադրության 72-րդ հոդվածի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող դատապարտվել այնպիսի գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին հանցագործություն չի հանդիսացել: Չի կարող նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա էր կիրառման հանցանք կատարելու պահին ...»:

Սահմանադրության 73-րդ հոդվածի համաձայն՝ «1. Անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն:

2. Անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով»:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը, կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին»: Ընդ որում՝ Կոնվենցիայի 7-րդ հոդվածով ամրագրված երաշխիքի կարևորությունը ընդգծվում է նաև նրանով, որ անգամ պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող ցանկացած այլ արտակարգ իրավիճակի ժամանակ նշված կանոնից շեղումն անթույլատրելի է (Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 2-րդ մաս):

Նշված կանոնն իր արտացոլումն է գտել նաև Օրենսգրքում, մասնավորապես, 12-րդ հոդվածում, համաձայն որի՝

«1. Արարքի հանցավորությունը և պատժելիությունը որոշվում են դա կատարելու ժամանակ գործող քրեական օրենքով:

2. Հանցանքը կատարելու ժամանակ է համարվում հանրության համար վտանգավոր գործողությունը (անգործությունը) իրականացնելու ժամանակը՝ անկախ հետևանքները վրա հասնելու պահից»:

Օրենսգրքի 13-րդ հոդվածի համաձայն՝ «(...) 2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի»:

«Չկա հանցագործություն և պատիժ, եթե այն սահմանված չէ օրենքով» (nullum crimen, nulla poena sine lege) կանոնը թե՛ միջազգային, թե՛ ներպետական իրավունքի համընդհանուր ճանաչում ստացած սկզբունք է և դիտարկվում է իբրև իրավունքի գերակայության առանցքային տարրերից մեկը:

Ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության ընդհանուր կանոնը, որով մերժվում է իրավական ակտերի հետադարձ գործողության հնարավորությունը, հետապնդում է իրավաչափ նպատակներ՝ դրանով հնարավոր է լինում երաշխավորել մարդու իրավունքները, ապահովել իրավական որոշակիության, իրավական անվտանգության սկզբունքները, հասարակական հարաբերությունների կայունությունը և այլն:

Համանման իրավական դիրքորոշում Սահմանադրական դատարանն արտահայտել է նաև իր 2011 թվականի նոյեմբերի 29-ի ՍԴՈ-1000 որոշմամբ, մասնավորապես, ամրագրելով, որ «ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 3-6-րդ մասերի, ինչպես նաև 42-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի համադրված վերլուծությունը վկայում է, որ ՀՀ Սահմանադրությամբ ժամանակի մեջ իրավական ակտերի գործողության կանոնակազմը հիմնվում է այն տրամաբանության վրա, որ իրավական ակտերի հետադարձ ուժով գործողության մերժումն **ընդհանուր կանոն է**, իսկ այդ ակտերի հետադարձ ուժով գործողության հնարավորությունը **բացառություն ընդհանուր կանոնից**: Այս մոտեցումը բխում է իրավական որոշակիության, օրենսդրության նկատմամբ լեգիտիմ ակնկալիքների, մարդու իրավունքների երաշխավորման, իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից»:

Ընդ որում, բացառություններն իրենց հերթին տարբեր են. (1) երբ սահմանադիրը **բացառում է օրենսդրի կողմից որևէ հայեցողություն** դրսևորելու հնարավորությունը՝ սահմանելով հետադարձության **ուղիղ պահանջ** (արարքի պատժելիությունը վերացնող կամ պա-



տիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ (Սահմանադրության 72-րդ հոդված), և (2) երբ անձի իրավական վիճակը բարելավող իրավական ակտին *հետադարձ ուժ հաղորդելու լիազորությունը թողնվում է իրավասու (այդ ակտն ընդունող) մարմնի հայեցողությանը* (անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով (Սահմանադրության 73-րդ հոդվածի 2-րդ մաս): Այս դեպքերում ևս Սահմանադրական դատարանը վերահաստատում է ՄԴՈ-1000 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ *իրավական ակտի հետադարձությունը թույլատրվում է բացառիկ դեպքերում, և տվյալ ակտն ընդունող մարմնի այդ ակտին հետադարձ ուժ հաղորդելու որոշումը պետք է հիմնվի հասարակության և պետության համար նման որոշման հնարավոր իրավական հետևանքների բազմակողմանի վերլուծության և գնահատականի վրա:*

Սահմանադրաիրավական պահանջը, ըստ որի՝ պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ, իր արտացոլումն է գտել նաև Օրենսգրքի 13-րդ հոդվածում, ըստ որի՝ «1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն»: Նույն հոդվածի 3-րդ մասով կարգավորվում են այն դեպքերը, երբ միննույն օրենքով պատասխանատվությունը և՛ մասնակիորեն մեղմացվում է, և՛ մասնակիորեն խստացվում: Նման դեպքերի համար, ելնելով Սահմանադրության 72-րդ հոդվածի էությունից օրենսդիրը սահմանել է, որ «Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը»:

Սահմանադրական դատարանն իր՝ 2017 թվականի փետրվարի 14-ի ՄԴՈ-1348 որոշմամբ անդրադառնալով «Հանցագործությունների սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքը» վերտառությամբ Սահմանադրության 72-րդ հոդվածի երրորդ նախադասության՝ «Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ» դրույթի բովանդակությանը՝ արձանագրել է.

«(...) առաջին՝ սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքների համար նախատեսում է վերջիններիս՝ ժամանակի **մեջ գործողության հատուկ կարգ**, այն է՝ այդպիսի օրենքները տարածվում են մինչ այդ օրենքների ուժի մեջ մտնելը ծագած համապատասխան հարաբերությունների վրա,

երկրորդ՝ ի տարբերություն անձի վիճակը բարելավող **այլ օրենքների**, սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձությունը **չի պայմանավորում վերջինիս՝ այդ օրենքներով նախատեսված լինելու** հանգամանքով,

երրորդ՝ անմիջական գործողությամբ օժտված սահմանադրաիրավական վերոհիշյալ դրույթով ամրագրված իրավակարգավորման շրջանակներում սահմանադիրն արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելու պահանջը տարածում է քրեադատավարական և քրեակատարողական բոլոր գործընթացներում ներգրավված, ի թիվս այլոց, այն անձանց վրա, ում արարքի պատժելիությունը վերացվել է, և սահմանադրաիրավական այս սկզբունքի գործողությունը **չի պայմանավորում քրեադատավարական կամ քրեակատարողական այս կամ այն փուլով, ինչն արտացոլվել է նաև ՀՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն,**

չորրորդ՝ ելնելով մարդու արժանապատվության անխախտելիության և մարդու անօտարելի արժանապատվության՝ իր իրավունքների և ազատությունների անքակտելի հիմք հանդիսանալու սահմանադրաիրավական պահանջներից և հիմնական իրավունքների անմիջականորեն գործողության սկզբունքից՝ անձի նկատմամբ արարքի պատժելիությունը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելը ենթադրում է, որ վերանում են **արարքի պատժելիություն սահմանող օրենքի կիրառման արդյունքում անձի համար առաջացած բոլոր անբարենպաստ իրավական հետևանքները**, այսինքն՝ անձի նկատմամբ արարքի պատժելիությունը վերացնող օրենքի հետադարձ կիրառումը վերականգնվում է մինչև արարքի պատժելիություն սահմանող օրենքի կիրառումն առկա վիճակը,

(...)

յոթերորդ՝ պատիժը վերացնող օրենքը հետադարձությամբ կիրառելն անմիջականորեն առնչվում է անձի այնպիսի հիմնական իրավունքներին, ինչպիսիք են դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները, և ինչպես հանցագործություններ սահմանելու և պատիժներ նշանակելու, այնպես էլ արարքի պատժելիությունը վերացնելու գործընթացները պետք է հիմնված լինեն ոչ միայն ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածով ամրագրված՝ հանցագործություններ սահմանելիս և պատիժներ նշանակելիս օրինականության սկզբունքի, այլ նաև հիմնական իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության, հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության և որոշակիության սահմանադրաիրավական պահանջների անմիջական գործողության ապահովման վրա, քանի որ ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք» (ՄԴՈ-1348 որոշման 6-րդ կետ):

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ թեև Կոնվենցիայի 7-րդ հոդվածում ուղղակիորեն ամրագրված չէ առավել մեղմ քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման կանոն, սակայն ՄԻԵԴ-ը Սկոպոլան ընդդեմ Իտալիայի գործով (no. 2) [GC] (no. 10249/03, 17 սեպտեմբերի 2009թ.), ելնելով Կոնվենցիայի 7-րդ հոդվածի վերլուծությունից, եկել է եզրահանգման, որ «...Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին կետը երաշխավորում է ոչ միայն ավելի խիստ քրեական օրենքների հետադարձ ուժի մերժման սկզբունքը, **այլև ենթադրաբար ավելի մեղմ քրեական օրենսդրության հետադարձ ուժ ունենալու սկզբունքը**: Այդ սկզբունքը մարմնավորված է այն կանոնի մեջ, համաձայն որի՝ այն դեպքում, երբ իրավախախտման կատարման պահին գործող քրեական օրենքի և դրանից հետո ընդունված քրեական օրենքի միջև վերջնական վճիռ կայացնելիս առկա են տարբերություններ, ապա դատարանները պետք է կիրառեն այն օրենքը, որի դրույթներն ավելի բարենպաստ են մեղադրյալի համար (ibid., 108-09-րդ կետեր)»:

Ավելին, սույն գործով խորհրդատվական կարծիքի 82-րդ կետում ՄԻԵԴ-ը նաև արձանագրել է, որ «Թեև ավելի մեղմ քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման պահանջը, ընդհանուր առմամբ ձևակերպվել է Սկոպոլայի գործով (թիվ 2), հարկ է նշել, որ այդ պահանջը մշակվել և հետագայում կիրառվել է կիրառվող **սույժերի**

կամ պատժի կիրառման փոփոխությունների համատեքստում (տե՛ս, օրինակ, *Gouarré Patte v. Andorra*, no. 33427/10, կետեր 28-36, 12 հունվարի 2016թ., և *Koprivnikar v. Slovenia*, no. 67503/13, կետ 59, 24 հունվարի 2017թ.): Պարմակը և Բակիրն ընդդեմ Թուրքիայի գործով (թիվ 22429/07 և 25195/07, կետ 64, 3 դեկտեմբերի 2019թ.) դատարանն առաջին անգամ եզրակացրել է, որ ավելի մեղմ քրեական օրենքի հետադարձ ուժի կիրառման սկզբունքը կիրառվում է նաև իրավախախտման սահմանման հետ կապված փոփոխության ենթատեքստում»:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «նոր» քրեական օրենքի գործողությունը (առանց որևէ հայեցողության հնարավորության) հետադարձությամբ տարածվում է մինչև ընդունումը ծագած այն իրավահարաբերությունների (դեպքերի) վրա, երբ

- 1) նոր քրեական օրենքը լրիվ կամ մասնակի վերացնում է արարքի հանցավորությունը (լրիվ ապաքրեականացում, մասնակի ապաքրեականացում),
- 2) նոր քրեական օրենքը մեղմացնում է պատիժը,
- 3) նոր քրեական օրենքն այլ կերպ բարելավում է հանցանք կատարած անձի վիճակը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ քրեական օրենքի ամեն փոփոխություն չէ, որ հանգեցնում է արարքի քրեականացման/ ապաքրեականացման, պատժի խստացման/մեղմացման, կամ հանցանք կատարած անձի վիճակը այլ կերպ բարելավելուն/վատթարացնելուն: Հետևաբար բոլոր նկարագրված դեպքերում պետք է գործի իրավական նորմերի գործողության ընդհանուր կանոնը, այն է՝ պետք է գործի և կիրառվի նոր քրեական օրենքը:

Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանը գտնում է, որ արդեն իսկ հանցավոր արարքի այս կամ այն դրսևորումը նոր հանցակազմով սահմանելը և անձի նկատմամբ կիրառելը **կարող են համահունչ լինել Սահմանադրության 72 և 73-րդ հոդվածներին միայն այն դեպքում, եթե այդ նոր հանցակազմով տեղի չի ունեցել հանցավոր ճանաչված արարքի շրջանակի ընդլայնում:**

**6.2.** Յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կիրառելի օրենքի ընտրությունը կատարվում է արարքի կատարման ժամանակի և կիրառվելիք օրենքի գործողության ժամանակի համադրության արդյունքում: Սահմանադրական դատարանը գտնում է, որ միանշանակ է, որ

նման համադրություն կատարելու բացառիկ իրավասությունը վերապահված է քրեական գործի վարույթն իրականացնող մարմնին՝ Սահմանադրական դատարանի կողմից վերը նշված սկզբունքների պահպանմամբ՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ միայն վարույթն իրականացնող մարմնին է հասու ամեն կոնկրետ քրեական գործի հանգամանքների, հանցավոր արարքի կատարման, տևողության և հետևանքի վրա հասնելու ժամանակի վերաբերյալ փաստերը հաստատող կամ հերքող հանգամանքների, հանցավոր արարքը ենթադրաբար կատարած անձանց շրջանակի և այլնի մասին տեղեկատվությունը, որն իր ամբողջության մեջ հնարավորություն կտա որոշելու քրեական օրենքի կոնկրետ դրույթի՝ ժամանակի մեջ կիրառության հարցը:

Նման դիրքորոշման է հանգել նաև ՄԻԵԴ-ը սույն գործով իր խորհրդատվական կարծիքում՝ մասնավորապես, նշելով, որ

*«88. Այսպիսով, իրավախախտման կատարման պահին գործող քրեական օրենքի և փոփոխված քրեական օրենքի համեմատությունը պետք է իրականացվի իրավասու դատարանի կողմից ոչ թե հանցագործության սահմանումների վերացական համեմատությամբ, այլ հաշվի առնելով գործի կոնկրետ հանգամանքները:*

(...)

«90. Թեև կոնկրետացման սկզբունքը մշակվել է համապատասխան տույժերի փոփոխմանը վերաբերող դատական գործերով, սակայն Դատարանը, հաշվի առնելով վերը նշված նկատառումները (տե՛ս 87-88-րդ կետերը), գտնում է, որ նույն սկզբունքը վերաբերում է նաև այն դեպքերին, որոնցով կատարվում է իրավախախտման սահմանման համեմատություն՝ դրա կատարման պահի և հաջորդած փոփոխության միջև»:

91. ... Ներպետական դատարանների իրավասությունն է մեղադրյալի կողմից ենթադրյալ գործողությունների կամ անգործության և գործի այլ առանձնահատուկ հանգամանքների լույսի ներքո համեմատել 2009 թվականի ՔՕ 300.1-ին հոդվածի և քննության առարկա դեպքերի ժամանակ գործող ՔՕ 300-րդ հոդվածի հնարավոր կիրառման իրավական հետևանքները: ...

92. Դատարանը, հետևաբար, այն կարծիքին է, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի նպատակներից ելնելով՝ էթե ենթադրյալ իրավախախտումը կատարելուց հետո ընդունված օրենքն ավելի կամ պակաս բարենպաստ է մեղադրյալի համար, քան այն օրենքը, որը գործել է ենթադրյալ իրավախախտումը կատարելու ժամանակահատվածում, ապա պետք է հաշվի առնել գործի առանձնահատուկ հան-

գամանքները (կոնկրետացման սկզբունքը): Եթե հետագայում ընդունված օրենքն ավելի խիստ է, քան այն օրենքը, որը գործել է ենթադրյալ իրավախախտումը կատարելու ժամանակահատվածում, ապա այն չի կարող կիրառվել»:

**6.3.** Մահմանադրության 79-րդ հոդվածի համաձայն՝ «Հիմնական իրավունքները և ազատությունները սահմանափակելիս օրենքները պետք է սահմանեն այդ սահմանափակումների հիմքերը և ծավալը, լինեն բավարար չափով որոշակի, որպեսզի այդ իրավունքների և ազատությունների կրողները և հասցեատերերն ի վիճակի լինեն դրսևորելու համապատասխան վարքագիծ»:

Մահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է որոշակիության սահմանադրական սկզբունքին: Սույն գործով ևս Մահմանադրական դատարանը վերահաստատում է իր, մասնավորապես, 2019թ. նոյեմբերի 15-ի ՍԴՈ-1488 որոշմամբ արտահայտած հետևյալ իրավական դիրքորոշումները.

«1) ... օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության (...) սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը» (ՍԴՈ-630),

2) «Իրավական պետության սկզբունքը, ի թիվս այլնի, պահանջում է նաև իրավական օրենքի առկայություն: Վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու, թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում: Նորմը չի կարող համարվել «օրենք», եթե այն ձևակերպված չէ բավարար ճշգրտությամբ, որը թույլ կտա իրավաբանական և ֆիզիկական անձանց դրան համապատասխանեցնել իրենց վարքագիծը. նրանք պետք է հնարավորություն ունենան կանխատեսել այն հետևանքները, որոնք կարող է առաջացնել տվյալ գործողությունը:

Օրենքի կանխատեսելիությունը գնահատելու համար կարևոր գործոն է նաև տվյալ հարաբերությունները կանոնակարգող տարբեր կարգավորումների միջև հակասությունների առկայության կամ բացակայության հանգամանքը» (ՍԴՈ-753),

3) «... սահմանադրական դատարանը գտնում է, որ ՀՀ դատական օրենսգրքի 63-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.1-րդ հոդվածներում նշված իրավախախտումների և վիճարկվող նորմում նշված հանցակազմի միջև էական տարբերությունների բացակայության պայմաններում անձը գրվում է իր վարքագծի իրավական հետևանքները կանխատեսելու հնարավորությունից, ինչը չի բխում օրենքի կանխատեսելիության և որոշակիության սկզբունքներից» (ՄԴՈ-851),

4) «Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական պետությունում, իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում, օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները ...» (ՄԴՈ-1148),

5) «ՀՀ Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության կարևորագույն հատկանիշներից է իրավունքի գերակայությունը, որի ապահովման գլխավոր պահանջներից են իրավական որոշակիության սկզբունքը, իրավահարաբերությունների կարգավորումը բացառապես այնպիսի օրենքներով, որոնք համապատասխանում են որակական որոշակի հատկանիշների՝ հստակ են, կանխատեսելի, մատչելի» (ՄԴՈ-1270),

6) «Մի շարք այլ որոշումների (ՄԴՈ-630, ՄԴՈ-1142) համատեքստում, անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին, Սահմանադրական դատարանը գտել է, որ այն անհրաժեշտ է, որպեսզի համապատասխան հարաբերությունների մասնակիցները ողջամիտ սահմաններում ի վիճակի լինեն կանխատեսել իրենց վարքագծի հետևանքները և վստահ լինեն ինչպես իրենց պաշտոնապես ճանաչված կարգավիճակի անփոփոխելիության, այնպես էլ ձեռք բերված իրավունքների և պարտավորությունների հարցում» (ՄԴՈ-1439),

7) (...) Իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ դիրքորոշումներն ամրագրված են Սահմանադրական դատարանի մի շարք, մասնավորապես, ՄԴՈ-630, ՄԴՈ-753, ՄԴՈ-1270 որոշումներում, որոնցից բխում է, որ Սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքը դիտարկում է որպես Սահմանադրության 1-ին հոդվածով ամրագրված իրավական պետության և հատկապես վերջինիս կարևորագույն հատկանիշներից՝ իրավունքի գերակայության գլխավոր պահանջներից մեկը, և հիշյալ սահմանադրաիրավական սկզբունքի գործողությունը տարածվում է բոլոր օրենքների վրա՝ անկախ այն հանգամանքից, թե վերջիններս ունեն



հիմնական իրավունք սահմանափակող, թե հիմնական իրավունքի իրացումը կարգավորող բնույթ (ՄԴՈ-1357):

Անդրադառնալով իրավական որոշակիության սկզբունքին՝ Սահմանադրական դատարանն իր որոշումներում արտահայտել է իրավական դիրքորոշումներ առ այն, որ, մասնավորապես, որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՄԴՈ-630), վերջինս պետք է լինի բավականաչափ մատչելի իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՄԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՄԴՈ-1176, ՄԴՈ-1449),

8) «... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսի՞ն կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ի՞նչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում:

... Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենքի որոշակիության պահանջ նախատեսելով հանդերձ՝ հնարավոր չէ բոլոր հարցերի կարգավորումը նախատեսել բացառապես օրենքով, այդ պատճառով այս հարցում կարևորվում է հատկապես դատական աստիճանների կողմից օրենքի հստակ մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանը վերահաստատում է իր՝ 03.05.2016թ. ՄԴՈ-1270 որոշմամբ արտահայտած իրավական դիրքորոշումն առ այն, որ՝ «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձականացվել՝ նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարա-



նի մեկնաբանություններով»: Վերոգրյալը հաստատվում է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներով, մասնավորապես, Բուսույոկն ընդդեմ Մոլդովայի (Case of Busuioc v. Moldova, application no. 61513/00, 21/12/2004) վճռում դատարանը գտել է. «...որ, թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին: Հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունը և կիրառումը պրակտիկայի խնդիր է» (ՄԴՈ-1452),

9) «Սահմանադրական դատարանն իր՝ 2015 թվականի հունիսի 9-ի ՄԴՈ-1213 որոշմամբ հայտնել է, որ «...իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ ակնկալիքները: Բացի դրանից, իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ» (ՄԴՈ-1475):

Վերահաստատելով և զարգացնելով իր իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է.

1) *իրավական որոշակիությունը նաև իրավական անվտանգության կարևոր բաղադրիչ է*, որով, ի թիվս այլնի, ապահովվում է նաև վստահությունը հանրային իշխանության և նրա հաստատությունների նկատմամբ,

2) իրավական պետությունում բացառապես որոշակի՝ *կանխատեսելի, հստակ և բոլորի համար մատչելի օրենսդրական կարգավորումների* միջոցով պետք է երաշխավորվի առկա իրավակարգի հետագա գոյության նկատմամբ վստահության պաշտպանությունը, (...)

4) հանրային իշխանության կողմից որոշակիության սկզբունքի խախտումն ուղղակիորեն ազդում է օրենքի գերակայության սկզբունքի վրա և էականորեն նվազեցնում է իրավական պետության կայացածության աստիճանը,

5) հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահ-

մանափակման աստիճանին. որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխատեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները, որպեսզի երկխմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում,

6) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը (...):»:

**6.4.** Միաժամանակ անդրադառնալով Օրենսգրքով սահմանված բլանկետային նորմին ներկայացվող որոշակիության պահանջին՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ բլանկետային դիսպոզիցիա պարունակող նորմերի առանձնահատկությունը դրսևորվում է նրանում, որ դրանք ինքնուրույն չեն կարող իրացվել, այսինքն՝ դրանք հասարակական հարաբերությունների ինքնուրույն կարգավորիչներ չեն և իրենց սոցիալական կարգավորիչ գործառույթը կարող են իրականացնել միայն այլ նորմերի հետ համակցության մեջ:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի բազմաթիվ դրույթներում հղումներ կատարվում են այլ օրենսդրական ակտերով սահմանված դեֆինիտիվ նորմերին, սակայն կոնկրետ օրենքի կոնկրետ հոդվածներին կամ դրանց մասերին հղում պարունակող բլանկետային դիսպոզիցիաներ, բացի վիճարկվող հոդվածից, նախատեսված են նաև Օրենսգրքի մի շարք այլ հոդվածներում (մասնավորապես, 190.2-րդ, 314.3-րդ, 353.1-ին և այլ հոդվածներում):

Հարկ է նշել, որ Օրենսգրքի բլանկետային դիսպոզիցիաների հիմնախնդրին Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր 2019 թվականի ապրիլի 16-ի ՍԴՈ-1453 որոշմամբ՝ արտահայտելով հետևյալ իրավական դիրքորոշումները.

- «Իրավակիրառ պրակտիկայում առաջանում են խնդիրներ, երբ օրենսդիրը փոփոխություններ է մտցնում ոչ թե անմիջապես քրեա-

կան օրենքում, այլ միջճյուղային այն օրենսդրության մեջ, որն այս կամ այն կերպ որոշում է քրեաիրավական արգելքների բովանդակությունը կամ քրեական պատժի սահմանները: Այդ բարդությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ ձևական առումով դրանք չեն համարվում քրեական օրենքի փոփոխություն: Սակայն պետք է հաշվի առնել, որ Սահմանադրության 72-րդ հոդվածում օգտագործվում է ոչ թե «քրեական օրենք», այլ «օրենք» եզրույթը: Վերոնշյալ դրույթի և՛ տառացի, և՛ համակարգային մեկնաբանությունից հետևում է, որ օրենքի հետադարձ ուժի բացառության կանոնը տարածվում է նաև այն օրենքների վրա, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմով»,

- «... այն դեպքերում, երբ օրենսդիրը քրեական օրենքը շարադրելիս հղում է կատարում այլ օրենքների նորմերին, ապա դրանք որոշակիորեն վերածվում են քրեական իրավունքի աղբյուրի: Նորմատիվ իրավական ակտերը, որոնց վրա կատարվում կամ ենթադրվում է հղում քրեաիրավական բլանկետային նորմով, էապես ազդում է հանցանքի իրավական բովանդակության և այդ հանցանքի համար քրեական պատասխանատվության կիրառման սահմանների վրա: Այսպիսով, **յուրաքանչյուր փոփոխություն այն օրենքներում, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմում, կարող է հանգեցնել քրեական պատասխանատվության ընդլայնման, նեղացման կամ վերացման:** Ամեն պարագայում, թեև միայն քրեական օրենքն է, որ, միացնելով հանցակազմի բոլոր տարրերը, սահմանում է արարքի հանցավորությունը, այնուամենայնիվ, քրեական օրենքը պետք է դիտարկել բլանկետային նորմերի հետ միասնության մեջ: **Հետևաբար արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքի հետադարձ ուժ ունենալու կանոնը վերաբերում է նաև այն օրենքներին, որոնց հղում է կատարվում Օրենսգրքի բլանկետային նորմով»,**

- «Օրենսգրքի 3-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության միակ հիմքը հանցանք, այսինքն՝ այնպիսի արարք կատարելն է, որն իր մեջ պարունակում է քրեական օրենքով նախատեսված հանցակազմի բոլոր հատկանիշները: Հանցակազմի սուբյեկտը հանցագործության հանցակազմի չորս տարրերից մեկն է, որոնցից թեկուզ մեկի բացակայությունը վկայում է հանցակազմի բացակայության մասին, ուստիև բացառում է տվյալ արարքի հանցավորությունը և պատժելիությունը: Օրինակ՝ եթե օրենսդրական փոփոխության հետևանքով անձի պաշտոնը դուրս է բերվել զինձառայողների ցանկից, ապա այդ անձին զինվորական ծառայության

կարգի դեմ ուղղված հանցագործության համար մեղադրանք առաջադրելը կխախտի Սահմանադրության 72-րդ հոդվածով սահմանված իրավական երաշխիքները:

Հետևաբար քրեական օրենքը հետադարձ ուժ ունի նաև այն դեպքերում, երբ տեղի է ունենում սուբյեկտային կազմով մասնակի ապաքրեականացում, այսինքն՝ երբ սուբյեկտային կազմից հանվում են այնպիսի սուբյեկտներ, որոնց համար նախկին օրենքով սահմանված էր քրեական պատասխանատվություն:

Սահմանադրական դատարանի նշյալ մեկնաբանությունը վերաբերում է ոչ միայն Օրենսգրքի սույն գործով վիճարկվող 310.1-րդ հոդվածի 1-ին մասին ու 314.3-րդ հոդվածին, այլև Օրենսգրքով նախատեսված ցանկացած այլ արարքի»:

**6.5.** Սահմանադրության 1-ին և 2-րդ հոդվածներն անփոփոխելի են: Սույն գործով վիճարկվող 300.1-ին հոդվածում վկայակոչված սահմանադրական մյուս նորմերը թեև թողնում են այնպիսի տպավորություն, որ Սահմանադրության 2005թ. և 2015թ. փոփոխություններով տեքստերն առերևույթ ունեն կարգավորման միևնույն առարկան, այդուհանդերձ, **դրանք ենթարկվել են էական բովանդակային փոփոխությունների:**

Սահմանադրական նորմերն իրենց էությամբ տարբերվում են այլ իրավական նորմերից նրանով, որ դրանք բնորոշվում են առավել կայունությամբ, ներքին ինքնաբավությամբ և արտահայտում են այն պատմական ժամանակաշրջանի սոցիալ-քաղաքական, իրավական իրողությունները, որոնց պայմաններում ընդունվում են: Ընդունման պահից մինչև 2015թ. փոփոխությունները Սահմանադրությունը բնորոշվել է որպես կոշտ Սահմանադրություն, որի նորմերի ցանկացած փոփոխություն կատարվում էր առավել բարդ ընթացակարգով:

Հայաստանի Հանրապետության նախագահին առընթեր Սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից 2014 թվականին հրապարակված սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում սահմանադրական կարգի հիմունքները կազմող իրավունքի գերակայության, իշխանությունների տարանջատման, ժողովրդավարության սկզբունքների լավագույնս իրացման նպատակով համապատասխան սահմանադրական նորմերում բարեփոխումներ կատարելու առնչությամբ դրա հեղինակների կողմից բերվում են մի շարք հայեցակարգային ծանրակշիռ հիմնավորումներ: Հայեցակարգի, Սահմանադրության 2005 և 2015 թվականի խմբագրություններում վիճարկվող նորմերի տեքստերի

համակարգային վերլուծությունը վկայում է, որ հեղինակները, իսկ հետագայում սահմանադիրը, ի դեմս ՀՀ ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների էականորեն նոր բովանդակություն են ներդրել սահմանադրական հիշյալ նորմերի մեջ:

**6.6.** ՄԻԵԴ-ը սույն գործով խորհրդատվական կարծիքում արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի՝ «74. ... «բլանկետային հղում» կամ «օրենսդրություն՝ ըստ հղման» տեխնիկայի կիրառումն ինքնին անհամատեղելի չէ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի պահանջների հետ: Հղում պարունակող դրույթը և դրույթը, որին հղում է արվում, միասին վերցված պետք է թույլ տան շահագրգիռ անհատներին, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան իրավաբանական խորհրդատվության օգնությամբ, կանխատեսել, թե ինչ վարքագիծ դրսևորելու հետևանքով իրենք կարող են քրեական պատասխանատվության ենթարկվել: Այս պահանջը հավասարապես կիրառելի է այն իրավիճակների նկատմամբ, երբ դրույթները, որոնց հղում է արվում, տվյալ իրավական նորմերի աստիճանակարգությունում ունեն ավելի բարձր դիրք կամ վերացականության ավելի բարձր աստիճան, քան հղում պարունակող դրույթները»: Սահմանադրական դատարանը, համադրելով իր կողմից վերն արտահայտած և ՄԻԵԴ-ի հիշյալ դիրքորոշումները, արձանագրում է, որ *ինքնին բլանկետային նորմի առկայությունը քրեական օրենսդրության մեջ խնդրահարույց չէ: Միակ էական սկզբունքային հանգամանքն այն է, որ և՛ քրեական օրենքի, և՛ այն օրենքի դրույթները, որին հղում է արվում, միասին վերցրած պետք է հնարավորություն ընձեռեն շահագրգիռ անձին ըմբռնելու իրավախախտման կազմի տարրերը և հստակ կանխատեսելու, թե ո՞ր գործողությունները (անգործությունը) կհանգեցնեն պատասխանատվության:*

Տվյալ պարագայում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ 2015 թվականի սահմանադրական փոփոխություններից հետո օրենսդրի կողմից **տևական ժամանակ** Օրենսգրքի վիճարկվող հոդվածում համապատասխան փոփոխություններ չկատարելու հանգամանքը թե՛ իրավակիրառի, թե՛ շահագրգիռ անձի համար ստեղծում է իրավական որոշակիության խնդիրներ:

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ *այնքանով, որքանով Օրենսգրքի 300.1-ին հոդվածը բլանկետային հղմամբ վկայակոչում է իր ընդունման պահին գործած, սակայն կիրառման պահին Սահմանադրության փոփոխված նորմերը*, խնդրահարույց է Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված իրավական որոշակիության սկզբունքի տեսանկյու-

նից, քանի որ հնարավորություն չի տալիս անձին հստակ պատկերացում կազմել Օրենսգրքով նախատեսված համապատասխան հանցակազմի բաղկացուցիչ տարրերի մասին և հստակ կանխատեսել, թե իր ուր գործողությունները (անգործությունը) կառաջացնեն քրեական պատասխանատվություն:

**6.7.** Սահմանադրական դատարանն առանձնակի կարևորում է այն հանգամանքը, որ վիճարկվող հոդվածում կիրառվող հասկացությունների անորոշության հարցը բարձրացնում է նաև գործն ըստ էության քննող դատարանը: Մասնավորապես, Դատարանի համար պարզ չէ վիճարկվող հոդվածում օգտագործվող՝ «*նորմը փաստացի վերացնել*» եզրույթը, որը պետք է դրսևորվի «*իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցմամբ*»: Դատարանի համար հստակ չէ, թե «*իրավական համակարգ*» եզրույթն օգտագործված է լա յն, թե՛ նեղ իմաստով, *իրավական նորմի գործողության դադարեցումը* պետք է կրի էպիգոդի կ, թե՛ համակարգային, վերջնակա ն, թե՛ ժամանակավոր բնույթ:

Այս առումով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նախ նշել, որ ՀՀ օրենսդրության մեջ բացակայում է «*իրավական համակարգ*» եզրույթի նորմատիվ բովանդակության ամրագրումը: Այն ծագել ու կիրառության մեջ է դրվել իրավունքի տեսությունում և բնորոշվում է որպես իրավունքի նորմատիվ համակարգի (իրավունքի նորմերի համակցության), իրավունքի կենսագործումն ապահովող կառույցների (հաստատությունների) և գաղափարաիրավական տարրերի (իրավական մշակույթի, իրավական դոկտրինի, իրավագիտակցության) ամբողջություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող հոդվածն այս իմաստով չի կարող ունենալ իրավական որոշակիության բավարար աստիճան՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ նույնիսկ եզրույթի դատական մեկնաբանության առկայությամբ գործնականում դժվար է պատկերացնել, որ հնարավոր է երբևէ կյանքի կոչել վիճարկվող հոդվածը և որևէ անձի մեղադրանք առաջադրել իրավական համակարգի բաղադրամաս հանդիսացող տարրերից, օրինակ՝ հասարակական կամ անհատական իրավագիտակցության մեջ սահմանադրական կարգի հիմունքներից որևէ մեկի փաստացի դադարեցման մեղադրանքով:

Ինչ վերաբերում է «*իրավական համակարգ*» եզրույթի այն իմաստին, որը հանգում է դրա՝ որպես հասարակական հարաբերությունները կարգավորող, դրանց վրա կայունացնող ազդեցություն ունեցող իրավական միջոցների և կառուցակարգերի ամբողջությանը,

այսինքն՝ իրավունքի կենսագործումը (օգտագործումը, կատարումը, պահպանումը, լայն իմաստով իրավակիրառումը) ապահովող ինստիտուցիոնալ փուլային համակարգին, ապա այս պարագայում էլ վիճարկվող իրավադրույթների՝ որոշակիության սկզբունքը բավարարելու վերաբերյալ կասկածները չեն դադարում գոյություն ունենալ:

Նորմը չէր կարող ունենալ որոշակիության բավարար աստիճան և ընկալելի լինել իրավակիրառողի համար, եթե նույնիսկ «իրավական համակարգը» հասկացվեր «իրավունքի համակարգ» իմաստով: Իրավունքի համակարգի՝ որպես իրավական նորմերի համակցության, վերացարկված հասկացության արտահայտման իրավական ձևն օրենսդրությունն է: Դա կնշանակեր, որ տեղի է ունեցել օրենսդրության մեջ նորմի գործողության դադարում: Օրենսդրության մեջ նորմի գործողության դադարումը կարող է տեղի ունենալ միայն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված ձևական-իրավական որոշակի պաշտոնական ընթացակարգերի արդյունքում: Նորմի գործողության դադարեցումն այդ առումով տեղի է ունենում, օրինակ, այն վերացնելով, դատական կարգով անվավեր ճանաչելով, գործողության ժամկետի լրանալով, տվյալ նորմով կարգավորվող հասարակական հարաբերությունների դադարելով և այլն: Այնինչ դրանից առաջ Օրենսգրքի 300.1-ին հոդվածում ընդգծվում է նորմի «փաստացի վերացնելը»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրի կողմից նկարագրված դիսպոզիցիայում օգտագործվող «նորմը փաստացի վերացնելը» («de facto» վիճակը) և «իրավական համակարգում այդ նորմի գործողության դադարեցումը» («de jure» վիճակը) ձևակերպումները որևէ մեկնաբանման պարագայում չեն կարող լինել միմյանց հետ տրամաբանական-իրավական շաղկապվածության մեջ: Այդ ձևակերպումներով ենթադրվող իրավիճակները միմյանց հետ գտնվում են իմաստային հակադրության մեջ, քանի որ որևէ նորմի «de facto» վերացման վիճակը չի կարող ինքնաբերաբար հանգեցնել նորմի «de jure» դադարման վիճակին: Այլ կերպ սահմանադրական կարգի տապալման հանցակազմի դիսպոզիցիայի ձևակերպումն օրենսդրի կողմից իրականացվել է, ի թիվս այլնի, տարբեր եզրույթների անհամատեղելի համակցմամբ:

Այսպիսով՝ վիճարկվող դրույթը, որն առավել ինտենսիվ միջամտություն է նախատեսում անձի անձնական ազատության հիմնական իրավունքին, ձևակերպված է այնքան անորոշ, որ հնարավորություն չի տալիս ընկալել դրա իմաստը, կարող է հանգեցնել



անկանխատեսելի, հետևապես՝ նաև կամայական կիրառման, և թույլ է տալիս ընդլայնել հանցագործության սահմանները՝ պայմանավորված չափազանց բարձր վերացականության աստիճան ունեցող սահմանադրական նորմերին հղում անելու հանգամանքով: Վերացականության բարձր աստիճանն ինքնին խնդրահարույց չէր լինի, եթե հանցակազմի դիսպոզիցիան ձևակերպված լիներ հստակ և թույլ տար ողջամտորեն նույնականացնել նկարագրվող արարքի արտահայտման եղանակը:

**6.8.** Սահմանադրական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է նաև համաչափության սահմանադրական սկզբունքին: Այն ամբողջով է Սահմանադրության 78-րդ հոդվածով, որի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը»:

Սահմանադրական դատարանն իր 2020 թվականի հունիսի 18-ի ՍԴՈ-1546 որոշման մեջ, ամփոփելով իր նախորդող վերաբերելի դիրքորոշումները, մանրամասնությամբ մեկնաբանել է այս հիմնարար սահմանադրական սկզբունքի բովանդակությունը՝ թե՛ օրենսդրի, թե՛ նաև իրավակիրառ մարմինների համար ապահովելով դրա համարժեք ընկալման և կենսագործման պատշաճ նախադրյալներ: Վերահաստատելով իր այդ սկզբունքային իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առանձնացնել դրանցից հետևյալը. **որքան ավելի ինտենսիվ է անձի հիմնական իրավունքի կամ ազատության սահմանափակումը, այնքան ավելի է մեծանում այդ սահմանափակումը հիմնավորելու բեռը:**

Սույն գործի շրջանակներում էական նշանակություն ունի համաչափության սկզբունքի համակարգային կապը որոշակիության սկզբունքի հետ: Այս հարցին նույնպես Սահմանադրական դատարանն անդրադարձել է իր վերոհիշյալ որոշման մեջ: Հղում կատարելով ՍԴՈ-917 և ՍԴՈ-1488 որոշումներին՝ Սահմանադրական դատարանը նշել է, որ հիմնական իրավունք սահմանափակող օրենքով ընտրված միջոցի պիտանիությունն առաջին հերթին կախված է հիմնական իրավունքների և ազատությունների սահմա-



նափակումներին վերաբերող՝ Սահմանադրության այլ պահանջներին, հատկապես՝ որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանության հանգամանքից:

Այսպես՝ մի դեպքում օրենսդրական ձևակերպման անհստակությունը (ՄԴՈ-1488), մեկ այլ դեպքում՝ լայն օրենսդրական սահմանափակման՝ առարկայական չափանիշներով բավարար չափով հիմնավորված չլինելը (ՄԴՈ-917) Սահմանադրական դատարանը գնահատում է որպես կոնկրետ հիմնական իրավունքի սահմանափակման համաչափությունը երաշխավորելու համար *պատշաճ նախադրյալների բացակայություն*:

Հանցագործության օբյեկտիվ կողմի սահմանման, հղում պարունակող նորմերի բովանդակության, հասկացության շփոթի, հանցագործության արտահայտման ոչ հստակ եղանակի տեսանկյունից օրենսդիրը չի ընտրել սահմանադրական կարգի պաշտպանության լեզվով նպատակին հասնելու պիտանի միջոց: Այսինքն՝ Սահմանադրության նորմերի ընտրությունն օրենսդիրը չի հիմնավորել առարկայական չափանիշներով, իսկ իր կողմից ընտրված որոշ նորմեր կարող են ունենալ հարափոփոխ բովանդակություն՝ կախված դրանց լայն մեկնաբանման հնարավորությունից: Բացի դրանից, օրենսդրական այդ կարգավորումների մեկնաբանման միջոցով չհաղթահարվող շփոթ է ստեղծվել նորմի իրավաբանական ուժի, իրավական համակարգում դրա գոյության և փաստացի ներգործության տեսանկյունից՝ նորմի փաստացի վերացումը դիտարկելով որպես նրա իրավական գործողության դադարեցման արտահայտման ձև:

**Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող հոդվածը համահունչ չէ Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին:**

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը և 4-րդ մասը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64, 69 և 71-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց 3**:

**1.** Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-ին հոդվածը ճանաչել Սահմանադրության 78 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Ա. ԴԻԼԱՆՅԱՆ

26 մարտի 2021 թվականի  
ՍԴՈ-1586



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**

**ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ  
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 300.1-ՐԴ  
ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ  
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ  
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԴԻՄՈՒՄԻ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ՍԴՈ-1586  
ՈՐՈՇՄԱՆ ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**(ԲԱԺԻՆ I)**

1. Նկատի ունենալով, որ Սահմանադրական դատարանի 2020 թվականի հունիսի 22-ի թիվ ՍԴԱՈ-138 աշխատակարգային որոշմամբ որոշվել է «Ռոբերտ Քոչարյանի դիմումների հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը և «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը միավորել, ինչպես նաև այն, որ Սահմանադրական դատարանի 2021 թվականի մարտի 26-ի թիվ ՍԴՈ-1586 որոշմամբ ներկայացված պատճառաբանությունները վերաբերում են թե Ռոբերտ Քոչարյանի կողմից ներկայացված անհատական դիմումներին և թե Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Դավիթ Գրի-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021

գորյան) դիմումին, սույն հատուկ կարծիքը ներկայացնում եմ Սահմանադրական դատարանի որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի վերաբերյալ ներկայացված պատճառաբանություններին իմ անհամաձայնության մասով:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն հատուկ կարծիքը չի վերաբերում անհատական դիմումների մասով՝ Սահմանադրական դատարանի որոշման եզրափակիչ մասին, իսկ նշված որոշման պատճառաբանական մասն իմ կողմից ընդունելի է այնքանով, որքանով իմաստային հակասության մեջ չի գտնվում սույն հատուկ կարծիքում (ներկայացված Բաժին I-ում և Բաժին II-ում) արտահայտված իրավական դիրքորոշումներին:

Ուսումնասիրելով գործի քննության առիթ հանդիսացող՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումը, կից փաստաթղթերը, միաժամանակ հիմք ընդունելով այն հանգամանքը, որ Սահմանադրական դատարանն իրավասու է պաշտոնական հարթակներից ձեռք բերել հնարավոր և հասանելի տեղեկություններ, հարկ եմ համարում նախնառաջ ներկայացնել թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի դատավարական նախապատմությունը, որի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը հասանելի է դարձել ոչ միայն դիմումի և գործում առկա մյուս փաստաթղթերի, այլ նաև «DataLex» դատական տեղեկատվական համակարգում (datalex.am) և Հայաստանի Հանրապետության դատական իշխանություն պաշտոնական կայքում (court.am) առկա հասանելի տեղեկությունների ուսումնասիրման արդյունքում:

Այսպես, թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի դատավարական նախապատմությունը հանգում է հետևյալին.

- թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Վարդան Գրիգորյան) կողմից 2019 թվականի ապրիլի 30-ին ընդունվել է վարույթ, որից հետո գործը քննող դատավոր Վարդան Գրիգորյանը հայտնել է ինքնաբացարկ:

- Թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը 2019 թվականի մայիսի 6-ին մակազրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանին:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Դավիթ Գրիգորյան) 2019 թվականի մայիսի 7-ին նշված գործն ընդունել է վարույթ:

- Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Դավիթ Գրիգորյան) 2019 թվականի մայիսի 20-ին կայացրել է «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշում՝ խնդրելով քննարկել և պարզել կիրառման ենթակա ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի և դրա հետ փոխկապակցված ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2009 թվականի մարտի 20-ին ընդունված ՀՕ-53-Ն օրենքի ուժի մեջ գտնվելը գործող խմբագրությամբ) համապատասխանությունը Սահմանադրության 72-րդ, 73-րդ և 79-րդ հոդվածների պահանջներին, և մեկնաբանել Սահմանադրության 56.1 և 57-րդ հոդվածները (2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 140-րդ և 141-րդ հոդվածները) Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածների համատեքստում:

- Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Դավիթ Գրիգորյան) 2019 թվականի մայիսի 20-ի «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը նույն օրը մուտքագրվել է Սահմանադրական դատարան:

- Սահմանադրական դատարանի 2019 թվականի հուլիսի 8-ի թիվ ՍԴԱՈ-72 որոշմամբ Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր Դավիթ Գրիգորյան) դիմումի հիման վրա գործի քննությունը՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300-րդ հոդվածի 1-ին մասի (մինչև 2009 թվականի մարտի 20-ին ընդունված ՀՕ-53-Ն օրենքի ուժի մեջ գտնվելը գործող խմբագրությամբ)՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասով, և Սահմանադրության 56.1-րդ և 57-րդ հոդվածները (2015 թվականի փոփոխություններով Սահմանադրության 140-րդ և 141-րդ հոդվածները) Սահմանադրության 78-րդ և 79-րդ հոդվածների համատեքստում մեկնաբանելու մասով, մերժվել է, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու մասով, ընդունվել է քննության:

- ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի (դատավոր՝ Արմեն Դանիելյան) 2019 թվականի հունիսի 25-ի որոշմամբ դատախազ Պ. Պետրոսյանի և տուժողների իրավահաջորդների ներկայացուցիչ Վ. Գրիգորյանի վերաքննիչ բողոքները բավարարվել են՝ բեկանվել է Երևան քաղաքի առաջին աստյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի մայիսի 20-ի «Սահմանադրական դա-

տարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը, և քրեական գործն ուղարկվել է նույն դատարան՝ նոր քննության:

- ՀՀ բարձրագույն դատական խորհրդի 2019 թվականի հուլիսի 27-ի որոշմամբ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանի լիազորությունները կասեցվել են:

- Թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը 2019 թվականի օգոստոսի 19-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանին:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Աննա Դանիբեկյան) 2019 թվականի օգոստոսի 20-ին նշված գործն ընդունել է վարույթ:

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Աննա Դանիբեկյան) գործը վարույթ ընդունելուց հետո նշանակել է մի շարք դատական նիստեր, որոնցից հերթականը նշանակվել է 2021 թվականի մարտի 30-ին:

- ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի 2021 թվականի մարտի 17-ի որոշմամբ մեղադրյալ Ռ. Քոչարյանի պաշտպան Հ. Խոդոյանի և մեղադրյալ Ս. Օհանյանի պաշտպան Կ. Մեժլումյանի վճռաբեկ բողոքները բավարարվել են և որոշվել է հետևյալը. «ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի՝ 2019 թվականի հունիսի 25-ի որոշումը բեկանել ամբողջությամբ, իսկ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի՝ 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը բեկանել մասնակիորեն՝ քրեական գործի վարույթը կասեցնելու մասով»:

2. Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանվում է դատարանների կողմից Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունը: Նշված հոդվածի համաձայն՝ **դատարաններն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով** կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով դիմում են Սահմանադրական դատարան, **եթե հիմնավոր կասկածներ** ունեն դրա սահմանադրականության վերաբերյալ և գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով:

Դատարանների դիմումների հիման վրա սահմանադրական վերահսկողության դատավարական ընթացակարգերն ու առանձնահատկությունները սահմանվում են «Սահմանադրական դատա-

րանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածով:

Այսպես, վերը նշված սահմանադրական նորմն իր ամբողջական ամրագրումն է ստացել նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասում:

Սահմանադրական դատարանն իր մի շարք աշխատակարգային որոշումներով բացահայտել է վերոնշյալ նորմերի էությունը, մասնավորապես՝ 2020 նոյեմբերի 17-ի ՍԴԱՌ-205, նույն թվականի նոյեմբերի 30-ի ՍԴԱՌ-219 և 2021 թվականի փետրվարի 26-ի ՍԴԱՌ-40 աշխատակարգային որոշումներով արձանագրել է հետևյալը.

«(...) դատարանների՝ Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունն առկա է միայն հետևյալ երկու պայմանների միաժամանակյա առկայության դեպքում, երբ դատարանները՝

1. հիմնավոր կասկածներ ունեն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ և

2. գտնում են, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով (կոնկրետ սահմանադրական վերահսկողություն) (...):

Ըստ այդմ, դատարանները համապատասխան դիմումներում պետք է ներկայացնեն ոչ միայն վիճարկվող դրույթի Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ **իրենց հիմնավորումները, այլ նաև պետք է հիմնավորեն**, որ տվյալ գործի լուծումը հնարավոր է միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով»:

Բացի այդ, Սահմանադրական դատարանը, 2020 թվականի դեկտեմբերի 29-ի ՍԴԱՌ-245 աշխատակարգային որոշմամբ անդրադառնալով վերոնշյալ դրույթների բովանդակությանը, նաև արձանագրել է, որ դատարանների՝ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության հարցով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունն առկա է **միայն իրենց վարույթում գտնվող կոնկրետ գործի դեպքում**, ավելին՝ հիշյալ իրավունքը կարող է իրացվել համապատասխան գործով վարույթն սկսվելուց մինչև այդ գործով ըստ էության որոշում ընդունելու պահը:

«Դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 15-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ **գործը միանձնյա քննող դատավորը գործում է որպես դատարան (...):**

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի համաձայն՝ «դատա-

րան» հիմնական հասկացության նշանակությունը հետևյալն է՝ օրենքով սահմանված կարգով կազմավորված դատարան, որը գործերը քննում է կոլեգիալ կազմով կամ **միանձնյա** առաջին ատյանի դատարան, վերաքննիչ դատարան, վճռաբեկ դատարան (6-րդ հոդվածի 11-րդ կետ):

Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի՝ «Դատարանի կազմը և լիազորությունները» վերտառությամբ 5-րդ բաժնում ներառված 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն քրեական գործերի և նյութերի քննությունը դատարանն իրականացնում է կոլեգիալ կամ մեկ դատավորի կազմով: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ առաջին ատյանի դատարանում գործերը և նյութերը քննվում են **դատավորի կողմից միանձնյա**: Իսկ նույն օրենսգրքի «Վարույթն առաջին ատյանի դատարանում» վերտառությամբ 9-րդ բաժնում ամրագրված դրույթների բովանդակությունից հետևում է, որ դատարան մուտք եղած քրեական գործը **դատավորն իր վարույթ է ընդունում**, որի վերաբերյալ էլ կայացվում է որոշում:

Այսպիսով, քրեադատավարական կարգով առաջին ատյանի դատարանում քննվող գործի վարույթն իրենից ներկայացնում է դատավարական ընթացակարգ, որն սկսվում է դատավորի կողմից քրեական գործն իր վարույթ ընդունելու հարցը լուծելով, և ներառում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված գործը միանձնյա քննող դատավորի կողմից դատավարական որոշումների (դատական ակտերի) կայացում և համապատասխան դատավարական գործողությունների իրականացում: Ընդ որում, տվյալ իրավիճակում գործն իր վարույթ ընդունած դատավորը հանդես է գալիս որպես դատարան:

Տվյալ դեպքում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանը թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը 2019 թվականի մայիսի 7-ին ընդունել է իր վարույթ:

Այնուհետև, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը՝ ի դեմս դատավոր Դավիթ Գրիգորյանի, ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-25-րդ և 71-րդ հոդվածներով, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով, 292-րդ հոդվածի 3-րդ կետով և 295-րդ հոդվածով, 2019 թվականի մայիսի 20-ին կայացված որոշմամբ որոշել է թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի վարույթը



կասեցնել և դիմել Սահմանադրական դատարան:

Միաժամանակ, թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի վերաբերյալ «DataLex.am» դատական տեղեկատվական համակարգում (datalex.am) առկա հասանելի տեղեկությունների ուսումնասիրման արդյունքում պարզ է դառնում, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանի լիազորությունները կասեցված լինելու հիմքով տեղի է ունեցել դատավորի փոխարինում, և թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը 2019 թվականի օգոստոսի 19-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանին:

Ընդ որում, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանը 2019 թվականի օգոստոսի 20-ին գործն ընդունել է վարույթ, որից հետո նշանակել է մի շարք դատական նիստեր:

Նշվածից հետևում է, որ ներկայումս թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը միանձնյա քննող դատավոր Աննա Դանիբեկյանը գործում է որպես Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, մինչդեռ Սահմանադրական դատարանում գործի քննության առիթ հանդիսացող Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2019 թվականի մայիսի 20-ի որոշումը (դիմումը) կայացվել է դատավոր Դավիթ Գրիգորյանի կողմից, ով գործել է որպես թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը միանձնյա քննող Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան մինչև 2019 թվականի հուլիսի 27-ը:

Նման պայմաններում նախ հարկ եմ համարում անդրադառնալ այն հարցին, թե արդյոք քրեադատավարական կարգով գործը քննող դատավորի փոխարինումը հանգեցնում է գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից քրեական գործի քննության իրականացում սկզբից, թե ոչ:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատավորի մասնակցությունը դատական քննությանն անհնար լինելու դեպքում նա փոխարինվում է այլ դատավորով, իսկ գործի քննությունը **վերսկսվում է**:

Վկայակոչված իրավանորմի բովանդակությունից հետևում է, որ օրենսդիրը քրեադատավարական կարգով քննվող գործերով դատավորի փոխարինման դեպքում նախատեսել է գործի քննության շարունակելիություն՝ փոխարինվող դատավորի կողմից այն վեր-

սկսելու միջոցով<sup>1</sup>:

Հատկանշական է, որ նույն հարցի առնչությամբ օրենսդիրը քաղաքացիադատավարական և վարչադատավարական կարգով սահմանել է այլ կարգավորումներ: Մասնավորապես ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27-րդ հոդվածի 5-րդ մասի բովանդակությունից հետևում է, որ դատարանի կազմի, այսինքն՝ դատավորի փոփոխության դեպքում փոխարինող դատավորի կողմից գործը վարույթ ընդունելու մասին որոշում կայացվելուց հետո **գործի քննությունն սկսվում է սկզբից**: Համանման է կարգավորումը նաև վարչադատավարական կարգով գործը քննելիս դատավորի ինքնաբացարկ հայտնելու դեպքում դատավորի փոփոխություն տեղի ունենալու պարագայում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ հարաբերությունների վրա տարածվում են ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի համապատասխան նորմերը (հիմք՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 13-րդ հոդված, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 29-րդ հոդվածի 9-րդ մաս):

Հաշվի առնելով քրեական գործերի առանձնահատկությունները քաղաքացիական և վարչական գործերի համեմատությամբ՝ կարծում եմ, որ օրենսդրի կողմից քրեական դատավարության առնչությամբ տարբերվող կարգավորում նախատեսելն արդարացված է: Հատկապես կարևոր է այն հանգամանքը, որ քրեական գործի քննությունը ենթադրում է առավել ինտենսիվ միջամտություն անձի հիմնական իրավունքներին և ազատություններին, մասնավորապես չի բացառվում քրեական գործի քննության ընթացքում մեղադրյալի նկատմամբ խափանման միջոցների կիրառումը, որոնք կարող են, ի թիվս այլնի, դրսևորվել կալանքի տակ գտնվող անձի անձնական ազատության իրավունքի սահմանափակմամբ, գույքը կալանքի տակ գտնվելու դեպքում անձի՝ սեփականությունից անարգել օգտվելու իրավունքի սահմանափակմամբ կամ ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցի կիրառմամբ անձի՝ ազատ տեղաշարժվելու իրավունքի սահմանափակմամբ:

Ըստ այդմ, հաշվի առնելով նաև քրեական գործի առանձնահատկություններով պայմանավորված՝ այն առավել ողջամիտ ժամկե-

<sup>1</sup> Հարկ եմ համարում նշել, որ իմ կարծիքով նշված կարգավորումից բացառություն պետք է համարել դատավորի կողմից ինքնաբացարկի մասին որոշում կայացնելու դեպքը, որպիսի պայմաններում կասկածի տակ է դրվում դատավորի անաչառությունը տվյալ գործով կայացվող բոլոր որոշումների և իրականացվող բոլոր գործողությունների առնչությամբ, ուստի հիշյալ դեպքում գործի քննությունը պետք է սկսվի սկզբից: Այնուհանդերձ, նշված դիրքորոշումը մանրամասն չեմ պատճառաբանում, նկատի ունենալով այն, որ այս իրավիճակը քննարկվող դեպքի հետ կապված չէ:

տում քննելու և լուծելու օրենսդրությամբ սահմանված պահանջի ապահովման անհրաժեշտությունը դատավորի փոխարինման դեպքում օրենսդիրը տարբերակված մոտեցում է դրսևորել սահմանելով քրեական գործի վերսկսում (շարունակելիություն) գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից:

Ավելին օրենսդրի կողմից նախատեսված տարբեր իրավակարգավորումներից հետևում է, որ եթե օրենսդիրը նպատակ հետապնդեր սահմանելու քրեադատավարական կարգով գործը քննող դատավորի փոխարինման դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից գործի քննության իրականացում անմիջապես սկզբից, ապա այդպիսի կարգավորումը հստակորեն կամրագրվեր նաև ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 15-րդ և 41-րդ հոդվածների համակարգային վերլուծությունից հետևում է, որ եթե օրենսդիրն ունենար քրեադատավարական կարգով համանման կարգավորում նախատեսելու և դրանով պայմանավորված միևնույն հետևանքներ առաջացնելու նպատակ (ինչ, նույն իրավիճակի հետ կապված, քաղաքացիադատավարական և վարչադատավարական հետևանքները), ապա նշված կարգավորումը սահմանելիս վերջինիս կողմից կկիրառվեին միևնույն տերմինները, որից և հետևում է իմ դիրքորոշումը, որ օրենսդրի նպատակն է եղել դատավորի փոխարինման դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից քրեական գործի քննությունը վերսկսելու վերաբերյալ կարգավորում նախատեսելը: Միաժամանակ, քրեական գործի քննության շարունակելիության (վերսկսման) վերաբերյալ կարգավորում նախատեսելը պայմանավորված է գործով նախկին դատավորի կողմից արդեն իսկ կատարված մի շարք դատավարական գործողությունների և դրանցով պայմանավորված արդյունքների առկայությամբ, որոնք պարտադիր են քրեական գործը քննելիս նշված գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի համար:

Ուստի, դատավորի փոխարինման դեպքում քրեական գործի շարունակելիության պայմաններում քրեական գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը կրում է որոշակի օրենսդրական կաշկանդվածություն՝ պայմանավորված գործը քննող նախկին դատավորի կողմից կայացված դատավարական մի շարք որոշումներով և իրականացված դատավարական գործողություններով:

Վերոնշյալի կապակցությամբ անհրաժեշտ էմ համարում բացահայտել քրեական դատավարությունում դատավորի փոխարինման դեպքում քրեական գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի

օրենսդրական կաշկանդվածության աստիճանը՝ պայմանավորված գործը քննող նախկին դատավորի կողմից կայացված կոնկրետ որոշումներով և իրականացված գործողություններով:

Մասնավորապես՝ հարց է առաջանում, թե արդյոք դատավորի փոխարինման դեպքում քրեական գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը գործը քննող նախկին դատավորի կողմից կայացված բոլոր որոշումների և իրականացված բոլոր գործողությունների առնչությամբ է կրում օրենսդրական կաշկանդվածություն:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի ուսումնասիրության հիման վրա կարծում եմ, որ քրեական գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը պարտավոր է կաշկանդված լինել նախկին դատավորի կողմից կայացված՝ բացառապես այն որոշումներով և իրականացված այն գործողություններով, որոնք անմիջականորեն չեն առնչվում նախկինում գործը քննող դատավորի **սուբյեկտիվ ընկալման արդյունքում գնահատման հետ**: Մասնավորապես՝ քրեական դատավարությունում այդպիսիք կարող են լինել, օրինակ, գործի դատաքննության ընթացքում ձեռքբերված՝ փորձագետի եզրակացությունը կամ վկայի ցուցմունքը (նշված հղումները սպառիչ չեն):

Ուստի, նմանօրինակ դեպքերում, երբ նշված դատավարական գործողությունը պայմանավորված չէ նախկին դատավորի սուբյեկտիվ ընկալման արդյունքում գնահատմամբ, քրեական գործն իր վարույթ ընդունած նոր դատավորն այդպիսի դատավարական գործողությունների առնչությամբ պարտավոր է կաշկանդված լինել, մինչդեռ այլ է իրավիճակը, իմ կարծիքով օրինակ, նախկինում գործը քննող դատավորի կողմից Սահմանադրական դատարանի դիմելու մասին որոշում կայացնելու դեպքում:

Վերոնշյալ պայմաններում անհրաժեշտ եմ համարում քննարկման առարկա դարձնել նախկինում գործը քննող դատավորի կողմից Սահմանադրական դատարանի դիմելու մասին որոշում կայացնելու առնչությամբ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի օրենսդրական կաշկանդվածության բացառման հարցը:

Այսպես, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումում **դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը** նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու վերաբերյալ, ինչպես նաև այն հանգամանքը, որ այդ գործի լուծումը հնարավոր է միայն վիճարկվող դրույթի կիրառման միջոցով:

Սահմանադրական դատարանը, 2013 թվականի սեպտեմբերի

18-ի ՍԴՈ-1114 որոշմամբ արձանագրել է, որ դատարանը սահմանադրական դատարան դիմելու համար երկու հիմնավորում պետք է ներկայացնի: Նախ՝ **պետք է հիմնավորի իր դիրքորոշումը** նորմատիվ ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հանգամանքի առնչությամբ: Երկրորդ՝ հիմնավորի այն հանգամանքը, որ տվյալ գործի լուծումը կարող է իրականացվել միայն վիճարկվող դրույթի կիրառմամբ: Առաջին դեպքում դիրքորոշումը կարող է ձևավորվել նորմի սահմանադրականության վերաբերյալ դատավորի **ինքնուրույն ու համարժեք** իրավական վերլուծության արդյունքում:

Միաժամանակ, անհրաժեշտ էմ համարում ընդգծել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է դատարանի նախաձեռնությամբ կամ դատավարության մասնակիցների միջնորդության հիման վրա քրեական գործով վարույթի կասեցման հնարավորություն, **եթե դատարանը գտնում է**, որ կիրառման ենթակա օրենքը կամ այլ իրավական ակտը հակասում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը: Այս դեպքում դատարանին է վերապահված գործի վարույթը կասեցնելու և Սահմանադրական դատարան դիմելու պարտականությունը:

Պատահական չէ վերոնշյալ դրույթներում օրենսդրի կողմից **«դատարանը պետք է հիմնավորի իր դիրքորոշումը»** և **«եթե դատարանը գտնում է»** արտահայտությունների օգտագործումը: Մասնավորապես՝ վերոնշյալ դրույթների բովանդակությունից և Սահմանադրական դատարանի հիշյալ որոշումից հետևում է, որ յուրաքանչյուր դեպքում կոնկրետ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության և գործը միայն տվյալ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ դատարանի մտահոգության առկայության, ինչպես նաև այդ մտահոգությունը Սահմանադրական դատարանի միջոցով փարատելու իրավունքը կարող է իրացվել բացառապես **գործը քննող դատավորի** կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի Սահմանադրությանը հակասելու, և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հանգամանքների հիմնավորման միջոցով, ավելին՝ գործը քննող դատավորը կարող է նման եզրահանգման գալ միայն նշված հարցերի վերաբերյալ **իր ներքին համոզմունքի հիման վրա ձևավորված սուբյեկտիվ դիրքորոշման արդյունքում**, որն էլ պետք է պայմանավորված լինի դատավորի մոտ ձևավորված **հիմ-**

**նավոր կասկածով և լինի վերջինիս կողմից ինքնուրույն իրավական վերլուծության արդյունք:**

Այսպիսով, քննարկման առարկա հարցի առնչությամբ հատկանշական է այն հանգամանքը, որ կոնկրետ գործով նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերով Սահմանադրական դատարան դիմելու իրավասությունը **պատկանում է բացառապես այն դատավորին, որի վարույթում գտնվում է տվյալ գործը**, և վիճարկվող դրույթի սահմանադրականության և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության բացահայտման նպատակով Սահմանադրական դատարան դիմելու հարցը կարող է հաղթահարվել **բացառապես տվյալ դատավորի վարույթում գտնվող գործով վերջինիս ներքին համոզմունքի հիման վրա ձևավորված սուբյեկտիվ դիրքորոշման արդյունքում:**

Այլ կերպ ասած վիճարկվող նորմի սահմանադրականության և գործը միայն այդ նորմի կիրառմամբ լուծելու հնարավորության վերաբերյալ դատավորի սուբյեկտիվ դիրքորոշումը կարելի է համարել որպես տվյալ դատավորի ներքին համոզմունքի արդյունք և այն ոչ մի դեպքում չի կարող կաշկանդող հատկություն ունենալ այլ դատավորի համար (օրինակ գործը քննող դատավորի մասնակցության անհնարինության դեպքում այլ դատավորով փոխարինվելու դեպքում), քանի որ բացառված չէ, որ փոխարինած դատավորը չունենա գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկած, կամ ավելին՝ չունենա համոզմունք վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառելիության անհրաժեշտության մասին:

Վերոնշյալի հաշվառմամբ գտնում եմ, որ նորմատիվ իրավական ակտի վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու, և գործը միայն այդ նորմի կիրառմամբ լուծելու հնարավորության հանգամանքների առնչությամբ դատավորի **ինքնուրույն ու համարժեք** իրավական վերլուծության և **ներքին համոզմունքի** հիման վրա ձևավորված **դիրքորոշման հիմքում** ընկած է բացառապես տվյալ դատավորի **գործով կիրառման ենթակա իրավական նորմերի սուբյեկտիվ ընկալումը և մեկնաբանությունը, մասնագիտական փորձը և դրա արդյունքում ձևավորված մասնագիտական աշխարհայացքը:**

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ նախկինում գործը քննող դատավորի վարույթում գտնվող գործով նորմատիվ իրավական

ակտի սահմանադրականության և գործը միայն այդ նորմի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերով Սահմանադրական դատարանն ղիմելու վերաբերյալ այդ դատավորի կողմից կայացված որոշումը համարվում է բացառապես տվյալ դատավորի սուբյեկտիվ դիրքորոշմամբ պայմանավորված ներքին համոզմունքի արդյունք, որը սերտորեն կապված է սոսկ նախկին դատավորի իրավագիտակցության, գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ վերջինիս սուբյեկտիվ ընկալման և դրա վերաբերյալ վերջինիս մոտ ձևավորված ներքին համոզմունքի հետ:

Բացի այդ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասից հետևում է, որ դատարանի որոշմամբ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարանն ղիմելու վերաբերյալ դատավարության մասնակիցների միջնորդությունները կարող են բավարարվել կամ մերժվել:

Նշված դրույթի կապակցությամբ հարկ եմ համարում նշել, որ նախկինում գործը քննող դատավորի կողմից գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարանն ղիմելու վերաբերյալ դատավարության մասնակիցների միջնորդությունը մերժվելու, և դատավորի փոխարինումից հետո դատավարության մասնակիցների կողմից կրկին նշված հարցի վերաբերյալ միջնորդություն ներկայացվելու դեպքում ևս գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը չի կարող կաշկանդված լինել այդ հարցի վերաբերյալ նախկինում գործը քննող դատավորի սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշմամբ:

Նշված դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը պարտավոր է քննել ներկայացված միջնորդությունը և կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկածի, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու համոզմունքի դեպքում կրում է պարտականություն ներկայացնելու իր ներքին համոզմունքի հիման վրա ձևավորված սուբյեկտիվ դիրքորոշումը՝ Սահմանադրական դատարանն ղիմելու վերաբերյալ:

Ավելին՝ նման միջնորդությունը գործը քննող նախկին դատավորի կողմից մերժված լինելու հանգամանքը որևէ կերպ չի կարող

կաշկանդել փոխարինող դատավորին Սահմանադրական դատարանն դիմելու հարցը բարձրացնել նաև իր նախաձեռնությամբ:

Հետևաբար ոչ միայն դատավարության մասնակիցների միջնորդությունների հիման վրա, այլ նաև դատարանի նախաձեռնությամբ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության (1), ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու (2) հնարավորության հարցերի վերաբերյալ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի մոտ 1-ին դեպքում՝ հիմնավոր կասկածի, իսկ 2-րդ դեպքում՝ համոզմունքի առկայության դեպքում, վերջինս չպետք է զրկված լինի Սահմանադրական դատարանն դիմելու հնարավորությունից՝ պայմանավորված նախկինում գործը քննող դատավորի կողմից նշված հարցերի վերաբերյալ արտահայտված դիրքորոշմամբ, ավելին՝ նման իրավիճակում Սահմանադրական դատարանն դիմելը դատարանի համար հանդիսանում է պարտականություն:

Ուստի կարծում եմ, որ դատավորի փոխարինման դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը չի կարող կաշկանդված լինել նախկինում գործը քննող դատավորի կողմից տվյալ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ վերջինիս ներքին համոզմունքի հիման վրա ձևավորված սուբյեկտիվ դիրքորոշմամբ:

Այդուհանդերձ, անհրաժեշտ եմ համարում նշել, որ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի օրենսդրական կաշկանդվածությունը կարող է դրսևորվել բացառապես այն դեպքում, երբ նախկինում գործը քննող դատավորը նախաձեռնել է նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ սահմանադրաիրավական վեճ՝ կայացնելով տվյալ գործով Սահմանադրական դատարանն դիմելու մասին որոշում, որպիսի վեճն էլ արդեն իսկ լուծվել է Սահմանադրական դատարանի կողմից կայացված համապատասխան որոշմամբ:

Այսինքն՝ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի՝ օրենսդրորեն կաշկանդված վարքագծի դրսևորումը պարտադիր է, եթե արդեն իսկ առկա է գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության վերաբերյալ Սահմանադրական դատարանի որոշում:

Հետևաբար նախկինում գործը քննող դատավորի կողմից լոկ նորմատիվ իրավական ակտի սահմանադրականությունը որոշելու



հարցով Սահմանադրական դատարան դիմելու նախաձեռնությունը չի կարող համարվել տվյալ հարցերի վերաբերյալ այլ դիրքորոշում ունենալու կաշկանդվածության պարտադիր պահանջ տվյալ դատավորի փոխարինման հիմքով գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի համար:

Վերոգրյալի համատեքստում կարևորում եմ այն հանգամանքը, որ նախկինում գործը քննող դատավորի սուբյեկտիվ դիրքորոշման առնչությամբ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կաշկանդվածությունը խոցելի կդարձնի վերջինիս անկախությունը: Մինչդեռ, դատավորի անկախությունն ամրագրված է Սահմանադրությամբ, որի 164-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս **դատավորն անկախ է**, անաչառ և գործում է միայն Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան: Միաժամանակ, ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի «Դատավորների անկախությունը» վերտառությամբ 40-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ արդարադատություն իրականացնելիս **դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին**: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **դատավորները քրեական գործերը և նյութերը լուծում են իրենց ներքին համոզմամբ՝** ներկայացված ապացույցների պատշաճ հետազոտման հիման վրա (...):

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը ևս իր վճիռներում բազմիցս անդրադարձել է դատավորի անկախության սկզբունքին:

Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը գտել է, որ դատավորների անկախության համար պահանջվում է, որ առանձին դատավորներն ազատ լինեն ինչպես արտաքին, այնպես էլ դատական համակարգի ներսից բխող անհարկի ազդեցությունից: Դատական համակարգի ներսում անկախության համար պահանջվում է, որ դատավորներն ազատ լինեն **գործընկեր դատավորների** կամ դատարանում վարչական գործառույթներ իրականացնող անձանց, օրինակ՝ դատարանի նախագահի կամ դատարանի ստորաբաժանման նախագահի հրահանգներից կամ ճնշումից<sup>2</sup>:

Այսպիսով, դատավորի անկախությունը ենթադրում է դատավորի կողմից գործերի քննություն ու որոշումների կայացում հնարավոր կողմնակի ազդեցության բացակայության և ազատ գործելու

<sup>2</sup> St' u ECHR, case of Agrokompleks v. Ukraine, application no. 23465/03, 06.10.2011, § 137.

հնարավորության պայմաններում: Ուստի, արդարադատական գործառույթներ իրականացնելիս դատավորի անկախության ապահովումն անհրաժեշտ պայման է Սահմանադրությամբ ամրագրված մարդու հիմնարար իրավունքների և ազատությունների պաշտպանության երաշխավորման համար:

Դատավորի անկախությունը վերաբերում է դատավորի կողմից գործերի քննության ու որոշումների կայացման ժամանակ հնարավոր ներքին և արտաքին միջամտության բացակայությանը: Ընդ որում, ներքին միջամտությունը կարող է դրսևորվել ինչպես հորիզոնական հարթությունում (օրինակ՝ գործը քննող դատավոր և մինչև նույն աստիճանի գործընկեր դատավոր), այնպես էլ ուղղահայաց հարթությունում (օրինակ՝ գործը քննող դատավոր և վերադաս դատական աստիճան):

Ավելին՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ դատական համակարգի ներսում դատավորների անկախությունը և, մասնավորապես, դատական համակարգում իրենց վերադասներից անկախությունն ապահովող բավարար երաշխիքների բացակայությունը կարող է պատճառ լինել, դիմումատուի կասկածները՝ կապված տվյալ դատարանի անկախության և անաչառության հետ, օբյեկտիվորեն հիմնավորված համարելու համար<sup>3</sup>:

Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեն, թիվ 2010 (12) հանձնարարականով անդրադառնալով դատավորի ներքին անկախությանը, նշել է, որ դատական իշխանության անկախության սկզբունքը նշանակում է **յուրաքանչյուր դատավորի անկախությունն դատական որոշումներ կայացնելիս**: Որոշումներ կայացնելիս դատավորները պետք է լինեն անկախ և անկողմնակալ, ունակ լինեն գործելու առանց սահմանափակումների, առանց որևէ իշխանության, ներառյալ դատական համակարգի ներքին մարմինների անհարկի ազդեցության, ճնշումների, սպառնալիքների, ուղղակի և անուղղակի միջամտության<sup>4</sup>:

Մասնավորապես՝ հորիզոնական հարթությունում դատավորի անկախության միջամտության դրսևորում կարող է համարվել այն իրավիճակը, երբ նախկինում գործը քննող դատավորի կողմից (որը որևէ պատճառով չի ավարտել տվյալ քրեական գործի քննությունը)

<sup>3</sup> St u ECHR, case of Parlov-Tkalčić v. Croatia, application no. 24810/06, 06.10.2011, § 137.

<sup>4</sup> St u The Committee of Ministers of the Council of Europe, Recommendation 2010 (12) on judges: independence, efficiency and responsibilities, 17.11.2010, § 22.

կայացված որոշման և կատարված դատավարական գործողության արդյունքում չհիմնավորված կերպով սահմանափակվում է այդ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի կողմից ազատ և անկախ որոշում կայացնելու հնարավորությունը: Տվյալ դեպքում քննարկման առարկա հանդիսացող՝ նախկինում գործը քննող դատավորի կողմից գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ նախկին դատավորի սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշման պարտադիրությունը գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի համար կիսաթարի այդ դատավորի ներքին անկախությունը:

Բացի այդ, համանման կարևորություն ունի նաև դատավորի անկախության էրաշխավորումն ուղղահայաց հարթությունում: Մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ հոդվածի 3-րդ մասից հետևում է, որ դատարանի որոշմամբ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը համապատասխանությունը որոշելու հարցով Սահմանադրական դատարանն ղեկավարում է վերաբերյալ դատավարության մասնակիցների միջնորդությունները կարող են բավարարվել կամ մերժվել, որպիսի որոշումն էլ կարող է բողոքարկվել վերադաս դատարան: Կարծում եմ, որ նշված իրավիճակում վերաքննիչ դատարանի կողմից գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ առաջին ատյանի դատարանի դատավորի կողմից սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշմամբ կայացված որոշման իրավաչափության ստուգումը ևս կիսաթարի առաջին ատյանի դատարանի դատավորի ներքին անկախությունը (քանի որ վերադաս ատյանի դատավորը պետք է գնահատական տա, թե արդյոք առաջին ատյանի դատավորի մոտ պետք է առկա լինի նորմի սահմանադրականության վերաբերյալ հիմնավոր կասկած, թե ոչ, ինչպես նաև պետք է գնահատի, թե արդյոք տվյալ նորմը պարտադիր ենթակա պետք է լինի կիրառման քրեական գործը քննող դատավորի կողմից, թե ոչ)<sup>5</sup>:

<sup>5</sup> Այնուհանդերձ, սույն հատուկ կարծիքում մանրամասն չեմ ներկայացնում նշված հարցի վերաբերյալ իմ դիրքորոշումը, հաշվի առնելով, որ նախ տվյալ իրավիճակը դուրս է սույն գործի հանգամանքների շրջանակից, և երկրորդ՝ Սահմանադրական դատարանի վարույթում է գտնվում կոնկրետ այդ հարցին վերաբերող սահմանադրաիրավական վեճ:

Ավելին՝ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ 2010 (12) հանձնարարականում ևս նշվել է, որ դատական իշխանության հիերարխիան չպետք է խաթարի դատավորների անհատական անկախությունը<sup>6</sup>:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում եմ, որ գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ նախկին (փոխարինված) դատավորի սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշման պարտադիրությունը գործն իր վարույթ ընդունած նոր (փոխարինած) դատավորի համար չհիմնավորված կերպով կսահմանափակի վերջինիս ներքին անկախությունը: Մասնավորապես՝ նախկինում գործը քննող (փոխարինված) դատավորի կողմից կայացված սուբյեկտիվ դիրքորոշման ուղղակի ազդեցությունը քրեական գործի բնականոն ընթացքի վրա անխուսափելի կդարձնի գործն իր վարույթ ընդունած նոր (փոխարինած) դատավորի կողմից կաշկանդվածության դրսևորումը քրեական գործի քննության ընթացքում կիրառման ենթակա իրավական նորմերի սուբյեկտիվ ընկալման, դրանց վերաբերյալ սուբյեկտիվ մեկնաբանության և ներքին համոզմունքի ձևավորման հարցում:

Վերոնշյալի համատեքստում գտնում եմ, որ դատավորի փոխարինման դեպքում գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերի առնչությամբ առաջնային կարևորություն պետք է ունենա գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի վարքագիծը, մասնավորապես՝ նշված հարցերի կապակցությամբ վերջինիս սուբյեկտիվ մոտեցումն ու ձևավորված ներքին համոզմունքը:

Ընդ որում, նշված հարցերի կապակցությամբ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի վարքագիծը պետք է դրսևորվի ակտիվ եղանակով: Ակտիվ վարքագծի դրսևորման դեպքում գործն իր վարույթ ընդունած նոր (փոխարինած) դատավորը պետք է Սահմանադրական դատարանի առջև բացահայտի գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի հակասահմանադրական լինելու հիմնավոր կասկածի, և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ իր սուբյեկտիվ ընկալման և ներքին համոզմունքի արդյունքում

<sup>6</sup> Ské u The Committee of Ministers of the Council of Europe, Recommendation 2010 (12) on judges: independence, efficiency and responsibilities, 17.11.2010, § 22.

ձևավորված դիրքորոշումը: Այլ կերպ ասած՝ դատավորի փոխարինման դեպքում նախկինում գործը քննող դատավորի կողմից նշված հարցերի վերաբերյալ սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշմանը համակարծիք լինելու և նույն համոզմունքն ունենալու պարագայում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը պետք է ակտիվ վարքագիծ դրսևորելու միջոցով բացահայտի իր դիրքորոշումը:

Այնինչ, գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության, ինչպես նաև գործը միայն վիճարկվող նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ նախկին (փոխարինված) դատավորի սուբյեկտիվ դիրքորոշման առնչությամբ պասիվ վարքագծի դրսևորման պարագայում գործն իր վարույթ ընդունած նոր դատավորի «անգործությունը» պետք է դիտարկվի որպես անհամաձայնություն նշված հարցերի կապակցությամբ, ինչից էլ կհետևի, որ վերջինիս սուբյեկտիվ ընկալման և ներքին համոզմունքի արդյունքում ձևավորված դիրքորոշումը տարբերվում է նախկինում գործը քննող և փոխարինված դատավորի նշված հարցի վերաբերյալ դիրքորոշումից:

Այդուհանդերձ, կարծում եմ, որ դատավորի փոխարինման դեպքում գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի սահմանադրականության և գործը միայն այդ նորմատիվ իրավական ակտի կիրառմամբ լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ գործը քննող նախկին դատավորի կողմից Սահմանադրական դատարան ներկայացված դիմումի առնչությամբ գործն իր վարույթ ընդունած նոր դատավորը պետք է դրսևորի բացառապես ակտիվ վարքագիծ և բացահայտի իր սուբյեկտիվ դիրքորոշումը նշված հարցերի և Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության գործիքակազմը կիրառելու անհրաժեշտության կապակցությամբ:

Սույն գործի դատավարական նախապատմությունից հետևում է, որ գործի քննության առիթ հանդիսացող Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի 2019 թվականի մայիսի 20-ի «Սահմանադրական դատարան դիմելու և գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը կայացվել է դատավոր Դավիթ Գրիգորյանի կողմից, այսինքն՝ տվյալ պահին Դավիթ Գրիգորյանը գործել է որպես թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը միանձնյա քննող Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան: Նշված դիմումի բովանդակության ուսումնասիրություն-

նից հետևում է, որ այն ենթադրում է որպես գործով կիրառման ենթակա նորմատիվ իրավական ակտի՝ Սահմանադրությանը հակասելու և գործը միայն տվյալ նորմատիվ իրավական ակտի կիրառման միջոցով լուծելու հնարավորության վերաբերյալ դատավոր Դավիթ Գրիգորյանի **ինքնուրույն ու համարժեք** իրավական վերլուծության և **ներքին համոզմունքի** հիման վրա ձևավորված սուբյեկտիվ դիրքորոշում:

Մինչդեռ, ինչպես արդեն վերը նշվել է, Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանի լիազորությունները կասեցված լինելու պայմաններում թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը 2019 թվականի օգոստոսի 19-ին մակագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանին, և նշված գործն այժմ գտնվում է վերջինիս վարույթում, այսինքն՝ այժմ վերջինս գործում է որպես Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան տվյալ քրեական գործի քննության հարցում:

Միաժամանակ, թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի վերաբերյալ «DataLex.am» դատական տեղեկատվական համակարգում (datalex.am) և Հայաստանի Հանրապետության դատական իշխանություն պաշտոնական կայքում (court.am) առկա հասանելի տեղեկություններից հետևում է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր՝ Աննա Դանիբեկյան) գործը վարույթ ընդունելուց հետո նշանակել է մի շարք դատական նիստեր, որոնցից հերթականը նշանակվել է 2021 թվականի մարտի 30-ին: Սակայն նշված տեղեկություններից և գործում առկա նյութերից պարզ չէ, թե Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանի լիազորությունները կասեցված լինելու հիմքով դատավորի փոխարինման արդյունքում գործն իր վարույթ ընդունած դատավոր Աննա Դանիբեկյանի կողմից թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի քննությունը սկսվել է սկզբից, թե այն վերսկսվել է ընդհատված պահից:

Այդուհանդերձ, թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի քննությունը նույնիսկ սկզբից սկսելու պայմաններում գործը քննող նոր դատավոր Աննա Դանիբեկյանին չի կարող կաշկանդել նախկինում գործը քննող դատավոր Դավիթ Գրիգորյանի կողմից կայացված որոշումները և իրականացված դատավարական գործողությունները, քանի որ գործի քննությունը սկզբից սկսելը ենթադրում է դատավարական բոլոր գործողությունների իրականացում անմիջապես սկզբից:

Իսկ եթե թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործի քննությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 301-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով վերսկսվել է, ապա այս դեպքում ևս դատավորի փոխարինումից հետո նշված գործն իր վարույթ ընդունած դատավոր Աննա Դանիբեկյանը չի կարող կրել օրենսդրական կաշկանդվածություն ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության, ինչպես նաև թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը միայն ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման միջոցով լուծելու հարցերի վերաբերյալ նախկինում գործը քննող դատավորի սուբյեկտիվ ընկալման արդյունքում ձևավորված դիրքորոշման առնչությամբ:

Վերոնշյալ դիրքորոշումների համատեքստում կարծում եմ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության, ինչպես նաև թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը միայն ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի առնչությամբ առաջնային է գործն իր վարույթ ընդունած Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանի, այսինքն՝ ներկայումս գործը քննող դատարանի կողմից իր վարույթում գտնվող գործով ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի կիրառելիության անխուսափելիության և այդ նորմի հակասահմանադրական լինելու վերաբերյալ հիմնավոր կասկած ունենալու սուբյեկտիվ ընկալումն ու գնահատումը: Այնինչ, Մահմանադրական դատարանի վարույթում գտնվող գործով բացակայում է որևէ նման դիրքորոշում ներկայումս գործը քննող դատարանի կողմից:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ 1**

**Ամփոփիչ եզրահանգում սույն հատուկ կարծիքի Բաժին I-ում արտահայտված դիրքորոշման վերաբերյալ.**

Ամփոփելով վերոգրյալը և ելնելով վերոնշյալ կարծիքում արտահայտված դիրքորոշումներից՝ գտնում եմ, որ սույն գործի վարույթը Երևան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Դավիթ Գրիգորյան) դիմումի մասով, ենթակա էր կարճման «Մահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով, քանի որ մի կողմից՝ ՀՀ քրեական օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականության և թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը միայն ՀՀ քրեական

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021



օրենսգրքի 300.1-րդ հոդվածի 1-ին մասի կիրառման միջոցով լուծելու հնարավորության հարցերի վերաբերյալ Սահմանադրական դատարան է դիմել թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը նախկինում քննող Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանը և վերջինիս լիազորությունները կասեցված լինելու հիմքով դատավորի փոխարինման արդյունքում թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործն ընդունել է վարույթ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանը, ով նշված դիմումի կապակցությամբ չի կրում օրենսդրական կաշկանդվածություն, և մյուս կողմից Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Աննա Դանիբեկյանն առ այսօր չի դրսևորել ակտիվ վարքագիծ և չի բացահայտել իր սուբյեկտիվ ընկալումը թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործը նախկինում քննող Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Դավիթ Գրիգորյանի կողմից ներկայացված դիմումի և Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական արդարադատության գործիքակազմը կիրառելու անհրաժեշտության կապակցությամբ:

**ՌՈՒԲԵՐՏ ՔՈԶԱՐՅԱՆԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 300.1-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝  
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ  
ՀԱՐՅՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՆՀԱՏԱԿԱՆ  
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՄԱՍՈՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ 2021  
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 26-Ի ԹԻՎ ՍԴՈ-1586 ՈՐՈՇՄԱՆ  
ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

**(ԲԱԺԻՆ II)**

Սույն հատուկ կարծիքի Բաժին I-ում արտահայտել եմ իմ դիրքորոշումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի մասով սույն գործի վարույթը կարճելու անհրաժեշտության մասին, ուստի Ռոբերտ Քոչարյանի անհատական դիմումների մասով կարևորում եմ նաև այն դիրքորոշումների ամրագրումը, որոնք ներկայացվում են ստորև: Ընդ որում, համամիտ լինելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1586

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵՎՈՒԹՅՈՒՆ ♦ 1(101)2021  
464



որոշման 6.1. և 6.2. կետերում արտացոլված դիրքորոշումներին, գտնում եմ, որ **6.1. կետից առաջ պետք է ամրագրվեին** տվյալ դեպքում Ռոբերտ Քոչարյանի կողմից անհատական դիմում ներկայացնելու և Սահմանադրական դատարանում նման դիմումի հիման վրա հարուցվող գործ քննելու համար անհրաժեշտ պայմաններ հանդիսացող **Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով «դատարանի վերջնական ակտի» առկայության և ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառված լինելու հանգամանքները** (տե՛ս ա) կետի շարադրանքը), և այդ ամրագրումը պետք է ունենար հետևյալ ձևակերպումը.

ա) «Սահմանադրական դատարանը նախ արձանագրում է, որ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ Սահմանադրական դատարան կարող է դիմել յուրաքանչյուր ոք կոնկրետ գործով, երբ առկա է դատարանի վերջնական ակտը, սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները և վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Վերոգրյալից կարելի է վեր հանել այն պայմանները, որոնց միաժամանակյա առկայության դեպքում ֆիզիկական կամ իրավաբանական անձը կոնկրետ գործով անհատական դիմում կարող է ներկայացնել Սահմանադրական դատարան: Դրանք են՝

1) երբ կոնկրետ գործով առկա է դատարանի վերջնական ակտ,  
 2) երբ սպառվել են ներպետական դատական պաշտպանության բոլոր միջոցները.

3) երբ անձը վիճարկում է այդ ակտով իր նկատմամբ կիրառված նորմատիվ իրավական ակտի դրույթի սահմանադրականությունը, ինչը հանգեցրել է Սահմանադրության 2-րդ գլխում ամրագրված իր հիմնական իրավունքների և ազատությունների խախտման հաշվի առնելով նաև համապատասխան դրույթին իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությունը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենսգրքի հատուկ մասի հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն սահմանող դրույթները, որպես կանոն, կարող են կիրառվել դատարանի կողմից կայացվող դատավճռով (օրենքով

սահմանված կարգով դրա վերանայման արդյունքում կայացվող դատական ակտով), որն էլ, որպես կանոն, կարող է համարվել դիմողի նկատմամբ կայացված դատարանի վերջնական ակտ՝ Սահմանադրության 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի իմաստով: Սակայն որոշ դեպքերում, պայմանավորված քրեական դատավարությունում կայացվող առանձին դատական ակտերի առանձնահատկություններով, Օրենսգրքի հատուկ մասի՝ հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն սահմանող դրույթները կարող են սահմանադրական վերը նշված նորմի իմաստով դիմողի նկատմամբ կայացված դատարանի վերջնական ակտով կիրառված համարվել նաև դատավարության ավելի վաղ փուլում (տե՛ս ՄԴՈ-1453 որոշումը):

Տվյալ դեպքում մի կողմից՝ վիճարկվող դրույթը քրեական գործով դիմող Ռոբերտ Քոչարյանի մեղքի ապացուցված լինելու առումով դեռևս չի կիրառվել և վերջինս դրա սահմանադրականությունը վիճարկում է միայն իրավակիրառ պրակտիկայում տրված այն մեկնաբանությամբ, որով հնարավոր է դարձել իրեն մեղադրանքի առաջադրումը և իր նկատմամբ կալանքի՝ որպես խափանման միջոցի կիրառումը: Մյուս կողմից՝ վիճարկվող դրույթը քրեական գործով կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառումը պահանջում է Սահմանադրությանը համապատասխանող քրեական օրենքի վրա հիմնված մեղադրանքի առկայություն (այս մասին՝ ստորև): Հետևաբար Ռոբերտ Քոչարյանի կողմից ներկայացված դիմումների համատեքստում (այն պարագայում, երբ դիմողը բարձրացնում է իրեն վերագրվող ենթադրյալ արարքը՝ կատարման պահին, հանցագործություն չհամարվելու հարցը և հանցագործություններ սահմանելիս օրինականության սկզբունքի (օրենքների ուժի հետադարձության կանոնների) խախտմամբ իրեն մեղադրանք առաջադրելու և կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հարցը) առկա է դատարանի վերջնական ակտ՝ կալանավորման՝ որպես խափանման միջոցի կիրառման սահմաններում, ինչը միաժամանակ կանխորոշում է Սահմանադրական դատարանի կողմից սույն գործով վիճարկվող դրույթի սահմանադրականության քննարկման սահմանները, այն է՝ Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթի սահմանադրականությանը՝ դրան իրավակիրառ պրակտիկայում տրված մեկնաբանությամբ, անդրադառնում է միայն կալանքի հիմքում դրված մեղադրանքի իրավաչափությանն առնչվող հարցի և իրավական որոշակիությանը համապատասխանելու շրջանակներում»:

**Միաժամանակ, գտնում եմ, որ Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1586 որոշման 6.2. կետից հետո անհրաժեշտ էր դիրքորոշումներ ներկայացնել հետևյալ բովանդակությամբ (տե՛ս ք) կետի շարադրանքը).**

բ) «Հաշվի առնելով, որ նյութական իրավակարգավորումներին սերտորեն կապված են դատավարական իրավակարգավորումները՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վերոգրյալի հաշվառմամբ անդրադառնալ նաև այն իրավանդումներին, որոնք ամրագրում են կալանքը որպես խափանման միջոց ընտրելու նախադրյալները, քանի որ դրանցով ըստ էության սահմանվում են Օրենսգրքի վիճարկվող դրույթի ընթացակարգեր:

Այսպես՝ Քրեական դատավարության օրենսգրքի 134-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կալանավորումը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն մեղադրյալի նկատմամբ, իսկ նույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մեղադրյալ է այն անձը, որի նկատմամբ որոշում է կայացված որպես մեղադրյալ ներգրավելու մասին: Ընդ որում, օրենսդիրը անձին որպես մեղադրյալ ներգրավելու հիմք է համարել նրա կողմից հանցանքի կատարումը վկայող բավարար ապացույցների համակցությունը, որի առկայության դեպքում քննիչը, դատախազը պատճառաբանված որոշում են կայացնում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին (Քրեական դատավարության օրենսգրքի 202-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասեր): Միաժամանակ, օրենսդիրը Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանել է այն հիմքերը, որոնց առկայությունն անհրաժեշտ է մեղադրյալի նկատմամբ կալանավորում կիրառելու համար, այն է՝

1) կա հիմնավոր կասկած, որ նա կատարել է այնպիսի հանցանք, որի համար նախատեսվող ազատազրկման ձևով պատժի առավելագույն ժամկետը մեկ տարուց ավելի է, և

2) կան բավարար հիմքեր ենթադրելու, որ մեղադրյալը կարող է կատարել Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված որևէ գործողություն, այն է՝ (1) թաքնվել քրեական վարույթն իրականացնող մարմնից. (2) խոչընդոտել մինչդատական վարույթում կամ դատարանում գործի քննությանը՝ քրեական դատավարությանը մասնակցող անձանց վրա անօրինական ազդեցություն գործադրելու, գործի համար նշանակություն ունեցող նյութերը թաքցնելու կամ կեղծելու, քրեական վարույթն իրականացնող մարմնի կանչով առանց հարգելի պատ-

ճառների չներկայանալու կամ այլ ճանապարհով. (3) կատարել քրեական օրենքով չթույլատրված արարք. (4) խուսափել քրեական պատասխանատվությունից և նշանակված պատիժը կրելուց. (5) խոչընդոտել դատարանի դատավճռի կատարմանը:

Միաժամանակ, հաշվի առնելով կալանավորման մարդու հիմնական իրավունքներին և ազատություններին միջամտության ինտենսիվության աստիճանը, նպատակ ունենալով կանխելու կալանավորմամբ մարդու անձնական ազատության իրավունքի չհիմնավորված սահմանափակումները, այդ հարցում նախատեսել է նախնական դատական վերահսկողություն՝ սահմանելով, որ խափանման այդ միջոցը կիրառվում է միայն դատարանի որոշմամբ: Ընդ որում, կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու անհրաժեշտության դեպքում դատախազը կամ քննիչը միջնորդություն է հարուցում դատարան՝ խափանման միջոցի այդ տեսակը ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու մասին: Միջնորդություն հարուցելու որոշման մեջ պետք է շարադրվեն այն շարժառիթները և հիմքերը, որոնց հիման վրա առաջացել է մեղադրյալին կալանավորելու անհրաժեշտություն: Որոշմանը կցվում են միջնորդության հիմնավորվածությունը հաստատող նյութերը (Քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մաս): Ավելին, գործող իրավակարգավորումների համաձայն՝ դատարանը չի սահմանափակվում ներկայացված նյութերով, և Քրեական դատավարության օրենսգրքի 285-րդ հոդվածի 4-րդ մասի ուժով կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանքի տակ պահելու ժամկետը երկարացնելու միջնորդությունը քննարկելիս դատավորն իրավունք ունի պահանջել միջնորդությունը հիմնավորող լրացուցիչ նյութեր, բացատրություններ:

Վճռաբեկ դատարանն իր որոշումներում անդրադարձել է մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության միջոցով իրացվող դատական պաշտպանության իրավունքի նշանակությանը, ինչպես նաև կալանքը որպես խափանման միջոց կիրառելու օրենսդրությամբ նախատեսված հիմքերին, պայմաններին և կարգին՝ արտահայտելով, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

- Սահմանադրությամբ ամրագրված՝ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության արդյունավետ միջոցների շարքում առաջնային տեղ է գրավում դատական պաշտպանության իրավունքը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթի ընթաց-

քում դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման երաշխիքներից է դատական վերահսկողությունը մինչդատական վարույթի նկատմամբ: Մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը դատավարական օրենքով նախատեսված միջոցների համակարգ է, որն ուղղված է դատական իշխանության սահմանադրական գործառույթների իրականացմանը գործի մինչդատական վարույթում՝ նպատակ ունենալով թույլ չտալ անձի իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումներ, ինչպես նաև վերականգնել խախտված իրավունքներն ու ազատությունները (ԱՐԴ1/0003/11/08 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2009 թվականի ապրիլի 10-ի որոշման 12-րդ կետ):

- կալանքը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պարտավոր է անդրադառնալ կալանավորման պայմանների և հիմքերի առկայությանը: Կալանավորման պայմանը փաստական տվյալներով հաստատված հանգամանքներ են, որոնց բացակայությունը բացառում է խափանման միջոցի կիրառումը: Հիմնավոր կասկածի հետ մեկտեղ կալանավորման պայմաններ են նաև համապատասխան քրեաիրավական որակմամբ հարուցված քրեական գործի առկայությունը, գործի նյութերում անձին որպես մեղադրյալ ներգրավելու մասին որոշման առկայությունը, Օրենսգրքի 24-րդ հոդվածով սահմանված տարիքը, որոշակի խումբ անձանց համար, օրինակ՝ պատգամավորներ, դատավորներ, անձեռնմխելիության պարտադիր հաղթահարումը (ԵԿԴ/0678/06/10 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի փետրվարի 24-ի որոշման 19-րդ կետ):

- անձի ազատության սահմանափակման դեպքում դատարանները, ի թիվս կալանավորման հիմքերի և այլ պայմանների, քննարկման առարկա պետք է դարձնեն նաև Քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված՝ քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցը: Եթե կոնկրետ դեպքում առերևույթ առկա և կիրառելի է քրեական վարույթը բացառող հանգամանքներից որևէ մեկը, ապա կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ նախաքննության մարմնի ներկայացրած միջնորդությունը ենթակա է մերժման: Այսինքն՝ անձի ազատությունը սահմանափակելը կհամարվի օրինական և հիմնավորված միայն կալանավորման հիմքերի և այլ պայմանների միաժամանակյա առկայության և քրեական

վարույթը բացառող հանգամանքների բացակայության դեպքում:

Քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայության անտեսմամբ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը բավարարելը դատական վերահսկողությունը դարձնում է ձևական և ոչ արդյունավետ միջոց, որի հետևանքով էլ չի իրականացվում դատական վերահսկողության առաքելությունը՝ անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության ապահովումը և այդ իրավունքների և ազատությունների անօրեն և չհիմնավորված սահմանափակումների բացառումը:

(...) Խափանման միջոց կալանքը ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ միջնորդությունը քննարկելիս դատարանը, հավաստելով քրեական վարույթը բացառող հանգամանքների առերևույթ առկայությունը և կիրառելիությունը, պարտավոր է ընդամենը մերժել նախաքննության մարմնի միջնորդությունը: Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան, հակառակ դեպքում կխախտվեն քրեական դատավարության փուլային կառուցվածքը, ինչպես նաև քրեադատավարական գործառնությունների տարանջատման և դատարանի անկախության սկզբունքները (ԵԿԴ/0503/06/10 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման 23-րդ, 28-րդ և 29-րդ կետեր):

- դատարանն իրավասու է որոշում կայացնել կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ ժամկետը երկարացնելու կամ վերահաստատելու վերաբերյալ քրեական հետապնդման մարմնի ներկայացրած միջնորդությունը մերժելու մասին այն դեպքում, երբ հավաստում է քրեական գործով վարույթը բացառող հանգամանքի առերևույթ առկայությունը և դրա հնարավոր կիրառելիությունը: Ընդ որում, քրեական գործով վարույթը բացառող այդ հանգամանքի առերևույթ առկայության մասին վկայությունը պետք է լինի ոչ թե ներկայացված նյութերի, այդ թվում՝ ապացույցների գործն ըստ էության քննելու և լուծելու ժամանակ պահանջվող աստիճանի չափ բազմակողմանի և խորը վերլուծության արդյունք, այլ այդպիսի վկայությունը պետք է հիմնված լինի ներկայացված նյութերից բխող համեմատաբար ակնհայտ փաստերի վրա (ԵԱՆԴ/

0017/06/16 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2017 թվականի հունիսի 22-ի որոշման 15-րդ կետ)։

- ի թիվս այլնի քրեական գործի վարույթը բացառող հանգամանք է նաև արարքի ապաքրեականացումը (ԵԷԴ/0030/01/12 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2014 թվականի հոկտեմբերի 31-ի որոշման 18-րդ կետ)։

- մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն իրավունք չունի անդրադառնալու մեղադրանքի էությանը, հիմնավորվածությանը, քանի որ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը չի հետապնդում կատարված հանցագործության բոլոր հանգամանքները հետազոտելու և դրանց քրեաիրավական գնահատական տալու կամ տրված գնահատականը ստուգելու ու համապատասխան որոշում կայացնելու նպատակ։ Այդ հարցերը կարող են քննարկման առարկա դառնալ միայն գործն ըստ էության քննելու և լուծելու ընթացքում, այսինքն՝ արդարադատության իրականացման արդյունքում լուծման ենթակա հարցեր են։ Եթե մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանն անդրադառնա այդ հարցերին և որոշում կայացնի դրանց վերաբերյալ, ապա կխախտվի քրեական դատավարության փուլային կառուցվածքը, քրեադատավարական գործառույթների տարանջատման սկզբունքը, իսկ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողությունը կվերածվի բուն արդարադատության իրականացման գործընթացի։ Այլ կերպ՝ մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողություն իրականացնելիս դատարանը չպետք է այնպիսի հարցեր քննարկի և դրանց վերաբերյալ որոշումներ ընդունի, որոնք կազմում են հետագա դատական քննության առարկան (ՏԴ2/0009/06/11 քրեական գործով Վճռաբեկ դատարանի 2011 թվականի դեկտեմբերի 22-ի որոշման 13-րդ կետ)։

Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Վճռաբեկ դատարանի կողմից ձևավորված կայուն դիրքորոշման համաձայն կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելու կամ դրա ժամկետը երկարացնելու մասին նախաքննության մարմնի միջնորդությունը քննարկելիս դատարանը պարտավոր է քննարկման առարկա դարձնել կալանավորման պայմանների և հիմքերի առկայությունը ի թիվս այլնի, անդրադառնալով քրեական վարույթը բացառող հանգամանքների առկայության կամ բացակայության հարցին, ինչն անտեսելու դեպքում ներկայացված միջնորդությունը բավարարելը դատական վերահսկողությունը

դարձնում է ձևական և ոչ արդյունավետ միջոց: Վճռաբեկ դատարանի վերը վկայակոչված դիրքորոշումներից հետևում է, որ մեղադրյալի կալանավորման կապակցությամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում դատարաններն իրավասու չեն գնահատել մեղադրանքի ապացուցվածությունը, սակայն պարտավոր են ստուգել մեղադրյալին ներկայացված մեղադրանքի օրինականությունը, որը ներառում է նաև այդ անձի նկատմամբ քրեական հետապնդումը բացառող հանգամանքների բացակայություն:

Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի անձնական ազատության իրավունք: Ընդ որում, նույն իրավանորմը սահմանում է այդ իրավունքի սահմանափակման սպառիչ հիմքերը: Մասնավորապես՝ ոչ ոք չի կարող անձնական ազատությունից զրկվել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով, ի թիվս այլնի անձին իրավասու մարմին ներկայացնելու նպատակով, երբ առկա է նրա կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, կամ երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է հանցանքի կատարումը կամ դա կատարելուց հետո անձի փախուստը կանխելու նպատակով (27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ): Իսկ Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասը երաշխավորում է անձի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքը:

Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան օրենքով սահմանված կարգով, ի թիվս այլնի, անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը իրավախախտում կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում նրան իրավասու օրինական մարմինն ներկայացնելու նպատակով կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար (5-րդ հոդվածի 1-ին կետի գ. ենթակետ):

Սահմանադրական դատարանը, ՄԴՈ-1453 որոշմամբ անդրադառնալով անձնական ազատության իրավունքի սահմանափակման՝ Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված հիմքին, արձանագրել է, որ այդ դրույթի՝ «հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած» արտահայտության սահմանադրական բովանդակությունը, հաշվի առնելով կալանավորելու եղանակով անձի անձնական ազատությանն առավել ինտենսիվ



միջամտության համար բոլոր անհրաժեշտ նախադրյալների պատշաճ հիմնավորման պահանջը, ներառում է նաև **մեղադրանքի իրավաչափությունը**, որը, իր հերթին, պետք է խարսխվի **քրեական հետապնդումը բացառող բոլոր հանգամանքները, այդ թվում և հատկապես արարքի ապաքրեականացումը** ժխտելու վրա: Ավելին, Սահմանադրական դատարանը նշել է նաև, որ իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության հիմնական իրավունքը ներառում է նաև քրեական գործի մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությունը քննելիս մեղադրյալին ներկայացված մեղադրանքի իրավաչափությունը նրա կողմից վիճարկելու իրավունքը, որը պետք է երաշխավորվի մինչդատական վարույթի նկատմամբ դատական վերահսկողության շրջանակներում:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր բազմաթիվ որոշումներում անդրադարձել է Կոնվենցիայի 5-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված իրավունքին և դրա սահմանափակման իրավաչափության պայմաններին: Մասնավորապես՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատական պրակտիկայից հետևում է, որ քրեական իրավախախտում կատարված լինելու «հիմնավոր կասկածը» ենթադրում է այնպիսի փաստերի կամ տեղեկությունների առկայություն, որոնք անաչառ դիտորդին կհամոզեն, որ տվյալ անձը կարող է կատարած լինել իրավախախտում (Erdagöz v. Turkey, no. 21890/93, 51-րդ կետ, 22 հոկտեմբերի 1997թ. և Fox, Campbell and Hartley v. the United Kingdom, nos. 12244/86, 12245/86, 12383/86, 32-րդ կետ, 30 օգոստոսի 1990թ.): Միաժամանակ, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ «հիմնավորվածություն» եզրույթը նշանակում է նաև որոշակի նվազագույն շեմ, որը պետք է հաղթահարի կասկածը, որպեսզի անաչառ դիտորդն այդ կասկածի հիման վրա հավանական համարի մեղադրանքի հիմնավորվածությունը: Ազատությունից զրկելու հիմքում պետք է դրված լինեն տվյալ փաստերի՝ իրականում տեղի ունեցած լինելու մասին «հիմնավոր կասկածը» հիմնավորող բավարար օբյեկտիվ տարրեր: Բացի այդ, մեջբերված փաստերը պետք է ողջամտորեն համարվեն քրեական օրենսգրքում հանցավոր վարքագիծը նկարագրող հոդվածներից որևէ մեկին համապատասխանող փաստեր: Այսպիսով, «հիմնավոր կասկածն» ակնհայտորեն չի կարող գոյություն ունենալ, եթե կալանավորված անձին մեղսագրվող արարքները կամ փաստերը հանցագործություն չեն եղել այն ժամանակ,

երբ դրանք տեղի են ունեցել (Kavala v. Turkey, no. 28749/18, 128-րդ կետ, 10 դեկտեմբերի 2019թ.):

Վերոգրյալի հաշվառմամբ Սահմանադրական դատարանը գտնում է, որ կալանավորումը որպես խափանման միջոց ընտրելիս դատարանը պետք է, ի թիվս այլնի, քննարկման առարկա դարձնի այն հարցը, թե այն գործողությունը կամ անգործությունը, որի կատարման համար անձին մեղադրանք է առաջադրվել, կատարման պահին արդյոք հանդիսացել է հանցագործություն, թե՛ ոչ, քանի որ հակառակ դեպքում չի կարող առկա լինել այդ անձի կողմից հանցանք կատարած լինելու հիմնավոր կասկած, որպիսի պայմաններում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը չի կարող համապատասխանել Սահմանադրության 27-րդ հոդվածի պահանջներին: Ընդ որում, Սահմանադրական դատարանի գնահատմամբ, եթե առաջադրված մեղադրանքի հիմքում դրվել է արարքի կատարումից հետո ուժի մեջ մտած օրենք, ապա միջնորդություն ներկայացնող իրավասու անձը քրեական գործի մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու մասին միջնորդությամբ պետք է հիմնավորի, իսկ դատարանը պետք է քննարկի արարքի կատարման պահին գործող համապատասխան դրույթի և փոփոխված դրույթի հարաբերակցությունը, ինչն անհրաժեշտ է արարքի կատարումից հետո ուժի մեջ մտած օրենքի կիրառման ենթակա լինելու կամ չլինելու մասին եզրահանգում կատարելու համար:

Ամփոփելով վերոգրյալը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ քրեական գործի մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու միջնորդությունը քննարկելիս դատարանը պետք է պարզի Քրեական դատավարության օրենսգրքի 135-րդ հոդվածով սահմանված կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հիմքերի և այլ պայմանների առկայությունը, ինչպես նաև քրեական վարույթը բացառող հանգամանքների բացակայությունը՝ վերը նշված պահանջների պահպանմամբ քննարկելով նաև անձին վերագրվող գործողության կամ անգործության կատարման պահին դրա՝ հանցագործություն հանդիսանալը (մեղադրանքի հիմքում ընկած օրենքի փոփոխության դեպքում նաև արարքի կատարումից հետո ուժի մեջ մտած օրենքի կիրառման ենթակա լինելը), և միայն այդ դեպքում անձի նկատմամբ կալանավորումը որպես խափանման միջոց կիրառելը չհիմնավորված կերպով չի սահմանափակի անձի ազատությունը և միաժամանակ դատական վերահսկողու-

թյունը չի դարձնի ոչ արդյունավետ:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերը նշված հարցերը դատարանի կողմից պետք է քննարկման առարկա դառնան մեղադրանքի հիմքում ընկած օրենքի՝ իրավական որոշակիության պահանջներին բավարարելու դեպքում: Այսինքն՝ այն դեպքում, երբ մեղադրանքի հիմքում ընկած օրենքը համապատասխանում է իրավական որոշակիության սահմանադրական պահանջին, ապա քրեական գործի մինչդատական վարույթում կալանքը որպես խափանման միջոց ընտրելու կամ կալանավորման ժամկետը երկարացնելու միջնորդությունը քննարկելիս դատարանը պետք է անդրադառնա հետևյալ հարցերին.

- արդյո՞ք առկա են կալանքը որպես խափանման միջոց կիրառելու՝ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված հիմքերը և այլ պայմանները.

- արդյո՞ք առկա չեն քրեական վարույթը բացառող հանգամանքներ՝ նկատի ունենալով, որ դրանք հաշվի չառնելը կիմաստագրկի կալանավորման հարցի կապակցությամբ մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողությունը այն դարձնելով ոչ արդյունավետ:

Սահմանադրական դատարանն ընդգծում է, որ վերոգրյալ հարցերի պարզումը, վերաբերելով անձին առաջադրված մեղադրանքի իրավաչափությանը, բխում է Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, 72-րդ և 73-րդ հոդվածների պահանջներից և ներառվում կալանավորման հարցի կապակցությամբ մինչդատական վարույթի նկատմամբ նախնական դատական վերահսկողության շրջանակներում, որպիսի հանգամանքների պարզումն էլ յուրաքանչյուր դեպքում գտնվում է նման վերահսկողություն իրականացնող դատարանի տիրույթում:

Միաժամանակ, նկատի ունենալով, որ սույն գործով վիճարկվող՝ Օրենսգրքի 300.1-րդ հոդվածի՝ Սահմանադրությանն անհամապատասխանության հարցը դիմողը բարձրացնում է նաև իրավական որոշակիության սահմանադրական պահանջի պահպանված չլինելու տեսանկյունից, Սահմանադրական դատարանն այդ խնդրին կանդրադառնա հաջորդիվ: Ընդ որում, վերը ներկայացված դիրքորոշմամբ ամրագրված գործողությունների կատարումը (հարցերի պարզումը) տվյալ դեպքում ձեռք է բերում կարևորություն, եթե սույն գործի քննության արդյունքում կհաստատվի վիճարկվող իրավանորմի՝ իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքին համապատասխանելու հանգամանքը»:

**ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄ 2**

Ամփոփիչ եզրահանգում սույն հատուկ կարծիքի Բաժին II-ում արտահայտած դիրքորոշման վերաբերյալ.

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում եմ, որ սույն հատուկ կարծիքի Բաժին II-ի ա) և բ) կետերում ներկայացված դիրքորոշումները ևս պետք է ներառվեն Սահմանադրական դատարանի ՍԴՈ-1586 որոշման պատճառաբանական մասում:

ԴԱՏԱՎՈՐ՝

Ե. ԽՈՒՆԴԿԱՐՅԱՆ

«29» մարտի 2021թ.



**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ  
ԴԱՏԱՐԱՆՈՒՄ**

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՀԱՆԴԻՊԵԼ Է  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄՆ ԴԵՍՊԱՆԻ ՀԵՏ**

2021 թվականի հունվարի 14-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հայաստանում Ամերիկայի Միացյալ Նահանգների արտակարգ և լիազոր դեսպան Լին Թրեյսիին:

Հանդիպման ընթացքում գրուցակիցները մտքեր են փոխանակել իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության ոլորտներում հայ-ամերիկյան



համագործակցության օրակարգին վերաբերող հարցերի շուրջ: Արման Դիլանյանն ընդգծել է, որ Սահմանադրական դատարանը շահագրգռված է ԱՄՆ Գերագույն դատարանի հետ երկկողմ փոխգործակցության մակարդակի բարձրացմամբ և հույս հայտնել, որ դեսպանի այցը կնպաստի դրան:

**ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ**

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ Լին Թրեյսին շնորհավորել է Արման Դիլանյանին Սահմանադրական դատարանի նախագահի պաշտոնը ստանձնելու կապակցությամբ և վերահաստատել է ԱՄՆ շարունակական աջակցությունը Հայաստանում իրականացվող ժողովրդավարական բարեփոխումների օրակարգին:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԵՐԵՎԱՆՈՒՄ ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԱՔՍԻՄ ԼՈԳԱՆԳԻՆ**

2021 թվականի հունվարի 14-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Երևանում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավարի տեղակալ Մաքսիմ Լոգանգին և ԵՄ Երևանյան գրասենյակի՝ արդարադատության ոլորտում ծրագրի ղեկավար Թամարա Բարբակաձեին:



Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանը բարձր է գնահատել Եվրոպայի խորհրդի դերակատարումը Հայաստանում իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների, ինչպես նաև դատական բարեփոխումների ոլորտներում իրականացվող գործընթացներում ընդգծելով, որ Եվրոպայի խորհուրդը Հայաստանի առանցքային միջազգային գործընկերներից է:

Մաքսիմ Լոգանգն իր հերթին կարևորել է Երևանում ԵՄ գրասենյակի գործակցությունը պետական կառավարման մարմինների հետ և ԵՄ-ի կողմից պատրաստակամություն է հայտնել ակտիվացնելու համագործակցությունը Սահմանադրական դատարանի հետ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող նախագծերում:

Զրուցակիցներն երկուստեք անդրադարձել են Սահմանադրական դատարանի և ԵԽ Վենետիկի հանձնաժողովի միջև երկարամյա համագործակցությանը և առանձնահատուկ կարևորել փոխգործակցության հետագա ամրապնդման անհրաժեշտությունը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՑԵԼ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ ՍԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ**

2021 թվականի հունվարի 18-ին կայացել է Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության սահմանադրական դատարանների նախագահներ Արման Դիլանյանի և Վալերի Զորկինի հեռախոսազրույցը:



Նախագահները մտքեր են փոխանակել երկկողմ և բազմակողմ ձևաչափերում համագործակցության խորացման հնարավորությունների շուրջ: Երկուստեք կարևորվել է ՀՀ և ՌԴ սահմանադրական դատարանների պաշտոնական հարաբերությունների հետագա ամրապնդումը, այդ թվում, Covid-19 համավարակի առումով բարենպաստ պայմանների դեպքում՝ երկկողմանի պաշտոնական այցերի ձևաչափով:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՄԷ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ**

2021 թվականի հունվարի 25-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Արաբական Միացյալ Էմիրությունների գործերի ժամանակավոր հավատարմատար Ահլամ Ալ-Սալամիին:

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(101)2021



Ողջունելով հյուրերին՝ Սահմանադրական դատարանի նախագահը կարևորել է հայ-էմիրաթական իրավական կապերի հետագա ամրապնդումը և երկու երկրների բարձր դատարանների միջև շփումների ընդլայնումը, ինչպես նաև հավելել է, որ վերջին շրջանում երկկողմ կապերի ակտիվացումը վկայում է Հայաստան-ԱՄԷ իրավական համագործակցության զարգացման մեծ ներուժի և դինամիկայի մասին:

Իր պատասխան խոսքում ԱՄԷ գործերի ժամանակավոր հավատարմատար Ահլամ Ալ-Սալամին շնորհակալություն է հայտնել նախագահ Արման Դիլանյանին հանդիպման հնարավորության և ջերմ ընդունելության համար:

Զրուցակիցները համոզմունք են հայտնել, որ կորոնավիրուսի համավարակի բարեհաջող հաղթահարումից հետո երկու երկրների բարձր դատարանների համագործակցությունը նոր լիցք կստանա, ինչը կարտահայտվի նաև բարձր մակարդակի փոխայցելություններով:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԼԵՀԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ**

2021 թվականի հունվարի 25-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Լեհաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Պավել Չեպլակին:

Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանը կարևորել է Սահմանադրական դատարանի և Լեհաստանի սահմանադրական տրիբունալի երկարամյա գործընկերային կապերի զարգացումը և նշել, որ հայկական կողմը պատրաստակամ է քննարկել այդ ուղղությամբ հետագա քայլերը:





Դեսպան Չեպլակն իր հերթին անդրադարձել է երկու երկրների բարձր դատարանների հարաբերությունների հետագա խորացմանը և վերահաստատել լեհական կողմի հետաքրքրվածությունը երկկողմանի աշխատանքային կապերը զարգացնելու ուղղությամբ:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են նաև համագործակցության հնարավորությունները սահմանադրագիտության զարգացմանն առնչվող գիտավերլուծության և այլ ոլորտներում:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ**

2021 թվականի փետրվարի 1-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Հունաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Էվանգելոս Տուրնակիսին:

Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանը նշել է, որ Սահմանադրական դատարանը կարևորում է Հունաստանի պետական խորհրդի հետ ինչպես երկկողմ ձևաչափում գործընկերությունը, այնպես էլ ԵԽ Վենետիկի հանձնաժողովի շրջանակում համագործակցության հետագա ընդլայնումը:

Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել սահմանադրական արդարադատության և իրավունքի գերակայության ոլորտում երկու բարեկամ երկրների միջև փոխգործակցության զարգացման հնարավոր ուղղություններին:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
ԼԻՏՎԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՄՊԱՆԻՆ**

2021 թվականի փետրվարի 3-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Լիտվայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ինգա Ստանիտե-Տոլոչկիենեին:



Հանդիպման մեկնարկին Արման Դիլանյանը կարևորել է վերջին տասնամյակների ընթացքում սահմանադրական արդարադատության, ժողովրդավարական բարեփոխումների և իրավունքի գերակայության ոլորտներում Լիտվայի Հանրապետության կուտակած մեծ փորձը, ինչպես նաև հավելել է, որ Սահմանադրական դատարանը հետաքրքրված է այդ փորձի ուսումնասիրությամբ և փոխանակմամբ:

Շնորհակալություն հայտնելով ջերմ ընդունելության համար՝ դեսպան Ստանիտե-Տոլոչկիենեն Լիտվայի կառավարության և Հայաստանում Լիտվայի դեսպանատան անունից պատրաստակամություն է հայտնել ՀՀ-ում սահմանադրական արդարադատության ոլորտի բարեփոխումներին աջակցելու հարցում, ինչպես նաև ընդգծել է, երկու երկրների սահմանադրական դատարանների երկկողմ և բազմակողմ ձևաչափերով հարաբերությունների հետագա զարգացմանը նպաստելու իր պատրաստակամությունը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԵԽԱՅԻ ԴԵՄՊԱՆԻՆ**

2021 թվականի փետրվարի 3-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Չեխիայի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Բեդրիխ Կոպեցկիին:



Ողջունելով հյուրերին՝ Արման Դիլանյանը կարևորել է Հայաստանի Հանրապետության և Չեխիայի Հանրապետության սահմանադրական դատարանների ավանդաբար ջերմ հարաբերությունները և պատրաստակամություն է հայտնել խորացնել դրանք:

Հանդիպման ընթացքում զրուցակիցները քննարկել են փոխշահավետ ուղղություններով գործակցության ընդլայնմանը վերաբերվող մի շարք հարցեր, ինչպես նաև մտքեր են փոխանակել սահմանադրական արդարադատության ոլորտում համատեղ ծրագրերի իրականացման մասին:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՄՊԱՆԻՆ**

2021 թվականի փետրվարի 10-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Գերմանիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Միխայել Յոհաննես Բանցհաֆին:

Հանդիպման ընթացքում Արման Դիլանյանը կարևորել է Գերմանիայի կառավարության աջակցությունը Հայաստանի դատա-

իրավական ոլորտի բարեփոխումներին, իրավունքի գերակայության ամրապնդմանը և մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանությանը:



Դեսպան Բանցհաֆը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար և նշել է, որ հայ-գերմանական իրավական կապերը մշտապես գտնվել են փոխադարձ հետաքրքրությունների տիրույթում, ինչպես նաև հավելել է, որ Հայաստանի ու Գերմանիայի սահմանադրական դատարանների միջև առկա արդյունավետ համագործակցությունը և բարեկամական հարաբերությունները դրա լավագույն վկայությունն են:

Զրուցակիցները մտքեր են փոխանակել նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեում գերմանական նախագահության առաջնահերթությունների և իրավունքի գերակայության ոլորտում համատեղ ծրագրերի իրականացման մասին:

**ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՎՐԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԻՆ**

2021 թվականի փետրվարի 24-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Վրաստանի արտակարգ և լիազոր դեսպան Գիորգի Սագանեյիձեին:

Ողջունելով հյուրերին՝ Արման Դիլանյանն անդրադարձ է կատարել Հայաստանի և Վրաստանի սահմանադրական դատարանների երկարամյա համագործակցությանը և պատրաստակամություն է հայտնել զարգացնել սահմանադրական արդարադատու-

թյան և իրավունքի գերակայության ոլորտներում աշխատանքային կապերը վրաց գործընկերների հետ:



Դեպքան Սագանելիձեն իր հերթին շնորհակալություն է հայտնել հանդիպման հնարավորության համար և նշել է, որ հայ-վրացական դարավոր բարեկամությունը պարարտ հող է ստեղծում նաև երկու երկրների սահմանադրական դատարանների միջև իրավական կապերի հետագա ամրապնդման ու խորացման համար:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է  
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԴԵՄՊԱՆԻՆ**

2021 թվականի մարտի 4-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը քաղաքավարական հանդիպման ձևաչափով ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության նորանշանակ արտակարգ և լիազոր դեսպան Ֆան Յոնգին:



Ողջունելով հյուրին՝ Արման Դիլանյանը շնորհավորել է դեսպանին մեր երկրում դիվանագիտական ծառայության անցնելու կապակցությամբ և արդյունավետ գործունեություն մատրթել ի շահ հայ-չինական կապերի հետագա խորացման: Դեսպան Յոնգը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար և հավելել է, որ պատրաստ է իր աջակցությունը ցուցաբերել Հայաստանի և Չինաստանի փոխադարձ կապերի և երկխոսության ամրապնդմանը դատափրավական ոլորտում:

Զրուցակիցները երկուստեք կարևորել են շարունակական աշխատանքային շփումների պահպանումը:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԱՆ ԴԻԼԱՆՅԱՆԸ ՀԵՌԱԽՈՍՍԱԶՐՈՒՅՑ Է ՈՒՆԵՑԵԼ ԼԻՏՎԱՅԻ ՄԴ ՆԱԽԱԳԱՀԻ ՀԵՏ**

2021 թվականի մարտի 10-ին Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանը հեռախոսազրույց է ունեցել Լիտվայի Հանրապետության Սահմանադրական դատարանի նախագահ Դայնիուս Ժալիմասի հետ:



Արման Դիլանյանը և Դայնիուս Ժալիմասը պայմանավորվել են աջակցել միմյանց բարձր դատարանների մասնագիտական կարողությունների զարգացման և արդյունավետության բարձրացման գործում, ինչպես նաև առավել պարբերական բնույթ տալ աշխատանքային հաղորդակցությանը, իսկ Covid-19 համավարակի առումով բարենպաստ պայմանների դեպքում՝ երկկողմ հարաբերությունները շարունակել նաև փոխայցելությունների ձևաչափով:

Բացի դրանից գրուցակիցները մտքեր են փոխանակել Արևելյան

գործընկերության շրջանակներում իրավունքի գերակայության և սահմանադրական արդարադատության ոլորտներում համատեղ ծրագրեր իրականացնելու հեռանկարների մասին:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԵՎ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ԻՌԼԱՆԴԻԱՅԻ ՄԻԱՑՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՎԱՏԱՐՄԱՏԱՐԻՆ**

2021 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Գործերի ժամանակավոր հավատարմատար Հելեն Ֆեյզիին:



Զրուցակիցները մտքեր են փոխանակել հայ-բրիտանական դատաիրավական կապերի ամրապնդման և իրավունքի գերակայության շուրջ:

Փոխադարձաբար արձանագրվել է պատրաստակամություն՝ համատեղ ջանքերով նոր լիցք հաղորդել հայ-բրիտանական միջդատարանական երկխոսության օրակարգին:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ԸՆԴՈՒՆԵԼ Է ԲՐԱԶԻԼԻԱՅԻ ԴԵՍՊԱՆԻՆ**

2021 թվականի մարտի 11-ին Սահմանադրական դատարանի նախագահ Արման Դիլանյանն ընդունել է Հայաստանի Հանրապետությունում Բրազիլիայի Դաշնային Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Աժեմար դե Մենդոնսա Սանկտոսին:

**ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ**

Զրուցակիցները մտքեր են փոխանակել հայ-բրազիլական դատախարական կապերի ամրապնդման և իրավունքի գերակայության ու սահմանադրական արդարադատության ոլորտներում համագործակցության շուրջ:



Արման Դիլանյանը և դեսպան Սանկտոսը երկուստեք պատրաստկամություն են հայտնել նպաստել Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի և Բրազիլիայի Դաշնային գերագույն դատարանի միջև բարեկամական կապերի զարգացմանն ու հետագա խորացմանը:



---

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության  
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցե՝  
Երևան, Բաղրամյան 10  
Հեռախոս՝ 011-58-81-81(189)  
E-mail: armlaw@concourt.am  
<http://www.concourt.am>

Ստորագրված է տպագրության՝ 30.04.2021թ.  
Դասիչ՝ 77754  
Գրաչափը՝ 70X100 1/16  
Տպաքանակը՝ 100

---

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(101)2021  
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(101)2021  
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 1(101)2021